

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1990-2003 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2003

Աշխատանքը երաշխավորվել է ԵՊՀ պատմության
ֆակուլտետի խորհրդի և Հայոց պատմության ամբիոնի
կողմից:

Խմբագիրներ՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.՝ **Գ.Ս. ԳԵՂԱՄՅԱՆ**
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.՝ **Բ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Մ 710

Սինասյան Էդիկ
Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետու-
թյունում (1990-2003 թթ.), Եր., Երևանի համալս. հրատ., 2003, 443 էջ:

Աշխատությունը նվիրված է անկախությունը վերականգնած Հայաս-
տանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վերափոխումների ավելի
քան տասը տարիների պատմության ուսումնասիրությանը: Այն արխիվային
փաստերի և վիճակագրական տվյալների հիման վրա կատարված պատ-
մաքննական ամբողջական ուսումնասիրություն է, որտեղ առաջին անգամ
փորձ է արվում ընթերցողին ներկայացնելու անցման շրջանի բարդ ու հա-
կասական հիմնահարցերը, ցույց տալու հասարակական-տնտեսական ոլոր-
տի ձեռքբերումներն ու բացթողումները, քննադատաբար գնահատելու
դրանք:

Այն կարող է օգտակար լինել Հայաստանի նորագույն պատմության,
տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի հիմնահարցերն ու-
սումնասիրողների համար:

Մ 0803010413 2003
704(02) – 2003

ԳՄԴ 66.3 (2Հ) + 65.9 (2Հ)

© Էդ. Սինասյան, 2003

Ն Ե Ր Ա Ճ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի երրորդ Հանրապետությունն առանձնահատուկ
տեղ ունի մեր բազմադարյան պետականության պատմության մեջ:
Ծնունդ առնելով 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին՝ այն
ձևավորվեց Հայաստանի առաջին (1918-1920) և երկրորդ (1920-
1991) Հանրապետությունների հիմքի վրա: Ռուսական կայսրության
փլուզման հետևանքով 1918թ. մայիսի 28-ին, հինգ դարյա ընդմիջու-
մից հետո Հայաստանը վերականգնեց իր անկախությունը: Հայոց
ցեղասպանությունից, Առաջին համաշխարհային պատերազմից ու
հեղափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց անմխիթար պայ-
մաններում՝ քայքայված տնտեսությամբ, փախստականներով ու
գաղթականներով, առանց դաշնակիցների:

Չնայած դրան՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, իբ-
րև պետական կառույց, կատարեց պատմական նախադեպի իր
կարևոր դերը: Բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ թերություններով հան-
դերձ՝ նա հիմք հանդիսացավ հայոց պետականության հետագա
զարգացման համար:

Շնորհիվ անկախ պետականության վերականգնման, Հայաս-
տանի Հանրապետությունը, տալով անգամ մեծ կորուստներ, կարո-
ղացավ վերածվել խորհրդային հանրապետության և մտնել ԽՍՀՄ-ի
մեջ: ԽՍՀՄ-ի կազմում խորհրդային Հայաստանը, որպես առաջին
հարապետություն, զգալի նվաճումներ ձեռք բերեց հասարակական
կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, ունեցավ զարգացած արդ-
յունաբերություն և գյուղատնտեսություն, սակայն չուներ և չէր կա-
րող ունենալ քաղաքականապես ու տնտեսապես անկախ, ազգային
ազատ պետություն ու պետականություն:

1921-1991 թթ. Հայաստանի երկրորդ Հանրապետությունում
կուտակվեց հասարակական ինքնակառավարման այնպիսի հա-
րուստ փորձ, որը հետագայում օգտագործվեց երրորդ հանրապե-
տության կայացման գործընթացում: Փաստորեն վերջինս դարձավ
նախորդ երկու հանրապետությունների ժառանգորդը:

1980-ական թվականների երկրորդ կեսին, հավատալով գործաշուկյան թվացյալ վերակառուցմանը, հայ ժողովուրդը փորձեց հասնել Արցախի ազատագրման ազգային իղձերի իրականացմանը: Սակայն երկու տարվա ծանր փորձություններից հետո համոզվելով, որ ամբողջատիրական վարչակարգը և ժողովրդավարությունն անհամատեղելի են, ժողովուրդն իր համազգային պայքարն ուղղեց անկախ պետականության հաստատմանը: Այս պայքարի ընթացքում մեր ժողովուրդը, մեծ դժվարությամբ հաղթահարելով իր դեմ ուղղված դավերն ու ծանր փորձությունները, վերստին նվաճեց իր անկախ պետականությունը:

Անկախության հռչակումը և անցումը շուկայական հարաբերություններին 1990-ական թվականներին լուրջ խնդիրների առաջ կանգնեցրին զրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններին: Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէր, և տնտեսապես արդարացված ու դեպի ժողովրդավարություն տանող նրա ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու չօգտագործված հնարավորությունները, ծախողումներն ու անհաջողությունները:

Հայաստանի երրորդ Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքը վերջին տասը տարիներին անցել է կտրուկ ելևէջներով: Սպիտակի աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ նորանկախ երկիրը ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով ընկավ տարածաշրջանի տրանսպորտային ու հաղորդակցության մյուս ուղիների բնականոն աշխատանքի խաթարման, տևական շրջափակման, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամի, արտաքին շուկային ինտեգրվելու տնտեսական քաղաքականության ուղենիշներով պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման հետևանքով առաջացած անբարենպաստ պայմանների մեջ: Այս օբյեկտիվ պատճառների հետ միասին կային նաև սուբյեկտիվ գործոններ:

Իշխանության եկած մեծ մասամբ պետական կառավարման փորձ չունեցող, իսկ որոշ դեպքերում պատահական անձանց անկարողությունն ու ինքնավստահ խեղաթուրված, ոչ բանական գործունեության հետևանքով տեղի ունեցող համատարած քայքայումն ու թալանը կործանման եզրին հասցրին երկիրը: Այսուհանդերձ հանրապետության բարոյաքաղաքական մթնոլորտը հիմնականում պահպանեց իր կայունությունը՝ շատ դեպքերում պայմանավորված

լինելով թուրք-ազերական հայաջինջ քաղաքականությամբ և Արցախի ազատագրական պայքարով, որոնք միավորեցին ամբողջ հայությանը: 1990-ական թվականների առաջին կեսը հանդիսացավ հայ հասարակության ներքին կայունության ու միասնության հիմնական գործոնը, որը հարկադրեց իշխանություններին վճռական միջոցների դիմելու: Առաջին հերթին անհրաժեշտ էր ամրապնդել պետաիրավական վարչակարգը, ինքնաբուխ մարտական ջոկատներից ձևավորել իսկական ազգային մարտունակ բանակ, ձեռք բերել ռազմատեխնիկական անհրաժեշտ միջոցներ:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Երկար սպասված անկախության ու տնտեսական ազատության հնարավորությունները, որոնք հաստատվել էին Հայաստանում, միաժամանակ առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Երկակի անցումը բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ (խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական ինստիտուտների կայացում և այլն) ունեցավ նաև բացասական հետևանքներ՝ աղքատություն և գործազրկություն, օրինազանցություն, կոռուպցիա, արտագաղթ և սոցիալական բևեռացում, կախվածություն արտաքին ֆինանսական և տնտեսական կենտրոններից: Բնակչության դժգոհությունը և արտագաղթը հստակ մատնանշում են, որ քաղաքական անկախության ձեռքբերումները չեն արդարացնում տնտեսական ու սոցիալական կորուստները: Դեռևս նոր-նոր ձևավորվող ժողովրդավարական արժեքների անկումը կանխելու և հասարակությանը պատճառած կորուստներից խուսափելու համար կառավարությունը պետք է առաջին հերթին առաջնորդվեր սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությամբ, որը համապարտասխաներ գլոբալ և ազգային առաջադիմության միտումներին: Անցած տասից ավելի տարիների ընթացքում առաջացած խնդիրները աստիճանաբար մասամբ համակարգվում և լուծվում են, սակայն այդ գործընթացը լիովին հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ:

Պատմական այս շրջադարձային ժամանակաշրջանի հենց սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների համակողմանի լուսաբանման է նվիրված սույն աշխատությունը: Դեղինակը փորձել է առա-

ջին անգամ ներկայացնել հանրապետության անցած ավելի քան տասը տարիների սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի վերափոխումների պատմությունը:

Հայաստանի անկախ Հանրապետության հռչակման շեմին հայ քաղաքական միտքը հիմնականում պատկերացնում էր ինքնիշխան պետությունը որպես ազգային-ժողովրդավարական գաղափարախոսության և ներմուծված շուկայական ազատականության մեխանիկական հանրագումար: Սակայն շուտով պարզվեց, որ ազգային գաղափարախոսությունը գործնականում մշակված չէ, քաղաքական կառույցներն անկայուն են, իսկ կտրուկ տնտեսական վերափոխումների իրականացումն անչափ ծանր բեռ է շրջափակման ենթարկված և պատերազմող Հայաստանի համար: Քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական ծրագրերի բացակայության սուբյեկտիվ հանգամանքներին գումարվեցին պատերազմի, շրջափակման, տնտեսական ճգնաժամի օբյեկտիվ գործոնները՝ ավելացնելով զրկանքները անցման շրջանում: Այս առումով ակնհայտ են պատմական զուգահեռներն առաջին և երրորդ հանրապետությունների միջև:

Նորանկախ պետությունը թեպետ թույլ էր քաղաքական ու տնտեսական կառույցներով, համազգային գաղափարախոսությամբ, սակայն պետությունը պահպանելու համար օժտված էր քաղաքականապես ակտիվ և ժողովրդավարության ձգտող հասարակությամբ: Ի տարբերություն անցյալի, դա էր երրորդ հանրապետության կայացման գլխավոր գրավականը:

Աշխատության մեջ առաջին անգամ արխիվային և վիճակագրական հարուստ փաստական նյութերի հիման վրա ցույց է տրվում անկախության գործընթացը, պետաիրավական և վարչական բարեփոխումների դրական և բացասական հետևանքները: Հանրապետության դեկավարները միշտ չէ, որ հաշվի էին առնում Հայաստանի պատմական առանձնահատկությունները, ավանդույթները և հաճախ մեխանիկորեն ընդօրինակելով այս կամ այն երկրի պետավարչական կառուցվածքը՝ էլ ավելի էին խորացնում ճգնաժամային վիճակը: Հիմնավոր քննադատության են ենթարկված ընտրական համակարգում տեղ գտած թերությունները, չհիմնավորված նախարարությունների և վարչական ուռճացող միավորումների ստեղծումը և այլն: Պատմաքննական մեթոդը հնարավորություն է տվել հեղինակին վերանայել և վերագնահատել շատ հիմնախնդիրներ, առաջարկներ անել դրանց արդյունավետ լուծման վերաբերյալ: Անկախության

հաստատումից հետո հիմնական խնդիրը մենատիրական վարչակարգից շուկայական հարաբերություններին անցնելն էր: Վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարված բարեփոխումները դժվար է միանշանակ գնահատել: Բավականին անբարենպաստ պայմաններում մենատիրությունից նոր պահանջներին համապատասխան շուկայական հարաբերություններին անցնելը Հայաստանում պայմանավորված էր մի շարք առանձնահատկություններով: Անկախության պահպանման ուղղությամբ գործադրվող ջանքերը այս կամ այն կերպ անդրադառնում էին տնտեսական նոր համակարգի ձևավորման վրա: Եվ այստեղ մեխանիկական ընդօրինակումը, ինչպես հաճախ լինում է, կարող է բացասական հետևանքներ ունենալ: Դժվար էր նաև նախկին վարչաբյուրոկրատական կառավարման մեթոդներից միանգամից հրաժարվելը: Շուկայական հարաբերությունների անցման շրջանում միանգամայն փոխվում է պետության դերը (սակայն այն չի վերանում, ինչպես պնդում են շատերը): Պետությունը ձևավորում է տնտեսական հարաբերությունների իրավական դաշտը և նպաստում այդ հարաբերությունների ներդաշնակ կենսագործունեությանը: Այն ոչ թե դեկավարում է տնտեսական գործընթացները, այլ կարգավորում է դրանք առավել բարձր արդյունքներ ստանալու համար և անցման շրջանի տնտեսական գործունեության վրա ազդում է ոչ թե ուղղակի ձևով, այլ՝ շուկայի միջոցով: Այս հարցում, սակայն, թույլ տրվեցին բազում սխալներ (գների ազատականացում, ժամանակից շուտ անցում սեփական դրամական միավորներին և այլն):

Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ի տարածքում առաջինն էր, որ անկախանալուց անմիջապես հետո, առանց լուրջ նախապատրաստման, հաշվառման ու գնահատման, իրականացրեց հողի սեփականաշնորհումը՝ լուծարելով անգամ նախկինում գործող բարձր արդյունավետ տնտեսություններ, պատճառ դառնալով գյուղում ձևավորված արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մասնատման ու փոշիացման: Պատահական չէ, որ սակավահող Հայաստանում հողի սեփականաշնորհումից հետո տասնյակ-հազարավոր հեկտար տարածություններ մնացին անմշակ: Իսկ անասնապահության բնագավառում սեփականաշնորհման անվան տակ համատարած թալանվեցին տասնամյակների ընթացքում ստեղծված ֆերմաները, ընդ որում մեծ մասամբ հայտնվելով գյուղատնտեսության հետ կապ չունեցող «տղերքի» ձեռքը: Սեփականաշնորհման հետևանքով

զրկվելով անասուններից, գյուղտեխնիկայից, պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման հնարավորություններից՝ գյուղացին մնաց մեն-մենակ իր փոքրիկ հողակտորի հետ՝ ապավինելով ձեռքի սակավ արդյունավետ աշխատանքին: Հողը բաժանելով գյուղացուն՝ պետությունն իր խնդիրը համարեց ավարտված: 1990-ական թվականների վերջերին առանձին որոշումներով փորձեր արվեցին շտկելու այդ սխալները, սակայն կիսատ-պռատ միջոցառումները արդյունք չտվեցին: Բազմակողմանի քննարկելով այդ հարցերը և ընդգծելով, որ շրջափակման և պատերազմի պայմաններում ճիշտ էր հապճեպ ու համատարած սեփականաշնորհումը՝ աշխատության մեջ մի շարք առաջարկություններ են արվում, որոնց կենսագործմամբ հնարավոր է գյուղատնտեսությունը դուրս բերել ծանր վիճակից:

Հանգամանորեն քննարկվում են վերջին տասնամյակում արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման հարցերը: Անկախությունից հետո հանրապետության արդյունաբերությունը զրկվեց հումքի հիմնական աղբյուրներից, և խզվեցին կոոպերացիայի կապերը, կորցրեց արտահանման նախկին շուկաները: Համայնավարության հիմքերը շուտափույթ վերացնելու նպատակով արդյունաբերության ոլորտում չհիմնավորված արագացված սեփականաշնորհում կատարվեց, որն ըստ էության վերածվեց վիթխարի կառույցների փոշիացման և յուրացման: Երբեմնի արդյունաբերական գարգացած հանրապետության նյութատեխնիկական բազան սեղմ ժամկետում ոչնչացվեց, սարքավորումների մեծ մասը մետաղի ջարդոնի անվան տակ արտահանվեց: Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման հետևանքով փաստորեն չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի խավ, կրճատվեց բանվորության քանակը, և շեշտակի աճեց գործազրկությունը: Այստեղ ևս պետությունը, ցավոք, հանդես եկավ դիտողի դերում, ոչնչով չօգնեց սեփականաշնորհված ձեռնարկություններին: Աշխատության մեջ, քննարկելով արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացները, ցույց են տրվում այն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք տնտեսական քայքայման հասցրին հանրապետությունը: Այդ ծգնաժամային վիճակի խորացմանը մեծ չափով նպաստեցին պետության՝ ֆինանսավարկային և հարկային քաղաքականության բնագավառում թույլ տրված սխալներն ու արտասահմանից ստացվող վարկերի անարդյունավետ, չհիմնավորված օգտագործ-

ման փաստերը:

Աշխատության կարևոր մասերից է պետության սոցիալական քաղաքականությանը նվիրված բաժինը: Խորհրդային իշխանության տարիներին սոցիալական ապահովագրության հարցերը լուծվում էին պետական մակարդակով: Անկախության հռչակումից հետո այս բնագավառում ևս փորձ արվեց վերակառուցումներ կատարել, որը նույնպես արդյունավետ չեղավ: Շուրջ տասը տարիների ընթացքում սոցիալական կայուն քաղաքականություն չի մշակվել, որովհետև այն պայմանավորված էր տնտեսական իրական հնարավորություններով, որոնք շատ հեռու էին բավարար լինելուց: Ուսումնասիրության մեջ սոցիալական ոլորտում որոշ դրական ձեռքբերումների կողքին համակողմանի քննարկվում են բնակչության զբաղվածության, տարեցտարի աճող գործազրկության հարցերը, դրանց պատճառներն ու ծանր հետևանքները, ցույց է տրվում հասարակության համար աղետաբեր կտրուկ բևեռացման գործընթացը: Որպես գլխավոր թերություն ընդգծվում է, որ մինչև այժմ չի ձևավորվել երկրի տնտեսական կայունության և առաջընթացի հիմքը կազմող բնակչության միջին խավը: Բազմաբնույթ փաստերով ցույց է տրվում հասարակության սոցիալական շերտավորման վրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը, քննադատվում աղքատության շատ բարձր ցուցանիշների առկայությունը, որի դեմ պայքարելու հստակ ծրագրեր դեռևս չեն մշակվել: Այս բոլորն, անշուշտ, ազդում են բնակչության տեղաշարժի, հատկապես արտագնացության վրա: Չանգվածային բնույթ ստացած արտագաղթն այն հիմնական չարիքն է, որի հետևանքները կարող են ճակատագրական լինել: Հայաստանից հեռանում են բարձր որակավորում ունեցող մասնագետները, գիտնականներն ու արվեստագետները, աշխատող ուժը: Տնտեսական փլուզման հետևանքով ավերվեցին նաև առողջապահական, կրթական և գիտական հիմնարկները: Տարեցտարի կրճատման ենթակա ֆինանսական հատկացումները և այդ բնագավառների աշխատողների ցածր աշխատավարձը ստեղծել են ծանր վիճակ: Մասնագետները զանգվածաբար լքում են իրենց բուն աշխատանքը և անցնում այլ բնագավառներ: Այս պայմաններում կենսագործվող բարեփոխումները (մեծ մասամբ չհիմնավորված) էականորեն չեն նպաստում տվյալ բնագավառի աշխատանքների բարելավմանը:

Աշխատությունը շարադրված է արխիվային նորահայտ նյութերի և վիճակագրական տվյալների հիման վրա: Հեղինակը խուսափել է

փաստագրությունից և ընթերցողին ներկայացրել պատմաքննական ամբողջական շարադրանք: Նման փորձ առաջին անգամ է կատարվում: Այն կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի անկախության տարիների պատմության, տնտեսության և հասարակական-քաղաքական կյանքի հիմնահարցերն ուսումնասիրողների համար:

Շուրջ 12 տարի է անցել անկախության հռչակման օրվանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկա մի ամփոփ ուսումնասիրություն, որն ամբողջովին նվիրված լիներ երրորդ հանրապետության պատմությանը, որտեղ վերհանված ու վերլուծված լինեին սոցիալ-տնտեսական ոլորտի վերափոխումների էությունը, նշանակությունը, այդ բնագավառի զարգացման պատմական փուլերը, առանձնահատկությունները, հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրները:

Իհարկե, դա չի նշանակում, թե ընդհանրապես ոչինչ չի արվել, բայց հրապարակի վրա եղածն այնքան քիչ է ու աղքատիկ, մեծ մասամբ տնտեսագիտական բնույթի, որ հնարավոր չէ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումների մասին ամբողջական պատկերացում կազմել: Երրորդ հանրապետության տնտեսական քաղաքականության առանձին հարցերին անդրադարձել են տնտեսագետներ Վ. Խոջաբեկյանը, Հ. Սարգսյանը, Ա. Մարկոսյանը, Ս. Սկրտչյանը, Գ. Ավագյանը, Ս. Գևորգյանը, Թ. Մանասերյանը, Ա. Մելքունյանը, Գ. Կիրակոսյանը, Ս. Դավոյանը, Լ. Անանյանը և ուրիշներ¹: Հատկապես արժեքավոր ուսումնասիրություն է ակադե-

միկոս Ա. Աղանբեգյանի խմբագրությամբ լույս տեսած «Տնտեսական վերափոխումներն անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ» ժողովածուն, որը հրատարակվել է ՀՀ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ Կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի համատեղ ջանքերով: Գրքում ամփոփված են Հայաստանի և Ռուսաստանի մի շարք տնտեսագետ-գիտնականների հետազոտությունների արդյունքները՝ նվիրված շուկայական տնտեսության անցման շրջանի տեսական, մեթոդական և գործնական առավել հրատապ ու արդիական հիմնախնդիրներին: Հատուկ ուշադրություն է դարձված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տնտեսական վերափոխումների առանձնահատկություններին և այդ գործընթացի արդյունքներին:

Անցումային երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական քաղաքականության էությունը, առանձնահատկություններին ու բնորոշ գծերին է նվիրված Ս. Դավոյանի, Ա. Մարկոսյանի և Հ. Սարգսյանի հեղինակած «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում» աշխատությունը: Այստեղ տնտեսության իրական հաստվածի և այլ ոլորտների հիմնական արդյունքների վերլուծության հետ առաջարկվում են նաև իրավիճակի բարելավմանն ուղղված հայեցակարգային լուծումներ:

Արժեքավոր ուսումնասիրություն է նաև Գ. Կիրակոսյանի «Անցումային տնտեսության վերափոխումները. տեսության հարցեր» ուսումնասիրությունը, որտեղ նույնպես անցումային փուլում գտնվող երկրների զարգացման արդյունքների վերլուծության հետ մեկտեղ ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա վիճակը և նշվում հեռանկարային զարգացման միտումները:

Ուսումնասիրվող հարցերի քննարկման տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից հրատարակված

¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դարերում, 21-րդ դարի շեմին, Եր., 2001: Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Եր., 1979, Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները, Եր., 1976: Ходжабекян В., Асатрян Б., Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Е., 1991: Խոջաբեկյան Վ., Ազրարային քաղաքականությունը և բնակչության տեղաշարժերը, Եր., 1989: Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Եր., 1991: Մարգսյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, Եր., 2001: Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Եր., 1995: Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին, Եր., 1995: Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գ. 1-ին Եր., 2000: Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., 2001: Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Եր., 2002: Մարկոսյան Ա., Մաթևոսյան Ջ., Տնտեսության պետական կարգավորման միջոցներն ու ձևերը. Аналитический журнал, "Рынок капитала в Армении", № 7,8 (65,66), Եր., 2001: Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները, տեսության հարցեր, Եր., 2002: Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Մարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտե-

սություններում, Եր. 2003: Անանյան Լ.Զ., Տնտեսական պատմության ուրվագծեր, Եր. 2003: Ավագյան Գ., Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Եր., 1998: Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Եր., 2000: Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002:

«Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն» աշխատությունը, որտեղ փորձ է արվում ի մի բերելու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ տնտեսագիտական սկզբունքային մոտեցումները, որոնք կարող են դառնալ հանրապետության զարգացման ռազմավարության հիմքը: Ներկայացված են երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման անհրաժեշտ նախադրյալները: Եթե Ա. Մարկոսյանի աշխատությունները վերաբերում են արդյունաբերության ոլորտի վերափոխումներին, ապա Գ. Ֆահրադյանի, Գ. Սամիկոնյանի և Մ. Գաբրիելյանի աշխատություններում քննարկվում են ագրարային վերափոխումներին վերաբերող առանձին հարցեր²: Հանրապետության սոցիալական ոլորտին առնչվող մի խումբ հարցեր են արժարժված Ն. Մարգարյանի, Մ. Գաբրիելյանի, Ա. Սելքունյանի, Գ. Խառատյանի հեղինակած աշխատություններում³:

Անցումային տնտեսության և Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների հիմնահարցերին են նվիրված մի խումբ ռուս գիտնականների հեղինակած աշխատությունները⁴:

Անկախություն հռչակած Հայաստանի ներքաղաքական կյանքի

² Ֆահրադյան Գ., Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին, Էկոնոմիկա, 1-3, Եր., 1996: Սամիկոնյան Գ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Եր., 1997: Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:

³ Մարգարյան Ն., Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Եր., 2001: Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001: Թաղևադյան Մ., Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր., 2001: Սելքունյան Ա., Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրներն աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունը, Եր., 2002: Արտագաղթը Հայաստանից (խմբ. Գ. Խառատյանի, հեղինակային հրատարակություն), Եր., 2003:

⁴ Курс переходной экономики (под редакцией академика Л.И. Абалкина), М., 1997. Манов В., Реформы в пост-социалистическом обществе, М., 2000. Социальная политика: Учебник, (под общ. ред. Н.А. Болгина), М., 2002. Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т., Аграрная реформа в странах с переходной экономикой, М., 2000. Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья, сборник статей 11, (под редакцией Е.М. Кожокина), М., 2001. Иванов Э.М., Армения: особенности экономических отношений с Россией и перспективы их развития, М., 2001. Ильин С., Бабанов А., Крестьянское (фермерское) хозяйство и рынок, М., 1995. Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975. Казакевич В., Аграрный вопрос в Южной Корее, М., 1964. Реструктуризация промышленности в европейских странах с переходной экономикой (накопленный опыт и перспективы), М., 2002:

հիմնախնդիրների քննարկմանն ու վերլուծությանն է նվիրված Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ե. Կոժոկինի խմբագրությամբ հրատարակված "Армения: проблемы независимого развития" (Մ., 1998), աշխատությունը: Այստեղ մեծ տեղ է տրված հանրապետության տնտեսական հիմնախնդիրներին՝ կապված դարաքաղաքի հիմնահարցի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման և հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարների հետ: Երրորդ հանրապետության ներքաղաքական կյանքի քննադատական մոտեցումներ են պարունակում լրագրողական ոճով գրված մի շարք աշխատություններ⁵: Հանրապետության հետազոտվող ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրության գործում մեծ հետաքրքրություն են ներկայացնում անկախության տարիներին հանրապետությունում բարձրագույն պետական պաշտոններ զբաղեցրած Վ. Սանուկյանի, Գ. Բագրատյանի, Վ. Սովսիսյանի աշխատությունները⁶ և ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի հուշերը⁷:

Հայ պատմաբաններից երրորդ հանրապետության պատմության առանձին հարցերի անդրադարձել են պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Ս. Գեղամյանը, պատմ. գիտ. թեկն., Ռ.Վ. Ազիզբեկյանը⁸: Սակայն նրանց ուսումնասիրության շրջանակները լոկ ընդգրկել են հանրապետության առաջին տարիների պատմության ոչ մեծ թվով հարցեր: Նրանք չեն քննարկել հանրապետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ամբողջական պատմությունը, ավելի քան տասը տարվա սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացները:

Գործնականում աղբյուրագիտական նշանակություն են ձեռք բերում 1990-ական թվականներից սկսած հիմնախնդրի առանձին

⁵ Григорян В., История Армянского бесовства, Е., 2002, Հովսեփյան Ա., ՀՀ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Եր., 2002, Դոնդյան Լ., Երրորդ Հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը, Եր., 2002:

⁶ Սանուկյան Վ., Հայկական երագանքը գոյատևման փակուղում, Եր., 2002: Սանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու, Եր., 2002: Բագրատյան Գ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000: Բագրատյան Գ., Հասարակությունը և պետությունը, Եր., 1999: Багратян Г., "Земельная реформа вопросы теории и практики", Е., 2003. Սովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Եր., 2001:

⁷ Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը (հուշեր), Եր., 2001:

⁸ Գեղամյան Գ., Ազիզբեկյան Ռ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Եր. 1994: Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Համառոտ ակնարկ, Եր., 1992:

հարցերի շուրջ մեր սոցիալական հարցումների միջոցով կատարված հետազոտությունները: Նման հետազոտություններ կատարվել ու շարունակվում են կատարվել նաև ԴԴ Ազգային վիճակագրական ծառայությունում, ԴԴ ԳԱԱ տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավունքի հնստիտուտներում, Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում, Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի և ազգագրության ամբիոններում, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում և մի շարք հասարակական կազմակերպություններում: Դրանք լույս են տեսել 1991-2003 թթ. շուրջ երկու տասնյակից ավելի ժողովածուներով, գրքերով, գրքույկներով, հոդվածներով և այլԾ:

Աշխատանքը գրելիս օգտագործել ենք ԴԴ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված և հետազոտվող հասարակական կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող բազմաթիվ վիճակագրական ժողովածուներ⁹, 1990-2003 թթ. հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող տեղեկատվական-վերլուծական ամսեկան և տարեկան զեկույցներ, Հայաստանի վիճակագրական տարեգրքերը, հարավ-կովկասյան երկրների վիճա-

կագրական տարեգրքերը և ԴԴ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները: Որպես պաշտոնական տվյալներ օգտագործվել են ԱՆԿԽ պետությունների համագործակցության վիճակագրական տնտեսական ժողովածուները և ԴԴ վիճակագրական ռեգիստրի ու վերլուծության նախարարության նյութերը, ինչպես նաև` Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածուները, 1990-2002 թթ. ընդգրկող ԴԴ Կառավարության որոշումների ժողովածուներն ու ԴԴ պաշտոնական տեղեկագրերը, ԵԴԴ սոցիոլոգիայի ամբիոնի պատրաստած ԴԴ սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածուն:

Աշխատության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերը, ԴԴ կենտրոնական արխիվի (ԴԴ ԴԶԿԳԿԴԱ) և ԴԴ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ԴԴ ՆԴԿԴԱ) բազմաթիվ նյութեր, որոնք վերաբերում են տնտեսական վերափոխումներին և սոցիալական ոլորտի խնդիրներին: Միաժամանակ հարկ է նշել, որ տնտեսական վերափոխումներին վերաբերող փաստաթղթերն ընդգրկում են մինչև 1994 թվականը, իսկ սոցիալական ոլորտին վերաբերող նյութերը` մինչև 1997 թվականն ընկած ժամանակահատվածը: Ուստի քննության առարկա հիմնահարցերն ամբողջական ներկայացնելու նպատակով օգտագործել ենք ԴԴ կառավարության և ԴԴ վիճակագրական վարչության ընթացիկ արխիվային նյութերը, ինչպես նաև մամուլում հրապարակված համապատասխան նյութերը:

Սա առաջին փորձն է ի մի բերելու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ սկզբունքային մոտեցումները, ցույց տալու հանրապետության անցումային տնտեսության զարգացման հիմնական գործընթացները: Աշխատությունը բաղկացած է երեք գլուխներից, որտեղ քննարկվում են Հայաստանի անկախության հռչակման և պետականության կայացման գործընթացը, պետաիրավական և վարչական բարեփոխումները, տնտեսական և սոցիալական վերափոխումները, շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացի առանձնահատկությունները: Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պետական կառույցների վերափոխումներին, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում կատարվող փոփոխություններին, մասնավորեցման գործընթացներին, դրանց առանձնահատկություններին և

⁹ Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000: Պատմություններ աղքատության մասին, Եր., 2001: Արտագաղթը Հայաստանից, Եր., 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ 2000, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., վիճակագրական վերլուծական ժողովածու, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002: Ձեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների. ընտրանքային հետազոտություն, Եր., 2002: Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին, Վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999:

¹⁰ Արդյունաբերություն 1990-1997, վիճակագրական ժողովածու, Եր., 1999: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, վիճակագրական ժողովածու, Եր., 2001: Սպառողական շուկան Հայաստանի Հանրապետությունում 1921-2000, վիճակագրական ժողովածու, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կրմունակ տնտեսությունը 1999 թվականին, վիճակագրական վերլուծական ժողովածու, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Եր., 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով` 1998-2001, Եր., 2002: Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, Եր., 2001: Հայաստան 2002, Եր., 2002: Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, Աղքատության կրճատման ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Եր., 2002: Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002: Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, Իրավիճակային վերլուծության զեկույց, Եր., 2002:

հետևանքների: Կարևոր տեղ է հատկացվել նաև ֆինանսաբանկային համակարգին, դրամավարկային և հարկային-բյուջետային քաղաքականությանը, անցումային տնտեսության ծնած առավել ցավագին սոցիալական հիմնախնդիրներին, սոցիալական բարեփոխումների տեղին ու դերին, սոցիալական առաջնությունների ընտրությանը, բնակչության տեղաշարժերին, զբաղվածության, գործազրկության, հասարակության սոցիալական շերտավորման հարցերին, բնակչության կենսամակարդակի բարձրացման մոտեցումներին, առողջապահության ոլորտի, մշակութային կյանքի և գիտակրթական բարեփոխումներին: Յուրաքանչյուր գլխում տրվում են գիտականորեն հիմնավորված և գործնական տեսանկյունից իրատեսական առաջարկներ, որոնք բխում են տվյալ բնագավառի կամ հիմնահարցի համակողմանի վերլուծությունից:

Աշխատության մեջ փորձ է արվում սոցիալ-տնտեսական գործընթացների վերլուծություններով հիմնավորելու Հայաստանի տեղն ու դերը տարածաշրջանում, միջազգային կառույցներում:

Հավելվածում անհրաժեշտ կրճատումներով զետեղված են Հայաստանի անկախ պետականության հաստատման ու կայացման գործընթացին վերաբերող, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ոլորտի բազմաթիվ փաստաթղթեր:

Անկասկած, մեր օրերի պատմությունը կարելի է լիակատար ուսումնասիրել միայն տասնյակ տարիներ անց, երբ կյանքը կսրբագրի ու մարդկանցից կվանի ներկա պատմական ժամանակաշրջանի ինչպես ավելորդ զգայական լավատեսությունը, այնպես էլ առավել ևս դժգոհ հոռետեսությունը: Սա հնարավոր է միայն որոշակի պատմական տևական փորձ ձեռք բերելուց հետո: Իսկ մեր անկախ հանրապետությունն ունի ընդամենը տասներկու տարվա պատմություն:

Որպես առաջին փորձ, բնական է, որ աշխատությունը գերծ չէ թերություններից: Մենք շնորհակալությամբ կընդունենք դրանց վերաբերյալ ընթերցողների դիտողությունները և հաշվի կառնենք մեր հետագա աշխատանքներում:

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ա. Գործընթացի սկիզբը. Հայաստանի անկախության հռչակագիրը

1980-ական թվականների երկրորդ կեսը ճակատագրական ժամանակաշրջան հանդիսացավ Խորհրդային Միության համար: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը, որը խոստանում էր դեմոկրատացնել հասարակությանը, ձերբազատել այն անցյալի սխալներից ու թերություններից, փաստորեն ոչինչ չտվեց: Այդ տարիները ցնցեցին երբեմնի հզոր տերության հիմքերը և միութենական հանրապետություններին հանգեցրին իրենց անկախ պետականությունը վերականգնելու անհրաժեշտության գաղափարին: «Վերակառուցման» քաղաքականությամբ իրականացվող բարեփոխումներն ի վիճակի չէղան կանխելու ԽՍՀՄ տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորացումը: Բնական է, որ այդպիսի պայմաններում երկրի տարբեր տարածաշրջաններում պայքար սկսվեց ԽՍՀՄ ժողովուրդների կենսական շահերը շոշափող ազգային և սոցիալական հիմնահարցերի արմատական լուծման համար:

Երկրում հատկապես սրվեց ազգային հարցը, ուժեղացան հանրապետությունների անջատողական ձգտումները: Կենտրոնի անճարակության պատճառով փաստորեն ստեղծվեց քաղաքական անկառավարելի իրավիճակ: Օգտվելով այդ վիճակից՝ հատկապես միութենական հանրապետությունները փորձեցին անկախանալ: Անկախացման ուղին բռնեցին մերձբալթյան հանրապետությունները, Վրաստանը, Ուկրաինան, ավելի ուշ՝ Հայաստանի Հանրապետությունը, որը կաշկանդված էր Արցախյան խնդրով:

Կենտրոնը խուսափում էր որևէ հիմնահարցի արմատական լուծումից՝ վարելով երկդիմի և խուսանավող քաղաքականություն:

վարչակարգն այդպես վարվեց նաև 1988 թ. փետրվարին հայ ժողովրդի բարձրագույն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման պահանջի նկատմամբ: Այդ արդարացի պահանջի լուծումից հրաժարվելը միայն ոգեշնչեց Ադրբեջանի ազգայնամուլ ուժերին, որոնք բռնեցին հայության դեմ բացահայտ հակամարտության ճանապարհը: Արդյունքում այդ հանրապետությունում տեղի ունեցան արյունալի իրադարձություններ, հայերի նկատմամբ դաժան հալածանքներ և կոտորածներ և, ի վերջո, հայերի զանգվածային բռնագաղթ: Փախստականների զանգվածները բռնեցին Հայաստանի Հանրապետություն տանող ճանապարհները: Այդ ամենին գումարվեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը՝ իր աղետալի հետևանքներով:

Ստեղծված ծանր պայմաններում խորհրդային Հայաստանի ղեկավարության անհեռատես, ոչ ճկուն գործունեությունն ավելի էր բարդացնում իրավիճակը: Փաստորեն ԽՍՀՄ կոմունիստական վարչակարգի կողմից հայ ժողովրդի նկատմամբ հետևողականորեն իրականացվող ահաբեկչական քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդարացի լուծումից հրաժարվելը, Ադրբեջանում տեղի ունեցած արյունալի իրադարձությունները, փախստականների քաղաքական ու սոցիալական անպաշտպանվածությունը, Հայաստանի Հանրապետության և ԼՂԻՄ-ի տևական շրջափակումները, երկրաշարժի հետևանքների վերացման ժամկետների ձգձգումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բնագավառներում հանրապետության կուսակցական ղեկավարության անշրջահայաց և անդեմ գործելակերպը ժողովրդի մեջ խարխիլեցին հավատը կենտրոնական և հանրապետական իշխանությունների նկատմամբ:

Արցախում ծայր առած ազգային-ազատագրական պայքարը ոտքի հանեց ամբողջ հայությանը: Չնայած հարուցված բոլոր խոչընդոտներին՝ Հայաստանի Հանրապետությունում լայն թափով առաջ էր ընթանում համազգային պայքարը՝ Մայր հայրենիքի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման համար: Այդ պայքարում հայ ժողովուրդն իրեն դրսևորեց որպես կուռ ու միասնական և իր գործի արդարության ու հաղթանակի հանդեպ հավատով լի ազգ: Այդ ընթացքում հանրապետության ղեկավարության՝ կենտրոնին հնազանդ մնալու ստրկամիտ քաղաքականությունն աստիճանաբար առաջին պլան մղեց անկախ պետականության վերականգնման խնդիրը: Սկսվեց համազգային շարժում՝ անկախությունը վերա-

կանգնելու դարավոր երազանքի իրականացման համար: Արցախի ազատագրական հուժկու ելույթը շարժմանը հաղորդեց համընդհանուր անկախության համար պայքարի բնույթ:

Ազգային իղձերի իրականացմանը նպատակաուղղված և Հայաստանն ալեկոծող ժողովրդական շարժման մեջ ընդգրկվեցին հասարակության ամենատարբեր զանգվածներ. պայքարը դարձավ համաժողովրդական:

Սոցիալական, բնապահպանական, լեզվամշակութային, ժողովրդավարական ու այլ հիմնահարցեր լծորդվեցին արցախյան ազատագրական շարժմանը: Բազմերանգ հոսանքները և շարժումները միավորելու և մեկ միասնական նպատակի ծառայեցնելու համար Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի նախաձեռնությամբ 1989 թ. աշնանը ստեղծվեց «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ)¹¹: Չնայած իր անվանը այդ շարժումը չդարձավ իսկական համազգային և չէր էլ կարող դառնալ, որովհետև գործնականում անհնար էր հասարակական բոլոր շերտերի շահերը, մտածումները և ձգտումները միավորել: Այդ պատճառով էլ, ըստ էության, ՀՀՇ-ն դարձավ հանրապետությունում առաջացած բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններից մեկը, սակայն առավել հզորը: Ինչպես պարզվեց հետագայում, ՀՀՇ-ն չարաշահում էր ժողովրդական զանգվածների ազատագրության և անկախության համար պայքարը՝ ձգտելով երկրում հաստատել իր իշխանությունը: Նրա կողմից թույլ տրվեցին մի շարք կոպիտ սխալներ. այսպես «Նաիրիտի», Ալավերդու պղնձաձուլական, Կիրովականի քիմիական և այլ գործարանների փակումը, մի բան, որը տնտեսական մեծ հարված հասցրեց հանրապետության տնտեսությանը: 1989 թ. հունիսի 25-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «Նաիրիտը» փակելու վերաբերյալ¹², որն իրականացվեց նույն թվականի դեկտեմբերի 30-ին¹³: Անշուշտ, կենսոլորտի մաքրության ապահովման տեսանկյունից այն դրական նշանակություն ուներ, սակայն հանրապետության տնտեսությունն արտակարգ ծանր կացության մեջ հայտնվեց: «Նաիրիտը» ոչ միայն միջազգային շուկայում մեծ պահանջարկ վա-

¹¹ ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀԶԿՓԿՊԱ): Ֆ 4516, ց. 1, գ. 13, ք. 1-4:

¹² ՀՀ ՀԶԿՓԿՊԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 27, ք. 17-20:

¹³ Նույն տեղում՝ ք. 8-20, 27, 30:

յելող, թանկարժեք քլորոպրենային կաուչուկ արտադրող ԽՍՀՄ միակ ձեռնարկությունն էր, այլև հումքի մատակարարման յուրահատուկ էպիկենտրոն, որի շնորհիվ գործում էին հանրապետության և երկրի հարյուրավոր ձեռնարկություններ: Միայն Հայաստանի Հանրապետությունում շուրջ 350 ձեռնարկությունների կենսագործունեությունը հիմնականում պայմանավորված էր այդ միավորումում արտադրվող հումքով¹⁴: Մինչև 1991 թ. «Նաիրիտ» փակումը հղի էր լուրջ սոցիալական հետևանքներով՝ կապված միավորման աշխատակիցներին աշխատանքով, կենսաթոշակով, բնակարաններով ապահովելու պրոբլեմի հետ: 1989 թ. տվյալներով այստեղ աշխատում էր ավելի քան 4,5 հազար մարդ, և եթե դրանց ավելացնենք նաև «Պոլիմիլիացետատ» արտադրական միավորման 1,5 հազար աշխատակիցներին, ձեռնարկություն, որի կենսագործունեությունը լիովին կախված էր «Նաիրիտից», ապա փաստորեն գործազուրկ էր դառնում 6 հազար մարդ¹⁵: Պարզ դարձավ, որ ավելի նպատակահարմար կլիներ ոչ թե փակել «Նաիրիտը», այլ կատարելագործել ու վերափոխել նրա հնացած տեխնոլոգիան, ինչը կնպաստեր վնասակար արտանետումները ընդունված նորմայի աստիճանին հասցնելուն: Սակայն հետագայում ևս այս ուղղությամբ միջոցառումներ չձեռնարկվեցին: Նշենք, որ իշխանությունը վերցնելուց հետո նույն ՀՀ-ի ղեկավարությունը վերագործարկեց գործարանը՝ մոռանալով նրա «վնասաբեր հետևանքները»: 1991 թ. սկզբին, Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը դիմեց Գերագույն խորհրդին՝ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը վերագործարկելու թույլտվություն ստանալու համար¹⁶: Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. ապրիլի 17-ին որոշեց թույլատրել վերագործարկելու «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման՝ հանրապետության ժողովրդական տնտեսության ճյուղերի համար խիստ անհրաժեշտ արտադրատեսակներ թողարկող որոշ արտադրամասեր¹⁷: Նույն թվականի հուլիսի 1-ից «Նաիրիտը» վերստին սկսեց գործել՝ շարունակելով լուրջ մտահոգություն պատճառել ժողովրդին: 1989 թ. հուլիսի 1-ից փակվեց Ալավերդու լեռնամետալուրգիա-

կան կոմբինատը: Նույն թվականի սեպտեմբերին փակվեցին նաև Կիրովականի քիմիական գործարանի մի շարք վնասակար արտադրամասեր: Սակայն նշված ձեռնարկությունների փակումը, որոշ չափով նպաստելով հանրապետության էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, լուրջ հարված հասցրեց նրա տնտեսությանը՝ պատճառելով միլիարդների վնաս: Այն ծանր անդրադարձավ հատկապես բնակչության սոցիալական պայմանների վրա: «Որքան վատ, այնքան լավ» կարգախոսով ավերվեց հանրապետության տնտեսությունը: Հետագայում կյանքը ստիպեց, որ գործարկվեն նշանակալից թվով փակված գործարաններ:

Այսուհանդերձ, առանձին ազգաշահ խնդիրներում (Արցախի ազատագրության, հանրապետության անկախության և այլն), հաջողվեց հասնել ազգային միասնության: Այդ շրջանում ՀՀ-ն վայելում էր ժողովրդական զանգվածների մեծամասնության վստահությունը, որը դրսևորվեց խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

1990 թ. մայիսի 20-ին, անցած 70 տարում Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններ, որին մասնակցեց նաև Արցախի հայ բնակչությունը¹⁸: Ընտրական պայքարը հիմնականում ընթացավ Հայոց համազգային շարժման և Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև: Քանի որ ավանդական հայ քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցությունը, ռամկավարները և հնչակյանները, դեռ Հայաստանում կազմակերպչորեն չէին գործում, ուստի ընտրություններում ձայները բաժանվեցին ՀՀ-ի և Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչների միջև: Կոմունիստական վարչակարգից և Արցախի հարցում ԽՍՀՄ կոմունիստական ղեկավարության հակահայկական դիրքորոշումից հիասթափված ժողովրդի մեծ մասը պաշտպանեց ՀՀ-ին, որը փաստորեն դարաբաղյան շարժման միակ ղեկավարն էր: Չնայած ՀՀ Գերագույն խորհրդում կոմունիստներն ստացան ձայների մեծ մասը, բայց, նրանց նշանակալից մասը զարմանալիորեն ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ քվեարկեց ՀՀ-ի օգտին: 1990 թ. օգոստոսի 4-ին հանրապետությունում նորընտիր խորհրդարանը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ

¹⁴ ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (Այսուհետև ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ.113, ց.163, գ.185, թ.1-2, 12-14:

¹⁵ Նույն տեղում՝ ց.164, գ.717, թ.1-2:

¹⁶ Նույն տեղում, ֆ.113, ց.164, գ.669, թ.1-4:

¹⁷ Նույն տեղում, գ.323, թ.1-4:

¹⁸ Տե՛ս *Ազգաբնկյան Ո.*, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Եր., 1992, էջ 69:

ընտրեց ԳՀՇ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին: Դրանով վերջ տրվեց կոմկուսի մենիշխանության յոթանասունամյա շրջանին:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան ազգային անկախ պետականության ստեղծմանը: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, երկարատև ու հանգամանալից քննարկումից հետո, ընդունեց «Ռոչակազիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց անկախացման գործընթացի սկիզբը¹⁹:

Ռոչակազիրը կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին: Այն բաղկացած էր 12 կետից և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները²⁰:

Ռոչակազրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, այսինքն՝ այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել էր 1918 թ.): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ Հանրապետության շրջանը (առաջինը՝ 1918-1920, երկրորդը՝ 1920-1991 թթ.): Կարևոր է նշել, որ թեև խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր և շատ հեռու էր ինքնանկախ հանրապետություն լինելուց, այնուամենայնիվ այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ Հանրապետությունը:

Ռոչակազրի հատուկ հոդվածով հաստատվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում: 1990 թ. օգոստոսի 24-ին պետական դրոշ հաստատվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, որն առաջին Հանրապետության դրոշն էր: Այնուհետև 1992 թ. ապրիլի 19-ին ընդունվեց նոր պետականության մյուս խորհրդանիշը՝ զինանշանը, որը նույնպես առաջին հանրապետության խորհրդանիշն էր²¹:

Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները

տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Հողը, իբրև մասնավոր սեփականություն, պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի միջոցներից: ՀՀ-ն պետք է ունենա սեփական դրամական համակարգը:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Ռոչակազրին արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները:

Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը թեև դեմ էր հռչակագրում 1915 թ. հայոց ցեղասպանության և հայկական տարածքների մասին կետ մտցնելու՝ պատգամավորների մեծ մասի պահանջին, սակայն քվեարկությամբ այնուամենայնիվ դրա վերաբերյալ հողված մտցվեց: Կարևոր էր նաև, որ հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ: Մինչև նոր սահմանադրության՝ հիմնական օրենքի ընդունումը հռչակագիրը ծառայում էր իբրև ծրագրային փաստաթուղթ: Ռոչակազիրը միաժամանակ դարձավ ազգային օրենսդրության և նոր սահմանադրության ստեղծման հիմքը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր հռչակագրի սկզբունքներին, ապա խորհրդարանը ստիպված էր անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ և ուղղումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունեց առաջին սահմանադրական օրենքը՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին»²², որի հա-

¹⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 1990:

²⁰ Սահմանադրության տե՛ս հավելվածում:

²¹ ԳՀ ԼՊԿՊԱ, ֆ.113, ց.163, գ.418, թ. 3:

²² Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 50:

մածայն մինչև նոր Սահմանադրության ընդունումը դադարեցվեց սահմանադրական այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին: Անկասկած այդ փոփոխությունները խաթարում էին խորհրդային սահմանադրության ամբողջականությունն ու ներքին տրամաբանությունը, քանի որ այն իրավաբանորեն հստակ համապատասխանում էր ամբողջատիրության պահանջներին՝ կոմկուսին ընծեռելով իշխանության անսահմանափակ հնարավորություններ: Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով, անգամ արմատական, հնարավոր չէր ստեղծել նոր Սահմանադրություն: Այդ պատճառով 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով, որի վրա դրվեց նոր Սահմանադրության նախագծի մշակման բարդ ու պատասխանատու խնդիրը:

Սակայն, երբ դեռ չէր բոլորել հռչակագրի ընդունման մեկ տարին, 1991 թ. մայիս-հունիսից Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական ազգամիջյան իսկական պատերազմ սկսվեց, որն աստիճանաբար ընդունեց լայն ծավալներ: Նույն թվականի օգոստոսի 30-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում՝ հռչակագիր Ադրբեջանական Հանրապետության անկախությունը վերականգնելու մասին²³: Դա նշանակում էր ԽՍՀՄ կազմից դուրս գալ, որն էլ անմիջապես արտահայտվեց Ադրբեջանի անկախ Հանրապետության այնպիսի քայլերի մեջ, ինչպես միութենական կառույցներին չենթարկվելը, այնպես էլ ԽՍՀՄ ռազմական տեխնիկայից իր բաժինը պահանջելն ու ստանալը: Ընդունված հռչակագրում շեշտված էր, որ նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունն ընդգրկելու է 1918-1920 թթ. Ադրբեջանական (մուսավաթական) Հանրապետության սահմանները: Այս հռչակագիրը բարոյական խնդրի առաջ կանգնեցրեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին և երեքուկես տարվա նրա համառ ու անզիջուն պայքարին մասնակցող ողջ հայությանը: Հայտնի է, որ դեռևս 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված որոշման մեջ շատ որոշակի ասված էր, որ Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնված ազգային-վարչական միավորները լիակատար իրավունք ունեն տնօրինելու իրենց ճակատագիրը՝ ԽՍՀՄ-ից դուրս գա-

նում կամ տնօրինելով սեփական բախտը (ըստ այդմ՝ կարող է և դառնալ ինքնանկախ սուվերեն պետություն): Փաստորեն այդ որոշումը ԼՂԻՄ-ի հայությանն իրավունք էր տալիս օրինական ճանապարհով բաժանվելու նորանկախ Ադրբեջանից, կիրառելու անկախության իր իրավունքը, մանավանդ որ ԼՂԻՄ-ը կամ նրան նախորդած Արցախ աշխարհը մինչև 1921 թ. երբեք չէր եղել այդ պետության սահմանների մեջ: Անհրաժեշտ էր առանց ժամանակ կորցնելու, արդեն ավելի քան երեք տարի Ադրբեջանից բաժանված վիճակին հանրաքվեով իրավական ձևակերպում տալ: Եվ ահա, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, արցախահայությունը 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում հրավիրեց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ: Նստաշրջանը, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, ընդունեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» փաստաթուղթը²⁴: Դրանով և նույն թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով արցախահայությունը նորից հաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը:

Ադրբեջանի և միութենական իշխանությունների պետական մակարդակով կազմակերպած պատերազմն ընդհուպ մոտեցավ Հայաստանի Հանրապետության սահմաններին: Հանրապետության սահմանամերձ գյուղերն անընդհատ զնդակոծվում և հրետակոծվում էին Ադրբեջանի օմոնականների կողմից:

*բ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը:
ԽՍՀՄ փլուզումը*

Հայաստանի նկատմամբ կենտրոնի վարած ահաբեկչական քաղաքականության անընդհատ սաստկացումը բացատրվում էր կայսրության փլուզումն ամեն գնով կասեցնելու ձգտումով, քանի որ մեր հանրապետությունն ընթանում էր անկախացման ճանապարհով: Պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետությունը մերձբալթյան հանրապետությունների, Վրաստանի և Մոլդովայի հետ միասին չմասնակցեց կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ին անցկացված համամիութենական

²³ Տե՛ս *Ուլուբաբյան Բ.*, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 266:

²⁴ «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:

հանրաքվեին՝ այն որակելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող:

Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից՝ կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու նպատակով, Հայաստանի Գերագույն խորհուրդը նույն թվականի մարտի 1-ին որոշեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու վերաբերյալ: Բվեարկության դրվեց հետևյալ հարցը՝ «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»²⁵: Հավատարիմ մնալով այս որոշմանը՝ Հայաստանի Հանրապետությունը չմասնակցեց միութենական պայմանագրի մշակման աշխատանքներին: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն՝ 2 մլն 43 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը) «այո» ասաց անկախությանը²⁶: Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն²⁷: 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Նախքան այս կարևոր իրադարձությունը, 1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ հետադիմական ուժերի կազմակերպած խռովությունը երկիրը կանգնեցրեց ռազմական բռնապետություն հաստատելու սպառնալիքի առջև: Սակայն դեմոկրատական ուժերի վճռական գործողությունների շնորհիվ պահպանողականների այս փորձն անհաջողության մատնվեց: Ժողովրդավարական ուժերի հաղթանակն արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը:

1991 թ. օգոստոսյան դեպքերից հետո ՌԽՍՖՀ նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով արգելվեց ռազմական դիկտատուրայի հաստատման փորձով իրեն վարկաբեկած կոմունիստական կուսակցության՝ ԽՄԿԿ-ի գործունեությունը Ռուսաստանի տարածքում: Նույն թվականի սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության 29-րդ համագումարը որոշեց դադարեցնել ՀԿԿ գոր-

ծունեությունը²⁸:

Հայաստանում նախ ստեղծվեց խորհրդարանական հանրապետություն, ապա նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով մտցվեց նախագահական (պրեզիդենտական) կառավարման համակարգ: Հետևելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ Անկախության մասին հռչակագրի դրույթներին՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին հիմնեց նախագահի պաշտոնը²⁹: Գերագույն խորհուրդը, չնայած գործող Սահմանադրությանը համապատասխան իր ձեռքում էր կենտրոնացրել ողջ իշխանությունը, ելնելով պետության ավելի արագ և արդյունավետ կայացման բարձրագույն շահերից, հաստատեց նախագահական կառավարման համակարգ՝ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը: «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի³⁰ համապատասխան նախագահը ղեկավարում է գործադիր իշխանությունը, իսկ Գերագույն խորհուրդն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Իշխանությունների այսպիսի տարանջատումն ամրագրվեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով՝ ընդունված 1991 թ. սեպտեմբերի 25-ին և «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքով՝ ընդունված 1991 թ. նոյեմբերի 19-ին³¹: Արդեն ստեղծված նոր օրենսդրությամբ 1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը³²:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն փաստորեն կտրվել էր նախկին տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991 թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Ադրբեջանից եկող գազամուղը: Սկսվեց Հայաստանի էներգետիկ շրջափակումը, որը գնալով ավելի մեծ չա-

²⁵ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց 165, գ. 141, թ. 21:

²⁶ «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 1, ց 84, գ. 1, թ 68-69, ց 128, գ. 3, թ. 1:

²⁹ ՀՀ ՆՊԿՊԱ ֆ. 113, ց. 165, գ. 415, թ. 42:

³⁰ Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 158-162, մանրամասն տե՛ս հավելվածում:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 177-179, 189-194, մանրամասն տե՛ս հավելվածում:

³² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի, 1991:

փեր ընդունեց: Դադարեցին գործելուց հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները և ընդհատվեցին պարապմունքները ուսումնական հաստատություններում, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի շուտով ընդհատվեց նաև երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստօրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը: Տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

Հանրապետության համար այսպիսի ծանր պայմաններում 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին³³: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը, որը ողջունեց ԱՊՀ-ի ստեղծումը, հայտնեց նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղըզստանը, Թուրքմենստանը, Ադրբեջանը, Մոլդովան և Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր՝ ԱՊՀ ստեղծման մասին: Ավելի ուշ ԱՊՀ կազմի մեջ մտավ Վրաստանը: Դրանով իրականացավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Միխայիլ Գորբաչովին մնում էր հրաժարական տալ³⁴: Անկախ պետության հռչակումից և հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ, պետականության կայացման ու ամրապնդման շրջանը:

գ. Պետականության կայացման ընթացքը. պետաիրավական և վարչական բարեփոխումներ

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: 1991 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) լիիրավ անդամ, իսկ 2001 թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի անդամ: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը: Նախկին խորհրդային համակարգից ժառանգած պետական գործառույթների մեծ ծավալը հնարավոր չէր սեփական ուժերով լիովին ֆինանսավորել: Անցումային այս դժվարին փուլում հարկավոր էր ստեղծել նախկինից էապես տարբեր պետական կառավարման միանգամայն նոր համակարգ, որը պետք է նպատակաուղղված լիներ երկրի տնտեսական հզորացմանը, անկախ պետականության ամրապնդմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացման ու հասարակական հարաբերությունների կայուն զարգացման ապահովմանը:

Հայաստանի անկախացումից հետո հրամայական էր դարձել իշխանության նոր մարմինների ձևավորումը: Այդ գործընթացը Հայաստանում սկսվել էր դեռևս 1990 թ. մայիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո: Այդ ժամանակ խորհուրդներից անցում կատարվեց դեպի խորհրդարանական հանրապետություն, բայց որոշ ժամանակ անց երկրում մտցվեց նախագահական կառավարում: Պետական կառավարման նոր համակարգի ձևավորման համար հանրապետությունում ընդունվեցին մի շարք օրենքներ: Հարկավոր էր ամրապնդել պետական կարգը: «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքով հաստատվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը³⁵: Երկրի քաղաքական կայունության համար կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ նախագահի պաշտոնի հիմնումը: 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունվեց «ՀՀ նախագահի մասին» օրենքը, չնայած այդ պաշտոնի անհրաժեշտության և լիազորությունների շրջանակների

³³ Տե՛ս նույն տեղում, 24 դեկտեմբերի 1991:

³⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁵ Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 177, 178, մանրամասն տե՛ս հավելվածում:

մասին տարածայնությունները շարունակվում են մինչև այսօր³⁶: 1991 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «ՀՀ Չերագույն խորհրդի» և «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքներով սահանվեցին իշխանության պետական բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները³⁷:

ՀՀ-ում պետական կառավարման համակարգը ներառում է պետական գործադիր մարմինները, իսկ ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որը կազմված է վարչապետից և նախարարներից: Կառավարությունը 1991-1992 թթ. գործադիր իշխանությունն իրականացնում էր 22 նախարարությունների, 8 պետական վարչությունների և վարչապետի ու փոխվարչապետի միջոցով³⁸: Հետագայում կառավարության կառուցվածքային կազմը բազմիցս փոփոխությունների ենթարկվեց:

Միայն 1995-2000 թթ. իրականացվել են կառավարության կազմի և կառուցվածքի 20-ից ավելի փոփոխություններ՝ վերակազմավորում, միավորում, լուծարում, որոնք վերաբերել են 15-ից ավելի նախարարությունների հետ: 2000 թվականի փետրվարին կատարված նոր փոփոխությամբ կառավարությունն իր մեջ ներառում էր 24-ի փոխարեն 17 նախարարություն, իսկ մայիսին՝ 20³⁹, 2003 թ. հունիսին՝ 16: ՀՀ նոր կառավարությունը կազմվեց 2003 թ. հունիսի 11-ին՝ քաղաքական կոալիցիայի ձևավորմամբ: Ազգային ժողովի 2003 թ. մայիսի 25-ի ընտրությունների արդյունքում փաստորեն կուսակցություններից և ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն ստանալ խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարություն: Ուստի առաջին անգամ Հայաստանի անկախ Հանրապետության պատմության մեջ, չորրորդ խորհրդարանական ընտրությունների ժամանակ առավել շատ ծայրեր ստացած երեք քաղաքական ուժերի՝ Հայաստանի հանրապետական կուսակցության, «Օրինաց երկրի» և Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները հունիսի 11-ին ստորագրեցին խորհրդարանական կոալիցիա և կառավարություն ձևավորելու մասին հուշագիր, որով այս երեք ազդեցիկ կուսակցությունները միասնական դիրքորոշմամբ բավականին մեծ պատասխանատվություն ստանձնեցին օրենսդիր և գործադիր

իշխանության մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու համար: Այդ համաձայնագրով կողմերն ընդունում են, որ նոր կառավարության կազմում՝ ա) պաշտպանության, արտաքին գործերի և արդարադատության նախարարներն առաջադրվելու են ՀՀ Նախագահի կողմից, բ) վարչապետը, կառավարության աշխատակազմի ղեկավարը, առևտրի և տնտեսական զարգացման, բնապահպանության, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, ֆինանսների և էկոնոմիկայի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարներն առաջադրվելու են ՀՀԿ-ի կողմից, գ) քաղաքաշինության, կրթության և գիտության, մշակույթի, երիտասարդության հարցերի նախարարներն առաջադրվելու են ՕԵԿ-ի կողմից, դ) առողջապահության, գյուղատնտեսության և սոցիալական ապահովության նախարարներն առաջադրվելու են ՀՀԴ-ի կողմից: Հուշագրում միաժամանակ նշվում է, որ բանակցային ճանապարհով սկզբունքային անհամաձայնությունները չհաղթահարվելու դեպքում կուսակցություններից յուրաքանչյուրը կարող է մյուս կողմերին գրավոր տեղեկացնել կոալիցիայից իր դուրս գալու մասին՝ միաժամանակ հետ կանչելով սույն հուշագրով նախատեսված իր բոլոր պաշտոնյաներին⁴⁰: Հենց այս հուշագրի սկզբունքներով էլ կազմվեց ՀՀ նոր՝ 11-րդ կառավարությունը:

1990-ական թվականների սկզբից սկսած իրականացվել են գործող նախարարությունների կառուցվածքային բազմաթիվ փոփոխություններ, որոնք հաճախ բացասական հետևանքներ են ունեցել: Կառուցվածքային հաճախակի փոփոխությունները պայմանավորված են գործադիր մարմինների խնդիրների ու լիազորությունների ոչ հստակ տարանջատմամբ, աշխատողների քանակի չհիմնավորված սահմանմամբ:

1991 թ. նոյեմբերին Հայաստանի երրորդ Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Բ. Արարքցյանը, իսկ դեռևս 1990 թ. օգոստոսի 13-ին վարչապետ էր դարձել Վազգեն Մանուկյանը⁴¹: Սակայն 1991-1994 թթ. վերը նշված քաղաքական փոփոխութ

⁴⁰ Տես «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի, 2003:

⁴¹ Մինչև 2000 թ. մայիսը հանրապետությունում փոխվեց տասը կառավարություն իր վարչապետներով՝ (1990 թ. օգոստոսից մինչև 1991 թ. սեպտեմբերը հանրապետության վարչապետն էր Վազգեն Մանուկյանը, 1991 թ. սեպտեմբերից մինչև նոյեմբերը վարչապետի պաշտոնակատար էր Հրանտ Բազրատյանը, 1991 թ. նոյեմբերից 1992 թ. օգոստոսը՝ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, 1992 թ. օգոստոսից 1993 թ. փետրվարը՝ Խոսրով Հարությունյանը, 1993 թ. փետրվարից 1996 թ. նոյեմ-

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 158-162, մանրամասն տե՛ս հավելվածում:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 189-196, մանրամասն տե՛ս հավելվածում:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 195, մանրամասն տե՛ս հավելվածում:

³⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29 փետրվարի, 23 մայիսի 2000:

յունները Հայաստանում համակարգված բնույթ չունեին, որովհետև իշխող քաղաքական ուժը՝ ՀՀԸ-ն դեռևս չունեի ապագա պետական կառուցվածքի մասին ավարտուն հայեցակարգ: Ավելին հաճախ կարծիք էր հայտնվում, որ Հայաստանին անհրաժեշտ չէ նոր սահմանադրություն և պետական համակարգը կարող է ձևավորվել աստիճանաբար՝ մի շարք սահմանադրական օրենքների ընդունմամբ: Անկախության մի քանի տարիների ընթացքում Հայաստանում կիրառվում էին հորհրդային Միության և հորհրդային Հայաստանի օրենքներն ու սահմանադրական դրույթները: Նախկին օրենքների գործածությունը և կատարվող վերափոխությունները հակասության մեջ գտնվելով՝ հաճախ ստեղծում էին խառնաշփոթ իրավիճակ: Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում առկա էին պետական կառավարման նախկին և ներկայիս համակարգերի կառույցները՝ անձնակազմի չհիմնավորված ուժեղացվածությամբ, լիազորությունների ոչ հստակ սահմանմամբ և հաճախ կրկնվող «դեկլարար կադրերի ոչ ճիշտ ընտրությամբ»: Հանրապետությունում պետական անարդյունավետ կառավարման պատճառներից էին պաշտոնական գաղափարախոսության, նպատակադրման, իշխանության թևերի միջև մատչելի և անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը, տարբեր մակարդակներում գործադիր իշխանության ոչ ճիշտ հանձնարարականները և գործառույթների կրկնությունները:

Փորձելով շտկել վիճակը՝ ՀՀ իշխանություններն իրենց ուշադրությունը կենտրոնացրին պետական ապարատի գործունեության արդյունավետության և ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման վրա: Այդ նպատակով 1999 թ. ստեղծվեց և այսօր իր գործունեությունն է շարունակում ՀՀ պետական կա-

ռավարման բարեփոխումների հանձնաժողովը, որը մշակում է «ՀՀ պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը», լայնածավալ աշխատանքներ է կատարում հանրապետության նախարարություններում և պետական կառավարման մյուս գերատեսչություններում՝ մշակված հայեցակարգային դրույթներին համապատասխան կառուցվածքային ու գործառույթային բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները վերակառուցելու ուղղությամբ: Այս գործում մեծ կարևորություն ունի ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. դեկտեմբերի 4-ին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Ստեղծվում է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ որպես քաղաքացիական ծառայության համակարգի կառավարման բարձրագույն մարմին: Սրանով կարգավորվում են քաղաքացիական ծառայության համակարգի իրավական հիմքերը: Վերջինիս ներդրմամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացում, պետական ապարատը որակյալ, բանիմաց և բարոյական բարձր հատկանիշներով օժտված, քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ կադրերով համալրում, ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովում⁴²: Սակայն պետական համակարգի բարեփոխումների բնագավառում նկատվող սխալներն ու բացերը դրանցով չեն վերացվում: Հիմնական թերություններից են՝ առաջին՝ այն, որ դեռևս ամբողջությամբ չեն հստակեցվել և տարանջատվել կառավարման մարմինների գործառույթներն ու պարտականությունները. երկրորդ՝ ապահովված չէ պետական մարմինների գործունեության հրապարակայնությունը. երրորդ՝ դեռևս չի ներդրվել պետական մարմինների ու պաշտոնյանների հաշվետվությունների համակարգը՝ չնայած 2002-2003-ից սկսվել է առանձին նախարարությունների տարեկան հաշվետվությունների ներկայացումը կառավարություն. չորրորդ՝ դեռևս չեն ստեղծվել հակակոռուպցիոն գործուն մեխանիզմներ, որոնք կօգնեին պաշտոնյաների պատասխանատվության բարձրացման միջոցով նվազեցնելու բյուրոկրատական քաջքույրներն ու չարաշահումները. հինգերորդ՝ չի իրականացվում հասարակության կողմից պետական կառավար-

բերը՝ Հրանտ Բագրատյանը, 1996 թ. նոյեմբերից 1997 թ. մարտը՝ Արմեն Սարգսյանը, 1997 թ. մարտից մինչև 1998 թ. ապրիլը՝ Ռոբերտ Քոչարյանը, 1998 թ. ապրիլից 1999 թ. հունիսը՝ Արմեն Դարբինյանը, հունիսից մինչև հոկտեմբեր՝ Վազգեն Սարգսյանը, հոկտեմբերից մինչև 2000 թ. մայիսը՝ Արամ Սարգսյանը, իսկ մայիսից՝ Հայաստանի հանրապետական կուսակցության նախկին նախագահ Անդրանիկ Սարգսյանը: ՀՀ երրորդ հանրապետության Գերագույն խորհրդի (1995 թ.-ից Ազգային ժողով) առաջին նախագահն էր Լևոն Տեր-Պետրոսյանը՝ 1990 թ. օգոստոսից մինչև 1991 թ. նոյեմբերը, 1991 թ. նոյեմբերից ՀՀԳԽ նախագահի պաշտոնակատարը, իսկ դեկտեմբերի 24-ից նախագահն էր մինչև 1998 թ. փետրվարը՝ Բաբկեն Արարեցյանը, 1998 թ. փետրվարից մինչև 1999 թ. մայիսը՝ Խոսրով Հարությունյանը, 1999 թ. հունիսից նույն թվի հոկտեմբերի 27-ը՝ Կարեն Դեմիրճյանը, 1999 թ. նոյեմբերից մինչև 2003 թ. մայիսը՝ Արմեն Խաչատրյանը, իսկ 2003 թ. հունիսի 12-ից «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը:

⁴² ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 1 (176), 9 հունվարի, 2001 թ., էջ 20-25:

ման համակարգի վերահսկման համալիր ծրագիր:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների արդյունավետ իրականացումից ակնկալվող հիմնական արդյունքներն են՝ պետական կառավարման մարմինների օպտիմալ թվաքանակի և կառուցվածքի սահմանումը, կառավարման կենտրոնական մարմինների որոշակի լիազորությունների փոխանցումը գործադիր այլ մարմինների, տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը պետության միջամտության նվազումը, հասարակության կողմից կառավարության նկատմամբ վստահության ամրապնդումը, ստվերայնության մակարդակի իջեցումը, կառավարման կայուն համակարգը, պետական ծառայողների անձնական պատասխանատվության բարձրացումը, առանձին բնագավառներում պետության կողմից կարգավորվող համակարգերի ներդրումը:

Հանրապետության պետական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Այդ նպատակով ստեղծված ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը 1993 թ. սկսեց ՀՀ սահմանադրության առաջին նախագծի մշակման աշխատանքները: Նախագծեր ներկայացրին նաև մի քանի կուսակցություններ: Գերագույն խորհրդում ու համաժողովրդական քննարկումից հետո 1994 թ. սահմանադրական հանձնաժողովի ընդլայնված կազմը՝ համալրված ԳԽ-ում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչներով, մշակեց նոր՝ բարեփոխված տարբերակ, որը ՀՀ սահմանադրական օրենքին համապատասխան 1995 թ. մարտի 27-ին Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո դրվեց հանրաքվեի: 1995 թ. հուլիսի 5-ին խորհրդարանական ընտրությունների ժամանակ հիմնական օրենքի օգտին քվեարկեց ընտրողների 68,4%-ը⁴³: Այսպիսով, ՀՀ նոր Սահմանադրությունն ընդունվեց 1995 թ. հուլիսի 5-ին: Նոր սահմանադրությունը, իր թերություններով հանդերձ, կարևոր երևույթ էր: Այն թեև ընդունվեց ոչ անբասիր անցկացված հանրաքվեի արդյունքում, այնուհանդերձ դրեց ամբողջատիրական և ավտորիտար համակարգերից դեպի ժողովրդավար պետության անցնելու իրավական հիմքը:

Սահմանադրության աչքի ընկնող թերություններից են իշխա-

նության երեք թևերի միջև փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմների բացակայությունը, ՀՀ Նախագահին ընձեռված բացառիկ մենաշնորհային լիազորությունների մեծ ծավալը, ՀՀ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունների բացակայությունը, դատական իշխանության անկախության ոչ իրական լինելը և այլն: Դրանց վերացման, սահմանադրական այլ բարեփոխումների նպատակով էլ հատկապես 1998-2002 թթ. կարևոր աշխատանքներ կատարվեցին: ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց սահմանադրական փոփոխությունների հանձնաժողով, որն էլ ձեռնամուխ եղավ սահմանադրական փոփոխությունների մշակմանը: Սահմանադրական բարեփոխումների փաթեթները ներկայացվեցին Ազգային ժողով և քննարկվեցին նրա պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովում: ՀՀ Սահմանադրական փոփոխությունների վերջնական տարբերակը, արժանանալով Ազգային ժողովի հավանությանը, դրվեց հանրաքվեի 2003 թ. մայիսի 25-ի խորհրդարանական նոր ընտրությունների ժամանակ և անհրաժեշտ թվով (ՀՀ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ երրորդը) ձայներ չհավաքեց⁴⁴:

Ընդհանուր առմամբ 1995 թ. Սահմանադրությունը հնարավորություն տվեց ստեղծել կայուն պետական կառույց, որի շնորհիվ հաջողվեց դիմակայել այնպիսի լուրջ քաղաքական ճգնաժամի, ինչպիսին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականն էր 1998 թվականի փետրվարի 3-ին և արտահերթ նախագահական ընտրությունները: Նույն թվականի մարտին ՀՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Նա երկրորդ անգամ վերընտրվեց 2003 թ. մարտի 5-ին կայացած նախագահական ընտրությունների երկրորդ փուլով:

Քաղաքացիների ընտրական իրավունքի խախտման բազմաթիվ դեպքերով անցկացվեցին ինչպես Ազգային ժողովի 1995, 1999, 2003 թթ., այնպես էլ նախագահական 1996, 1998 և 2003 թթ. ընտրությունները: 1996 թ. նախագահական ընտրությունները ԵԱՀԿ դիտորդների կողմից բացասական գնահատականի արժանացան: 1995 թ. Ազգային ժողովի ընտրություններում փորձարկված կեղծիքների մեթոդները իշխանությունների կողմից լայնորեն օգտագործվե-

⁴³ Տես Հայաստանի Հանրապետության ԳԽ տեղեկագիր, հոդվ. 9 (1085), 15 մայիսի, 1995:

⁴⁴ Տես «Հայաստանի Հանրապետություն», 3 հունիսի, 2003:

ցին նաև 1996 թ. սեպտեմբերի 22-ի նախագահական ընտրությունների ժամանակ: Կրկին սահմանափակված էր ընտրության հնարավորությունը, քանի որ ընտրություններին նորից չէր մասնակցում հայ հեղափոխական դաշնակցությունը: Չնայած կուսակցության գործունեության պաշտոնապես հայտարարված կասեցման ժամկետը լրացել էր, այն շարունակեց ուժի մեջ մնալ մինչև Լ. Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման վերջը, իսկ կուսակցության ղեկավարները մնացին բանտում:

Քարոզարշավի ընթացքում պարզվեց, որ ընտրողները տրամադրված են ոչ այնքան իրենց ձայները տալու որևէ կոնկրետ թեկնածուի օգտին, որքան քվեարկել Լ. Տեր-Պետրոսյանի դեմ: Ընդդիմության չորս թեկնածուներ միավորվեցին միասնական թեկնածուի՝ Վազգեն Մանուկյանի շուրջը, որին հաջողվեց համախմբել իշխանություններից դժգոհ ընտրազանգվածին: Թվում էր՝ Մանուկյանն ունի հաղթելու իրական հնարավորություններ: Սակայն, համաձայն հայտարարված արդյունքների, ընտրություններում հավաքելով ձայների 51,75 տոկոսը, հաղթեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Իսկ Վազգեն Մանուկյանը հավաքեց միայն 41,29 տոկոսը⁴⁵: Չնայած առաջին փուլում Լևոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը կասկածի տակ դնող միջազգային դիտորդների կողմից արձանագրված կեղծիքներին՝ նա հռչակվեց նախագահ: Ընտրարշավի արդյունքում իրապես պարտված նախագահի թեկնածուին սատարող քաղաքական ուժը դիմեց ընտրության արդյունքների կեղծման: Խախտելով գոյություն ունեցող ընտրական կարգը՝ նախատեսված ժամկետից շուտ, այսինքն՝ ընտրության արդյունքների ամփոփումից առաջ, իրենց հովանավորյալին հայտարարեց ընտրված նախագահ ու շնորհավորեց:

Ընտրության արդյունքների ամփոփման ընթացքում տեղ գտած կեղծիքների դեմ քաղաքացիների զանգվածային բողոքն ու պահանջը՝ հանրաքվեներով և անհնազանդության ակցիաների միջոցով ստիպել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին կատարել վերահաշվարկ, չիրականացավ, իսկ այդ ուղղությամբ կազմակերպված հանրահավաքը ճնշվեց, ընդդիմադիրներից շատերը ձերբակալվեցին՝ մայրաքաղաքում զինվորական մեծաքանակ տեխնիկա տեղակայելու և ռազմական դրություն հայտարարելու միջոցառումների կիրառմամբ:

⁴⁵ Նախագահական ընտրություններ, Հայաստան 2003, էջ 15:

1998 թ. մարտին Հայաստանում անցկացվեցին արտահերթ նախագահական ընտրություններ, որոնք արդյունք էին նախկին իշխանության ձևավորած վարչակազմի ճգնաժամի, որի հետևանքով տեղի ունեցավ իշխանության օղակներից քաղաքական իշխող խմբի հեռացումը:

Դեռևս 1997 թ. դեկտեմբերի 1-ին հանրապետական մամուլում Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդես էր եկել «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. մտորումների ժամանակը» հոդվածով, որտեղ Ղարաբաղյան հարցում Ադրբեջանին զիջումներ էին առաջարկվում: Հոդվածն օտարացման ակիբ բարձրացրեց հասարակության և վերնախավի միջև. որն էլ ի վերջո, հանգեցրեց 1998 թ. փետրվարի 3-ին Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Նույն թվականի մարտին անցկացված երրորդ նախագահական ընտրություններում մրցարշավը գլխավորում էին 1997 թ. մարտի 20-ից Հայաստանի վարչապետ Ռոբերտ Քոչարյանը և Հայկ. ԽՍՀ Կոմկուսի նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը:

1998 թվականի մարտի 16-ին նշանակված արտահերթ նախագահական ընտրություններին մասնակցեցին 12 թեկնածուներ: Այն ընթացավ երկու փուլով և ավարտվեց մարտի 30-ի քվեարկությամբ: Այդ ընտրությունները, թեև անցան որոշ խախտումներով, սակայն կասկածներ չառաջացրին վերջնական արդյունքի հանդեպ: Ընտրություններից հետո չեղան բողոքի զանգվածային միջոցառումներ կամ դրանց արդյունքների փաստարկված հերքումներ: Երկրորդ փուլ դուրս եկան Ռ. Քոչարյանն ու Կ. Դեմիրճյանը: Ստանալով ձայների 59,49%-ը՝ երրորդ Հանրապետության երկրորդ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը⁴⁶:

Նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին 2003 թ. փետրվարի 19-ին: Առաջադրվեցին 9 թեկնածուներ: Հաշվարկների արդյունքների համաձայն երկրորդ փուլ դուրս եկան գործող նախագահ Ռ. Քոչարյանը՝ 49,8 տոկոս և ընդդիմության միացյալ թեկնածու Ստեփան Դեմիրճյանը՝ 28,22 տոկոս:

Ըստ երկրորդ փուլի արդյունքների՝ ձայների 67,48 տոկոսով նախագահ վերընտրվեց Ռ. Քոչարյանը: Ս. Դեմիրճյանը հավաքեց ձայների 32,53 տոկոսը: Քվեարկության արդյունքները վիճարկեց ընդդիմությունը: Երևանում անց են կացվում հանրահավաքներ: Ընդ-

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

դիմությունը դիմում է Սահմանադրական դատարան, որը, քննելով հարցը, մատնանշում է ընտրության ընթացքում առանձին տեղամասերում կատարված ընտրախախտումները և միաժամանակ արձանագրում է. «Ոչ հավաստի համարելով քառասուն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները՝ միաժամանակ անփոփոխ թողնել ՀՀ ԿԸՀ 2003 թ. մարտի 11-ի որոշումը, որով ՀՀ նախագահ է ընտրվում գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը»⁴⁷: Որոշման վեցերորդ կետով Սահմանադրական դատարանն առաջարկում է «Գալիք Ազգային ժողովին մեկ տարվա ընթացքում փոփոխություններ մտցնել «Հանրաքվեի մասին» օրենքում և ըստ այդ փոփոխությունների նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը»⁴⁸:

Դեռևս 1990-ական թվականների սկզբին սկսեցին ձևավորվել պետաիրավական նոր կառույցներ: ՀՀ սահմանադրությունը նախատեսում էր կիսանախագահական հանրապետության մոդելը՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատումով:

Գործադիր իշխանությունը ներկայացնում է ամբողջ ժողովրդի կողմից ընտրված նախագահը, որը նշանակում է վարչապետին, նրա առաջարկությամբ նշանակում է նախարարներին, հրավիրում և վարում է կառավարության նիստեր, վավերացնում է կառավարության որոշումները:

ՀՀ նախագահը հանդիսանում է հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Լինելով ժողովրդին ամենամոտ կանգնած իշխանությունը՝ տեղական ինքնակառավարումն ապահովում է քաղաքացիական հասարակության ձևավորումը, իշխանության ապակենտրոնացումը, տնտեսության զարգացումը և բնակչության կենսապահովման խնդիրների լուծումը: Չնայած 1995 թ. ընդունված Սահմանադրությունը օրենսդրական հիմք հանդիսացավ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման համար՝ սակայն այս ոլորտում

օրենսդրական դաշտը կատարելագործման կարիք ուներ:

ՀՀ-ի տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղական ինքնակառավարման խորացման նպատակին էին ծառայում 1995 թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները և նոր միավորումների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: 1995 թ. նոյեմբերի 7-ին Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքը⁴⁹: Դրա հիման վրա հանրապետության 37 վարչական շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 11 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Տավուշի, գումարած մարզի կարգավիճակ ստացած քաղաքամայր Երևանը: Սարգերը բաժանվեցին 930 համայնքների, որոնցից 47-ը քաղաքային, 12-ը՝ թաղային և 871-ը՝ գյուղական⁵⁰: ՀՀ վարչատարածքային բաժանման արդյունքում գոյացած համայնքները զգալիորեն տարբերվում են միմյանցից՝ բնակչության թվով, աշխարհագրական դիրքով, զարգացվածության աստիճանով և այլ հատկանիշներով: Համայնքների 21%-ը լեռնային է՝ գտնվում է ծովի մակերևույթից 1700-2000 մետր բարձրության վրա, իսկ 15,4%-ը բարձր լեռնային է և տեղակայված է ծովի մակերևույթից 2000 և ավելի մետր բարձրության վրա, 18,7%-ը՝ սահմանամերձ է: Նշված տարբերությունների ու առանձնահատկությունների բնորոշումը կարևոր նշանակություն ունի համայնքների նկատմամբ տարբերակված պետական քաղաքականություն մշակելու համար: Մասնավորապես որոշակի արտոնությունների, զեղչերի ու հավելումների կառուցակարգեր են գործում սահմանամերձ համայնքների համար: Համայնքները միմյանցից տարբերվում են նաև բնակչության թվով: Միջին հաշվով հանրապետության մեկ համայնքում բնակվում է 4084 մարդ, առանց Երևան քաղաքի՝ 2777, իսկ միայն գյուղական համայնքներում՝ 1443 մարդ⁵¹: Ընդ որում կա մինչև 100 բնակիչ ունեցող 36 համայնք, 101-ից 1000 բնակիչ ունեցող 421, 1001-ից 3000 բնակիչ ունեցող 318, 3001-ից բարձր բնակիչ ունեցող 96 գյուղական համայնք⁵²: Փոքր համայնքներում մեծ դժվարություններ են ստեղծվում

⁴⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Ա, Եր., 1999, էջ 51-73:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

⁵¹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 1998-2001, Եր., 2002, էջ 14,15:

⁵² Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2001, էջ 59:

⁴⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 ապրիլի, 2003:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

տեղական ինքնակառավարման լիազորությունների կատարման համար: Ուստի անհրաժեշտություն է առաջանում համայնքների խոշորացման ի հաշիվ այլ համայնքների, որոնց բնակավայրերը միաձուլված են: Դա հնարավորություն կտա խուսափել ֆինանսական միջոցների փոշիացումից, միավորված միջոցների հաշվին լուծել այդ համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

1996 թ. հունիսի 30-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որին հաջորդեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» օրենքը⁵³: Սկսվեցին անիմաստ որոշումներ մարզպետների ու համայնքապետների միջև իշխանության ֆունկցիաների, տարածքի, գույքի, սեփականության հաստատման շուրջ:

1997 թ. մայիսի 6-ին ընդունվեցին ՀՀ նախագահի հրամանագրերը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին»⁵⁴: Այս հրամանագրերին նախորդել էին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները հանրապետական, մարզային, քաղաքային և գյուղական համայնքների գույքերի ցանկերը հաստատելու վերաբերյալ⁵⁵:

Տեղական կառավարման համակարգի վերափոխման նպատակը լիազորությունների և պատասխանատվության ոլորտների սահմանազատումն էր մի կողմից պետության՝ ի դեմս կառավարության նշանակած մարզպետների, մյուս կողմից՝ տեղական համայնքների միջև՝ ի դեմս նրանց ընտրովի մարմինների ու ղեկավարների: Մարզպետն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում պետք է իրականացնի կառավարության տարածքային քաղաքականությունը: Նախագահի հրամանագրով նրան վերապահվեցին ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ծանապարհաշինության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության ու շրջակա միջա-

վայրի պահպանության ոլորտները:

Մարզպետի պարտականությունն է համակարգել համայնքապետների համաձայնեցված գործունեությունը, վարչապետի և կառավարության որոշումների իրականացումը տեղերում: Մարզպետները միջնորդ են կառավարության և մարզի միջև, այլ ոչ թե ինքնուրույն գործող սուբյեկտներ: Համայնքները և նրանց մարմինները գործում են օրենսդրությամբ և կառավարության որոշումներով սահմանված շրջանակներում: Նրանք իրավունք ունեն այդ շրջանակներում ինքնուրույն որոշումներ կայացնել: Նրանց հնարավորությունները և ինքնուրույնության չափը կախված է նախ և առաջ տեղական հարկային և ֆինանսական միջոցներից, որոնք էլ թույլ են տալիս իրականացնելու պետության, կառավարության ընդունած որոշումներն ու ծրագրերը: Սակայն տեղական ինքնակառավարման համակարգն այսօր դեռևս չունի զարգացման իրավական և տնտեսական հիմք: Տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի ու ավագանու, ժողովրդի կողմից փակ, գաղտնի քվեարկությամբ և ուղղակի ընտրություններով ձևավորելը երաշխավորում է համայնքային իշխանությունների անկախությունը, սեփական պատասխանատվությամբ ինքնուրույն գործելու, ինչպես նաև համայնքային սեփականությունն ինքնուրույն տնօրինելու և կադրային քաղաքականություն իրականացնելու իրավունքը:

Տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող սահմանադրական թերություններից պետք է համարել համայնքների կայացման և գործունեության երաշխիքների բացակայությունը. չեն ուրվագծվում լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նվազագույն շրջանակները: Համակարգի կայացմանը խոչընդոտում է նաև սահմանադրական այն դրույթը, որով կառավարությունը մարզպետի ներկայացմամբ կարող է անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին: Փաստորեն կառավարության կողմից նշանակված մարզպետը կարող է համայնքի կողմից ընտրված համայնքապետին հեռացնել զբաղեցրած պաշտոնից: Սա էապես սահմանափակում է համայնքապետի գործունեության շրջանակները և նրան կախվածության մեջ է դնում մարզպետից: Բացի դրանից, ոչ միայն չեն գործում որոշ սահմանադրական դրույթներ, այլև ընդունվել ու գործում են օրենքներ, որոնք ուղղակի հակասության մեջ են մտնում դրանց հետ: Սահմանադրությունը հակասում է նաև 2001 թ. նոյեմբերին ընդունված «Գնումների

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 423-443:

⁵⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 11, 20 մայիսի, 1997, էջ 21-42:

⁵⁵ Տե՛ս ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, հ. 7-8, հուլիս, օգոստոս, եր., 1996 թ. էջ 38, 39. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ. 6, 31 մարտի, 1997, էջ 78-90:

մասին» ԳՅ օրենքին⁵⁶: Դրանով ստեղծվում է Պետական գնումների գործակալություն, որի նպատակն է ապահովել պետության և համայնքների կարիքների համար գնումների իրականացման գործընթացի արդյունավետ կազմակերպումը: Սակայն այդ օրենքով խախտվում է իր սեփականությունն ինքնուրույն տնօրինելու համայնքի իրավունքը: Իր սեփականությունը և ֆինանսական միջոցներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը հաճախ խախտվում է նաև պետական կառավարման և գանձապետական օղակների կողմից: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է համայնքների ֆինանսական ապահովվածության աստիճանից: Հանրապետության համայնքների 2000 թ. պլանային բյուջեն 20,0 մլդ դրամ էր, փաստային 13,9 մլդ դրամ հարկային մուտքերի և դոտացիաների կրճատման պատճառով, որոնք համապատասխանաբար կազմում էին Հայաստանի Հանրապետության բյուջեի 8,1 և 6,8%-ը: Անցած տարիներին այդ ցուցանիշի էական բարելավում չի նկատվել: Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ եվրոպական երկրներում այդ ցուցանիշը 30%-ից բարձր է: Մտահոգիչ է նաև միջին հաշվով մեկ համայնքին ընկնող բյուջետային միջոցների գումարի մեծությունը, որը ՀՀ համայնքներում 2000 թ. կազմել է 21,6 մլն դրամ, առանց Երևանի թաղային համայնքների՝ 14,0 մլն դրամ, իսկ զուտ գյուղական համայնքներում 7,8 մլն դրամ: Ընդ որում մինչև 500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների բյուջեները, որպես կանոն, չեն գերազանցում 5 մլն դրամի սահմանագիծը⁵⁷: Համայնքի բյուջեի շուրջ 2/3-ը կազմում են սեփական եկամուտները, որոնք բաղկացած են հարկերից, տուրքերից և ոչ հարկային վճարներից: Համայնքների ինքնավարության և տնտեսական անկախության ապահովման համար նախ պետք է ավելացվեն սեփական եկամուտները: Դա կարող է կատարվել պետական այլ հարկատեսակներից որոշ տոկոսադրույքներ համայնքի բյուջեին ամրակցելու միջոցով: Այդպիսի կարգ կիրառվում է այլ երկրներում, օրինակ՝ եվրոպական շատ երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում տեղական բյուջեներին են ուղղված շահութահարկի, ավելացված արժեքի հարկի որոշակի մասնաբաժիններ: Կարելի է ավելացնել տեղական տուրքերի ու վճարների բա-

⁵⁶ Տե՛ս ԳՅ գործող օրենքների ժողովածու, գիրք Դ, եր., 2001, էջ 967:

⁵⁷ Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, եր., 2000, էջ 24-26:

ժինը: Եվրոպական շատ երկրներում այդ բաժինը 25%-ից բարձր է: Համայնքի բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման համար նպատակահարմար է, մի կողմից, ուժեղացնել հարկային վարչարարությունը և, մյուս կողմից, ապակենտրոնացնել հարկահավաքման գործառույթները՝ տեղական ինքնակառավարման համակարգին տալով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման իրավասություններ: Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման կարևորագույն պայմաններից է դրա համար անհրաժեշտ տնտեսական հիմքերի ստեղծումը, որի առանցքը համայնքի սեփականությունն է: Դեռևս որոշակի խզվածություն է նկատվում համայնքի լիազորությունների ծավալի և դրանց կատարման համար համայնքին հատկացված սեփականության միջև: Համայնքը ներկայումս չունի իր լիազորություններին համարժեք գույքային միջոցներ: Հետևաբար, անհրաժեշտ է ընդլայնել նրա սեփականության շրջանակները և ավելի խորացնել ապակենտրոնացման գործընթացները: 2002 թ. մայիսի 7-ին ընդունվեց: «Տեղական ինքնակառավարման մասին» ԳՅ նոր օրենքը, որով նախատեսվում է ընդլայնել համայնքի ղեկավարի նկատմամբ ավագանու՝ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը, համայնքային բյուջեում ամրագրել տնտեսական գործունեության հետ կապված հարկերի մասհանումներ, համայնքին վերապահել նաև շինարարության թույլտվության և հողահատկացման իրավունքը⁵⁸: Դրանով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և գործառույթների ընդարձակմանը զուգահեռ որոշ չափով ավելանում են նաև համայնքների ֆինանսական հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, 1995 թ. հուլիսից վերանվանվեց Ազգային ժողով, որը միապալատ պառլամենտ է: Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդը ձևավորվեց 1990 թվականին: Հայաստանն այդ ժամանակ խորհրդային հանրապետություն էր: Գերագույն խորհրդի ընտրությունները կազմակերպվեցին ԽՍՀՄ և ՀԽՍՀ սահմանադրություններին և «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին» օրենքին համապատասխան: Սակայն 1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին ընտրությունները տե-

⁵⁸ Տե՛ս ԳՅ պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին ԳՅ օրենքը», թիվ 21(196), 21 հունիսի, 2002, էջ 5, 7, 8, 27:

դի ունեցան մեծամասնական ընտրակարգով՝ երկու փուլով: Անցկացված ընտրություններն արմատապես տարբերվում էին խորհրդային իշխանության տարիներին կայացած բոլոր ընտրություններից, որովհետև դրանց նախորդող երկու տարիներին Հայաստանում ձևավորվել էր սկզբունքորեն նոր իրավիճակ: Արցախյան ազատագրական պայքարով սկսված համաժողովրդական շարժումն իր առջև խնդիր էր դրել ստեղծել ազգային անկախ պետություն, լուծել դարաբաղյան հիմնահարցը և հաստատել ժողովրդական արժեքներ: Այս ազգային վերելքի պայմաններում ընթացած ընտրությունների արդյունքում ստեղծվեց հասարակության մեջ իշխող տրամադրություններն արտացոլող, իր կազմով սկզբունքորեն նոր խորհրդարան, թեև շատ կողմերով դեռևս խորհրդային, որքանով Հայաստանը շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում, որտեղ գործում էր խորհրդային օրենսդրությունը: Նոր խորհրդարանը, որը կազմված էր 260 պատգամավորից, սկսեց գործել հուլիսի 20-ից: Գործունեության հինգ տարվա ընթացքում խորհրդարանում ձևավորվեց 5 խմբակցություն, 12 պատգամավորական խումբ, 16 մշտական հանձնաժողով, որոնց մեջ ընդգրկվեցին 100-ից ավելի պատգամավորներ⁵⁹: Բացի այդ, խորհրդարանը դարձավ մշտապես գործող և հնարավորություն ստացավ իրականացնել սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության բարձրագույն և միակ օրենսդիր մարմնի գործառնությունները: Այն Հռչակագրին համապատասխան 1990 թ. օգոստոսի 24-ին որոշեց ՀԽՍՀ 12-րդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ⁶⁰: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, լինելով Հայաստանի նորանկախ պետության առաջին խորհրդարանը, մեծ պատմական առաքելություն ուներ կատարելու հայոց պետականության կայացման գործում: Այն պետք է կարողանար ստեղծել պետության կայացման և գոյության համար անհրաժեշտ օրենսդրական համակարգ, համապատասխան պետական կառույցներ ու արմատապես վերակառուցել հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող համարյա բոլոր ոլորտները՝ տնտեսությունը, ֆինանսները, դատական համակարգը, իրավապահ մարմինների համակարգը, ազգային բանակը, արտաքին քաղաքա-

կանությունը, էկոլոգիան, մաքսային ծառայությունը և այլն: Չնայած խորհրդարանի աշխատանքներում նկատված սխալներին ու թերություններին՝ այն համապատասխան որոշումներով և օրենքներով քայլ առ քայլ կարողացավ ըստ էության բոլոր հիմնական ոլորտներում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, ինչպես նաև ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք նախկինում գոյություն չէին ունեցել առհասարակ: Իր գործունեության ընթացքում խորհրդարանը մշտապես զբաղվեց հանրապետության սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումների և շուկայական հարաբերությունների հաստատման հարցերով: ՀՀ Գերագույն խորհուրդը իր 10 նստաշրջանների ընթացքում գումարեց 459 նիստ, որից 37-ը՝ արտահերթ: Ընդունեց 188 օրինագիծ, 1211 որոշում, վավերացրեց 151 միջազգային պայմանագիր ու համաձայնագիր⁶¹: Այժմ, հետադարձ հայացք ձգելով հայոց երրորդ հանրապետության առաջին խորհրդարանի գործունեությանը, ակնհայտ է դառնում, որ այն, թերի կողմերով հանդերձ, ընդհանուր առմամբ դրեց հայոց նոր պետականության հիմքերը, իրական պայմաններ ստեղծեց այդ պետականության կայացման ու հետագա զարգացման համար: 1995 թ. հուլիսի 5-ին խորհրդարանական նոր ընտրությունների արդյունքում ձևավորվեց ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովը, որը կազմված էր 190 պատգամավորից, որից 150-ը ընտրված էին մեծամասնական ընտրական համակարգով՝ միամանդատ ընտրատարածքներից, իսկ 40-ը՝ համամասնական ընտրական համակարգով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ խորհրդարանն ընտրվում է չորս տարի ժամկետով: Հայաստանի առաջին Ազգային ժողովի աշխատանքներն սկսվեցին 1995 թ. հուլիսի 27-ին, ուներ վեց մշտական հանձնաժողով, վեց խմբակցություն ու պատգամավորական խումբ: Ընտրությունների արդյունքներով համամասնական ընտրակարգով օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին հինգ կուսակցություններ, որոնց միջև պատգամավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կերպ՝ 1. «Հանրապետություն» միավորում-20, 2. «Շամիրամ» կանանց միավորում-8, 3. ՀԿԿ-6, 4. ԱժԿ-3, 5. ԱԻՄ-3⁶²: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց

⁵⁹ Տե՛ս ՀՀ Գերագույն խորհուրդ 1990-1995, Եր., 1995, էջ 115:

⁶⁰ ՀՀ Գերագույն խորհուրդ 1990-1995, Եր., 1995, էջ 6:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

⁶² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, Եր., 1996, էջ 205-206:

Բաբկեն Արարքցյանը: Այս խորհրդարանը գլխավոր ուշադրությունը նվիրեց դատական համակարգի բարեփոխումներին, վավերացրեց միջազգային բազում պայմանագրեր, փորձեց կարգավորել հարկային վարչարարությունը: Ընդհանուր առմամբ գործունեության չորս տարիների ընթացքում ԱԺ-ն ընդունեց 300-ից ավելի օրենք՝ ուղղված հիմնականում շուկայական հարաբերությունների զարգացմանը: 1998 թ. փետրվարի 4-ին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից անմիջապես հետո հրաժարական տվեց նաև ԱԺ ղեկավարությունը: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Խոսրով Հարությունյանը: 1999 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների շնորհիվ ձևավորվեց ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովը, որը բաղկացած էր 131 պատգամավորից: 75 պատգամավոր ընտրվեց մեծամասնական, 56-ը՝ համամասնական ընտրակարգով⁶³: Նրա աշխատանքներն սկսվեցին 1999 թ. հունիսի 10-ին, ուներ վեց մշտական հանձնաժողով, վեց խմբակցություն և երեք պատգամավորական խումբ: Ըստ ընտրությունների արդյունքների համամասնական ընտրակարգով 5%-ի սահմանագիծը հաղթահարեցին 6 կուսակցություններ ու դաշինքներ, որոնց միջև պատգամավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կերպ՝ 1. «Միասնություն» դաշինք-29, 2. ՀԿԿ-8, 3. «Իրավունք և միաբանություն» դաշինք-6, 4. ՀՅԴ-5, 5. «Օրինաց երկիր»-4, 6. ԱԺՄ-4⁶⁴: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նոր ընտրությունները կայացան 2003 թ. մայիսի 25-ին՝ 75 համամասնական և 56 մեծամասնական ընտրակարգով: Ինչպես Ազգային ժողովի նախորդ, այնպես էլ այս ընտրություններն անցան ընտրախախտումներով: Ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցած 21 կուսակցություններից ու դաշինքներից 5%-ի սահմանագիծը հաղթահարվեց և պատգամավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կուսակցությունների միջև՝ 1. Հայաստանի հանրապետական կուսակցություն-23, 2. «Արդարություն» դաշինք-14, 3. «Օրինաց երկիր»-12, 4. ՀՅԴ-11, 5. «Ազգային միաբանություն»-9, 6. «Միավորված աշխատանքային կուսակցություն»-6⁶⁵: ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովն իր առաջին նստաշրջանը գումարեց 2003 թ. հունիսի 12-ին:

⁶³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, եր., 1995, էջ 30:

⁶⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1999, եր. 1999, էջ 28-29:

⁶⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 հունիսի, 2003:

Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի նախագահ ընտրվեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը, իսկ փոխնախագահներ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունից Տիգրան Թորոսյանն ու Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունից Վահան Հովհաննիսյանը: Ձևավորվեցին վեց մշտական հանձնաժողովներ: Նստաշրջանը հավանություն տվեց կոալիցիոն կառավարության գործունեության ծրագրին:

Դեռևս 1990 թ. խորհրդարանական ընտրությունների անցկացման գլխավոր թեռություններից մեկն այն էր, որ չապահովվեց ընտրության կարևորագույն պայմաններից մեկը՝ մրցակցությունը: Փաստորեն ընտրություններն անցկացվեցին Խորհրդային Հայաստանում մյուս քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, ՈԱԿ) գործունեության արգելանքի պայմաններում: Ավելին, ՀՀԿ-ն, ձգտելով քաղաքական դաշտը միահեծան տնօրինելուն, այլ կուսակցություններին վարկաբեկելու և մրցակցությունից դուրս մղելու քարոզչության և շանտաժի տարբեր միջոցների դիմեց, որոնց դրսևորումներից էր «Ով ՀՀԿ-ի հետ չէ, նա ազգի հետ չէ» կոչը: Հակաքարոզչությունն ու վարկաբեկող հայտարարություններն ուղեկցվում էին ընտրական տեղամասերում թաղային ու քրեական հեղինակությունների կողմից ընտրողների կամքի վրա ճնշում գործադրելու և անօրինականության բազմաթիվ դեպքերով: Սա, փաստորեն, ընտրակարգի կոպիտ խախտում էր, քանի որ այլընտրանքի հիմքում դրված չէր բազմակուսակցականության սկզբունքը: Նույնիսկ 1990 թ. օգոստոսին խորհրդարանի նախագահի ընտրությունը Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Մովսիսյանի ինքնաբացարկից հետո ընթացավ կուսակցության հավակնող մի կազմակերպության՝ ՀՀԿ-ի երկու առաջատար դեմքերի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի և Վազգեն Մանուկյանի միջև: Այսպիսով, փաստացի միակուսակցական համակարգի հաստատումով երկրում խոչընդոտվեցին հասարակության լայն զանգվածների քաղաքական կամքի դրսևորման և իշխանության մասնակցության այլընտրանքային սկզբունքներն ու իրավունքները, որոնք կրկնվեցին նաև հաջորդ տարիներին:

Անկախացումից հետո անցկացվեցին ՀՀ և Ազգային ժողովի երեք հերթական համընդհանուր (1995, 1999 և 2003 թթ.) ընտրություններ: Սկսած 1995 թվականի ընտրություններից՝ դիտորդական առաքելությամբ Հայաստանի Հանրապետությունում են գտնվել

բազմաթիվ դիտորդական խմբեր: Դիտորդական առաքելություններին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանել են միայն ԵԱԳԿ ժողովրդական հաստատությունների և Մարդու իրավունքների գրասենյակի (ԺՅՄԻԳ) դիտորդական առաքելությունները:

1995 թ. խորհրդարանական ընտրությունները ԵԱԳԿ, ԺՅՄԻԳ դիտորդների կողմից որակվեցին ազատ, բայց ոչ արդար, քանզի այդ ժամանակաշրջանից սկսած Հայաստանում ձևավորվեց ընտրությունների արդյունքները կեղծելու պրակտիկա: Սովորաբար այդ կեղծիքները կիրառում են իշխանությունները քանզի նրանց հնարավորություններն այդ առումով ավելի մեծ են:

1995 թ. Ազգային ժողովի ընտրությունների նախօրեին իշխող քաղաքական ուժը դիմեց նոր արգելամիջոցների: Դեռևս 1994 թ. դեկտեմբերին վկայակոչելով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության կանոնադրական դրույթների հակասությունը գործող օրենսդրությանը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրամանագիր ստորագրեց կուսակցության գործունեությունը վեց ամսով կասեցնելու մասին: ՀՀ-ն հնագույն ու մեծ մասսայականություն վայելող կուսակցություններից մեկն է ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում և ունի իր կայուն ընտրազանգվածը: Կուսակցությունը ընդդիմության մեջ էր իշխող ՀՀԿ-ի և նրա առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Հայաստանի Գերագույն դատարանն իր որոշումով հաստատեց նախագահի հրամանագիրը և, քանի որ կասեցման ժամկետը լրանում էր հուլիսի կեսերին միայն, Դաշնակցությունն արհեստականորեն դուրս մղվեց ընտրապայքարից: Հրամանագրի հրապարակմանն անմիջապես հետևեցին ՀՀԿ ղեկավար-անդամների ձերբակալությունները: Նրանք մեղադրվեցին անօրինական ռազմական կառույց ստեղծելու մեջ: Փակվեցին կուսակցությանը պատկանող թերթերի ու ամսագրերի խմբագրությունները: Փաստորեն Դաշնակցությունը զրկվեց նույնիսկ անուղղակի ձևով ընտրություններին մասնակցելու հնարավորությունից: 1995 թ. խորհրդարանական ընտրություններն անցան աննախադեպ խախտումների, անարդարության և բռնությունների մթնոլորտում: Ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկի՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի խախտումը Հայաստանում վերածվեց ավանդույթի և կրկնվեց 1999 և 2003 թթ. մայիսի Աժ ընտրությունների ժամանակ: Այդ ընտրությունները, չնայած նախորդների

համեմատ միջազգային դիտորդների կողմից առավել ազատ գնահատվելու հանգամանքին, չափահովեցին կարևորագույն սկզբունքներից թափանցիկությունն ու լեգիտիմությունը: Այստեղ վճռական նշանակություն ունեցան ոչ այնքան իշխանական, որքան՝ ֆինանսական լծակները: 1999 թ. Աժ ընտրությունների ժամանակ տարբեր կարծիքների համաձայն ընտրական ցուցակներում տեղ գտած անձնությունների պատճառով ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկվեցին 100-ից 200 հազար ընտրողներ: Ընտրարշավի ընթացքում ձևական բնույթ ստացավ նաև ցուցակներից դուրս մնացած քաղաքացիների դատական կարգով վերականգնվելու սկզբունքի կիրառումը, որն էլ այդ առթիվ ներկայացված բողոքների մեծաթիվության և դրանց քննության համար նախատեսված կարծ ժամկետների պատճառով տառաջիորեն հնարավոր չէր իրականացնել: Բացի այդ, ինչպես նախորդ, այնպես էլ 1999 և 2003 թթ. Աժ ընտրություններում ևս լայնորեն օգտագործվեց տարբեր ձևերի ընտրակաշառք կիրառելու, ընտրողներին սոցիալական, տնտեսական, քաղաքական ու ֆիզիկական միջոցներով վախեցնելու կամ խրախուսելու նախորդ տարիների փորձը: Թեկնածուներն ընտրողներին առաջարկում են սննդի զամբյուղներ, դրամ, ասֆալտապատում են փողոցները, վճարում կոմունալ ծառայությունների կամ էլեկտրաէներգիայի վարձը: Իսկ ընտրողները, մեկուսացած իշխանություններից և հիասթափված ընտրությունների անարդարությունից, իրենց քվեն ընկալում են որպես ապրանք, որը պետք է վաճառել հնարավորինս թանկ գնով: Շատ հաճախ ընտրողների համար միևնույն է, թե ով կդառնա պատգամավոր: Այս երևույթն ավելի ցայտուն ու լայնամասշտաբ կիրառվեց հատկապես վերջին՝ 2003 թ. մայիսին կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ինչպես նախորդ, այնպես էլ այս ընտրություններում լայն կիրառում ունեցավ որոշ թեկնածուների նկատմամբ գործող իշխանությունների կողմից ցուցաբերվող հովանավորչությունը: Զվեարկության ժամանակ իրավապահ մարմինների աշխատակիցների թողտվությամբ, իսկ հաճախ էլ աջակցությամբ, ընտրական հանձնաժողովների նախագահները, երբեմն թաղային հեղինակությունները խոչընդոտում են ընդդիմության կողմից նշանակված դիտորդների աշխատանքը: Զվեատուփերի մեջ են լցվում նախօրոք լրացված քվեաթերթիկներ կամ կիրառում բացահայտ լցումներ, որոշ տեղամասերում գողանում քվեաթերթիկներ՝ լցումներ անելու համար: Զինծառայողների

քվեարկությունը հաճախ անցնում է հրամանատարների հսկողության տակ: Ընտրողների վրա ճնշում է գործադրվում նաև գյուղերում, որտեղ շատ հաճախ գյուղապետերը, դառնալով ընտրական տեղանասների հանձնաժողովների նախագահներ, իրենց հսկողության տակ են անցկացնում քվեարկությունը, որը քիչ է տարբերվում զինծառայողների քվեարկությունից: Ամեն տեսակի կեղծիքների լայն հնարավորություն են տալիս ընտրացուցակները: Շատ հաճախ արտագաղթածների մի մասը, կամ հանրապետությունից դուրս գտնվողները, մահացած մարդիկ մնում են ընտրացուցակներում: Հետաքրքիր է, որ մինչև այժմ պաշտոնապես չեն հրապարակվել 2001 թ. հոկտեմբերի մարդահամարի արդյունքները: Տեղական դիտորդների կարծիքով դա արվել է 2003 թվականի ընտրություններում կեղծիքների համար հնարավորություն թողնելու նպատակով: Կեղծիքներ լինում են նաև քվեները հաշվելու ընթացքում: Ահա մնան կեղծիքների ու ընտրողների իրավունքների բազմապիսի խախտումներ արձանագրվեցին հատկապես 2003 թ. մայիսի խորհրդարանական ընտրություններում:

Դրա մասին են վկայում Սահմանադրական դատարանում հանրապետության քաղաքացիների և կուսակցությունների ու դաշինքների բազմաթիվ դիմում-բողոքները, մեծամասնական ընտրական 4 տեղամասերում վերաքվեարկությունների անցկացումը և այլն: Այսպիսով կատարվածը հասարակության սոցիալական դրության հետ առավել անմիջականորեն փոխկապակցված քաղաքացիների ընտրական իրավունքի խախտումներ են:

Ժողովրդավարությունը պահանջում է քաղաքացիների հանընդհանուր ներգրավվածություն ընտրական գործընթացում, որը չի ապահովվում գործող ընտրական օրենսգրքով: Նշված խնդիրների լուծումը պահանջում է օրենսդրության կատարելագործում և հասարակական գիտակցության հասունացում:

Հայաստանի Հանրապետությունում դատախիրավական բարեփոխումների հայեցակարգը ձևավորվեց 1995 թ. ընդունված Սահմանադրությամբ: Այդ իրավական փաստաթղթում ամրագրվեցին դատական նոր համակարգը, դատավարության սկզբունքները, արդարադատության կազմակերպման և կառավարման համակարգային մոտեցումները, դրանց կազմն ու գործունեության կարգը:

ՀՀ սահմանադրությամբ նախատեսված նոր դատական համակարգի կազմավորումն ավարտվեց 1999 թվականին: Այդ ուղղութ-

յամբ կարևորագույն քայլ էր առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանի, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, զինվորական և այլ դատարանների հիմնումը, դատախազության համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումները⁶⁶: Դատախիրավական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ օրենսգրքերի և օրենքների ընդունումը նպաստեց դատական համակարգի կայացմանը⁶⁷: Դատախիրավական վերափոխումները կոչված են ամրագրելու լիարժեք հարաբերություններ պետական իշխանության և հասարակության միջև և ստեղծելու անկախ ու արդյունավետ գործող, մարդու իրավունքների պատշտպանությունն ապահովող դատական համակարգ: Այս գործում մեծ է ՀՀ սահմանադրական դատարանի դերը, որը ձևավորվեց 1996 թ. փետրվարի 6-ին: Նրա նախագահ նշանակվեց Գ. Հարությունյանը⁶⁸: ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու է որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների, ինչպես նաև միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծելու հանրաքվեների, ՀՀ նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը, որոշում կայացնելու կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Համաձայն Սահմանադրության, Սահմանադրական դատարանում նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու իրավունքը վերապահվում է միայն հանրապետության նախագահին և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/3-ին: Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից զրկված են ընդհանուր իրավասության դատարանները և այն քաղաքացիները, որոնք հակասահմանադրական

⁶⁶ Մանրամասն տե՛ս «Դատախիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրություն» (ՀՀ օրենքը միջնորդ դատարանների և դատավարության մասին, ՀՀ դատախազության մասին, ՀՀ դատարանակազմության մասին, Վճռաբեկ դատարանի գործունեության մասին, Փաստաբանական գործունեության մասին), Եր., 1998., էջ 43-134:

⁶⁷ Մանրամասն տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» № 17(50), 10 օգոստոսի, 1998, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք» № 20(53), 9 սեպտեմբերի, 1998, «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք» № 22(55), 21 սեպտեմբերի, 1998, «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքները:

⁶⁸ Տե՛ս *Խաչատրյան Մ.*, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Եր., 1977, էջ 283:

Նորմատիվ ակտերի առկայությանն ահազանգող առավել հավանական սուբյեկտներն են:

Սակայն այսօր էլ դատական իշխանության անկախությունն ակնհայտորեն չի ապահովվում, քանի որ դատավորներին, դատախազներին և Սահմանադրական դատարանի (ՍԴ) 9 անդամներից միայն հինգին է նշանակում Ազգային ժողովը, իսկ չորսին նշանակում է նախագահը, կադրային առաջարկները մշակում է Արդարադատության խորհուրդը, որը դարձյալ գլխավորում է նախագահը⁶⁹: Ժողովրդավարական երկրներում տարբեր առյուծների դատավորները և դատախազները սովորաբար ընտրվում կամ նշանակվում են ընտրովի իշխանության տարբեր հաստատությունների կողմից, ապահովվում է նաև դատավորների անփոփոխելիությունը: Նախագահի լիազորությունների գերակայություն է նշմարվում նաև Ազգային ժողովի (ԱԺ) ու կառավարության հետ փոխհարաբերությունների կանոնակարգման բնագավառում: ՀՀ գործող հիմնական օրենքում երևում է օրենսդիր և դատական իշխանության նկատմամբ գործադիր իշխանության լիազորությունների գերազանցություն, որն էլ ՀՀ սահմանադրության հիմնական թերություններից մեկն է: Դատական իշխանության երեք հիմնական գործառնություններից՝ ա) արդարադատության իրականացում, բ) դատական վերահսկողություն և գ) դատական հսկողություն օրենքների նկատմամբ (այսինքն՝ օրենքների հակասության դեպքում դատարանի իրավասությունը իրավունքի գերակայության խնդրում), Հայաստանի Հանրապետությունում կատարվում են առաջին երկուսը, որոնք էլ երրորդի բացակայության (այն օրենքով նախատեսված չէ) պայմաններում իրականացվում են ոչ լիարժեք: Դրա հետ միասին դատավորի թեկնածության ընտրությունը, նշանակումը, լիազորությունների դադարեցումը, ամենամյա առաջխաղացման ցուցակներում հաստատելը կատարվում է գործադիր իշխանության գերիշխող մասնակցությամբ: Այս հանգամանքն էապես խոչընդոտում է դատավորների անկախությանը: Ներկայումս հատկապես ցածր է տնտեսական վեճերի քննության արդյունավետությունը: Դրանց ձգձգումներն ու ավելորդ քաջքուկը անբարենպաստ են երկրի տնտեսական զարգացման համար և անուղղակիորեն խոչընդոտում են ներդրումներին: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար գոյություն ունեցող ՀՀ եռաստիճան դատական

⁶⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, էջ 47:

համակարգին զուգահեռ տնտեսական վեճերի քննության համար 2001 թվականից ստեղծվեց երկաստիճան դատական համակարգ, որը կազմված է առաջին աստիճանի տնտեսական դատարանից և վճռաբեկ դատարանից: Լիակատար անկախության անհրաժեշտ տարրերից է համակարգի սոցիալական պաշտպանվածության բարձրացումը:

Հարյուրամյակներ շարունակ զրկված լինելով պետականությունից՝ Հայաստանը ժառանգել է ոչ իրավական պետությունների դատական համակարգի ձևավորման ավանդույթներն ու մտածողությունը, որոնք մեկ տասնամյակում վերացնել հնարավոր չէ: Այդ ավանդույթներն ու մտածողությունն արմատացած են ոչ միայն իշխանության օղակներում, այլև՝ հասարակության գիտակցության մեջ: Խնդիրն այն է, որ իշխանության մարմինները պետք է օրենսդրությամբ՝ և՛ կառավարման մեխանիզմների միջոցով, և՛ իրավական կրթության ծավալումով նպաստեն այդ մտածողության փոփոխությանը և դատական իշխանության իրական անկախության հաստատմանը:

Անհրաժեշտ բարեփոխումներ իրականացվեցին նաև անվտանգության և ոստիկանության մարմիններում: Դրան մեծապես նպաստեցին ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. դեկտեմբերի 28-ին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» և 2002 թ. հուլիսի 3-ին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքները⁷⁰: 2002 թ. դեկտեմբերին «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրով Ազգային անվտանգության և Ներքին գործերի նախարարությունները վերածվեցին ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության⁷¹:

Կատարվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխություններ ևս: 2001 թ. դեկտեմբերին ընդունվեց «Հասարակական կազմակերպությունների մասին», իսկ 2002 թ. օգոստոսին՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքները⁷²: Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի եր-

⁷⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 6(181), 5 փետրվարի, 2002, էջ 3-18, թիվ 3-18, թիվ 32 (207), 8 օգոստոսի, 2002, էջ 5-34:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, թիվ 55 (230), 17 դեկտեմբերի, 2002, էջ 25:

⁷² Տե՛ս նույն տեղում, թիվ 34 (209), 15 օգոստոսի, 2002, էջ 3-17:

րորդ Հանրապետության եռագույն դրոշը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ կենտրոնում վահանը պահող արծիվն ու առյուծը. վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները, վահանից ներքև՝ սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն⁷³: ՀՀ-ի օրհներգը «Մեր հայրենիքն» է:

դ. Ազգային բանակի ստեղծումը

Հայաստանի երրորդ Հանրապետությունը հռչակելուց հետո առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանումը, որի երաշխիքը կարող էր լինել միայն մարտունակ բանակը: Իր կարծատև պատմության մեջ անցնելով պատերազմի ու բանակաշինության ժանրագույն փորձությունները՝ հայոց բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը: Իր կայացման ճանապարհին անցավ մի քանի դժվարին ու կարևորագույն փուլեր: Նրա անցած ուղին կարելի է բաժանել երեք փուլերի: *Առաջին* ընդգրկում է 1988 թվականի փետրվարից մինչև 1992 թ. մայիսը, երբ Ղարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ հրատապ խնդիր: *Երկրորդ* փուլն ընդգրկում է 1992 թ. հունիս-1994 թ. մայիս ամիսները, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին, գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ, ձեռնամուխ եղավ Ազգային բանակի ստեղծմանը: *Երրորդ* փուլը համարվում է 1994 թ. հունիսից մինչև օրս ընկած ժամանակահատվածը: Այս փուլն անվանվում է բանակաշինության, զորքերի մարտունակության բարձրացման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման, խաղաղ պայմաններում բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի վերջնական ձևավորման շրջան: Առաջին փուլի առանձնահատկությունն այն էր, որ հայ հասարակության մտածողության մեջ հասունացավ մի գիտակցություն, ըստ որի միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հա-

սարակության անվանգության երաշխիքը: Այս ժամանակահատվածում «բանակ» էին համարվում իրարից անկախ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները, որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բուրդ հնարավոր այլ վայրերից գեներալից հայթայթելով, կամավոր, հայրենասիրական ու բարոյական մղումներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ անհավասար կռիվ մղելով հակառակորդի դեմ: Այդպիսի ջոկատներից էին «Վրիժառուներ»-ը, «Սասունցի Դավիթ»-ը, «Սասնա ծռեր»-ը, «Մուշ»-ը և այլն: Չնայած հայ կամավորական ջոկատների գործողությունները տարերային էին, չկոորդինացված և տեղի էին ունենում Հայաստանի ու Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում, բայց դրանք այն կենսունակ սաղմերն էին, որոնցից անկախության հռչակումից անմիջապես հետո պիտի ծնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները: Այդ գործում որոշակի դեր խաղաց նաև Հայոց ազգային բանակը: 1989 թ. ապրիլի 24-ին Ռազմիկ Վասիլյանի նախաձեռնությամբ կամավորներից ստեղծվեց Հայոց ազգային բանակը՝ ՀԱԲ ռազմական կազմակերպությունը: «Նախաձեռնելով ջոկատի ստեղծումը, անկեղծ ասած, անգամ ինքս չէի պատկերացնում, որ այն կարող է դառնալ գունդ, գունդն էլ բանակ, որն ամբողջովին կլծվի հայրենի սահմանների պաշտպանությանը,- գրում է ՀԱԲ-ի գլխավոր հրամանատար Ռ. Վասիլյանը,- ապա շարունակում, որ դրանից հետո սկսվեց զինված կառույցի ձևավորումը, բռնեցինք նորմալ բանակ ստեղծելու ուղին, ունեինք մեր զինանշանը, զինգրքույկները, սահմանել էինք կոչումներ՝ հնգապետ, հազարապետ, վիրապետ և այլն»⁷⁴:

ՀԱԲ-ը եռանդուն գործունեություն ծավալեց կամավորական հայկական բանակ կազմավորելու ուղղությամբ: Նրա կարգավիճակի կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ 1990 թ. հունվարին, Երասխի հայտնի մարտական գործողություններից հետո, երբ ՀԱԲ-ն աշխուժորեն սկսեց զբաղվել գեներալ-գեներալներից, զինվորական հանդերձանքի հայթայթումով, կամավորներին ռազմաճակատ ուղարկելով, սահմանամերձ գոտիներում, հատկապես Նոյեմբերյանի և Իջևանի շրջաններում, նրանց տեղավորելով և տեղերում ինքնա-

⁷³ Տես Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, էջ 11:

⁷⁴ *Ավետիսյան Ա.*, Հայոց ազգային բանակ, Արմյան, 2001, էջ 49:

պաշտպանություն կազմակերպելով: Ընթացքում, որպես ռազմա-պաշտպանական կազմավորում, ՀԱԲ-ն իր կառույցները հիմնեց Հայաստանի մի շարք տարածաշրջաններում՝ աստիճանաբար ձևավորելով բանակին բնորոշ հատկանիշներ: Սակայն շուտով տարածաշրջաններ առաջացան ՀԱԲ-ի ղեկավարության և խորհրդարանական ընտրություններում հաղթած ու իշխանության գլուխ անցած ՀՀԿ-ի ղեկավարության միջև: Գերագույն խորհրդի պատգամավոր Վիտյա Այվազյանի և ազատամարտիկ Գեղազնիկ Միքայելյանի (Չաուշ) 1990 թ. օգոստոսի 27-ի առեղծվածային սպանությունները՝ օգտագործվեցին նոր իշխանությունների կողմից ՀԱԲ ռազմական կառույցը լուծարելու համար: 1990 թ. օգոստոսի 29-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ լուծարվեց Հայոց ազգային բանակ ռազմական կազմակերպությունը: Առգրավվեց ՀԱԲ-ի ամբողջ ունեցվածքը: Չնայած ՀԱԲ-ը չենթարկվեց այդ որոշմանը, բայց այլևս նախկին դերը չկարողացավ խաղալ: Այնուամենայնիվ ՀԱԲ-ի շարքերում և ապա մյուս ջոկատներում կռվող կամավոր (հաբական) ազատամարտիկները փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները:

1990 թ. Անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական ու գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման գործում: Նույն տարվա սեպտեմբերին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ հանրապետության ՆԳՄ (ՆԳՆ) կառույցում ստեղծվեց «Հատուկ գունդը»: Գնդի կազմում էին Երևանում և Արարատում, Գորիսում, Վարդենիսում և հանրապետության այլ շրջաններում կազմավորված 26 վաշտեր⁷⁵: 1991 թ. ապրիլի 26-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր Հայաստանի Հանրապետության մինչև 50 տարեկան այն քաղաքացիների վրա, ովքեր ցանկանում էին կամավոր սկզբունքով մասնակցել հանրապետության պաշտպանության գործին⁷⁶: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա քիչ ավելի ուշ ստեղծվեց Պաշտպանության

նախարարությունը⁷⁷:

Առաջին իսկ օրերից Պաշտպանության կոմիտեն լծվեց բանակաշինության դժվարին աշխատանքին, քանի որ իրադրությունը ծայրաստիճան լարված էր: Անհրաժեշտ էր բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ շտապ միջոցներ ձեռնարկել: Ղարաբաղ և սահմանամերձ գոտիներ մեկնող երկրապահ ջոկատների համար Պաշտպանության կոմիտեին կից ստեղծվեցին մշտապես գործող դասընթացներ, որտեղ ազատամարտիկները ստանում էին զենքի տիրապետման և մարտական գործողությունների վարման մասին տարրական գիտելիքներ: Պաշտպանության կոմիտեն զուգահեռաբար զբաղվում էր ազգային բանակի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մշակման աշխատանքներով:

1991 թ. դեկտեմբերի 5-ին հանրապետության նախագահի հրամանագրով պաշտպանության առաջին նախարար մշանակվեց Վազգեն Սարգսյանը (1959-1999 թթ.), որն արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ կամավորների մեծ մասի սիրված հրամանատարն էր: Ազգային բանակի ստեղծման գործում մեծ էր նրա ներդրումը: Վ. Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ 1992 թ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միջոցով ստեղծվեց լավ կազմակերպված շարժունակ ու կարգապահ բանակ:

«Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս Վազգեն Սարգսյանը կանգնած է եղել հայոց պետականության և հատկապես հայոց բանակի, որպես պետության առանցքային բաղադրիչի ստեղծման ակունքներում: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլինեի հայոց բանակը, եթե այն չունենար Վազգենի հաղթելու կամքը, վճռականությունը, ամենադժվարին պահերին ամենաբարդ տեղում հայտնվելու քաջությունը, անսահման սերը հայրենիքի ու զինվորի նկատմամբ», - նկատել է ՀՀ պաշտպանության ներկայիս նախարար Սերժ Սարգսյանը⁷⁸: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1992-1993 թթ. բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: Հանրապետության նախագահի մեկ այլ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ի հրամանագրով զենեթալ-մայոր Գուրգեն Դալիբալթյանը

⁷⁵ ՀՀ ՀԶԿՓԿՊԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 47, ք. 89, ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, ք. 6-9:

⁷⁶ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 298, ք. 1:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 317, ք. 1, 2:

⁷⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29 հունվար, 2002:

նշանակվեց պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ⁷⁹: Հայոց բանակաշինության գործում մեծ է նաև Վազգեն Մանուկյանի դերը: 1992 թ. սեպտեմբերին նա նշանակվեց ՀՀ պաշտպանության պետնախարարի, այնուհետև՝ նախարարի պաշտոնում՝ մինչև 1993 թ. օգոստոսը ղեկավարելով ՀՀ ռազմարդյունաբերական համալիրը: Այդ ժամանակաշրջանում վերջնականապես ավարտվեց ՀՀ կանոնավոր բանակի ստեղծումը, սկսվեց հայոց բանակի փայլուն հաղթանակների շրջանը⁸⁰:

1992 թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավաբանորեն ազդարարելով հայոց բանակի ստեղծումը⁸¹: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին Ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժիններ: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: Քանի որ 1988-1991 թթ.՝ մինչև անկախության հռչակումը, զորակոչը դադարեցված էր (զորակոչ կատարվում էր միայն կամավոր կերպով), ուստի 1992 թ. գարնանային զորակոչը կարևոր նշանակություն ունեցավ ոչ այնքան քանակական, որքան զուտ հոգեբանական առումով:

⁷⁹ Գուրգեն Հարությունի Պալիբալթայանը դեռ 1990 թ. օգոստոսին սրտի մղուճով եկել էր Հայաստան: ԽՍՀՄ ՁՈՒ-ի շարքերում զինվորական աստիճաններն անցած և Հյուսիս-կովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի՝ մարտական պատրաստման գծով տեղակալի պաշտոնից պահեստազոր զորացրված գեներալ-մայոր Գ. Պալիբալթայանն ուներ ռազմական խոր գիտելիքներ, հրամանատարական աշխատանքի մեծ փորձ, կազմակերպչական ունակություններ, որոնք հետագայում, արդեն հարազատ Հայաստանում, վառ կերպով դրսևորվեցին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պաշտպանության կոմիտեի շտաբի պետի, իսկ հետո նաև ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ պետի պաշտոններում նրա վարած գործունեության ընթացքում: (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 318, թ. 1:

⁸⁰ Տե՛ս *Մանուկյան Վ.*, Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Եր., 2002, էջ 520:

⁸¹ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 167, գ. 62, թ. 1, 2, գ. 123, թ. 8, գ. 318, թ. 11:

Առաջին անգամ օրենքի հիմքի վրա հայ երիտասարդները զորակոչվում էին իրենց իսկ հայկական զորամասեր՝ իրենց երկրի պետական սահմանները, ազգի պատիվը, արժանապատվությունն ու անկախությունը պաշտպանելու համար: Հայ քաղաքացիների իսկական զինվորական ծառայության զորակոչի գորընթացը ընդհանուր առմամբ հաջող անցավ: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմն արդեն մայիսի 28-ին հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում ընդունեց առաջին զինվորական երգումը, որի տեքստը հաստատված էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից: Այդ պահից սկիզբ է առնում հայոց բանակի պատմության հաջորդ փուլը, որի խնդիրներն իրենց բարդությամբ չզիջելով նախորդին, բնույթով այլ էին:

Հայկական զինված ուժերի կանոնավոր զորամիավորումները, զորատեսակները, սպայական կազմը, սպառազինությունը և ռազմական տեխնիկական ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի հիմքի վրա, աճեց բանակի թվաքանակը: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում ձևավորված ռազմարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: 1992 թ. հանրապետության ղեկավարությունն ընդունեց Հայաստանի զինված ուժերի համար չափազանց կարևոր և հեռատես որոշում՝ ոչ թե խորհրդային զորքի սպառազինության բռնի գրավման, այլ այդ սպառազինության՝ Հայաստանի չափաբաժնի կանոնավոր, պայմանագրային հիմունքներով ստացման ուղին: Թեև Հայաստանին անցած ռազմական տեխնիկական քանակապես քիչ էր, սակայն սարքին վիճակում էր և անցավ ոչ թե անհատներին կամ առանձին ջոկատներին, այլ՝ պետությանը: Դրա շնորհիվ էր, որ ռուսական զորքի մի մասը մնաց Հայաստանում՝ հետագայում վերաճելով ռազմական բազայի և դառնալով Հայաստանի անվտանգության կարևոր բաղկացուցիչ մասը: Ձեռք-զինամթերքի, վառելիքի, պարենի ու համազգեստի խնդիրներին զուգահեռ՝ նորաստեղծ նախարարության առջև ծառայել էր մեկ ուրիշ կարևոր խնդիր՝ զինված ուժերի համալրումը կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմով ու մասնագետ կադրերով: Պաշտպանության նախարարությունը հսկայական աշխատանք ծավալեց այդ ուղղությամբ: Արժագանքելով Պաշտպանության նախարարության կոչին՝ Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում

էին ԽՍՀՄ զորամիավորումներում: Նրանք թողեցին իրենց խաղաղ ու անվտանգ բնակավայրերը, եկան ու լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման հայրենամուկ գործին: Նրանց թվում էին գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթյանը, Միքայել Գարուբյունյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Զրաչ Անդրեասյանը, Քրիստափոր Իվանյանը, Մկրտիչ Աբրահամյանը, Յուրի Խաչատուրովը, Միքայել Գրիգորյանը, գեներալ-մայորներ Արկադի Տեր-Թադևոսյանը, Արտուշ Գարուբյունյանը, Սուրազ Սարգսյանը, Լեոնիդ Սարտիրոսովը, Ալիկ Միրզաբեկյանը և շատ ուրիշներ: Փաստորեն այդ ժամանակահատվածում ոչ միայն ամրագրվեց անհրաժեշտ իրավական դաշտը, ձևավորվեցին ղեկավարման օղակները, առաջին հերթին՝ գլխավոր շտաբը, ստեղծվեցին թիկունքի և սպառազինության ծառայությունները, հիմնադրվեցին զորատեսակներն ու մասնագիտացված զորամասերը մշակվեցին խմբավորումների, զորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց զորատեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, կազմավորվեցին առաջին սահմանապահ զորամասերը՝ մոտոհրաձգայինների վերափոխման հեռանկարով ծավալվեցին զորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները, սկսվեց անձնակազմի մարտական պատրաստության գործընթացը: Այս ամենի շնորհիվ հայոց նորաստեղծ բանակը 1992 թ. սկսած մասնակցելով պատերազմական լայնածավալ գործողություններին՝ կամավորական ջոկատների հետ միասին կռեց մեր առաջին ռազմական հաղթանակները: Նա իրեն փառքով պսակեց նաև հաջորդ տարիներին՝ պատերազմը հասցնելով իր հաղթական ավարտին:

1993 թ. մայիսի 28-ին հանրապետության հրապարակում ի նշանավորումն հայկական պետականության վերականգնման, անցկացվեց ԳԳ զինված ուժերի զորքերի զորահանդես, որին մասնակցեցին ԳԳ Պաշտպանության նախարարության, Ներքին գործերի նախարարության և Սահմանապահ զորքերի զորամասերի ստորաբաժանումները՝ մոտ 1000 հոգի և ավելի քան 100 միավոր տեխնիկա ընդհանուր քանակով: Այն ունեցավ հսկայական բարոյա-հոգեբանական նշանակություն, ինչպես զինված ուժերի անձնակազմի, այնպես էլ մեր ժողովրդի ու աշխարհի ողջ հայության համար: Ապացուցվեց, որ ունենք կազմավորված ազգային բանակ, որն արդեն բազմաթիվ հաղթանակներ է տարել, վստահություն ներշնչվեց, որ վերջնական

հաղթանակը մերը կլինի, և հայոց պետության անկախությունը, սահմանները հավերժ պահպանված կլինեն:

Արդեն երրորդ փուլում՝ խաղաղ պայմաններում, նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացան լծվելու բանակաշինության գործին՝ առավել ուշադրություն դարձնելով բանակի ներքին խնդիրներին: Հատկապես 1995-2002 թթ. ամբողջացվեց պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական դաշտը: ԳԳ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության մասին», «Զիննապատրաստության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինվորական ծառայության անցնելու մասին»⁸² հիմնական օրենսդրական ակտերը:

Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ռազմական համակարգի բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական հիմքի ապահովումը: Բանակաշինության հիմնական խնդիրը դարձավ կադրերի պատրաստությունը: Այդ նպատակին ծառայեցին ռազմավիագիտն թռիչքատեխնիկական ուսումնարանը, որը հետագայում վերաճեց ռազմավիագիտն ինստիտուտի, Պաշտպանության նախարարության բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը (այժմ արդեն Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ), Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետը: Մինչև այժմ այդ ուսումնական հաստատությունները զինված ուժերի համար պատրաստել են շուրջ 1300 շրջանավարտ-սպաներ և 242 սպաներ անցել են լրիվ ակադեմիական դասընթացներ⁸³: Հայ երիտասարդներից ոմանք սովորում են նաև արտասահմանյան այլ երկրների ռազմական հաստատություններում:

Հաշվի առնելով, որ զինված ուժերի սպաների մի զգալի մասը կազմում էին ինքնապաշտպանական կամավորական ջոկատների

⁸² Տե՛ս ԳԳ գործող օրենքների ժողովածու (1990-1995), էջ 196, 341, 453, գ. Ա, էջ 506-643, գ. Բ, էջ 127-136, 628, 680, 698, 851, գ. Դ, էջ 762-770, 916-929, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 26 (201), 19 հուլիսի 2002, էջ 3-34:

⁸³ «Հայկական բանակ», 1-2 (31-32), 2002, էջ 18:

մարտիկները, նրանց որակավորման և վերապատրաստման նպատակով ստեղծվեց սպաների որակավորման բարձրացման կենտրոն, որն իր գործունեության ընթացքում տվել է շուրջ 1500 սպա-շրջանավարտ: Շուրջ 1000 շրջանավարտ է տվել ենթասպաների դպրոցը⁸⁴: Չինժառայողների, նրանց ընտանիքների, զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական ապահովության խնդիրները մնում են արդիական: Եթե 1992-1997 թթ. նշված խմբերին տրամադրվել էր 290 բնակարան, որոնցից ընդամենը՝ 87-ը նորակառույց, ապա 1998-2002 թթ.՝ 410 բնակարան, որոնցից նորակառույց 356-ը: Այդ ժամանակահատվածում 2,5 անգամ աճել են կառուցված և կապիտալ վերանորոգված զորանոցները, կրկնապատկվել է զորամասերի ճաշարանների զինվորատեղերի քանակը, եռապատկվել բուժկետների մահճակալների թիվը⁸⁵:

Տարիների հետևողական աշխատանքի շնորհիվ բարձրացավ սպաների և զինվորների մարտական պատրաստվածության մակարդակը, բարելավվեց բարոյահոգեբանական մթնոլորտը, ամրապնդվեց կարգապահությունը: Այս գործում ձեռք բերված հաջողություններում Վազգեն Սարգսյանից բացի մեծ է պաշտպանության մյուս նախարարներ Վազգեն Մանուկյանի (1992 թ. նոյեմբեր-1993 թ. օգոստոս) և Սերժ Սարգսյանի (1993 թ. օգոստոս-1995 թ. հունիս, 1999 թ. հոկտեմբերից մինչև այժմ), ԳՇ-ի պետերի, բարձրագույն հրամանատարության դերը: Նրանք ռազմական շինարարության հայեցակարգի իրացման գործում, դրա ամենածանր փուլում և հետագայում իրենց արժանի ներդրումն ունեցան: Հենց նրանց անմիջական ղեկավարությամբ վերջնականապես ավարտվեց ՀՀ կանոնավոր բանակի ձևավորումը, սկսվեց Ղարաբաղի բանակի փայլուն հաղթանակների շրջանը, ռազմական գործողությունները փոխարինվեցին քաղաքական բանակցություններով:

Տասնամյա իր պատմության ընթացքում Հայաստանի զինված ուժերը ձևավորել են միջազգային ռազմական համագործակցության գործուն համակարգ: Հայտնի է, որ առանց այդ համագործակցության տարածաշրջանի բարդ ռազմաքաղաքական իրադրությունում Հայաստանը չի կարող ապահովել իր անվտանգությունը: 2001 թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությունը Ռուսաստանի

Դաշնության, ԱՄՆ-ի, Հունաստանի, Չինաստանի և այլ երկրների պաշտպանության նախարարությունների, բարձրագույն զինվորական պատվիրակությունների հետ իրագործել է միջազգային ռազմական համագործակցության շուրջ 200 երկկողմ ու բազմակողմ միջոցառումներ:

Հայոց բանակն աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Սակայն բանակում բարձրաստիճան պաշտոններ ու կոչումներ ստացան նաև պատահական մարդիկ, որոնք ավելի շատ մտահոգված էին անձնական հարցերով, քան բանակային շինարարությամբ: Այսօր էլ բանակում առկա են սոցիալական և կենցաղային շատ չլուծված խնդիրներ, որոնց վերացումը կենսական անհրաժեշտություն է: Դեռևս զգալի են մարդու իրավունքների խախտումները հայոց բանակում (ընդհուպ մինչև կաշառակերություն, կամայականություններ և զինժառայողների սպանության դեպքեր): Եթե 1995 թ. հայկական բանակում զոհվել, սպանվել է 324 զինվոր, ապա 2001 թ.՝ 56⁸⁶: Իհարկե, մեր փոքրաթիվ ազգի համար դա ևս մեծ թիվ է: Սպաների միջավայրում իշխող անօրինականությունները, ծառայողներից ու նրանց ծնողներից վերցրած կաշառքի դեպքերը դարձել են կանոն, այլ ոչ թե՛ բացառություն: Ձգալի է զորակոչով զբաղվող մարմինների կաշառակերությունը: Այս երևույթների անհապաղ վերացումը հրատապ, անհետաձգելի պետական խնդիր է: Հայոց բանակում ծառայելը յուրաքանչյուր հայի ազգային նվիրվածության վկայականն է ու պատվի գործը:

2002 թ. հունվարի 28-ին Հանրապետությունում առաջին անգամ պաշտոնապես մեծ հանդիսավորությամբ նշվեց Հայոց բանակի կազմավորման 10-ամյակը որպես բանակի օր: Փաստորեն Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա առաջին գլխավոր ձեռքբերումը:

* * *

Այսպիսով, 1988 թ. փետրվարյան ազգային ժողովրդական շարժումով ոտքի կանգնած հայ ժողովուրդն ավելի քան 70-ամյա ընդմի-

⁸⁴ «Հայկական բանակ», 1-2 (31-32), 2002, էջ 18:

⁸⁵ Տե՛ս Հինգ տարի անց. նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Եր., 2003, էջ 14:

⁸⁶ «Հայկական բանակ», 1-2 (31-32), 2002, էջ 18:

ջումից հետո վերստին հռչակեց իր անկախ պետականությունը՝ Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Հայաստանի անկախ պետության ստեղծումը դարձավ նոր դարաշրջանի սկիզբ հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Իրականացվեցին արմատական վերափոխումներ հասարակության կյանքի բոլոր բնագավառներում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլն:

Խորհրդային Սիության փլուզման հետևանքով Հայաստանը, ինչպես նաև նախկին սոցիալիստական երկրները, ժառանգեցին նոր պայմաններին խիստ անհամապատասխան պետական կառավարման կառուցվածք, որը անհապաղ բարելավման կարիք ուներ:

Անկախ պետականության հաստատումը Հայաստանում նախադրյալներ ստեղծեց պետական կառավարման համակարգի ձևավորման համար: Պետական կառավարման բարեփոխումները հասցրին պետական իշխանության բարձրագույն մարմինների, կառավարման համարժեք ինստիտուտների, ինչպես նաև հայոց նորաստեղծ պետության անվտանգությունն ապահովող բանակի ստեղծմանը: Հայաստանի Հանրապետությունում փորձեր արվեցին ժողովրդավարական համակարգի հիմքերի ստեղծման ուղղությամբ: Սակայն գնալով դանդաղեցին պետականության կայացման ժողովրդավարական գործընթացները, քանի որ հանրապետության կառավարող քաղաքական ուժը՝ ՀՀԸ-ն, հետևապես նաև երկրի ղեկավար մարմիններն աստիճանաբար հեռացան ժողովրդական շարժման իդեալներից: Կարճ ժամանակում կառավարման տարբեր օղակներում ընդգրկվեցին կրթական և մասնագիտական պատրաստություն և աշխատանքային փորձ չունեցող ընչաքաղց, պաշտոնատենչ մարդիկ, որոնք հայրենիքին, ժողովրդական շահերին ազնվորեն ծառայելու փոխարեն, տոգորված էին ժողովրդական ունեցվածքը կողոպտելու միջոցով հարստանալու կրքով: Կառավարման համակարգում տիրապետող դարձան շահամոլությունը, նյութապաշտությունը, ընչաքաղցությունը, գլուխ բարձրացրին նաև այլ բացասական երևույթներ: Հասարակության մի փոքր մասի մոտ սկսվեց երկրի հարստությունների կենտրոնացման և ժողովրդի վիթխարի զանգվածների սեփականագրկման, աղքատացման ու թշվառացման գործընթացը:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ա. Շուկայական հարաբերություններին անցնելու առաջին քայլերը

1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով կյանքը կազմալուծվեց հանրապետության տարածքի 1/3-ում, ավերվեցին Սպիտակ քաղաքն ու հարակից գյուղերը, մեծ վնաս հասցվեց Գյումրի և Վանաձոր քաղաքներին, քայքայվեց այդ շրջանների տնտեսությունը: Պաշտոնական տվյալներով արհավիրքից զոհվեց շուրջ 25 հազար մարդ, անօթևան մնաց ավելի քան կես միլիոն մարդ, դադարեցին գործել 170 արդյունաբերական ձեռնարկություններ և արտադրական տեղամասեր՝ 82 հազար բանվորական տեղերով: Ահռելի վնաս կրեց գյուղատնտեսությունը: Ավերվեց կամ լրջորեն վնասվեց վերամշակող արդյունաբերության ավելի քան 80 ձեռնարկություն, շուրջ 1200 շենք, ոչնչացավ անասունների և թռչունների մեծ գլխաքանակ⁸⁷: Հայաստանի ժողովրդական տնտեսությունն ընդհանուր առմամբ ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս կրեց: Աղետի գոտին համակողմանի օգնություն ստացավ աշխարհի 113 երկրներից և բազմաթիվ միջազգային կազմակերպություններից⁸⁸: Չնայած այս ամենին՝ հնարավոր չեղավ վերականգնել աղետի գոտին: Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտությունների մեջ, և Հայաստանը, բացի մի քանի երկրների կողմից շարունակվող ոչ մեծ օգնությամբ, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ: Եթե սրան ավելացնենք հանրապետության լիակատար շրջափակումը, որին 1990-ական

⁸⁷ Տե՛ս *Ազդեցության Ռ.*, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, էջ 35, 36:

⁸⁸ ՀՀ ԵՊԿՊԱ, ֆ. 119, ց.163, գ.232, ք.3:

թվականների սկզբներից փաստորեն մասնակցում էր նաև Թուրքիան, ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում և 1990 թվականից Հայաստան բռնագղթված փախստականների օրհասական դրությունն ու էներգետիկ ճգնաժամը, ապա կամբողջանա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը:

ԽՍՀՄ փլուզման և շրջափակման հետևանքով խզվեցին միջհանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարեց հունքի մատակարարումը: ԽՍՀՄ հունքային մատակարարման, արտաքին առևտրային և տնտեսական այլ ենթակառուցվածքների կենտրոնացված համակարգի կազմալուծման հետևանքով Հայաստանի տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը, որն անհամեմատ մեծ կախվածության մեջ էր այլ հանրապետություններից, հայտնվեց ճգնաժամային վիճակում: ԽՍՀՄ փլուզումն ուղեկցվեց Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) կազմալուծմամբ և դրա հետևանքով խորհրդային համակարգի երկրների միջև առևտրական կապերի խզմամբ, որն արտահայտվեց Հայաստանում առևտրի պայմանների կտրուկ վատթարացումով՝ ներկրվող վառելիքի համար համաշխարհային գինը վճարելու անհրաժեշտության պատճառով, և Հայաստանի արդյունաբերական արտադրանքի համար արտաքին շուկայի հանկարծակի կորստով: Մինչ անցումային շրջանը՝ 1990 թ., Հայաստանը զարգացած արդյունաբերական երկիր էր, որի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) 44,5%-ը ստեղծվել էր արդյունաբերության ոլորտում⁸⁹: Նրա արտադրանքը բաղկացած էր հիմնական միջոցներից՝ մեքենաներ, սինթետիկ կաուչուկ, քիմիական նյութեր, էլեկտրական ապրանքներ և այլն: Հունքը ներմուծվում էր, իսկ պատրաստի արտադրանքը՝ արտահանվում ԽՍՀՄ այլ տարածաշրջաններ: Սակայն ՏՓԽ-ի կազմալուծումը խախտեց արդյունաբերության մեծ մասի կենսունակությունը՝ արտահանվող պատրաստի արտադրանքի համեմատությամբ ներմուծվող ապրանքների գների 2,5-3 անգամ գերազանցող աճի պատճառով:

Արտադրության անկումը, պահանջարկի ծավալների կրճատումը պատահական չէին, քանզի դրանք աշխարհագրական, քաղաքական և տնտեսական փոփոխությունների արդյունք էին:

Ըստ տնտեսագետների գնահատականների՝ Ռուսաստանի անհատույց օգնության ծավալները ծայրամասային հանրապետություններին (գների մեխանիզմի միջոցով, ոչ համարժեք փոխանակում, թաքնված և առերևույթ դոտացիաներ) հասնում էր տարեկան 50 մլրդ. ԱՄՆ դոլարի⁹⁰: Այնպես որ Հայաստանն իր 3.5 մլրդ.-ով այդ հանրապետությունների շարքում ոչ առաջինն էր, ոչ էլ՝ միակը, որ երկար ժամանակ և հաջողությամբ օգտագործում էր ռուսական ռեսուրսները⁹¹: Ձեռք բերելով անկախություն՝ Հայաստանի տնտեսությունն անմիջապես զրկվեց այն 3.5 մլրդ. դոլարից, որն ըստ եղանակի ստանում էր ոչնչի դիմաց, իսկ դա կազմում էր 1987 թ. արտադրության 25%-ը: Սակայն դա կորուստների միայն փոքր մասն էր: Մեծ տեղի մի մասը կազմող և նրա հարստություններից ու առավելություններից լիուլի օգտվող հանրապետությունից Հայաստանը դարձավ սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ, հանքահումքային սուղ պաշարներ ու ոչ մեծ տարածք ունեցող անկախ երկիր, որն արդեն ինքնուրույն պետք է լուծեր պետության կայացման խնդիրը, իր առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Սկզբնական շրջանում տրանսպորտային շրջափակման պայմաններում կարևորագույն խնդիրը տնտեսության արտադրական ներուժի առավելագույն օգտագործումն էր և այս ճանապարհով բնակչության կենսաապահովման նվազագույն միջոցների ստեղծումը: Հայաստանը փաստորեն մեկուսացված էր: Կար մի փոքր միջանցք հարավում՝ Իրան արտահանելու համար, և հյուսիսային սահմանը Վրաստանի հետ, որը գտնվում էր քաղաքացիական պատերազմների մեջ և շատ վատ տրանսպորտային համակարգ ուներ: Հայաստանը սկսեց իր անցումային շրջանը կիսափակ տնտեսությամբ, բարձր ծախսարությանմբ և անսովոր բարձր «բնական» շրջափակվածությամբ: Խնդրի լուծումն ավելի էին դժվարացնում տնտեսական ճգնաժամը խորացնող արտաքին գործոնները՝ հատկապես Նախկին տնտեսական կապերի խզումը, նորանկախ պետությունների կողմից հովանավորչական առևտրային պայմանների սահմանափակումը, ֆինանսական հաշվանցումների վատթարացումը, պայմանագրային պարտավորությունների զանգվածային խախտումները, միջպետական տնտեսական հարաբերությունների կանոնակարգման օրենսդրա-

⁸⁹ Տե՛ս Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, ՄԱԶԾ-ի գեկույցը աղքատության վրա մակրոտնտեսական քաղաքականության ազդեցության մասին, Եր., 2002, էջ 1:

⁹⁰ Տե՛ս Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, Եր., 1999, էջ 277:

⁹¹ Տե՛ս նույն տեղում:

կան դաշտի բացակայությունը: Հայաստանը, ի տարբերություն բալթյան երկրների, իր անկախությունը ստացավ միանգամից, և դա հանրապետության առջև դրեց հասարակական ու տնտեսական կյանքի կառուցման այն մոդելի ընտրության անհրաժեշտությունը, որը երկրին կարող էր տանել համաշխարհային տնտեսական համագործակցությանն ինտեգրվելու ուղեծրով: Նախկին մոդելը պիտանի չէր այդ խնդրի իրագործման համար երկու պատճառով:

Առաջին՝ գիտատեխնիկական առաջադիմության ակնհայտ հետամնացությունը և տեխնոլոգիական տարբերությունների խորացումը զարգացած երկրների և Միության միջև: Տնտեսության մեջ գիտական ձեռքբերումները վարչական մեթոդներով ներդնելու փորձերը մշտապես բախվում էին արտադրողների դիմադրությանը, քանի որ հակասում էին տնտեսական գործընթացի կազմակերպման նպատակներին:

Երկրորդ՝ արտադրության ծավալների համեմատությամբ բնակչության սպառման, կենսապայմանների ցածր մակարդակը այն դեպքում, երբ շուկայական տնտեսությամբ երկրներում հենց շուկան է կանխորոշում նյութական բարիքների համեմատությամբ աշխատանքի և աշխատուժի աճող գինը, կենտրոնացված տնտեսությամբ հասարակությունում աշխատանքի և աշխատուժի համեմատական արժեքը կունենա ավելի ցածր արժեքների և ծառայությունների արժեքների համեմատությամբ:

Նման իրավիճակում հանրապետության ղեկավարության առջև ծառայած հիմնական հարցը մնում էր շրջափակման վերացման միջոցով տնտեսական դրության բարելավումը: Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով, հիմնականում սեփական ուժին ապավինելով, հանրապետությունում մի շարք բարեփոխումներ կենսագործվեցին: Հայաստանի անկախության հռչակագրի դրույթներից ելնելով՝ ծրագրվում էր տնտեսությունն արմատական վերափոխումների ենթարկել: Հիմնականում նախատեսվում էր հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան անցում կատարել դեպի շուկայական հարաբերություններ: Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների և անկախության աստիճանական կայացման գործընթացը հայտարարվեց «անցման ժամանակաշրջան»:

Հետսոցիալիստական երկրներում, այդ թվում Հայաստանում, ժամանակակից անցման ժամանակաշրջանի կամ անցումային

տնտեսության առանձնահատկությունները մի կողմից բնորոշվում են դրանք ձևավորող արտաքին, պատմական, ավանդական գործոններով, մյուս կողմից՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքի հատկանիշներով: Այս կապակցությամբ Հայաստանի անցումային տնտեսության առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալները:

Առաջին՝ անցման պատմական աննախադեպ բնույթը, այսինքն՝ անցումը ոչ թե ավանդական, այլ հատուկ, շատ երկրների ոչ բնորոշ պլանային տնտեսությունից շուկայական տնտեսությանը: Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների փորձը, որոնք մի փոքր շուտ սկսեցին անցումային գործընթացները, դրանց տնտեսությունների ծավալները և պլանային համակարգի գոյատևման համեմատաբար փոքր ժամանակահատվածը, ինչպես նաև Ռուսաստանում իրականացվող շուկայական բարեփոխումները, ամբողջությամբ չէին կարող կիրառվել միայն տասներկու տարի առաջ նոր, անկախ պետականություն ձեռք բերած Հայաստանում: Առաջնակարգ խնդիր էր դառնում անկախության ամրապնդումը և դրա զուգակցումը տնտեսական այնպիսի համակարգի ձևավորման խնդիրներին, որտեղ պետականության դերը պետք է առավել եական լիներ: Հայաստանի անցումային հիմնահարցերի յուրահատկությունը հենց նրանում է, որ դրանց լուծման գործում չի կարելի հիմնվել որևէ փորձարկված կամ օգտագործված մոդելի վրա, որը մշակվել է այս կամ այն երկրի տնտեսության անցումային գործընթացների համար:

Երկրորդ՝ բարեփոխումների իրականացման ճանապարհին Հայաստանը պետք է կատարեր ինչ-որ իմաստով «հետադարձ» քայլ: Դա կապված էր նախկին վարչաբյուրոկրատական կառավարման մեթոդների և «կենտրոնի» թելադրանքով առաջացած խեղաթյուրումներից տնտեսության «մաքրման» և արդյունավետ տնտեսական քաղաքականության ձևավորման հետ:

Երրորդ՝ անցման գործընթացը Հայաստանում ծավալվում է 20-րդ դարի վերջին, 21-րդ դարի սկզբին՝ ամբողջ աշխարհում ընթացող գլոբալ տնտեսական, աշխարհաքաղաքական և միջազգային հարաբերությունների միանգամայն նոր պայմաններում, որոնք զգալիորեն ազդում են Հայաստանում շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացի ռազմավարության և տևողության վրա:

Տնտեսավարման վարչահրամայական համակարգից դեպի ժամանակակից շուկայական տնտեսության անցման շրջանը երկարատև գործընթաց է, որը պետք է վերափոխի ոչ միայն տնտեսություն-

նը, այլև հասարակությունը: Այն կտևի առնվազն մի քանի տասնյակ տարի:

Ժամանակակից անցումային փուլի տնտեսությունները՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկան առանձնահատկությունների հետ միասին ունեն նաև ընդհանուր գծեր:

Առաջին հերթին դա սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի տնտեսական օրենքների, օրինաչափությունների յուրահատուկ զուգորդումն է, որի ժամանակ հաճախ դրանք մասնակիորեն չեզոքացնում են միմյանց կամ էլ ստեղծում են հակասական իրավիճակներ: Ավելին, հարկ է ավելացնել նաև անցման շրջանի սեփական օրինաչափությունները՝ զուգորդված սոցիալական, բարոյահոգեբանական և մշակութային նոր միտումներով՝ ընդ որում ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական:

Բացի այդ, եթե անցումային համակարգը ենթադրում է ժամանակակից շուկայական տնտեսության տարրերի աստիճանական ուժեղացում և վարչահրամայական համակարգի տարրերի թուլացում (ըստ որում այդ գործընթացն անհամաչափ է), ապա նման համակարգին, որպես կարևոր բնորոշ գիծ, հատուկ է անկայունությունը և փոփոխականությունը սեփականաշնորհման տեմպերի արագացումը և դանդաղեցումը, ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրության ծավալների անկումը և միաժամանակ առանձին ճյուղերում աճի ապահովումը՝ կապված արտահանման գործոնի հետ, նոր արտադրությունների ստեղծում, հների վերացում և այլն:

Վարչահրամայական համակարգն ուներ երկու էական թերություն: Առաջինը պետական մակարդակի հասցված տնտեսավարման մենաշնորհն էր, փոփոխություններին հարմարվելու դանդաղկոտությունը, տնտեսության անհամամասնությունների խորությունը, իսկ երկրորդը՝ տնտեսական նախաձեռնության զանգվածային անտեսման հետևանքով խիստ ցածր արտադրողականությունը, որը համակարգն ուղղակի ուղղակի մղում էր դեպի ճգնաժամային փուլ:

Հետսոցիալիստական երկրներում շուկայի ստեղծմամբ ենթադրվում էր գլխավորապես ինքնակարգավորվող համակարգի ձևավորում, որի հիմքը կազմում են մասնավոր ձեռնարկատիրության ազատությունը և ապրանքների ու ծառայությունների, արտադրության գործոնների՝ կապիտալի, հողի, աշխատուժի, ձեռնարկատիրական ունակությունների առջ ու վաճառքի ազատությունը: Շուկան ենթադրում է նաև տնտեսավարող բոլոր սուբյեկտների, դրանց

միավորումների համագործակցության և մրցակցության ազատություն, ինչպես նաև դրանց գործունեության դադարեցում՝ սնանկացման կամ այլ պատճառների հետևանքով: Պետության դերը շուկայական տնտեսության պայմաններում սկզբունքորեն փոխվում է: Տնտեսական կյանքում պետությունն ունի երկակի դեր: Առաջինն այն է, որ սահմանում է տնտեսական խաղի կանոնները, սակայն միաժամանակ, ենթարկվելով իրավահավասարության սկզբունքին, տնտեսական գործունեություն ծավալելիս տնտեսական կյանքի մյուս սուբյեկտների հետ հավասար նաև ենթարկվում է այդ կանոններին: Պետության գործունեության հիմնական ուղղությունները տնտեսության ոլորտում դառնում են՝ առաջին՝ տնտեսական գործունեության իրավական շրջանակների ձևավորումն ու նրանում հաստատված կանոնների ապահովումը (սեփականության իրավունքի, պայմանագրերի պայմանների ապահովում և այլն). երկրորդ՝ ձևավորված տնտեսական հարաբերություններին և շուկայի գործունեությանը նպաստելը, որն արտահայտվում է շուկայի գլխավոր մեխանիզմի՝ մրցակցության ապահովմամբ և պաշտպանությամբ, շուկայում արտադրողների ու սպառողների ազատ գործունեությամբ ու մենատիրության ծայրահեղ դրսևորումների սահմանափակումներով՝ իրավական միջոցներով:

1990-ական թվականներից Հայաստանը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Գրեթե բոլոր նախկին խորհրդային երկրների հետ միասին, Հայաստանը ևս տնտեսական ոլորտում իրականացրեց «շուկային թերապիայի» եղանակը և փորձեց իրականացնել մի շարք խոշոր տնտեսական բարեփոխումներ, որքան հնարավոր էր արագ կերպով: Այս բարեփոխումները ներառում էին գների համընդհանուր ազատականացումը, պետական սեփականություն հանդիսացող տարածքների, շենքերի և արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը, պետական ծախսերի կրճատումը, որոշ հարկային բարեփոխումների իրագործումը և պետության դերի ընդհանուր նվազումը, սղաճը վերահսկելու նպատակով որդեգրած կոշտ դրամական քաղաքականության կիրառումը, ազատ առևտրի քաղաքականության որդեգրումը՝ ներառյալ շատ ցածր սակագները, կապիտալի շարժի վրա վերահսկողության վերացումը, արժույթի ազատ փոխանակումը և տարադրամի լողացող կուրսը: Այս բարեփոխումների նպատակն էր.

ա) հասնել մակրոտնտեսական կայունության, բ) արագացնել տնտեսական աճի տեմպերը, գ) մեծացնել ռեսուրսների բաշխման արդյունավետությունը՝ արտադրության կազմում կառուցվածքային փոփոխությունների միջոցով:

Անկախության տարիներին իսկապես սղաճը վերահսկողության տակ առնվեց, սակայն արտադրանքի ծավալներն ու եկամուտները նվազեցին, և տնտեսությունը մինչև 1994 թ. ընկավ խոր ճգնաժամի մեջ, որից դուրս է գալիս աստիճանաբար, մեծ դժվարությամբ: Արտադրության կառուցվածքը փոխվեց, բայց տեղի ունեցավ ոչ թե ռեսուրսների՝ սոցիալապես անարդյունավետից դեպի արդյունավետ գործունեության տեսակների վերաբաշխման միջոցով, այլ գների ազատականացման հետևանքով անմրցունակ դարձած արտադրանքի ծավալների խիստ կրճատման միջոցով՝ առանց տնտեսության այլ ոլորտներում ծավալների համապատասխան աճի: 1990-1993 թթ. ՀՆԱ-ի միջին տարեկան տեմպերը կազմեցին մոտ 18 տոկոս⁹²: Սկսած 1994 թ.-ից հաջողվեց կասեցնել երկրի տնտեսական անկումը և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն:

Պետությունը տնտեսական գործունեության վրա ներգործում է հիմնականում ոչ թե ուղղակի ձևով, այլ շուկայի միջոցով՝ ձեռնարկությունների ծախսերի և աշխատանքի արդյունքների իրացման կարգավորմամբ: Հետսոցիալիստական տնտեսությունը չի կարող լինել ամբողջությամբ շուկայական, բայց և արդեն պլանային չէ: Սակայն շուկայական տնտեսությանն անցնելու սկզբնական փուլում բոլոր երկրներում իրականացվող բարեփոխումները հիմնականում կատարվում են վարչական մեթոդներով, որը պայմանավորված է տնտեսությունում պետական հատվածի գերակշռությամբ: Այս փուլում հարկային քաղաքականության սկզբունքները լիարժեք չեն գործում, ձևավորվում է մեծ չափերի հասնող ստվերային տնտեսություն և այլն: Քանի որ Հայաստանը գտնվում է անցումային շրջանում, ուստի տնտեսության զարգացման կորդինացման համար անհրաժեշտ է ակտիվ պետական միջամտություն: Սակայն դրա հետ մեկտեղ պետական ապարատի չափից դուրս մեծացումը կարող է ի հայտ բերել այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են բյուրոկրատիզմի զարգացումը և տնտեսական ակտիվության կաշկան-

դումը:

1990-91 թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդը մի շարք որոշումներ ընդունեց, որոնք ուղղված էին տնտեսական հարաբերությունները կարգավորելուն, հանրապետությունը ճգնաժամից դուրս բերելուն և սեփական շուկայական տնտեսական համակարգ ստեղծելուն⁹³: Այս առումով կարևոր նշանակություն ուներ ՀՀ Գերագույն խորհրդի 1990 թ. սեպտեմբերի 10-ին ընդունած օրենքը «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին», ըստ որի նրա տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն⁹⁴: Դրա հետ մեկտեղ հոկտեմբերի 31-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը⁹⁵: Սրանք պետական մենատիրության վերացմանը, շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված առաջին քայլերն էին:

Տնտեսական բարեփոխումների սկզբից պետության դերը կտրուկ կրճատվեց բարիքների արտադրության մեջ և մասնավոր բաժինը դարձավ տնտեսական զարգացման հիմնական աղբյուր: Այս բնագավառում իրականացվող հետևողական քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ արդեն 1999-ին համախառն ներքին արդյունքի 85%-ը ձևավորվեց մասնավոր սեկտորում⁹⁶: Դա ապահովվեց ի հաշիվ զանգվածային սեփականաշնորհման և նոր մասնավոր բիզնեսի մուտքի շուկա: Սեփականաշնորհման նպատակն էր սկզբնական շրջանում տնտեսության վերափոխման գործընթացում ներգրավել բնակչության հնարավորին չափ լայն շերտեր, ստեղծել շուկայական տնտեսության համար սեփականատերերի զանգված, ներդնել մրցակցության մեխանիզմներ:

Հանրապետության շուկայական տնտեսության հետևողական անցումն ապահովելու, ձեռներեցության հիմքեր ստեղծելու նպա-

⁹³ 1991 թ. փետրվարի 13-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման հիմունքների մասին», իսկ սեպտեմբերի 25-ին՝ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին», տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 109-114, 177-179:

⁹⁴ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, գ. 163, գ. 341, ք. 3, գ. 164, գ. 716, ք. 1, 2:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, գ. 165, գ. 259, ք. 1, 2:

⁹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 5,9, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, խմբագրությամբ Ա.Գ. Աղանբեգյանի, Եր., 1999, էջ 100:

⁹² Տե՛ս Կայուն զարգացման համաշխարհային զագաթաժողով, Յոհաննեսբուրգ, 2002, Ազգային գնահատման զեկույց, Եր., 2002, էջ 10:

տակով ՀՀ առաջին կառավարությունը 1990 թ. հոկտեմբերին որոշում ընդունեց ստեղծել «ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական հանձնաժողով»։ Հանձնաժողովի նախագահն էր հանրապետության վարչապետ Վ. Մանուկյանը, իսկ տեղակալը ՀՀ էկոնոմիկայի պետական կոմիտեի նախագահ Հ. Բագրատյանը⁹⁷։ Այս հանձնաժողովի գլխավոր խնդիրը արմատական տնտեսական բարեփոխումների գիտական հիմունքների ու սկզբունքների մշակումն էր, բազմակացությամբ տնտեսության անցնելու, ձեռներեցության և սեփականության բոլոր ձևերը զարգացնելու, մոնոպոլ երևույթները վերացնելու մեխանիզմի ապահովումը։ Նորաստեղծ հանրապետության առաջին կառավարությունը ձեռնամուխ եղավ այն խնդիրների իրականացմանը, որոնք առաջացել էին Լեռնային Ղարաբաղում սկսված պատերազմի, դաժան տնտեսական շրջափակման և ժողովրդական տնտեսության քայքայման պայմաններում։ 1992 թ. հուլիսին Վ. Մանուկյանի հրաժարականից հետո նրան փոխարինած Խ. Հարությունյանը 1993 թ. փետրվարին նույնպես այդ պաշտոնից հրաժարվեց, չհամաձայնվելով արմատական տնտեսական բարեփոխումների ծրագրի իրագործման հետ։ Նրան փոխարինած Հ. Բագրատյանն իր վրա պատասխանատվություն վերցրեց կենսագործելու շուկայական տնտեսական բարեփոխումները՝ ստանալով Համաշխարհային միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնությունը։ Սակայն լայն մասշտաբով այդ նոր ծրագիրը կենսագործվեց միայն 1994 թ. դեկտեմբերին, ԼՂՀ-ում պատերազմի դադարեցումից 7 ամիս անց⁹⁸։

Հանրապետության ղեկավարությունը շուկայական տնտեսությանն անցնելու հիմնական բաղադրիչը համարում էր գների ազատականացումը։ Սակայն այս գործընթացն ուղեկցվեց բնակչության սոցիալական դրության զգալի վատթարացումով։ Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ թույլ տրվեցին բախտորոշ սխալներ։ Տնտեսությունում կառուցվածքային վերափոխումների ճիշտ հերթականության ընտրությունը միայն կարող էր հանգեցնել ցանկալի արդյունքի։ Արդեն իսկ իրականացվող գործընթացում սեփականության ձևերի փոփոխության նկատմամբ գների ազատականացման առաջանցիկությունը

նր կանխորոշեց գործնականում այդ քաղաքականության կենսագործման դժվարությունները։

Հայաստանում գների ազատականացումն ընթացավ մի շարք փուլերով։ Գների աճի առաջին փուլը սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո։ Խորհրդային Միությունում հաստատագրված գների գործող համակարգը Հայաստանի համար ապահովում էր արտաքին առևտրի բարենպաստ պայմաններ։ Հանրապետությունը հնարավորություն ուներ ձեռք բերել վառելիքաէներգետիկ և հումքային էժան պաշարներ և փոխարենը ավելի թանկ գներով արտահանել պատրաստի արտադրանքը։ Սակայն անկախությունից հետո Հայաստանը հայտնվեց գների բոլորովին նոր համակարգում։ Նախկին միութենական հանրապետությունները սկսեցին արտահանվող արտադրանքի, առաջին հերթին վառելիքաէներգետիկ և հումքային պաշարների գներն արագորեն մոտեցնել միջազգային գներին։ Այս պայմաններում հանրապետությունը կանգնեց վճարային հաշվեկշռի աստիճանաբար մեծացող պակասորդի ծածկման դժվարությունների առջև, ինչը հանգեցրեց ներմուծման ծավալների էական կրճատման՝ առաջ բերելով առաջարկի ցնցումներ։ Ներկրվող էներգակիրների և կարևորագույն հումքատեսակների գների կտրուկ աճի պայմաններում խիստ նվազեցին հանրապետության արդյունաբերական արտադրանքի մրցակցության հնարավորությունները ավանդական շուկաներում և առաջին հերթին Ռուսաստանի Ղաշնությունում։ Այս փուլում՝ 1990-1991 թթ. սպառողական ապրանքների գներն աճեցին շուրջ 3 անգամ⁹⁹։ Գների և առաջարկի ցնցումների հետևանքով պետական ձեռնարկությունների զգալի մասը հայտնվեց կաթվածահար վիճակում և փակման եզրին։

Գների աճի երկրորդ փուլը սկսվեց 1992 թ. հունվարից։ Ազատ արձակվեցին ապրանքների և ծառայությունների մեծ մասի գներն ու սակագները։ Պետության կողմից կարգավորվում էին միայն սահմանափակ թվով ապրանքների և ծառայությունների գներն ու սակագները (հաց, էլեկտրաէներգիա, օդային փոխադրումներ, կապի և հանրային այլ ծառայություններ)։ Գների ազատականացման պատճառով 1992 թ. դեկտեմբերին, 1991 թ. դեկտեմբերի համեմատությամբ, սպառողական ապրանքների գներն աճեցին 13,4 անգամ¹⁰⁰։

⁹⁹ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 496, թ. 1, գ. 519, թ. 2:

¹⁰⁰ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, Եր., 1995, էջ 18: ՀՀ վիճակագրության պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1992 թ. հունվարին-դեկտեմբերին), Եր., 1993, էջ 2:

⁹⁷ Տե՛ս *Բագրատյան Հ.*, Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000, էջ 22, 23, 37:

⁹⁸ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 163, գ. 426, թ. 12, 13:

Երրորդ փուլը պայմանավորվեց ռուբլու միասնական գոտու փլուզումով և սեփական դրամական միավորի՝ դրամի ընդունումով: Վերջին երկու հանգամանքները հանգեցրին գների մակարդակի նոր, կտրուկ աճի: Սպառողական գները 1993 թ. դեկտեմբերին, 1992 թ. դեկտեմբերի համեմատությամբ, աճեցին 110 անգամ¹⁰¹: Այս պայմաններում հանրապետության համախառն ներքին արդյունքի ծավալը 1993 թ., 1989 թ. համեմատությամբ, նվազեց շուրջ 55,6%-ով, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը՝ 57%-ով, իսկ արդյունաբերական արտադրանքինը՝ 60%-ով¹⁰²: Սրանքաց նվազեցին նախկին միութենական շուկայում մենաշնորհային դիրք և հաստատուն պահանջարկ ունեցող արդյունաբերական կարևորագույն արտադրատեսակների արտադրության ծավալները: Այսպես, մետաղահատ հաստոցների արտադրության ծավալը 1993 թ. կազմել է 1987 թ. մակարդակի 15,2%-ը, տրանսֆորմատորներինը՝ 4,5%, էլեկտրալամպերինը՝ 34,7% և այլն¹⁰³: Տնտեսության պետական հատվածի աշխատողների միջին ամսական իրական աշխատավարձը նույն ժամանակահատվածում պակասեց շուրջ 65%-ով¹⁰⁴: 1994 թ. վերջից սկսվեց գների և սակագների լայն ազատականացման նոր գործընթաց: Ազատ արձակվեցին հեղուկ գազի, օդային փոխադրումների, արտաքին հեռախոսային և փոստային կապի ծառայությունների գներն ու սակագները¹⁰⁵: 1994 թ. դեկտեմբերի 1-ից բարձրացվեց հացի գինը և էլեկտրաէներգիայի սակագինը: 1995 թվականից շարունակվեց սակագների ազատականացման գործընթացը¹⁰⁶: Պետության կողմից վերահսկվում էին միայն մենաշնորհային սակավաթիվ ապրանքների գներն ու ծառայությունների սակագները:

Գների և առաջարկի այսպիսի փոփոխություններն էապես փոխեցին արտադրության կառուցվածքն ու իրադրությունը աշխատուժի շուկայում: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) կառուցվածքում առաջատար դիրք գրավեց գյուղատնտեսությունը, արդյունա-

բերության մեջ՝ էներգետիկան, թանկարժեք քարերի և ոսկերչական իրերի արտադրությունը: Այս հանգամանքը թելադրեց նաև աշխատուժի շուկայի նոր կառուցվածք:

Ազատ գների՝ «վերևից» վարչական ռեժիմով ներդրումը ակնբարձր են փոխեց բոլոր մակարդակներում գործընկերների միջև փոխհարաբերությունների և վճարումների սկզբունքները: Գների ազատականացումը համահունչ չէր տնտեսության գոյություն ունեցող պետական-մենաշնորհային համակարգին, ինչը հանգեցրեց ոչ թե բարեփոխման, այլ գործող համակարգի կործանմանը: Շուկայական ինքնակազմակերպման ակնկալիքները, ըստ որի ապրանք արտադրողների միջև պիտի ստեղծվեր փոխհարաբերությունների համապատասխան համակարգ, ակնհայտորեն դատապարտված էին, քանի որ իրականում բացակայում էին դրանց իրականացման շուկայական ինստիտուտները: Գների ազատականացումը մենաշնորհի և ապրանքային դեֆիցիտի պայմաններում հանգեցրեց գների կտրուկ աճի և բարձր ինֆլյացիայի: Սպառողական շուկայում հայրենական արտադրանքը սկսեց դուրս մղվել առավել մրցունակ արտասահմանյան արտադրատեսակներից:

Առաջացած քառսը և ձեռնարկությունների փաստացի սնանկացման իրավիճակում սկսված արդյունաբերության զանգվածային սեփականաշնորհումը 1995 թվականից, գործնականում վերածվեց պետական սեփականության վերաբաժանման՝ մարդկանց փոքր խմբի օգտին: Գների ազատականացումը պայմանավորեց արտադրանքի անիրացվելիությունը և հետագայում փոխադարձ չվճարումները, որոնց աճը սնանկացման եզրին կանգնեցրեց ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ ձեռնարկություններին: Այս ամենն ի վերջո բերեց կառուցվածքային ճգնաժամի, կոոպերացիոն կապերի խզման, շուկաների կորստի և արդյունաբերության անդամալուծման: Գների ազատականացմամբ պայմանավորված բարձր ինֆլյացիան հասցրեց ճգնաժամի խորացման: Թեև որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին ֆինանսական կայունացման ուղղությամբ, բայց դրանք արդեն ոչ թե պատճառի, այլ հետևանքի դեմ պայքարի միջոցներ էին: Կոշտ քաղաքականությունը և դրամական զանգվածի կտրուկ անկումը նպաստեցին արտադրության առավել մեկուսացմանը և սոցիալական ծրագրերի ֆինանսավորման կրճատմանը:

Եթե 1988-1990 թթ. ՀՆԱ-ում պետական ձեռնարկությունների բաժինը գերակշռող էր (ավելի քան 90%), ապա 1993 թվականից

¹⁰¹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, Եր., 1995, էջ 18 :
¹⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 16, 17, ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկույցագիր հ. 1 (ՀՀ տնտեսությունը 1993 թ. հունվարին-դեկտեմբերին), Եր., 1994, էջ 15, 18:
¹⁰³ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995 թ., էջ 17, Արդյունաբերություն, 1990-1997, էջ 35, 36:
¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, 1995, էջ 18:
¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում:
¹⁰⁶ Տե՛ս ՀՀ արդյունաբերություն 1990-1997, էջ 50:

մասնավոր ոլորտի ատաղրանքի ժավալը սկսեց գերազանցել պետականին¹⁰⁷: Ընդ որում գյուղատնտեսությունում գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները թողարկում են ճյուղի արտադրանքի ավելի քան 90%-ը¹⁰⁸: Նույն միտումը բնորոշ էր ներդրումների, վարկերի, արտաքին առևտրի, բնակչության եկամուտների կառուցվածքային փոփոխություններին:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանում իրականացված տնտեսական բարեփոխումները մինչև 1994 թ. ընթացքում տնտեսական կտրուկ անկման պայմաններում, որի պատճառները կապված էին ոչ միայն Հայաստանի փաստացի շրջափակման, էներգետիկ համակարգի ճգնաժամի, տնտեսական քաղաքականության արտաքին ուղենիշների պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի կտրուկ խզման, այլև տնտեսական բարեփոխումների իրականացման ձևերի՝ առաջնային գների ազատականացման, երկրի արտաքին առևտրի և տնտեսական սահմանների բաց գործելակերպի հաստատման հետ: Այդ ամենն ուղեկցվում էր նաև նոր արտաքին շուկաներում ներկայացվելու և հաստատվելու փորձի բացակայությամբ, արտադրանքի ցածր մրցունակությամբ: Նշված գործընթացների ազդեցությունը խոր հետք թողեց երկրի սոցիալ-տնտեսական կայունության և տնտեսական բարեփոխումների հետագա ընթացքի վրա: Սկսած 1994 թվից՝ հաջողվեց կասեցնել երկրի տնտեսական անկումը և ապահովել տնտեսական որոշակի կայունություն: Սակայն դա չդարձավ տնտեսական համաչափ ու մշտական աճի հիմք, որը հետևանք էր տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումների անհամաչափության, բացթողումների ու սխալների, վիճակը բարելավելու ոչ ամբողջական, այլ իրավիճակային լուծումների, որոնց արդյունավետությունը պայմանավորված էր ընդունված որոշումների կատարման վարչարարության աստիճանով և սահմանափակված էր ժամանակի գործոնով:

Որպես շուկային անցման գլխավոր պայման, Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական հողերի, պե-

տական (հանրային) բնակարանային ֆոնդի, պետական ձեռնարկությունների ու անավարտ շինարարական օբյեկտների մասնավորեցման ծրագրի իրականացմանը:

բ. Ազրարային վերափոխումներ

Հաշվի առնելով տևական շրջափակման և տնտեսական փլուզման մեջ գտնվող հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ազրարային ոլորտի վճռորոշ ազդեցությունը և ելնելով բնակչության պարենային ապահովման և հույժ կարևոր խնդրից՝ գյուղատնտեսությունը դիտվեց որպես տնտեսության առավել կարևորագույն բնագավառներից մեկը, և 1991 թվականին հենց այս ոլորտից էլ սկսվեց սեփականաշնորհումը՝ նպատակ ունենալով այն դարձնել շուկայական հարաբերությունները կարգավորող կայուն ու արդյունավետ բնագավառ:

Դեռևս խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում, նախկին միութենական հանրապետությունների նման, հողերն ազգայնացվեցին և տրվեցին գյուղացիներին՝ անհատական տնտեսավարման համար, այսինքն՝ հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքն անջատվեց նրա վրա տնտեսավարելու իրավունքից: Վերացվեցին քաղաքական այն ուժերը, որոնք կարող էին պաշտպանել մասնավոր սեփականատեր գյուղացիների շահերը: Այդ պատճառով էլ մի քանի տարի հետո համատարած կոլեկտիվացման ճանապարհով դժվար չէր անցնել հողերի համայնական մշակման՝ այդ նպատակով գյուղացիներից խլելով նաև հողի մշակման նրանց ունեցած միջոցները, բանող և մթերատու անասունները:

Ամբողջ երկրում 1932 թ. արմատավորվեց գյուղատնտեսական մթերքների, հարկային բնույթ կրող, պետական պարտադիր մթերումների համակարգ, որով մթերքների շատ տեսակներ անմնացորդ, մյուսների մեծ մասը՝ սիմվոլիկ գներով մթերվում էր պետության կողմից (օրինակ, տարիներ շարունակ մթերած հացահատիկի 1 ցենտների դիմաց պետությունը կոլտնտեսություններին վճարում էր 80 կոպեկ)¹⁰⁹: Կոլտնտեսություններից խլվում էր իրենց արտադրած, օրենքով իրենց պատկանող մթերքներն ու եկամուտները տնտեսության հետագա զարգացման և կոլտնտեսականների շահերին համապատասխան տնօրինելու իրավունքը:

¹⁰⁷ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր, հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1993 թ. հունվար-դեկտեմբերին), Եր., 1994., էջ 3,4, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, էջ 19:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁹ ՀՀ ՀԶԿԳԿԴՍ Ֆ. 1, ց. 82, գ. 25, թ. 81:

Տասնամյակներ շարունակ գյուղի և քաղաքի միջև անհամար-
ժեք փոխանակություն էր կատարվում: Երկրի ինդուստրացումն իրա-
կանացվում էր ի հաշիվ գյուղատնտեսության: Այդ բոլորի, ինչպես
նաև այլ պատճառներով կոլտնտեսային-խորհրդային հողօգ-
տագործումը փաստորեն պետական-ֆեոդալական հողօգտագործ-
ման յուրահատուկ տեսք էր ստացել, որի հետևանքով գյուղացին
կորցրել էր տիրոջ զգացումը, արդյունավետ չէր օգտագործում տա-
րիների ընթացքում ստեղծված արտադրական ներուժը, ցածր էր
գյուղատնտեսական արտադրության սոցիալ-տնտեսական արդյու-
նավետությունը:

Այդ բոլորը հաղթահարելու, հանրապետությունը հետզհետե խո-
րացող տնտեսական ճգնաժամից դուրս բերելու, շուկայական հա-
րաբերություններին անցնելու գործընթացն արագացնելու, պարենի
և մի շարք ուրիշ խնդիրների հաջող լուծման շահերը պահանջում
էին գյուղատնտեսության մեջ արտադրական-տնտեսական հարաբե-
րություններն արմատապես վերակառուցել, ազդարային ռեֆորմ կա-
տարել:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առա-
ջինն էր, որ 1991 թ. կարճ ժամանակամիջոցում սեփականաշնորհեց
հողը: Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփակա-
նատիրությունը խրախուսելու նպատակով հանրապետության խոր-
հրդարանը 1991 թ. հունվարի 29-ին ընդունեց «Հայաստանի Հանրա-
պետության հողային օրենսգիրքը»¹¹⁰, «Գյուղացիական և գյուղական
կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը¹¹¹: Այստեղ մանրա-
մասն նշվում էր հողային օրենսդրության ընդունման կարևորությու-
նը մասնավոր հողատիրության զարգացման համար, սահմանվում
էին գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների
գործունեության տնտեսական, կազմակերպչական սոցիալական
պայմաններն ու իրավական հիմքը: Այդ օրենքով 1991-1992 թթ. լու-
ծարվեցին հանրապետությունում եղած մոտ 900 կոլտնտեսություն-
ներն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի
արտադրանքի ավելի քան 90%-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին

320 հազարից ավելի անհատական տնտեսություններ¹¹²: Իբրև ան-
հատական սեփականություն դրանց փոխանցվեց հողերի 66%-ը, և
անասունների՝ 80%-ը, մնացած հիմնական միջոցները գրեթե ամ-
բողջությամբ¹¹³: Հողերի սեփականաշնորհման քաղաքականությունն
ամրապնդվեց ՀՀ կառավարության ընդունած մի շարք որոշումնե-
րով¹¹⁴: Հողի սեփականատեր դարձան հիմնականում բոլոր գյուղա-

¹¹² Տե՛ս Էկոնոմիկա, հ. 1-3, եր., 1996, էջ 29, Հայաստանի վիճակագրական տարե-
գիրք, 1990 թ., եր., 1991, էջ 185, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993-
1994 թթ., էջ 129, Հայաստանը թվերով, 1992, վիճակագրական համառոտ ժողովա-
ծու, եր., 1994, էջ 90:

¹¹³ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, գ. 165, գ. 448, թ. 1-3, ՀՀ ՀԶԿՊ ԿՊԱ, ֆ. 4516, գ. 1, գ. 25, թ. 66:
Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1991 թ., եր., 1994, էջ 148, 152:

¹¹⁴ ՀՀ կառավարությունը 1991 թ. հունվարի 22-ին (հ. 43) որոշում ընդունեց «ՀՀ Նա-
խարարների խորհրդի հողային ռեֆորմի և սեփականաշնորհման կենտրոնական
պետական հանձնաժողովի և նրա աշխատանքային ապարատի ստեղծման մա-
սին», փետրվարի 8-ին (հ. 75) «ՀՀ շրջանների գյուղատնտեսական ձեռնարկու-
թյունների սեփականության տրվող հողատեսքերի մասնակի հատուցման չափերի
մասին», մարտի 5-ի (հ. 163) որոշմամբ սահմանվեց գյուղացիական տնտեսություն-
ների վարկավորման և ֆինանսավորման կարգը, մարտի 6-ին (հ. 177) որոշում ըն-
դունվեց «Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն
տրամադրվող հողաբաժնի առանձին կտորների առավելագույն քանակ սահմանե-
լու մասին», «Խաղողի և պտղատու այգիների սեփականաշնորհման որոշ հարցերի
մասին», մարտի 11-ին (հ. 192) որոշում ընդունվեց «Սեփականաշնորհվող գյուղա-
տնտեսական ձեռնարկությունների գույքի և հիմնական արտադրական միջոցների
ձեռքբերման արտոնությունների մասին», ապրիլի 16-ին (հ. 283) «Հողի սեփակա-
նաշնորհման ընթացքում ստեղծված պետական գյուղատնտեսական ձեռնարկու-
թյունների և կոլեկտիվ տնտեսությունների կարգավիճակի մասին», մայիսի 9-ին
(հ. 333) «Սեփականաշնորհվող անասնազխաքանակի մասին», հունիսի 20-ին
(հ. 417) «Սեփականաշնորհված անասնազխաքանակի համար բնամթերային հար-
կի վճարման մասին», հունիսի 19-ին (հ. 412) «Գյուղացիական և գյուղացիական
կոլեկտիվ տնտեսություններին սեփականաշնորհված հողամասերի արժեքի հա-
տուցման կարգի մասին», Մոյսեբերի 5-ին (հ. 631) «ՀՀ գյուղացիական և գյուղա-
ցիական կոլեկտիվ տնտեսությունների աշխատողների սոցիալական պաշտպան-
վածության մասին», իսկ 1992 թ. ապրիլի 14-ին (հ. 231) «Սեփականաշնորհվող ա-
նասնազխաքանակի, գյուղտեխնիկայի և մյուս հիմնական միջոցների վաճառքի
գների և ինդեքսավորման կարգի մասին», հուլիսի 1-ին (հ. 385) «Գյուղացիական և
գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից կանխիկ գումարով հացահատիկ
գնելու մասին», սեպտեմբերի 16-ին (հ. 368) «Գյուղացիական և գյուղացիական կո-
լեկտիվ տնտեսություններին սեփականաշնորհված հողի և մյուս հիմնական միջոց-
ների դիմաց մուծումների մասին»: (Տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, գ. 165, գ. 42, թ. 1-6, գ.
127, թ. 1,2, գ. 162, թ. 1, գ. 163, թ. 1, գ. 170, թ. 1-2, գ. 171, թ. 12, գ. 172, թ. 2,3, գ. 174,
թ. 1, գ. 175, թ. 3, գ. 201, թ. 1-3, գ. 205, թ. 3,4, գ. 247, թ. 1-6, գ. 255, թ. 2-4, գ. 256, թ. 1-2,
գ. 274, թ. 3-7, գ. 276, թ. 1-2, գ. 283, թ. 7-14, գ. 325, թ. 4,5, գ. 326, թ. 2, գ. 327, թ. 1-5,
գ. 331, թ. 1-2, գ. 334, թ. 2-4, գ. 167, գ. 71, թ. 6-8, գ. 152, թ. 14, գ. 127, թ. 1,2, գ. 252,
թ. 14, գ. 357, թ. 2,1, գ. 363, թ. 1-3, գ. 374, թ. 2, գ. 393, թ. 3, գ. 389, թ. 1-7, գ. 400, թ. 4-8,
գ. 401, թ. 5-8, գ. 521, թ. 2, գ. 562, թ. 21, գ. 402, թ. 1-2, գ. 403, թ. 1, գ. 407, թ. 3-7, գ. 409,
թ. 1, 3-7, գ. 409, թ. 1-2, գ. 411, թ. 1-2, գ. 412, թ. 1, գ. 448, թ. 1-3, գ. 484, թ. 1,3, գ. 486,
թ. 2,5,8, գ. 487, թ. 1,3,9, թ. 223-226, հ. 23-24, թ. 241-243, հ. 27-28, թ. 257-258, գ. 4:

¹¹⁰ Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 80-106:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 67-80:

բնակները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել: Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, որն ընդունվեց տնտեսական ճգնաժամի ժամը պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և որոշ չափով նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց սովի առաջացման հնարավորությունը: Ագրարային ոլորտի արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղացիության աշխատանքային գործունեության բարձրացման և աշխատողների կազմի երիտասարդացման վրա: Նկատելիորեն մեծացավ գյուղացիների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը արտադրության ընդլայնման և արդյունավետության բարձրացման գործում: Նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունն ու գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը: Սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան առավել արդյունավետ բույսեր մշակել և անասուններ պահել: Նրանք այլևս հարկադրված չէին կատարելու պլանային առաջադրանքներ: Հողի սեփականաշնորհման մասին օրենքի կենսագործմամբ զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը: Հողով բավարարվեց փախստականների մի մասը, վերակենդանացան նախկինում լքված շատ գյուղեր: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում այնպիսի ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը, թեև 1993 թ. գյուղատնտեսության զուտ արդյունքի ծավալը, 1989 թ. նկատմամբ, նվազեց 18%-ով¹¹⁵: Այնուամենայնիվ 1990-ական թվականներին գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ձեռք բերեց անհամամասնական աճի միտում: Եթե խորհրդային շրջանում այն կազմել էր 12-12,5%, ապա 1990 թ.՝ 17,2%, 1994 թ.՝ 43,3%, 1995 թ.՝ 50,6%, 1999 թ.՝ 25,3%, իսկ 2001 թ.՝ 28%: Ամենամեծ անկումը նկատվել է 2000 թվականին՝ երաշտի հետևանքով: Այդ ժամանակ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմեց 23,1%: Փաստորեն 1995 թ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի ճյուղային

կառուցվածքում ամենաբարձրն է եղել և 3,8%-ով գերազանցել է արդյունաբերության տեսակարար կշիռը¹¹⁶: Այս փոփոխությունները կարող էին գյուղատնտեսության և գյուղի սոցիալ-տնտեսական առաջընթացի արագացման կարևոր կռվանի վերածվել, եթե դրանք ամրապնդվեին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, կարգավորված արտադրական հարաբերություններով, պետական հովանավորմամբ: Սակայն դրանց կարևորությունը չըմբռնվեց ու թերագնահատվեց, որի հետևանքով գյուղատնտեսությունը մեծ նահանջ ապրեց:

Տասնամյակների ընթացքում, գյուղում ստեղծված արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մանրատման և փոշիացման հետևանքով սակավահող Հայաստանում ցանքատարածությունները կրճատվեցին մոտ 100 հազար հեկտարով (ավելի քան 20 տոկոս), բազմամյա տնկարկների տարածությունը՝ ավելի քան 30 հազար հեկտարով (35,9%), խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 191,1 հազարով (27,7%), ոչխարներին և այծերինը՝ 437 (33,8%), խոզերինը՝ 245 հազարով, թռչուններինը՝ 8261,1 հազարով (3,8 անգամ)¹¹⁷: Մեծ չափերով նվազեց դաշտերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը, գյուղատնտեսության համախառն արտադրանքն ու հատկապես պետական մթերումների ծավալը: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը կրկնապատկվելու պայմաններում համախառն արտադրանքի ծավալը դեռևս շատ հետ է վերակառուցմանը նախորդած հինգ տարիների միջին ցուցանիշից (Աղ. 1):

Բերված աղյուսակի տվյալները վկայում են գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առանձնակի փոփոխությունների, գյուղմթերքների արտադրության (չնչին բացառություններով) կրճատման, բերքատվության ու անասունների մթերատվության նվազման, ապրանքայնության կտրուկ կրճատման մասին:

¹¹⁵ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր թիվ 1, 1994 թ. փետրվար, էջ 25, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1991 թ., էջ 145, Նույն տեղում, 1993-1994 թթ. էջ 131:

¹¹⁶ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն. Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրերը (ըստ 1991-1999 թթ. սոցիալ-տնտեսական միտումների), Եր., 2000, էջ 4:

¹¹⁷ Տե՛ս *Ֆաիրադյան Դ.*, Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին, Եկոնոմիկա, 1-3, 1996, էջ 29:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները (հազ. հա),
 համախառն բերքը (հազ. տ), անասունների զխաքանակը (հազ.),
 միջին կաթնատվությունը (կգ), անասնապահական մթերքների արտադրությունը
 (հազ. տ) և գյուղատնտեսական համախառն արտադրանքը
 (մլդ դրամ, 1995 թ. հաստատուն գներով)¹¹⁸

	1986	1988	1990	1992	1994	1996	1998	2000
Ընդամենը՝ ցանքատարածություններ, այդ թվում՝	446,1	450,3	436,6	396,0	356,8	346,5	323,7	303,2
Հացահատիկ	135,6	133,0	138,2	180,6	176,4	183,9	198,7	181,1
Բանջարեղեն	18,0	18,0	18,0	25,7	20,4	21,0	19,3	20,0
Կարտոֆիլ	19,9	21,1	22,4	29,0	31,8	32,6	32,7	34,2
Խաղողի այգիներ	32,9	31,7	29,2	25,0	25,5	21,9	15,8	15,0
Պտղատու այգիներ	54,0	51,4	50,2	33,1	35,5	34,1	21,6	22,8
Կերային մշակաբույսերի ցանքատարածություններ	257,9	264,8	251,3	156,0	125,1	104,8	69,2	61,6
Համախառն արտադրանքը՝ հացահատիկ	283,5	373,5	271,0	309,6	238,0	328,4	325,7	224,8
Բանջարեղեն	619,6	567,0	389,7	497,5	424,3	444,5	395,2	375,7
Կարտոֆիլ	305,7	207,3	212,5	322,4	417,2	423,2	440,0	290,3
Խաղող	253,5	214,0	143,6	142,1	212,4	158,5	106,0	115,8
Պտուղ	165,5	241,1	155,5	133,2	127,5	158,2	126,7	128,5
Անասունների զխաքանակը, (հազ.) խոշոր եղջերավոր անաս., այդ թվում՝	860,8	833,6	690,0	566,4	501,6	507,5	465,7	478,7
Կովեր	319,3	312,3	260,1	251,1	269,8	276,8	256,2	262,0
Խոզեր	344,3	344,1	329,3	224,4	81,5	79,6	56,9	70,5
Ոչխարներ և այծեր	1901,9	1730	1291,5	1022,9	735,9	603,7	521,1	548,6
Թռչուններ	1211	11395	11244	9334,2	2985,6	2920,7	2900,2	4255,1
Արտադրվել է՝								
Միս	177,8	181,1	145,1	110,9	79,0	82,6	86,0	88,0
Կաթ	572,7	565,9	441,9	394,7	415,2	431,3	447,5	452,0
Չու (մլն հատ)	608,6	618,1	517,9	252,0	191,3	192,2	219,4	385,4
Կովերի միջին կաթնատվությունը (կգ)	1816	1876	1625	1536	1512	1534	1670	1668
Գյուղատնտեսական համախառն արտադրանքը այդ թվում՝	-	-	314,0	324,0	318,0	339,0	361,0	356,5
Բուսաբուծական			155,0	206,0	203,0	234,0	240,0	213,0
Անասնապահական			159,0	118,0	115,0	105,0	121,0	143,5

¹¹⁸ Տե՛ս Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999 թթ., վիճակագրական ժողովածու, Եր., 2001, էջ 6, 12, 13, 102, 126, 129: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2002, էջ 33:

Ցանքատարածությունների ու անասնազխաքանակի, ինչպես նաև բերքատվության ու անասնամթերքների արտադրության վերջին տարիների զգալի կրճատումը հաստատում է գյուղատնտեսության շեշտակի անկման փաստը: Եվ գյուղատնտեսական շուկաներում գյուղմթերքների այսօրվա առատությունը կարող է ժամանակավոր լինել, քանի որ այն բնակչության չափազանց ցածր գնողունակության հետևանք է:

Անտարակույս, տնտեսական դաժան շրջափակումները, էներգետիկ ճգնաժամը, նախկին ԽՍՀՄ-ի մյուս շրջանների հետ տնտեսական կապերի խաթարումները, 1988 թ. երկրաշարժի դեռևս չվերացված հետևանքները, Արցախյան խնդրի հետ կապված պատերազմական իրավիճակը չէին կարող բացասաբար չանդրադառնալ նաև հանրապետության գյուղատնտեսության զարգացման վրա: Սակայն, դրանց հետ միասին, գյուղատնտեսության ետընթացի հիմքում ընկած են ագրարային արմատական վերակառուցման աշխատանքներում տեղ գտած մի շարք լուրջ սխալներ, թերություններ ու վրիպումներ, որոնց բացահայտումն ու հաղթահարումը կարող են նպաստել խորացող ճգնաժամային իրավիճակից դուրս գալուն, գյուղատնտեսության և գյուղի սոցիալական առաջընթացին:

Տնտեսական վերափոխումների սկզբնական փուլում թվում էր, թե գյուղատնտեսությունը հեշտությամբ կհարմարվի շուկայական հարաբերություններին, բայց փաստորեն այդպես չեղավ՝ թույլ տրված մի շարք կոպիտ սխալների պատճառով:

Առաջին, մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցմեղ բարդ և տևական գործընթաց է, որը չի կարելի լուծել մեկ հարվածով: Այն կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների, գյուղատնտեսական տեխնիկայի և նրա օգտագործման հնարավորությունների և այլ խնդիրների խոր քննության: Պատահական չէ, որ նոր դժվարություններ ծագեցին, ու կորուստներ տեղի ունեցան: Հանրապետությունում հատկապես 1996-1999 թթ. արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի, մասնավորապես հացահատիկի, կարտոֆիլի և պտղի արտադրության ծավալների զգալի նվազում: ՀՀ վիճակագրության անցկացրած հետազոտությունների տվյալներով հացահատիկային մշակաբույսերի կորուստները 1999 թ. 1 հեկտարից միջին հաշվով կազմել է 116 կգ՝ 1998 թ. 113 կգ-ի դիմաց, որը կազմել է հետազոտված տնտեսու-

յունների 1 հա միջին բերքատվության 5,9%-ը¹¹⁹: Հացահատիկային կորուստները հանրապետության միջին մակարդակից բարձր են՝ Արարատի մարզի հետազոտված տնտեսություններում 238 կգ (միջին բերքատվությունը՝ 7,5%), Վայոց Ձորի մարզում՝ 153 կգ (12,3%), Կոտայքի մարզում 136 կգ (9,6%)¹²⁰: Վիճակն ավելի վատ է գյուղական համայնքներում:

Այսպես, Արարատի մարզի Ոսկեհատի համայնքի հետազոտված գյուղացիական տնտեսություններում կորուստները 1 հա հաշվով կազմել են 322 կգ (միջին բերքատվության 8,1%-ը), Ոստանի համայնքում՝ 300 կգ (10%), Ուրցածորի համայնքում՝ 254 կգ (8,0%), Դալարի համայնքում՝ 250 կգ (6,3%), Վայոց ձորի մարզի Ագարակածորի համայնքում՝ 168 կգ (5,7%), և այլն¹²¹:

Ուսումնասիրությունները վկայում են, որ 1999 թ. հանրապետությունում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի ընդհանուր ծավալի 61,8%-ը արտադրվել է Շիրակի, Արմավիրի և Արարատի մարզերի տնտեսություններում, կարտոֆիլի մոտ 64,5%-ը Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի, բանջարեղենինը և խաղողինը, համապատասխանաբար՝ 66,8 և 82,7%-ը՝ Արմավիրի ու Արարատի, պտղինը և հատապտուղներինը՝ 75,1%-ը, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերի տնտեսություններում, բոստանային մշակաբույսերի համախառն բերքի 85,8%-ը՝ Արմավիրի մարզի տնտեսություններում: Դեռևս մտահոգության տեղիք է տալիս Արմավիրի և Արարատի մարզերի հայտնվելը հիմնական հացահատիկ արտադրող մարզերի շարքում: 1990 թ. համեմատությամբ նշված մարզերում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 4 անգամ: Այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում խաղողի և պտղատու այգիների տնկարկների տարածությունները կրճատվել են շուրջ 2 անգամ¹²²:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հանրապետության մարզերում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ 2000 թ. տևական երաշտի և բերքահավաքի ժամանակ հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի կորուստը հան-

րապետությունում կազմել է մոտ 124 հազար տոննա¹²³:

Ագրարային արմատական վերակառուցումների գործընթացը հանրապետությունում սկսվել էր ոչ թե գյուղացիների ցանկությունները հաշվի առնելով, այլ՝ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով: Ուստի վերջիններս ժամանակ ունեին ինչպես հարկն է նախապատրաստվելու վերափոխումների գործընթացին, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, մեխանիզմներ մշակելու, որոնք ուղղված լինեին գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Գործնականում, սակայն, ագրարային վերափոխումները Հայաստանում սկսվեցին գարնանային աշխատանքներին զուգահեռ, որն անգամ թույլ չտվեց կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքն ինչպես հարկն է գույքագրել և վերագնահատել: Կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների համատարած լուծարումն իրականացվեց հապշտապ, շատ սեղմ ժամանակահատվածում, անկազմակերպ ու վարչահրամայական եղանակով: Գյուղատնտեսական բոլոր գոտիներում տնտեսությունների լուծարումը և հողի սեփականաշնորհումն իրականացվեցին միևնույն ձևով, առանց որևէ տարբերակման, հաշվի չառնվեցին տարբեր գոտիների առանձնահատկությունները:

Հարթավայրային գոտում սեփականաշնորհված հողատարածքները, բնականաբար, ամհամեմատ փոքր էին նախալեռնային և լեռնային գոտու հողակտորներից: 1997 թ. ՀՀ պետլիճվարչության կողմից ուսումնասիրված 3400 գյուղացիական տնտեսությունների 48%-ը ուներ մինչև մեկ հեկտար հող, 28%-ը՝ 1-2 հեկտար¹²⁴: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների 3/4-ից ավելին ունեին 2 հեկտարից պակաս հող, որը տրոհված էր 2-3 տարբեր հողակտորների: Դրանք մեծ մասամբ գաճաճ, դժվար մշակվող հողեր էին: Անշուշտ, հողերի արդյունավետության տարբերությունը մեծ էր: Օրինակ, առաջին խմբի հողերի 0,5 հեկտարից ստացված արտադրանքի ծավալը 20 անգամ գերազանցում էր երկրորդ խմբի հողերի արտադրանքի ծավալին¹²⁵:

Որոշ ղեկավարների «առաջինը» լինելու անմիտ ձգտումների,

¹¹⁹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 26:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում:

¹²¹ Հայաստանի Հանրապետության կառավարության ընթացիկ արխիվ, 1999, գ. 6, հ. 23-24, թ. 68:

¹²² Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին, Եր., 2000, էջ 21:

¹²³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-նոյեմբերին, Եր., 2001, էջ 18:

¹²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 1997 թ. հունվար-մարտին, Եր., 1997, էջ 15, 16, 63, 64 և ՀՀ պետլիճվարչության գյուղացիական տնտեսությունների հետազոտություն, 1997, մարտ, էջ 8:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում:

տեղական մարմինների դանդաղկոտության, աններելի անպատասխանատվության, ամենաբողության, ինչպես նաև օրենքների կիրարկման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության բացակայության հետևանքով սակավահող Հայաստանում սեփականաշնորհելուց հետո տասնյակ հազարավոր հեկտար վարելահողեր, որոնք ամրացվել էին տեղական խորհուրդներին, մնացին անօգտագործելի:

Երկրորդ, սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների և գործընթացի անհամաչափության հետևանքով, ինչպես նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով գյուղական բնակչության մի մասը, հատկապես բարձրլեռնային շրջաններից, ջրագուրկ և չոր վայրերից ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու՝ համալրելով գործազուրկների բանակը: Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ էլ ընդհանրապես մասնակցություն չէին ունեցել դրանց ստեղծմանը: դա ըստ էության «նոմենկլատուրային» սեփականաշնորհում էր, որի վտանգավորությունը բազմակացութաձևությունը մենաշնորհով փոխարինելու մեջ էր: Սեփականաշնորհումը շատ դեպքերում ծառայեցվում էր առանձին մարդկանց հարստացմանը, որն ամենևին էլ ձեռներեցության խթանում չէր: Պետական սեփականության առանձին միավորները հայտնվեցին բանկերից նախկինում վարկեր ստացած «ցեխավիկների» կամ այդ շրջանի իշխանությունների «շրջապատի» ձեռքին: Այսպես, օրինակ, 1992 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության Արմավիրի շրջանի Երասխահուն գյուղում անասունների սեփականաշնորհման ժամանակ 189 գլուխ կովերից ոչ մի բաժին չհասավ նույնիսկ 50-55 տարի շարունակ նույն տնտեսությունում աշխատող կոլտնտեսականներին, այլ դրանց տեր դարձան Երևան քաղաքի «ցեխավիկներից» երկուսը¹²⁶: Սեփականաշնորհման այս փուլում արտադրության միջոցները սեփականաշնորհվեցին առանձին մարդկանց՝ էժան գնով (օրինակ, Վարդենիսի պանրի գործարանը իր շենքերով, արտադրական հոսքերով և այլն, սեփականաշնորհվեց ընդամենը 400 ԱՄՆ դոլարով): Այդպիսի փաստերը շատ են¹²⁷:

Ստեղծված իրադրության մեջ հնարավոր դարձավ նաև հանրա-

յին ունեցվածքի մի մասի յուրացումը ֆերմաներում, պահեստներում և այլն: Շատ գյուղերում սեփականաշնորհումը գլխավորում էին գյուղխորհուրդների և կոլխոզ-սովխոզների ավանդական նախագահները, որոնց ղեկավարությամբ նրանց ընտանեկան կլանները դարձան անասունների, անասնագուների տերեր: Սեփականաշնորհման գործընթացն ուղեկցվում էր հարկային ծանր բեռին վերաբերող մշուշոտ, երբեմն կեղծ լուրերով, որոնք տագնապ էին առաջացնում հասարակ բնակչության մեջ: Նրանք զանգվածաբար հրաժարվում էին իրենց հասանելիք անասուններից: Մի այլ դեպքում գյուղերում պետական տնտեսությունների անասունները մինչև սեփականաշնորհումը կենտրոնացվել էին նույն ղեկավարության կողմից գլխավորվող կոոպերատիվների ձեռքում, որոնք օգտվեցին սեփականաշնորհման առաջնահերթության իրավունքից: Դրան նպաստեց նաև լուծարվող կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անասնազխաքանակը գյուղացիական տնտեսություններին բաշխելիս դրանց նվազագույն չափը սահմանելու վերաբերյալ հանրապետության կառավարության որոշումը, որով ամենևին հաշվի չէին առնվում աշխատավոր գյուղացիության ֆինանսական, շենքային, կերարտադրության և այլ հնարավորությունները¹²⁸: Չէր կարող, ասենք, փոքր հողակտոր ստացած, արոտավայրերից փաստորեն զուրկ Արարատյան հարթավայրի գյուղացին բավարար թվով անասուններ, ասենք՝ 5 խոշոր եղջերավոր կամ 20 մանր եղջերավոր անասուն, կամ 15 խոզ և այլն ձեռք բերել ու դրանով իսկ բարելավել իր տնտեսական վիճակը այն դեպքում, երբ կոշտ ու հյութալի կերերի արտադրության և խտացված կերերի ձեռք բերման հնարավորությունները խիստ սահմանափակ էին¹²⁹: Այդ պայմաններում տնտեսությունների մի մասի՝ հանրային հոտերում մնացած անասունների նկատմամբ բավարար խնամք չէր տարվում, եղած տոհմային բարձր մթերատուները «փոխարինվում» էին ցածրարժեք անասուններով: Եղել են շատ դեպքեր, երբ «ջոկված» անասունները մարդիկ պատահաբար «հայտնաբերել են» գյուղից հեռու, ամառային արոտավայրերում: Անասունների, շենքերի, գյուղմեքենաների սեփականաշնորհումները շատ տեղերում իրականացվեցին օրենքի լուրջ խախտումներով, պաշտոնական դիրքի չարաչափումներով, որոնք օրինակա-

¹²⁶ ՀՀ ՀԶԿՓԿՊԱ, ֆ 4516, ց. 1, գ. 50, ք. 7-8:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 8, 9, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 12:

¹²⁸ ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1991 թ., գ. 23, հ. 19, ք. 24-25, 223-242, հ. 27-28, ք. 257, գ. 4, հ. 35-36, ք. 438-439.

¹²⁹ Տե՛ս նույն տեղում:

նացվեցին համապատասխան ակտերով: Վերը թվարկվածներին եթե ավելացնենք ավտոմայրուղիների եզրերին և այլուր մսի ու խորովածի «առատությունը» (չափազանց բարձր գներով), ապա հասկանալի կդառնա, թե ինչու 1991-92 թվականները դարձան տասնյակ հազարավոր անասունների գլխաքանակի կրճատման և մթերատվության նվազման տարիներ: Դրանով անասնապահությանը մեծ վնաս հասցվեց, որը դեռևս մինչև այսօր էլ զգացվում է: Կոլտնտեսությունների լուծարման և նրանց ունեցվածքի սեփականաշնորհման ժամանակ անտեսվեցին օրինականությունն ու սոցիալական արդարության սկզբունքները: Կոլտնտեսության ունեցվածքը, բացի հողից, պատկանում էր կոլտնտեսականներին՝ փայտերերին: Ուրեմն դրանց լուծարման ժամանակ ունեցվածքի բաշխման և օգտագործման կարգը պետք է որոշվեր կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից:

Իշխանության բարձրագույն մարմինների որոշմամբ նախկին կոլտնտեսությունների ունեցվածքը նույն գնով վաճառվեց թե՛ կոլտնտեսականներին և թե՛ նրանց, ովքեր շատ քիչ կամ բոլորովին չէին մասնակցել կոլտնտեսության աշխատանքներին: Ստացված գումարի մի մասն էլ վերցրեց կառավարությունը՝ հետագայում այն, իբր, գյուղատնտեսության զարգացման նպատակով օգտագործելու համար, այսինքն՝ փայլ չվերադարձվեց փայտափորձը: Բացահայտորեն ոտնահարվեց սոցիալական արդարությունը: Դրա հետևանքով ունեցվածքի մեծ մասը յուրացվեց պատահական մարդկանց կողմից:

Երրորդ, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում մշակվող, առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորները էլ ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց համապատասխանաբար 1,3 և 1,5 հա հողաբաժին¹³⁰: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը մինչև 0,75 հա էր, երկրի հյուսիս-արևելքում՝ 2,5 հա-ից մի քիչ ավելի¹³¹: Միայն համեմատության նպատակով նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում 1991 թ. ստեղծվեց 270 հազար գյուղացիական տնտեսություն, որոնց միջին հաշվով հատկաց-

վեց 42 հա վարելահող, բայց առանց կոլտնտեսությունները և սովխոզները քանդելու¹³²: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին է ընկնում միջին հաշվով երեք հողակտոր, փաստորեն ներկայումս գյուղատնտեսությունը իրականացվում է ավելի քան 1 մլն փոքր հողակտորների վրա: Նման փոքր, կտրտված հողակտորների վրա, բնականաբար, հնարավոր չէր կազմակերպել արդյունավետ արտադրություն: Գրեթե անհնար է առաջատար տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը: Արտադրված գյուղամթերքների գրեթե 30 տոկոսն իրացվում էր ապրանքափոխանակության կարգով: Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվի անդամները նախընտրում էին ընտանեկան տնտեսվարման ձևը: Առաջին տարում արդեն ցանկած հողատարածք ստանալով՝ գյուղացիությունը ոգևորվեց, բայց, հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների, հրաժարվեց մշակել հողային շատ տարածքներ: Հայաստանի սակավահողության պայմաններում, սկսած 1991 թվականից, յուրաքանչյուր տարի միջին հաշվով մշակությունից դուրս է մղվում ավելի քան 100 հազար հեկտար վարելահող կամ ընդհանուր վարելահողերի 25%-ը¹³³: Դրան նպաստում էր նաև գյուղացիական տնտեսություններին հատկացված հողակտորների միջև հեռավորությունը, որ հաճախ հասնում էր 15-20 կիլոմետրի¹³⁴:

Այդ պայմաններում մեծապես ընկավ աշխատանքային, հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, նվազեցին հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, աճեցրած բերքի փոխադրման, պահպանման և իրացման տնտեսական հնարավորությունները: Տնտեսությունների մասնատման պատճառով խափանվեց գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները գյուղատնտեսության մեջ արմատավորելու գործընթացը: Գյուղատնտեսական արտադրության մանրատումը և մասնագիտական ծառայությունների կազմալուծումն ամենուրեք հանգեցրեց արտադրության տեխնոլոգիա-

¹³² Российский статистический ежегодник, статистический сборник, М., 1994, էջ. 341, 346-347.

¹³³ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, գ. 20 հ. 15-99, թ. 2, և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 1999, էջ 21:

¹³⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հունիսի, 1992:

¹³⁰ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 171:

¹³¹ Տե՛ս նույն տեղում:

ների լուրջ խախտումների, բույսերի և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի կանխարգելիչ և բուժման աշխատանքների բարձրորդի վիճակի, որը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Հանքային պարարտանյութերի նկատմամբ գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների պահանջարկը բավարարելու նպատակով ՀՀ-ի և ճապոնիայի կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրերի հիման վրա 1998 թ. ներկրվեց ավելի քան 15,0 հազ. տ ամոնիակային սելիտրա, որը գյուղացիական տնտեսություններին էր տրված շուկայականից 30% ցածր գներով: Վրաստանի Ռուսթավի քաղաքի պարարտանյութերի գործարանի հետ ևս 10 հազ. տ ազոտական պարարտանյութ ներկրելու վերաբերյալ պայմանագիր էր կնքվել, որի համաձայն 1999 թ. այն բերվեց հանրապետություն¹³⁵: Սակայն սրանք մասնակի ձեռնարկումներ էին:

Չկարգավորված շուկայական հարաբերություններին անցնելիս, խիստ բարձր գների պայմաններում գյուղացիական տնտեսությունների զգալի մասը վերածվեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված ունիվերսալ բնատնտեսության և սկսեց առաջնորդվել սեփական սպառման համար արտադրելու սկզբունքով: Գյուղացիության մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկայի օգտագործման հնարավորությունից՝ դրա բազայի փոշիացման պատճառով: Գյուղատնտեսական մեքենաների, սարքավորումների և այլ արտադրամիջոցների զգալի մասը պետք է հանձնվեր տեղական խորհուրդներին՝ գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով: Դա թուլացնում էր արտադրողների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը այդ միջոցները պահպանելու և արդյունավետ օգտագործելու հարցում: Մյուս կողմից՝ այդ միջոցները միշտ չէ, որ ինչպես հարկն է ծառայեցվում էին արտադրողների շահերին: Շատ հաճախ գյուղտեխնիկայի առանձին մասեր վաճառվում էին թանկ գներով, իսկ տեխնիկական վերածվում էր թափոնի: Գյուղտեխնիկայի բազայի փոշիացումը մեծ հարված հասցրեց գյուղացիական արտադրությանը: Գյուղում տեխնիկական կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղագործիքների կազմա-

կերպման զանգվածային արտադրություն: Հայաստանի Հանրապետության և ճապոնիայի ու Չինաստանի կառավարությունների միջև կնքված համաձայնագրերով 1998 թ. ճապոնիայից հանրապետություն բերվեց 15 միավոր հացահատիկային կոմբայն և 8,5 մլն դրամ արժողությամբ պահեստամասեր: 1999-2000 թթ. ճապոնիայի կողմից տրամադրված 300 մլն իեն գումարի չափով հանրապետություն ներմուծվեցին 4 տասնյակի հասնող փոքր հզորության տրակտորների, գյուղագործիքների, ինչպես նաև հացահատիկահավաք կոմբայնների ու պահեստամասերի նոր խմբաքանակներ: 1999 թ. Չինաստանից բերվեց 100 տրակտոր, որոնք կոմբայնների հետ միասին մարզերում իրացվեցին բաց ածուրդային եղանակով¹³⁶:

2000 թ. ՉԺՀ կառավարության կողմից 3 մլն յուան գումարի չափով հանրապետություն ներկրվեցին փոքր հզորության 78 տրակտորներ և պահեստամասեր (70 տեսակի): Ինչպես ճապոնիայի, այնպես էլ Չինաստանի կառավարությունների կողմից դրանց մատակարարումը հանրապետություն կատարվեց հանրապետության կառավարության 2000 թ. հունվարի 26-ի որոշմամբ, որը որակվեց որպես մարդասիրական օգնության ծրագրի իրականացում¹³⁷: Դրանք ապահովեցին բավարար արտադրողականություն:

Գյուղացիական տնտեսությունների մանր չափերը պահանջում են Հայաստանում ժամանակակից գյուղատնտեսական (լեռնային հողագործության և մանր արտադրության պահանջներին համապատասխանող) մեքենաշինության ստեղծում: Ուրեմն անհրաժեշտ է պետականորեն հոգ տանել հանրապետությունում եղած արտադրության միջոցների խնամքի ու պահպանման, դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման նկատմամբ: Այդ տեխնիկական կարելի է կենտրոնացնել համատեղ օգտագործելու նպատակով: Միաժամանակ համալիր ծրագիր մշակելիս հարկավոր է հաշվի առնել 50 ծխաուժանոց տրակտորների պահանջարկը և այն, որ տարիներ շարունակ չի թարմացվում գյուղտեխնիկայի հավաքակազմը, որի 2/3-ը շահագործվում է 15-20 տարուց ավելի և միայն 2,7%-ն է, որ թողարկվել է 1994 թ.-ից հետո¹³⁸, չկան օժանդակ տեխնիկա և այլ նյութեր ներմուծող տարբեր տեսակի միջնորդ ֆիրմաներ, ընկերու-

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 7, հ. 2, թ. 424, 425:

¹³⁷ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 2, 14 փետրվարի, 2000, էջ 50-51:

¹³⁸ Տե՛ս նույն տեղում:

¹³⁵ ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1999 թ., գ. 8, հ. 3, թ. 497.

յուններ, սակարաններ, տեխնիկական նորագույնների կենտրոններ և տեխնիկայի վարձույթի կետեր: Փաստորեն ագրոսպասարկման աշխատանքներն անարդյունավետ են՝ վճարման և այլ հարաբերությունները կարգավորված չլինելու հետևանքով:

Չորրորդ, հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունը փաստորեն իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Անցման շրջանում թերագնահատվեց պետության կարգավորիչ դերը: Պետության սուղ միջոցները, արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվեցին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ պարենի ներմուծման նպատակով: Բայց չէ՞ որ սեփական արտադրությունն է ցանկացած տնտեսության զարգացման հիմքը: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է պետության գործունե և ակտիվ դերակցություն գյուղատնտեսությանը, ֆինանսական ու վարկային պետական աջակցություն: Վերջին տարիներին այս ուղղությամբ կատարվել է անբավարար աշխատանք: Հանրապետության կոմերցիոն բանկերի մեծ մասը, ռեսուրսների բացակայության պատճառով, գյուղացիական տնտեսություններին վարկեր չի տրամադրել, իսկ արտոնյալ վարկերի մասին խոսք անգամ չի եղել չի կարող: Գյուղատնտեսության բնագավառում վարկավորման լուրջ աշխատանք կատարեց միայն Հայաստանի Գյուղացիական փոխօգնության բանկը: Բանկը 1996 թ. հանրապետության Արարատի, Արմավիրի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում գյուղացիներին տրամադրեց 850 հազար ԱՄՆ դոլարի չափով վարկ¹³⁹, ՀՀ կառավարության աջակցության շնորհիվ 1997 թ. նրա կողմից հատկացվող վարկերի ծավալը հասավ 2,5 մլն դոլարի կամ ավելացավ 3 անգամ¹⁴⁰: 1998 թ. նշված մարզերին միացան նաև Արագածոտնի և Լոռու մարզերը¹⁴¹: 1999 թ. պետությունը գյուղատնտեսության զարգացման նպատակով գյուղացիությանը տրամադրել է 7 մլն դոլար վարկ, այն էլ՝ կարճաժամկետ¹⁴²: 2000 թ. նախատեսվեց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հանրապետության մնացած չորս մարզերում (Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ և Կոտայք) և կազմակերպելու Գյուղացիական փոխօգնության բանկի մասնաճյուղեր և վարկավորման

ընդհանուր գումարը տարեկան հասցնել մինչև 40 մլն ԱՄՆ դոլարի¹⁴³: Սակայն անհրաժեշտ է երկարաժամկետ վարկեր տալ գյուղացիությանը, որով միայն հնարավոր կդառնա զարգացնել գյուղատնտեսությունը: Ահավոր չափերով աճած գների ու սպասարկման սակագների պայմաններում առանց պետության բազմակողմանի օգնության ու աջակցության գյուղացիական տնտեսությունների մեծ մասն ապրանքային արտադրություն կազմակերպել չի կարող: Այդ է վկայում գյուղատնտեսության զարգացման գործում լուրջ հաջողությունների հասած բազմաթիվ երկրների փորձը¹⁴⁴:

Որքան էլ սահմանափակ լինեն հանրապետության հնարավորությունները, դրանց զգալի մասը պետությունը պետք է հատկացնի նոր ջրամբարների ու ջրատարների կառուցման և հների վերանորոգման նպատակին: Միայն այդ ճանապարհով կարող է արագացվել գյուղատնտեսության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը: 2000 թ. հունվարի 26-ին «1999-2000 թթ. ֆինանսական վիճակի բարելավման միջոցների կատարումն ապահովելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ «Ոռոգում» պետական փակ բաժնետիրական ընկերության ոռոգման համակարգերի շահագործման մասնաճյուղերը բաժանվեցին խմբերի: Ոռոգման համակարգերի անխափան աշխատանքի ապահովման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ոռոգման ցանցերի նախապատրաստման համար դեռևս 1998 թ. հատկացվել էր 220 մլն դրամ¹⁴⁵:

ՀՀ կառավարության կողմից ոչ միայն հավանության արժանացավ «ՀՀ ոռոգման համակարգերի բարեփոխումների ծրագիրը»¹⁴⁶, որի նպատակն էր բարձրացնել հանրապետության ոռոգման համակարգի գործունեության արդյունավետությունը, բարեփոխումների հիման վրա վերափոխել համակարգի կառավարման կառուցվածքը, այլև նոր մեխանիզմների օգտագործմամբ հստակեցվեց ջրամատակարար և ջրօգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունները, բարելավվեց ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը:

¹⁴³ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին, Եր., 2000, էջ 94, 95:

¹⁴⁴ Տե՛ս *Казакевич И.С.*, Аграрный вопрос в Южной Корее, М., 1964, Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975:

¹⁴⁵ ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1998, գ. 10, հ. 3, ք. 648-650:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 673-674:

¹³⁹ Տե՛ս նույն տեղում, 1996, հ. 8, ք. 402, 403:

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղում, 1997, հ. 2, ք. 26:

¹⁴¹ Տե՛ս նույն տեղում, 1998, հ. 5, ք. 58:

¹⁴² Տե՛ս նույն տեղում, 1999, հ. 8, ք. 506:

Համաշխարհային բանկի վարկի հաշվին (57,1 մլն ԱՄՆ դոլար) «Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրի» իրականացման շնորհիվ հնարավոր եղավ 150 հազ. հեկտարի վրա ապահովել ոռոգման համակարգերի վերականգնումը և անվթար շահագործումը¹⁴⁷: Այս վարկերի հաշվին հնարավոր եղավ դեռևս 1995 թ. շահագործման հանձնել Երևանի ջրանցքը, իսկ 1999 թ. վերականգնել ու շահագործման հանձնել Արզնի-Շամիրամի մայր ջրանցքը, Հրազդանի ոռոգման համակարգի Սևջուր ձախափնյա ջրանցքը, Կոտայքի մայր ջրանցքը, Արտաշատի մայր ջրանցքը, Հրազդանի մայր ջրանցքը, Արմավիրի ջրանցքը, Նալբանդի II կարգի ջրանցքը, ինչպես նաև մի շարք բնակավայրերի 213020 գծամետր ներտնտեսային ոռոգման ցանցերը: Հանրապետության տարածաշրջանում վերանորոգվել ու շահագործման են հանձնվել 38,1 հազար գծամետր երկարություն ունեցող ոռոգման խողովակաշարերը¹⁴⁸:

ՀՀ ոռոգման համակարգի վերականգնման վարկային նոր ծրագիրը, որի արժեքը 51,8 մլն դոլար է, ավարտվեց 2001 թվականին: Այդ նույն թվականից սկսվեց ոռոգման համակարգերի զարգացման ծրագիրը, որի ընդհանուր արժեքն է 30,8 մլն. ԱՄՆ դոլար: Դրա իրականացման շնորհիվ կանխվեց համակարգի հետագա փլուզումը, քանզի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 1991-1995 թթ. ընթացքում քայքայվել և շարքից դուրս էին եկել ջրանցքների առանձին հատվածներ, մի շարք պոմպակայաններ ու խորքային հորեր, ջրամբարների պատվարներ ու բազմաթիվ հիդրոտեխնիկական կառույցներ: Մինչև այժմ վերականգնվել են 252,5 կմ հիմնական և երկրորդ կարգի ջրանցքներ, 4 ջրամբար, 23,8 խորքային հոր, 4 պոմպակայան և 8 հիմնական ոռոգման համակարգերում վերականգնվել են բոլոր վթարային հատվածները և ապահովել 151 հազար հեկտար հողատարածքի ոռոգումը¹⁴⁹: Սակայն այս ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն: Հանրապետությունում ներկայումս գործում են շուրջ 21,5 հազ. կմ երկարության մայր, միջտնտեսային և ներտնտեսային նշանակության

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 724:

¹⁴⁸ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 38:

¹⁴⁹ Տե՛ս «Ժամանակ», 24 հունվարի 2001 թ., Էկոնոմիկա, հ. 7, դեկտեմբեր 2001, էջ 25, 26:

ջրանցքներ, որոնց շնորհիվ ոռոգելի հողերը կազմում են 273,5 հազ. հա, սակայն ոռոգման համակարգերի անսարքության և այլ պատճառներով պետք է ոռոգվեր ընդամենը 221,1 հազ. հա, մինչդեռ 2001 թ. դրա 20-25%-ը շրջանառության մեջ չէր դրվել¹⁵⁰:

Գյուղատնտեսության հետագա զարգացման համար անհրաժեշտ է նաև արագացնել Արարատյան դաշտի աղակալված հողերի աղազեցման և Բաղրամյանի շրջանի ու Թալինի հարավային գոտու՝ գյուղատնտեսության համար պիտանի նոր հողերի յուրացման աշխատանքները: Վերջինս կարևոր է ոչ միայն պարենի գերխնդրի լուծման, այլև բռանգաղթվածների բնակեցման, նրանց խիստ ծանր վիճակը շատ թե քիչ թեթևացնելու և տանելի դարձնելու համար: Այդ չափազանց կարևոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդրի լուծման պարտադիր պայմաններից մեկն էլ Աշտարակ-Թալին-Բաղրամյան խոշոր ջրատարի շինարարության աշխատանքների վերականգնումն էր ու կարճ ժամանակում ավարտելը: Ոռոգման համակարգի ըստ ամենայնի զարգացումը հանրապետությունում խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության և անասնաբուծության հետագա զարգացման պարտադիր պայմանն է: Հայկական խաղողի, ծիրանի, դեղձի, լուլիկի արտադրության ընդլայնմանն ուղղված ջրատնտեսական շինարարության արագացումն ու ջրօգտագործման կարգավորումը հանրապետության համար ապագայում կարող են վերածվել տարադրամի ստացման խոշոր աղբյուրի: Բայց դրա համար այդ մթերքների արտադրությունն ընդլայնելուն զուգահեռ, անհրաժեշտ է կատարելագործել գյուղատնտեսական մթերքների մթերումների ու դրանց դիմաց հանդիպակաց առևտուր կազմակերպելու համակարգերը: Առանձնահատուկ ուշադրություն է պահանջում ագրարային վերակառուցումների գործընթացում լրջորեն տուժած այգեգործությունն ու գինեգործությունը: Նոր հողերի յուրացման, ջրատնտեսական շինարարության և ջրօգտագործման հարաբերությունների կարգավորման, այգեգործական զանազան կոոպերատիվների ստեղծման, ինչպես նաև պետության կողմից բազմակողմանի օգնության, կարգուկանոնի հաստատման ճանապարհով հնարավոր կդառնա ոչ միայն այգետարածությունների կրճատման կանխումը, այլև դրանց ընդարձակումն ու խաղողի ու պտղի արտադրության ու մթերումների, ուրեմն նաև գինիների ու

¹⁵⁰ ՀՀ ՀԹԿԿՊԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 25, թ. 66:

կոնյակի արտադրության ընդլայնումը: Փաստորեն մինչև այժմ էլ բացակայում է գյուղատնտեսությանը վարկեր տրամադրող բանկերի ցանցը, ստեղծված չէ ագրարային արտադրանքի մթերման պայմանագրային համակարգ, վերամշակող ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքը դեռևս անբավարար է: Այսօր ճեղքվածք է առաջացել շրջանառու միջոցների և վերջնական արդյունքի գների միջև:

Այս հիմնախնդիրների, ինչպես նաև տնտեսավարման նոր պայմաններում գյուղացիության ակտիվության ու աջակցության միջոցով և պարենային պրոբլեմի այլ հարցեր լուծելու նպատակով 1996 թ. ապրիլին ստեղծվեց Ագրոգյուղացիական միությունը: Չնայած նրա ձեռնարկած միջոցառումներին՝ այնուամենայնիվ գյուղատնտեսության զարգացման մեջ տնտեսական մեծ չափերի առաջխաղացում տեղի չունեցավ: Ըստ էության հողերի սեփականաշնորհման ընձեռած հնարավորությունները ամբողջովին չօգտագործվեցին՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման բնագավառում սեփականաշնորհման ուշացմամբ և սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորմամբ: Մեր կարծիքով, այս գործում գյուղատնտեսական արտադրանքի իրացումը շատ վատ է կազմակերպվում. պետության օժանդակությունը դեռևս թույլ է, որը պետք է ուժեղացվի: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն էլ գյուղացիական տնտեսությունների մենաշնորհն է՝ սեփականության և տնտեսավարման տարբեր ձևերի իրական համակարգերի ստեղծմամբ: Կոլեկտիվ և պետական տնտեսությունների մենաշնորհ (65-70%), փոխարինվել է ավելի խիստ արտահայտված գյուղացիական տնտեսությունների մենաշնորհով (92,5%)¹⁵¹: Հանրապետությունում տնտեսավարման և սեփականության տարբեր ձևերի մրցակցության դաշտ փաստորեն չստեղծվեց: Մրցակցությունը պահպանվում էր միայն գյուղացիական տնտեսությունների միջև¹⁵²: Մինչև օրս չի գործում պարենային մթերքների սակարանը, որին շուկայական սկզբունքներով զարգացող գյուղատնտեսության մեջ առանցքային դեր էր վերապահված: Այն կոչված էր կարգավորելու արտադրողի և գնորդի հարաբերությունները: Մինչ այժմ, ցավոք, չի հաջողվել փոխշահավետ լուծումներ գտնել արտադրողների և մթերող ու վերամշակող ձեռնարկությունների միջև, որի հետևանքով մթերումների ծավալը կտրուկ կրճատվել է:

¹⁵¹ Տե՛ս Եկոնոմիկա, 1-3, 1996, էջ 33:

¹⁵² ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ. 2 (100), 14 փետրվարի 2000, էջ 57, 59:

Հինգերորդ, հողի սեփականաշնորհումը կենսագործվեց համատարած, այլ ոչ թե մաս առ մաս: Շրջափակման ու պատերազմի պայմաններում ժամանակավորապես կարելի էր պահպանել այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք շահութաբեր էին ու դեռևս կարող էին ապահովել բարձր արտադրողականություն, ինչպես արվեց մյուս հանրապետություններում, որտեղ դրանք մինչև այժմ պահպանվում են:

Հանրապետության տնտեսական կյանքում իրականացվող կառուցվածքային ինտենսիվ փոփոխությունների հետևանքով լրջորեն փոխվեցին գյուղատնտեսությանը ներկայացվող պահանջները: Սակայն գյուղատնտեսությունը միշտ չէ, որ կարող է արագ վերակառուցվել և հարմարվել շուկայի պահանջներին: Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումներն ու դրանց դիմաց մթերքների ստացումը ժամանակով կտրված են միմյանցից: Ծախսերը կատարվում են ամբողջ տարում, մինչդեռ մթերքների մեծ մասը ստացվում է տարեկան մեկ անգամ, առանձին տեսակների արդյունքը երևում է ներդրումներից 3-8 տարի հետո միայն: Աշխատանքի տեխնիկական զինվածության շատ ցածր մակարդակ ունեցող հայ գյուղացու արտադրողականությունն ու եկամուտները մեծ տատանումներ ունեն, որոնք պայմանավորված են նաև բնակլիմայական ամենամյա փոփոխություններով: Այսօր գյուղատնտեսական արտադրանքի իրական աճը կազմել է ընդամենը 12%: Հողի սեփականաշնորհումից հետո առաջին հայացքից թվում էր, թե գյուղմթերքների արտադրությունը կավելանա կամ գոնե կմնա նույն մակարդակին: Բայց ստացվեց հակառակը: Այսպես, եթե համամատենք վիճակագրական տվյալները, ապա կտեսնենք, որ հանրապետությունում 1987 թ. արտադրվել է 285 հազար տոննա հացահատիկ, իսկ 1999 թ.՝ 258 հազար տոննա¹⁵³:

2000 թ. գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և բնակչության օժանդակ տնտեսություններում ցանվել էր հացահատիկային մշակաբույսերի 81%-ը, պարենային-բոստանային մշակաբույսերի 73,6%-ը, տեխնիկական մշակաբույսերի 75%-ը և կերային մշակաբույսերի 85,1%-ը¹⁵⁴:

Անհրաժեշտ է պետական գործուն միջամտությամբ վերականգ-

¹⁵³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 26, ֆ. 4516, ց. 1, գ. 25, թ. 66:

¹⁵⁴ Տե՛ս ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, գ. 20-15-99, էջ 7:

նել խաղողագործությունը և գինու արտադրությունը: Հացահատիկային մշակաբույսերը պետք է աճեցնել միայն այնտեղ, որտեղ կան վարելու նախապայմաններ՝ Շիրակի հարթավայր, նախալեռնային գոտի: Նշված վայրերում հնարավոր է բերքատվությունը հասցնել 50 և ավելի ցենտների: Կերային մշակաբույսերի աճն ապահովելու համար անհրաժեշտ է պահուստային հողերն առավել հաճախ տալ վարձակալության՝ մատչելի գներով: Մյուս մշակաբույսերից պետք է առանձնացնել խորդենու աճեցման անհրաժեշտությունը, շաքարի ճակնդեղի տարածքների վերականգնումը, իսկ բանջարաբուստանային մթերքների և կարտոֆիլի արտադրության նպատակով հատկացված տարածությունները պահպանել, բայց օգտագործել առավել արդյունավետորեն:

Անասնապահության զարգացման հիմքը կերարտադրության ապահովումն է, որի հնարավորություններից ելնելով՝ այն պետք է զարգանա երկու ուղղությամբ: Առաջինը գյուղացիական և գյուղացիական անհատական տնտեսությունների միավորմամբ ձևավորվող ու անասնապահությամբ մասնագիտացվող, ապրանքային արտադրություն ունեցող տնտեսությունների գործունեությունն է (նվազագույնը 15-20 անասնազխաքանակի պայմաններում) և դրանց կամ առանձին ստորաբաժանումների կողմից արդյունաբերական փոքր գործարանների հիմնումը: Մյուս ուղին արդիական տեխնոլոգիայով հագեցած անասնապահական միջին չափի համալիրների կառուցումն է: Այս տեսակետից մոտ ապագայում ճյուղի զարգացումը կհիմնվի գերազանցապես գյուղացիական տնտեսությունների զարգացման վրա:

Միաժամանակ՝ անասնապահության հետագա զարգացումն էապես պայմանավորված կլինի վերամշակող օբյեկտների՝ մսի կոմբինատների ու կաթի գործարանների սեփականաշնորհման ընթացքով ու հետագա գործունեությամբ, ներդրումային ճիշտ քաղաքականության իրականացմամբ: Իսկ ընդհանուր առմամբ՝ անասնապահության ճյուղը կարող է հաջողությամբ զարգանալ կաթնատափարաբուծության, թռչնաբուծության, որոշ չափով խոզաբուծության գծով:

Վեցերորդ, առավելապես փախստականներով բնակեցված բնակավայրերում (շրջաններում ու գյուղերում) տարբեր ձևերով փախստականներն օտարվեցին մասնավորապես գյուղտեխնիկայի և անասունների սեփականաշնորհման գործընթացից: Սեփականա-

շնորհման ժամանակ փախստականներով բնակեցված կամ դեռևս բնակեցվող գյուղերի ղեկավարումը գտնվում էր, որպես կանոն հարևան գյուղերի տեղաբնիկների ձեռքին, ովքեր և իրականացրին սեփականաշնորհումը: Ինչպես Հայաստանի շատ գյուղերում առհասարակ, այնպես էլ այսպիսի գյուղերում սեփականաշնորհումն ուղեկցվում էր ստահող լուրերով, որոնք խիստ տագնապ էին առաջացնում մարդկանց շրջանում: Ի թիվս այլոց, նշվում էր, որ անասունների գլխահարկը բավական խոշոր գումար է և այն պիտի ուղեկցվի մթերային հարկով (կաթ, յուղ և այլն), որ հարկերն ուշացնողները կտուգանվեն և այլն: Առանց այդ էլ կեր, գոմ և այլ պայմաններ չունեցող մարդիկ զանգվածաբար հրաժարվում էին իրենց հասանելիք անասունների գլխաքանակից: Անասունների մի մասը մնաց գյուղերի ղեկավարներին՝ սովխոզների տնօրեններին, գյուղխորհրդի նախագահներին և այլոց: Քանի որ այդ պաշտոններն էլ փախստականներով բնակեցված գյուղերում տեղացիներն էին զբաղեցնում, փախստականների ընկալմամբ անասունները մնացին նրանց ձեռքին: Օրինակ, ներկայիս Ծափաթաղ (նախկին Ղզըլբենդ) գյուղի բնակիչների վկայությամբ՝ «Ոչխարը ի վերջո վերցրեց վարդենիսի սովխոզի նախագահը, կովերի կեսը՝ մի գործարան, մյուս կեսը՝ մի կոոպերատիվ»¹⁵⁵:

Վայքի տարածաշրջանի Գոմք գյուղի 150 գլուխ խոշոր եղջերավոր անասուններից 50-ը Ջառիթափի տեղաբնիկ գյուղապետին էր, և դրանց խնամքով զբաղվում էին բաքվեցի փախստականները, որոնք անասնապահությանը ծանոթ չլինելու պատճառով «վախեցան» մասնակցել սեփականաշնորհմանը¹⁵⁶: Նույնը կատարվեց և գյուղտեխնիկայի սեփականաշնորհման ժամանակ:

Հայաստանից ադրբեջանցիների հեռանալուց հետո գյուղտեխնիկան (տրակտորներ, կոմբայներ, շարքացաններ, բեռնատար ավտոմեքենաներ և այլն) սկսեցին աշխատեցնել հարևան հայաբնակ գյուղերի մեքենավարները: Ըստ սեփականաշնորհման սկզբունքի սեփականացնելու առաջնահերթ իրավունք ունեին տեխնիկան աշխատեցնողները: Հենց նրանք էլ դարձան գյուղտեխնիկայի սեփականատերերը: Անհրաժեշտ է նշել, որ դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ այդ տարիներին փախստականները վճարունակ չէին, իսկ

¹⁵⁵ Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 13:

¹⁵⁶ ՀՀ ՀԶԿՓԿՄԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 25, թ. 68:

Նրանք, ովքեր նվազագույն հնարավորություն ունեին, շտապում էին օր առաջ քաղաք տեղափոխվել, անգամ արտերկիր: Արդյունքում փախստականներով բնակեցված գյուղերի մեծ մասը գրկվեց գյուղ-տեխնիկայից: Այսպես, օրինակ, Եղեգնաձորի տարածաշրջանի Շատին գյուղի բնակիչների ձեռքին կուտակվել էր նախկին ադրբեջանաբնակ մի շարք գյուղերի տեխնիկան: Շատինի կարիքների համար դրանց թիվը շատ էր: Երբեմն մեկ տրակտորով վարում էին միայն տրակտորատիրոջ հողը: Տեխնիկա ունեցող շատինցիները պատրաստ էին այն աշխատեցնել հարևան, հատկապես տեխնիկա չունեցող գյուղերի փախստականների համար՝ որոշակի վարձի դիմաց: Վերջիններս հաճախ խուսափում էին այդ ծառայությունից, երբեմն ի վիճակի չլինելով վճարել, երբեմն խիստ թանկ համարելով, երբեմն էլ գյուղերի հեռավորության դեպքում ուղղակի ի վիճակի չլինելով կազմակերպել: Բոլոր դեպքերում փախստականների մոտ հաստատվել էր այն համոզմունքը, որ տեխնիկայի սեփականչնորհման ընթացքում իրենք շրջանցված են այն պարզ պատճառով, որ «տեղացին տեղացուն է պահում»¹⁵⁷:

Ըստ փախստականների՝ հարաբերականորեն արդար էր կատարվել հողերի սեփականաչնորհումը: Գյուղերում հաստատված փախստականների զգալի մասը այս կամ այն չափով մշակում էր հողը: Սակայն այստեղ ևս խնդիրները շատ էին: Հայաստանում այսօր մնացած փախստականների զգալի մասը միջահասակ են կամ տարեցներ. շատ ընտանիքներում տղամարդ չկա: Այսօրվա գյուղատնտեսական աշխատանքները պահանջում են ինչպես սկզբնական կապիտալ, այնպես էլ տղամարդու աշխատուժ: Այսպես, Վարդենիսում մեկ հեկտար հացահատիկի ցանքսից մինչև բերքահավաքը կատարվող ծախսը կազմում է նվազագույնը 50 հազար դրամ, որի մեջ մտնում է տրակտորիստին, շարքացան վարողին, կոմբայնավարին, բերքը տեղափոխող մեքենային տրվող վարձավճարը, սերմացուի արժեքը, դիզելային վառելիքը, ոռոգման ջրի արժեքը, իսկ պարտացման դեպքում՝ ավելի թանկ¹⁵⁸: Փախստականների մեծ մասը այդ գումարը չունի աշխատանքներն իրականացնելու համար: Անշուշտ, նույն խնդիրներն ունեին նաև տեղաբնիկները: Սակայն առանձին հարցերում նրանք ավելի պաշտպանված էին: Ազգակցա-

կան համակարգի առկայությունը ձևավորում է մի իրավիճակ, երբ կան ազգական տրակտորիստը, կամ որևէ այլ մեքենավար, անվճար է կատարում այս կամ այն աշխատանքը, կամ կարիքավորի համար վճարում են ազգականները և այլն: Այս իրավիճակը փախստականին անհավասար իրավիճակի մեջ է դնում տեղացու հետ: Հող մշակելու դժվարությունները, անջրդի և չպարարտացվող հողից սպասվող խիստ սակավ արդյունքը, հարկերի վճարման անհրաժեշտությունը փախստականներին դնում են հողից հրաժարվելու դժվարության առջև: Այսպես, տարբեր պատճառներով հողից հրաժարվել են Վարդենիսի Ծափաթաղ գյուղում 50 մարդ, Մեծ Մասրիկում՝ 20 մարդ, Սողբում՝ 120 ընտանիք (առկա 420-ից) և այլն¹⁵⁹: Որոշ ընտանիքներ հողից հրաժարվում էին ընտանեկան նպաստ ստանալու ակնկալիքով: Ավելի լավ էր տարեկան 60-80 հազար դրամ ընտանեկան նպաստ ստանալ, քան 1 հեկտար հողից՝ լավագույն դեպքում 10-12 ցենտներ հացահատիկ, որի դրամային արժեքը, ծախսերը հանելուց հետո, նույնն է, կամ ավելի պակաս է¹⁶⁰: Սրան զուգահեռ լայնորեն տարածված է հողը վարձակալությամբ տալու սովորույթը: Հողը վարձակալությամբ տալիս են գլխավորապես մշակելու նյութական և ֆիզիկական կարողություն չունեցող փախստականները և տալիս են գլխավորապես հենց գյուղապետերին կամ տեխնիկա ունեցողներին: Այսպես, Վարդենիսի Փոքր Մասրիկ գյուղի հողատարածքների մոտ 50 տոկոսը մշակում են հարևան տեղաբնիկ նորակերտցիները, ամենից ավելի՝ Փոքր Մասրիկի նորակերտցի գյուղապետը, իսկ Եղամասարում էլ վարդենիսցի գյուղապետը մշակում է մոտ 100 հեկտար հողատարածություն՝ հողատիրոջը վճարելով մեկ հեկտարի դիմաց 100-150 կգ հացահատիկ և նրա փոխարեն մուծելով հողահարկը¹⁶¹:

Փաստորեն գյուղերում սեփականաչնորհման հետևանքով առաջացան մեկնարկային տարբեր հնարավորություններով ընտանիքներ, որոնց սոցիալական տարբերությունները խորանում էին պայմանավորված մինչ վերափոխումներն ունեցած բազային հնարավորությունների տարբերություններով՝ աշխատող տղամարդ ունեցող-չունեցող, մանկահասակ բազմազավակ և գլխավորապես աշխատանքային տարիքի կազմով ընտանիքներ, միայնակ կամ միայն թոշակային տարիքի կազմով ընտանիքներ, պաշտոնյաների հետ

¹⁵⁷ Տե՛ս Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, էջ 14:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

¹⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁶¹ Տե՛ս նույն տեղում:

կապեր ունեցող և չունեցող ընտանիքներ և այլն: Հողի բաշխման հետ միասին սոցիալական և վարկային ոչ ճիշտ քաղաքականություն իրականացրած երկրում ամենածանր կացության մեջ հայտնվեցին աշխատուժ չունեցող ընտանիքներն ու փախստականները:

Նշված սխալներն ու թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսության զարգացման համալիր ծրագիր:

Կամավորության սկզբունքով գյուղացիական տնտեսությունների, սպասարկող, մթերող, վերամշակող, փոխադրող, իրացնող և այլ կազմակերպությունների միավորումը, գյուղում հարկային ծանր բեռի թեթևացումը, դրանց հիման վրա ավելորդ, ոչ անհրաժեշտ ծախսերի ու կորուստների կրճատումը պարենային համալիրի գործունեության արդյունավետության բարձրացման ուղիներից են: Բոլոր դեպքերում գյուղատնտեսության զարգացման նկատմամբ պետք է համալիր մոտեցում լինի, կարգավորումը՝ տնտեսական լծակներով, իսկ հովանավորումը՝ պետության կողմից: Այս խնդիրների լուծումը, մեր կարծիքով, անհրաժեշտ պայմաններ կստեղծի հանրապետության գյուղատնտեսության ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, զարգացման ուղի դուրս բերելու համար:

Անկախության տարիներին հանրապետությունում իրականացավ նաև հողային շուկային սպասարկող մասնավոր սեկտորի կայացումը: 2000 թ. արդեն գործում էին շուկայական գնահատման 40 և 116 հաշվառող-քարտեզագրող մասնավոր ընկերություններ¹⁶²: Հանրապետության 930 համայնքներից կադաստրային քարտեզագրում է կատարվել և սեփականության իրավունք է տրվել մոտ 300 համայնքների¹⁶³: Այլ կերպ ասած՝ անշարժ գույքի շրջապատույտի մեջ լիարժեք ձևով ընդգրկված է հանրապետության տնտեսական հարստության միայն մեկ երրորդը: Շուկայի զարգացմանը նպաստող արմատական քայլ էր նաև 2001 թ. ընդունված ՀՀ Հողային նոր օրենսգիրքը¹⁶⁴, որը հնարավորություն է ստեղծում կառավարելու և շրջանառության մեջ դնելու շուկայական առուժախի ենթակա հողատանտեսության մեջ ղեկավարելու, որ գործող օրենսդրությամբ տե-

ղական ինքնակառավարման մարմիններին տրված է եղել հողի կառավարման գործառույթների հնարավորություն՝ իրենց վարչական տարածքների սահմաններում, սակայն դրանք չէին կարող լիարժեքորեն իրականացվել: Սեփականության իրավունքի այդ նորմը ամրագրվեց Հողային նոր օրենսգրքում, հստակեցվեցին կառավարման տարբեր օղակների ֆունկցիաները հողերի օգտագործման, տնօրինման և տիրապետման ոլորտներում, հեշտացվեցին հողերի սեփականաշնորհման կառուցակարգերը տնտեսավարող տարբեր սուբյեկտների համար: Սակայն նոր Օրենսգրքի կիրարկումը ենթադրում է բազմաթիվ օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունում, հողային նոր հարաբերությունների կանոնակարգում՝ հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու, իրավաբանական անձի, ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների, պետության միջև: Հողային հույժ կարևոր հարաբերությունները կատարելագործելու համար հասունացել է գիտաարտադրական, ուսումնական և կառավարման միասնական մեթոդաբանական հարցերի մշակման կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը: Մեր կարծիքով այն նպատակահարմար է հիմնել նախկին Հայհողչիննախագիծ ինստիտուտի հիմքի վրա՝ հետամուտ լինելով հողերի դիտարկման, ճահճացման, հողմնահարման, անապատացման, էրոզիայի, անտառային շերտի, Սևանի մակարդակի նվազման և այլ հիմնախնդիրների լուծմանը: Ագրարային ոլորտում դեռևս լուծում պահանջող խնդիրներ են՝ գյուղատնտեսության հետագա կոոպերացումը, մթերումների հստակ կազմակերպումը, արտադրատեխնիկական սպասարկումների, վարկերի ավելացումն ու վարկավորման մեխանիզմների կատարելագործումը, ապահովագրությունը: Առանց այդ խնդիրների լուծման անհնար է Հայաստանի գյուղատնտեսության արդյունավետ զարգացումը:

¹⁶² Տե՛ս *Սարգսյան Հ.*, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. Պետության դերը, Եր., 2001, էջ 60:

¹⁶³ Տե՛ս նույն տեղում:

¹⁶⁴ Տե՛ս ՀՀ Հողային օրենսգիրք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ. 17 (149), 15 հունիսի, 2001:

գ. Վերափոխումներ արդյունաբերության ոլորտում

Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունում ծանր վիճակ ստեղծվեց նաև արդյունաբերության բնագավառում: Խորհրդային Միության պայմաններում Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղը արդյունաբերությունն էր, որի բաժինը ՀՆԱ-ի մեջ 1990 թ.-ին կազմում էր 33%, որը հանդիսանում էր ԽՍՀՄ ընդհանուր արդյունաբերական համալիրի մի մասը: Այն հիմնականում մասնագիտացված էր էլեկտրամեքենաշինության, քիմիայի, էլեկտրոնիկայի, թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառներում: Թողարկվող արտադրանքը գլխավորապես արտահանվում էր խորհրդային տնտեսական տարածք և մեծապես կախված էր Ռուսաստանից ցածր գներով ներկրվող վառելիքից, հումքից և կիսապատրաստուքներից: Դրանց զգալի մասն արտահանվում էր այլ երկրներ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը շրջափակման և այլ պատճառներով հայտնվեց խոր ճգնաժամի մեջ. նրա մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց՝ զրկվելով հումքից ու էներգիայից՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Արդյունքում 1990-93 թթ ԱՊՀ երկրներից ամենամեծ անկում ապրեց Հայաստանի արդյունաբերությունը՝ մոտ 60,3%: Միայն 1992 թ., նախորդ տարվա նկատմամբ արձանագրվեց ՀՆԱ 41,8% անկում (ԱՊՀ համանման միջին ցուցանիշը գերազանցելով ավելի քան 6 անգամ)¹⁶⁵: Դա տնտեսական անկման գագաթնակետն էր: 1992 թ. միայն արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց նախորդ տարվա 51,8%-ը¹⁶⁶: Անկում ապրեցին հատկապես մետալուրգիան (27,1%), շինանյութերի արտադրությունը (30,5%), մեքենաշինությունը (46,9%)¹⁶⁷ և այլն: Փաստորեն անկումը տեղի էր ունենում տնտեսության բոլոր ճյուղերում: Հարկ է նշել, որ 1990 թ. նկատմամբ 1994 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կրճատվեց 55%-ով, իսկ 1999 թ.՝ 51%-ով: 2001 թվականին արդյունաբերությու-

նը կազմեց 1990 թվականի մակարդակի ընդամենը 55%-ը¹⁶⁸: Արդյունաբերական արտադրանքի անկման խորությունը բնութագրվում է հետևյալ աղյուսակում բերված ցուցանիշներով:

ԱՂՅՈՒՄԱԿ 2

Արդյունաբերական արտադրանքի և անձնակազմի բնութագրերը

	1990	1991	1992	1993
Արդյունաբերական արտադրանքի ծավալը %-ներով՝ նախորդ տարվա համեմատ (1989 թ.՝ 7,8 մլրդ ռուբլի)	91,1	85,4	47,6	90,3
Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը (հազար մարդ)	397,3	362,3	317,1	276

Բերված տվյալները վկայում են արդյունաբերական արտադրության կրճատման աննախընթաց թափի մասին: 1993 թվականին արդյունաբերական արտադրանքի արտադրության մակարդակը 1990 թ. նկատմամբ կազմել է 36, 7%: Ավելի քան 30%-ով կրճատվել է արդյունաբերաարտադրական ոլորտի անձնակազմը: Ընդ որում կրճատումը հիմնականում բաժին է ընկել մեքենաշինական, սարքաշինական ձեռնարկություններին:

Արդյունաբերությունում իրավիճակի իրական տեղընթաց պատկերը կլրացնեն նրա ներճյուղային ոլորտների վերաբերյալ ստորև բերվող աղյուսակի տվյալները (Աղ.3):

¹⁶⁵ Содружество независимых государств (1991-2000) статистический сборник, М., 2001, т. 11, 18, 21:

¹⁶⁶ Տե՛ս Արդյունաբերություն 1990-1997 թթ., ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 1999, էջ 7:

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁶⁸ Տե՛ս Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, «Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն», Եր., 2002, էջ 4:

Արդյունաբերության որոշ կարևորագույն արտադրատեսակների արտադրության 1993 թ. համեմատական բնութագրերը¹⁶⁹

	Փաստացի արտադրվել է 1993 թ.	Ծավալը տոկոսներով	
		1992 թ. նկատմամբ	1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվածի նկատմամբ
Էլեկտրաէներգիա (մլն կվտ ժամ)	6294.6	69.9	68.4
Էլեկտրաշարժիչներ (հազ. հատ)	158.7	62.1	39.7
Մետաղահատ հաստոցներ (հատ)	1600.0	48.0	38.1
Ուժային տրանսֆորմատորներ (հատ)	527	20.8	15.9
Լուսավորման էլեկտրալամպեր (մլն հատ)	57.4	95.8	82.0
Փողորակային հաղորդալարեր (հազ. կմ)	5.3	90.4	13.2
0.5-ից մինչև 100 կվտ հզոր. գեներատոր (հատ)	418	3.8	1.9
Պղինձ՝ պղնձի խտանյուր (հազ. տ)	4.1	31.0	-
Ալյումինե զանգված (տ)	895	23.3	11.5
Ալյումինե փայլաթիթեղ	693	9.5	5.1
Կառուտիկ սողա (հազ. տ)	5.0	34.0	12.5
Քլորոպրենային կաուչուկ (տ)	396	3.4	1.3
Ավտոդողեր (հազ. հատ)	100.7	52.3	26.5
Ցեմենտ (հազ. տ)	198.3	53.9	24.8
Գորգեր և գորգեղեն (հազ. քմ)	199	49.3	39.4
Կոշիկ (մլն գույգ)	3.3	60.3	41.8

Ստեղծված իրավիճակը հրատապ լուծումներ էր պահանջում, անհրաժեշտ էր մակրոտնտեսական երեք հիմնական նպատակներից՝ կայունություն, տնտեսական աճ, գործազրկություն, ընտրել այն, որն առավելագույնս կհամապատասխաներ ժամանակի պահանջներին: Առավելությունը տրվեց կայունացմանը: Մակրոտնտես-

¹⁶⁹ Արդյունաբերություն 1990-1997 թթ., էջ 23:

ական կայունացման և տնտեսական աճի ապահովման առումով շրջադարձային էր 1994 թվականը, իսկ 1994-2001 թթ. պահպանվեցին կայունացման, շուկայական հարաբերությունների արմատավորման, տնտեսական ենթակառուցվածքների, օրենսդրական դաշտի կատարելագործման միտումներն ու պետական գույքի մասնավորեցման, մասնավոր գործունեության խրախուսման գործընթացները: Վերջին 11 տարիների մասնավորեցման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի՝ սկզբնական (1991-1994), ծավալուն (1995-1998) և դանդաղեցված (1998-2002): Սկզբնական փուլում համայնավարության հիմքերի շուտափույթ վերացման նպատակով մասնավորեցումը դիտվեց տնտեսական վերափոխումների միակ փրկօղակը և ընթացավ ոչնչով չհիմնավորված ակնհայտորեն արագացված քայլերով: Դա տեղի ունեցավ ոչ միայն գյուղատնտեսության այլև արդյունաբերության բնագավառում: Այստեղ առանձնապես կարևորվեց արտադրական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը:

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումն իրականացվեց երկու փուլով: 1992-93 թվականներից սկսվեց «փոքր օբյեկտների սեփականաշնորհումը», իսկ 1995 թվականից՝ միջին և խոշոր ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը: Պետական գույքի մասնավորեցման գործընթացին նախապատրաստվելու առումով կարևոր քայլ էր ՀՀ կառավարության կողմից 1991-92 թթ. ընթացքում, մինչև սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի ընդունումը, 335 (ընդհանուրի մոտ 4%-ը) փոքր օբյեկտների (մանրածախ առևտուր, հասարակական սնունդ, կենցաղսպասարկում, փորձնական վաճառքը դրանց կուլեկտիվներին՝ 173,1 մլն ռուբլի (մոտ 1,6 մլն ԱՄՆ դոլար) ընդհանուր գնով¹⁷⁰: Պետական գույքի մասնավորեցման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ օրենսդրական (իրավական) հիմքերի ձևավորման սկիզբը դրվեց 1992 թվականին:

1992 թ. օգոստոսին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը¹⁷¹, որն ամեն տարի լրացվում էր նոր որոշումներով¹⁷²: 1994 թ.

¹⁷⁰ ՀՀ ՆԿԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 41, թ. 1, 3, գ. 156, թ. 256, 257, գ. 511, թ. 1, 2, գ. 293, թ. 1, 4:

¹⁷¹ Մանրամասն տե՛ս հավելվածում:

սեփականաշնորհմանը մասնակցեցին արդյունաբերության նախարարության 286 և թեթև արդյունաբերության 147 ձեռնարկություններ: 1994-95 թթ. հանրապետությունում սեփականաշնորհվել էր մոտ 800 արդյունաբերական ձեռնարկություն¹⁷³: Սակայն այս գործընթա-

¹⁷² 1993 թ. մայիսի 20-ին, հունիսի 29-ին, 1994 թ. մայիսի 21, 22-ին, հունիսի 2-ին, 10-ին, հուլիսի 28-ին, օգոստոսի 31-ին, 1995 թ. հունվարի 31-ին, փետրվարի 24-ին, մարտի 1-ին, հունիսի 29-ին, 30-ին, նոյեմբերի 24-ին, 1996 թ. փետրվարի 8-ին, 14-ին, հուլիսի 26-ին, օգոստոսի 2-ին, սեպտեմբերի 13-ին, նոյեմբերի 17-ին, 1997 թ. մարտի 13-ին, մայիսի 1-ին, մայիսի 20-ին, 30-ին, հունիսի 20-ին, 25-ին, հուլիսի 8-ին, 18-ին, 28-ին, 26-ին, սեպտեմբերի 1-ին, 18-ին, հոկտեմբերի 16-ին, նոյեմբերի 5-ին, դեկտեմբերի 1-ին, 5-ին, 8-ին, 12-ին և 30-ին, 1998 թ. հունվարի 16-ին, մարտի 9-ին, հունիսի 26-ին, հուլիսի 13-ին, օգոստոսի 13-ին, սեպտեմբերի 4-ին, 22-ին, դեկտեմբերի 14-ին, 1999 թ. հունվարի 14-ին, փետրվարի 2-ին, 17-ին, հունիսի 10-ին, հոկտեմբերի 2-ին, 13-ին, նոյեմբերի 13-ին, 19-ին, դեկտեմբերի 1-ին, 2000 թ. հունվարի 15-ին, փետրվարի 9-ին, ապրիլի 11-ին, 17-ին, 26-ին, մայիսի 17-ին, 20-ին, հունիսի 5-ին, հուլիսի 6-ին, դեկտեմբերի 5-ին, 2001 թ. հունվարի 8-ին, փետրվարի 22-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշումներ է ընդունել հանրապետության ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհման ու ապապետականացման վերաբերյալ: (Տես ՀՀ կառավարության ընթացիկ արխիվի նյութերը և որոշումների ժողովածուն, Եր., 1993. № 5, հ. 35, թ. 5, № 6, հ. 45, թ. 23-25, 1994 № 1, 2, հ. 5-6, թ. 19-20, № 4, հ. 29-34, թ. 15-63, № 6, հ. 49, թ. 3-8, հ. 51, թ. 18-19, № 7, հ. 68, թ. 92-103, № 8, հ. 76, թ. 39-69, 1995 թ., № 1, հ. 11, թ. 42-59, № 2, հ. 18, թ. 22, № 3, հ. 19, թ. 3, № 6, հ. 90, թ. 91-101, № 8, հ. 88, թ. 3-36, № 11-12, հ. 100, թ. 9, 1996 № 2, հ. 16, թ. 11-16, 24-25, № 7-8, հ. 69, թ. 10-12, հ. 70, թ. 27-33, № 9, թ. 34-35, հ. 86, թ. 37-44: ՀՀ Պաշտոնական տեղեկագիր № 6, 31 մարտի 1997 թ., էջ 7-89, № 11, 20 մայիսի 1997, էջ 50-70, № 12, 5 հունիսի 1997, էջ 145-146, № 13, 11 հունիսի 1997, էջ 71-87, № 15, 27 հունիսի 1997, էջ 41, № 16, 7 հուլիսի 1997, էջ 36-50, 126-157, № 17, 31 հուլիսի 1997, էջ 86-115, № 18, 11 օգոստոսի 1997, էջ 179-199, № 19, 22 օգոստոսի 1997, էջ 149-154, № 21, 23 սեպտեմբերի 1997, էջ 70-83, № 22, 24 սեպտեմբերի 1997, էջ 32-37, 32-37, № 24, 29 հոկտեմբերի 1997, էջ 134-146, № 26, 28 նոյեմբերի 1997, էջ 13-99, № 28, 15 դեկտեմբերի 1997, էջ 94-102, 163-175, № 30, 30 դեկտեմբերի 1997, էջ 18-27, 33, 31 դեկտեմբերի 1997, էջ 114-119, 1998. № 2, 31 հունվարի 1998, էջ 51, № 6 (39) 14 մարտի 1998 թ. էջ 77-79, № 7 (40) № 14, հուլիսի 1998, էջ 43-61, № 15 (48), 27 հուլիսի 1998, էջ 136-150, № 19 (52), 3 սեպտեմբերի 1998, էջ 98-100, № 23 (56), 21 սեպտեմբերի 1998, էջ 14-38, № 24 (57), 1 հոկտեմբերի, 1998, էջ 116-130, № 31 (64), 22 դեկտեմբերի 1998, էջ 155-159, № 1, 29 հունվարի 1999, էջ 3-5, № 3 (69), 18 փետրվարի 1999, էջ 36-39, 48-49, № 5 (71), 22 փետրվարի 1999, էջ 20-28, № 17, 23 հունիսի 1999, էջ 97-105, № 26 (92), 19 հոկտեմբերի 1999 թ. էջ 22-23, № 28 (94) 13 նոյեմբերի 1999, էջ 11-13, № 30 (96), 6 դեկտեմբերի 1999, էջ 139-148, 193-204, № 2 (100), 14 փետրվարի 2000, էջ 80-93, № 7 (105), 17 ապրիլի 2000, էջ 187-188, № 8 (106), 28 ապրիլի 2000, էջ 77-78, № 31 (109), 31 մայիսի 2000., էջ 35, 91-93, 103-112, № 12 (110), 15 հունիսի 2000, էջ 52-55, 72, № 213, 22 հունիսի 2000, էջ 39, № 17, 1 օգոստոսի 2000, էջ 7, № 18, 8 օգոստոսի 2000, էջ 80-81, № 33, (131) 30, դեկտեմբերի 2000, էջ 23-24, № 2 (134), 26 հունվարի 2001, էջ 41-43, № 7 (139), 5 մարտի 2001, էջ 52-53:

¹⁷³ Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական փճակը 1995 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 1996, էջ 59-60, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական փճակը 1996, հունվար-դեկտեմբերին, Եր., 1997, էջ 64-66:

ցում լուրջ ուշադրության չարժանացավ մի այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին ներդրումն էր: Ներդրումների անտեսումը, բնականաբար, բացասական ազդեցություն պետք է թողներ մասնավորեցման ընթացքի վրա: Երկրորդ մեծածավալ մասնավորեցման փուլին նախորդեց մասնակի անհատույց սեփականաշնորհումը: 1994 թ. օգոստոսից սկսվեց պետական արդյունաբերական ձեռնարկությունների մասնակի անհատույց սեփականաշնորհման գործընթացը՝ ձեռնարկությունները վերածելով բաժնետիրական ընկերությունների: Այդ գործընթացում ձեռնարկության ունեցվածքի արժեքի 20 տոկոսն անհատույց հանձնվեց տվյալ ձեռնարկության աշխատանքային կոլեկտիվի անդամներին՝ առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին՝ նպատակ ունենալով կասեցնել պետական սեփականության անարդյունավետ օտարումը և արժեքների վատնումը: Դա պետական ձեռնարկությունների լայնամասշտաբ սեփականաշնորհման միայն առաջին փուլն էր, որի ավարտով հանրապետության արդյունաբերության մեջ գերակշռեցին բաժնետիրական ընկերությունները, և պետական սեփականությունը հասցվեց նվազագույնի:

1994-1995 թթ. ընթացքում հանրապետության տարբեր ճյուղերի 1010 միջին ու խոշոր ձեռնարկություններ (ընդհանուրի 53%-ը) սեփականաշնորհվեցին այդ եղանակով, որը տվյալ ժամանակաշրջանում ձեռնարկություններում սկիզբ առած համատարած թալանի կանխման և սեփականատերերի սովոր խավի ստեղծման համար կարևոր միջոցառում էր: Դրա հետևանքով բաժնետեր դարձավ հանրապետության 126571 քաղաքացի, ինչը նախկին սոցիալիստական երկրների համեմատ աննախադեպ արդյունքն էր¹⁷⁴: Սակայն, մյուս կողմից, ընկերությունների գործունեության բարելավմանը այն որևէ ձևով չնպաստեց:

Սեփականաշնորհման աշխատանքները կազմակերպելու և գլխավորելու նպատակով մեծ ուշացումով 1996 թ. նոյեմբերին կառավարության կազմում ստեղծվեց Սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն, որը հետագայում վերանվանվեց Սեփականաշնորհումների նախարարության, իսկ 2000 թ. փետրվարին՝ նոր կառավարության կազմում՝ Պետական գույքի կա-

¹⁷⁴ Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2001, էջ 68:

ռավարման նախարարության¹⁷⁵: 1996 թ. ապրիլին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի արդյունաբերողների և ձեռնարկատերերի հիմնադիր համագումարը, որը ստեղծեց Արդյունաբերողների միությունը:

Փոքր օբյեկտների սեփականաշնորհումն ավելի հեշտ էր, որովհետև պայմանավորված էր ոչ միայն դրանց փոքր չափերով, այլև «իրական սեփականատերերի առկայությամբ»: Այսպես, եթե 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գնահատվել էին 8204 փոքր օբյեկտներ, որոնցից 1994-99 թթ. սեփականաշնորհվել էին 6806-ը կամ 83,0%-ը, այդ թվում աճուրդով՝ ընդամենը 280 օբյեկտ, որը կազմում է ընդհանուր սեփականաշնորհվածի 4,7%-ը¹⁷⁶, ապա 2001 թ. հունվարի 1-ի տվյալներով հանրապետությունում գնահատվել էին 8286 փոքր օբյեկտներ, որոնցից 1994-2000 թթ. մասնավորեցվել են 6849-ը կամ 82,6%-ը, այդ թվում աճուրդով, մրցույթով՝ 285 օբյեկտ, որը կազմում է ընդհանուր սեփականաշնորհվածի 4,2%-ը¹⁷⁷: Մասնավորեցման օրենքի ընդունումից հետո իրականացված փոքր օբյեկտների վաճառքից ստացված ընդհանուր գումարը կազմում է 26893, 8 մլն դրամ (մոտ 59,5 մլն. ԱՄՆ դոլար), որում սերտիֆիկատներով վճարը կազմում է 88,7%: 1994-2001 թթ. ժամանակահատվածում վաճառված փոքր օբյեկտների՝ (ներառյալ վարձակալների կողմից ետ գնված և խոշոր ձեռնարկություններից առանձնացված օբյեկտները): Փոփոխություններն ըստ տարիների ներկայացված են հետևյալ աղյուսակում (Աղ.4):

ԱՂՅՈՒՄԱԿ 4

Փոքր օբյեկտների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների¹⁷⁸

Տարիներ	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Մասնավորեցված օբյեկտների քանակը	257	1574	2132	2058	599	186	43	6

¹⁷⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր. հ. 23, 28 փետրվարի 2000., էջ 9:

¹⁷⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 96:

¹⁷⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2001, էջ 102:

¹⁷⁸ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 69:

Ամենաբարդ փուլը արդյունաբերական ձեռնարկությունների գանգվածային սեփականաշնորհումն էր, որը Հայաստանում ընթացավ սեփականաշնորհման սերտիֆիկատների միջոցով: Դրան մեծապես նպաստեց հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Պետական գույքի մասնավորացման (սեփականաշնորհման մասին)¹⁷⁹» և ՀՀ կառավարության 1998 թ. մայիսի 29-ի համապատասխան որոշումը Պետական գույքի մասնավորեցման մասին¹⁸⁰: Նախկին պետական ձեռնարկությունները հիմնականում վերածվեցին բաց և փակ բաժնետիրական ընկերությունների՝ իրականացնելով վաճառքի տարբեր սխեմաներ՝ բաժնետոմսերի բաժանորդագրություն, աճուրդ, մրցույթով վաճառք, ունեցվածքի վաճառք վարձակալին, բաժնեմասերի հատկացում կոլեկտիվի անդամներին:

Միջին և խոշոր պետական բաժնետիրական ընկերությունների (ՊԲԸ) մասնավորեցումն իր ընդգրկումով և արդյունքների նշանակությամբ առավել կարևոր էր: 1995 թ. սկսած մասնավորեցվել է 156 ընկերություն կամ նախատեսվածի 63,4%-ը՝ ներառյալ 2001-2003 թթ. ծրագրով նախատեսված 900-ը: ՊԲԸ մասնավորեցման ընթացքն ըստ տարիների ներկայացված է ստորև բերվող աղյուսակում:

ԱՂՅՈՒՄԱԿ 5

Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների¹⁸¹

Տարիներ	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Մասնավորեցված օբյեկտների քանակը	236	618	396	210	47	37	19

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 1998 թվականից հետո մասնավորեցման գործընթացը խիստ դանդաղել է: Դրա պատճառը ոչ միայն սեփականաշնորհման սերտիֆիկատներից հրաժարումն էր կամ անցումը զուտ դրամական մասնավորեցման, այլև՝ մասնավորեցման ենթակա գույքի գնահատման ոչ ճիշտ քաղաքականությունը:

ՀՀ-ում պետական գույքի մասնավորեցումն ընթանում է օրեն-

¹⁷⁹ Մանրամասն տե՛ս հավելվածում:

¹⁸⁰ ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12 (45), 15 հունիսի 1998, էջ 75-77:

¹⁸¹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 69:

քով սահմանված ձևով. առավել տարածված է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևը, որը կիրառվել է 1058 ընկերության նկատմամբ՝ ներառելով հանրապետության մարզերը: Այս ձևով մասնավորեցման դեպքում առկա է օտարման ընդամենը մեկ պայման՝ վաճառվող բաժնետոմսերի արժեքը: Վաճառքից հետո տվյալ օբյեկտը պետության կողմից հիմնականում մատնված էր մոռացության: Պետության կամ մասնավորեցվող կողմի ստանձնած որևէ պարտավորության (տնտեսական կամ սոցիալական) բացակայության մթնոլորտում ներկայումս շատ ընկերություններ բաժին են հասել անարդյունավետ գործող և դրա համար որևէ պատասխանատվություն չկրող սեփականատերերի: Միջին և խոշոր ՊԲԸ օտարումից ստացված գումարը կազմում է մոտ 215,8 մլն ԱՄՆ դոլար, որում զուտ դրամական մուտքերը կազմում են 61,6%: Մասնավորեցման ընթացքում պետական բյուջե մուտք եղած միջոցների մեծությունն ինքնին կարևոր է, սակայն դրանց ծավալը չի կարող դիտարկվել որպես մասնավորեցման արդյունավետության չափանիշ: Առավել կարևոր է, որ դրանք մասնավորեցվեն արդյունավետ կառավարող ներդրողների կողմից: Ներկայիս դանդաղ մասնավորեցման գլխավոր պատճառներից են նաև վաճառվող ընկերություններում ժամանակի ընթացքում ոչ իրենց մեղքով, կուտակված հսկայական պարտքերը, որոնք մասնավորեցման գործընթացը նախաձեռնելուց առաջ, համաձայն պետական գույքի մասնավորեցման մասին ՀՀ օրենքի, պետության կողմից պետք է հնարավորինս կարգավորման ենթարկվեն՝ «մաքրվել», ինչը, ցավոք չի արվել: Ձեռնարկությունների մասնավորեցումից առաջացած միջոցներով չեն կարգավորվում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են, օրինակ, մասնավորեցման ենթակա ՊԲԸ բաժնետոմսերի գրանցումը և այլն:

Եթե 1999 թ. դրությամբ սեփականաշնորհումն ավարտվել էր 1460 ձեռնարկություններում, որոնցից 1085-ը բաց բաժնետիրական ընկերությունների տեսքով¹⁸², ապա 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում սեփականաշնորհված էր 1514 ձեռնարկություն, որոնցից 1047-ը բաց բաժնետիրական ընկերությունների տեսքով¹⁸³, իսկ 2001 թ.՝ 1554 ձեռնարկություն, որոնցից 1116-ը մասնա-

վորեցվել է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ¹⁸⁴:

Ըստ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության տվյալների, ընդհանուր առմամբ մասնավորեցված կազմակերպությունների համար 2001 թ. հունվարի 1-ի դրությամբ վճարվել է 103226860,5 հազ դրամ, որից 39766020 հազարը՝ սերտիֆիկատով (38,7%-ը) և 63460840,5 հազարը՝ դրամով: Ընդ որում մասնավորեցված կազմակերպությունների համար վճարվել է 2289812,1 հազ դրամ¹⁸⁵:

Ինքնին խոսուն է այն փաստը, որ կաշառակերության ու համատարած թալանի արդյունքում, համաձայն պաշտոնապես հրապարակված տարբեր աղբյուրների տվյալների, ընդամենը 800 000 ԱՄՆ դոլարով «սեփականաշնորհվել է» հանրապետության տնտեսության կեսից ավելին, ավելի ճիշտ՝ 55%-ը¹⁸⁶:

Սեփականաշնորհման գործընթացում շեշտը դրված էր արագության վրա, որը հանգեցրեց բազմաթիվ բացասական երևույթների: Օգտագործելով համաշխարհային փորձը և նկատի ունենալով բնակչության ֆինանսական միջոցների անբավարար վիճակը՝ ՀՀ իշխանություններն ընտրեցին անհատույց մասնավորեցման ուղին: Համաձայն օրենքի, մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ձեռնարկությունների արժեքի 30%-ը հավասար բաժանելով՝ (2000-ական դրամ անվանական արժեք ունեցող սեփականաշնորհման սերտիֆիկատներով) բաշխվեց հանրապետության բնակչությանը՝ կյանքի կոչվելով որպես մասնավորեցման նպատակներին ծառայող վճարամիջոց, որը վերածվեց մասնավորեցման վճարումներն արհեստականորեն նվազեցնող գործոնի: Անցած տարիների ընթացքում մասնավորեցված պետական գույքի դիմաց ընդհանուր գումարը կազմել է 130 926,4 մլն դրամ կամ մոտ 276,3 մլն ԱՄՆ դոլար, որից սերտիֆիկատներով վճարը կազմում է 48,7%¹⁸⁷:

Եկամտների կտրուկ անկման պայմաններում բնակչության ճնշող մեծամասնությունը իր սերտիֆիկատները (վաուչերները) վաճառեց շատ ցածր գներով (շուկայական գինը կազմում էր անվանական արժեքի ընդամենը 20-30%-ը)՝ ընթացիկ կենցաղային հոգսե-

¹⁸² Տե՛ս Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին վերջնական զեկույց (ամփոփագիր) Տոկիո, 1999, էջ 10:

¹⁸³ Տե՛ս նույն տեղում, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 95:

¹⁸⁴ Տե՛ս նույն տեղում, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2001, էջ 102:

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

¹⁸⁶ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 2, Եր., 2000, էջ 223:

¹⁸⁷ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 68:

րը հոգալու համար: Ազգաբնակչությանը բաժանվեց 3183 հազար սեփականաշնորհման սերտիֆիկատ: Մեկ սերտիֆիկատի անվանական արժեքը սկզբում գնահատվեց 10000 դրամ, վերագնահատվելով՝ դարձավ 20000 դրամ (մոտ 40 ԱՄՆ դոլար): 1997 թ. շրջանառությունից դուրս բերվեց և մարվեց մոտ 3 մլն սերտիֆիկատ¹⁸⁸: Սերտիֆիկատների կիրառումն ինքնին մնաց սոցիալական արդարության պահպանման պատրանք, քանի որ իրենց տրամաբանական շարունակությունը չստացան դրանցով ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ գործիքներն ու դաշտը, մասնավորապես ինվեստիցիոն հիմնադրամներն ու շուկայական այլ ենթակառուցվածքները: Այսպիսով, սերտիֆիկատներով սեփականաշնորհմանը մասնակցեց ազգաբնակչության միայն 7%-ը: Դա բացատրվում էր ազգաբնակչության շրջանում վատ կազմակերպված բացատրական աշխատանքով, սոցիալապես անպաշտպան ու կարիքավոր մարդկանց մեծ տեսակարար կշռով, բնակչության ավանդների սառեցմամբ, ներդրումային հաստատությունների բացակայությամբ և այլն:

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացի վրա, անշուշտ, բացասաբար ազդեցին նաև պետության ոչ հստակ դիրքորոշումը նոր վաուչերների թողարկման հարցում, կառավարության կողմից մշակված ձեռնարկությունների ակտիվների գնահատման սխալ մեթոդիկան, ներքին շուկայի փոքրությունը, բնակչության եկամուտների ցածր մակարդակը, օտարերկրյա ներդրողների զգուշությունը, կաշառակերությունը և այլն:

Հախուռն ու հապճեպ սեփականաշնորհման արդյունքում հանրապետության ընտանիքների ընդամենը 8%-ը տիրացավ մասնավորեցված գույքի ավելի քան 90%-ին: Դրա հետևանքով 2000 թ. դրությամբ առավել հարուստ ընտանիքների 4-5%-ը տնօրինում էր ազգային հարստության առնվազն կեսը¹⁸⁹:

Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելիս բավարար չափով հոգ չտարվեց ունեցվածքի պահպանմանը, որի հետևանքով մետաղյա թանկարժեք սարքավորումները ջարդոնի անվան տակ վաճառվեցին արտասահմանյան երկրներում՝ հատկապես Իրանում և Թուրքիայում: Հիմնական կապիտալի այս վատնումից

առանձին մարդիկ յուրացրին մեծ գումարներ, իսկ Հայաստանը զրկվեց ոչ միայն արտադրամիջոցներից, այլև՝ սև և գունավոր մետաղների պաշարներից, որը, ինչպես հայտնի է, ռազմավարական հումք է: Դա ծանր հարված հասցրեց արդյունաբերությանը և ամբողջ տնտեսությանը:

Մեծ դժվարություններ առաջացան արդյունաբերական արտադրանքի իրացման գործում: Օրինակ, 1994 թ. իրացվեց ամբողջ արդյունաբերական արտադրանքի միայն 50%-ը, իսկ 1999 թ.՝ 65%-ը¹⁹⁰: Դա, անշուշտ, պայմանավորված էր նրանով, որ այն միջազգային շուկայում մրցունակ չէր: Լավագույն դեպքում հանրապետության արդյունաբերական արտադրանքը կարող էր սպառվել ԱՊՀ երկրներում, որին սակայն շատ էր խանգարում շրջափակումը: Արդյունաբերության ոչնչացման հետ անգործության մատնվեց և, հետևաբար, վերացավ խորհրդային տարիներին ստեղծված գիտատեխնիկական վիթխարի ներուժը, որը սպասարկում էր ոչ միայն Հայաստանին, այլև ամբողջ խորհրդային Միությանը:

Անբավարար էր օգտագործվում արդյունաբերական գիտահետազոտական և նախագծային-փորձարարական ներուժը: 2000 թ. փետրվարին ՀՀ ԳԱ ակադեմիայի մի խումբ գիտնականներ, որոնք անմիջականորեն կապված էին արդյունաբերական արտադրության հետ, ՀՀ կառավարությանն առաջարկ են արել՝ վերագործարկել սեփականաշնորհված ռազմական խոշոր նշանակության ավելի քան 700 գործարանների գոնե մի մասը, որոնք չէին աշխատում, և դրանով հնարավորություն ստեղծել իրենց գիտական նորարարությունները ներդնել արտադրության մեջ: Սակայն, ինչպես մյուս, այս առաջարկը նույնպես անհետևանք մնաց:

Հատկանշական է, որ պետության կողմից առանց ձեռնարկությունների վերագործարկման ժամկետների սահմանման և անհրաժեշտ հսկողության բացակայության պայմաններում իրենց իրական արժեքներից հազարապատիկ ցածր գնահատված արդյունաբերական սեփականաշնորհված օբյեկտների նոր տերերը, պատրաստ չլինելով կատարելու ներդրումներ, համագործակցելու օտարերկրյա ներդրողների հետ, մտահոգված էին ոչ այնքան ոչնչով չպարտադրված արտադրական կարողությունների վերագործարկմամբ ու

¹⁸⁸ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 39, 40:

¹⁸⁹ Տե՛ս Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 17, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2000, էջ 72, Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2000, էջ 13:

¹⁹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 15, 16, Արդյունաբերություն 1990-1997, էջ 7:

նոր արտադրանքի թողարկմամբ, որքան ձեռնարկությունների և դրանց առանձին մասերի ավելի ձեռնուռ վերավաճառքով: Փաստորեն արդյունաբերական ձեռնարկությունների մեծագույն մասը դադարեց աշխատելուց: Հազարավոր բանվորներ ու մասնագետներ դարձան գործազուրկ: Թեթև արդյունաբերության ճյուղում խորհրդային ժամանակաշրջանում աշխատող 130 ձեռնարկություններից այսօր աշխատում են միայն 40-ը¹⁹¹:

Անկազմակերպ ապապետականացման և վաուչերացման հետևանքը եղավ ոչ միայն գործազրկության աճը, այլև աղքատությունն ու մուրացկանությունը, որոնք էլ արտագաղթի գլխավոր պատճառ դարձան:

Օգտվելով վաուչերային սեփականաշնորհման շահավետ հնարավորությունից, օգտագործելով ազգակցական-խնամիական ու ընկերական-հովանավորչական կապերը և խորհրդանշական ցածր գներով ձեռք բերելով հսկայական արտադրական կարողություններ ու տարածքներ՝ սեփականատերերից շատերն ակիվ գործունեություն սկսելու և ծավալվելու համարձակություն չունեցան: Նրանք դարձան անտարբեր իրենց բուն կոչման հանդեպ: Ընդհանրապես ներքին կարգով կամ էլ խորհրդանշական գներով օբյեկտների վաճառքը հիմնականում իրականացվեց ոչ մրցութային կարգով:

Սկսած 1998 թվականից՝ առաջին պլան մղվեց հետսեփականաշնորհման փուլի արդյունավետության ապահովման խնդիրը: Կառավարության որոշմամբ ոչ միայն դադարեցվեց սեփականաշնորհման սերտիֆիկատների նոր թողարկումը, այլև անցում կատարվեց դեպի ձեռնարկությունների վաճառք և արտասահմանյան ներդրումների ներգրավում միջազգային աճուրդների կիրառման միջոցով: Կառավարությունն այժմ մտադիր է այլընտրանքային սկզբունքով տարանջատել և օժանդակել այն ձեռնարկություններին, որոնց համար որոշ բարենպաստ պայմաններ ստեղծելը կապահովի նրանց վերագործարկումը: Ցանկում ընդգրկված մեծ ձեռնարկություններում արտադրական կարողությունների օգտագործումը կազմում էր 10%-ից պակաս, իսկ փոքր և միջին ձեռնարկություններում՝ 25-30%, աշխատողների թվաքանակը կրճատվել էր ավելի քան 60%-ով: Բացառությամբ մի քանի ձեռնարկությունների, աշխատավարձի միջին

մակարդակը ամսական կազմում էր 30 ԱՄՆ դոլար¹⁹²:

Տնտեսական աճի ձեռք բերման և նոր աշխատատեղերի ստեղծման առումով այսօր Հայաստանի կառավարությունը խիստ կարևորում է ձեռներեցության և գործարարության զարգացումը, որի համար, սակայն, անհրաժեշտ է արտոնյալ վարկերի տրամադրում: 2000 թ. ՀՀ կառավարությունը մշակեց արդյունաբերական արտադրության ռազմավարությունը մինչև 2003 թ. ընկած ժամանակահատվածի համար, որը հիմնված է տեխնոլոգիական կառավարման նորամուտությունների վրա¹⁹³: Ըստ այդմ, որոշվել են ճյուղային առաջնահերթությունները, որոնք հիմնականում ապահովված են տեղական հումքով և առանձին արտադրատեսակների գծով մենաշնորհային են միջազգային շուկայում: Դրանք են քիմիական և հանքային արդյունաբերությունները, լեռնամետալուրգիան, սարքաշինությունը, թեթև արդյունաբերությունը, ակնագործությունն ու ոսկերչությունը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որոնցում օգտագործվում է կուտակված գիտական ներուժը: Շարունակում է աշխատել քիմիական ոլորտի հսկան՝ «Նաիրիտը», Կառավարությունը հավանություն է տվել Չինաստանում Հայաստանի մասնակցությամբ քլորոպրենային կաուչուկի համատեղ ձեռնարկության ստեղծման վերաբերյալ 2000 թ. ստորագրված արձանագրությանը: Իրական նախադրյալներ են ստեղծվել Վանաձորի քիմկոմբինատի վերագործարկման համար: Հանրապետությունում շարք են մտել մի քանի խոշոր համատեղ ձեռնարկություններ, ինչպիսիք են՝ հայ-ռուսական «Արմենալ»-ը, հայ-չվեյցարական «Մանես և Վալեքս»-ը, հայ-հունական «Գրանդ-Մասիս»-ը, վերագործարկվել է լամպերի գործարանը և այլն¹⁹⁴: Այս ամենը հանրապետության ողջ տարածքում հարյուրավոր լրացուցիչ աշխատատեղեր ապահովեց բնակչությանը:

1999 թ. տվյալներով սեփականաշնորհված 2500 փոքր ձեռնարկություններից տնտեսական ակտիվ գործունեություն էր վարում միայն 36%-ը: Ուսումնասիրված ձեռնարկությունների ղեկավարների 75%-ը գտնում է, որ ձեռնարկատիրական գործունեության վրա առավել բացասաբար անդրադարձող գործոնը պետական հարկերի և տուրքերի բարձր դրույքաչափերն են: Սեփական ֆինանսական միջոցների սակավությունը, որպես կանոն, զբաղեցնում է երկրորդ

¹⁹¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 փետրվարի 2003:

¹⁹² Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 62

¹⁹³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29 դեկտեմբերի, 2000:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

տեղը՝ 66%¹⁹⁵։

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը Հայաստանում ունեցավ իր առանձնահատկությունը։

Ակնհայտ է, որ զանգվածային սեփականաշնորհումն առայժմ մեծ արդյունքներ չի տվել մասնավոր սեփականության արդյունավետ ինստիտուտ ստեղծելու առումով։

Հայտնի է, որ ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատման հիմնական ցուցանիշներից են արտադրանքի թողարկման և իրացման ծավալները։ 1995-2001 թթ. մասնավորեցված 46 միջին և խոշոր ձեռնարկությունների գործունեության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ թողարկված արտադրանքի ծավալները մասնավորեցումից հետո աճել են 24, նվազել 22 ձեռնարկություններում։ Ճյուղային կտրվածքով թողարկված արտադրանքի ծավալի աճի միտում է նկատվել սննդի արդյունաբերության ձեռնարկությունների 58,8%-ում, թեթև արդյունաբերության ձեռնարկությունների 66,5%-ում, շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների 97,6%-ում¹⁹⁶։ Թողարկված արտադրանքի ծավալի նվազման միտումը հատկապես բարձր է մեքենաշինության, քիմիական արդյունաբերության և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում։ Ուսումնասիրված ձեռնարկություններից 55%-ում նշված ժամանակաշրջանում իրացման ծավալն աճել է հիմնականում պահեստավորված պատրաստի արտադրանքի հաշվին՝ մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, շինանյութերի արտադրության մեջ։ Մեքենաշինական արդյունաբերության հետազոտված ձեռնարկություններից թողարկվող արտադրանքի և իրացման ծավալների աճ է նկատվել «Ռեմոնտալ», «Կաստոր», «Հայ մեքենա» ԲԲԸ-ներում, իսկ մի խումբ ձեռնարկություններում, օրինակ՝ «Կապանի ռելե գործարան», Երևանի «Սիրենա ռելե», «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ-ներում արտադրանքի թողարկման ծավալը մնացել է մինչև մասնավորեցումը եղած մակարդակին։ Արտադրության ծավալները կտրուկ նվազել են «Էլեկտրոապարատ», «Վվտոագրեգատների»,

«Սարք» (ք. Գավառ) ԲԲԸ-ներում և մի շարք այլ գործարաններում¹⁹⁷։ Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններից մասնավորեցումից հետո արտադրության ծավալները կտրուկ նվազել են «Ռե-տինատեխնիկական իրերի գործարան» ԲԲԸ-ում։ Նրա արտադրանքի թողարկման ծավալը դրամական արտահայտությամբ կազմում է մինչև մասնավորեցումը եղած ծավալի միայն 35%-ը։ Նույն վիճակն է նաև «Պոլիմեր-Սոսինձ գործարան» ԲԲԸ-ում։

Սննդի արդյունաբերության ձեռնարկություններում նկատվելի աճել են արտադրության և իրացման ծավալները հատկապես «Երևանի գարեջրի գործարան», «Աբովյանի գարեջրի գործարան» ՓԲԸ-ներում, «Շամպայն գինիների գործարան», «Արտաշատի պահածոների գործարան», «Վեդու գինու գործարան» ԲԲԸ-ներում։ Նրանք շահույթի զգալի աճ են ապահովել։ Սննդի ձեռնարկություններից ամսփթեթար վիճակում է «Ձեթ-օճառ կոմբինատ» ԲԲԸ-ն։ Նախկինում հանրապետությունում մեծ ճանաչում ունեցող Երևանի «Ուրարտու» մսի կոմբինատը ամբողջապես դարարեցրել է մսեղենի և երշիկեղենի արտադրությունը և վերածվել տարբեր տեսակի արտադրանքների առաքման բազայի։ Թեթև արդյունաբերության ձեռնարկություններից արտադրանքի ծավալի աճ է նկատվել «Վանաձոր կոշիկի ֆաբրիկա» ԲԲԸ-ում, վիճակն աստիճանաբար կայունանում է Գյումրիի «Տավրոս» ԲԲԸ-ում։ Ամսփթեթար վիճակում են «Երևանի կաշվե գալանտերեայի ֆաբրիկա», «Սիսիանի կարի ֆաբրիկա», «Երևանի կոշիկի փորձարարական ֆաբրիկա» ԲԲԸ-ները և այլն¹⁹⁸։

Մասնավորեցումից հետո վիճակն զգալի բարելավվել է շինանյութերի արդյունաբերությունում։ Ուսումնասիրված բոլոր ձեռնարկություններում աճել են թողարկվող արտադրանքի և իրացման ծավալները։ Այսպես, մասնավորեցումից հետո «Երկաթբետոն» թիվ 6 ԲԲԸ-ում, ինչպես նաև «Մաքուր-երկաթ գործարան» ԲԲԸ-ում արտադրանքի թողարկման ծավալը գրեթե կրկնապատկվել է¹⁹⁹։ Ինչպես ցույց են տալիս 46 ձեռնարկությունների՝ հանրագումարի բերված ցույց են տալիս 46 ձեռնարկությունների՝ հանրագումարի որոշ աճ, որը հետագա կայունացման համար կարևոր նշանակություն ունի, ֆինանսատնտեսական առանձին ցուցանիշների գծով (շահույթ, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր), դեռևս նկատվում են բա-

¹⁹⁵ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, էջ 35։

¹⁹⁶ Տե՛ս ՀՀ կառավարության ընթացիկ արխիվի նյութեր, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն, մասնավորեցված ընկերությունների տնտեսական գործունեության ամփոփ վերլուծության արդյունքները, 2001, գ. 6, հ. 9, թ. 72։

¹⁹⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 73-74։

¹⁹⁸ Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», Հայաստան, հ. 3, սեպտեմբեր, 2001, էջ 49։

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում։

ցասական միտումներ: Միաժամանակ առկա են նաև դրական որոշ տեղաշարժեր, որոնք հետագա կայունացման հույս են ներշնչում: Օրինակ, դրական պետք է համարել այն, որ պետական բյուջեի նկատմամբ պարտավորվածությունները նկատելի կրճատվել են: Հարկ է նշել, որ կանոնադրական հիմնադրամի ոչ մեծ նվազումը պայմանավորված է դրանց հաշվին նոր ներդրումների կատարման (նոր սարքավորումների ձեռքբերման և տեղակայման) հետ:

Մասնավորեցված ձեռնարկությունների համար հատկապես կարևորվում է աշխատանքի և սոցիալական զարգացման ցուցանիշների վերլուծությունը: Հետազոտված ճյուղերում աշխատողների թիվը նվազել է 53,5%-ով: Ի դեպ, ձեռնարկությունների մեծ մասում գրեթե նույնչափ նվազել է բոլոր կատեգորիաների աշխատողների թիվը, միայն առանձին դեպքերում է ինժեներատեխնիկական աշխատողների թիվը նվազել ավելի արագ: Շատ ձեռնարկություններում, որտեղ ցածր է արտադրական կարողությունների օգտագործման գործընթացը, չափազանց մեծ թիվ են կազմում հարկադրական արձակուրդներում գտնվող աշխատողները:

Վաուչերային սեփականաշնորհումն ապահովելով գործընթացի արագ իրականացումը՝ միևնույն ժամանակ չափափոքեց նոր կապիտալի հոսք դեպի սեփականաշնորհված ձեռնարկությունները, դրանով իսկ չնպաստեց վերջիններիս արագ վերակառուցմանը: 1997 թ. վաուչերային սեփականաշնորհումից դրամական սեփականաշնորհման անցնելը, միջազգային մրցույթներին մասնակցելը ավելացրին պետական բյուջեի մուտքերը: 1997 թ. վերջին միջազգային մրցույթով վաճառվեց ազգային տելեկոմունիկացիոն ձեռնարկության՝ «Արմենտելի» բաժնեմասերի 90%-ը, իսկ 1998-ին՝ Երևանի հանրահայտ կոնյակի գործարանը և «Արմենիա» հյուրանոցը: Հեռանկարներ են բացվել մեծ մասշտաբի ներդրումների համար հանքահումքային արդյունաբերությունում: Ռուսաստանի Դաշնությունը ներդրումներ է կատարում էներգետիկայի համակարգում, միջազգային մրցույթ է հայտարարվել Երևանի գլխավոր հյուրանոցների, օդանավակայանի, Հայկական ավիաուղիների, էլեկտրաէներգիայի արտադրության, տեղափոխման և բաշխման ձեռնարկությունների սեփականաշնորհման համար: Լուրջ հաջողություն համարվեց 2002 թ. «Զվարթնոց» օդանավակայանի վերաբերյալ պայմանագրի կնքումը արգենտինահայ մեր հայրենակցի հետ, որի արդյունքները սակայն մինչ այժմ չեն երևում:

1999 թ. դրությամբ սեփականաշնորհվել էին փոքր ձեռնարկությունների ավելի քան 80%-ը, միջին և խոշոր ձեռնարկությունների՝ 70%-ը²⁰⁰: 2001 թ. հուլիսի դրությամբ հանրապետությունում մասնավորեցվել էին 1596 միջին և խոշոր ձեռնարկություններ²⁰¹: Ներկայումս ՀՆԱ-ի ավելի քան 75%-ը ստեղծվում է մասնավոր հատվածում, առաջին հերթին ի հաշիվ գյուղատնտեսության և առևտրի ոլորտների, մինչդեռ արդյունաբերության մեջ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը կազմում է 45%²⁰²:

Մանր ու միջին ձեռնարկությունների սեփականաշնորհմանը զուգահեռ ընթացում էր նաև անավարտ շինարարական կառույցների, բնակֆոնդի սեփականաշնորհումը, որն ուներ ոչ միայն կարևոր սոցիալական նշանակություն, այլ նաև կարևոր քայլ էր աշխատուժի շարժունակության և աշխատուժի շուկայի ձևավորման համար: Շինարարության սեկտորը կտրուկ անկումից հետո (1993 թ. տեսակարար կշիռը կազմել է 4,3%) սկսել է աստիճանաբար վերականգնվել²⁰³: Տնտեսական աճի՝ վերջին տարիներին նկատվող առաջընթացի ձևավորման գործում շինարարությունը որոշակի դեր է խաղացել: Երկրի ՀՆԱ-ի մեջ շինարարության տեսակարար կշիռը 1999թ. 8,3 տոկոսի դիմաց 2002 թ. կազմել է շուրջ 13,9 տոկոս²⁰⁴: Եթե 1998-2001 թթ. իրականացված կապիտալ շինարարության աճի տեմպերը կազմել են տարեկան միջինը 11,5 տոկոս, ապա 2002 թ. արդեն՝ 43,3 տոկոս²⁰⁵: Ֆինանսավորման աղբյուրների ընդլայնման և հատկացվող ֆինանսական միջոցների ավելացման շնորհիվ հնարավոր էր դարձել, 1994-1997 թթ. համեմատ, կրկնապատկվել ֆինանսավորման ծավալները: Հատկանշական է, որ կապիտալ շինարարության ծավալների ֆինանսավորման կառուցվածքում արդեն գերակշռող են դառնում բնակչության և կազմակերպությունների

²⁰⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000, էջ 95, 96:

²⁰¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-հունիսին, Եր., 2001, էջ 97:

²⁰² Հայաստան 2001 վիճակագրական գրքույկ, Եր., 2001, էջ 37:

²⁰³ Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, Եր., 2001, էջ 8, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 61:

²⁰⁴ Տես Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում 1991-2000, վիճակագրական ժողովածու, Եր., 2001, էջ 6, Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 41:

²⁰⁵ Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-դեկտեմբերին, էջ 41:

կողմից շինարարական աշխատանքների ֆինանսավորմանն ուղղվող գումարները: Դա նշանակում է, որ ոչ պետական շինարարությունը հանրապետությունում լայն թափ է ստանում: Այս բնագավառում նույնպես նկատելի էին այն նույն սխալներն ու թերությունները, որոնք առկա էին արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման ժամանակ:

Առաջին. Պետությունը, փաստորեն, ինքնակամ հեռացավ սեփականաշնորհման գործընթացի կառավարումից: Բնակչության շրջանում չիրականացվեց բացատրական աշխատանք, չստեղծվեցին ներդրումային հիմնադրամներ, բացակայում էր սերտիֆիկատների՝ արժեթղթերի շուկան, նոր տնօրինողներից չէին պահանջվում ո՛չ երաշխիքներ, ո՛չ էլ՝ բիզնես-ծրագրեր, ինչը տեղի տվեց նշանակալի խախտումների: Չարդարացան նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը, պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին²⁰⁶: Այս բոլոր վրիպումները խիստ սահմանափակեցին ՀՀ տնտեսության զարգացման հնարավորությունները:

Երկրորդ. Սեփականաշնորհման արդյունքում ձեռնարկությունների արտադրական հիմնական ու շրջանառու միջոցների յուրացումը հասցրեց արդյունաբերության քայքայմանը, գործազրկության աճին ու արտագաղթին: Առանց սեփական արդյունաբերության զարգացման հնարավոր չէ տնտեսության զարգացում և բնակչության կենսամակարդակի բարձրացում: Սեփականաշնորհման պատճառով փոփոխվեց նաև արդյունաբերության կառուցվածքը: Վերամշակող արդյունաբերության կեսից ավելին արդեն բաժին էր ընկնում ոչ թե գիտատար ճյուղերին, այլ՝ սննդի արդյունաբերությանը՝ պայմանավորված տեղական հումքի, իրացման շուկաների առկայությամբ, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ավելի լայն հնարավորություններով: Արդյունաբերության ճյուղային փոփոխությունների հիմնական գործոններն են՝ քիչ էներգատարությունը, տրանսպորտային ծախսերի ցածր մակարդակը, տեղական հումքի առկայությունը:

Երրորդ. Ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում հաշվի չառնվեցին այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են ձեռնարկությունների մասնագիտացման պահպանումը, դրանց

ինտեգրացումը ազգային տնտեսության ու սոցիալտնտեսական ծրագրերով նախատեսված գործընթացներին: Նման վտանգն առավել նտահոգիչ է հատկապես հանքահումքային ոլորտի և պետական ռազմավարական օբյեկտների սեփականաշնորհման դեպքում: Նկատելի է, որ սեփականաշնորհման գործընթացը հանրապետությունում իրականացվել է տարերայնորեն, առանց սեփականաշնորհման իրատեսական, ռազմավարական ծրագրի, առանց անհրաժեշտ հասարակական վերահսկողության: Այլ կերպ ասած՝ ներկայումս ստեղծվել են սեփականաշնորհման օրենսդրական լավ կամ վատ տեսական հիմքեր, սակայն չկա արդյունավետ և նպատակասլաց գործողության մեխանիզմ:

Չորրորդ. Սեփականաշնորհման գործընթացի հիմնական բացասական հետևանքն այն է, որ չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի լայն խավ, չստեղծվեց արդյունավետ շուկա, զգալիորեն նվազեց ձեռնարկությունների թիվը, որի հետևանքով էլ ավելացավ գործազուրկների քանակը: Մասնավորեցումից հետո մեծ թվով ձեռնարկություններ չեն աշխատում կամ աշխատում են թերբեռնվածությամբ: Որոշ դեպքերում մասնավորեցման գործարքների անարդյունավետության կամ չկայանալու հիմնական պատճառը հսկայական պարտքերի առկայությունն է: Ձեռնարկությունների մասնավորեցումից հետո զգալի պարտավորությունների բեռը թույլ չի տալիս դրամական միջոցներն ուղղել արտադրության զարգացման նպատակներին: Այս իմաստով հատկապես կարևորվում է բաժնետոմսերի փոխարկման իրավունքով պարտատոմսերի թողարկմամբ պետական գույքի մասնավորեցումը: Ուստի մասնավորեցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ պարտքերի վերակազմավորման պայմանով կամ երաշխիքներով ապապետականացումը:

Յինգերորդ. Չնայած ուսումնասիրված ձեռնարկությունների մեծ մասում մասնավորեցումից հետո տնտեսական գործունեության արդյունքների դրական տեղաշարժերին, ակնհայտ է ներդրումների, այդ թվում՝ արտասահմանյան, բացակայությունը, առանց որի գործունեության հեռանկարը դառնում է անորոշ: Ձեռնարկությունները ֆինանսական սեփական աղբյուրների հաշվին ներդրումներ կատարելու հնարավորություն չունեն, իսկ երկարաժամկետ վարկերի ստացումը բանկային վարկերի բարձր տոկոսադրույթների պատճառով գրեթե անհնարին է: Առանց պետական որոշակի աջակցու-

²⁰⁶ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, էջ 32:

յան ուսումնասիրված ձեռնարկությունների մեծ մասը դատապարտված է լուծարման: Հաշվի առնելով ներդրումների կատարման բարձր ռիսկը, տնտեսական առումով անբարենպաստ պայմանները, ներքին խնայողությունների ցածր մակարդակը՝ անհրաժեշտ է մշակել մասնավորեցված առավել հեռանկարային ձեռնարկություններին ընտրամբային սկզբունքով երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու համալիր ծրագիր, նպաստել ներդրումային հիմնադրամների կազմակերպական կառուցվածքի ձևավորմանը, ընդլայնել մասնավորեցմանը առևտրային բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների մասնակցության՝ օրենքով նախատեսված հնարավորությունները:

Վեցերորդ. Ակնհայտ է նաև, որ մասնավորեցումն առայժմ չի ուղեկցվում սեփականության իրավունքի հստակ ընկալմամբ: Այս առումով պետք է արագացնել նաև բաց բաժնետիրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի հատկացումը դրանց տերերին՝ որպես սեփականության իրավունքի առարկայական կրողների: Բաժնետոմսերի մուտքը արժեթղթերի երկրորդային շուկա էականորեն կաշխուժացնի անշարժ գույքի շուկան, և դրանով իսկ ձեռնարկությունները կունենան իրենց շուկայական արժեքը: Այս իմաստով դեռևս չլուծված հիմնախնդիր է նաև արժեթղթերի երկրորդային շուկայի հետագա զարգացումը, որի դերը կարևորվում է ինչպես մասնավորեցված ձեռնարկությունների գործունեության վերամշակման, այնպես էլ դրանց զարգացման համար ֆինանսական հոսքերի ապահովման գործում: Այս առումով 2000 թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը²⁰⁷ էականորեն կնպաստի հանրապետությունում կապիտալի քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը և կայացմանը:

Բննադատության չի դիմանում տնտեսության սեփականաշնորհման պետական ծրագիրը: Մինչև օրս ոչ մի սեփականաշնորհված ձեռնարկություն, որևէ օգնություն չի ստացել ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարությունից: Փաստորեն Արդյունաբերության և առևտրի նախարարությունն իր տրամադրության տակ չունի համապատասխան տնտեսական, ֆինանսական և նյութական լծակներ, որպեսզի կարողանա որոշակիորեն նպաստել սեփակա-

նաշնորհված ձեռնարկության զարգացմանը: Սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծ մասն ամբողջությամբ գտնվում է բարձիթողի վիճակում, և չի մշակված պետական որևէ ծրագիր դրանց աշխատանքը կառավարելու համար: Չկան ընթացիկ և հեռանկարային հովանավորչական ծրագրեր, չի իրականացվում նաև ներքին ու արտաքին շուկաների իրավիճակի հեռանկարային ուսումնասիրություն: Սեփականաշնորհման գործընթացը կատարելագործելու և նրանում տեղ գտած բացթողումները շտկելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումների ծրագիր: Անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել հանրապետությունում գործող սեփականաշնորհման կարգը՝ մշակելով այնպիսի ծրագիր, որը կբացառի նախկինում թույլ տրված խախտումների կրկնման հավանականությունը: Այս նպատակով պետք է մեծացնել պետության կարգավորիչ և վերահսկիչ դերը: Մշակել հանրապետության տնտեսական զարգացման ծրագրից բխող սեփականաշնորհման նոր ծրագիր՝ ավելի շատ կիրառելով մրցութային կարգը, սեփականաշնորհվող օբյեկտների ցանկի մասին նախապես տեղեկացնել սփյուռքի գործարարներին: Սեփականաշնորհվող օբյեկտները գնահատել անկախ փորձագետների օգնությամբ՝ հաշվի առնելով դրանց իրական արժեքը: Սեփականաշնորհումից ստացված միջոցները բացառապես օգտագործել ռազմավարական նշանակության այս կամ այն ճյուղի արտոնյալ զարգացման, նպատակային արտադրական ծրագրերի իրականացման, նոր տեխնոլոգիաների ձեռքբերման և նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով: Սեփականաշնորհման գործարքներն առավել թափանցիկ դարձնելու համար ապահովել աշխատողների մասնակցությունը գործերի կառավարմանը: Օրինական գործարքներով սեփականաշնորհված, սակայն դեռևս չաշխատող օբյեկտների վերագործարկումը խթանելու և արագացնելու համար կառավարությունը պետք է որոշակի արտոնություններ սահմանի՝ կիրառելով արտադրամիջոցներից և անշարժ գույքից գանձվող հարկերի զրոյական դրույքաչափ գործունեության առաջին, իսկ առանձին դեպքերում նաև՝ երկրորդ և երրորդ տարիների համար: Չաշխատող ձեռնարկությունների արտադրության հիմնական միջոցներից և անհրաժեշտ գույքից սահմանի ժամանակային պրոգրեսիվ սանդղակով գանձվող գույքահարկ հետևյալ ձևով. առաջին տարում՝ արտադրության հիմնական միջոցներից դրանց շուկայական արժեքի 50%-ի չափով, երկրորդ տարում՝ 75%-ի չափով և եր-

²⁰⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.), գ. 9, էջ 267-342:

որոգ տարում՝ 100%-ի չափով: Նշված միջոցառումների իրականացումը կհանգեցնի այն բանին, որ չաշխատող ձեռնարկությունների տնօրենները ստիպված կլինեն ընտրություն կատարել հետևյալ գործառնություններից. սեփական ուժերով վերագործարկել ձեռնարկությունը՝ ազատվելու տարեցտարի աճող հարկային պարտավորություններից և օգտվելու գույքահարկի՝ վերջ նշված արտոնություններից, վաճառել ձեռնարկությունը կամ վերադարձնել պետությանը սեփականաշնորհման գործարքի համար վճարված անվանական գնով, վերագործարկման ծրագիր առաջարկել՝ պետության հետ համատեղ՝ նախատեսելով պետության բաժնեմասի տրամադրում պետական պատվերի ստացման դիմաց, ձեռնարկությունը տալ վարձակալության և, վերջապես, հայտարարել սնանկ՝ գործող կարգի համաձայն: Սեփականաշնորհված օբյեկտի ղեկավարության կողմից օրինախախտումների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է չեղյալ հայտարարել գործարքը և սեփականատիրոջից հետ ստանալ և պետությանը վերադարձնել սեփականաշնորհման արդյունքում ընդունման-հանձնման պահին արձանագրված ու գույքագրված ողջ ունեցվածքը՝ ներառյալ արտադրության հիմնական միջոցները: Նախկին սեփականաշնորհումից գանձել գույքի պակասող մասի շուկայական գնի համարժեքը և հայտարարել նոր մրցույթ տվյալ օբյեկտի սեփականաշնորհման համար: Մրցույթում նախապատվությունը տալ առավել կարճ ժամկետներում անհրաժեշտ մասնագիտական և արտադրական կարողության առավել արդյունավետ օգտագործմամբ վերագործարկման հաշվարկներ պարունակող ծրագրերին:

Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման հետ մեկտեղ փորձ էր արվում լուծել արտադրության վերակառուցման, սպառման կազմակերպման և այլ խնդիրներ:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե հաշվի առնվեն յուրաքանչյուր միջոցառման հետևանքները և լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարվեն յուրաքանչյուր ձեռնարկության մասնավորեցման դեպքում: Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրով մասնավորեցման ենթակա է դեռևս 900 ձեռնարկություն, և այդ գործընթացը լավագույնս անցկացնելու համար առաջարկվում է՝ ա) մշակել մասնավորեցման հատուկ ծրագիր՝ հստակեցնելով մասնավորեցման նպա-

տակները, բ) իրականացնել մասնավորեցման ենթակա գույքի ճիշտ գնահատման քաղաքականություն, գ) մասնավորեցումից առաջ ձեռնարկությունները նախապատրաստելու համալիր աշխատանքներ իրականացնել՝ ֆինանսական առողջացման և գործարար ծրագրերի կազմում, պետության մասնավորեցումից առաջացած միջոցներով դրանց աուդիտի անցկացում և արժեթղթերի գրանցում, դ) լայնորեն կիրառել անավարտ շինարարական օբյեկտների մասնավորեցման համար տարածամեծ վճարման ձևը՝ վճարման ժամկետների մեծացում, սկզբնավճարից ազատում և այլ արտոնությունների սահմանում:

Արդյունաբերությունը կյանքի կոչելը, որը, պետք է ենթադրել, կլինի դժվար ու տևական, անկախ պետականության ամրապնդման, ինչպես նաև սոցիալական ծանր դրությունից դուրս գալու հիմնական երաշխիքն է:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության ճգնաժամային վիճակի հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր, որն արդյունք էր հայկական ատոմակայանի փակման, շրջափակման հետևանքով մագլթի և բնական գազի մատակարարման ընդհատումների:

Հայաստանի էներգահամալիրը կառուցվել է առանց նրա բնական և տնտեսական առանձնահատկությունների հաշվառման: Այդ պատճառով Խորհրդային Միության փլուզմանը նախորդող տարիներին միայն էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը հանրապետությունում մոտ 15 մլրդ կվտ ժամ էր, որից 58,5%-ը արտադրվում էր ջերմաէլեկտրակայաններում, 31,4%-ը՝ Հայկական ատոմակայանում և մնացած 10,1%-ը՝ հիդրոկայաններում²⁰⁸: Սկսած 1977 թվականից՝ Հայաստանում արտադրվող էլեկտրաէներգիայի 15-20%-ն արտահանվել է հարևան երկրներ²⁰⁹: Այսպիսով, սեփական էներգակիրներով աղքատ և համապատասխան բնական պայմաններ չունեցող Հայաստանը վերածվել էր էլեկտրաէներգիա արտահանող երկրի, իսկ մեկ շնչին հասնող էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը կազմում էր ավելի քան 4500 կվտ ժամ²¹⁰: Իրականում էներգիայի արտադրության նպատակով ամեն տարի հանրապետություն է ներմուծվել ավելի քան 4 մլն տոննա պայմանական վառելիքի հա-

²⁰⁸ ՀՀ ՀԶԿԳԿՊԱ, ֆ. 1, ց. 82, գ. 5, թ. 165, 166:

²⁰⁹ Տե՛ս նույն տեղում:

²¹⁰ Արդյունաբերություն (վիճակագրական ժողովածու) 1990-1997, էջ 32:

մարժեք մազուք և գազ, որոնց արժեքը ներկա միջազգային գներով կազմում է ավելի քան 300 մլն ամերիկյան դոլար:

1991 թ. ընդհանուր ճգնաժամին զուգահեռ սկիզբ առավ նաև էներգետիկ ճգնաժամը, որն էլ ավելի խորացրեց արդյունաբերության ծանր վիճակը: Գնաժամի հիմնական պատճառներն էին Հայկական ատոմակայանի փակումը, շրջափակման հետևանքով մազուքի ու բնական գազի մատակարարման ընդհատումը: Այն անմիջապես բացասաբար անդրադարձավ ջերմա- և էլեկտրատաքրության վրա: Գնաժամի առաջին ծմեռը (1991-1992 թթ.) լուրջ հարված հասցրեց բնակչության ջերմամատակարարմանը, հատկապես՝ ջեռուցմանը: Իբրև հետևանք՝ անտառները և զբոսայգիներն անհսկելիորեն հատվեցին և օգտագործվեցին որպես վառելիքայտ:

1992-1993 թթ. հատկապես ծանր ճգնաժամային տարիներ եղան էներգետիկայի բնագավառում: Հանրապետության ղեկավար մարմինների անճարակության կամ կանխամտածված գործունեության հետևանքով էներգիայի արտադրությունը խիստ կրճատվեց: Արտադրությունը և տրանսպորտը, փաստորեն դադարեցին գործելուց: Կենցաղային կարիքների համար 2-3 ժամ էր միայն էներգիա տրվում: Հանրապետությունը թաղվեց համատարած խավարի մեջ: Ազգաբնակչության նկատմամբ փաստորեն իրականացվեց էներգետիկ տեռոր: Դա խիստ անդրադարձավ բնակչության ոչ միայն տնտեսական պայմանների, այլև՝ բարոյահոգեբանական վիճակի վրա: Երբ հանրապետությունը թաղված էր համատարած խավարի մեջ, էլեկտրաէներգիա էր տրվում հարևան Վրաստանին: Ուստի պատահական չէր, որ 1999 թ. ձեռնարկվեցին միջոցառումներ 1992-1999 թթ. էներգիայի բնագավառում տեղի ունեցած աղաղակող չարաշահումներն ու դրանց մեղավորներին բացահայտելու ուղղությամբ: Սակայն այդպես էլ խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները լրիվ չիրապարակվեցին՝ 1999 թ. հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերի պատճառով: Հանրապետության խորհրդարանի կողմից ստեղծված «1992-1999 թթ. էներգետիկների ներկրման, արտադրված էլեկտրաէներգիայի օգտագործման, ինչպես նաև էներգետիկ համակարգին ուղղված վարկերի արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովը» 2000 թ. հունիսին ներկայացրեց իր աշխատանքի արդյունքները՝ առանց որևէ որոշում ընդունելու²¹¹: Բացա-

²¹¹ Տե՛ս *Յոլսուհիյան Ա.*, ԳՀԸ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Եր., 2002, էջ 200: 130

հայտվեցին մեծ չափերի հասնող չարաշահումներ, մազուքի և գազի ներկրման հետ կապված դրամական յուրացումներ: Ըստ հանձնաժողովի տվյալների՝ չարաշահումների հետևանքով պետությանը հասցվել է շուրջ 200 մլն դոլարի վնաս²¹²: Սակայն այդպես էլ մինչև այժմ քրեական պատասխանատվության չեն ենթարկվել այդ «գործի» անմիջական կազմակերպիչները:

Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով բազմաթիվ ենթակայաններ և բաշխիչ ցանցեր ենթարկվեցին վթարների: 1992-1993 թթ. ծնունդ բնակարաններն էլեկտրաէներգիայով (օրական 1-2 ժամ, ոչ պարբերաբար) մատակարարելու հետևանքով էներգահամակարգի գերբեռնվածությունը բերեց բազմաթիվ ենթակայանների և բաշխիչ ցանցերի վթարների: Էլեկտրաէներգիայի պակասի պայմաններում էներգիայի գողությունը դարձավ համատարած: 1994-1995 թթ. արդյունաբերական ձեռնարկությունների անվճարունակության և բնակչության արտահոսքի պատճառով կտրուկ նվազեց էներգիայի սպառումը: Վերոհիշյալ պատճառներով փոփոխվեց բնակչության կողմից էներգակիրների տեսակների օգտագործումը, բացակայող բնական գազը փոխարինվեց նավթով և փայտով, բարձր գնի պատճառով հեղուկ գազի սպառումը նվազեց: Բնակիչների մեծ մասը ձեռք բերեց նավթայիններ ու վառարաններ և ձմռանը չեղած էլեկտրականության վրա այլևս հույս չդրեց: Հանրապետության բնակչության բնական գազի պահանջարկը կազմում էր օրական մոտ 2-5 մլն մ³: ԳՂ ներմուծվող գազը հիմնականում օգտագործվում էր էլեկտրաէներգիա արտադրելու համար՝ բնակչության խոհանոցային կարիքները հնարավորին չափ բավարարելու և ջեռուցման համար ջերմային էներգիա ստանալու նպատակով: Սրա հետևանքով էլեկտրաէներգիայի մոտ 30%-ը կորչում էր հնացած և մատակարարման հաճախ վնասված ցանցերով հաղորդելիս, էներգատար կենցաղային սարքեր օգտագործելու, էլեկտրաէներգիան անօրինական ճանապարհներով օգտագործելու, զանգվածաբար գողանալու և այլ պատճառներով: Այդ կորուստները տալիս էին օրական 1 մլն մ³ գազի գերածխս: Եթե գազը բնակչությանը տրվեր անմիջապես (բացառությամբ ձմեռային ամիսների), ապա 1 մլն մ³ գազ կտնտեսվեր, քանզի գազամատակարարման արժեքն ավելի ցածր էր էլեկտրականության համեմատ, փոքր կլինեին նաև կորուստները:

²¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմություն, ամփոփ ժամանակագրություն 2000, Եր., 2002, էջ 23: 131

Բացի այդ բնակչությունը կսպառեր ավելի քիչ էլեկտրաէներգիա, որի հիմնական մասը ծախսվում էր սնունդ պատրաստելու և ջեռուցման համար: Դա հնարավորություն կտար էլեկտրաէներգիան առավել մեծ չափով օգտագործել ձմռան ամիսներին: Սա հանրապետության ղեկավարության, էլեկտրաէներգիայի տնօրենների թույլ տված կարևոր սխալներից էր, որը ծանրացրեց բնակչության սոցիալական վիճակը:

Նման ծանր վիճակը շարունակվել էր կարող: Այս պայմաններում անխուսափելի էր Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը 1996 թ. և Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շահագործումը: ԱԷԿ-ի վերագործարկումը տեղի ունեցավ Ռուսաստանի դաշնության տնտեսատեխնիկական օգնությամբ: Դրա շնորհիվ վերացվեց արհեստականորեն ստեղծված էներգետիկ սովը, հանրապետությունը դուրս եկավ խոր ճգնաժամից և դա հիմք ծառայեց արդյունաբերության գործունեությունը կազմակերպելու համար:

Բարելավվեց բնակչության էլեկտրամատակարարումը: Եթե 2001 թ. հունվար-դեկտեմբերին ՀԱԷԿ-ը թողարկել է 1986,7 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հանրապետության թողարկվող ամբողջ էլեկտրաէներգիայի 34,6%-ը, ՋԷԿ-երը համապատասխանաբար՝ 2790,3 մլն կվտ ժամ և 48,6%-ը, ՀԷԿ-երը՝ 967,0 մլն կվտ ժամ և 16,8%-ը²¹³, ապա 2002 թ. հունվար-դեկտեմբերին ՀԱԷԿ-ը թողարկել է 2282,2 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հանրապետությունում թողարկվող ամբողջ էլեկտրաէներգիայի 41,4%-ը, ՋԷԿ-երը համապատասխանաբար՝ 1572,0 մլն կվտ ժամ և 28,5%-ը, ՀԷԿ-երը՝ 1656,1 մլն կվտ ժամ և 30,1%-ը²¹⁴: Սակայն բնակչության անվճարունակության պատճառով նրանց մեծ մասը ի վիճակի չէ վճարել էլեկտրավարձը: Եթե չվճարումները 1980-ական թվականներին կազմում էին 30%, ապա այժմ դրանք աճել են մինչև 70%: Անվճարունակությունը պայմանավորված է հանրապետության ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով և արդյունաբերության որոշ անմրցունակ արտադրանքներով: Տարադրամի պակասորդի պատճառով չեն ծածկվում ծախսերը: Ուստի այժմ խնդիր է դրված սեփականաշնորհել բաշխիչ ենթակայանների ցանցերը, որը էլ ավելի կբարձ-

րացնի բնակչության սպառած էլեկտրաէներգիայի սակագինը և դրանով ծանր կանդրադառնա վերջինիս առանց այն էլ աննախանձելի տնտեսական վիճակի վրա:

դ. Ֆինանսավարկային քաղաքականություն

Տնտեսական ակնման հետևանքով ծանր կացության մեջ էր հայտնվել նաև Հայաստանի ֆինանսավարկային համակարգը: Մինչև 1993 թ. հանրապետության տնտեսական քաղաքականությունը կրում էր Ռուսաստանի տնտեսական քաղաքականության ազդեցությունը՝ միասնական դրամական համակարգի առկայության պայմաններում: Դա հատկապես արտահայտվում էր գների համընդհանուր ազատականացման պայմաններում դրամավարկային և հարկային քաղաքականության բնագավառներում: Չնայած այս ուղղությամբ հանրապետության իշխանությունների գործադրած ջանքերին՝ Հայաստանն այդպես էլ ամբողջությամբ չընդգրկվեց ռուսական ռուբլու գոտու մեջ: 1993 թ. նոյեմբերին հանրապետության կառավարությունը հարկադրված շրջանառության մեջ դրեց հայկական ազգային դրամը, որն անկախ պետականության գործնական արտահայտություններից մեկն էր: Ազգային արժույթի կիրարկումից հետո Հայաստանը հնարավորություն ձեռք բերեց ինքնուրույն տնօրինելու տնտեսական բոլոր լծակները և կարծես սկիզբ դրվեց կայունության ու բարեփոխումների հիմքերի ստեղծման: Սակայն համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում այն արագ արժեզրկվեց, ինչը ևս նպաստեց սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացմանը: Ազգային դրամի փոխարժեքի պահպանման համար անհրաժեշտ կայունացման հիմնադրամի բացակայությունը հանդիսացավ ապակայունացման ավելի ուժեղ գործոն: Սղաճի մակարդակն արագորեն աճեց, տեղի ունեցավ ժողովրդի խնայողությունների և ավանդների յուրացում: Ժողովրդի ներդրած գումարները խնայողամարկղերում փոշիացան: Միլիարդավոր ռուբլիներ կազմող գումարների փոխարեն ազգաբնակչությունը ստացավ դրանց արժեքից շատ ավելի չնչին արժեզրկված դրամներ, որով գների աճի պայմաններում հնարավոր չէր հոգալ անգամ ամենատարրական կարիքները:

Տնտեսության ծայրահեղ անկայունության, վճարային հաշվեկշռի ծանր վիճակի պայմաններում հանրապետության կառավարությունը 1994 թ. ստացավ Արժույթի միջազգային հիմնադրամի

²¹³ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2002, էջ 29:

²¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2003, էջ 28:

(ԱՄՅ) ֆինանսական օժանդակությունը և նրա հանձնարարականով սկսեց տնտեսական արմատական բարեփոխումների իրականացումը, որի զաղափարախոսությունը պարզապես հանգում էր 3 հիմնախնդիրների իրականացման՝ ազատականացում, սեփականաշնորհում և կայունացում՝ դրամական զանգվածի կոշտ պլանավորման միջոցով: Նման քաղաքականություն կիրառվեց Ռուսաստանում, այնուհետև՝ ԱՊՀ բոլոր երկրներում:

Սեփական դրամը շրջանառության մեջ դնելը լուրջ կառուցվածքային տեղաշարժեր առաջ բերեց հանրապետության ֆինանսական համակարգում: Ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկը, ձևավորվեցին շուրջ 60 առևտրային դրամատներ ու մասնավոր բանկեր:

Հայաստանի բանկային նոր համակարգը իր ձևավորման և զարգացման ընթացքում անցել է երեք փուլ:

Առաջին փուլում (1988-1992 թթ.) ձևավորվող շուկայական կապերի ազդեցության ներքո կազմավորվեցին բանկային գործի հիմքերը: Հայաստանում գործող բանկերի մեծ մասը վերակազմավորվեց բաժնետիրական ընկերությունների՝ մասնավորապես Արդշինբանկը, Ազրոբանկը և Հայներարտբանկը: Մինչև 1992 թ. հունվարի 1-ը Կենտրոնական բանկի որոշ սահմանափակ գործառույթներ կատարում էր Հայաստանի Պետբանկը, որը, սակայն, ի վիճակի չէր լուծելու բանկային համակարգի առջև ծառայած խնդիրները: Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Պետբանկը չուներ իրավասություն՝ վերահսկելու և կարգավորելու բանկերի գործունեությունը: Բացի պետական ավանդական բանկերից, ՀՀ-ում գործում էին նաև 45 նոր ստեղծված առևտրային բանկեր, որոնք հիմնականում վարկավորում էին իրենց բաժնետերերին և նրանց հետ կապված անձանց: Ստեղծվել էին բարենպաստ պայմաններ այս բանկերի կողմից կամայական գործողությունների իրականացման համար, բանկային համակարգում տիրում էր թողտվության մթնոլորտ, իսկ բանկային կապիտալի համարժեքության ցուցանիշները գտնվում էին անթույլատրելի ցածր մակարդակի վրա. բանկային կապիտալի մեծությունը կազմում էր ակտիվների 2,2%-ը²¹⁵: Արդյունքում, օրինակ, 1992 թ. Հայխնայբանկն անվճարունակ գտնվեց իր ավանդատուների հանդեպ՝ չկարողանալով մարել իր պարտավորությունները:

Երկրորդ փուլը (1992-1994 թթ.) բնութագրվում էր առկա հիպերինֆլյացիայի պայմաններում բանկային համակարգի էքստենսիվ աճով: Մոնոբանկային համակարգը վերջնականապես վերակառուցվեց երկաստիճան համակարգի՝ մի կողմից ի դեմս ՀՀ Կենտրոնական բանկի, որը ստանձնեց կարգավորիչ և վերահսկիչ գործառույթներ, մյուս կողմից՝ առևտրային բանկերի: Այս փուլում բանկային վերափոխումները սկսվեցին 1993 թ. ապրիլին «Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքների²¹⁶ ընդունմամբ և ազգային դրամը շրջանառության մեջ մտցնելով: Վերոհիշյալ օրենքների ընդունմամբ ապահովվեց կենտրոնական բանկի անկախությունը գործադիր իշխանությունից և նրա ինքնուրույնությունը դրամավարկային քաղաքականության բնագավառում:

Սակայն նոր ձևավորվող բանկային համակարգում տիրում էր անմխիթար իրավիճակ: Պետության մասնակցությունը բանկերի կապիտալում գերակշիռ դիրք էր գրավում, նույնիսկ երբ դրանք վերակազմավորվեցին բաժնետիրական ընկերությունների: Վատացավ բանկերի վարկային կառուցվածքը, որը ժամկետանց պարտավորությունների ծավալի մեծացման և ակտիվների դասակարգման կարգի բացակայության հետևանք էր: Այս ամենի հետ մեկտեղ Կենտրոնական բանկը վարում էր մեղմ դրամավարկային քաղաքականություն, որը ոչ մի կերպ չէր օժանդակում իրավիճակի բարելավմանը: Այս փուլն ուղեկցվում էր իրական տոկոսադրույքի բացասական արժեքով և ազգային արժույթի (ռուբլու, հետագայում դրամի) փոխարժեքի անկման հսկայական տեմպերով, ինչը նախադրյալներ ստեղծեց ֆինանսական շուկայում կարճաժամկետ սպեկուլյատիվ գործարքների հաշվին հսկայական շահույթ ստացող բանկերի առաջացման ու տարածման համար: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ բանկային գործունեության համար տրվող լիցենզիան բավականին մատչելի էր: Այս պայմաններում բանկերը բարձր ռիսկերից խուսափում էին ակտիվների կառուցվածքի սահմանափակման հաշվին, որը հանգեցրեց արտադրության ու ծառայությունների ոլորտների վարկավորման ճգնաժամի: Արդյունքում բանկային հատվածի դերը, վերարտադրության գործընթացը աղճատվեցին:

Երրորդ փուլը, որի սկիզբը կարելի է համարել 1995 թվականը, բնութագրվում է գործունեության նոր պայմաններին բանկային հա-

²¹⁵ Տե՛ս Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, Եր., 1999, էջ 237:

²¹⁶ Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 480-504:

մակարգի համակերպմամբ՝ պայմանավորված ֆինանսական ոլորտի և տնտեսության որոշակի կայունացմամբ: Այն առանձնահատուկ էր մի շարք առումներով: Մշակված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում խնդիր էր դրված կասեցնել տնտեսության անկումը, նախադրյալներ ստեղծել բարեփոխումների աշխուժացման համար: Ու թեև առկա արտաքին գործոնները մնացել էին անփոփոխ և դեռ չէին վերացել անցման շրջանին հատուկ դժվարությունները, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հաջողվեց ոչ միայն կասեցնել անկումը, այլև ապահովել որոշակի տնտեսական աճ: Տնտեսական իրավիճակի փոփոխությունները, մասնավորապես գների և դրամի փոխարժեքի կայունացումը, վարկերի ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքների տարբերության ու ֆինանսական շուկայի եկամտաբերության նվազումը, ստիպեցին բանկերին արմատապես վերանայել իրենց դիրքերը: Բանկերի մեծ մասը, հատկապես ֆինանսական շուկայում կարճաժամկետ սպեկուլյատիվ գործարքների հաշվին շահույթ ստացողները, չդիմանալով շուկայի պահանջներին, սնանկացան: Վարկային ռիսկի բարձր աստիճանը թույլ չէր տալիս մեծացնել արտադրության վարկավորման ծավալները, որի արդյունքում տնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռը շարունակում էր մնալ չնչին:

ՀՀ բանկային համակարգի հետագա զարգացման միտումները պայմանավորված էին 1995 թ. ընթացքում երկրի տնտեսության ընդհանուր վիճակի կայունացմամբ ու աստիճանական աճով, սղաճի զսպման, ազգային արժույթի կայունացման գործընթացներով, ինչպես նաև բանկային գործունեության կարգավորման նորմատիվային դաշտի առանցքային հիմնադրույթների ձևավորմամբ: Վերոհիշյալ գործոնները նպաստեցին բնակչության և բանկերի միջև փոխադարձ վստահության մակարդակի համեմատական բարձրացմանը: Կարգավորման դաշտի հստակեցումը և աստիճանաբար միջազգային ստանդարտներին մոտենալը բարձրացրեց Հայաստանի բանկային համակարգի նկատմամբ օտարերկրյա գործարարների վստահությունը, որի հետևանքով 1995 թ. ընթացքում նկատվեց օտարերկրյա կապիտալի զգալի ներհոսք:

1995 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ընդհանուր կապիտալն աճեց 2,2 անգամ, որը հիմնականում պայմանավորված էր բանկային կապիտալի նկատմամբ ներկայացվող պահանջների խստացմամբ և օտարերկրյա կա-

պիտալի մասնակցությամբ բանկերի ստեղծմամբ: Կապիտալի աճը, իր հերթին, մեծացրեց բանկերի հնարավորությունները՝ միջոցների ներգրավման և ակտիվային գործառնությունների ընդլայնման առումով:

1996-2000 թթ. ի հայտ եկավ բանկային կապիտալի կենտրոնացման միտում, որն արտահայտվեց բանկերի թվի կրճատմամբ: Կայունացավ բանկերի քանակը, որի հետ կապված տեղի ունեցան շոշափելի տեղաշարժեր:

1997 թվականի ընթացքում բանկային կապիտալն աճեց 47%-ով²¹⁷: Միաժամանակ աճեցին բանկային պարտավորությունների ծավալները: Որակական փոփոխություններ կատարվեցին ակտիվների կազմում, մասնավորապես զգալիորեն բարելավվեց վարկային պորտֆելի որակը:

Բանկային գործունեության կարգավորման դաշտի հետագա ձևավորումը կանխորոշվեց 1995-2002 թթ. ընթացքում իրականացված հետևողական քաղաքականությամբ, որը նպատակաուղղված էր հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովմանը, ֆինանսական շուկայում համարժեք բանկային կառույցների ձևավորմանը և տնտեսության բանկային սպասարկման արդյունավետ համակարգի ստեղծմանը, ինչպես նաև միջազգային պրակտիկայում ընդունված չափանիշների կիրառմանն անցնելու միջոցով համաշխարհային ֆինանսական ենթակառուցվածքների հետ ՀՀ բանկային համակարգի ինտեգրացմանը: 1996-2002 թթ. ընդունվեցին «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի սնանկացման մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Գրավի մասին», «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքները²¹⁸: Բանկային նոր օրենսդրության հաստատումից հետո, ելնելով դրա պահանջներից, ընդունվեցին կանոնակարգեր ու մեկ կանոնագիրք, որոնցում համակարգվեց և ամբողջական տեսքի բերվեց բանկային գործունեության կարգավորման նորմատիվային ամբողջ դաշտը: ՀՀ կենտրոնական բանկը մշակեց բանկային համակարգի առողջացման ծրագիր, որը սկզբնական փուլում նախատեսում էր պետական մասնակցությամբ խոշոր բանկերի վերակազմա-

²¹⁷ Տե՛ս Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, էջ 239:

²¹⁸ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու. 1995-1999 թթ., հ. Ա., էջ 350-422, հ. Դ., եր., 2001, էջ 727-744, 985-1005:

վորում՝ դրանց միաձուլման ճանապարհով: Սակայն հետագայում այդ իսկ բանկերի շահագրգիռ նախաձեռնությամբ ներկայացվեցին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցվեցին իրենց իսկ կողմից մշակված ֆինանսական առողջացման ու զարգացման ծրագրեր, որոնց հետևողական և արդյունավետ իրականացումը թույլ տվեց աստիճանաբար դուրս գալ ստեղծված ծանր ֆինանսական դրությունից և ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալները կապիտալի բավարար ապահովման, վճարունակության վերականգնման և իրացվելիության մակարդակի բարձրացման համար: Նշված ծրագրերի իրականացման շնորհիվ լուծվեց ևս մեկ կարևոր խնդիր. բանկերի կառավարման մարմիններում վերացվեց կառավարության անդամների մասնակցությունը, ինչպես նաև բանկերի կանոնադրական հիմնադրամներում էապես՝ 7,8%-ով նվազեց պետության մասնակցության չափը՝ տարեվերջին կազմելով ընդամենը 3,6%²¹⁹:

Այսպիսով, բանկային համակարգում ձեռնարկված վերափոխումների շնորհիվ անհրաժեշտ և բավարար նախադրյալներ ստեղծվեցին ՀՀ բանկային համակարգի հետագա տարիների բնականոն գործունեության ապահովման ու զարգացման համար: Արդյունքում ֆինանսական շուկայի միակ կայացած համակարգը բանկային էր: 2001 թ. դրությամբ ՀՀ-ում գործում էին 31 բանկեր՝ 192 մասնաճյուղերով, 169 գործառնական գրասենյակներով, որոնց ընդհանուր ակտիվները կազմում էին 236,3 մլդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 33,6 մլդ դրամ, որը համապատասխանաբար կազմում էր ՀՆԱ-ի 23 և 3,2%-ը: 1995-1997 թթ. անցնելով կայացման փուլը՝ բանկային համակարգը դարձավ անցումային շրջանի տնտեսության ամենակայուն հենասյուներից մեկը և անգամ ստանձնեց ֆինանսական շուկայի, չձևավորված կառույցների ֆինանսական գործառույթների հիմնական իրականացնողի դերը: Սակայն ֆինանսավարկային քաղաքականության բնագավառում որոշակի ձեռքբերումների հետ միասին նկատելի են առանձին սխալներ, թերություններ ու բացթողումներ, որոնց վերացումը հրատապ խնդիր է:

Առաջին՝ Դեռևս լիարժեք չի կայացել ֆինանսական շուկայի ապահովագրական համակարգը, որը կարող է բացառիկ կարևոր դեր ունենալ իրական հատվածի զարգացման ու սոցիալական

խնդիրների լուծման գործում: Գործող օրենսդրությամբ սահմանված ապահովագրական համակարգի գործունեության կանոնակարգումը խիստ հեռու է միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումներից ու մեխանիզմներից: Ըստ էության գրեթե զրոյական մակարդակի վրա են կյանքի, բժշկական ապահովագրության ոլորտները, որոնք բացի ընդգծված սոցիալական ուղղվածությունից, կարող են նպաստել նաև երկրի ներսում երկարաժամկետ փոխատվական և ներդրումային միջոցների ձևավորմանը:

Երկրորդ՝ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը կայունության ապահովումն էր: Եթե 1995-1997 թթ. ՀՀ-ում ապահովվեց սղաճի ցածր մակարդակ, ապա 1997-2000 թթ. այն չդարձավ երկարաժամկետ գործոնների վրա հիմնված կայուն ու կանխատեսելի հանգամանք:

Եթե 1990-1999 թթ. ժամանակահատվածում հանրապետությունում գործել է 90-ից ավելի բանկ, ապա 2000 թ. նրանցից միայն 32-ն էին մնացել ասպարեզում²²⁰: Հասկանալի է դառնում բնակչության անվստահությունը բանկերի հանդեպ: Տասնյակ հազարավոր խաբված ավանդատուների բանակը, ֆինանսական շուկայում տեղի ունեցող տատանումները առևտրային բանկերին զրկեցին ազգաբնակչության միջոցները ներգրավելու հնարավորությունից: Գործող առևտրային բանկերի ֆինանսական միջոցների ծավալը բավական փոքր է և ընդհանուր կապիտալի ցուցանիշով կազմում է մոտ 10 մլրդ դրամ՝ մոտ 20 մլն ԱՄՆ դոլար²²¹:

Երրորդ՝ 1995-97 թթ. երկու տարիների կոշտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը որոշ չափով կանգնեցրեց գնաճը և իրական եկամուտների անկումը: Պետական ունեցվածքի զանգվածային սեփականաշնորհման, շուկայի ազատականացման, բանկային համակարգի բարեփոխումների, շուկայական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի ստեղծման փորձերը շատ չնչին տնտեսական աճ արձանագրեցին, որը 1997 թվադեղնից ու շարունակվում է մինչև այժմ: Զբաղեցված անհավասարակշռությունը ներքին պահանջարկի և ՀՆԱ-ի միջև: Համաձայն ՀՀ վիճակագրության տեղեկատվության՝ իրական եկամուտներն

²¹⁹ Տե՛ս Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, էջ 248, ՀՀ ԿԲ-ի 2001 թ. տարեկան հաշվետվություն, Եր., 2001, էջ 18:

²²⁰ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 46, Հայաստան 2001, վիճակագրական գրքուկ, էջ 73:

²²¹ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 46.

աճել են 4%-ով, իսկ ծախսերը՝ 8%-ից ավելի: Հայաստանում 1999 թ. իրական ՀՆԱ-ն կազմել է 1989 թվականի 42%-ը միայն, ինչը ցածր է ԱՊՀ միջին ցուցանիշից²²²:

Չորրորդ՝ Տնտեսության վրա բացասական խոր ազդեցություն էին գործում նաև արտաքին ցնցումները և հատկապես 1998 թ. Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամը, որոնց հետևանքով մի կողմից՝ կրճատվեց կամ լրիվ վերացավ ՀՀ ձեռնարկությունների զգալի մասի արտադրանքի նկատմամբ պահանջարկը, իսկ մյուս կողմից՝ կտրուկ նվազեցին մասնավոր դրամական փոխանցումները:

Հինգերորդ՝ չնայած կառավարության կողմից բանկային համակարգի վերակառուցմանն ուղղված միջոցառումներին, այնուամենայնիվ այն դեռևս չի կարողանում լուծել ազգաբնակչության համար մեծ նշանակություն ունեցող հետևյալ խնդիրները. ա) միջին և փոքր վարկերի տրամադրում մեկ տարուց ավելի ժամկետով ու մատչելի տոկոսադրույքներով, բ) ֆիզիկական անձանց և անհատ ձեռներեցների վարկավորում, գ) սոցիալական և բնապահպանական ծրագրերի վարկավորում, դ) կադրերի պատրաստման և վերապատրաստման, մասնավոր բուհերի և դպրոցների վարկավորում և այլն:

Վեցերորդ՝ ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ բանկային կապիտալի չափի հարաբերակցությունը գնալով նվազում է: Դա վկայում է բանկային և տնտեսության հատվածների միջև խոր ջրբաժանի առկայության մասին: Այս իրավիճակը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ, ինչպես տնտեսության, այնպես էլ բանկային համակարգի զարգացման համար: Այդ առումով կարևորվում է դեպոզիտների ապահովագրության ինստիտուտի կայացումը, որը հնարավորություն կտա առավելագույնս բանկային համակարգ մղելու բնակչության ունեցած ազատ միջոցները:

Յոթերորդ՝ Հանրապետությունում ֆինանսավարկային քաղաքականությունն իրականացվում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների օժանդակությամբ: Դա հանգեցրեց միջազգային արժույթային կազմակերպություններից հանրապետության ֆինանսատնտեսական կախվածության ուժեղացմանը: 1993-99 թթ. հանրապետությանը տրամադրված արտասահմանյան վարկերի պայմանագրային գումարը կազմեց 1250 մլն դոլար²²³, որի հիմնա-

կան մասը հատկացվեց բյուջեի դեֆիցիտի փակմանը, իսկ մի մասը՝ ազգային արժույթի ամրապնդմանը և ուրիշ ոչ արտադրական նպատակների: Փոխանակ վարկերն օգտագործվեին արտադրական ենթակառուցվածքների, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար, հանրապետության դակավարությունը գերադասեց դրանց ոչ նպատակային օգտագործումը և փոշիացումը: Դրա արդյունքում զարգացավ ստվերային տնտեսությունը և կլանային համակարգը «բենզինի», «շաքարավազի», արտասահմանյան ապրանքների և այլ բնագավառներում: Կլանները վայելում են ազդեցիկ անձանց հովանավորությունը, որն իրականում նրանց մենաշնորհային իրավունքներ է տալիս, հաճախ ազատում հարկերից (կամ դրանց մի մասից) և այլն:

Պատահական չէ, որ Ազգային ժողովը ստեղծեց օտարերկրյա վարկերի և փոխառությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող հանձնաժողով, որը 1999 թ. փետրվարին հրապարակեց պաշտոնական եզրակացություն՝ բացահայտելով հսկայական չափերի հասնող գումարների անարդյունավետ օգտագործման փոշիացման և ծախսման աղաղակող փաստեր:

Ութերորդ՝ Հանձնաժողովի հաշվարկներով 14 վարկերի օգտագործման արդյունքում պետությանը հասցվել էր շուրջ 373 մլն. դոլարի վնաս²²⁴: Սակայն այդ իրականացնողները որևէ պատժի չարժանացան: Հանրապետության տնտեսական զարգացման գլխավոր խոչընդոտներից էր այն, որ տասը տարուց ավելի ժամանակահատվածում այդպես էլ չձևավորվեցին ազատ մրցակցային դաշտ և հավասար պայմաններ բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար՝ թերևս բացառություն էր բանկային համակարգը: Ներկայումս բանկային համակարգն իրականացնում է շուրջ 10 երկարաժամկետ վարկավորման ծրագիր: Միայն 2000 թ. ՀՀ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն աճեցին 45%-ով, այդ թվում, գրեթե կրկնապատկվել են երկարաժամկետ՝ մեկ տարուց ավելի վարկերը²²⁵:

2000 թ. հանրապետության դրամական զանգվածի մոտ 55%-ը կանխիկ դրամ էր, որի 90%-ից ավելին շրջանառվում է բանկային

²²² Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 65:

²²³ Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2000, էջ 66:

²²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն, 1999, եր., 2002, էջ 10:

²²⁵ Տե՛ս Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, 2000 թ. դեկտեմբեր, էջ 8:

համակարգից դուրս²²⁶: Ըստ պաշտոնական տվյալների բնակչության որոշ մասի մոտ միայն 1997 թ. տարադրամի և դրամի ավելացումը կազմել է մոտ 60 մլն ԱՄՆ դոլար²²⁷: 1998-2002 թթ. ժամանակաշրջանում 37 բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է ավելի քան երկու անգամ և կազմել 40,4 մլրդ. դրամ, ինչը հիմնականում պայմանավորված էր բանկերի կանոնադրական հիմնադրամի 17,3 մլրդ. դրամ աճով²²⁸: Ֆինանսական տարբեր կարգի դրամական փոխանցումները (բանկային և փոստային փոխանցումներ, արտագնա աշխատանքների դիմաց մուծվող գումարներ և այլն) հասնում են մեծ չափերի, դրանք տարեկան կազմում են մոտ 250 մլն ԱՄՆ դոլար²²⁹: Այսօր ակնհայտ է, որ ստվերային տնտեսությունն ունի խոր արմատներ, և դրա հաղթահարման համար անհրաժեշտ է ձեռնարկել վճռական միջոցներ: Չնայած հանրապետության Ազգային ժողովը 2000 թ. հոկտեմբերին քննարկեց և երկրորդ ընթերցմամբ ընդունեց հակամենաշնորհային օրինագիծը, սակայն մինչև օրս այս համակարգում շուկայական մեխանիզմների ու ընձեռած առավելությունների մեծ մասը չի գործում՝ հանգեցնելով հատկապես մասնավոր սեփականության բաշխման խախտմանը:

Պետության ծանր տնտեսական վիճակը հանգեցնում է քաղաքացիների եկամուտների անկման և պատճառ դառնում աշխատատեղերի կործանման:

Իններորդ` Հայաստանի վարկավորումը հիմնականում կատարվում է համաշխարհային բանկից և Արժույթի միջազգային հիմնադրամից: Այս կազմակերպությունները շատ հաճախ հանդես են գալիս թելադրողի դերում, և իրենք են որոշում հանրապետության այս կամ այն ճյուղի զարգացումը: Այսպես, օրինակ, Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավարությունը հայտարարում է, որ Հայաստանը ծանր արդյունաբերություն չպետք է ունենա: Նրան ձեռնադր էր ոչ թե մեքենաշինության զարգացումը, որն ավելի մեծ կապիտալ ներդրումներ է պահանջում, այլ՝ թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը, որը կարող էր կարճ ժամանակում մեծ շահույթ ապահովել: Այժմ խիստ անհրաժեշտություն է դառնում հանրապետության վարկային ծրագրի նպատակային օգտագործումը. վարկերը հատ-

²²⁶ Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 73, 74:

²²⁷ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 45:

²²⁸ Տե՛ս Չինգ տարի անց, նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Եր., 2003, էջ 3:

²²⁹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 46:

կապես արդյունաբերության և այլ կարևոր ռեալ ճյուղերի զարգացման շահերին ծառայեցնելը:

Արտասահմանյան վարկերի ոչ հաշվենկատ, աննպատակային օգտագործումը, վճարային հաշվեկշռի ճեղքվածքը, բյուջեի դեֆիցիտի առկայությունը, արտադրական ենթակառուցվածքներում անհրաժեշտ ներդրումների իրականացումը հանգեցրին նրան, որ Հայաստանի արտաքին պարտքը 1991 թ. զրոյական մակարդակից 1997 թ. հասավ 694 մլն-ի, իսկ 2001 թ. սկզբին կազմեց 859 մլն դոլար²³⁰: Արտասահմանյան վարկերից հարյուր միլիոնավոր դոլարներ հանգրվանեցին կաշառակեր պաշտոնյաների գրպաններում:

Հանրապետության արտաքին հիմնական պարտատերերն են միջազգային ֆինանսական կազմակերպությունները, իսկ երկկողմանի վարկային պայմանագրերով նաև՝ Ռուսաստանի Դաշնությունը, Եվրոպական միությունը, Թուրքմենստանը: Հանրապետության արտաքին պարտքը հետզհետե ձեռք բերեց ինքնաաճման միտում, և պետությունը ստիպված է հայթայթել նոր վարկեր՝ հները մարելու համար: 1997-1998 թթ. արտաքին պարտքի սպասարկման ծավալները հասնում են տարեկան շուրջ 40 մլն դոլարի, իսկ 2000 թվից սկսած՝ տարեկան 70 մլն-ի սահմանագծին²³¹: Հետևաբար, ուժեղանում է ճնշումը տնտեսական աճի վրա: Ներկայումս պարտքի գումարը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 45,5%: Միևնույն ժամանակ արտաքին պետական պարտքի հարաբերակցությունը արտահանման ծավալին գերազանցում է այդ ցուցանիշի համար սահմանված վերին սահմանը: Նկատի ունենալով արտահանման ցածր ծավալները և մոտ ապագայում դրա աճի ոչ մեծ տեմպերը՝ անխուսափելիորեն առաջանալու է պարտքի վերածնակերպման, ինչպես նաև ներքին պարտքի կուտակման հաշվին արտաքին պարտքի սպասարկման անհրաժեշտություն: Ելնելով այս վիճակից՝ կառավարությունը ապագա տասնամյակում պետք է խիստ սահմանափակ վարկեր վերցնի, այն էլ՝ միայն տնտեսության ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի համար արտոնյալ պայմաններով:

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում մեծ դեր ունեն մարդասիրական օգնությունը (հատկապես 1992-1994 ծանր տարի-

²³⁰ Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 73:

²³¹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 65, Մարդկային զարգացման զեկույց 2000, էջ 15:

ներին), որի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 800 մլն դոլար²³²: 1996-99 թթ. հանրապետությանը տրվող օգնության ընդհանուր ծավալում պաշտոնական նվիրատվությունները կազմել են 350 մլն ԱՄՆ դոլար: Իսկ 1994-1998 թթ. հանրապետությունից դուրս գնացած անձանց մասնավոր փոխանցումներն իրենց հայրենակիցներին, հարազատներին և այլն կազմել են 850 մլն ԱՄՆ դոլար²³³: Այս օգնություններն, անշուշտ, նպաստեցին բնակչության մի մասի վիճակի որոշակի բարելավմանը:

Տասներորդ` Չարգացման արդի փուլում վերանայման կարիք ունի բանկային համակարգի կարգավորման ու վերահսկողության հայեցակարգը, քանզի օբյեկտիվորեն փոխվել են կարգավորման օբյեկտները` բանկերը: Մյուս կողմից պետք է հաշվի առնել ֆինանսական շուկայի իրական հատվածի բարեփոխումների հետևանքներն ու պահանջները: Նպատակահարմար է վերանայել բանկային համակարգի երկաստիճան կառուցվածքը: Արդեն իսկ շերտավորում ունեցող և կայացած սուբյեկտների պարագայում այն կարող է անցնել բազմաստիճան դասակարգման, որի արդյունքում կշահեն և՛ ֆինանսական շուկան և՛ նրա ծառայողները, սպառողները:

ե. Հարկային քաղաքականություն

Ֆինանսավարկային ոլորտում վճռորոշ տեղ է զբաղեցնում հարկային քաղաքականությունը, որը հիմնականում ուղղված է բյուջեի համալրմանը և մասնավոր սեկտորի զարգացմանը: Հայաստանը սկսել է իրականացնել իր անկախ հարկային քաղաքականությունը` սկսած 1992 թվականից, սկզբում նմանօրինակելով Ռուսաստանին, հետագայում վարելով ավելի ինքնուրույն քաղաքականություն: ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկերի մասին` շահութահարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի (ուղղակի հարկեր), ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, պարզեցված հարկի մասին օրենքներով, ինչպես նաև հաստատագրված վճարների մասին օրենքով, որը հանդիսանում է շահութահարկը և ավելացված արժեքի հարկը փոխարինող վճար:

Հանրապետության անկախության առաջին տարիներին հարկային քաղաքականությունն ուղղված է եղել հարկային բազայի ընդ-

լայնմանն ու հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը, սակայն հաշվի չի առնվել հարկային բեռի ազդեցությունը տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա: Եիշտ է 1997-2000 թթ. վերանայվեց հարկային քաղաքականությունը. հարկային օրենսդրությունն էական բարեփոխումների ենթարկվեց, երբ ընդունվեցին հարկային հիմնական նոր օրենքները` հիմնված առավալապես միջազգային չափանիշների վրա: Բայց դա չթեթևացրեց հարկային բեռը եկամտահարկի և սոցիալական պարտադիր վճարումների գծով, այն հարկատեսակների, որոնք ուղղակիորեն կապված են արտադրողների և բնակչության եկամուտների հետ: 1997 թ. ընդունվեցին «Շահութահարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Սոցիալական ապահովման պարտադիր վճարների մասին», իսկ 1998 թ.` «Տեղական տուրքերի մասին», «Մաքսատուրքերի մասին», 2000 թ.` «Պարզեցված հարկի մասին» և այլ օրենքները²³⁴:

Չնայած այս օրենքներով որոշակի փոփոխություն մտցվեց նախկինում բացառապես ձևական բնույթ ունեցող հարկային օրենսդրության մեջ և գործող համակարգում տեղի ունեցավ հարկային բեռի թեթևացում ի հաշիվ շահութահարկի դրույքաչափերի բացարձակ նվազեցման, սակայն օրենսդրական ոլորտում մնում են բազմաթիվ չլուծված խնդիրներ. մասնավորապես օրենքով բոլորովին կարգավորված չեն սոցիալական նպաստների ոլորտը, ոչ բանկային ֆինանսական հարստությունների գործունեությունը և այլն:

Դեռևս տնտեսության կայուն ու բարձր տեմպերով աճի խթանումը չի վերածվել այնպիսի հարկային քաղաքականության, որը լուծում կտա ընթացիկ խնդիրներին: Եթե 1998 թ. հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկի չհարկվող շենը 1 մլն. դրամի փոխարեն սահմանվեց 2 մլն. դրամ, իսկ 1999 թ. հունվարի 1-ից` 3 մլն. դրամ, ապա 2001 թ. հունվարի 1-ից սահմանվեց 10 մլն. դրամ, իսկ 2002 թ. հունվարի 1-ից` 30 մլն. դրամ, 2003 թ. հունվարի 1-ից` 50 մլն. դրամ: Նշված շենից ցածր շրջանառություն ունեցողները համարվեցին պարզեցված հարկ վճարողներ²³⁵: 1999 թ. հունվարից չհարկվող եկամտի ամսական նվազագույն շենը կազմեց 17 հազար դրամ, իսկ

²³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999) գ. Բ, էջ 202-232, 359-380, 761-790, 304-310, գ. Գ էջ 223-229:

²³⁵ Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», Հայաստան 1(21), հունվար, 2003, էջ 66:

²³² Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 26, 27:

²³³ Տե՛ս նույն տեղում, էջ 27:

2001 թ.՝ 20 հազար դրամ²³⁶: Սակայն հարկային համակարգը դեռևս ունի ազատականացման և տնտեսության ստվերայնության կրճատման հնարավորություններ: Մասնավորապես, ավելացված արժեքի հարկի դրույթաչափը բավականաչափ բարձր է (20%)²³⁷: Հարկման հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցավ 2000 թ. օգոստոսին «Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը²³⁸, որով այս հարկատեսակի գծով կատարվեցին սկզբունքային մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից հանվեցին այն ապրանքները, որոնք այս հարկատեսակի եկամուտների կազմում էական նշանակություն չունեին (ոսկերչական իրեր, մորթեղեն, կաշվե արտադրանք և այլն): Ակցիզային հարկը հաստատագրվեց ակցիզային հարկով հարկված ապրանքների արտադրության ժամանակ որպես հումք օգտագործվող ակցիզային հարկով հարկված ապրանքների դիմաց մատակարարին վճարված ակցիզային հարկի հաշվարկմամբ:

Վերջին տարիներին հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում 2000 թ. վերջում հաջողվեց տնտեսավարողներին տրոհել հարկման երկու խոշոր խմբերի՝ հաստատագրված և պարզեցված հարկ վճարողների ու շահութահարկը նախընտրող խոշոր հարկատուների: Ընդ որում հարկատուի՝ նշված խմբերից որևէ մեկում հայտնվելը կախված է նաև նրա կամքից, և պետական մարմնի պարտադրանք չէ:

Վերը նշված գործընթացը նաև նպատակաուղղվեց ու հանգեցրեց անուղղակի հարկերի փաստացի գերակայությանը: Հարկային մուտքերի կառուցվածքում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը 2000 թ., 1994 թ. համեմատ, եռապատկվել է և կազմում է շուրջ 70 տոկոս²³⁹: Նշված գերակայությունը ի վերջո նշանակում է, որ հարկման ժանրությունը տեղափոխվում է վերջնական սպառողների, այդ թվում նաև քաղաքացիների վրա: Ներկա իրավիճակում հարկերի

սահմանված գերակայությունը, ստվերային տնտեսությունը և դրա հաշվին նաև շահութահարկի դրույթաչափը էապես նվազեցնելու առումով այլընտրանք չունեն: Այս երևույթը նպաստում է նաև չնչին ներդրումներով մասնավորեցված ընկերությունների կապիտալացմանը և ներքին ներդրումների աճին:

1999-2000 թթ. հարկային քաղաքականության խստացումը և դրա միջոցով տնտեսության ստվերայնության հաղթահարման ուղղված միջոցառումները կրեցին տարերային և անհետևողական ուղղված միջոցառումները կրեցին տարերային և անհետևողական բնույթ, ինչպես անկախության առաջին հինգ տարիներին կատարվող պարզունակ հարկահանությունը, որից ստվերային տնտեսությունը զրեթե չտուժեց, այլ փոխարենը կազմալուծվեց գործարար ակտիվության հիմքը հանդիսացող մանր ու միջին առևտուրը (բիզնեսը): Ուղղակի և անուղղակի տարաբնույթ հարկերն այնպես խեղդեցին մանր ու միջին արտադրողներին, որ վերջիններս, զանգվածաբար սնանկանալով, հեռացան հանրապետությունից: Փակվեցին սննդի, սպասարկման, շինարարության և այլ ոլորտներում գործող հսկայական քանակությամբ ձեռնարկություններ: Ուժեղացավ դրամազլխի արտահոսքը առանց այդ էլ աղքատ ֆինանսական և նյութական պաշարներ ունեցող հանրապետությունից: Դրա փոխարեն մեծացավ ծայրահեղ ունևորներին ծայրաստիճան չթավորներից բաժանող հսկայական անդունդը: Տնտեսական կյանքը հանրապետությունում սկսեց կանգ առնել, և աղքատացած ժողովրդից նորանոր հարկեր հավաքելը դարձավ մշտական զբաղմունք: Հարկային այս ծանր բեռը ավելի ծանրացրեց բնակչության սոցիալական վիճակը:

Առաջիկա մի քանի տարիների ընթացքում, ելնելով տնտեսության զարգացման որոշակի համամասնություններից, պահպանելով հարկային միջոցների խթանիչ ներգործությունը, տնտեսավարողների հարկային ծանրաբեռնվածությունը նպատակահարմար կլինի աստիճանաբար տեղափոխել դեպի որոշակի եկամտային դաշտ: 1998 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը²⁴⁰, որով հարկվող օբյեկտի կազմից հանվեցին հիմնական միջոցների մի զգալի խումբ մեքենաներ ու սարքավորումներ: 2003 թ. սկզբից «Գույքահարկի մասին» օրենքով վերանայվեց հատկապես թանկարժեք գույքի հարկման կարգը՝ առանձնատների և շքեղութ-

²³⁶ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2001, էջ 100-102: Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, էջ 27, 107:

²³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 107:

²³⁸ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000) գ. Գ, Եր., 2000, էջ 343-347:

²³⁹ Տե՛ս ՀՀ ԿԲ-ի 2000 թ. տարեկան հաշվեկշիռը, Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, 2000, դեկտեմբեր 18, էջ 15:

²⁴⁰ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999) գ. Բ, էջ 429-440:

յուն համարվող ավտոմեքենաների համար սահմանելով հարկման ավելի բարձր դրույքաչափեր: 1991թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ մտավ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը²⁴¹, որով օրենսդրական կարգավորում ստացան մինչ այդ ՀՀ կառավարության որոշումներով կանոնակարգվող գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գանձման հարաբերությունները, և միասնականացվեց մինչ այդ կիրառվող բոլոր հաստատագրված վճարների հաշվարկման ու վճարման կարգը: Հարկ է նշել, որ հարկային բեռի հաշվեկշռվածության առումով հարկային եկամուտների կառուցվածքում ընդունելի չէ գույքահարկի խիստ նվազ տեսակարար կշիռը (այն դասվում է ուղղակի հարկերի թվին), քանզի այդ հարկի արդյունավետությունը չնչին է, միևնույն ժամանակ տնտեսական ներգործության արդյունավետությունը՝ զրոյական: Մինչդեռ այս պարագայում այն պետք է ունենա հստակ տնտեսական խթանիչ դեր:

Գույքահարկի պրոգրեսիվ դրույքաչափ պետք է կիրառվի թե՛ անձնական անշարժ և շարժական, թե՛ արտադրական նշանակության գույքի նկատմամբ: Մասնավորապես դա անհրաժեշտ է կիրառել այն մասնավորեցված ընկերությունների նկատմամբ, որոնք ուղղակի գործունեություն չեն իրականացնում: Շահութահարկի և գույքահարկի դրույքաչափերն այս դեպքում որոշակի ձևով պետք է փոխկապակցվեն: Դա կստիպի մասնավորեցման ընթացքում չնչին ներդրումներ կատարած և կառավարելու ցանկություն չունեցող սեփականատերերին կա՛մ աշխատեցնել անգործության մատնված ձեռնարկությունները, կա՛մ դրանք դուրս բերել երկրորդային շուկա, որտեղ դրանց կարող են տիրանալ արդյունավետ կառավարողներ ու ներդրումների պատրաստ անձինք:

Հարկային քաղաքականության արդյունավետության առանցքային հիմնախնդիրներից է կարգազանց հարկատուների նկատմամբ տույժերի ու տուգանքների կիրառումը բացառապես դատարանների իրավասությանը փոխանցելու հարցը, որով վերջապես կվերականգնվի գործող Սահմանադրության պահանջը, ըստ որի անձը սեփականության իրավունքից կարող է զրկվել միայն դատարանի վճռով: Այդ հարաբերությունների կարգավորման համար կարևոր նշանակություն ունեցավ ստուգումների մասին համապա-

տասխան օրենքի ընդունումը, որով խստիվ սահմանափակվեցին կրկնակի ստուգումները, բացի դրանից արգելվեցին կազմակերպության համալիր ստուգումը որևէ պետական մարմնի կողմից:

Անցած տարիների ընթացքում հարկային ոլորտում կիրառվող տուգանային կարգը շատ հաճախ հանգեցրել է հարկատուի համար ֆինանսական ծանր ու անելանելի վիճակների: Ելքը հաճախ հանգել է պետության կողմից համաներումների կիրառմանը, որը ստեղծելով արդարության պատրանք՝ միաժամանակ օրինականացրել է երկակի ստանդարտների կիրառումը: Արդյունքում՝ հարկային պարտքեր կուտակած անձինք ըստ էության պետությունից ստացել են անուղղակի վարկավորում, իսկ օրինապահ հարկատուները, չօգտվելով մնացած հարկային արտոնություններից, օրենքի շրջանակներից դուրս պարտադրվող կանխավճարների հաշվին ստիպված են եղել փակելու անբարեխիղճ հարկատուների ապառքների կուտակումից առաջացող բյուջեի մուտքերի չնախատեսված ճեղքվածքի մի մասը՝ փաստորեն իրականացնելով բյուջեի անտուկոս վարկավորում: 1997 թ. վերջում և ամբողջ 1998 թ. ընթացքում կիրառված համաներումը նախ հանգեցրեց ապառքների նվազած գումարի նկատմամբ հաշվանցումների կրկնապատկմանը, իսկ 1998 թ. վերջում գրեթե կրկնապատկեց ապառքների գումարը: 2001 թ. հունվարին պետական բյուջեի ապառքները կազմել են 134 մլն դրամ, որը հավասար է 2000 թ. բյուջեի հարկային եկամուտներին²⁴²:

2000 թ. հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններն առավելապես վերաբերվում էին շահութահարկի և եկամտահարկի սկզբունքներին: Շահութահարկի միասնական սանդղակի սահմանումը հավասար պայմաններ է ստեղծել ներդրողների համար և նպաստում է մրցունակ ձեռնարկությունների կապիտալացման մակարդակի բարձրացմանը: Եկամտահարկի հարկման մեխանիզմում պրոգրեսիվ հարկման սկզբունքից հրաժարվելը նպաստում է տնտեսության ստվերայնացման ամենատարածված դրսևորումներից մեկի՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ոչ լրիվ հայտարարագրման նվազեցմանը: 1998-2002 թթ. Հայաստանում իրականացված հարկային քաղաքականությունը հիմնականում բնորոշվեց հարկային խոչընդոտների առավելագույն վերացմամբ: Տնտեսության ստվերային հատվածի, ինչպես նաև հարկման

²⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 648-677:

²⁴² Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000), գ. 9, էջ 128, 130:

փաստացի բազայի ընդլայնման շնորհիվ: ՀՆԱ-ի նկատմամբ հարկման մակարդակը 1997 թ. համեմատությամբ 2002 թվականին աճեց ավելի քան 1,8 տոկոսով²⁴³: Այդ ժամանակահատվածում ներդրումների և զբաղվածության խրախուսման նպատակով շարունակաբար նվազեցվում էին հարկային դրույքաչափերը:

Հարկային հարաբերություններում վերջնականապես պարզություն մտցնելու նպատակով անհրաժեշտ է ընդունել այն իրողությունը, որ ներկայիս սոցիալական ապահովագրության պարտադիր վճարներն իրենց տնտեսական բովանդակությամբ առնչություն չունեն սոցիալական ապահովագրության հետ: Աշխատողը կամ նրա գործատուն, փաստացի, առանց որևէ պայմանագրային հարաբերության և կոնկրետ շահի վճարում է ոչ թե ապահովագրավճար, այլ սոցիալական հարկ: Այս դեպքում աշխատողի համար միևնույն է, թե որքան կվճարի գործատուն իր համար, քանի որ այդ վճարն իր հետագա կենսաթոշակի հետ որևէ կապ չունի և կոչված է լուծելու ներկայիս կենսաթոշակառուների և սոցիալապես այլ անպաշտպան խմբերի սոցիալական նվազագույն ապահովման խնդիրը: Նպատակահարմար է նշված վճարը փոխարինել սոցիալական հարկով և դրա գանձման վարձատրությունը ամբողջովին փոխանցել հարկային մարմիններին, որը կնպաստի գանձումների մակարդակի բարձրացմանը, պետական ապարատի զգալի կրճատմանը և միաժամանակ կապիտանվի սոցիալական հարկի վճարումը գործատուների կողմից: Դրա ներդրմամբ երկրում վերջնականապես կտարանջատվեն սոցիալական ապահովագրության համակարգերը:

Արտահանմանը խոչընդոտող գործոնի է վերածվել ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարների վերադարձման խնդիրը, որի լուծումը պահանջում է այդ նորմի կիրառումը տարածել միայն արտահանողների վրա՝ առավելագույնս պարզեցնելով գերավճարների վերադարձման ընթացակարգը: 1998 թ. սկսած դրական ձեռքբերումներ նկատվեցին հանրապետությունում իրականացվող մաքսային քաղաքականության բնագավառում: Այն նպատակ ուներ ապահովելու մաքսային սահմանով և տարածքում ապրանքաշրջանառության նկատմամբ մաքսային արդյունավետ հսկողությունը, արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար միասնական և մրցակցային պայման-

ների ձևավորումը, ներքին շուկայի պաշտպանությունը:

1998-2002 թթ. հանրապետությունում իրականացված տնտեսական բարեփոխումների շրջանակներում մաքսային օրենսդրությունը բազմիցս ենթարկվել է լրամշակումների, մաքսային հարաբերությունների և հիմնախնդիրների օրենսդրական կարգավորման՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու, մաքսային քաղաքականությունը տնտեսական դիմամիկ աճին ներդաշնակելու, միջազգային ինտեգրացիոն գործընթացներին Հայաստանի մասնակցությունն ապահովելու նպատակով:

1999 թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտած «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքով սակագնային կարգավորման համակարգում պահպանվեց վերջնական սպառման ապրանքների համար արժեքային մեթոդով հաշվարկվող ներմուծման մաքսատուրքերի 10 տոկոսը, իսկ արտադրական նշանակության ապրանքների և արտահանվող մաքսատուրքերի 0 տոկոս դրույքաչափերի համակարգը:

2001 թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտավ ՀՀ նոր մաքսային օրենսգիրքը, որով լուծում ստացան մի շարք կարևորագույն հիմնահարցեր՝ մաքսային գործի կատարելագործման և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների գործունեության համար արդյունավետ պայմաններ ապահովելու նպատակով: Օրենսգրքով հստակեցվել են մաքսային արժեքի որոշման կարգը, ապրանքների ծագման երկրի որոշման կանոնները, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության գործում մաքսային մարմինների գործառույթները կանոնակարգող նորմերը, հիմնահարցերը: Առավելագույնս կարգավորվել և հստակեցվել են հայտարարագրման, մաքսային ձևակերպումների, հսկողության և մի շարք այլ գործառույթների ու մաքսային գործի բաղադրիչների դրույթներն ու ընթացակարգերը: Օրենսդրությամբ ամրագրվել են մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող անձանց իրավունքներն ու դրանց սահմանափակումների հիմքերը: Սակագնային կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով, մաքսատուրքերի 0 և 10 տոկոս դրույքաչափերի համակարգին զուգահեռ, որոշ ապրանքների համար սահմանվեցին մաքսատուրքերի հաստատագրված դրույքաչափեր, որոնք կազմում են այդ ապրանքների մաքսային արժեքի 10-12 տոկոսը: Ոչ սակագնային

²⁴³ Տե՛ս Հինգ տարի անց, նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, էջ 5:

կարգավորման համակարգում հստակ սահմանվեցին մաքսային սահմանով որոշ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման արգելքներ և սահմանափակումներ, որոնք հիմնականում վերաբերում են այն դեպքերին, երբ ապրանքներն ու տրանսպորտային միջոցները վտանգ են ներկայացնում պետական և ազգային անվտանգության, հասարակական կարգի, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, ներքին սպառողական շուկայի պաշտպանության համար և այլն: Մաքսային քաղաքականության շրջանակներում կատարվում է նաև տարածաշրջանում ազատ առևտրի պայմանագրերի կնքմանն ու վավերացմանն ուղղված միջոցառումներ, որոնք շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ընդլայնել արտաքին շուկաները, նպատակային կարգավորում տալ արտաքին առևտրի կառուցվածքին:

Չնայած ձեռք բերված դրական տեղաշարժերին՝ հանրապետությունում դեռևս թույլ է զարգացած ֆինանսավարկային և հարկային համակարգը: Անցման շրջանի սկզբում Հայաստանում առանց սահմանափակման ֆինանսական շուկա մուտք գործելու հնարավորությունը և թույլ վերահսկողությունը վտանգեցին որոշ բանկերի հուսալիությունը և տեղ տվեցին տարբեր չարաշահումների՝ մեծ վնաս հասցնելով ֆինանսական կառույցի նկատմամբ երկար ժամանակ գոյություն ունեցող վստահությանը:

Ներկայումս խոշոր բանկերը գտնվում են վերակառուցման գործընթացում: Ֆինանսական համակարգի կարևոր հիմնախնդիրներն են կապիտալի շուկայի թերզարգացածությունը, երկարաժամկետ վարկավորման համար անհրաժեշտ ինստիտուտների բացակայությունը (ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային և ներդրումային մասնավոր հիմնադրամներ և այլն): Այդ առումով ռազմավարական լուրջ բացթողում էր դրամատնային համակարգի նկատմամբ բնակչության և զանազան կազմակերպությունների անվստահության մթնոլորտի ձևավորումը, ինչը նախկին ԽՍՀՄ խնայդրամատան և այնուհետև 1990-ական թթ. սկզբում սնկի պես աճող ֆինանսադրամատնային կազմակերպություններում ավանդների փոշիացման, նաև կորստի հետևանք է:

Այդ երևույթի անուղղակի դրսևորումներից է ստվերային դրամատնային տնտեսությունը, երբ բնակչության առանձին խավերի բարձր տոկոսադրույքներով տրամադրեցին ավանդավարկեր, որոնք չէին արտացոլվում վարկերի վերաբերյալ վիճակագրական հաշվետ-

վություններում, բայց սպասարկում էին ազգաբնակչության զգալի մասին:

Դեռևս ՀՀ բանկային համակարգի զարգացման աստիճանը չի համապատասխանում տնտեսական աճի պահանջներին: Հաշվարկված է, որ երկրում եղած խնայողությունների 10-20%-ն է մտնում բանկային ոլորտ: Ընդհանուր բանկային ակտիվները ՀՀ-ում կազմում են ՀՆԱ-ի 22%-ը (Վրաստանում 13,5%, Ադրբեջանում՝ 28%), իսկ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին 11,2% է (Վրաստանում՝ 7,5%, Ադրբեջանում 10%): ՀՀ բանկային համակարգը բնութագրվում է արտասահմանյան կապիտալի համեմատաբար մեծ տեսակարար կշռով՝ 41,5% (Վրաստանում՝ 32%, Ադրբեջանում 10%: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ Ադրբեջանում, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, կան պետական երկու խոշոր բանկեր): Դեպոզիտներ/ՀՆԱ հարաբերակցությունում Հայաստանն առջևում է՝ 9,3% (այդ թվում բնակչության մասնակցությունը՝ 4,7%: Վրաստանում այն կազմում է 5% (1,7%), իսկ Ադրբեջանում՝ 6,4% (1,9%)²⁴⁴: ՀՀ բանկային համակարգի զարգացման՝ վերը բերված ցուցանիշները հարևան երկրների համեմատությամբ ավելի բարենպաստ են, սակայն տնօրինած պաշարամիջոցներով դեռևս չեն ապահովում տնտեսության իրական հատվածի անհրաժեշտ վարկավորումը: Երկրի ընդհանուր բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը 1994 թվից սկսած ՀՆԱ-ի նկատմամբ շարունակել է նվազել մինչև 1996 թ. ներառյալ՝ 1994 թ.-11,5%, 1995 թ.-10,7%, 1996 թ.-10,6% (երբ գրեթե չի փոխվել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը, տեղի է ունեցել հարկային բազայի ընդլայնում) և հետագայում, մինչև 2001 թ. աստիճանաբար բարձրացել է 3-6%-ով: Սակայն մտահոգիչ է, որ այդ տարիներին անընդհատ նվազել է շահութահարկը՝ 1995 թ. 4,6%-ից մինչև 2000 թ. 2,0%, բացառություն է 1999 թ.-2,2%, իսկ եկամուտը 1995 թ. 1,3%-ից հաջորդ տարիներին չի հասել 2%-ի²⁴⁵:

Այսպիսով պետությունն իր ֆինանսական-տնտեսական վիճակի կայունացումն իրականացնում էր ունեզրկվածներին էլ ավելի զրկելու, մանր ու միջին առևտուրը խեղդելու հաշվին: Նման քաղաքականության հետևանքով բնակչության մեծամասնության համար ստեղծ-

²⁴⁴ Стів 10 лет дружества независимых государств (1991-2000), стат. сборник, М., 2001, էջ 39-43, 150, 199, 200, 301:

²⁴⁵ Стів *Սարգսյան 7*, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Եր., 2001, էջ 47:

վել էր ծանրագույն կացություն, որը հանգեցնում էր արտագաղթի տեմպերի արագացմանը:

գ. Արտահանում և ներմուծում

Խորհրդային համակարգի փլուզումով Հայաստանը կորցրեց վիթխարի շուկա: Այդ շուկայում նա բնութագրվում էր տնտեսական հզորությամբ, քանի որ ներմուծվող ռեսուրսների մի զգալի մասը Հայաստանում վերամշակվում էր, և ստեղծված նոր ապրանքները աճած արժեքներով, հակադարձ հոսանքով թափանցում էին Միության այլ վայրեր: Նման պայմաններում Հայաստանի հանքահումքային ռեսուրսների ներմուծման և արտահանման հաշվեկշռում 1980-ական թվականներին գերակշռում էր ներմուծումը, մինչդեռ ներմուծման ու արտահանման ընդհանուր հաշվեկշռում արժեքային արտահայտությամբ գերակշռում էր արտահանման բաժինը: Հանրապետության մեքենաշինության, թեթև և մասամբ սննդի արդյունաբերության վերամշակող շատ ճյուղեր, շինարարության մեջ օգտագործվող մետաղե կոնստրուկցիաներ խարսխված էին ներկրովի հումքի վրա: Արդյունաբերության այդ ճյուղերի կենսագործունեությունն ապահովելու համար 1980-ական թթ. յուրաքանչյուր տարի, միջին հաշվով, ԽՍՀՄ տնտեսական շրջաններից, մասնավորապես Ռուսաստանից և Ուկրաինայից, հանրապետություն է ներկրվել շուրջ 1 մլն տոննա սև մետաղ: Հանրապետությունում մշակվող գունավոր և հազվագյուտ մետաղների մի զգալի մասը, ամբողջ պողպատե և գունավոր մետաղների գլանվածքը, խողովակները, այրվող բնական գազ և նավթամթերքներ, թեթև արդյունաբերության ճյուղերի մեծ մասը՝ տեքստիլ, կաշվի, կոշիկի, և այլն, հիմնված էին ներկրովի հումքի վերամշակման և դրանից պատրաստի արտադրանք ստանալու վրա: Տարեկան ներկրվել է մեծ քանակությամբ պարենային և ոչ պարենային արտադրանք. այդ թվում հանրապետությունում սպառվող ալյուրը, շաքարը, թեյը՝ ամբողջությամբ, կաթնամթերքի 80 և մսամթերքի 60 տոկոսը²⁴⁶:

1990-ական թվականների սկզբներին արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառությունը հիմնականում ընդգրկում էր բնակչության սպառման ապրանքներ՝ հացահատիկ ու հացամթերք, կաթնամթերք, մսամթերք, շաքարավազ և այլն, ինչպես նաև էներգակիրներ՝

նավթամթերք ու գազ: Այդ ներմուծումն ուղեկցվում էր պարբերական ընդհատումներով: Խստորեն փոխվեց ներմուծվող ու արտահանվող ապրանքների տեսականին: Այլևս անհնար էր արտաքին աշխարհի արտահանել առավել խոշոր արդյունաբերության և Հայաստանին բնորոշ՝ մեքենաշինության, քիմիական, գունավոր մետաղածուլության, մասամբ նաև շինանյութերի և թեթև արդյունաբերության բազմազան արտադրատեսակներ, որոնք նախկինում աշխուժորեն և մեծ ծավալներով արտահանվում էին աշխարհի շատ երկրներ, մասնավորապես Խորհրդային հանրապետություններ²⁴⁷: Պատճառը ոչ միայն վերամշակվող հումքի հարյուրապատիկ նվազումն էր, արտաքին աշխարհի կողմից մեր արտադրատեսակների նկատմամբ պահանջի բացակայությունը, այլև բեռնափոխադրումների անհնարիությունը՝ դրանց բարձր քաշի, ծավալների մեծության, անմրցունակության, փոխադրման բարձր գների և այլ պատճառներով: Առ այսօր էլ շրջափակված Հայաստանն իր բեռնափոխադրումները հիմնականում իրականացնում է օդային ուղիներով: Շատ թանկ է նստում նաև Վրաստանի տարածքով բեռները Բաթումիից Հայաստան տեղափոխելը:

Վերջին տարիներին, մասնավորապես 1995-2000 թթ. արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառության ծավալը կայունացման միտում է դրսևորում, բայց դա տեղի է ունենում արտահանվող ապրանքների ծավալների համեմատությամբ ներմուծվող ապրանքների ծավալների ավելացման պայմաններում: Դիտարկվող ժամանակահատվածում հանրապետության արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել է շուրջ 2,5 անգամ: Արտահանման 2000 թ. մակարդակը՝ 297,5 մլն ԱՄՆ դոլարով, մոտ 13 անգամ գիջում է 1988 թ. մակարդակը (եթե այդ տարում 1 ռուբլին հավասարեցվում էր 1 դոլարի) և կազմում ՀՆԱ-ի 15,5%-ը²⁴⁸: Ինչ վերաբերում է արտահանման և ներմուծման կառուցվածքներին, ապա դրանք արդյունավետ համարել չի կարելի, քանի որ արտահանման հիմնական մասը ավելացված փոքր արժեք ունեցող ապրանքներն են: 2000 թ. արտահանվող ապրանքների երկու երրորդը կազմել են թանկարժեք քարերը և մետաղները (40,8%), ոչ թանկարժեք մետաղները (14,9%), հանքահումքային արտադրանքը (11,5%)²⁴⁹:

²⁴⁷ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 165, գ. 346, թ.2,3:

²⁴⁸ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 121:

²⁴⁹ Տես նույն տեղում, էջ 124:

²⁴⁶ *Խոջաբեկյան Վ.Ե.*, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 392:

Հայաստանի Հանրապետության արտահանման և ներմուծման ծավալները 1997-2000 թթ. ըստ արտադրանքի խոշոր խմբերի (մլն ԱՄՆ դոլար)

Արտադրանքի խմբեր	Արտահանում				Ներմուծում								
	1997 տես. կշիռ %	1998 տես. կշիռ %	1999 տես. կշիռ %	2000 տես. կշիռ %	1997 տես. կշիռ %	1998 տես. կշիռ %	1999 տես. կշիռ %	2000 տես. կշիռ %					
Աճյուղային խմբեր	27.9	15.7	7.1	26.2	8.9	245.1	31.1	201.2	22.3	128.7	41.8	175.2	20.9
Աճյուղային խմբեր	136.2	173.5	78.7	219.5	74.7	222.3	42.5	286.1	31.7	338.7	41.8	373.6	44.5
Արտադրանքային խմբեր	0.17	10.2	4.9	20.6	7	208.3	23.3	223.8	24.8	170.2	21	172.6	20.5
Լայն սպառման ապրանքներ	68.3	20.3	9.2	27.7	9.4	215.3	26.4	173.3	19.2	165.9	20.4	118.7	14.1
ԸՆԴՍԵՆԸ	232.5	220.5	100	300.5	100	892.3	100	902.4	100	811.2	100	840.2	100

* Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», հ. 6, եր. 2001, էջ 26:

Ներմուծվում են էներգակիրներ, սննդամթերք, կիսաֆաբրիկատներ և այլն: Ներմուծմանը փոխարինող արտադրությունների դրական միտումները զգացվում են ներմուծումը փոխարինող գյուղատնտեսական մթերքներ վերամշակող որոշ արտադրություններում: Այդ մասին են վկայում այդուսակ 6-ի տվյալները:

Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության պատկերն ավելի է պարզորոշվում, երբ դիտարկվում է մի շարք, այդ թվում մեզ սահմանակից երկրների շարքում: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով մենք դեռևս զիջող դիրքերում ենք:

ԱՂՅՈՒՄԱԿ 7

ՀՆԱ-ի ծավալները և արտահանման ու ներմուծման միջին հակվածությունները՝ 1998 թվականի²⁵⁰

Երկիրը	Արտահանման միջին հակվածությունը, %	Ներմուծման միջին հակվածությունը, %	ՀՆԱ-ի ծավալը մեկ շնչի հաշվով (դոլ.)
Հայաստան	11,6	47,5	496,9
Ադրբեջան	5,7	9,9	537,1
Բելառուս	38,1	41,0	1329,6
Ղազախստան	9,4	8,9	1434,2
Վրաստան	3,9	21,6	904,2
Ռուսաստան	26,2	16,5	1882,4
Ուկրաինա	29,7	34,5	843,0
Բելգիա	71,1	64,9	25723,7
Թուրքիա	21,1	36,9	1935,8
Լիտվա	34,7	84,2	2889,7
Իրան	3,7	4,2	5000,0

Արտաքին աշխարհի հետ առևտրաշրջանառությունը մեծ մասամբ կատարվում է հեռավոր արտասահմանի հետ:

Արտասահմանյան երկրների բաժինն ավելացել է թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ընդհանուր ծավալում, իսկ ԱՊՀ երկրների բաժինը խստորեն նվազել է: Եթե 1995 թ. հեռավոր արտասահման է առաքվել ՀՀ արտահանության 37,4, ապա 2000 թ.՝ 75,5%-ը, իսկ ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ նրա բաժինը 50,4%-ից բարձրանա-

²⁵⁰ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2001, էջ 122-125:

լով դարձել է 80,9%²⁵¹: Բավական է ասել, որ արտաքին առևտրա-շրջանառության հաշվեկշռի բացասական մնացորդը արագ թափ է հավաքել և 1995 թ. 403 մլն դոլարից 2000 թ. դարձել է 587,6 մլն դոլար: 1995 թ. հեռավոր արտասահմանին բաժին էր ընկնում այդ մնացորդի 59,2, իսկ 2000 թ.²⁵² 83,7%-ը: Այսինքն՝ դրա մեջ չէին մտնում էներգակիրների, մասամբ նաև հացահատիկի և ալյուրի ծախսերը, որոնք հիմնականում ներմուծվում էին ԱՊՀ երկրներից²⁵³: Այդ նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրներից ներմուծումը նվազել է 50,4%-ով: ԱՊՀ երկրների բաժինն արտաքին ապրանքաշրջանառության մեջ կազմում է արտահանման 24,46 և ներմուծման 19,01%-ը²⁵³: ԱՊՀ երկրներից, արտահանման և ներմուծման ամենամեծ բաժինն ընկնում է Ռուսաստանի Դաշնությանը՝ 15-ական տոկոսը, Կրաստանին համապատասխանաբար՝ 5,19 և 2,21, Ուկրաինային՝ 1,10 և 1,39, Թուրքմենստանին՝ 1,86 և 0,12%-ը և մնացած հանրապետություններին՝ 1,31 և 0,29%²⁵⁴:

Այժմ Հայաստանի Հանրապետությունն առևտրական կապեր ունի աշխարհի 55 երկրների հետ: Հանրապետությունից արտադրանք է արտահանվում 36 երկիր, իսկ ներմուծվում է 55 երկրներից: Այդ համակարգում ծավալի տեսակետից 10 երկրներ ունեն բարձր տեսակարար կշիռ: Այդ են վկայում ստորև բերվող աղյուսակի տվյալները (Աղ. 8):

Ինչ վերաբերում է հեռավոր արտասահմանյան այլ երկրներին, ապա նրանց արտահանության բաժինը կազմում է 75,54, իսկ ներմուծմանը՝ 80,99%: Ընդ որում բավականին մեծ է Եվրոպական միության բաժինը, որը կազմում է արտահանության 35,97 և ներմուծման 34,19%-ը²⁵⁵: Հիմնականում արտահանվում են թանկարժեք մետաղներ՝ ադամանդ, ոսկի և այլն: Բելգիային բաժին է ընկնում համապատասխանաբար 25,23 և 9,53, ԱՄՆ-ին՝ 12,73 և 11,6, Շվեյցարիային՝ 2,97 և 2,59, Իրանին՝ 9,32 և 9,37, Մեծ Բրիտանիային՝ 3,39 և 6,72, Գերմանիային՝ 4,34 և 4,10, Հունաստանին՝ 1,84 և 4,7, Իտալիային՝ 0,9 և 2,9, Թուրքիային՝ 0,51 և 4,46% և այլ երկրներից²⁵⁶ (Աղ. 9):

²⁵¹ ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը 1996 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 1997, էջ 29-30, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հոկտեմբերին, 2000 թ., էջ 121:

²⁵² Տե՛ս նույն տեղում:

²⁵³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թ., Եր., 2001, էջ 13:

²⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 13, 14, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ., էջ 122-123:

ԱՂՅՈՒՍԱԿ 8

Հայաստանի Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում համեմատաբար խոշոր տեղ գրավեցնող 10 երկրների 1997-2000 թթ. ցուցանիշները (հազ. ԱՄՆ դոլար)

Երկիր (կազմակերպութ.)	Արտահանում				Ներմուծում			
	1997	1998	1999	2000	1997	1998	1999	2000
Ռուսաստան	63000.0	40000.0	33855.5	44559.9	196749.1	191403	149877.7	137157.5
Իրան	42601.8	31392.3	34160.8	30089.0	88671.4	63912.5	78450.4	82324.4
ԱՄՆ	7110.0	11566.9	16008.4	37861.1	116145.5	96301.2	85669.3	102675.1
Բելգիա	46966.1	49838.9	84226.8	75051.4	49673.2	54631	85192.1	84372.2
ԱՄԷ	2938.4	3696.2	2612.4	5479.1	71731.4	54480.7	40195.8	41728.2
Թուրքմենստան	13751.9	22726.4	6068.5	5544.2	48512.3	553.5	777.4	1109.3
Վրաստան	10726.9	9573.3	11100.1	15989.3	38248.3	26830.2	26855.7	19801.1
Թուրքիա	7152.7	2987.8	1128.49	1527.9	38396	56779.8	40152.15	40462.4
Իտալիա	368.7	421.6	1442.8	2683.2	36244.2	34583.1	23725.1	25710.6
Գերմանիա	9281.6	9303.1	10200.8	12917.9	26221.1	34037	34244.2	36486.9

* Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», հ. 6, եր. 2001, էջ 24:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը
1997-2000 թթ. ըստ երկրների (իազ. ԱՄՆ դոլար)

Երկրի անվանումը	Այտախանում				Սերմնում			
	1997	1998	1999	2000	1997	1998	1999	2000
1	2	3	4	5	6	7	8	9
Ընդամենը այդ թվում	223495,4	220516,0	231669,1	300487,4	892321,5	902389,2	811267,7	884733,3
Արգենտինա	94671,7	80536,3	56359,5	73363,2	299136,7	230204,9	187154,8	173613,0
Արդենցան	-	-	-	-	62,7	1,5	-	-
Բելուոս	1147,7	820,6	1060,9	903,2	3320,7	1754,6	641,9	624,5
Վրաստան	10726,9	9573,3	11100,1	15989,3	38248,3	26830,2	26855,7	19801,1
Ղազախստան	856,0	366,5	518,9	1268,8	2073,5	456,0	572,1	872,7
Ղրղզստան	44,8	37,3	44,4	13,9	7,2	7,1	1,3	1,5
Ռուսաստան	62898,5	39986,3	33855,5	44559,9	215862,0	191403,2	149877,7	137157,5
Տաջիկստան	41,1	-	-	0,1	3,0	16,2	-	-
Թուրքմենստան	13751,9	22726,4	6068,5	5544,2	27671,4	553,5	777,4	1109,3
Ուզբեկստան	152,4	444,2	242,9	157,5	202,8	70,2	362,6	707,6
Ուկրաինա	3491,8	3971,8	2096,3	3271,0	11560,2	8932,3	7926,3	12341,9
Սլովակա	150,3	36,6	207,4	131,6	84,2	68,1	70,5	927,0
Ալբանիա	1410,3	2573,3	1164,5	1523,9	13,4	111,9	69,2	69,9

1	2	3	4	5	6	7	8	9
Ոչ ԱՄՆ երկրներ	137823,6	139979,7	175309,7	227124,2	593184,8	672184,3	624112,9	71120,2
ԵՍ երկրներ	66370,1	76276,3	106542,6	107014,4	176763,8	259090,9	252843,6	302829,7
Ավստրիա	765,9	50,0	4,1	8,6	2263,7	2755,6	2891,2	2554,7
Բելգիա	46966,1	49838,9	84226,8	75051,4	49673,1	54631,0	85192,1	84372,2
Ֆինլանդիա	-	0,1	32,6	9,0	2096,4	1756,2	2024,9	1559,6
Ֆրանսիա	42,4	66,2	520,9	466,3	19460,7	27413,5	12339,8	17558,7
Գերմանիա	9281,6	9303,1	10200,8	12917,9	26222,2	34037,0	34244,2	36486,9
Նիդերլանդներ	6236,5	7912,3	438,1	2632,0	15437,8	9647,8	5122,6	12426,9
Իռլանդիա	75,8	322,0	0,8	0,3	801,7	8054,0	1256,7	1026,9
Սեժ Բրիտանիա	1160,9	8097,8	9443,9	1099,2	1450,5	69136,0	6703,3	59480,7
Իտալիա	368,3	421,6	1442,8	2683,2	36244,3	34583,6	27725,1	25710,6
Հունաստան	157,9	249,0	167,8	2963,2	10223,2	9131,3	13029,0	54003,0
Շվեդիա	0,5	-	5,8	94,6	662,2	521,2	1926,6	1551,0
Դանիա	0,9	0,3	23,2	-	2488,1	4360,1	1718,8	1416,5
Լյուքսեմբուրգ	56,2	-	-	-	177,1	800,1	212,8	2366,0
Իսպանիա	1256,1	0,2	34,4	79,5	471,7	1814,4	1709,8	2035,4
Պորտուգալիա	1,0	4,8	0,5	9,2	91,1	448,9	418,8	280,6
Արևելյան Եվրոպայի երկրներ	525,1	1349,3	1318,5	1839,3	34720,9	29331,3	20139,1	15026,2

1	2	3	4	5	6	7	8	9
Չեփիա	24,1	3,1	16,0	73,0	1250,5	3756,6	2476,8	1850,0
Սյուլվակիա	10,2	216,4	181,1	3,1	2105,0	1481,2	223,7	527,3
Սյուլվենիա	-	-	0,4	12,8	354,4	620,1	630,9	981,5
Բուլղարիա	464,4	1028,5	881,8	655,9	25443,3	16186,1	12081,8	7216,4
Լեռնաստան	-	24,2	36,4	34,7	1634,1	3154,3	2722,8	2068,1
Ռումինիա	-	-	0,5	399,9	1224,0	981,3	451,7	266,7
Հունգարիա	-	47,9	104,4	391,3	2470,2	2961,9	1480,9	1848,9
Սակեռոնիա	26,5	29,2	-	-	-	63,6	0,2	33,1
Հարավսլավիա	-	-	98,0	268,5	39,5	129,1	70,4	153,6
Խորվաթիա	-	-	-	-	-	-	-	80,6
Սերբիայի և երկրներ	522	707,2	485,5	596,0	1399,2	3995,2	2433,9	1741,1
Լատվիա	143,2	435,7	311,9	346,6	448,1	1660,0	1028,4	913,5
Լիտվա	318,0	269,1	50,6	89,1	777,7	2102,7	1317,7	598,4
Էստոնիա	60,8	2,4	113,1	160,4	173,4	232,5	87,8	229,2
Այլ երկրներ	70406,3	61646,9	66973,0	117674,4	380300,9	379767,0	348696,3	391523,2
Նորվեգիա	5,8	-	0,2	1,1	578,77	1556,6	642,3	108,9
Շվեյցարիա	1572,0	2481,8	3748,8	8829,9	22635,9	25634,9	16415,2	22920,3
Կիպրոս	449,3	223,5	349,7	1640,9	2966,6	5240,8	5730,7	5797,8
Իրան	42583,6	31392,2	34160,8	30089,0	88671,4	63912,5	78450,4	82328,4
ԱՄՆ	7110,0	11569,9	16008,4	37861,1	116086,6	96301,2	85669,3	102675,1

1	2	3	4	5	6	7	8	9
Թուրքիա	7152,7	2987,5	1128,5	1527,9	38395,9	56779,8	40152,2	40462,4
Սիրիա	2754,1	1295,5	112,1	145,1	4981,9	3925,3	1755,5	1752,5
ԱՄԷ	2938,4	3696,2	2612,4	5479,1	71731,5	54480,7	40195,8	41728,2
Լիբանան	4219,0	1345,4	223,2	287,0	1993,3	8237,9	9355,3	4572,2
Հարավային Կորեա	2,0	2,8	20,9	2,0	690,3	807,0	1412,2	669,7
Հնդկաստան	21,8	264,2	3,8	361,2	1333,4	3672,8	3896,9	5474,9
Ճապոնիա	-	61,1	61,6	211,9	2988,6	6189,3	2349,7	3822,2
Չինաստան	-	123,9	66,9	573,1	7296,3	9960,4	4888,2	5413,3
Կանադա	73,2	367,7	1129,5	983,6	6585,1	5629,3	10023,5	5396,0
ՀԱԲ	-	4,5	0,5	5,0	1130,0	85,6	105,5	56,7
Եգիպտոս	30,6	0,1	71,5	11,7	13,5	124,8	0,7	2,1
Նոր Զելանդիա	-	-	1,8	21,4	21,2	94,8	-	202,3
Պանամա	187,2	-	-	-	302225,6	22083,1	23580,7	20957,1
Սինգապուր	-	-	-	0,1	534,0	848,7	594,8	352,3
Հորդանան	-	-	-	41,8	147,9	-	1,7	13,1
Այլ երկրներ	1306,7	5833,5	7272,5	29601,5	3284,3	13801,3	23475,6	46817,6

* Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թ., էր., 2001, էջ 5-42:

Ըստ որում Արաբական էմիրություններից և այլ երկրներից ներմուծվող ապրանքների մեջ հաճախ մեծ բաժին են կազմում էժան անորակ ապրանքները: Հարկավոր է այդ ներմուծումը փոխարինել տեղական ապրանքների արտադրությամբ, որը կբարձրացնի բնակչության զբաղվածությունը և կիջեցնի արտագաղթը: Այսպես, օրինակ, Իրանում պատրաստված արդյունաբերական էժանագին և անորակ շատ ապրանքներ՝ սոսիճ, ներկեր, պլաստմասսայից պատրաստված բազմաթիվ ամաններ վաճառվում են Հայաստանում: Իրանից անարգել ներմուծվող ճակնդեղի սպիրտի, չամիչի, բանջարաբոստանային մշակաբույսերի՝ ձմերուկ, սեխ, վարունգ, լուիկ, կարտոֆիլ, սխտոր և այլն, մրգերից խնձոր, նուռ, տանձ, կեռաս և այլն, այլ երկրներից՝ Ֆրանսիայից, Հոլանդիայից հավի մսի, իր ժամանակին թուրքիայից ու Իրանից հավի ձվի ներմուծումը հանգեցրել էր և ժամանակի ընթացքում կհանգեցնի հանրապետությունում այդ մթերքների արտադրության ոլորտում զբաղվածության կրճատմանը: Ներկայումս Հայաստանը ողողված է հուլանդական ծաղիկներով: Ջարմանալի է, չէ՞որ Հայաստանում մարդիկ ունակ են հուլանդականից ավելի լավ ծաղիկ մշակելու: Դրսից ձմերուկը Հայաստան էր մուտք գործում մայիսի սկզբներին և վաճառվում շատ թանկ գնով: Ամիսներ անց, երբ շուկա էր թափանցում Հայաստանի ձմերուկը, դրա գինն ընկնում էր: Պատճառը ոչ միայն առաջարկն էր, այլ և այն, որ սպառողների մեծամասնությունն արդեն հագեցել էր: Եթե երևութների ընթացքն այսպես շարունակվի, կկրճատվեն այդ մթերքների արտադրության մասշտաբները, կպակասի դրանց մշակողների թիվը և այն ժամանակ հանրապետությունը կկանգնի փաստի առաջ:

Գյուղացին, ի վիճակի չլինելով վերականգնել նույնիսկ գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը, դադարելու է այն մշակելուց: Դրանք հիմնականում էժան գներով վաճառվում են վերավաճառողներին, որոնք քաղաքներում վաճառում են բարձր գներով: Նույնիսկ այս պայմաններում 2000 թ. ընթացքում կարտոֆիլը, կաղամբը և որոշ մթերքներ ամբողջությամբ չվաճառվեցին: Դրանց մեծ մասը փչացավ և չօգտագործվեց: Դա վնասում է ներքին շուկայի զարգացմանը: Բանն այն է, որ ներմուծվող այդ մթերքներն ավելի էժան են, քան Հայաստանում արտադրվող որոշ համանուն արտադրատեսակները: Երկրի գլխավոր շարժիչ ուժը պետական ազգային շահերն են, հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը: Պետության ակտիվ միջամտությամբ ապրանքաշրջանառության ոլորտը

պետք է հագեցնել ոչ միայն ներկրովի պատրաստի արդյունքների, այլև առաջին հերթին, սեփական արտադրության հիման վրա: Շուկան իր հակադարձ ազդեցությունն է ունենում արտադրության զարգացման ընթացքի և ուղղությունների ձևավորման վրա: Մեծ մասամբ դրսից բերվող ապրանքներով բնակչության ապրանքաշրջանառության ոլորտի կեղծ աշխուժացումը միայն օժանդակ դեր կարող է խաղալ: Այդ արդյունքներով շուկան մշտապես գործել, իսկ ժողովուրդը կերակրվել չի կարող: Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական միջոցներով արտասահմանյան երկրներից ներմուծվող ապրանքատեսակների ներհոսքը պետք է ուղեկցվի հանրապետությունում այդ պահին ստեղծված սեփական արտադրության ապրանքատեսակների արտահանության ընդլայնմամբ՝ իր հիմքում ունենալով աշխատանքի միջազգային բաժանմանը Հայաստանի մասնակցությունը: Այլ պայմաններում արտահոսում են նախորդ տասնամյակներում ստեղծված և արդեն կուտակված պատրաստի արժեքները՝ ոսկին, արդուզարդը, պղինձը, մետաղյա զանգվածը և այլն, աղքատացնելով երկիրն ու հասարակությանը: Վերջին տարիներին դրանք մեծ մասամբ բաժին ընկան թուրքիային, Իրանին և այլ երկրների: Հայաստանում պետական հովանավորչական քաղաքականություն պետք է կիրառել հատկապես մեքենաշինության, սննդի և հանքային արդյունաբերության այն ճյուղերի նկատմամբ, որոնք բնորոշում են հանրապետության զարգացման ուղղվածությունը:

Հանրապետությունում ներքին շուկայի փոփոխությունները վերջին տարիներին ընթացել են ազգաբնակչության գնողունակության աճի, արտաքին առևտրի բնագավառում հիմնական ապրանքատեսակների գները միջազգային գներին աստիճանական մոտեցման, պետական բաժնի տեսակարար կշռի նվազման, արդյունաբերական և գյուղատնտեսական գների միջև նկատելի տարբերության, որոշ ապրանքատեսակների (ծխախոտ, վառելիք, ավիոհոլային խմիչքներ և այլն) բնագավառում մենաշնորհի առկայության պայմաններում:

Ի տարբերություն Հայաստանի՝ զարգացող երկրներում առևտրի ոլորտում զբաղվածության աճն ուղեկցվում է առևտրի ձեռնարկությունների կտրուկ աճով: Խոշոր առևտրական ֆիրմաներն իրենց ուժերը կենտրոնացնում են արտաքին առևտրի մեջ: Ներքին շուկայում իշխում է մանրավաճառությունը: Մինչդեռ Հայաստանում մանրավաճառներն արտամղեցին առևտրի կենտրոնացված օբյեկտները: Մանրավաճառների ձեռքին է սննդի արդյունաբերության ապ-

րանքների մեծ մասը: Սննդի ապրանքատեսակների վաճառքով են զբաղված փոքրներում, մայթերի վրա, ուր պատահի: Բացակայում են նաև հիգիենիկ պայմանները: Սննդի մասնավոր վաճառքի շատ ապրանքատեսակներ՝ պանիր, միս, մսամթերք, թխվածքներ, ամառվա ընթացքում՝ բանջարեղենը և մրգերը հիվանդությունների տարածման աղբյուր են: Ուստի այն պետք է վերցնել խիստ հսկողության տակ:

Հանրապետության շուկայում բազմաթիվ մթերքների, ապրանքների վաճառքով զբաղված են նաև օտարերկրյա քաղաքացիներ: Շատ երկրներում, այդ թվում ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա, Ֆրանսիա, Իտալիա, Սկանդինավյան և այլ երկրներ, ազատ աշխատատեղերում առաջին հերթին ընդգրկում են իրենց քաղաքացիներին²⁵⁷: Դա ամրագրված է օրենսդրությամբ: Այլ երկրների քաղաքացիներին աշխատանքի են ընդունում միայն այն ժամանակ, երբ ազատ տեղերի համար իրենց քաղաքացիները հայտ չեն ներկայացրել:

Հայաստանի աշխատանքային շուկայում տեղեր էին զբաղեցնում նաև Իրանի և այլ երկրների քաղաքացիներ: Նրանք զբաղեցնում էին առևտրական կետերը, խանութները, պահեստները, այն դեպքում, երբ շրջապատը լեցուն էր որևէ զբաղմունք ակնկալող Հայաստանի քաղաքացիներով: Դրանց մի մասը, թերևս վերավաճառողներ էին: Այս հարցադրումը չի հակասում այլ երկրների հետ բարիդրացիական տնտեսական կապերի սկզբունքներին: Հայաստանում մասնավոր ձեռներեցության միջոցներով արտահանության համար համապատասխան օրենսդրական դաշտ ապահովելու, դրա նկատմամբ պետական հովանավորչություն իրականացնելու հետ մեկտեղ անհրաժեշտ է ընդլայնել երկկողմանի պետական համաձայնագրերի մակարդակով առևտրական շրջանառության ծավալները, որոնք իրական պայմաններ կստեղծեն երկու երկրների տնտեսության առանձին ճյուղերի փոխներտաճման համար:

Անկախ Հայաստանի պատմության ընթացքում տնտեսական ամենամեծ հաջողություններից էր հանրապետության անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, որը տեղի ունեցավ 2002 թ. դեկտեմբերի 10-ին: Հայաստանը դարձավ ԱԳԿ-ի 145-րդ լիիրավ անդամը: Սա վկայում է, որ երկրի օրենսդրու-

յունը համապատասխանել է միջազգային նորմերին: ԱԳԿ-ին Հայաստանի անդամակցությամբ միջազգային կորպորացիաների համար բացվում է այստեղ ներդրումներ կատարելու ճանապարհ: Այն իրական երաշխիք է ստեղծում աշխարհում ընդունված կանոններով գործել մեր երկրում, անսակարկ ներդրումներ անել՝ վստահ լինելով կապիտալի զարգացման, շահույթի ապահովման առումով: Միջազգային այդ կազմակերպությանն անդամակցելու հաջորդ կարևոր երաշխիքն այն է, որ մեր հայաստանյան արտադրողը երրորդ երկրների արտադրողների պես նույն պայմաններով, կարող է ազատ մտնել այդ երկրների շուկա, այսինքն՝ հանրապետությունում ներդրվել է մի համակարգ, որտեղ գործում են բոլորի համար նույն օրենքները: Սա ապահովում է և՛ արտահանման, և՛ ներքին արտադրողի, և՛ ներդրումների շահավետությունը, միաժամանակ ստեղծելով քաղաքական կայունության երաշխիքներ, քանի որ ԱԳԿ պահանջների շրջանակներում ընդունված օրենքների, օրենսդրության փոփոխությունը շատ դժվար գործ է լինելու: Կազմակերպության անդամ բոլոր երկրները հենց սկզբից պարտավոր են պահպանել գոյություն ունեցող բոլոր ռեժիմները:

ԱԳԿ-ին ՀՀ անդամակցությունը տրամաբանական շարունակությունն էր լճացման ու ճգնաժամային տնտեսությունից զարգացմանը միտված տնտեսության հիմքերի ստեղծման: Հանրապետությունն աստիճանաբար լուծում է իր համար բարդ խնդիր՝ մուտք է գործում նոր տնտեսական կառուցվածք՝ համաշխարհային տնտեսություն և միջազգային շուկա: Ընդհանուր առմամբ ազգային տնտեսական կապերի աշխուժացման համար Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է բարենպաստ մթնոլորտ: Հայաստանը զգալիորեն բարելավել է իր դիրքերը գործարար աշխարհում: Աշխարհահռչակ «Հորիզոն» հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ Ջորնալ» թերթի հրապարակած 2002 թ. «Տնտեսական ազատականության ինդեքսի» համաձայն նորանկախ հանրապետություններից ամենաբաց տնտեսությունն ունի Հայաստանը, որը 1996 թ. զբաղեցրած 115-րդ տեղից 2002 թ. զեկույցում բարձրացել է 44-րդ տեղը՝ այն կիսելով Հունգարիայի և Հարավային Կորեայի հետ և նկատելիորեն առաջ է անցել անմիջական հարևան երկրներից²⁵⁸: Նույն զեկույցի համաձայն 156 երկրների շարքում Թուրքիան զբաղեցնում է 119-րդ,

²⁵⁷ Տե՛ս *Խոջաբեկյան Վ.Ե.*, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 397:

²⁵⁸ Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա», 1(21) հունվար, 2003, էջ 60, 61:

Վրաստանը՝ 113-րդ, Ադրբեջանը՝ 104-րդ, Իրանը՝ 146-րդ, իսկ Ռուսաստանը՝ 135-րդ տեղը: Իսկ զուտ միջազգային առևտրային քաղաքականության առումով, ըստ նույն զեկույցի, Հայաստանը Հոնկոնգի, Սինգապուրի և Էստոնիայի հետ միասին գնահատվում է որպես աշխարհի ամենաբաց տնտեսություն ունեցող երկիր:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը անկախություն հռչակելուց հետո դարձավ ինքնուրույն, արտաքին լիիրավ տնտեսական սուբյեկտ, իսկ միջազգային տնտեսական հարաբերությունները դարձան հանրապետության զարգացման կարևորագույն գործոններից մեկը:

Տնտեսական ինտեգրացումը ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացման բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Այն հատկապես արագորեն զարգանում է Եվրոպայի բարձր զարգացած, Եվրամիության կազմի մեջ մտնող երկրների միջև: Հայտնի է, որ այդ երկրները, նույնիսկ անցել են միասնական օգտագործման դրամական «Եվրո» միավորի, որն արդեն գերազանցել է դոլարի կուրսին: Սակայն տնտեսական ինտեգրացումը բնորոշ է, նաև աշխարհի մյուս տարածաշրջանների երկրներին: Այդ գործում այժմ կարևոր դեր են խաղում ինչպես համաշխարհային, այնպես էլ ռեգիոնալ կազմակերպությունները: Համաշխարհային այդպիսի կազմակերպություններից հատկապես շատ կարևոր են «Ձարգացման և վերակառուցման միջազգային բանկը», «Միջազգային վարկային ֆոնդը», որոնցից յուրաքանչյուրի մեջ ընդգրկված են 180 երկրներ, «Համաշխարհային առևտրական կազմակերպությունը», որի մեջ ընդգրկված է 130 երկիր, «Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպությունը» և այլ կազմակերպություններ:

Միջազգային ռեգիոնալ կազմակերպություններից տնտեսական ինտեգրացման գործում կարևոր դեր են խաղում Եվրոպական միությունը՝ Եվրոմիությունը, որի մեջ ընդգրկված են Եվրոպայի 18 և ավելի պետություններ, որոնց բնակչության ընդհանուր թիվը 370 մլն է և որն իր համախառն արտադրանքի ու արտաքին առևտրի ընդհանուր ծավալով գերազանցում է ԱՄՆ-ին ու ճապոնիային: Մեծ է նաև «Եվրոպական ներդրումային բանկի», «Ձարգացման և վերակառուցման Եվրոպական բանկ»-ի դերը: Այդպիսի կազմակերպություններ են ձևավորվել նաև Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի երկրներում: Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է

առաջին հերթին ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված «Անկախ Պետությունների Համագործակցություն» (ԱՊՀ) կազմակերպությանը, ինչպես նաև Սևծովյան երկրների համագործակցությանը, աշխատանքներ են տարվում Եվրոպական այդ կազմակերպությունների անդամագրվելու, ինչպես նաև՝ նրանց կազմի մեջ գտնվող երկրների հետ տնտեսական ինտեգրացման ուղղությամբ: Այդ առումով, Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ կարևորություն ունի ԱՊՀ երկրների հետ տնտեսական բազմակողմանի կապերի շնորհիվ ստեղծված տնտեսական ինտեգրացումը:

Այժմ էլ ԱՊՀ երկրներից վճռական դերը պատկանում է Ռուսաստանին, որը բնական գազից բացի, ապահովում է Հայկական ատոմակայանը միջուկային անհրաժեշտ վառելիքով: Անկախության հռչակումից հետո Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետությունը կնքել է 40-ից ավելի պայմանագրեր տնտեսության տարբեր բնագավառներում համագործակցելու համար: Ներկայումս Հայաստանը բնական գազ ներմուծում է Ռուսաստանից՝ օրական 5,2 մլն մ³: 2001 թ. վերջերին այդ գազի ներմուծման դիմաց կուտակված ՀՀ պարտքը կազմում էր մոտ 1 մլրդ դոլար և 2002 թ. հոկտեմբերին հայ-ռուսական բանակցությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության արդյունաբերական որոշ ձեռնարկություններ՝ Երևանի «Մարս», «Էլեկտրոն» և այլ խոշոր մեքենաշինական համալիրների բաժնետոմսերի մեծ մասը, Հրազդանի ՋԷԿ-ը տրամադրվեց Ռուսաստանին: Այս ձեռնարկություններում ռուսական կողմը պարտավորվել է իրականացնել ներդրումներ, ստեղծել մեծ թվով աշխատատեղեր: Համատեղ ձեռնարկությունների ստեղծման նպատակով համաձայնագրեր են ստորագրվել նաև Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Իրանի և այլ երկրների հետ, պայմանագիր է կնքվել Երևանի «Նաիրիտ-1» ՓԲԸ-ն և Բրիտանական «Ռանտաս» ընկերության միջև: Ըստ այդ պայմանագրի՝ Բրիտանական կողմը պետք է կատարի ներդրումներ, տեղադրի ժամանակակից սարքավորումներ, զգալի միջոցներ հատկացնի այս խոշոր ձեռնարկության տեխնիկական վերազինման համար, մարի նրա պարտքերն ու ապահովի անխափան աշխատանքը: Բրիտանական կողմն արդեն 2001 թ. այդ նպատակներով ներդրել է 30 մլն. դոլար: Երևանի «Նաիրիտ» ձեռնարկության տեխնոլոգիայով կաուչուկի արտադրության համատեղ ձեռնարկություն կստեղծվի նաև Չինաստանում: Չինաստանի մասնագետները վերակառուցել, մոնտաժել և շահագործման են հանձնել

Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը:

Գյուղատնտեսության բնագավառում ևս համագործակցությունն ակնհայտ է: Հայ մասնագետների ջանքերով Չինաստանում Հայաստանից տարված տնկիներով հիմնադրվել է հայկական անուշահամ ծիրանի այգիներ, որոնք արդեն բերքատու են դարձել:

Տնտեսական լայն համագործակցության պայմանագրեր են կնքվել նաև Իրանի հետ: Հայաստանում և Իրանում գործում են հայ-իրանական բազմաթիվ ձեռնարկություններ: Միայն 2001 թ. երկու երկրների ապրանքաշրջանառությունը հասել է 80 մլն. դոլարի²⁵⁹:

Փաստորեն Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ռազմավարական հիմնական ուղղությունը նրա տնտեսական բազմակողմանի ինտեգրացումն է համաշխարհային տնտեսությանը:

Այսպիսին էին հանրապետության տնտեսական վերափոխումների արդյունքներն անցած տասից ավելի տարիների ընթացքում:

²⁵⁹ Տե՛ս *Մելքունյան Ս.*, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, էջ 261:

Գ Լ ՈՒՆ Ե Ր Ր ՈՐ Դ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա. Վերափոխումներ սոցիալական ոլորտում. նոր հիմնախնդիրներ

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Այս դրույթը ենթադրում է, որ պետությունը ժողովրդի առջև պարտավորություն է ստանձնում պայմաններ ստեղծել անհատի համար՝ կազմակերպելու իր կենսագործունեությունը ընտանիքում, աշխատանքային կոլեկտիվում և հասարակության մեջ:

Սոցիալական ոլորտում բարեփոխումների իրականացումն անհնար է առանց հասարակական կյանքի բոլոր կողմերի արմատական փոփոխությունների, իսկ հաջողությունների մասին հնարավոր է դատել բնակչության կենսամակարդակի աստիճանով և գործընթացի նկատմամբ բնակչության տարբեր խավերի ունեցած վերաբերմունքով:

Անկախության տասից ավելի տարիներին ՀՀ-ում վարվող սոցիալական քաղաքականությունը վերլուծելու նպատակով պայմանականորեն այն կարելի է բաժանել երկու փուլի:

Առաջին փուլը (1990-1995 թթ.) հանրապետությունում շուկայական նոր հարաբերությունների ձևավորման սկիզբն էր: Այս փուլում - Հայաստանում սոցիալական քաղաքականությունն իրականում դիտվում էր որպես ընդհանուր տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մաս:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի իշխանությունների առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին կարիքավորների և գործազուրկների պաշտպանությունը, որոնք բնակչության գերակշիռ մասն էին կազմում, նաև հասարակության բոլոր խավերի շահերը և նախասիրությունները հաշվի առնող ամբողջա-

կան սոցիալական քաղաքականության մշակումը: Դա Հայաստանի համար բավական բարդ խնդիր էր՝ անկախ պետության սոցիալական քաղաքականության իրականացման մեխանիզմների և սովորույթների բացակայության պատճառով: Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայաստանի սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր այն երկրի (ԽՍՀՄ) սկզբունքներին, որի կազմի մեջ էր նա գտնվում: Միաժամանակ, Հայաստանում գործում էին սոցիալական պաշտպանության սեփական մեխանիզմներ, որոնք հիմնված էին ազգային սովորույթների վրա:

Խորհրդային պետության հզոր սոցիալական քաղաքականությունը զուրկ էր հարուստների, միջին խավի և կարիքավորների շահերի պաշտպանությունն ապահովելու գաղափարախոսությունից, նորմերից և մեխանիզմներից, այն պարզ պատճառով, որ նման բաժանումը խորթ էր այդ հասարակարգին: Սոցիալիստական հասարակարգը, բոլոր թերություններով հանդերձ, իր սոցիալական քաղաքականությունը հիմնում էր համընդհանուր սոցիալական ապահովման և առավելագույն սոցիալական երաշխիքների սկզբունքների վրա: Պետությունն ապահովում էր անվճար կրթություն, բուժում, կացարան, հանգիստ, ծերության կենսաթոշակ, հաշմանդամության թոշակներ, անչափահաս երեխաների նպաստ, միաժամանակ իրագործում էր երկրում համընդհանուր զբաղվածության խնդիրը: Սոցիալական քաղաքականության կարևորագույն տարր էր նաև առաջին անհրաժեշտության ապրանքների դոտացիան, սպառողական գների կայունությունը, որոնք շատ արդյունքների համար անփոփոխ էին մնում տասնամյակների ընթացքում: Սոցիալիզմի իրական նվաճումների թվին կարելի է դասել աշխատանքի և հասրակակալն ֆոնդերի միջոցով սպառման ու բաշխման հարաբերությունների համակարգի ստեղծումը, որն ապահովագրում էր աղքատությունից և երաշխավորում բնակչության լայն շերտերի համար անձնական սպառման բավական բարձր մակարդակ:

Իր բոլոր թերություններով հանդերձ արտադրության կառավարման և պլանավորման կենտրոնացված մեթոդների շնորհիվ ստեղծվել էին պայմաններ, որոնք թույլ էին տալիս տևական ժամանակամիջոցում իրականացնել խոշոր բյուջետային հատկացումներ սոցիալական ոլորտի զարգացման համար: Սոցիալական կարիքների համար զգալի միջոցներ էին հատկացվում արդյունաբերական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների ֆոնդերից, ինչպես

նաև արհեստակցական միությունների միջոցներից: Խորհրդային հասարակության եական, բնութագրիչ կողմերից մեկն էր նաև բեռնացման ցածր աստիճանը:

Այսպես, 1976 թ. բարձր վարձատրությամբ աշխատողների 10%-ի եկամուտների հարաբերակցությունը ցածր վարձատրությամբ աշխատողների 10%-ի եկամուտների նկատմամբ կազմում էր 3,35, իսկ 1986 թվին՝ 3,38²⁶⁰: ԽՍՀՄ փլուզումից հետո իրադրությունը սոցիալական ոլորտում կտրուկ փոխվեց: Ակնհայտ դարձավ, որ

Առաջին՝ կրթության, գիտության և մշակույթի, ինչպես նաև բնակչության անապահով խավերի նկատմամբ հավասարաչափ պետական աջակցության քաղաքականությունը, ըստ էության չլուծելով ոչ մի սոցիալական խնդիր, բերում էր բյուջետային սուղ միջոցների փոշիացում:

Երկրորդ՝ ապրուստի համար անհրաժեշտ նվազագույն սահմանից (մոտ 50-60 ԱՄՆ դոլար, ըստ փորձագետների հաշվարկների) կրկնակի ցածր միջին աշխատավարձի պայմաններում քաղաքացիները չէին կարող լուրջ հատկացումներ կատարարել սոցիալական ապահովագրության ֆոնդերին, այդ թվում՝ մասնավոր: Նույնը վերաբերում էր նաև գործատուների հնարավորություններին: Այս փաստը քիչ հավանական էր դարձնում գործազրկության, հիվանդությունների ապահովագրման գործում համակարգի կազմակերպումը, արդյունավետ կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումը:

Երրորդ՝ սոցիալական լարվածության տեսակետից դրությունը բարդացնում էր նաև այն հանգամանքը, որ պետությունը շարունակում էր հավակնել սոցիալական դաշտում գլխավոր «գործող անձի» դերին, իսկ բնակչությունն առաջվա նման պետությունից սպասում էր համընդհանուր պարտականությունների կատարում, որն իրական չէր:

Չորրորդ՝ արդյունավետ սոցիալական քաղաքականություն իրականացնելու տնտեսական հնարավորությունների կտրուկ անկումը տեղի էր ունենում այն պայմաններում, երբ սոցիալական աջակցության կարիք ուներ բնակչության մոտ մեկ երրորդը: Չարդարացվեցին նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը, պետության՝ իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին: Այս սխալները խիստ սահմանափակեցին հանրապետության տնտեսական զարգացման

²⁶⁰ Ст'я Труд в СССР. Финансы и статистика. 1988, էջ 146:

հնարավորությունները, որը բացասաբար անդրադարձավ բնակչության սոցիալական վիճակի վրա: Պետք է ընդգծել, որ դրանք նաև անցման շրջանի դժվարությունների բնական հետևանքներն էին:

Հինգերորդ՝ պարզորոշ երևաց, որ մասնավոր հաստատված աշխատանքային հարաբերությունները դեռևս կանոնակարգված չէին, արհմիություններն անգործության էին մատնվել: Տեղի էր ունեցել մարդկային կապիտալի փոշիացում, փաստորեն լրջորեն վտանգվել էր միջին խավը՝ ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և կայուն զարգացման խթանիչ ուժը:

Վեցերորդ՝ դրությունը բարդանում էր նաև նրանով, որ դեռևս լուծումներ էին պահանջում բազմաթիվ փախստականների և երկրաչարժի գոտու բնակչության հիմնահարցերը:

Երկրորդ փուլը (1996 թվից հետո, ցայսօր) կազմակերպական առումով սոցիալական ապահովության, համակարգը ինքնուրույն և ֆինանսավորման տարբեր աղբյուրներ ունեցող, այսինքն՝ սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգի տարանջատման սկիզբն էր: Անկախության տասը տարիներին ՀՀ-ում իրական սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տրված թիվ 10 աղյուսակում²⁶¹:

Աղյուսակից երևում է, որ սոցիալական ոլորտի բարեփոխումները չեն բխել հստակ մշակված սոցիալական քաղաքականությունից և ունեցել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ: ՀՀ-ում իրականացվող սոցիալական բարեփոխումները դեռևս համարժեք չեն բնակչության կենսական հիմնախնդիրներին: Հանրապետության բնակչության 68,3%-ը բավարարված չէ ներկայիս իրավիճակով, իսկ 74,3%-ը անբավարար է գնահատում իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքը²⁶²: Կենսամակարդակի և կյանքի որակի խիստ անկման հետևանքով նկատվում է հանցագործությունների, հիվանդությունների, հաշմանդամության, մահացության աճ: Ինչ վերաբերում է սոցիալական զարգացման որոշ ցուցանիշներում նկատվող դրական տեղաշարժերին, ապա դրանք այդպես էլ զարգացման կայուն միտումներ չունեցան:

²⁶¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 89-103: Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2001 (1999, 2000), Եր., 2001, էջ 56-86:

²⁶² Տե՛ս *Պողոսյան Գ.*, Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ: «Հայաստանի տնտեսությունը» 2000 թ., 20 մարտի, էջ 7:

ԱՂՅՈՒՍԱԿ 10

ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները անկախության 10 տարիների (1991-2000 թթ.)

Ցուցանիշները	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Տնտեսության մեջ գրավածների թվաքանակը (հազ. մարդ) (բանվոր-ծառայող)	1672	1578	1543	1488	1476	1436	1372	1337	1298	1283
Գործազրկության մակարդակը (%)		1,8	5,3	6,6	6,7	9,3	10,8	9,4	11,2	10,9
Բնակչության դրամական եկամուտները, մլրդ. դրամ	14,7	41,7	395,0	93,7	289,3	434,3	514,4	581,3	627,1	698,4
Բնակչության դրամական ծախսերը, (մլրդ. դրամ)	12,6	27,5	250,1	84,9	274,5	423,6	519,8	578,9	631,7	682,0
Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	337	1395	12173	174,8	7680	9469	13581	18000	20157	21330
Նվազագույն աշխատավարձը	130-140	1200	7350	375	540	830	1000	1000	5000	5000
Միջին ամսական կենսաթոշակը, (ուրբ./հրամ)	167	1497	9024	1509	2584	3114	3673	3793	4921	4481
Բնակչության դեպոզիտները խնայրանի հիմնարկներում (մլրդ. դրամ)	2111	2284	10300	146	952	2148	3124	5524	8073	12282

* Տե՛ս Սարգսյանի զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2001, էջ 93:

Սոցիալական ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է նշել համակարգում իրականացված կառուցվածքային բարեփոխումները, բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի ստեղծումը, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, կայուն համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինումը և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը: Ոլորտի հետագա զարգացումը հիմնականում կախված է այդ ծրագրերի հետևողական իրագործումից:

ՀՀ սոցիալական քաղաքականությունը դեռևս կայացման փուլում է, իսկ առկա բացթողումները պայմանավորված են ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության, ինչպես նաև սոցիալական գործընթացների համակարգերի բացակայությամբ:

Կառավարության տնտեսական բարեփոխումների ձեռնարկումներում, հատկապես 1992 թվականին, անտեսվեցին սոցիալական կողմնորոշումների հիմնահարցերը:

Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքական ներկա իրավիճակում խոսք լինել է չի կարող հասարակության ամենալայն շրջանների կենսապայմանների բարելավման մասին: Չնայած տարեցտարի պաշտոնապես արձանագրվող 5-6%-անոց տնտեսական աճին, չի հաջողվել այն ուղղել բնակչության լայն շերտերի վիճակի բարելավմանը, շուկայական բարեփոխումների պտուղներից առայժմ օգտվում է բնակչության չնչին փոքրամասնությունը կազմող ունևորների խավը: Կարելի է պնդել, որ տնտեսական աճը հիմնված է երկրի արտաքին պարտքի անընդհատ աճի և եկամուտների ու հարստության անթույլատրելի բեռնացման վրա: ՄԱԿ-ի ազգային փորձագետների դիտարկումներով հախուռն ու հապճեպ սեփականաշնորհման արդյունքում հանրապետության ընտանիքների միայն 8%-ը տիրացավ մասնավորեցված գույքի ավելի քան 90%-ին²⁶³: Առավել հարուստ և առավել աղքատ բնակչության 20%-ի ծախսերի տարբերությունը կազմեց 6,6 անգամ, իսկ եկա-

մուտը՝ 32,2 անգամ: Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Լատինական Ամերիկայի հարավ-արևելյան երկրների շարքում Հայաստանը դեռևս առաջին տեղում է եկամուտների անհավասար բաշխվածության առումով²⁶⁴:

Ավելին, ներկա դրությամբ առավել հարուստ ընտանիքների 4-5%-ը տնօրինում է ողջ ազգային հարստության առնվազն կեսից ավելին: Տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցտարի նվազելով՝ 1998 թ. կազմել է ընդամենը 35,6%: Միևնույն ժամանակ, 1992 թ. համեմատ, ավելի քան 220 հազարով կրճատվել է տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը²⁶⁵: Տնտեսական վերափոխումները որոշակի փոփոխություններ առաջացրին աշխատուժի վերաբաշխման բնագավառում: Եթե 1991 թ. զբաղվածությունը մասնավոր հատվածում կազմել է տնտեսության մեջ զբաղվածների 30,1%-ը, իսկ պետական հատվածում՝ 67,2%-ը, ապա 1998 թ. այն կազմում էր համապատասխանաբար՝ 66,2% և 32,6%, իսկ 1999 թ. համապատասխանաբար՝ 70,6% և 28,9%²⁶⁶:

Տնտեսության ճյուղային կառուցվածքում նույնպես կատարվեցին փոփոխություններ, որոնք հանգեցրին զբաղվածության կրճատմանը արդյունաբերության, շինարարության, առողջապահության, կրթության ու գիտության բնագավառներում և միաժամանակ նպաստեցին դրա ավելացմանը գյուղատնտեսության և առևտրի ոլորտում: Տնտեսության մասնավոր հատվածում զբաղվածության մի զգալի մասը բաժին է ընկնում գյուղացիական տնտեսություններին, որոնցում աշխատում է տնտեսության մեջ զբաղվածների մեկ երրորդը:

Տնտեսության մեջ նման վերափոխումները, սեփականության զանգվածային մասնավորեցումը, անկայուն տնտեսական իրավադաշտը և ի վերջո ընթացիկ տնտեսական հաճախ չհիմնավորված ու սխալ քաղաքականությունը ու այլ գործոններ պատճառ դարձան, որ բազմաթիվ ձեռնարկություններ փակվեն կամ աշխատեն խիստ թերբեռնված: Աշխատողների մեծ մասն անցավ հարկադիր պարապուրդների, ձևական զբաղվածության ու ցածր արտադրողական

²⁶³ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, էջ 39:

²⁶⁴ Տե՛ս 10 лет сотрудничества независимых государств (1991-2000), стат. сборник, М., 2001, էջ 101-149: Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 95:

²⁶⁵ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 119, ց. 15, գ. 80, թ. 2, 3, 20:

²⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 82, թ. 1, 3, 12:

աշխատանքի: Աճեց գործազրկությունը: Աճեց աշխատավարձը և անարդյունավետ զբաղվածությունն առայժմ փոխհատուցվում են պետության թողտվությամբ անլեզալ զբաղվածություն ունենալու և սև շուկայում ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությամբ:

բ. Բնակչության զբաղվածությունը և սոցիալական վիճակը

Տասնյակ տարիների ընթացքում երաշխավորված աշխատատեղին և աշխատավարձին սովոր, աշխատասերի համբավ ունեցող մեր ժողովրդի մի գործուն մասը հանկարծակի հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Տնտեսության ազատականացման գործընթացի հետևանքով տեղի ունեցավ նաև աշխատուժի տեղաշարժ պետահետևանքով տեղի ունեցավ նաև աշխատուժի տեղաշարժ պետական սեկտորից դեպի մասնավորը: Հայաստանի իշխանությունների կողմից աշխատանքային պայմանագրերի կարգավորում և գործարար-վարձու աշխատող հարաբերությունների վերահսկում գրեթե գոյություն չունի: Այս ամենի հետևանքով հանրապետությունում տարեցտարի ավելանում է գործազուրկների թիվը: Ըստ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության տվյալների 1992 թ. հանրապետության տնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմել է 1.550 հազար մարդ, գործազուրկներինը՝ 54,5 հազար, 1996 թ. համապատասխանաբար՝ 1.436 հազար և 1.159 հազար 254 մարդ, 1999 թ.՝ 1.320.1 հազար և 164,2 հազար մարդ, իսկ 2000 թ.՝ 1.283 հազար մարդ և 169,5 հազար մարդ²⁶⁷: Վերլուծությունը ցույց է տալիս, որ գործազրկության մակարդակը 1992 թ. 1,6%-ից աճել է 1999 թ. հասել է 11,1%-ի, իսկ 2000 թ.՝ 11, 7%-ի²⁶⁸: ՀՀ-ում գրանցված գործազրկությունը բնութագրող տվյալները ըստ տարածաշրջանների ցույց են տալիս, որ 2000 թ. գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է երկրաշարժի գոտում՝ Շիրակում (23,3%), Լոռիում (17%), ինչպես նաև Սյունիքի մարզում (20,8%): Գրանցված գործազրկության մակարդակը Երևանում եղել է 12,2%²⁶⁹:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ զբաղվածության ծառայություններում գրանցված չէ փախստականների մեծ մասը,

²⁶⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Եր., 2001, էջ 42, 43, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Ե., 2001, էջ 84:

²⁶⁸ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 7:

²⁶⁹ Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 16:

որոնք քաղաքաբնակ լինելով՝ հաճախ հրաժարվում էին գյուղաբնակ կյանքից՝ համալրելով գործազուրկների շարքերը, ինչպես նաև պաշտոնապես գործազուրկի կարգավիճակ չէին կարող ստանալ (հիմնականում աշխատանք չունենալու պատճառով) Հայաստանը լքած հարյուր հազարավոր քաղաքացիները, ապա պատկերն առավել ամբողջական կդառնա: Հանրապետությունում երկար ժամանակ աշխատանք չունենալով՝ գործազուրկները 2000 թ. կազմեցին ամբողջ գործազուրկների թվի 75%-ը, որոնց մեծ մասը մինչև 50 տարեկան էր և չէր աշխատում 1992 թվից ի վեր²⁷⁰: Շատ գործազուրկներ չէին գրանցվում: Ավելի դժվար է կանանց աշխատանքի տեղավորման խնդիրը: Գործազուրկ կանանց 85%-ը չի աշխատում վեց տարուց ավելի: Առաջին անգամ աշխատանք փնտրողները կազմում են գործազուրկների թվի 23%-ը, որոնց 54%-ը ունի միջնակարգ կրթություն²⁷¹: Հատկապես դժվար է այս կարգի գործազուրկներին աշխատանքի տեղավորելու հարցը, քանի որ, որպես կանոն, գործատուները խուսափում են նրանցից՝ փորձ և հմտություն չունենալու պատճառով: Զբաղվածության վրա ազդող գործոնների վճռորոշն, իհարկե, տնտեսականն է: Նախկինում գործող բազմաթիվ խոշոր ու միջին ձեռնարկությունների չաշխատելու հետևանքով չձևավորվեց իրական աշխատանքի շուկան: Նման պայմաններում չձևավորվեց սոցիալական ապահովագրության (այդ թվում և գործազրկության) համակարգը: 2000 թ. վերջերին կառավարությունն ընդունեց միայն հայեցակարգը, ինչը իրագործման գործընթացի սկիզբն էր միայն²⁷²: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատուժի շուկայում շարունակվում է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խորացումը: Հաճախ գործազուրկները հրաժարվում են ցածր աշխատավարձով աշխատելուց, իրենց մասնագիտությանը և որակավորմանը չհամապատասխանող աշխատանքից:

Հատկապես ծանր է զբաղվածության խնդիրը հանրապետության այն տարածքներում և քաղաքներում, որտեղ մարդը հողի սեփականատեր չէ, և չեն գործում նախկին միջին և մեծ ձեռնարկությունները: Խոսքը Գյումրիի, Վանաձորի, Արթիկի, Չարենցավանի,

²⁷⁰ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 78:

²⁷¹ Տե՛ս նույն տեղում:

²⁷² Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, (1999-2000) գ. Բ, էջ 414:

Հրազդանի, Կապանի և այլ քաղաքների մասին է: Այս վայրերում գործազրկության մակարդակը միջինից 2-3 անգամ բարձր է:

Իրավիճակի վրա դեռևս ազդեցություն չեն գործում փոքր և միջին առևտրի զարգացման ուղղված միջոցառումները: Ինքնազբաղվածությունը խրախուսելու համար պետության կողմից գործազուրկին տրվող անհատույց դրամական միջոցները սպասվելիք արդյունքներ չեն տալիս: Նոր ստեղծվող աշխատատեղերն արագ դառնում են անարդյունավետ, տնտեսության մեջ «սեղանիկ»-ի մակարդակի առևտուրը և սպասարկումը մնում են հիմնական եկամուտի միջոցը: Չեն մշակվել զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրեր, չկա աշխատուժի տեղաշարժի մասին հստակ տեղեկատվություն, չեն հաշվարկվել և համալրվել ազատ աշխատատեղերը, չեն մշակվել միջին և փոքր գործարարության խրախուսման միջոցներ, չկան անհրաժեշտ լծակներ գործազուրկների վերամասնագիտացման և որակավորման բարձրացման համար: Նոր աշխատատեղերի ստեղծումը մնացել է լոկ թղթի վրա, չեն մշակվել սեփականաշնորհվող ձեռնարկություններում զանգվածային ազատումները զսպող աշխատակարգեր, չի սահմանվել նվազագույն աշխատատեղերի քանակը նման ձեռնարկություններում:

Գործազուրկներին օգնելու նպատակով հանրապետությունում 1996 թ. ստեղծվեց «Փարոս» համակարգը, որտեղ ընդգրկվեց 735.000 ընտանիք (բնակչության շուրջ 86%-ը): 1997 թվականին, այսպես կոչված «մաքրումների» շնորհիվ այդ թիվը դարձավ 450.000²⁷³: Ավելին, 1999 թ. անցում կատարվեց ընտանեկան նպաստի համակարգին, որի մեջ 2000 թ. դրությամբ ներառվեց շուրջ 190.000 ընտանիք, և նպաստը բարձրացավ 3500-ից մինչև 7500 դրամի՝ ելնելով կարիքավորությունից, նրա անապահովվածությունից²⁷⁴: Այսպիսի նպաստը չի բավարարում նույնիսկ ամենատարրական պահանջները: Նպաստների հատկացման նման համակարգը չի բխում ո՛չ պետության, ո՛չ էլ նպաստառուների շահերից և սկզբունքային բարեփոխումների կարիք ունի:

Աշխատանքային շուկայում առաջացած անհավասարակշիռ վիճակը հանգեցրեց այնպիսի իրողության, երբ աշխատավարձի միջին մակարդակը չի ապահովում նույնիսկ նվազագույն կենսապայման-

ները: Համաձայն ՀՀ վիճակագրության նախարարության տվյալների, միջին աշխատավարձի իրական մակարդակը (չնայած վերջին տարիների աճին) շարունակում է մնալ շատ ցածր: Օրինակ, դուրային արտահայտությամբ 1997 թ. անվանական միջին աշխատավարձը կազմել է 28 դոլար, 1998 թ.՝ 34 դոլար, իսկ 2000 թ.՝ 40 դոլար²⁷⁵: Եթե դրան ավելացնենք այն հանգամանքը, որ նվազագույն սպառողական զանբյուրը ՀՀ-ում մեկ շնչի հաշվով 2000 թ. կազմել է շուրջ 66 դոլար²⁷⁶, ապա պատկերն առավել ամբողջական կլինի:

Փաստորեն անհամապատասխանությունը սպառողական ապրանքների գների և աշխատավարձի միջև բավական մեծ է: Ընդ որում բյուջետային և ոչ բյուջետային հիմնարկներում այն էականորեն տարբերվում է: 1999 թ. արդյունաբերությունում զբաղվածների աշխատանքային վաստակը գերազանցել է ազգային տնտեսության միջինը 40%-ով, իսկ գյուղատնտեսության մեջ 23%-ով պակաս է եղել: Ամենացածր վաստակը (միջինի 50-55%) կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտում է. միջինից 2,9 անգամ ավելի ցածր²⁷⁷:

2000 թ. հունվար-դեկտեմբերին բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը (գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա) կազմել է 14007 դրամ և 1999 թ. համեմատությամբ ավելացել է 14 տոկոսով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար՝ 26524 դրամ և ավելացել է 16,1 տոկոսով²⁷⁸: Կառավարության ձեռնարկած որոշ միջոցառումների արդյունքում թեև նվազում, բայց իսպառ չեն վերանում աշխատավարձի ապառքները: 2000 թ. սեպտեմբերին հաշվարկված աշխատավարձերի մեջ դրանց բաժինը կազմել է մոտ 37%:

Աշխատաշուկայում գների մակարդակի վրա ազդելու՝ պետության հիմնական միջոցը՝ նվազագույն աշխատավարձը, շարունակում է մնալ խիստ ցածր (մոտ երկու դոլար): Եթե 1992-94 թթ. ընթացքում պետականորեն երաշխավորված նվազագույն աշխատավարձը վե-

²⁷⁵ Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 21:

²⁷⁶ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 77:

²⁷⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 92:

²⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 93:

²⁷³ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 52:

²⁷⁴ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 77:

րանայվել է յուրաքանչյուր եռամսյակը մեկ, 1997 թ.-ի ընթացքում մնացել է անփոփոխ և միայն 1999 թ. ավելացել է հնգապատիկ՝ հասնելով 5000 դրամի: Դրան զուգահեռ 2-3 անգամ ավելացել են պարենային և ոչ պարենային ապրանքների գները: Հանրապետության մեկ շնչի հաշվով նվազագույն պարենային զանբյուրը կազմել է 18 հազար դրամ²⁷⁹: Միավորված ազգերի կազմակերպության հետազոտյունն ակնառու ցույց է տալիս, որ հարցման մասնակցած բնակչության 60%-ը չի կարողանում ապահովել նույնիսկ սննդի համար անհրաժեշտ միջոցներ²⁸⁰: Հայաստանը աղքատության մեջ գտնվող, աղքատացող երկրներից է, որտեղ առկա են այդ երևույթին ուղեկցող բոլոր բացասական երևույթները: Քանակապես ավելացել է նվազագույն սպառողական զանբյուրի հնարավորություն չունեցողների թիվը: Գնալով նվազում են կրթություն ստանալու և առողջապահության համակարգից օգտվելու հնարավորությունները: Հայաստանի չափանիշներով բարձր աշխատավարձն անգամ մարդուն չի փրկում աղքատությունից. ուղղակի կապ չկա նաև աղքատության և տարիքի, սեռի, ընտանիքի չափի միջև:

1988 թ. երկրաշարժից տուժած աղետի գոտին և Աղբբեջանին սահմանակից շրջանները տնտեսապես առավել պասիվ են, իսկ աղքատների թվով՝ խոցելի: Աղքատության հեռանկարները երկրում, ցավոք, ունեն ամրակայման միտումներ: Աղքատությունն սկսում է ձևավորվել որպես ապրելակերպ և ուրվազգծվում է նրան հարմարվելու մեխանիզմը՝ սոցիալական հավասարության, արդարության, կրթության և առողջապահության հավասար մատչելիությունից հրաժարվելու ուղին, որն ի վերջո տանում է դեպի անձի սոցիալական նշանակության կորուստ: Ըստ հաշվարկման նոր ցուցանիշների Հայաստանի Հանրապետության մակարդակով պարենային զանբյուրի (աղքատության պարենային գծի) արժեքը համարվեց 6112 դրամ (ԱՄՆ 13 դոլար), իսկ սպառողական նվազագույն զանբյուրի արժեքը (աղքատության ընդհանուր գիծը) 1 շնչի հաշվով ընդունվեց 10784 դրամ²⁸¹: Այս ուսումնասիրությունների արդյունքում վիճվարչության և

համաշխարհային բանկի մասնագետների վելուծումներով աղքատները Հայաստանում բաժանվեցին սովորական և շատ կամ ծայրահեղ աղքատների, որոնց 1 շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության պարենային գծից. աղքատ են համարվել 1 շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը աղքատության ընդհանուր գծից ցածր լինելու դեպքում: Մեկ շնչի հաշվով աղքատության ընդհանուր գծից բարձր միջին ծախսերի դեպքում հաշվել են ոչ աղքատ: Այս հաշվարկումով, ըստ 1996 թ. ՄԱԿ-ի տվյալների հանրապետության բնակչության 23,9%-ը ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ, իսկ 82,4%-ը՝ վատ, 13,2%-ը՝ բավարար և 4,4%-ը՝ լավ կամ շատ լավ:

2001 թ., անցած տարիների ընթացքում փոխվել է աղքատների և շատ աղքատների միջև հարաբերակցությունը: Շատ աղքատ բնակչության տեսակարար կշիռը ըստ պաշտոնական տվյալների, 1996 թ. համեմատ, կրճատվել է 4,79%-ով: Աղքատները կազմում են 32,14%, շատ աղքատները՝ 22,91%, իսկ ոչ աղքատները՝ 44,95%²⁸²: Այստեղ ակնհայտորեն իր դրական ազդեցությունն է ունեցել ընտանեկան նպաստների համակարգի կիրառումը, քանի որ այն նպատակաուղղված էր չափազանց աղքատ տնային տնտեսությունների վիճակի բարելավմանը: Ընտանեկան նպաստի չափը խիստ փոքր էր համարել հարցման ենթարկվածների 56%-ը²⁸³: Այսպես, եթե մեկ անձից բաղկացած ընտանիքի նպաստի չափը կազմում է 4800 դրամ, ապա միայն կոմունալ-կենցաղային պարտադիր վճարումները այդպիսի ընտանիքներում կազմում էին 5500 դրամ: 2001 թ. նպաստի չափը շարունակում էր մնալ նույնը, քանզի բյուջետային հնարավորությունները թույլ չէին տալիս ավելացնելու նպաստներին հատկացվող միջոցները: Շարունակում է վատանալ նաև բյուջետային ոլորտի աշխատողների կացությունը, որոնց, հատկապես ուսուցիչների, գիտնականների և բուժաշխատողների աշխատավարձերի վճարումները կատարվում են ուշացումներով:

Փորձագիտական գնահատումները ցույց են տալիս, որ բնակչության առավել հարուստ խավի եկամուտների 20%-ը գերազանցում է առավել անապահով ընտանիքների 20 տոկոսի եկամուտները ավելի քան 30 անգամ: Եվ այս միտումները շարունակում են խորա-

²⁷⁹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց Հայաստան 1998, էջ 69: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 93:

²⁸⁰ Տե՛ս նույն տեղում, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999, էջ 38: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 1999, էջ 29:

²⁸¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001, էջ 28:

²⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 44:

²⁸³ Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 11: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001, էջ 50:

նալ: Փաստորեն հանրապետության ավելի քան 830 հազար ընտանիքների քառորդ մասը, ՄԱԿ-ի չափանիշներով, կամ բացարձակ աղքատ է, կամ, ինչպես ընդունված է ասել՝ չքավոր: Եվս 200 հազար ընտանիք, այսպես ասած, հարաբերական աղքատ է: Ընտանիքի այս խմբի օրական եկամուտը կամ ծախսը չի անցնում մեկ ամերիկյան դոլարից²⁸⁴: Իսկ ընդհանուր առմամբ Հայաստանը շարունակում է դասվել ամենից աղքատ երկրների շարքը: Վիճակը վատ է նաև կենսաթոշակային ապահովության բնագավառում: Հանրապետությունում ներկայումս կան շուրջ 580 հազար կենսաթոշակառուներ, որոնց միջին կենսաթոշակը 7-8 դոլար է, այն դեպքում, երբ տարեցտարի թանկանում է էլեկտրաէներգիայի սակագինը, մյուս ապրանքների գները, երբ պարենային զամբյուղի նվազագույն արժեքը, ինչպես նշվեց, անցնում է 30 դոլարից: Ակնհայտ է, որ այս ոլորտը ևս լուրջ վերափոխումների կարիք ունի: 1999-2000 թթ. այն արժանացավ կառավարության ուշադրությանը և այս կապակցությամբ մի շարք որոշումներ ընդունվեցին՝ կապված պետական ամավարկից կենսաթոշակների ավելացման հետ²⁸⁵:

Սակայն աղքատության վերացման կամ նույնիսկ նվազեցման մասին խոսելն առայժմ վաղ է: Ներկայումս այդ առումով գրեթե ոչինչ չի փոխվել: Այսօր էլ մեր բնակչության գերակշիռ մասը զրկված է ապահով ու առողջ ապրելակերպից: Շատերի կյանքի պայմաններն ուղղակի նվաստացուցիչ են: Մարդկանց մի ստվար մասի համար նույնիսկ կենսական պայմանների նվազագույն զամբյուղը շարունակում է անհասանելի ճիսություն համարվել: Հատկապես անմատչելի է հիվանդանոցային բուժսպասարկումը, եթե հաշվի առնենք, որ դեղերի մեծ մասի արժեքը գերազանցում է հանրապետության ազգաբնակչության աշխատավարձը կամ այլ եկամուտները: Հարստության և աղքատության ահռելի հակադրությունը՝ սոցիալական բեռնացումը, ակնհայտ է: Հայաստանի ամբողջ բնակչությանը կարելի է բաժանել երկու պայմանական խմբի՝ աղքատներ և ոչ աղքատներ:

Աղքատները ներկա Հայաստանում ակներևորեն կազմում են հատուկ սոցիալական շերտ և բացահայտորեն ազդում են երկրում բարոյական ու հոգեբանական արժեքների ձևավորման վրա: Ըստ

պաշտոնական ցուցանիշների նրանք ներկայացնում են Հայաստանի բնակչության կեսից ավելին, իսկ ըստ հարցումների՝ 80%-ը²⁸⁶, որը ներառում է գյուղացիության շոշափելի մասը, բանվորների մեծ մասը, գիտնականների գերակշռող մասը, ինչպես նաև՝ մանր առևտրականներին, որոնք ձևավորվել են նախորդ շերտերից: Փաստորեն այսօրվա Հայաստանում սոցիալական խմբերը սահմանազատվում են ըստ ստացած եկամտի: Բնակչության աղքատ խավը բաժանված է երեք խմբի՝ ըստ գոյատևման խնդիրներին դիմակայելու նրանց նվազագույն հնարավորությունների:

Առաջին. Ծայրահեղ աղքատներ: Այս խմբի մեջ մտնում են ծայրահեղ աղքատները, որոնք ունեն մթերքների, հագուստի, կենցաղային պայմանների այնպիսի մակարդակ, որ վտանգում է օրգանիզմի ֆիզիոլոգիական նորմալ գործունեությունը: Նրանց մեջ գերակշռում են փախստականները, գործազուրկները, միայն բյուջետային հիմնարկներից աշխատավարձ ստացող մարդիկ (որոշ գիտաշխատողներ, ուսուցիչներ, տեղամասային բժիշկներ և այլն), միայնակ թոշակառուներ: Սրանք կազմում են բնակչության մոտ 13%-ը, որոնց ծախսերը չեն գերազանցում 17 ԱՄՆ դոլարին²⁸⁷:

Երկրորդ. Աղքատներ: Օրգանիզմի համեմատաբար նորմալ ֆիզիոլոգիական պայմանների բավարարման մակարդակ, երբ սնունդ կա, բայց չկա տեսականու բազմազանություն: Նման ընտանիքներն այսօրվա մասնագիտական և սոցիալական շերտերի իմաստով խիստ բազմազան են, և սրանց նյութական վիճակն արագորեն կարող է իջնել կամ բարձրանալ: Աղքատները կազմում են Հայաստանի բնակչության մոտ 34%-ը, որոնց ամսական ծախսը 17-35 ԱՄՆ դոլար է²⁸⁸:

Երրորդ. Համեմատական աղքատներ: Այս խմբի մեջ մտնողները բավարար միջոցներ ունեն՝ ապահովելու հագուստի և օրգանիզմի նորմալ գործունեության համար անհրաժեշտ սննդի քանակությունը, սակայն իրականում աղքատ են, քանի որ չեն կարող ծրագրավորել իրենց եկամուտները և բավարարել կենցաղային ոչ առաջնային անհրաժեշտության կարիքները (կահույք, կենցաղային տեխնիկա և այլն): Այս խմբի մեջ մտնողները (արտագնա բանվորներ, արտասահ-

²⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 58-65, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 73:

²⁸⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000), էջ 458, 464-466:

²⁸⁶ Տե՛ս Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000 թ. էջ 51:

²⁸⁷ Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 12, 2000, էջ 73: ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001, էջ 62, 64:

²⁸⁸ Տե՛ս նույն տեղում:

մանից բազմաբնույթ օգնություն ստացողներ, փոքր և միջին առևտրականներ, գյուղացիների մի մասը և այլն) կազմում են Հայաստանի բնակչության մոտ 40%-ը: Նրանց ամսական ծախսերը կազմում են 35-55 ԱՄՆ դոլար²⁸⁹:

Չորրորդ սոցիալական շերտը «*հարուստներն են*»: Սրանք իշխող ընտրախավն են, պետական բարձր պաշտոնյաներից շատերը, գործարանատերերը, խոշոր առևտրականները և այլն, որ վայելում են բոլոր առավելությունները՝ պետական և մասնավոր վարկերի մատչելիություն, պետական ունեցվածքը տնօրինելու հնարավորություն, մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու միջոցներ և այն ամենը, ինչից սովորական քաղաքացիների մեծ մասը զրկված է:

Աղքատության պատկերն առավել ցայտուն է աղետի գոտում և փախստականների բնակավայրերում: Փախստականների ընտանիքների 35%-ը սնունդ հայթայթելու միջոց չունի, իսկ հինգից մեկն անկարող է հայթայթել անգամ օրվա հացը: Աղքատության մեջ է ապրում նաև աղետի գոտու բնակչության կեսից ավելին, որի 15%-ը ծայրահեղ աղքատ է²⁹⁰:

Հայաստանում աղքատության մասին առավել իրական պատկերացումներ են տալիս Հայաստանի տարբեր մասերում յոթամյա գիտարշավների ընթացքում (1993-2000 թթ.) ազգագրագետ-հեղինակների գրանցած հարցազրույցները, որոնց միջոցով ընթացողը մուտք է գործում «աղքատության աշխարհը»: Այդ նյութերից երևում է չքավորների կենցաղը, ակնկալիքներն ու հույսերը, ինչպե՞ս և ինչո՞ւ աղքատացավ Հայաստանի Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, ովքե՞ր էին աղքատացողները, գոյատևման ի՞նչ հնարավորություններ ունեն, ովքե՞ր և ինչպե՞ս են օգնում աղքատներին և ի՞նչ ուղիներ կան աղքատությունից դուրս գալու համար²⁹¹:

Աղքատության վերաբերյալ պատկերացումները Հայաստանում, որոնք պայմանավորված են տվյալ հասարակության՝ որոշակի ժամանակաշրջանի էթնոմշակութային ողջ համալիրով, մասամբ չեն համապատասխանում ներկա իրավիճակին, երբ աղքատ խավին են վերագրվում նաև բարձրագույն կրթությամբ, մշակույթի և գիտության ոլորտի աշխատակիցները, նախկինում և այժմ հասարակական

հարաբերություններում որոշակի դիրք ունեցողները:

Հանրապետության կառավարությունը, չնայած դեռևս չունի աղքատության և արտագաղթի դեմ պայքարի հաստատված ծրագրեր, ինչպես նաև պաշտոնապես հաստատված նվազագույն սպառողական զամբյուղ, սակայն որոշակի աշխատանքներ այս ուղղությամբ տարվում են ՀՀ կառավարության, միջազգային հանրության միացյալ ջանքերով: Քննարկման գործընթացում են «Աղքատության կրճատման ռազմավարական ծրագիրը» և արտագաղթի քաղաքականության հայեցակարգը: Իրավիճակը որոշ չափով մեղմացնելու նպատակով գործնական քայլեր են ձեռնարկվում որոշ կազմակերպությունների կողմից ինչպես բարեգործական օգնության բաշխման, այնպես էլ հետազոտական աշխատանքների նախաձեռնության ուղղությամբ: Այսպես, օրինակ, 1999 թ. մարտից Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում ստեղծվեց եկեղեցական վարկային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը, որը տրամադրում է փոխառություններ Հայաստանի առավել աղքատ շրջաններին: 2000 թ. նա ֆինանսավորել է գյուղատնտեսության հետ կապված 31 ծրագրերը Երևանում, Արմավիրում, Լոռիում, Վայոց Ձորում, Արագածոտնում և Գեղարքունիքում²⁹²:

գ. Բնակչության տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական հետևանքները

Հայաստանում սոցիալական շերտավորման հետագա խորացումը ի մի բերելով՝ կարելի է ասել, որ անցման փուլում աղքատությունը կտրուկ աճել է, իսկ եկամուտների բաշխումը՝ վատթարացել: Դրա հետևանքով հանրապետությունում չի դադարում արտագաղթը: Ըստ ՄԱԿ-ի և ՀՀ վիճնախարարության ներկայացրած տվյալների՝ Հայաստանի մոտավորապես 3 մլն 802 հազար բնակիչներից 1991-2001 թթ. ընթացքում երկրից հեռացել է մոտ 1 մլն 300 հազարը, վերադարձածների թիվը կազմել է 380 հազար, այսինքն՝ միգրացիայի զուտ արդյունքը կազմել է 920 հազար մարդ՝ հօգուտ տարագիրների, որը ՀՀ քաղաքացի հանդիսացող առկա բնակչության թվաքանակի 18%-ն է²⁹³: Այդ ժամանակաշրջանում աշխատունակ բնակչության

²⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁹⁰ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 73:

²⁹¹ Մանրամասն տե՛ս «Պատմություններ աղքատության մասին, Եր., 2001:

²⁹² Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 74:

²⁹³ Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 12: Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 67: ՀՀ տնտեսության հիմնական բնութագրիչները, էջ 16: Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, էջ 28:

տեսակարար կշիռը նվազեց 7%-ով՝ բնակչության ընդհանուր թվաքանակում կազմելով 51%²⁹⁴։ Դրա պատճառն այն է, որ Հայաստանից արտագաղթածների 82%-ը աշխատունակ տարիքում էր։ Արտագաղթի ծավալը 1991-96 թթ. կազմել է մոտ 677 հազար մարդ, իսկ հետագայում տարեկան միջինը 70-150 հազար մարդ²⁹⁵։ Ամենամեծ արտագաղթը՝ 250 հազար մարդ, տեղի է ունեցել 1993 թ.²⁹⁶։ Երբ երկրում արհեստականորեն ծանր պայմաններ էին ստեղծվել բնակչության համար։

Տեղաշարժվողների ընդհանուր թվում նկատելիորեն առանձնանում են երկու տիպի հոսքեր։ Առաջինը, որ կազմում է արտագնացողների 55%-ը, բաղկացած է անհատ տեղաշարժվողներից, որոնք ժամանակավորապես հեռացել են՝ աշխատանք փնտրելու նպատակով և դրանով օժանդակում են ընտանիքին։ Հայրենիքում մնացած հարազատներին ուղղվող դրամական փոխանցումները կազմում են միջին ընտանիքի սպառողական բյուջեի մոտ 15%²⁹⁷։ Երկրորդը՝ ընտանեկան գաղթն է։ Ընտանիքով գաղթողների մեծամասնությունը լքում է երկիրը և ամենայն հավանականությամբ ընդմիջտ բաժանվում է Հայաստանից։ Արտագաղթը էապես խախտել է բնակչության սեռատարիքային համամասնությունը։ Տղամարդկանց տեսակարար կշիռը սրընթաց նվազել է՝ կազմելով 48,6%, իսկ 2000 թ. հունվարին՝ մինչև 44,6%²⁹⁸։

Արտագաղթի հետևանքով բնակչության մեջ տեղի է ունենում տարիքային խմբերի համամասնության խախտում։ Այսպես, նկատվում է մեծահասակների թվի հարաբերական ավելացում։ 60 և ավելի տարիք ունեցողներն այսօր կազմում են բնակչության ընդհանուր թվի 12%-ը, այն դեպքում, երբ 70-ական թվականներին 9% էր²⁹⁹։ Այս ցուցանիշը շեշտվում է, եթե հաշվի առնենք նաև կյանքի տևողության կրճատումը։ Մասնագետների գնահատումներով կյանքի միջին տևողությունը կրճատվել է 9 տարով։

²⁹⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, էջ 30, 31։

²⁹⁵ Տե՛ս Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 14։

²⁹⁶ Տե՛ս նույն տեղը։

²⁹⁷ Նույն տեղում։ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 87։ ՀՀ տնտեսության հիմնական բնութագրիչները, էջ 16։

²⁹⁸ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 87։ Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 13։

²⁹⁹ Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 12։ Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, էջ 28։

Արտագաղթի վերաբերյալ ուղղակի տվյալների պակասը լրացվում է այնպիսի անուղղակի վկայություններով, ինչպիսիք են ծնելիության և մահվան ուղղակի թվային տվյալները։ Այսպես, 2000 թվականին 1999 թ. նկատմամբ բնակչության աճը նվազել է 22,8%-ով, այդ թվում ծնունդը նվազել է 7,1%-ով, մահացածությունն աճել է 3-8%-ով³⁰⁰։ Ծնվածների բացարձակ թվաքանակն անկախության ժամանակահատվածում (1991-2001 թթ.) կրճատվել է ավելի քան 2 անգամ։ Գրանցված մահացածների թիվն աճել է 2,3%-ով³⁰¹։

Բնակչության տեղաշարժերի ակտիվությունը պայմանավորված է եկամուտներով։ Աղքատներն ու հարուստներն առավել քիչ են մասնակցում արտագաղթին։ Առաջիններն այն պատճառով, որ հնարավորություն չունեն, երկրորդներն ունեն հնարավորություն, բայց ցանկություն չունեն։ Հիմնական արտագաղթողները բնակչության միջին ապահովվածություն ունեցող շերտերն են։ Արտագաղթողների մեծ մասն իր բախտը փնտրում է ԱՊՀ երկրներում (հատկապես Ռուսաստանի Դաշնությունում), միայն 25-30%-ը՝ հեռավոր արտասահմանում³⁰²։ Ներկայումս մեծանում է ԱՄՆ և եվրոպական երկրներ արտագաղթողների թիվը։ Այսպես, օրինակ, 1999 թ. ԱՄՆ մեկնելու համար դիմողների թիվը կազմել է 14 հազար, իսկ 2000 թ.՝ 27 հազար մարդ։ Այս աղետալի երևույթի հիմնական պատճառներն են՝ աշխատանքի բացակայությունը (26%), բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը (25,9%), կյանքի ոչ նորմալ կենցաղային պայմանները (13%), Հայաստանում զարգացման հեռանկարների նկատմամբ հավատի բացակայությունը (11,8%) և այլն³⁰³։ Արտագաղթի գլխավոր պատճառներից են նաև փոփոխված իրավիճակներին հարմարվելու հոգեբանական հիմնախնդիրը՝ վերամասնագիտացման հարցի լուծման փաստացի անհնարինությունը, վստահության, անձնական անվտանգության զգացողության բացակայությունը։ Դա վերաբերում է հատկապես գործարար հատվածին։ Ցավալին այն է, որ արտերկիրն այդպես էլ փրկության ասի չի դառնում արտագաղթողների համար, շատ հաճախ նրանք այնտեղ էլ մարդու իրավունքների և այլ բնույթի ոտնահարումների զոհ են դառ-

³⁰⁰ Տե՛ս նույն տեղում։

³⁰¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, էջ 30։

³⁰² ՀՀ տնտեսության հիմնական բնութագրիչները, էջ 16։

³⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 16։ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 186։

նում:

Փորձագետները գտնում են, որ բնակչության տեղաշարժման բարձր ակտիվությունը Հայաստանում դեռ երկար կպահպանվի:

Դժբախտաբար, իշխանությունների կողմից բավականաչափ չի գիտակցվում հասարակության մեջ ժողովրդագրական ճգնաժամի խորությունը՝ կապված արտագաղթի հետ, հետևաբար այդ ուղղությամբ համապատասխան քաղաքականություն չի մշակվում: Սոցիալական պաշտպանվածության ծրագրերի բացակայությունը ներկայումս ավելի է վատթարացնում արտագաղթի շնորհիվ առաջացած ժողովրդագրական իրավիճակը: Արտագաղթողների մեծ մասն ունի կրթական բարձր մակարդակ: Բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցողների բաժինը Հայաստանի 16 տարեկանից բարձր տարիք ունեցող բնակչության մեջ կազմում է 25%, որոնց մոտ կեսն ունի համալսարանական կամ մասնագիտական կրթություն³⁰⁴: Բնակչության ամենակրթված հատվածը երկիրը լքում է այլ խմբերից առավել: ՄԱԿ-ի տվյալները վկայում են, որ արտագաղթն առավել ինտենսիվ է մասնագետների շրջանում: Ուսումնասիրության համաձայն հինգ տարվա ընթացքում՝ 1990-1995 թթ., Հայաստանը կորցրել է մասնագետների ընդհանուր թվի մեկ երրորդը, մինչդեռ կորուստները փաստաբանների, տնտեսագետների, մանկավարժների և բարձրագույն կրթություն ունեցող այլ մասնագետների շրջանում կազմում են ընդամենը 12%³⁰⁵: Այս տարբերությունը հասկանալի կդառնա, եթե հաշվի առնվի որոշ մասնագիտությունների համար փոփոխվող շուկայական պահանջարկը, որն իր հերթին հանգեցնում է կառուցվածքային գործազրկության: Այսպիսով, որոշ մասնագիտությունների տեղ մարդիկ խրախուսվում մնում են Հայաստանում, մինչդեռ մյուսները արտագաղթում են: Այս ամենը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն հանրապետության գիտակրթական մակարդակի, այլև սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

դ. Առողջապահություն

Հայաստանի առողջապահության համակարգը ժառանգել է բավական հարուստ նյութատեխնիկական բազա՝ հիվանդանոցների, պոլիկլինիկաների և այլ բուժօգնականների համապարփակ ցանց: Բնակչության մեկ շնչի հաշվով՝ բժիշկների թվաքանակով Հայաստանը դասվում էր աշխարհի զարգացած երկրների շարքը: Հիվանդանոցների մահճակալային հագեցվածությամբ Հայաստանում յուրաքանչյուր 1000 մարդուն բաժին էր ընկնում 7 մահճակալ³⁰⁶: Չնայած հիվանդանոցների ցանցն ըստ մարզերի բաշխված էր անհավասարաչափ, գյուղական բնակավայրերը երբեմն բավականին հեռու էին հիվանդանոցներից, սակայն բուժսպասարկումը կազմակերպվում էր քիչ թե շատ պատշաճ մակարդակով: Առողջապահության համակարգն անվճար էր, ուստի մարդկանց հոգեբանության մեջ ամրացել էր անվճար առողջապահական համակարգը միակ հնարավոր ձևը համարելու գաղափարը: 1990-ական թթ. առողջապահության ենթակառուցվածքը հիմնականում պահպանվեց: Ավելին, բուժարքավորումները, որ ստացվել էին երկրաշարժից տուժածներին մարդասիրական օգնության համար, հնարավորություն տվեցին մի շարք հիվանդանոցներ, մասնավորապես Երևանում և երկրաշարժի գոտում, հասցնել համաշխարհային չափանիշներին: Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջավոր բժշկական հիմնարկներում վերապատրաստված հայ բժիշկները հնարավորություն ունեցան Հայաստանում իրականացնելու ամենաբարդ հիվանդությունների ախտորոշում և բուժում:

Սակայն սոցիալ-տնտեսական դժվարություններն ու ճգնաժամը բացասական ազդեցություն ունեցան նաև հանրապետության առողջապահության համակարգի վրա: Համակարգն ընդհանուր առմամբ դարձավ վճարովի, իսկ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և ծառայությունների դասակարգումը բավական խրթին էր, որի պատճառով բնակչության մեծ մասը չէր պատկերացնում, թե ինչ չափանիշներով էր ստանալու բուժօգնություն: Ունենալով, փաստորեն, լուրջ համակարգված կառուցվածք՝ առողջապահությունը միևնույն ժամանակ դառնում էր անհասանելի, սակագները բնակչության մեծ մասի համար մատչելի չէին, գրեթե բոլոր բուժօգնականներում բացի պաշտոնական վճարներից գոյություն ուներ ստվերային վճարումների համակարգ: Այս ամենը բնակչու-

³⁰⁴ Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 28, 29: Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, Եր., 2001, էջ 52, 53:

³⁰⁵ Տե՛ս Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 14: Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 52, 53:

³⁰⁶ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ, Եր., 1991, էջ 110, 111:

յան մեջ ստեղծել էր խոր դժգոհություն և անվստահություն առողջապահության համակարգի նկատմամբ:

Անցման շրջանում այս ոլորտում նույնպես զբաղվածությունը խստիվ նվազեց: Դա բացատրվում էր ոչ միայն սոցիալական լարվածության ուժեղացումով, առողջապահության համակարգի վատթարացող իրավիճակով, այլև արտագաղթով և ծննդի նվազումով: 1990 թ. շուրջ 80 հազարի դիմաց 2000 ծնվածների թիվը կազմել է 34,5 հազար, այսինքն՝ նվազել է ավելի քան 2 անգամ³⁰⁷: Բուժաշխատողների որոշ մասի գաղտնի և բացահայտ վճարովի մեթոդների ազատականացումը, օրենքով հովանավորումը, դեղորայքի չափազանց բարձր գները, ինչպես նաև բարձր որակավորման աշխատողների, հատկապես բժիշկների մեծ մասի ցածր վարձատրությունն ունեցան անդառնալի հետևանքներ: Բարձր որակավորում ունեցող բժիշկների մի զգալի մասն ընդգրկվեց առևտրական կառույցներում, մեկնեց այլ երկրներ: Հիվանդները բուժվելու համար միջոցներ չունեին, ուստի գնալով ավելացան հիվանդությունները, մահացությունը, խիստ նվազեցին պոլիկլինիկաներ հաճախողները, հիվանդանոցում բուժվում էին միայն ծայրահեղ անհրաժեշտությունից դրդված: Հիվանդանոցներում հիվանդները չէին ապահովվում անհրաժեշտ դեղամիջոցներով, վիրակապերով, սննդով, սպիտակեղենով և առաջին անհրաժեշտության այլ առարկաներով:

Այս համակարգում բարեփոխումների հիմքը հանդիսացավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թ. մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը³⁰⁸: Այդ օրենքով որոշ ծառայություններ, ինչպես օրինակ, ատամնաբուժությունը և պլաստիկ ու կոսմետիկ վիրաբուժությունը դարձան վճարովի: Բուժանձնակազմի որակավորումը և բուժօժանդությունների որակը պետք է բարձրանար արտոնագրման համակարգի ներմուծման միջոցով: Հանրապետության կառավարությունը 1997 թ. մայիսին որոշում ընդունեց առողջապահության համակարգի ֆինանսավորման նոր ձևին անցնելու մասին՝ հիմնական բուժսպասարկումը, որոշ բացառություններով, դարձնելով վճարովի: Այդ նույն որոշմամբ պետք է ֆինանսավորվեին միայն տուբերկուլյոզային, նարկոլոգիական, մաշկավեներոլոգիական, ուռուցքաբանական հիվանդություն-

ների բուժումը, շտապ օգնության, վերակենդանացման ծառայությունները³⁰⁹: Պետական պատվերով բուժօժանդություններից կարող էին օգտվել բնակչության որոշ, սոցիալապես առավել խոցելի խավերը, հաշմանդամները, մինչև յոթ տարեկան երեխաները և այլն: Սակայն պետական բյուջեն շարունակում էր չկատարել ստանձնած պարտավորությունները, և դոտացիոն բուժսպասարկումը, փաստորեն, մնում էր վճարովի: Բնակչության համար պետության կողմից ֆինանսավորված և երաշխավորված անվճար բուժօգնությունը և ծառայություններն իրականացվում են առողջապահական նպատակային ծրագրերին համապատասխան՝ ընդգրկելով համարյա ամբողջ բնակչության զանազան հիվանդությունները, ինչպես նաև բնակչության որոշ խավերի համարյա բոլոր հիվանդությունները: Մինչդեռ ակնհայտ է, որ նույնիսկ, այսպես կոչված, «անապահով» խավերի ցուցակը չէր ընդգրկում բնակչության սոցիալական աջակցության իրական կարիք ունեցողների ցանկը: Բուժօգնության մատչելիությունը հատկապես բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերի համար դարձել է կարևորագույն խնդիր: Առողջապահական ծառայությունների գերակշիռ մասը պաշտոնապես համարվում է անվճար, սակայն հիվանդների կողմից կատարվող ոչ պաշտոնական վճարումների պատճառով լուրջ արգելքներ են ստեղծվում բնակչության մի զգալի մասի համար, որի անմիջական հետևանքը հիվանդությունների աճող տեմպերի պայմաններում բուժհիմնարկներ դիմող քաղաքացիների թվի նվազումն է: Որոշ փորձագիտական գնահատումներով հիվանդ մարդկանց 59,4%-ը գերադասում է ինքնախտորոշվել և բուժհիմնարկներ չդիմելու հետևանքով արիեստականորեն նվազում է հիվանդների թիվը³¹⁰: Առողջապահական համակարգը ներկայումս էլ աշխատում է իր հնարավորությունների կեսի չափով: 2000 թվին հիվանդանոցներում մահճակալների զբաղվածությունը կազմել է ընդամենը 35%, մարզերում այն որոշ դեպքերում 10-15% է: 1990 թվականի համեմատ 2000 թ. պոլիկլինիկաներում հաճախումները նվազել են 45%-ով, տնային կանչերի թիվը 53%-ով, իսկ շտապ օգնության կանչերը՝ 60%-ով³¹¹:

Անկասկած, այս ամենը պայմանավորված է ոչ թե մարդկանց

³⁰⁹ Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12, 5 հունիսի, 1997, էջ 48, 49:

³¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թվականին, Եր., 2001, էջ 54, 65: Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 2001, էջ 110:

³¹¹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001, էջ 140, 141:

³⁰⁷ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1996, Եր., 1998, էջ 27: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001, էջ 29:

³⁰⁸ ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Եր., 1999, էջ 140-148:

առողջության բարելավմամբ, այլ հետևանք է բարձր գների, բուժա-
ռայությունների որակի զգալի անկման և բնակչության անվճարու-
նակության: Միևնույն ժամանակ վերջին տարիներին աճի միտում
ունեն սոցիալական վիճակի հետ առնչվող այնպիսի հիվանդություն-
ներ, ինչպիսիք են վարակիչ, մանկական, արյան և արյունաստեղծ
օրգանների հիվանդությունները: Աճել են նաև սրտանոթային համա-
կարգի հիվանդությունները, որոնք կազմում են ընդհանուր մահա-
ցության 54%-ը, և այդ ցուցանիշը շարունակում է աճել:

1997 թվականից առողջապահական համակարգի բարեփո-
խումներն ընթանում են չորս ուղղություններով՝ համակարգի կազ-
մակերպական կառուցվածք և կառավարում, ցանցի կառուցվածք,
առողջապահության ֆինանսավորում և բժշկական կրթություն:

ՀՀ առողջապահության համակարգի կառավարման բարեփո-
խումների ռազմավարական նպատակը համակարգի բարելավումն է՝
պետական մենաշնորհի հանդիսացող առողջապահական կառույցնե-
րի արձատյան վերափոխումների իրականացման, մասնավորեց-
ման և ապապետականցման միջոցով: Ներկայումս մասնավորեցված
են 18 առողջապահական հաստատություններ, ընդ որում 4 աստա-
մաբուժական պոլիկլինիկաներ, առողջարաններ և մեկ գիտահետա-
զոտական ինստիտուտ: Այդ ձեռնարկումները, հաշվի առնելով ներ-
կայիս սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակը, նպատակահարմար
չեն բնակչության լայն շերտերի համար: Առողջապահության համա-
կարգի կառավարման բարեփոխումը ենթադրում է երկու ուղղու-
թյուն՝ ապակենտրոնացում և մի շարք գործառույթների կենտրոնա-
ցում: Ապակենտրոնացման արդյունքում ոլորտի պետական կառա-
վարման լիազոր մարմինը՝ ՀՀ Առողջապահության նախարարու-
թյունը որոշում է երկրում առողջապահական քաղաքականության
խնդիրներն ու ուղղությունները, համապետական չափորոշիչներն ու
չափանիշները: Ապակենտրոնացման ուղղությամբ կարևոր քայլ է
նաև պետական առողջապահական գործակալության ստեղծումը,
որի միջոցով տարանջատվել են բժշկական օգնություն և սպասար-
կում իրականացնող և դրանց դիմաց վճարումներ կատարող մար-
մինները:

ՀՀ առողջապահության ֆինանսական համակարգի վերջին տա-
րիների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջապահական պե-
տական նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացված
աշխատանքների ծավալները գերազանցում են պետական բյու-

ջեով կատարված ծախսերը: Ուստի անխուսափելի փուլ է դառնում
վճարովի ծառայությունների ներդրումը՝ իր բոլոր բացասական
հետևանքներով: Այս գործընթացը բնակչության համար պակաս ցա-
վագին դարձնելու համար ներկայումս փորձ է արվում իրականաց-
նել առողջապահության ֆինանսավորման բազմաձևության՝ պետա-
կան պատվերի, համավճարի, բժշկական ապահովագրության, ինչ-
պես նաև ուղղակի վճարումների համակարգի ներդրում: Առողջա-
պահության պետական վերափոխումների շրջանակում 1998 թ. գար-
նանից սկսեց իրագործվել Համաշխարհային բանկի հետ համատեղ
մշակված ծրագիրը՝ 10 մլն ԱՄՆ դոլարի անտոկոս վարկի հաշվին:
Նախատեսվում է անցնել պարտադիր բժշկական ապահովագրու-
թյան, սկզբնական փուլում հիվանդությունների մի շարք տեսակների
համար պահպանելով անվճար առողջապահությունը՝ որոշ սոցիա-
լական խմբերի համար: Սակայն պարտադիր առողջապահական
ապահովագրությունը ոչ մի խնդիր չէր կարող լուծել բնակչության
մեծամասնության ցածր աշխատավարձի և լայնածավալ ստվերային
տնտեսության պատճառով:

Առողջապահության ֆինանսավորման համակարգում 2000 թ.
հունիսի 1-ից ներդրված հիվանդանոցային հաստատությունների
կողմից իրականացված ծառայությունների դիմաց վճարման գլոբալ
բյուջեի մեթոդը նպատակ ունի ավելի կառավարելի դարձնելու հա-
մակարգում ծախսերի վերահսկումը, հստակեցնելու պետության
պարտավորությունները բուժօգնության բնագավառում:

Ներկայումս բարեփոխումների կարիք ունի նաև առողջապա-
հության կրթական համակարգը: Բժիշկների և բուժքույրերի նախկի-
նում առաջացած «ավելցուկը» հուշում է, որ կադրերի պատրաս-
տումը պետք է համապատասխանեցնել իրական պահանջարկին:
2001 թ. անվճար ընդունելությունը պետական բժշկական համալսա-
րան 1992 թ. 1400 տեղից կրճատվեց մինչև 300-ի, քույրական գործի
բազային կրթությունը դարձավ 3 տարի՝ 2-ի փոխարեն³¹², ընդլայնվե-
ցին մասնագիտական կրթական ծրագրերը՝ հետդիպլոմային մաս-
նագիտացումը հասցվեց 4 տարվա: Կադրերի պատրաստման կար-
գավորմանը զուգընթաց կրթական բարեփոխումներն ուղղվեցին
նաև նրանց մասնագիտական որակի բարելավմանը: 1996 թվակա-
նից բոլոր բժիշկները, բուժքույրերը և դեղագործները 5 տարին մեկ

³¹² Տե՛ս Դիմորդ 2001, ՀՀ պետական բուհեր ընդունվողների համար, Եր., 2001, էջ 29:

ենթարկվում են լիցենզավորման:

Առողջապահության համակարգում ներկայումս իրականացվում են արմատական վերափոխումներ ընտանեկան բժշկի ինստիտուտի ստեղծման ուղղությամբ: Դրա նպատակն է ընտանիքի անդամներին առաջնային բժշկական օգնություն ցույց տալու իրավունք ունեցող բազմապրոֆիլ ընտանեկան բժիշկների պատրաստումը, որն ըստ առողջապահության բարեփոխումների ծրագրի, մոտակա 15 տարիների ընթացքում կփոխարինի ներկայիս ամբուլատոր պոլիկլինիկական համակարգին: ՀՀ առողջապահության համակարգի բուժօգնության մարկների զարգացման ճանապարհին կարևոր քայլ էր 2001 թ. հունվարին ՀՀ նախագահի կողմից հաստատված «2001 թ. առողջապահական պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» օրենքը³¹³: Այն ուղղված է բնակչության առողջության պահպանմանը, նրանում սահմանվում են բնակչությանը ամեն տարի մատուցվող, պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնությունն ու ծառայությունները, որոնք ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից:

ե. Գիտակրթական բարեփոխումներ

ԽՍՀՄ-ի գոյության պայմաններում, ինչպես Հայաստանի արտադրական համալիրը, այնպես էլ գիտությունը և կրթությունը հանդիսանում էին միության երբեմնի հզոր ու միասնական գիտակրթական համալիրի անկապտելի բաղադրիչը: Այստեղ, ըստ էության, չկային ֆինանսավորման կամ նյութատեխնիկական ապահովման հիմնախնդիրներ:

Հայաստանի՝ շուկայական տնտեսությանն անցման փուլում ակնհայտ դարձան գիտության կազմակերպչական թերությունները: Մասնավորապես տեխնիկական ուղղվածության խոշորագույն գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասում դադարեցվեցին շատ թեմաների մշակումները, քանի որ վերջիններս նախկինում պատվիրվում և ֆինանսավորվում էին Մոսկվայի ինստիտուտների կողմից:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում նախկին միութենական հանրապետությունների գիտական հանրության

շրջանակում: 1988 թ. տվյալներով Հայաստանի գիտության ոլորտում աշխատում էր շուրջ 22 հազար գիտաշխատող: Հայաստանի գիտական ներուժը կենտրոնացած էր 250 գիտահետազոտական, գիտատեխնիկական, նախագծային-արհեստագիտական և գիտական օժանդակ կազմակերպություններում ու հաստատություններում: Դրանցից 105-ը զբաղվում էր հիմնարար հետազոտական աշխատանքներով, իսկ 20-ը՝ գիտական-արտադրական ընթացիկ պատվերների հետ կապված հետազոտություններով: Հայաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում գործում էին 31, առողջապահության նախարարության համակարգում՝ 16, գյուղատնտեսության ոլորտում՝ 10, էլեկտրատեխնիկական, քիմիական և հաստոցաշինական ճյուղերում՝ 12 գիտահետազոտական ինստիտուտներ³¹⁴:

Սակայն Հայաստանի անկախությունից հետո ստեղծված տնտեսական ծանր վիճակը, նյութական և ֆինանսական միջոցների անբավարարությունը (1992-93 թթ. գիտությանը հատկացվել էին ՀԱԱ-ն 1%-ից պակաս միջոցներ), էլեկտրաէներգիայի և ջեռուցման բացակայությունը, գիտական կապերի խզումը և գիտական տեղեկատվության սղությունը հանգեցրին հանրապետությունում գիտական գործունեության լճացման: Խզվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, փլուզվեցին ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները, խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը, կազմալուծվեց գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հիմքը: 1998 թ. Հայաստանի գիտության ոլորտի աշխատողների թվաքանակը, 1988 թ. համեմատությամբ, կրճատվել է 3,8 անգամ՝ կազմելով 6000 մարդ³¹⁵: Անկախացումից հետո անհրաժեշտություն էր առաջացել հանրապետության պահանջներին համապատասխան վերափոխել գիտության համակարգը, պահպանել ստեղծված գիտական հզոր ներուժը և բարձրացնել գիտական հետազոտությունների արդյունավետությունը: Հայ գիտական միտքը կոչված էր աջակցելու Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, ներքին բնական ռեսուրսների

³¹³ Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 3 (135), 31 հունվարի 2001 թ., էջ 5:

³¹⁴ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ., եր., 1991 թ., էջ 136: Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, էջ 26:

³¹⁵ Տե՛ս «Դրոշակ», թիվ 3, 12-25, փետրվար, 1999, էջ 18:

հայտնաբերմանն ու խելացի օգտագործմանը: Հանրապետությունում ստեղծված էր զգալի գիտական պոտենցիալ, որն օգտագործվում էր ոչ լրիվ: 1990-2000 թթ. շուրջ 3500 գիտաշխատող աշխատանքից ազատվել է թեմաների փակման պատճառով³¹⁶:

1994 թ. Հանրապետության կառավարությունը ներկայացրեց պետական պատվերի մի նոր համակարգ՝ առաջնորդվելով հետազոտական հստակ արդյունքներից աշխատանքների ֆինանսավորման կախվածության սկզբունքով, սակայն հետազոտական կենտրոնների մեծ մասը չկարողացավ հարմարվել նոր պայմաններին: 1988-1994 թթ. ստեղծված ընդհանուր ծանր իրավիճակն անդրադարձավ գիտության և գիտնականների վրա: Սակայն կառավարությունը չէր կարողանում ապահովել ֆինանսավորման բավարար մակարդակ: Գիտությունների ազգային ակադեմիայում ընդգրկված մոտ 40 հետազոտական կենտրոններում իրականացվող աշխատանքները սառեցվեցին անբարենպաստ պայմանների, համատարած կրճատումների և ցածր աշխատավարձերի պատճառով³¹⁷:

Անկախացումից ի վեր Գիտությունների ազգային ակադեմիայի բյուջեն էապես կրճատվեց, և գիտնականները իրենց և ընտանիքի գոյությունը պահպանում էին ստանալով նվազագույն կենսական պահանջները բավարարող գումարի միայն մեկ տասներորդը: Միջին գիտական աշխատողն ամսական վաստակում էր 30 ԱՄՆ դոլար³¹⁸: Ավելին, այդ չնչին գումարն էլ հաճախ ժամանակին չէր վճարվում:

Արմատական-ազատական բարեփոխումների քաղաքականության ընդհանուր հայեցակետում գիտությունը շարունակում էր դիտարկվել որպես չափազանց ծախսարար ու անթույլատրելի ճոխություն և, որպես կանոն, պետական միջոցներից ֆինանսավորվում էր մնացորդային սկզբունքով: Բավական է նշել, որ 1997 թ. ՀՀ պետական ամավարկով գիտությանը հատկացված դրամական միջոցների ծավալը կազմել է 2 մլրդ դրամ (ամավարկային ծախսերի ընդամենը 1,3%-ը): 1998 թ. այդ հատկացումները կազմել են 2,5 մլրդ դրամ, իսկ 1999 թ.՝ 3 մլրդ դրամ³¹⁹: Պետբյուջեից գիտությանը հատ-

կացված միջոցները (%-ով ՀՆԱ-ից) 1990 թ. 0,5 տոկոսից 1999 թ. իջել է 0,2 տոկոսի³²⁰:

1990 թ. երկրում ապահովվում էր 20 000 գիտնական ունեցող 130 ինստիտուտների գործունեությունը, այն ժամանակ, երբ 1995 թ. այդ թիվը կրճատվեց և հասավ 119-ի՝ մոտ 5000 գիտնականներով³²¹: Բյուջեի խիստ սահմանափակման պատճառով ֆինանսավորման ենթակա էին միայն այն նախագծերը, որոնք ուղղված էին արդյունաբերության էական վերակառուցմանը:

Տնտեսական անկումը նվազեցրեց արդյունաբերական ձեռնարկությունների տեխնոլոգիական զարգացման պահանջները՝ խզելով հետազոտական ինստիտուտների ու արդյունաբերության միջև առաջացած սերտ կապը:

Պետության կողմից անհոգատար վերաբերմունքի հետևանքով Հայաստանի ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասը՝ մոտ 80%-ը, որոնք նախկինում կուտակել էին զգալի նյութատեխնիկական պաշարներ, գիտական և ինժեներատեխնիկական կադրեր՝ քայքայվեց, մնացողներն էլ հազիվ կարողացան գոյատևել՝ նախկին միութենական գործընկերների հետ համատեղ կատարվող մշակումների ֆինանսավորման շնորհիվ:

Հանրապետության գիտական համալիրի քայքայումը հանգեցրեց գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքին: Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնի հարցումների համաձայն ՀՀ ԳԱԱ-ից 1991-95 թթ. հեռացել է 800 գիտաշխատող, որոնցից 200-ը մշտական բնակության են մեկնել արտասահմանյան երկրներ: Նրանցից 44%-ը հեռացել է սեփական նախաձեռնությամբ, իսկ 16%-ը չի վերադարձել գիտական գործուղումից: Վերջիններիս 9%-ը գիտության թեկնածուներ են, իսկ 6%-ը՝ գիտության դոկտորներ³²²: 1991-95 թթ. Երևանի պետամալսարանից հեռացել է 65 գիտաշխատող (14-ը՝ գիտության դոկտոր, 35-ը գիտության թեկնածու), Երևանի ճարտարագիտական համալսարանից՝ 62 գիտաշխատող: Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (Մերգեյան) 8 հազարանոց աշխատակազմից այժմ մնացել է ընդամենը հազարը: Միայն 1991-95 թթ. ինստիտուտից հեռա-

³¹⁶ Տե՛ս նույն տեղում, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, Եր. 2001, էջ 51: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-փետրվարին, Եր., 2001, էջ 155:

³¹⁷ Տե՛ս էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 41:

³¹⁸ Տե՛ս նույն տեղում:

³¹⁹ Տե՛ս «Դրօշակ», թիվ 3, 12-25, փետրվար, 1999, էջ 19:

³²⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., էջ 52:

³²¹ Տե՛ս էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 41:

³²² Տե՛ս «Դրօշակ», թիվ 3, 12-25, փետրվար, 1999, էջ 19:

ցել է 909 մարդ³²³։ Հայաստանից մեկնածուների մեջ գերակշռում էին ազգային գիտության առավել օժտված և կարողունակ ներկայացուցիչները, հատկապես երիտասարդ և միջին տարիքի գիտնականները, որոնք ակնառու հաջողությունների էին հասել իրենց ընտրած գիտական ասպարեզներում։

Հայաստանի գիտության ոլորտին բնորոշ կադրային տեղաշարժին հատուկ է նաև ներքին արտահոսքը։ Գիտնականներից շատերը, որոնք միջոցներ չունեին արտասահման մեկնելու, այնուամենայնիվ թողնում էին գիտական աշխատանքը և տեղափոխվում գործունեության այլ ասպարեզներ, որտեղ հնարավոր էր մի կերպ պահպանել իրենց ընտանիքների գոյությունը։ Մասնավորապես այդպիսի ոլորտներից էին առևտուրը, համատեղ ձեռնարկությունները, բաժնետիրական ընկերությունները և այլն։ Ուստի պատահական չէ, որ վերջին տարիներին խիստ կրճատվել է գիտատեխնիկական աշխատանքներ կատարողների թվաքանակը։ 1991 թվին 25,3 հազարից նրանց թիվը 1999 թվականին կրճատվել է՝ հասնելով 6,5 հազարի³²⁴։

Սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում տնտեսության աստիճանական կայունացումը հնարավորություն տվեց գիտահետազոտական կենտրոններին հետզհետե ամրապնդել իրենց խարխլված դիրքերը։ Ներկայումս գիտական հաստատությունների բաշխումը գիտության տարբեր ճյուղերում հետևյալն է³²⁵։

Հետազոտության բնագավառները, Պետության կողմից ֆինանսավորվող բնագավառները	Հաստատություններ	Գիտնականներ
Մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա	12	424
Ֆիզիկա, աստղաֆիզիկա	13	857
Տեխնիկական գիտություններ	19	268
Քիմիական գիտություններ	17	479
Երկրաբանություն	13	382
Բժշկություն, կենսաբանություն	36	1304
Արվեստներ	7	125
Ճարտարագիտություն, շինարարություն	6	16
Գյուղատնտեսություն	23	496
Հումանիտար և սոցիալական գիտություններ	28	644
Ընդամենը	174	4995

³²³ Տե՛ս նույն տեղում։

³²⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., էջ 51։

³²⁵ Տե՛ս էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկուլոց 2001, էջ 42։

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան շարունակում է մնալ Հայաստանում գիտահետազոտական աշխատանքները համակարգող խոշոր կենտրոն, որն իր մեջ ներառում է 38 ինստիտուտ, որոնցից շատերն ունեն փորձարարական գործարաններ, հատուկ նախագծային բյուրոներ և այլն։ ՀՀ ԳԱԱ-ի նախագահությունը գիտության տարբեր բնագավառներում ունի երեք գիտական բաժանմունք՝ ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական բաժանմունք՝ 12 գիտական ինստիտուտներով, բնական գիտությունների բաժանմունք՝ 16 գիտական ինստիտուտներով և հումանիտար գիտությունների բաժանմունք՝ 10 ինստիտուտներով։ 2001 թ. այստեղ աշխատում էին 116 ակադեմիկոսներ, 337 գիտության դոկտորներ և 1152 գիտության թեկնածուներ³²⁶։

Վերջին տարիների կարևորագույն զարգացումներից է ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցի ստեղծումը, որը միավորում է գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկված ակադեմիական, կրթական և այլ կազմակերպություններ։ Ցանցը հիմնվել է 1994 թ., կառուցվածքն ու գործունեության սկզբունքները մշակվել և իրականացվել են ՀՀ ԳԱԱ-ի Ինֆորմատիկայի և ավտոմատացման խնդիրների ինստիտուտի կողմից։ Առաջին ինտերնետային միացումը հաստատվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտի արբանյակային կապի միջոցով։ Այն նաև մասնակցում է մի շարք միջազգային ծրագրերի և նախագծերի։

Անկախացած Հայաստանի նորաստեղծ կառավարությունը թերագնահատեց գիտության դերը, չհասկացավ նրա արժեքը, որն ազգային այն հարստությունն էր, որ կարող էր մեծապես նպաստել տնտեսական զարգացման և բնակչության բարոյա-հոգեբանական վերափոխումներին։

Անկախության պայմաններում հնարավորություններ ստեղծվեցին օգտակար կապ հաստատել աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ, ուսումնասիրել և կիրառել գիտության կազմակերպման համաաշխարհային փորձը։ Հատկանշական է, որ Հայաստանի գիտական ներուժի հսկայական հնարավորությունների օգտագործմամբ մեծապես հետաքրքրվում են ոչ միայն արևմուտքի համալսարաններն ու գիտահետազոտական կենտրոնները, այլև ռազմական բնույթի, մասնավորապես Յուսիս-Ատլանտյան Դաշինքի

³²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 43։

(ևԱՏՕ) կառույցները: Հայաստանի գիտնականների արտասահմանյան երկարաժամկետ գործուղումների մեծ մասը ֆինանսավորում են «Հունբուլդտի» (ԳՖՀ), «Բենջամին Ֆրանկլինի» (ԱՄՆ), «Սորոսի» (ԱՄՆ) հիմնադրամները, INTAS-ը (ԱՄՆ),TASIC-ը (Եվրամիություն) և այլն:

Վերջին տարիներին արագորեն աճում են հայկական գիտության արտաքին ֆինանսավորման ծավալները: 1994-96 թթ. Հայաստանի ԳԱԱ-ում արտասահմանյան դրամաշնորհների (գրանտների) հաշվին ֆինանսավորվել է 12 գիտահետազոտական թեմա՝ 234 հազար դոլար արժողությամբ: 1996 թ. նույն հաստատություններում միջազգային դրամաշնորհների ընդհանուր ծավալը կազմել է 760 հազար դոլար³²⁷: Պետք է ասել, որ մրցութային համակարգով հայ հետազոտողներին դրամաշնորհների հատկացումը Արևմուտքին հնարավորություն է տալիս մեծ շահույթով շահագործել իրենց համար տասնապատիկ էժան գիտական աշխատանքը: Մյուս կողմից՝ դրանք հնարավոր են դարձնում Հայաստանի գիտական ներուժի պահպանումը և որոշակի չափով զարգացումը: Արտասահմանյան հիմնադրամներից առավել մեծ աշխուժություն են դրսևորում «Սորոսի», «Գիտության և առաջավոր տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի» (NFSAT) և «Քաղաքացիական հետազոտման զարգացման» (CRDF) հիմնադրամները: Վերջինիս կողմից մինչև այժմ բազմաբնույթ հետազոտությունների ծրագրերի կատարման համար Հայաստանի գիտնականներին տրամադրվել է 430 հազար դոլար: Ըստ հիմնադրամի գլխավոր տնօրենի հայտարարության, հաշվի առնելով Հայաստանի գիտական ներուժի բարձր կարողությունները, որոշվել է Հայաստանի գիտական հանրությանը ևս 500 հազար դոլարի լրացուցիչ ֆինանսավորում տրամադրել³²⁸: NFSAT-ը, CRDF-ը 1997 թ. անցկացրին իրենց առաջին համատեղ դրամաշնորհների մրցույթը՝ «Համագործակցություն քիմիայի, կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ոլորտում»: Լինելով առաջին միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագիրը, այն կարևոր ուղենիշ հանդիսացավ հայ-ամերիկյան գիտական համագործակցության համար³²⁹:

1998 թ. NFSAT-ի և CRDF-ի համատեղ մրցույթի արդյունքում

15-ամսյա տևողությամբ և 20.000 ԱՄՆ դոլար արժողությամբ պարզաներ տրվեցին հայ-ամերիկյան հետազոտական խմբերին: 1999 և 2000 թթ. CRDF-ի օժանդակությամբ NFSAT-ը ընդլայնեց իր գործունեությունը՝ կազմակերպելով և հյուրընկալելով տեխնոլոգիաների առևտրացման սեմինարը Երևանում, որին հետևեցին գիտական առաջարկների ներկայացման և ծրագրերի կառավարման վերաբերյալ սեմինարներ, ինչպես նաև քիմիայի համաժողովը³³⁰:

2001 թ. CRDF-ը և NFSAT-ը սկսեցին երկրորդ հայ-ամերիկյան երկկողմանի դրամաշնորհային ծրագիրը: 2002 թ. հայտարարվեց նաև 20 000 ԱՄՆ դոլար արժողությամբ հինգ նոր դրամաշնորհների մասին: Այս զարգացումներից թերևս ամենակարևորն այն է, որ 2001 թ. հունիսի 26-ին NFSAT-ը և CRDF-ը հայտարարեցին Հայաստանի Հանրապետությունում գիտությունների և գիտական ենթակառուցվածքի զարգացման 1,2 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրին օժանդակելու իրենց որոշման մասին³³¹: Այս դրամաշնորհը թույլ կտա NFSAT-ին լայնորեն ընդարձակել իր ծրագրերը՝ զարգացնելով հայկական գիտական ենթակառուցվածքը և մասնավորապես միջազգային գիտական հանրության մրցակցային դրամաշնորհներ ստանալու նրա ունակությունը: Դա կօգնի արտագաղթի նվազմանը և կաջակցի նախկինում պաշտպանության հետ կապված հետազոտողների ջանքերը քաղաքացիական ոլորտի ուսումնասիրմանն ուղղելուն:

Վերջին տարիներին ընդլայնվել են կապերը Սփյուռքի գիտնականների և գիտական ընկերակցությունների հետ, ինչը կարող է նպաստել ազգի գիտական ներուժի մերժեցմանը: 2000 թ. ԱՄՆ-ում հայ-ամերիկյան գիտնականների և ճարտարագետների կողմից հիմնվեց Հայկական գիտության և կրթության հիմնադրամը (ՀԳԿՀ), որի խնդիրն էր օժանդակել ՀՀ գիտական ներուժի պահպանմանը: ՀԳԿՀ-ն մտադիր է ստեղծել 10 մլն ԱՄՆ դրամազխտով հիմնադրամ, որի եկամուտները կօգտագործվեն գիտական դրամաշնորհներ տրամադրելու համար³³²: Այն կգործի Հայ օգնության հիմնադրամի (ՀՕՖ) հետ համատեղ: ՀԳԿՀ-ն նախատեսում է եկամտի կայուն աղբյուր ապահովել ՀՀ-ում գիտական գործունեության ծավալման համար, ինչպես նաև օգնել Հայաստանի և միջազգային գիտական

³²⁷ Տե՛ս «Դրոշակ», թիվ 3, 1999 թ., էջ 20:

³²⁸ Տե՛ս նույն տեղում:

³²⁹ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 46:

³³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 47:

³³¹ Տե՛ս նույն տեղում:

³³² Տե՛ս նույն տեղում, էջ 48:

հաստատությունների հարաբերությունների բարելավմանը:

Ներկայումս գործում են հանրապետության գիտությանն օժանդակող մի քանի այլ կազմակերպություններ: Դրանցից հայտնի է Գ. Գյուլբենկյան հիմնադրամը (Պորտուգալիա): Նրա գիտական օժանդակությունը հիմնականում տրամադրվում է Հայաստանի գիտության և կրթության չորս սյուներին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային, Երևանի պետական համալսարանին, Ազգային գրադարանին և Մատենադարանին: Վերջին տարիներին Գ. Գյուլբենկյան հիմնադրամի շնորհիվ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն ապահովվեցին համակարգչային սարքավորումներով, ինչն ընդլայնեց գիտնականների հնարավորությունները, ինչպես նաև մատչելի դարձրեց միջազգային մակարդակով տեղեկատվության և կապերի անփոխարինելի ցանցերը: Հիմնադրամը տարիներ շարունակ օգնում է Երևանի պետական համալսարանի հրատարակչությանը՝ հայագիտական գրքեր հրատարակելու շնորհակալ գործում: Լիսաբոնից ՀՀ ԳԱԱ-ին ուղարկվեցին գերծամանակակից տպագրական սարքավորումներ: Գ. Գյուլբենկյան հիմնադրամի օժանդակությամբ հանրապետությունում իրականացվում են նաև բժշկական հետազոտություններ: Նրա հովանավորությամբ ստեղծվեց գենետիկական նոր լաբորատորիա: Դրա հետ մեկտեղ խթանվում են նաև բուսաբանական և կենսաբանական հետազոտությունները:

Ներկայումս սկսել է ակտիվորեն գործել դեռևս 1983 թ. Լոս Անջելեսում որպես բարեգործական կազմակերպություն հիմնված Ամերիկայի Հայ ճարտարագետների ու գիտնականների միությունը: Սպիտակում 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո ԱՅԳՄ-ն իր ուժերը կենտրոնացրեց Հայաստանին տեխնիկական և այլ օգնություն տրամադրելու վրա: 1989 թվականից ի վեր ԱՅԳՄ-ում ներգրավվեցին նաև արդյունաբերողները, իսկ 1994 թ.՝ ճարտարապետները:

Հայաստանի անկախացումից հետո գիտության կառավարման ոլորտը կարգավորվել է առավելապես ՀՀ նախագահի հրամանագրերով և կառավարության որոշումներով: Այդ ուղղությամբ կարևոր ձեռքբերում էր 2000 թ. դեկտեմբերի 5-ին «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի ընդունումը³³³: Գիտության ոլորտը կանոնակարգող այս օրենսդրությամբ սահմանվեցին

գիտության կառավարման ու կառուցվածքային սխեմաները, ֆինանսավորման աշխատանքները, այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականության նպատակներն ու սկզբունքները և այլն:

Ներկայումս գիտության զարգացման կարևորագույն կառուցվածքային հիմնախնդիրը եղել ու մնում է նախկինում անջատ-անջատ գործող գիտական ենթահամակարգերը միասնականացնելն է (ՀՀ ԳԱԱ, բուհական գիտություն, գիտատեխնիկական ենթակայություն): Փաստորեն մինչև վերջերս գիտության տարբեր բնագավառներին վերաբերող, ռազմավարական բախտորոշ նշանակություն ունեցող որոշումներ կարող էր ընդունել այդ ենթահամակարգերից յուրաքանչյուրը, ինչը, բնականաբար, հանգեցնում էր հետազոտությունների կրկնօրինակման, ֆինանսական, կադրային և նյութական պաշարների փոշիացման: Ուստի, ելնելով իրավիճակից, կառավարության կողմից գիտական հետազոտությունների ողջ համալիրը համակարգելու և միասնականացնելու նպատակով դեռևս 1998 թ. որոշվեց ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծել Գիտատեխնիկական քաղաքականության խորհուրդ (ԳՔԽ), որի հիմնական խնդիրներն էին՝ հանրապետության գիտական ներուժի պահպանումն ու ճիշտ օգտագործումը, երիտասարդ գիտական կադրերի պատրաստմանը օժանդակելը, ամավարկից գիտությանը հատկացված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ բաշխումը, գիտական թեմաների առարկայական փորձաքննության կազմակերպումը ԳՔԽ-ի կազմում: Ըստ տարբեր գիտաճյուղերի ստեղծվեցին 20 մասնագիտական հանձնաժողովներ, որոնց վերապահված էր ֆինանսավորում ստանալու նպատակով հայտագրված գիտական թեմաների փորձաքննությունը: 2001 թ. նոյեմբերից այդ գործընթացը համակարգում է ՀՀ Գիտության և կրթության նախարարությունը: Սակայն այս վերափոխումները միշտ չէ, որ բխում էին կոնկրետ պահանջներից և հաճախ բացասաբար էին անդրադառնում գիտության զարգացման վրա:

Կառուցվածքային, սահմանակարգային և գործառութային բնույթի արմատական բարեփոխումները գիտության բնագավառում՝ առանց հաշվի առնելու ոլորտի պայմանականորեն ձևավորված յուրահատկությունները, կարող են պարզապես ոչնչացնել տասնամյակների ընթացքում բազմաթիվ գիտական սերունդների ջանքերով ստեղծված գիտատեխնիկական, այսինքն՝ որակական ներուժը:

Գիտության ոլորտում առկա անբարենպաստ իրավիճակի հաղ-

³³³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000), գ. 9, էջ 433-444:

թահարումը և նրա՝ որպես գերակայական բնագավառի նկատմամբ կառավարության և ոչ կառավարական հաստատությունների ջանքերի երաշխիք են ստեղծելու կայուն, մրցունակ և առաջատարների շարքում տեղ գրավելու հավակնող ազգային տնտեսություն: Հայ գիտական մտքի հարուստ ավանդույթներն ու փորձն այն հիմքն են, որ թույլ կտան մեր գիտությանը ձեռք բերելու նոր նվաճումներ և գրավելու արժանի տեղ ժամանակակից համաշխարհային գիտության համակարգում:

*
* *
*

1988 թ. սկսած հասարակական և քաղաքական հայտնի իրադարձություններն արմատական փոփոխություններ առաջացրին երկրում, որոնք բացասական ազդեցություն ունեցան նաև կրթության ոլորտի վրա: Կրթությանը հասցրած առաջին ծանր հարվածը 1988 թ. երկրաշարժն էր, որն ավերեց կամ կիսավեր վիճակի հասցրեց 277 դպրոց և 245 մանկապարտեզ³³⁴: Հարևան հանրապետության հետ երկարատև հակամարտության արդյունքում սահմանակից շրջաններում ավերվեց 51 դպրոց ու 13 մանկապարտեզ: Իրականացվող շրջափակման հետևանքով հանրապետության տնտեսության սրընթաց անկումը, քաղաքական փոփոխությունները, էներգետիկ ճգնաժամը, բյուջեի պակասությունը, ռեսուրսների սղությունը նույնպես բացասաբար անդրադարձան կրթության վրա: Դպրոցները համարյա դադարեցին գործել աղետի գոտում և սահմանակից շրջաններում:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո սկսվեցին կրթամշակութային ոլորտի կատարելագործման ուղիների որոնումները: Խորհրդային իշխանության օրոք հայ ժողովուրդը ձեռք էր բերել կրթական բարձր մակարդակ: Բավական է ասել, որ 1970-ական թվականներին Հայաստանը ԽՍՀՄ-ում առաջին տեղն էր գրավում բնակչության մեկ շնչին ընկնող ուսանողների և բարձր որակավորում ունեցող մասնագետների թվով: Սակայն հանրապետության ակնախությունից հետո հասարակական անհրաժեշտ վերափոխումների ընթացքում հայոց կրթական համակարգը և նախկին

ձեռքբերումներն այս ասպարեզում էապես վտանգվեցին: 1991-95 թթ. այս ոլորտը դիտարկվեց որպես պետական ու տնտեսական գերակայությունից դուրս գտնվող, և նրա հոգսը դրվեց տեղական իշխանության մարմինների և հասարակության վրա: Կրթության նախկին համակարգը, որն ընդգրկում էր կրթության երեք հիմնական ձև (միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն), փոխարինվեց բազմաստիճան համակարգով:

Միջնակարգ (կամ ընդհանուր) կրթությունը բաժանվեց երեք աստիճանի՝ տարրական (3 տարի), միջնակարգ (5 տարի) և ավագ (2 տարի): Ըստ ՀՀ սահմանադրության՝ միջնակարգ կրթությունը պարտադիր է և անվճար: Հանրապետության միջնակարգ ընդհանուր կրթության նպատակն է աշակերտներին առողջ կենսակերպ սովորեցնել՝ ապահովելով աշխարհի և բնության մասին գիտական պատկերացումներով և հասարակության մեջ անկախ գործունեության համար անհրաժեշտ նվազագույն գիտելիքներով:

Հիմնական կրթությունն ավարտվում է աշակերտների՝ մաթեմատիկայի, հայոց լեզվի և օտար լեզվի ատեստացիայով: Քննություն հանձնողները ստանում են վկայական: Ընդգրկվածությունը դպրոցներում (1-8 դասարաններում) կազմում է մոտ 87%: Հիմնական դպրոցների շրջանավարտները շարունակում են իրենց կրթությունը միջնակարգ դպրոցի հաջորդ մակարդակում կամ գնում են մասնագիտական դպրոցներ: Միջնակարգ դպրոցներում ուսման տևողությունը տասը տարի է, իսկ 2001 թվականից սկսած՝ 11 տարի:

Անկախության առաջին տարիներին անհրաժեշտություն առաջացավ մշակել ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները. դպրոցը պիտի ապահովեր աշակերտության դաստիարակությունը ազգային ոգով և կազմակերպեր ուսման գործընթացը գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա: Այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկվեցին: Ուսուցումը դպրոցներում ազատվեց կոմունիստական գաղափարախոսության կապանքներից: Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տիպի դպրոցների, այդ թվում՝ մասնավոր դպրոցների ստեղծումը: Կրթության և գիտության նախարարության արտոնագրով 1997 թվականից Հայաստանում սկսեցին գործել 42 մասնավոր դպրոցներ, որոնցից այժմ մնացել են 25-ը³³⁵:

³³⁴ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց, 2001, էջ 51:

³³⁵ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, էջ 56: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, Եր., 2001, էջ 142:

³³⁴ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց, 2001, էջ 51:

Ընդունված որոշումների համաձայն հայ երեխաները պիտի սովորեին միայն հայկական դպրոցներում, կրճատվեց ռուսական դպրոցների թիվը: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով դասագրքեր, որոնցից, սակայն, ոչ բոլորն էին համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին: Ջեռուցման բացակայության պատճառով ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը, լավագույն ուսուցիչների արտահոսքը, դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրեական պիտույքների թանկությունը և այլ հանգամանքներ անհնար դարձրին ուսումնական պլանների կատարումը: Չնայած դպրոցների ջեռուցման գործում մի շարք արտասահմանյան կազմակերպությունների օգնությանը՝ պետությունն ի վիճակի չէր ապահովել բնականոն ուսումնական գործընթաց 3-4 ամսվա ընթացքում: Հարկադրական արձակուրդների ընթացքում շատ աշակերտներ չէին գբաղվում ինքնակրթությամբ: Ծանր վիճակում էր գտնվում դպրոցների նյութատեխնիկական բազան, շինությունները չէին վերանորոգվում և նրանց հետագա շահագործումը դառնում էր վտանգավոր: Անկախության առաջին տարիներին դպրոցները չէին ստանում լաբորատոր և այլ տեխնիկական սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր, իսկ եղածն էլ հնացած էր և ոչ պիտանի: Նկատվեց նաև դպրոցների շինարարության ու վերանորոգման ծախսերի նշանակալի անկում՝ 1997 թ. մեկ աշակերտի հաշվով ծախսերը կազմել են 2 ԱՄՆ դոլար³³⁶: Վերջին 5 տարում հիմնավերանորոգման են ենթարկվել դպրոցների ընդամենը 12%-ը, որի երկու երրորդը գյուղական վայրերում: Դպրոցական շենքերի ավելի քան 80%-ը կարիք ունի վերանորոգման³³⁷: Չնայած այդ ծանր վիճակին կրճատվեցին պետական բյուջետային հատկացումները: Կրթությանն ուղղված ծախսերը խորհրդային տարիների համեմատությամբ 1998 թ. տասնապատիկ կրճատվեցին՝ կազմելով տարեկան միջինը մեկ աշակերտի հաշվով մոտ 63 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 1985 թ. 600 ԱՄՆ դոլար էր³³⁸: 1992 թվականից տեղի ունեցավ դպրոցների պետական ֆինանսավորման կտրուկ անկում, որն այժմ կազմում է ՀՆԱ-ի մոտ

2%-ը³³⁹: Դրա հետևանքով եապես ընկավ կրթության որակը: Կրթական ոլորտի վերափոխումների արդյունքը կախված է մանկավարժների սոցիալական վիճակից, որ շարունակում է մնալ ծանր: Շատ որակյալ ուսուցիչներ, հիմնականում տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակի պատճառով հեռանում էին դպրոցից՝ անցնելով ավելի շատ վճարվող այլ աշխատանքի, ինչը բացասաբար ազդեց կրթական կադրերի մասնագիտական մակարդակի վրա:

1994-95 ուս. տարվա ընթացքում բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը նվազել էր 15%-ով, տղամարդ ուսուցիչների թիվը՝ 5%-ով: Յուրաքանչյուր 6 ուսուցիչից 1-ը կենսաթոշակային տարիքի էր: Դպրոց եկած յուրաքանչյուր 4 ուսուցիչից 1-ը չուներ մանկավարժական կրթություն: Ուսուցիչների 2,5%-ը ուներ միջնակարգ կրթություն³⁴⁰: Այդ նույն գործընթացը շարունակվում է նաև հետագայում: Ներկայումս միջնակարգ դպրոցների 60 հազար ուսուցիչների 80%-ն ունի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն, 2%-ը՝ թերի բարձրագույն, 10%-ը՝ միջնակարգ մասնագիտական ոչ մանկավարժական և 8%-ը միջնակարգ կրթություն: Ուսուցիչների 3%-ն ունի գիտական կոչում: Միջնակարգ դպրոցներում ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը 1:10 է: Հանրապետության դպրոցներում դասավանդող ուսուցչների 83%-ը կանայք են³⁴¹: Այս նույն երևույթները նկատվեցին նաև նախադպրոցական հիմնարկներում, որի հետևանքով կրճատվեց նախադպրոցական հիմնարկներ հաճախող երեխաների թիվը: Ինչպես երևում է, կրթական ոլորտին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում: Դա կարող է ճակատագրական դառնալ հայ ժողովրդի համար: Այսօրվա աշակերտը վաղվա ղեկավարն է: Ուստի հասարակությունը և պետությունը ամեն միջոցով պետք է օժանդակեն դրան:

Բյուջետային կրճատումների հետևանքով, անկախության ձեռքբերմանը նախորդած առավելագույնի համեմատությամբ, 1995-96 թթ. նախադպրոցական հիմնարկներ հաճախող երեխաների թիվը կրճատվեց 2-3 անգամ, այդ նույն ժամանակ դպրոցականների թիվը՝

³³⁶ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց, 2001, էջ 51:

³³⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, Եր., 2001, էջ 143:

³³⁸ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը Հայաստանում, Գլոբալ մարդկային զեկույց, 2001, էջ 51:

³³⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁴⁰ Տե՛ս Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 35:

³⁴¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, Եր., 2001, էջ 143: Էլեկտրոնային զարգացումը Հայաստանում, Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 51:

մոտ 3,4%-ով, որից քաղաքներում՝ 2,6%-ով³⁴²: 1990 թ. մինչև 1997 թ. մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կրճատվել է 50 243-ով, մանկավարժների թիվը՝ 3192-ով, մանկապարտեզների թիվը՝ 210-ով³⁴³: Նվազումը բացատրվում է մի շարք պատճառներով, այդ թվում՝ անբավարար խնամքի և վատ սննդի, քանկության, ինչպես նաև գործազրկության հետևանքով տանը մնացող մեծահասակ մարդկանց առկայության և այլն:

1990-ական թվականներին հանրապետությունում լիովին փլուզվեց մասնագիտական-տեխնիկական կրթական համակարգը, ինչը բացատրվում է արդյունաբերության կրճատմամբ և աշխատանքի շուկայում բանվորական մասնագիտությունների պահանջարկի կտրուկ անկմամբ: Պատահական չէ, որ պրոֆտեխուսուցման և միջնակարգ մասնագիտական կրթության համակարգերի սովորողների թիվը կտրուկ նվազեց: 1998 թ. պահպանվել էր ՊՏՈՒ-ների միայն 1/3 մասը, որտեղ սովորում էր 6.032 ուսանող, 1990 թ.-ի 23.000-ի դիմաց³⁴⁴:

Նմանատիպ պատկեր էր նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ, սակայն, մասնավոր ուսուցման հաշվին պահպանվել է դրանց թվաքանակը, բայց ուսանողների թիվը 1990 թ.-ի նկատմամբ, համարյա երկու անգամ կրճատվել է, անվճար սովորողներինը՝ չորս անգամ:

Որպես հիմնական դրական փաստ, պետք է նշել կրթության բովանդակության հումանիտար բաղադրիչի արմատական փոփոխումը: Ներկայումս 150 ավագ դպրոցներում կազմակերպված է հոսքային ուսուցում: Շարունակվում է ուսուցիչների ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացը: 1991-2001 թթ. դրական տեղաշարժերից էր աղետի գոտում մի շարք դպրոցների շենքային պայմանների բարելավումը:

Անկախության տարիներին աշխատանքներ տարվեցին կրթության բովանդակությունը փոխելու ուղղությամբ: Մշակվեցին ինչպես հիմնական, այնպես էլ այլընտրանքային դասագրքեր: Մյուս կողմից, քաղաքականության և գործողությունների պակասն առաջ բերեց համընդհանուր շփոթ, իսկ ծնողները հաճախ հնարավորություն չուներին նոր դասագրքեր գնելու: Իրավիճակն ուղղելու նպատակով ՀՀ

կառավարությունը համաշխարհային բանկի հետ 1999-2000 թթ. մշակեց կրթական ոլորտի բարեփոխումների ծրագիր և սկսեց իրագործել այն: Ծրագիրը կառավարության կողմից հավանություն ստացավ 1999 թ. հունիսին: Հանրային կրթության բնագավառի բարեփոխումների ռազմավարության հիմնական բնագավառներն էին կառուցվածքային, ֆինանսա-տնտեսական և կազմակերպական այնպիսի փոփոխությունները, որոնք ներառում էին պետական հանրակրթական հաստատությունների համակարգի կառավարման ապակենտրոնացումը, դպրոցների անկախության աճը և աշակերտների քանակից կախված ֆինանսավորման նոր համակարգի ներդրումը: Ֆինանսների և կառավարման նոր սկզբունքներն, անշուշտ պիտի նպաստեին համակարգի կատարելագործմանը: Հաշվի առնելով կրթական համակարգի կարևորությունը պետական և ազգային զարգացման համար՝ նախատեսված բարեփոխումներն իրականացվեցին փորձնական ծրագրերի շրջանակներում:

Կրթության և գիտության նախարարությունն իրականացրեց «Դասագրքերի ծրագիր» (դասագրքերի վարձակալության համակարգ) միջոցառումը, որը ֆինանսավորվում էր համաշխարհային բանկի վարկի միջոցով՝ մոտ 8 մլն ԱՄՆ դոլար: Անկնկալվում է, որ վարձակալության համակարգի օգնությամբ Հայաստանում յուրաքանչյուր աշակերտ ապահովված կլինի մատչելի գներով հիմնական առարկաների դասագրքերով: 1997-2000 թթ. ընթացքում 85 անուն դասագիրք և 34 անուն ուսուցչի ձեռնարկ հրատարակվեց և բաշխվեց դպրոցներին³⁴⁵: Ծրագրի իրականացումը հիմնականում ավարտվեց 2001 թվականին:

ՀՀ կրթության համակարգի տասնամյա պատմությունը կարելի է բաժանել 2 փուլի՝ մինչև 1999 թ. և դրանից հետո, երբ ընդունվեց «Կրթության մասին» օրենքը: Անկախ Հայաստանում մինչև 1999 թվականը պետության դերը ժողովրդական կրթության գործում հստակեցված չէր: Բավական հաճախ փոփոխվող կառավարությունների ու նախարարների հետ մեկտեղ փոփոխվում էին նաև այդ ոլորտի նպատակներն ու ռազմավարությունը: Միայն «Կրթության մասին» օրենքի ընդունումից հետո կանոնավորվեց համակարգի գործունեությունը³⁴⁶: Վերջինիս հիմնադրույթների իրագործման նպատա-

³⁴² Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 34:

³⁴³ Տե՛ս նույն տեղում:

³⁴⁴ Մարդկային զարգացման զեկույց Հայաստան 1999, էջ 79:

³⁴⁵ Տե՛ս էլեկտրոնային զարգացումը Հայաստանում, Գլոբալ մարդկային զեկույց 2001, էջ 52:

³⁴⁶ Մանրամասն տե՛ս հավելվածում, պաշտոնական տեղեկագիր, 1999 թ. հունիս:

կով մշակվեց կրթության համակարգի պահպանման ու զարգացման համապարփակ ծրագիր, որում ձևակերպված հիմնախնդիրներն արդեն լուծման փուլում են: ՀՀ կառավարությունը 2000 թվականին հաստատեց միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության չափորոշիչները, որոնց հիմքի վրա ճշգրտվեց հանրակրթության բովանդակությունը³⁴⁷: Միաժամանակ ՀՀ կառավարությունը հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը ներկայացրեց «Կրթության զարգացման պետական ծրագիրը», որը դարձավ կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը³⁴⁸:

Ներկայումս կրթության համակարգը խիստ տարբերակված է: Միջնակարգ դպրոցները, հատկապես բարձր դասարանները (9, 10) ստացել են որոշակի ազատություն լրացուցիչ առարկաներ անցնելու, ծրագրեր և ուսումնական ձեռնարկներ ընտրելու հարցում: 2000/01 ուս. տարում 1433 հանրակրթական դպրոցներից գործում էին 48 վարժարաններ ու քոլեջներ, որից 23-ը՝ մասնավոր՝ հատուկ կրթական ծրագրերով³⁴⁹: Մեծ սպասելիքներ են կապված դպրոցի հոգաբարձուների խորհրդի ինստիտուտի ստեղծման հետ: Տարրական և միջնակարգ կրթության համակարգի պահպանվող ներուժի հետ մեկտեղ այսօր նկատվում են որոշ տագնապալի միտումներ թե՛ կրթության մատչելիության, թե՛ դրա որակի առումով: Փաստորեն, կրթական համակարգի ֆինանսավորման հիմնական բեռն իր վրա է կրում երկրի բնակչությունը, որը հարկադրված է լուծել ոչ միայն վճարովի ուսուցման բարձր վարձավճարների կամ դասագրքերի գնման հարցը (թեպետ համաշխարհային բանկի վարկային ծրագրով տպագրվող դասագրքերի գինը հասցված է նվազագույնի), այլև՝ հագուստի և փոխադրամիջոցների հետ կապված ծախսերը: Նման իրավիճակը հանգեցրել է մի շարք բացասական երևույթների, նվազել է երեխաների հաճախելիությունը դպրոց՝ մանավանդ գյուղերում և փոքր քաղաքներում: Այսպես, եթե 1987 թ. առաջին դասարան ընդունվածների 77,2%-ն էր ավարտել 8-րդ դասարանը 1995 թվականին, ապա 1998 թ. 8-րդ դասարանն ավարտել էր ընդունվածների միայն 59,3%-ը³⁵⁰: Նշված միտումն ավելի բնորոշ էր տղաներին և

ավելի տարածված էր գյուղական վայրերում: Աստիճանաբար տասնամյա (և նույնիսկ 8-ամյա) միջնակարգ կրթությունը աճող սերնդի մի զգալի մասի համար անհրաժեշտ պահանջ է դառնում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալներով 2000 թվականին հիմնական դպրոցի շրջանավարտների շուրջ 20%-ը կրթությունն ավագ դպրոցում չի շարունակել: Անկախ փորձագետները համոզված են, որ այդ թիվը հասնում է 40%-ի³⁵¹: Միջնակարգ կրթության ծախսերը 1998 թ. բյուջեում կազմել էին 11,95 մլրդ դրամ, ինչը նշանակում էր, որ մեկ դպրոցի հաշվով ծախսերը կազմել են 8,2 մլն դրամ ((16.400 ԱՄՆ դոլար), իսկ մեկ աշակերտի հաշվով տարեկան 19.800 դրամ (39,6 ԱՄՆ դոլար): Այդ միջոցներից վճարվելու էին մանկավարժների աշխատավարձերը, պատշաճ վիճակում պահվող դպրոցների նյութատեխնիկական բազան և կոմունալ ծախսերը: Վերջինս բոլորովին անհնար էր, եթե հաշվի առնենք, որ միայն ջեռուցման համար երևանյան դպրոցին անհրաժեշտ էր մոտ 3 մլն դրամ, իսկ մեկ դպրոցական նստարանն արժեք մոտ 20 հազար դրամ³⁵²: Հանրակրթական դպրոցներ հաճախող երեխաների համար կատարվող ծախսերի զգալի մասը հատկացվում է հագուստին ու դասագրքերին, որոնք անհաղթահարելի դժվարություն են բնակչության մի ստվար հատվածի համար: Դպրոցների թերֆինանսավորումը, ուսուցիչների ցածր վարձատրությունը, ի հետևանս կրթության որակի իջեցումը և զուտ դպրոցի գիտելիքներով ԲՈՒՀ ընդունվելու անհնարինությունը հանգեցնում են դպրոցի և կրթության հեղինակազրկման: Դպրոցները և կրթությունն առհասարակ կորցնում են իրենց վարկը: Նույնիսկ ուսուցիչների գերառաջարկի դեպքում՝ 65000-ը 43000 պահանջարկի դիմաց՝ 16000 տեղ թափուր է մնացել հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային շրջաններում³⁵³: Դպրոցներում փաստացի ուսուցման որակը և դրա արդյունքը հանդիսացող շրջանավարտների կրթական մակարդակը հիմնականում հեռու են բավարար լինելուց: Ուսուցիչների գերցածր աշխատավարձը, ուսուցման բազայի մաշվածությունը և այլ պատճառներ թույլ չեն տալիս ուսուցման նպատակահարմար գործընթաց կազմակերպել: Գրեթե նույնն է իրավիճակը բուհերում: Ձևավորվող իրավիճակի հիմնական պատճառներից մեկը այն ծախսերն էին, որ ստիպված էին

³⁴⁷ ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 3 (135), 31 հունվարի, 2001, էջ 43:

³⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 45:

³⁴⁹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տեղեկագիրը (1999, 2000), եր., 2001, էջ 99, 103:

³⁵⁰ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 78:

³⁵¹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 87:

³⁵² Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 78:

³⁵³ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 87:

կրել դպրոցականների ընտանիքները: Տարեկան ծախսերի գումարը մեկ աշակերտի հաշվով 1998 թ. կազմել է 21.750 դրամ (49 ԱՄՆ դոլար), ընդ որում, ոչ աղքատ ընտանիքների համար՝ 31.250 դրամ (71 ԱՄՆ դոլար), աղքատ ընտանիքների համար՝ 13.460 դրամ (31 ԱՄՆ դոլար), իսկ շատ աղքատ ընտանիքների համար՝ 7.460 դրամ (17 ԱՄՆ դոլար): Այս քանակը շատ քիչ է բավարար կրթություն կազմակերպելու համար:

Խորապես անհանգստացնում է հանրակրթական դպրոցներում ուսուցման որակը, քանզի բուհերի դիմորդների 80%-ը ընդունելության քննություններին պատրաստվելու համար լրացուցիչ պարապում է ուսուցիչների և դասախոսների հետ՝ վճարելով որոշակի գումար: Այս լրացուցիչ ծախսերը հնարավորություն չեն տալիս աղքատ ընտանիքի երեխաներին անվճար բարձրագույն կրթություն ստանալու: Այսպիսով, եթե ներկայումս ոչ աղքատ ընտանիքների 17-25 տարեկան երիտասարդների 29%-ը շարունակում է սովորել, ապա աղքատ ընտանիքների սովորող երիտասարդները կազմում են 22%, իսկ շատ աղքատ ընտանիքներին՝ 16%³⁵⁴:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո աշխատանքներ տարվեցին հանրապետության բարձրագույն կրթության հետագա զարգացման ուղղությամբ: Բուհերի ուսումնական ծրագրերից հանվեցին անցյալում բոլոր բուհերի համար պարտադիր առարկաները՝ կոմունիստական կուսակցության պատմությունը, մարքս-լենինյան փիլիսոփայությունը, աթեիզմը և այլն:

Նորություն էր կառավարության 1995 թ. հունիսի 12-ի որոշումը³⁵⁵ ուսուցման նոր, եռաստիճան համակարգին անցնելու մասին. բակալավրիատ՝ 4 տարի, պատրաստում է միջին օղակների մասնագետներ՝ ոչ լրիվ բարձրագույն կրթությամբ, մագիստրատուրա՝ 2 տարի, բարձր որակավորման մասնագետների պատրաստում և ասպիրանտուրա: 1995 թվականից Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանն ու Հայկական գյուղատնտեսական ակադեմիան անցել են այդ համակարգին: Սակայն, պետք է խոստովանել, որ այդ համակարգը շատ թերություններով զիջում է ուսուցման նախկին մակարդակին: Ըն-

դարձակվեց բուհական ցանցի աշխարհագրությունը, նոր բուհեր կամ նրանց մասնաճյուղեր բացվեցին Գյումրիում, Վանաձորում, Գորիսում, Ստեփանակերտում (Արցախ): 1993 թ. բացվեց Գավառի պետական համալսարանը, իսկ 1995 թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը:

Այսօր Երևանի պետական համալսարանում գործում է 21 ֆակուլտետ, որտեղ կադրեր են պատրաստվում 30-ից ավելի մասնագիտությունների գծով: Համալսարանն իր գոյության ընթացքում տվել է 60 հազարից ավելի շրջանավարտ³⁵⁶: Համալսարանն ունի 110 ամբիոն, պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած է 1329 մարդուց, որից պրոֆեսոր՝ 201, դոցենտ՝ 514, ավագ դասախոս՝ 144, դասախոս՝ 301, ասիստենտ՝ 169: Նրանցից 39-ը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս են, 34-ը՝ այլ երկրների ակադեմիկոսների և գիտական ընկերությունների անդամ, 55-ը ունեն պատվավոր կոչում³⁵⁷: ԵՊՀ-ն ունի 400-ից ավելի հետազոտողներ, 350-ից ավելի ասպիրանտներ, 9500 ուսանող՝ ներառյալ 300 արտասահմանցիներ: Բարձրորակ կադրեր պատրաստելուց բացի համալսարանը զբաղվում է նաև գիտության զարգացմամբ: Այսպես, օրինակ, միայն համալսարանում հետազոտություններ են անցկացվում 36 հիմնական ուղղություններով՝ 26 գիտահետազոտական լաբորատորիաներում, 13 գիտահետազոտական խմբերում և 110 ամբիոններում³⁵⁸: Ներկայումս նախապատվությունը տրվում է համալսարանական կրթության զարգացմանը: Բուհերում ընդլայնվում է գիտահետազոտական կենտրոնների ու լաբորատորիաների ցանկը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակից դառնալ ինքնուրույն գիտական աշխատանքներին:

Փորձեր են ձեռնարկվում նաև բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ: Ամրապնդվում է հանրապետության բուհերի համագործակցությունը արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ: Ներկայումս հայաստանցի 50-ից ավելի ուսանողներ սովորում են 9 երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ավելի քան 150 գիտաշխատող գործուղվել է արտասահման՝ աշխատելու, վերաորակավորվելու և գիտաժողովներին մասնակցելու համար: Այս ծրագրերից մի քանիսը ֆինանսավորել են օտարերկրյա կառավարությունները: 19 հայ երի-

³⁵⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001, էջ 52:

³⁵⁵ Տե՛ս ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ՝ ՀՀ կառավարության որոշումները 1995 թ., № 6, (329 որոշում) հ. 63, թ. 53-54:

³⁵⁶ Մանրամասն տե՛ս Երևանի պետական համալսարանը երեկ, այսօր, վաղը, Եր., 1999 թ., էջ 25, 26:

³⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 71:

³⁵⁸ Տե՛ս Էլեկտրոնային զարգացումը Հայաստանում, էջ 54, 55:

տասարդներ Սորոսի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Կենտրոնական Եվրոպայի համալսարանի սաներ են: Միայն 1995 թ. Հայաստանի բուհերում արտասահմանից ուսանել է 840 ուսանող, որոնց 8%-ը՝ ոչ ԱՊՀ երկրներից: Արտերկրից սեղմ ժամկետով 104 գիտնականներ (75%-ը ԱՄՆ-ից) հրավիրվել են Հայաստան՝ աշխատելու³⁵⁹:

Վերջին տարիներին շատ ինստիտուտներ վերանվանվեցին համալսարաններ, ինչպես օրինակ՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը՝ Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարան, Պոլիտեխնիկական ինստիտուտը՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան և այլն: Սակայն չպետք է բավարարվել անվան փոփոխությամբ: Անհրաժեշտ է բարձրացնել ուսումնական ու գիտական աշխատանքների որակը: Այդ ուղղությամբ վերջին տարիներին կատարվում են որոշակի դրական աշխատանքներ:

Օրեցօր աճող գործազրկությունը և շարունակվող արտագաղթը վկայությունն են այն իրողության, որ այսօր բարձրագույն կրթությունն ու մասնագիտական գիտելիքները բնավ էլ բավարար չեն համապատասխան աշխատանք գտնելու և երիտասարդության զբաղվածության հարցը լուծելու համար: Այնուհանդերձ, այս պայմաններում իսկ աճել է ուսումնական հաստատությունների թիվը, ուրեմն և՛ դրանց պահպանման և դասախոսների վարձատրման հետ կապված ծախսերը: Այսպես, 1990-ականների սկզբի համեմատությամբ, աճել է բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը, այն դեպքում, երբ նվազել է ուսանողների թիվը:

1991 թ. հիմնադրվեց Հայաստանի Ամերիկյան Համալսարանը (ՀԱՀ), որպես Կալիֆորնիայի համալսարանի մասնաճյուղ, 1998 թ.՝ Հայ-սլավոնական համալսարանը:

Եթե 1990-ական թվականների շեմին Հայաստանում գործում էր 14 բուհ՝ 68.400 ուսանողներով, որտեղ կադրեր էին պատրաստվում ավելի քան 100 մասնագիտությունների գծով, ապա 2001 թվականից գործում էր 19 պետական բուհ՝ 43.615 ուսանողներով՝ ավելի քան

130 մասնագիտությունների գծով: 1993-95 թթ. բուհերում ընդունելություն է կատարվել 36 նոր մասնագիտությունների գծով: Չնայած այս ցուցանիշներին, պետք է նշել, որ յուրաքանչյուր տարի բուհերն ավարտող մասնագետների թիվը շարունակում է մնալ նույնը՝ տարեկան ավելի քան 8 հազար մարդ:

Սակայն պետք է ասել, որ անհրաժեշտ միջոցների սղությունը վատթարացրել է պետական բուհերի ներքին վիճակը և զգալիորեն ազդել դասավանդման որակի վրա: Նկատելիորեն նվազել են ուսման առաջադիմությունը, պրոֆեսորադասախոսական կազմի որակի բարձրացման հնարավորությունները: Առանձին, մասնավորապես հասարակագիտական առարկաների գծով բացակայում են ժամանակակից դասագրքերը: Դասախոսների մեծամասնությունը դասավանդմանը զուգահեռ զբաղվում է տնտեսական այլ գործունեությամբ կամ դասախոսությունների թիվը համալրում է լրացուցիչ ծավալով և աշխատում գերբեռնվածությամբ, որի հետևանքով ժամանակ և հնարավորություն չեն ունենում զբաղվելու գիտությամբ կամ մասնագիտական որակի բարձրացմամբ:

Նոր տնտեսական համակարգի պայմաններում Հայաստանում բացվեցին բազմաթիվ մասնավոր համալսարաններ ու քոլեջներ, որոնց կրթական մակարդակը հիմնականում բավական ցածր է, քան պետական հաստատություններում: Եթե 1995 թ. հանրապետությունում գործել են արտոնագրված 42 ոչ պետական ուսումնական հաստատություններ (Հր. Աճառյանի անվան համալսարանը, Մյուլհոլդ-Գլաձորի համալսարանը և այլն), ապա 1998 թ.՝ 87 մասնավոր համալսարաններ ու ինստիտուտներ, որտեղ սովորողների թիվն ավելի քիչ է՝ մոտ 20.000, քան պետական բուհերում՝ 36.000, իսկ 2001 թ. դրանց թիվը կրճատվեց իջնելով 71-ի, ուսանողների թվաքանակը՝ 17.000-ի³⁶⁰: Այնուամենայնիվ բնակչության մի զգալի հատված օգտվում է կրթական այդ հիմնարկների ծառայություններից՝ ստանալով ոչ պետական բուհի շրջանավարտի վկայական: Այժմ Հայաստանում ոչ պետական ուսումնական հաստատությունների լիցենզիան ունենում է ոչ պետական ուսումնական հաստատությունների լիցենզիան, որի արդյունքում 11 բուհ արդեն դադարել է գործել: Օրիգավորում, որի արդյունքում 52 ոչ պետական բարձրագույն նակ, միայն Երևանում գործում են 52 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ մոտ 16 հազար ուսանողներով:

³⁶⁰ Տես Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 80: Հայաստանի Հանրապետություն սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, էջ 151:

³⁵⁹ Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 37:

Դրանց մեծ մասում սովորում է ընդամենը 100-200 ուսանող, իսկ առավել հեղինակավոր տասը կրթական հաստատություններում՝ 8000 ուսանող³⁶¹: Գործազրկության, տնտեսության շարունակվող ճգնաժամի, ներդրումների ցածր մակարդակի պայմաններում նման թվով մասնագետների պատրաստումն ավելի է խորացնում գործազրկության խնդիրը և անհամապատասխանությունը քաղաքացու ստացած կրթության և մասնագիտության պահանջարկի միջև: Հետևանքն այն է, որ երիտասարդ մասնագետները դառնում են գործազուրկներ, կամ իրենց որակավորմանը չհամապատասխանող աշխատանք կատարողներ:

1990-ական թվականներին պետական բուհերում նույնպես կիրառվեց վճարովի ուսուցումը: 1991 թ. պետական 16 բուհերի վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թիվն աճել է մոտ 6,5 անգամ: Եթե 1997 թ. պետական բուհերի ուսանողների թիվը կազմել է 36 հազար մարդ, որոնցից միայն 19.100-ն էր սովորում պետական պատվերով (անվճար), ապա 2001 թ.՝ 43.615-ը, որից 17.437-ը կամ 40%-ն էր սովորում պետպատվերով, իսկ 60%-ը՝ վճարովի ուսուցման համակարգերում³⁶²: Պետական պատվերով սովորող մեկ ուսանողի հաշվով 1998 թ. պետբյուջեի ծախսը կազմել է տարեկան 130 հազար 900 դրամ (261,8 ԱՄՆ դոլար)³⁶³: Այս կապակցությամբ պետք է նշել նաև մեկ կարևոր հիմնահարց՝ պետպատվերի կազմավորման հստակ հայեցակետի բացակայությունը: Պետական բուհեր ընդունվող ուսանողների թվի սահմանափակումը (վճարովի հիմունքներով ընդունված ուսանողների թիվը միայն 5%-ով կարող է գերազանցել պետպատվերով ընդունվող ուսանողների թվին) հասցրեց նրան, որ բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողներից շատերը պետական բուհերից դուրս մնացին, որն էլ պատճառ դարձավ մասնավոր բուհերի ավելացմանը: Լուրջ խնդիր է այն, որ բնակչության սոցիալապես անապահով խավերը (հատկապես գյուղական շրջանների բնակիչները) զրկված են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Գյուղական շատ դպրոցներ համալրված չեն որակյալ կադրերով, իսկ շրջանավարտներն ի վիճակի չեն հանձնելու ընդունելության քննություններ: Պետպատվերով հատկացվող տեղերը

զնալով պակասում են, իսկ բնակչության մեծ մասն ի վիճակի չէ վճարել ուսման համար: Ներկայումս բարձրագույն պետական դպրոցի վճարովի համակարգում սահմանված վճարների չափն անմատչելի է բնակչության մեծամասնությանը, իսկ պետպատվերով անվճար ուսուցման համակարգը խիստ սահմանափակ է: Բուհերի դասախոսական կազմի ցածր աշխատավարձը, ուսուցման բազայի մաշվածությունը և այլ պատճառներ թույլ չեն տալիս ուսուցման նպատակահարմար գործընթաց կազմակերպել: Այսպիսով, սոցիալական շերտավորման հետևանքով ծագում է միջնակարգ և բարձրագույն կրթությունը հանրամատչելի դարձնելու հիմնախնդիրը:

Բարձրագույն կրթության կազմակերպման գործում մեծ էր ՀՀ «Կրթության մասին» օրենքի դերն ու նշանակությունը: Այն ոչ միայն որոշակի կանոնակարգեց այս ոլորտը, այլև վավերացրեց ավելի բարձր աստիճանի կրթություն ստանալու իրավունքը, ինչպես նաև սահմանեց այն ստանալու որոշ սոցիալական երաշխիքներ երիտասարդության համար: Անշուշտ, բարձրագույն կրթության զարգացմանը մեծապես կօգնի ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»³⁶⁴, որը դրվել է հրապարակային քննարկման և հավանաբար կընդունվի Ազգային ժողովի կողմից:

գ. Մշակութային կյանք

Հայաստանում անկախության հռչակումից հետո վերացվեցին գաղափարական այն կապանքները, որոնք կաշկանդում էին ազգային մշակույթի զարգացումը: Ազատ ստեղծագործելու հնարավորություններ ստեղծվեցին: Սակայն տնտեսական կապերի խզման, Հայաստանի տևական շրջափակման, շուկայական հարաբերություններին անցման շրջանի ընդհանուր սխալների ու բարդությունների պատճառով խիստ վատացավ բնակչության սոցիալական վիճակը, որը բացասական ազդեցություն ունեցավ նաև մշակութային կյանքի զարգացման վրա: Մի կողմից բնակչության ծանր վիճակը խոչընդոտում էր մշակութային իրական շուկայի ձևավորմանը, մյուս կողմից՝ արվեստի և մշակույթի գործիչների անբավարար կենսամակարդակը ստիպում էր նրանց զբաղվել ոչ ստեղծագործական, այլ եկամտաբեր գործերով: Շատերն էլ հարկադրված լքում էին հայրենիքը՝ նվազեց-

³⁶¹ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց 2000, էջ 88:

³⁶² Մանրամասն տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, էջ 151:

³⁶³ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, էջ 80:

³⁶⁴ Տե՛ս «Կրթություն», 1-15, օգոստոս, 2002:

նելով երկրի ստեղծագործական և մշակութային ներուժը և այդպիսով խոչընդոտելով մշակույթի զարգացմանը:

Երկրորդ կարևոր պատճառը բարոյական և նյութական շահագրգռության բացակայությունն էր: Պետության ու նրա տարբեր ինստիտուտների կողմից անհատի հոգևոր, մտավոր և մշակութային մակարդակը որևէ կերպ չզննահատելու և չարժևորելու իրողությունն անտարբերություն էր ծնում հիշյալ արժեքներին տիրապետելու կամ դրանք զարգացնելու առումով: Մշակութագուրկ միջավայրն ինքնին հանգեցնում էր ցածրաճաշակ և ցածրորակ մշակութային դրսևորումների ընդլայնմանը և այնպիսի չափանիշների արմատավորմանը, որոնք խաթարում էին հոգևոր-մշակութային հարաբերությունները: Նման երևույթները հատկապես նկատելի էին անկախ հանրապետության մշակութային կյանքի առաջին տարիներին: Պարզորոշ երևում էր, որ պետությունը չունեւր մշակութային համակարգված քաղաքականություն իրականացնելու ընդհանրական հայեցակարգ, որի պատճառով տեղի էր ունենում մշակույթից մարդկանց օտարում:

Անցած տասնամյակի մշակութային կյանքի զարգացումը կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլին՝ 1991-1995 թթ. բնորոշ էր էներգետիկ և տնտեսական ճգնաժամը: Այս օբյեկտիվ պատճառներին գունարվեցին նաև մշակութային քաղաքականություն իրականացնողների շփոթահար վիճակը, որոնք պատրաստ չէին ոչ միայն արտակարգ իրավիճակներին, այլև՝ նոր հարաբերություններին: Մշակույթի ոլորտի քաղաքականացվածությունը փոխարինվեց գաղափարազրկությամբ: Անկախության հասնելու և իշխանափոխության գործընթացներն ուղեկցվում էին կոմունիստական գաղափարախոսությունը թոթափելու և ազգային գաղափարախոսություն սերմանելու և ապա դրանով առաջնորդվելու կարգախոսներով: Սակայն իշխանության եկած կուսակցության ռազմավարությունը սահմանափակվեց միայն առաջին խնդրով: Որդեգրված մշակութային քաղաքականության առումով թերևս էական դեր էր խաղում մինչև օրս էլ տիրապետող այն թյուր մտայնությունը, թե տնտեսական խոր ճգնաժամի ու հակամարտության պայմաններում մշակութային հարցերին ջանքեր ու միջոցներ նվիրելը անպատեհ ու անհարկի շռայլություն է: Չնայած հասարակարգի արմատական վերափոխմամբ պարտադրված նոր մոտեցումներին՝ մշակույթի կառավարման համակարգն ու մեթոդները որևէ փոփոխություն չկրեցին: Ակնառու էր նաև միջազգային ասպարեզ դուրս գալու արտասահմանյան երկրների հետ ան-

միջականորեն համագործակցելու ձգտումը, որը պետք է բացատրել անկախացումից և ԽՍՀՄ սահմանների վերացումից հետո ստեղծված աննախադեպ հնարավորություններով: Սակայն միշտ չէ, որ ստեղծվող կապերը հեռանկարային էին և զարգացման նպատակ էին հետապնդում, շատ հաճախ դրանք սահմանափակվում էին սոսկ հյուրախաղային միանվագ ձեռնարկումներով, որոնք ֆինանսական հսկայական և չարդարացված միջոցներ էին կլանում: Այս «ցուցադրական» միտումը, որը հիմնականում բնորոշ էր վերին օղակներին, աստիճանաբար տիրապետող դարձավ նաև առանձին հաստատությունների մակարդակում:

1995 թվականից մինչև այսօր տևող երկրորդ փուլում, նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ, մշակութային կյանքի աշխուժացումն ակնառու է և այլ գործոնների շարքում միանգամայն օրինաչափ պայմանավորված նաև էներգետիկ ճգնաժամի վերացումով: Բայց և այնպես, այս փուլում նույնպես կառավարման համակարգում զգացնել էին տալիս որոշ ճգնաժամային միտումներ՝ պասիվություն, մասնագիտական որակների ու չափանիշների անկում և այլն: Այդ ընթացքում թե՛ գերատեսչությունները, թե՛ կառավարման համակարգը, թե՛ ֆինանսավորման մեթոդները էական փոփոխություններ չկրեցին: Բայց էապես փոխվեց մշակութային գործիչների դիրքորոշումը. պետության կողմից ֆինանսական լիարժեք աջակցություն ստանալու հավակնությունները հետզհետե տեղի տվեցին սեփական նախաձեռնություններին, հույսը սեփական ուժերի վրա դնելու, գործունեության նորարարական ուղիներ փնտրելու մտայնությանը:

Անցած տարիներին մշակութային կյանքի վերաբերյալ ընդամենը երեք օրենք է ընդունվել «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» (1994), «Չեղիմակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» (2000), «Պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (1998)³⁶⁵:

Առաջինը, որ առհասարակ անկախության տարիներին ընդունված և մշակույթին վերաբերող անդրանիկ օրենքն էր, տևական ժամանակ միակը, հարուցում էր քաղաքացիների դժգոհությունը: Մաս-

³⁶⁵ Տե՛ս ԳԳ գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 734-750, ԳԳ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գ. Բ, էջ 722-739, ԳԳ գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.), էջ 100-126:

նավորապես օրենքի այն դրույթը, ըստ որի մշակութային բարձր արժեք ներկայացնող իրերը ՀՀ քաղաքացին կարող էր արտահանել միայն համապատասխան վարչության ու խորհրդի որոշմամբ, իսկ ժամանակավոր մեկնողներից իրը կարող էր գնվել պետության կողմից մեկ տարվա ընթացքում: Չափազանց հաճախ էին բողոքները, թե պետությունը, արգելելով, չէր կատարում իր հանձնառությունը: Ըստ Մշակութային արժեքների պահպանության վարչության տվյալների, անցած տարիներին քաղաքացիներից մոտ երկու տասնյակ մշակութային իր է գնվել³⁶⁶:

Սակայն միանգամայն արդարացի էր արվեստագետների վրդովմունքը, որոնք սեփական ստեղծագործությունն արտահանելու համար, քաշքշուկի ու թղթատարության մեջ ընկնելուց բացի, դեռ պարտավոր էին տուրք վճարել: Նման իրարանցման մեջ էին ներքաշվում նաև գեղարվեստական արժեքների գնորդները: Բանը հասել էր այնտեղ, որ արվեստի գործերի բիզնեսով զբաղվող գործարարներն ավելի քան արտառոց գործելաճ էին որդեգրել. կտավների փոխարեն «արտահանում էին» հենց արվեստագետներին, որոնք ստեղծագործում էին օտար երկնքի տակ և տեղում էին լուծում իրացման հարցը:

Իրավիճակն էապես շտկվեց ՀՀ կառավարության 1999 թ. «Մշակութային արժեքների և առարկաների արտահանումը կարգավորելու մասին» որոշմամբ, ըստ որի մինչև 50 տարվա վաղեմություն ունեցող գեղարվեստական իրերը, եթե առկա է հեղինակի ստորագրությունն ու տարեթիվը, քաղաքացիները կարող են արտահանել ազատորեն, առանց վկայագրի³⁶⁷:

Տարօրինակն այն է, որ ՀՀ օրենսդիր մարմինները, որքան աչալուրջ էին անհատներին պատկանող նմուշները մեր երկրում պահելու խնդրով, նույնքան անտարբեր էին արդեն իսկ ազգային սեփականություն հանդիսացող մշակութային արժեքների պահպանության թանգարանի շենքի (Ամիրյան 6) վաճառքն օտարերկրյա մի կազմակերպության: «Վտարված» թանգարանն այժմ զուրկ է ցուցադրության հնարավորությունից, իսկ նոր շենք կառուցելու համար գումար չունի: Մինչդեռ վերոհիշյալ օրենքը պարտավորեցնում է ոչ միայն

արգելել արժեքների արտահանումը, այլև նպաստել թանգարանների ստեղծմանն ու զարգացմանը:

«Մշակույթի մասին», «Թանգարանների մասին» և «Գրադարանների մասին» օրինագծերը տարբեր պատճառներով օրակարգից դուրս են մնացել դեռևս առաջին գումարման խորհրդարանից: Օրենսդրության բացակայության և առկա սոցիալ-տնտեսական իրադրության պատճառով անցած տարիներին փակվեցին հարյուրից ավելի գրադարաններ, ավերակ դարձան որոշ թանգարաններ, վերացան գրախանութներ, ինքնագործ համույթներ ու մշակույթի տներ, ճգնաժամ ապրեցին հայ թատրոնն ու կինոն, կրճատվեց գրքերի տպագրությունը, խաթարվեց մշակութային կապերի զարգացումը: Այսպես, օրինակ, եթե 1990 թ. հանրապետությունում գրադարանների թիվը կազմել է 1441, ապա 2000 թ.՝ 1138, թանգարանների թիվը համապատասխանաբար 121-ից կրճատվել է՝ հասնելով 93-ի³⁶⁸: Գրքային ֆոնդը 21,7 մլն միավորից իջել է 19,4 մլն-ի: Կրճատվել է նաև ընթերցողների թվաքանակը՝ 1990 թ. 1 մլն 195 հազարից 2000 թ. դառնալով 765 հազար: Եթե 1990 թ. հանրապետությունում հրատարակվել է 817 անուն գիրք ու բրոշյուր, ապա 2000 թ.՝ 657³⁶⁹: Գրեթե 60%-ով կրճատվել է կինո և թատրոն հաճախողների թվաքանակը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող մասնավորեցման գործընթացը հասցրեց նրան, որ ներկայումս գործում են մի քանի տասնյակ ոչ պետական լրատվամիջոցներ՝ ռադիո, հեռուստաընկերություններ, մամուլի միջոցներ, իսկ գյուղական վայրերում դեռևս գերակշռում է պետական լրատվությունը՝ ի դեմս ՀՀ Ազգային հեռուստատեսության: Այս բնագավառի աշխատանքները կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունեցավ 2001 թ. դեկտեմբերի 28-ին ընդունված «ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի» վերաբերյալ օրենքը: Նրանում նշվում է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը կարգավորող անկախ պետական մարմին է, որն օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորում և վերահսկում է մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը»:

³⁶⁶ Տե՛ս Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000, էջ 91:

³⁶⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին, Եր., 2001, էջ 33:

³⁶⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1996, Եր., 1998, էջ 76, 79: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001, էջ 111, 114:

³⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 77, 78, 112, 113:

նր»³⁷⁰։

Մշակութային կյանքում իր որոշակի տեղն ունի մամուլը։ Չնայած եզակի դեպքերին, երբ մամուլը ենթարկվել է ճնշումների ու հալածանքների, ոչ պետական լրատվամիջոցներն ազատ են արտահայտելու իրենց կարծիքները։ Պետական լրատվամիջոցները գտնվում են իշխանությունների վերահսկողության ներքո, թեև 1998-99 թթ. սկսած այդ վերահսկողությունը նույնպես որոշ չափով թուլացել է։ Ունենալով զգալի ազատություն՝ այնուամենայնիվ ազատ մամուլի զարգացման հնարավորությունները ՀՀ-ում սահմանափակ են։ Քերթերի մեծամասնությունն ունի ընդամենը 2-3 հազար տպաքանակ և տարածվում է հիմնականում մայրաքաղաքում։ Հասարակական-քաղաքական թերթերից ամենամեծ տպաքանակով լույս է տեսնում «Իրավունք» շաբաթաթերթը (18000 օրինակ), որը սակայն 10-12 անգամ փոքր է Խորհրդային Հայաստանում տպագրվող թերթերի միջին տպաքանակից։ Բնակչության ցածր զնոդունակությունը և գովազդային համակարգի թերզարգացածությունը հանգեցնում են մամուլի ծանր ֆինանսական վիճակին, ինչն իր հերթին խոչընդոտում է ազատ մամուլի զարգացումը Հայաստանում։ Որպես դրական միտում անհրաժեշտ է նշել, որ 1999 թվականից պետական կառավարման մարմինները և պաշտոնյաներն ավելի հաճախ են արծագանքում մամուլում եղած ահազանգերին, պատասխանում Ազգային ժողովում պատգամավորների տված հարցերին, տալիս են բացատրություններ, մեկնաբանություններ, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ։ Սակայն մամուլում հաճախ տպագրվում են չհիմնավորված անձնական վիրավորանքներ պարունակող նյութեր, որոնց հեղինակները պատասխանատվություն չեն կրում։

Պետական անհրաժեշտ հոգածության բացակայության պատճառով հայոց արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոնի, կինոյի շենքեր անմխիթար վիճակում են գտնվում։ Արվեստի որոշ հիմնարկների սեփականաշնորհման պատճառով ստեղծագործական շատ կոլեկտիվներ անգործության մատնվեցին և հեռացան գործունեության այլ բնագավառներ։ Նրանց փոխարեն, անշուշտ, երևան եկան նոր ստեղծագործական խմբեր, որոնց թիվը տասնապատիկ փոքր էր նախորդների համեմատությամբ։

յամբ, Դրանց մի մասն էլ թիթեռի կյանք էր ունենում կամ հայտնվում էր ճգնաժամի մեջ։

Սակայն ամենալուրջ բացթողունն արձանագրվեց մշակութային կրթության արժեքների տարածման և քարոզչության ասպարեզում։ Շուկան ողողող մշակութային ցածր արժեքները և դրանք համահարթեցնող գլոբալացման վտանգները չափազանց թույլ դիմադրության էին հանդիպում։ Թե՛ հանրակրթական դպրոցներում գեղարվեստական դաստիարակության ներկայիս վիճակը, թե՛ գեղարվեստի դպրոցների օրավուր ծանրացող դրությունը, թե՛ ճանաչողական բնույթի հեռուստահաղորդումների ու հրատարակչությունների նվազումը, թե՛ գրադարանների համալրման բարդությունները ցույց են տալիս, որ բավական բարդացել է աճող սերնդի գեղագիտական ճաշակի ձևավորման խնդիրը։

Եթե գնահատելու լինենք անցած տասը տարիների մշակութային զարգացումները, ապա հարկ է վավերացնել, որ կորուստներն ակնբախ են՝ պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով։

Նշված թերությունների, բացթողումների կողքին ակնառու են նաև հաջողությունները։ Հայաստանի ստեղծագործական ուժերը ջանքեր են գործադրում հոգևոր կյանքը վերակենդանացնելու։ Հայ մշակույթը կոչված է մեծ դեր խաղալու մեր նոր պետականության հաստատման գործում։ Ներկայումս էլ, չնայած շարունակվող սոցիալ-տնտեսական ճգնաժամին և շատ ցածր վարձատրությանը, որը երբեմն տրվում է ուշացումներով, արվեստի աշխատողները հոգատարությամբ վերաբերվելով իրենց հարուստ ավանդույթներին, ամեն կերպ ձգտում են համընթաց քայլել ժամանակի հետ։ Հաջողություններ են արձանագրում Հայաստանի թատրոնները, երգի ու պարի համույթները, ստեղծագործ ուրիշ կոլեկտիվներ երկրում և արտասահմանում։ 1990-ական թվականների սկզբին, չնայած հանրապետության ընդհանուր ծանր կացությանը, առանձին ստեղծագործական խմբերի հաջողվեց շարունակել այդ ավանդույթը։ Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախումբը հաջողությամբ հանդես եկավ Ավստրիայում և մի շարք այլ երկրներում, «Համազգային» նորաստեղծ թատրոնը՝ Սիրիայում ու Լիբանանում, հայ հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը՝ Լատինական Ամերիկայի երկրներում և այլն։

Հանրապետության «Հայֆիլմ» և «Հայկ» պետական կինոստու-

³⁷⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 5 (180), հունվար, 2002, էջ 28։

դիաները 1990-ական թվականներին թողարկել են և 2000 թ. ավարտել 22 ֆիլմերի արտադրությունը: Դրանցից հայտնի են «Հայկ» կինոստուդիայի թողարկած «Նոր անուններ», «Հավերժ վերադարձ», «Դրո» տեսաֆիլմերը, ինչպես նաև Հայֆիլմ կինոստուդիայի «Ուրախ ավտոբուս», «Խենթ հրեշտակ» լիամետրաժ ֆիլմերը³⁷¹:

Անցած տասը տարիներին որոշակի աշխատանք կատարվեց միջազգային համաձայնագրերին միանալու և ազգային օրենսդրական դաշտ ձևավորելու ուղղությամբ: Հայաստանը միացավ մի շարք միջազգային կոնվենցիաների: Դրանցից հատկապես կարևորվում են «Չինված կոնֆլիկտի դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» (1993 թ.), «Եվրոպական մշակութային աջակցության մասին» (1997 թ.), «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» Բեռնի (2000 թ.) կոնվենցիաները: Հանրապետությունում ընդունվեցին այս կոնվենցիաներից բխող և մշակութային կյանքը կարգավորող մի շարք օրենքներ, որոնցից էին՝ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» (1997 թ.) և «Հուշարձանների պահպանության և օգտագործման մասին» (1998 թ.) օրենքները³⁷²: Վերջինս սահմանում է հանրապետության իրավասությունները նաև մեր երկրի տարածքից դուրս գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ: Դրա շնորհիվ ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունն իր մասնակցությունը բերեց Իրանի Իսլամական Հանրապետությունում գտնվող Ծործորի եկեղեցու և Ս. Թադեի վանական համալիրի վերականգնմանը, պատրաստակամություն է հայտնել մասնակցելու Աճիի Սայր տաճարի վերականգնման աշխատանքներին, որը նախատեսված է Թուրքիայի մշակույթի նախարարության կողմից: Իր գործունեության ընթացքում վարչությունը Հայաստանում հաշվառված 30 հազար պատմամշակութային հուշարձաններից ամրակայել, մասնակի կամ ամբողջապես վերականգնել է մոտ 300-ը, այդ թվում՝ եկեղեցիներ և վանական համալիրներ, և դրանց մի մասը հանձնել է Սայր Աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը: Դրանցից են՝ Գնդեվանքի, Կեչառիսի, Հաղարծնի, Հաղպատի, Հայրավանքի, Հառիճավանքի, Մակարավանքի, Նորավանքի, Մաքենյաց, Սևանի և Սանահնի վանական համալիրները: Վարչության և

հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության միջազգային խորհրդի համագործակցության արդյունքում Հաղպատի, Սանահնի վանական համալիրները, Գեղարդավանքը, Էջմիածնի Սայր տաճարը և եկեղեցիները, Չվարթնոց պատմաճարտարապետական արգելանոցը ընդգրկվեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության գրանցամատյանում³⁷³:

Մշակութային արժեքների պահպանման խնդրում որոշակի առաջընթացն ակնառու է, սակայն այստեղ ևս մի ամբողջ ոլորտ՝ գրադարաններն ու թանգարանները, տակավին զուրկ են օրենսդրական կարգավորումից: Օրենսդրորեն կարգավորված չեն նաև թատերական և կինոարտադրության բնագավառները, դրանց պետական աջակցություն ցույց տալու սահմաններն ու կարգը: Կարևոր բացթողում է նաև լույս տեսնող հրատարակությունների պարտադիր օրինակի մասին օրենքի բացակայությունը, որը լուրջ դժվարություններ է հարուցում գրադարանների համալրման և տպագիր արտադրանքի արձանագրման ոլորտներում: Ֆինանսական միջոցների սղությունը հնարավորություն չի տալիս մշակութային հաստատություններին ոչ միայն զարգացման ծրագիր մշակել, այլև իրականացնել որոշ հիմնական գործառնություններ: Թատերարվեստի, կինոարտադրության և գրահրատարակչության ոլորտներում գործում է պետական պատվերի համակարգը, սակայն չափազանց սահմանափակ շրջանակներում: Բացի դրանից, բավական մշուշոտ է գերատեսչությունների ընտրության կարգը: Հայտնի չէ, թե գերատեսչությունների համապատասխան պաշտոնյաներն ինչ չափանիշներով են որոշում ֆինանսավորել ստեղծագործական կոլեկտիվների առաջադրած գործերը:

Առայժմ չեն արդարանում բարեգործության օգնությամբ միջոցներ հայթայթելու հույսերը, որը կարող է մշակութային ավանդույթների խաթարում դիտվել: Անվիճելի փաստ է, որ հայ մշակույթը դարեր շարունակ զարգացել է մեկենասության և բարեգործության շնորհիվ: Հանրապետությունում գործող մի քանի մշակութային հիմնադրամներ զգալի նպաստներ են բերում, սակայն նրանց միջոցներն ի գործընդունելու փոխելու ընդհանուր իրավիճակը: Սա, անտարակույս, պայմանավորված է տնտեսության մի զգալի հատվածի ստվերայնությամբ, ինչպես նաև մշակույթին աջակցող հովանավորների համար հարկային արտոնությունների բացակայությամբ: Սակայն իրավիճակի

³⁷¹ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հունիսին, էջ 158:

³⁷² Տե՛ս ԱՆԿախության անցումային տարիները Հայաստանում, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 32:

³⁷³ Տե՛ս նույն տեղում:

կտրուկ բարենորոգում կարելի է ակնկալել միայն պետական մակարդակով մշակույթի զարգացման հիմնադրամի ստեղծման դեպքում:

Անցած տարիների մշակութային քաղաքականության ամենախոցելի կողմերից մեկը կառավարման համակարգն էր: Մշակութային հաստատությունների գիտական ու գեղարվեստական խորհուրդներն ու նախարարության կոլեգիաները, որոնք կազմավորվում էին ղեկավարների հայեցողությամբ, ձևական բնույթ էին կրում: Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կանոնադրությամբ նախատեսված գիտական խորհուրդն էլ՝ բաղկացած մասնագետներից ու փորձագետներից, մնացել է թղթի վրա: Չեն գործում նաև նախկին միջգերատեսչական խորհուրդները, որոնք ինչ-որ չափով մեղմում էին գերատեսչական տարանջատվածությունը: Այս տեսակետից միանգամայն դրական քայլ էր 2001 թ. սկզբին Հայաստանի ինը խոշոր գրադարանների կոնսորցիումի ստեղծումը, որը հնարավորություն տվեց համատեղ քննարկել ու լուծել գրադարանային ոլորտի հանգուցային խնդիրները:

Օրենսդրական ու տնտեսական մեխանիզմների բացակայության պատճառով լուրջ խնդիրներ են առաջացել մշակույթի կառավարման ոլորտում:

Շատ համայնքներում տեղական իշխանության ջանքերով, ֆինանսական հնարավորություններից ելնելով, հաճախ լուծարվում էին մշակութային հաստատությունները: Կառավարման նոր ձևեր մշակելու փոխարեն մշակույթի նախարարությունը ջանքեր էր գործադրում իր լիազորությունները վերականգնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, 1997 թվականից մարզային գրադարանների կառավարումը վերստին հանձնվեց մշակույթի նախարարությանը, որը բնավ էլ հեռանկարային մտեցում չէր: Մշակույթի կառավարման համակարգում առայժմ չեն օգտագործվում տեղեկատվական ու հետազոտական հնարավորությունները, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել այն խնդիրները, որոնք առաջադրված են մշակութային քաղաքականության հայեցակարգում:

Հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգի մշակումը սկսվեց 1995 թվականից, որը վերջնականապես ձևակերպվեց ու հաստատվեց 2000 թ. հոկտեմբերին: Համաձայն այդ հայեցակարգային հիմնադրույթների, պետական մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգութ-

յան պահպանումն ու անխաթար փոխանցումն է սերունդներին, գեղարվեստական-ստեղծագործական գործունեությանն աջակցելը, ինչպես նաև մշակութային արժեքների ընկալմանն ու տարածմանը նպաստելը: Այս միանգամայն ընդունելի նպատակին հասնելու համար պետությունը որդեգրել է կառավարման ժողովրդավարական, մշակութային գործունեության ազատության միջազգային նշանակության արժեքների գնահատման և կառավարման ապակենտրոնացման սկզբունքները:

Այսպիսով անկախության տարիներին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հանրապետությունը հայտնվեց ծանր ճգնաժամային պայմաններում: Բնականաբար այն իր բացասական անդրադարձն ունեցավ բնակչության սոցիալական վիճակի վրա: Հասարակության սոցիալական կառուցվածքի անբնական փոփոխություններն ու ծայրաստիճան բևեռացումը բնակչության զգալի մասին հարկադրեց արտագաղթել երկրից: Տնտեսական փլուզումը բերեց նաև գիտակրթական և մշակութային կյանքի անկում: Միայն 1990-ական թվականների վերջերին որոշակի գործնական քայլեր կատարվեցին ինչպես տնտեսական կայունացման, այնպես էլ սոցիալական բնագավառում դրական տեղաշարժեր կատարելու համար:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության անկախությունը շրջադարձային նշանակություն ունի մեր ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: ԽՍՀՄ համակարգում սերտաճած և նրա օրգանական մաս կազմող Հայաստանի անկախացումը բնականաբար բազում դժվարությունների և ծանր փորձությունների հետ էր կապված: Մեկ հարվածով խզվեցին հատկապես արտադրական կոոպերատիվ կապերը, փակվեցին ապրանքների արտահանման ուղիները և տնտեսությունն ու հասարակությունը հայտնվեցին խոր ճգնաժամի մեջ: Այդ բոլորին ավելացան պատերազմը, շրջափակումը, 1988 թ. երկրաշարժը, բռնագաղթը և այլն: Այդ փորձություններն ունեին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Հանրապետությունում կենսագործվող սոցիալ-տնտեսական վերափոխումները հաճախ մեխանիկական ընդօրինակումն էին այս կամ այն երկրում կատարվող ընդհանուր գործընթացների՝ առանց հաշվի առնելու տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները:

Իշխանության ղեկի մոտ հայտնված պատահական կազմակերպություններն ու անհատները, չունենալով գործողությունների հստակ ծրագիր և անտեսելով տասնամյակների ընթացքում կուտակված տնտեսավարման ու կառավարման փորձը, ձգտում էին մեկ հարվածով լուծել մենատիրությունից շուկայական հարաբերություններին անցնելու բարդ հիմնահարցերը: Առանց լուրջ նախապատրաստական աշխատանքների սկսվեցին հողի սեփականաշնորհման աշխատանքները: Հաշվի չառնելով գյուղացիության պահանջները՝ սեղմ ժամկետում համատարած ապակուլեկտիվացման քաղաքականություն կենսագործվեց: Լուծարվեցին 900-ից ավելի կոլեկտիվ և պետական տնտեսությունները և ձևավորվեցին շուրջ 320 հազար անհատական տնտեսություններ՝ իրենց փոքրիկ հողակտորներով, որոնց թիվը հասնում էր մոտ մեկ միլիոնի: Լուծարվեցին նույնիսկ բարձր շահութաբեր, ամուր հիմք ունեցող տնտեսությունները: Արդյունքում՝ կրճատվեցին ցանքատարածությունները, անասնազվաքանակը, և գյուղացիությունը զանգվածաբար հրաժարվեց իր երազած մասնավոր սեփականությունից՝ բռնելով արտագաղթի և արտագնացության կործանարար ուղին: ԽՍՀՄ նախկին հանրապետությունների մեծ մասում պահպանվեցին կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, խելացիորեն օգտագործվեցին

նրանց հնարավորությունները գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործում: Նույնիսկ այնպիսի հողաշատ երկիր, ինչպիսին Ռուսաստանն է, մինչև այժմ չի անցել հողի համատարած սեփականաշնորհման:

Պետական այրերի անճարակության, օրենսդրական դաշտի բացակայության և անկառավարելիության պայմաններում գյուղատնտեսական հիմնական արժեքները (հող, մեքենաներ, կառույցներ, վերամշակող գործարաններ) չնչին գներով անցան գյուղատնտեսության հետ կապ չունեցող, բայց իշխանավորների հետ սերտ կապեր հաստատած պատահական մարդկանց ձեռքը: Հետագայում, սթափվելով, պետությունը փորձեց առանձին օրենքներով կարգավորել ագրարային-գյուղացիական հարցերը, սակայն ավերումներն այնքան խորն էին, որ անհրաժեշտ արդյունք չստացվեց: Գյուղացին մնալով միայնակ ու անօգնական՝ կորցրեց հավատը իշխանությունների նկատմամբ, օտարացավ իր երազած մասնավոր տնտեսությունից և հաճախ հրաժարվեց դրանից:

Առաջինը լինելու մոլուցքով տարված՝ ավելի անկազմակերպ և չմտածված ձևով կենսագործվեց արդյունաբերության սեփականաշնորհումը: Անկախացումից հետո օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով զրկվելով հումքից և էներգիայից՝ արդյունաբերության մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց: ԱՊՀ երկրներից ամենաբարձր արդյունաբերական զարգացում ունեցող երկիր Հայաստանը 1990-ականների կեսերին հայտնվեց ամենացածր մակարդակի վրա: Այս բնագավառի սեփականաշնորհումը նույնպես կատարվեց արագացված տեմպերով՝ ավելի շատ ավերելով նախկին հզոր արդյունաբերությունը, քան կառուցելով:

Համեմատաբար հեշտ ընթացավ փոքր օբյեկտների սեփականաշնորհումը: Ինչ վերաբերում է խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, իշխանություններն այնպիսի պայմաններ ստեղծեցին, որ դրանք չնչին գներով տրվեցին իրենց մերձավորներին ու ծանոթներին: Կազմակերպված թալանի հետևանքով հանրապետությունում ընտանիքների (կլանների) ութ տոկոսը զավթեց մասնավորեցված գույքի 90 տոկոսը: Շատ թանկարժեք գործարաններ մետաղի ջարդոնի անվան տակ վաճառվեցին արտասահմանյան երկրներին: Իսկ մնացածներն աշխատեցնելու մասին ոչ ոք հոգ չտարավ: Սա հանգեցրեց տնտեսության փլուզման, գործազրկության աճին և արտագաղթի հիմնական պատճառ հանդիսացավ, որը լուռ խրախուս-

վեց իշխանությունների կողմից:

Որոշ բարեփոխումներ կատարվեցին դրամավարկային և բանկային համակարգերում՝ ժամանակակից պահանջներին համապատասխան վերափոխելու նպատակով: Սակայն այստեղ ևս նկատվեցին խոշոր չափերի հասնող վարկերի և բնակչության միջոցների յուրացումներ, որոնք հաճախ հովանավորվում էին բարձրաստիճան իշխանավորների կողմից: Դրամավարկային վերափոխումները փաստորեն քիչ են նպաստել հատկապես միջին և փոքր ձեռնարկությունների ամրապնդմանն ու զարգացմանը: Չնայած հետագայում մի շարք որոշումներ ընդունվեցին այդ ուղղությամբ, միջին արտադրողը չդարձավ հիմնական դեմք և քիչ նպաստեց ինչպես արդյունաբերության զարգացմանը, այնպես էլ գործազրկության մեղմացմանն ու վերացմանը: Չկարողանալով սեփականաշնորհման արդյունքում ապահովել արտադրության զարգացումը՝ պետությունն սկսեց ավելի շատ ուշադրություն դարձնել հարկային մեքենայի կատարելագործմանն ու բյուջեի հիմնական մասի համալրմանը օրինական և ապօրինի հարկերով: Փաստորեն պետությունն իր ֆինանսական վիճակը բարելավեց մանր ու միջին արտադրողի հաշվին՝ կամա թե ակամա հովանավորելով ստվերային տնտեսությունն ու նպաստելով բևեռացման սրմանը:

Անցման շրջանումի տնտեսական և հասարակական-քաղաքական վերափոխումների բարդ ու հակասական պայմաններում, անշուշտ, շատ մեծ է պետության դերը: Անկախացումից հետո Հայաստանի պետական այրերը, որոնց մեջ քիչ չէին պատահական մարդիկ, փորձում էին ընդօրինակել եվրոպական զարգացած երկրների պետական մեքենայի կառուցվածքն ու գործելակերպը՝ մոռանալով, որ այնտեղ դարերի ընթացքում են ձևավորվել ամուր տնտեսավարող շուկան, իրավական դաշտը և այլն: Այդպիսի ձեռնարկումներն անտեսում էին մեր երկրի կոնկրետ պայմանները և լավագույն դեպքում բավարարվում տնտեսության ու հասարակական կյանքի կարգավորման մասին ոչինչ չասող, համընդհանուր օրենքների ընդունմամբ, որոնց կենսագործման մեխանիզմներն անգամ չէին մշակվում: Դեմոկրատիան, շուկայական հարաբերությունները ամենաթողություն չեն: Համատարած թալանի վերածված սեփականաշնորհումը, փողոցային բազարի վերածած շուկայական հարաբերությունները չէին կարող քայքայիչ և ավերիչ հետևանքներ չունենալ: Խրախուսելով առևտրական հարաբերությունների ծավալումը՝ պետությունը

հոգ չէր տանում արդյունաբերական արտադրանքի իրացման, արտադրության ընդլայնման և արտասահմանից ներկրվող ժամկետանց ապրանքների սահմանափակման մասին: Ավելին, Հայաստանի շուկաներում մեծ տոկոս էին կազմում արտասահմանից վաճառողներն ու վերավաճառողները այն դեպքում, երբ տարեցտարի աճում էր գործազուրկների բանակը:

Խորհրդային իշխանության տարիներից պետության սոցիալական հզոր քաղաքականության շնորհիվ հասարակության բոլոր խավերի շահերի պաշտպանությունն իրականացվում էր կազմակերպված, որոշակի ծրագրով: Անկախացումից հետո հայտարարելով, որ Հայաստանը սոցիալական պետություն է, չմշակվեց հասարակության բոլոր շերտերի շահերը հաշվի առնող սոցիալական ամբողջական քաղաքականություն: Այս բնագավառում ևս չգործարկվեցին հասարակության հատկապես անաշխատունակ և սակավագոր խավերի շահերը պաշտպանելու մեխանիզմներ: Իրականացվող սոցիալական բարեփոխումները չեն նպաստում բնակչության հիմնական կենսախնդիրների լուծմանը: Հայաստանի իշխանությունների կողմից աշխատանքային պայմանագրերի կարգավորման և գործատուի ու վարձու աշխատողների հարաբերությունների վերահսկման ուղղությամբ գրեթե ոչինչ չի արվել: Այս ամենը մեծապես նպաստում է գործազուրկների ավելացմանը: Փաստորեն չի ձևավորվել իրական աշխատանքային շուկա: Չեն մշակվել զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրեր, չկա աշխատուժի շարժման մասին հատուկ տեղեկատվություն, նոր աշխատատեղերի ստեղծումը մնացել է լոկ թղթի վրա: Պետությունը փաստորեն չի կարողացել ծրագրավորված քաղաքականությամբ մեղմացնել հասարակության բևեռացումը, կրճատել հարուստների և աղքատների եկամուտների տարբերությունը: Առնվազն տարօրինակ է, որ ծայրահեղ աղքատների խմբի մեջ փախստականներից ու գործազուրկներից բացի մտնում են նաև բյուջետային հիմնարկներից աշխատավարձ ստացողներն ու թոշակառուները: Ո՛ր մնաց պետության սոցիալական քաղաքականությունը: Պետության անճարակության հետևանքներից է, որ 1990-2001 թթ. Հայաստանից հեռացել են 1,3 մլն մարդ: Իշխանությունները չեն գիտակցում զանգվածային արտագաղթի ժողովրդագրական հետևանքները, որն իր հերթին բացասաբար է անդրադառնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Անկախությունից հետո, հավանաբար, սոցիալ-տնտեսական

ճգնաժամը քայքայիչ ազդեցություն ունեցավ նաև առողջապահական, գիտակրթական բնագավառներում: Պետական հատկացումների տարեցտարի նվազումը, վճարովի սպասարկումները հասարակության աղքատ մեծամասնությանը զրկեցին այդ բնագավառներից օգտվելու հնարավորությունից: Դա իր բացասական ազդեցությունն ունեցավ գիտության, գիտակրթական հիմնարկների գործունեության վրա:

Հայաստանն իր գիտական ներուժով և գիության զարգացման մակարդակով ԽՍՀՄ համակարգում միշտ էլ առաջնակարգ տեղ է զբաղեցրել: Հայ գիտնականների շուրջ 22 հազարանոց բանակը լայն հեղինակություն էր վայելում շատ երկրներում: Սակայն անկախացումից հետո տնտեսական ծանր վիճակը, գիտական կապերի խզումը կազմալուծեցին գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հիմքերը: Փլուզվեցին ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները: Հայաստանը չի կարող զբաղվել այնպիսի գիտական հարցերի լուծմամբ, որոնք այլևս պատվիրատու չունեն: Արդյունքում մոտ 3,8 անգամ կրճատվեց գիտական աշխատողների քանակը՝ հասնելով վեց հազարի: Հայտնվելով համատարած ճգնաժամային վիճակում՝ իշխանությունները թերագնահատեցին գիտության դերը, չհասկացան, որ այն ազգային հարստություն է և չկարողացան նպաստավոր պայմաններ ստեղծել գիտական հետազոտություններ կատարելու համար: Աշխատողներին վճարվող չնչին աշխատավարձը շատերին հարկադրում էր հեռանալ այդ բնագավառից կամ մեկնել այլ երկրներ: Միայն 1990-ական թվականների վերջերին որոշ փորձեր արվեցին գիտության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ՝ լայնորեն օգտագործելով արտասահմանյան դրամաշնորհները, տարբեր հիմնադրամներից ստացվող միջոցները: Ընդլայնվել է կապը սփյուռքի գիտնականների հետ:

Գիտական կադրերի պատրաստման հիմնական հաստատությունները բուհերն են, որտեղ նույնպես անկախության տարիներին վերակառուցման բազում փորձեր կատարվեցին: Անտեսելով տասնամյակների հարուստ ու դրական փորձը՝ սկսվեցին բուհերի այնպիսի փոփոխություններ, որպեսզի դրանք մեխանիկորեն հարմարեցվեն արտասահմանյան չափանիշներին: Բարձրագույն կրթության պայմաններում մի քանի տասնյակ մասնավոր բուհեր ու քոլեջներ բացվեցին, որոնց կրթական մակարդակը շատ հեռու է բավարար լինելուց:

Դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու և աշխատանքների բարելավմանն օժանդակելու առաջին քայլերն են կատարվում: Շուրջ տասը տարի նպատակասլաց գաղափարախոսությունից զուրկ մշակութային կյանքը կատարյալ ճգնաժամ ապրեց: Միայն 2000 թվականին մշակվեց պետական հայեցակարգ, որով նախատեսվում է պահպանել մշակութային ժառանգությունը և աջակցել գեղարվեստական ստեղծագործությունների զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության ավելի քան տասնամյա ուսումնասիրության փորձը ցույց է տալիս, որ անցման շրջանի դժվարությունները կարող էին այդքան խորն ու ավերիչ չլինել, եթե իշխանությունները վարեին գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական քաղաքականություն հաշվի առնելով հանրապետության առանձնահատուկ պայմանները: Անշուշտ, կային նաև պատճառներ՝ երկրաշարժը, Արցախի ազատագրական պատերազմը, շրջափակումը և այլն: Սակայն հանրապետության ղեկավարությունը չկարողացավ ավելի ճկուն ու նուրբ քաղաքականությամբ մեղմացնել այդ դժվարությունները: Այդ ամենով հանդերձ տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանունակության ամրապնդումը հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառների ձեռքբերումները վկայում են անկախության ուղին որդեգրած ժողովրդի անսպառ հնարավորությունների մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ

Ա. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№ 1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼԴԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ
ՍՈՎԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՏԱՇՐՋԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԼԴԻՄԸ ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԿԱԶՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի
ԿԱԶՄ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 փետրվարի, 1988, Ստեփանակերտ

Լսելով ու քննարկելով ժողովրդական դեպուտատների ԼԴԻՄ սովետի դեպուտատների ելույթները «ԼԴԻՄ-ը Աղրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու համար Աղրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին», ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի XX գումարման մարզային սովետի արտահերթ նստաշրջանը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդառաջելով ԼԴԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Աղրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղծերին և լուծել ԼԴԻՄ-ը Աղրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն սովետի առջև՝ ԼԴԻՄ-ը Աղրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը:

Սովետական Ղարաբաղ, 21 փետրվարի, 1988 թ.

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի
ԿԱԶՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԱԶՄԻ ՄԵՋ ԱՆՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ
ԱՌՋԵՎ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ՆՏԱՇՐՋԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը նշում է, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցը, ինչպես և ազգամիջյան հարաբերությունների շատ այլ չլուծված պրոբլեմներ գտնվում են ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի ուշադրության կենտրոնում, որի վկայությունն է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով համակված դիմումը Աղրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին: Այդ դիմումը երախտագիտությամբ և հանուն սովետական ժողովուրդների բարեկամության ամրապնդման մեծ պատասխանատվության զգացումով ընդունվեց սովետական Հայաստանի հասարակայնության, բոլոր աշխատավորների կողմից:

ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշմամբ Կենտկոմի քարտուղարությանը հանձնարարված է կազմակերպել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կուտակված պրոբլեմների, նրա շուրջը ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների խոր ու համակողմանի ուսումնասիրությունը, համապատասխան առաջարկությունների մշակումը և ըստ դրանց պատրաստության աստիճանի ներկայացնել ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ կառավարության քննարկմանը: Լեռնային Ղարաբաղի պրոբլեմների, մարզի աշխատավորների կարիքների նկատմամբ մեծ ուշադրության վկայություն է հանդիսանում նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը:

Հանրապետության Գերագույն սովետը միահամուռ պաշտ-

պանում է համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսին ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, որոնցում է նշվում է, որ քաղաքական սիստեմի վերակառուցման շրջանակներում անհրաժեշտ է քննարկել և հասունացած միջոցներ ձեռնարկել սովետական ֆեդերացիայի հետագա զարգացման ուղղությամբ, պահանջվում է մշտական ուշադրություն ազգամիջյան հարաբերությունների հարցերին, յուրաքանչյուր ազգի և ազգության զարգացմանը:

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ՍՄՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ՍՄՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, դեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՄՀՄ սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը Հայկական ՍՄՀ կազմի մեջ մտնելուն:

2. Խնդրել ՍՄՀՄ Գերագույն սովետին՝ քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՄՀ-ի կազմից Հայկական ՍՄՀ կազմի մեջ անցնելու հարցը:

3. Հայկական ՍՄՀ Գերագույն սովետը, դիմելով Ադրբեջանական ՍՄՀ Գերագույն սովետին, հույս է հայտնում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջև եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները և այն ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից:

Հայկական ՍՄՀ Գերագույն սովետի
նախագահության նախագահ՝ **Հ. ՈՍԿԱՆՅԱՆ**

Հայկական ՍՄՀ Գերագույն սովետի
նախագահության քարտուղար՝ **Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

15 հունիսի 1988 թվականի, քաղ. երևան
Սովետական Հայաստան, 16 հունիսի, 1988 թ.:

**ԼՂԻՄ ԱԶԳԱԲԵՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՀԱՍԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

16 օգոստոսի, 1989

Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը նշում է, որ խորհրդային ֆեդերացիայի հետագա զարգացման միջոցառումների հետևողական իրացումը, տեղական խորհուրդների իրական իրավունքների ընդլայնումը, իսկական ժողովրդապետության հաստատումը, հասարակական կյանքի դեմոկրատացումը կնպաստեն Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի լուծմանը, ռեզիդնում կվերացնեն ազգամիջյան լարվածությունը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ հանձնարարված է ամենուր՝ երկրամասերում և մարզերում անցկացնել արտահերթ նստաշրջաններ, քննարկել ռեզիդնում իրավիճակը և հասարակական-մասսայական շարժումների հետ համատեղ որոնել ու մշակել գոյություն ունեցող դժվարությունները հաղթահարելու ուղիներն ու ձևերը:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը զրկված է այդ հնարավորություններից, քանի որ անօրեն կերպով դադարեցված է ժողդեպուտատների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեությունը: Հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը անկենսունակ է գտնվել: ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեն՝ իրավական անորաշ կարգավիճակով, զրկվել է բնակչության վստահությունից և ի վիճակի չէ կառավարել մարզը: Իրավիճակը ԼՂԻՄ-ում ծայրահեղորեն բարդացել է, սակայն իշխանության կենտրոնական մարմինների կողմից այն արժանի գնահատականի և պատշաճ վերաբերմունքի չի արժանանում: Ահա այս ամենից ելնելով էլ, համագումարը, մինչև կառավարման որակապես նոր, սահմանադրական ձևի վերականգնումը, արձանագրում է Ազգային խորհրդի մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը:

Համագումարի պատգամավորները ափսոսանք են հայտնում, որ ադրբեջանական կողմը, հրաժարվելով համագումարին մասնակցելուց, չի օգտագործել փոխադարձ մերձեցման, երկխոսության, հասունացած հարցերը համատեղ, պառլամենտական ուղիներով

լուծելու իրական հնարավորությունը: Այնուհանդերձ, համագումարը համոզված է, որ Ազգային խորհրդի ստեղծումը թույլ կտա կայունացնել իրավիճակը, վերականգնել աշխատանքային ռիթմը, բարիդրացիական հարաբերություններ հաստատել ռեգիոնում ապրող բոլոր ազգությունների և ժողովուրդների ներկայացուցիչների միջև: Ընդհանրացնելով տեղական խորհուրդների, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների անցած նստաշրջանների ու պլենումների, աշխատավորական կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների ժողովների նյութերը, շարունակելով այն ամենը վճռականորեն հաղթահարելու ուղիները, ինչը սասանում է վերակառուցման հանդեպ մարդկանց հավատը, Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը, հենվելով ԽՍՀՄ սահմանադրության, համամիութենական 19-րդ կուսկոնֆերանսի և ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի՝ հասարակության հետագա ղեմկրատացման և ժողովրդապետության սկզբունքն ամրապնդելու հիմնադրյալների վրա, ՈՐՈՇՈՒՄ է:

1. Ելնելով բնակչության կամքից, որ արտացոլված է ժողովրդական դեպուտատների շրջանային և քաղաքային խորհուրդների, կուսակցության շրջանային ու քաղաքային կոմիտեների, արհմիութենական, կոմերիտական և հասարակական կազմակերպությունների շրջադրվածների պլենումների, աշխատավորական կոլեկտիվների ռեգիոնում դրությունը կայունացնելու գյուղական լիազորների ժողովների որոշումներում, մինչև ժողովրդական դեպուտատների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը, համագումարն ընտրում է Ազգային խորհուրդ և ժողովրդի անունից նրան օժտում համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում մարզի կյանքի բոլոր ոլորտների ղեկավարման լիազորություններով:

Ազգային խորհուրդը ժողովրդական ինքնակառավարման ղեմկրատական մարմին է՝ ծնված վերակառուցմամբ ու ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ, կոչված է «ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» քաղաքական հիմնականային սկզբունքը գործնականում հանգեցնել իրական բովանդակության:

2. Ազգային խորհուրդը ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար իր կազմից ընտրում է նախագահություն: Ազգային խորհրդի և նրա նախագահության առաջնահերթ նպատակը իրավիճակի կա-

յունացումն է, ազգամիջյան ընդհարումների կասեցումը, վերակառուցման ընթացքին ակտիվ աջակցումը, հրապարակայնության, դեմոկրատիայի համակողմանի զարգացումը, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը:

Ազգային խորհուրդն ու նրա նախագահությունը կոմունիստների և անկուսակցականների ժողովրդական միաձույլ մարմինն են: Ճանաչելով ԽՍՀՄ ժրագիրն ու կանոնադրությունը և գործելով խորհրդային օրենքների շրջանակներում, իր գիծը հանուն ժողովրդի շահերի անց է կացնում ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների, կուսակցական կոմիտեների, արհմիության, կոմերիտմիության, աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների, հասարակական կազմակերպությունների միջոցով: Ազգային խորհրդի և նրա նախագահության ծառայական պարտականություններն ու իրավասությունը որոշված են ներկա համագումարի կողմից հաստատված կարգալուծությամբ:

3. Համագումարը հայտարարում է ԼՂԻՄ-ը հետևողականորեն Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորվելուն հասնելու իր վճռականության մասին:

4. Համագումարը խստագույն կերպով մերժում է մարզի ներքին գործերին Ադրբեջանի կառավարության կողմից միջամտություն ցույց տալու յուրաքանչյուր փորձ և ինքնավար մարզի հանդեպ անընդունելի է համարում թելադրանքի քաղաքականությունը:

5. Համագումարի պատգամավորները ողջունում են ժողովրդական դեպուտատների Շահումյանի (գյուղական) շրջխորհրդի նստաշրջանի՝ շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորվելու մասին որոշումը, և հավաստում են այդ հարցի լուծմանը աջակցելու պատրաստականությունը:

6. Համագումարը մարզի բնակչությանը կոչ է անում դադարեցնել գործադուլները և Ազգային խորհրդին պարտավորեցնում է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել մարզի ամբողջ տարածքում աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու համար:

7. Համագումարը հանձնարարում է Ազգային խորհրդին՝ առաջադրված խնդիրների իրականացման համար մշակել համապատասխան ծրագիր:

8. Որպես պետական իշխանության խորհրդանիշ, մարզի տարածքում ընդունել ԽՍՀՄ պետական դրոշը:

խորհրդային Հայաստան, 17 օգոստոսի, 1989 թ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ԵՎ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արծագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր-ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը որպես մարզի ներկայումս գործող միակ օրինական իշխանություն:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքները:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով)՝ Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարա-

բաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլում, միասնական պետական-քաղաքական համակարգում:

Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

1 դեկտեմբերի 1989 թվականի, քաղ. երևան

խորհրդային Հայաստան, 3 դեկտեմբերի, 1989 թ.:

Հ Ո Չ Ա Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղծերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

Հ Ո Չ Ա Կ Ո Ւ Մ Է

ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻՋԲԸ

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:
Հայաստանի Հանրապետությունը ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:
2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:
Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:
3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջակա-

նորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա:

Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները

նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է՝

խոսքի, մամուլի, խղճի ազատություն.

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում.

բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի գործառնությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

23 օգոստոսի, 1990 թվականի, քաղ. երևան
Հայաստանի Հանրապետություն, 23 օգոստոսի, 1991 թ.:

№ 6

ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՊԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՊԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՇԱՐՈՒՄՅԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման հռչակագրի ընդունման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների կազմավորման մասին:

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտահայտելով ժողովրդի կամքը, որը վավերացված է փաստորեն անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1991 թթ. որոշումներում, նրա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումը, ղեկավարվելով քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտների զարգացման հարցում ամբողջ բնակչության շահերով, հայ ժողովրդի միասնության ձգտումը համարելով բնական և օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ՈՐՈՇԵՑ.

1. Հռչակագիր ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու մասին:

2. ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը և նրա գործադիր կոմիտեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին համարել մինչև համաժողովրդական ընտրությունների անցակցումը և իշխանության ու կառավարման նոր հանրապետական մարմինների կազմավորումը:

3. Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին հանձնարարել՝ լայն հասարակայնության ներգրավմամբ նախապատրաստել և մարզային խորհրդի քննարկմանը ներկայացնել ԼՂՀ պետական իշխանության կառավարման մարմինների կա-

ռուցվածքի ու պարտականությունների մասին կանոնադրություն:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումս գործող մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին

Հ Ո Չ Ա Կ Ա Գ Ի Ր

Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ո Չ Ա Կ Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ՝

արտահայտելով ժողովրդի կամքը, որը վավերացված է փաստորեն անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1991 թթ. որոշումներում, նրա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումը,

արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման» հռչակումը,

հաշվի առնելով, որ Ադրբեջանում վարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը հանրապետությունում ստեղծել է հայ ժողովրդի հանդեպ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ, որը հանգեցրել է զինված ընդհարումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գյուղերի բնակիչների զանգվածային տեղահանության,

հիմնվելով ԽՍՀՄ Միության գործող օրենսդրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և համահավաք ապրող ազգային խմբերին՝ իրավունք են տալիս ինքնուրույնաբար լուծելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում,

նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը նույնպես բռնությամբ անջատվել է Լեռնային Ղարաբաղից և հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնական և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

ձգտելով հայ և ադրբեջանական ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունները վերականգնել միմյանց իրավունքների փոխադարձ հարգման հիման վրա,

նկատի ունենալով երկրի իրադրության բարդությունն ու հակասականությունը, ապագա միության, իշխանության ու կառավարման միութենական կառուցվածքների ճակատագրի անորոշությունը,

հարգելով ու հետևելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների միջազգային պակտի, քաղաքական, քաղաքական ու մշակութային իրավունքների միջազգային պակտի սկզբունքներին և հույս ունենալով միջազգային հանրության ըմբռնմանն ու աջակցությանը:

Հ Ո Չ Ա Կ Ո Ւ Մ Ե Ն .

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և դրան կից Շահումյանի շրջանների սահմաններում (համառոտ՝ ԼՂՀ):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը օգտվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ հանրապետություններին տրված լիազորություններից և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական կոնսուլտացիաների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև՝ ներկայումս գործող մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ անցկացված ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների անհապաղ նստաշրջան

Հայաստանի Հանրապետություն, 3 սեպտեմբերի, 1991 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԿԵԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
1991 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԿԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Ղ Ո Ր Գ Ո Ւ Մ Ը

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991 թ. մարտի 1-ի որոշման համաձայն, 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե հետևյալ հարցադրմամբ. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:

«Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը, ամփոփելով հանրաքվեի շրջանային և քաղաքային հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների արդյունքները

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Է .

1. Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը՝ 2163967 մարդ:
2. Քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը՝ 2056758 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95,5 տոկոսը:
3. ԱՅՈՒ քվեարկած քաղաքացիների թիվը՝ 2042627 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 94,39 տոկոսը:
4. ՈՉ քվեարկած քաղաքացիների թիվը՝ 10002 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,46 տոկոսը:
5. Անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը՝ 4129 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,19 տոկոսը:

Հանրաքվեի հրապարակայնությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի, հասարակա-

կան-քաղաքական կազմակերպությունների կողմից հրավիրվել են դիտորդներ: Գրանցվել են 117 դիտորդ՝ 25 երկրներից: Հանրաքվեի անցկացման ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝ **Բ. ԱՐԱՐՔՅԱՆ**

23 սեպտեմբերի, 1991 թ.

Հայաստանի Հանրապետություն, 24 սեպտեմբերի, 1991 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հավատարիմ մնալով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ունենալով 1991 թվականի սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ՝ **ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝ **ԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ**

23 սեպտեմբերի, 1991 թվականի, քաղ. երևան

Հայաստանի Հանրապետություն, 24 սեպտեմբերի, 1991 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ-Ի ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 1-ին հոդվածի վրա, Հայկական հորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հայկական հորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:

2. Ներկայիս գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:

3. Սույն օրենքը կիրառել ընդունման պահից:

Հայկական ԽՍՀ Գերագույն
խորհրդի նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն
խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

24 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երևան
հ. ն. -0075-1

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
Երևան, 1995 թ., էջ 11:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ
ՄԱՍԻՆ

Հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 1-ին հոդվածի վրա, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հայաստանի Հանրապետության պետական դրոշը եռագույն

է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն (երեք հավասար շերտերով):
Դրոշի լայնության և երկարության հարաբերությունն է 1:2:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրության (հիմնական օրենքի) և օրենսդրության մեջ կատարել սույն օրենքից բխող համապատասխան փոփոխություններ:

3. Սույն օրենքը կիրառել ընդունման պահից:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

24 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երևան
հ. ն. -0075-1

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
Երևան, 1995 թ., էջ 11:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 1920 թվականի հուլիսին հաստատված զինանշանը ընդունել որպես Հայաստանի Հանրապետության պետական զինանշան:

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևան
19 ապրիլի 1992 թ.

Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.) էջ 343:

**Բ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

№ 9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՋԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնակատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության նախագահը ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության կարգը որոշվում է «Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության մասին» օրենքով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության նախագահ կարող է ընտրվել 35 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող և վերջին 10 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես կամ առավելապես բնակվող Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի:

Մինչև անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում: Մեկ անգամից ավելի նախագահ չի կարող ընտրվել այն անձը, որը ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում առնվազն երկու և կես տարի զբաղեցրել է նախագահի պաշտոնը:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններն անց են կացվում 5 տարին մեկ անգամ, հոկտեմբեր ամսվա երրորդ չորեքշաբթի օրը:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները հետաձգվում են կամ նշանակվում են նոր ընտրություններ, եթե մինչև քվեարկության օրը նախագահի թեկնածուներից

որևէ մեկը մահացել է կամ քվեարկության համար առաջացել են անհաղթահարելի խոչընդոտներ: Խոչընդոտները որպես անհաղթահարելի է ճանաչում Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանը: Նման դեպքերում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ երկու ամիս հետո անց են կացվում ընտրություններ, որոնց կարող են մասնակցել նաև նոր թեկնածուներ:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահն իր պաշտոնը ստանձնում է նույն տարվա դեկտեմբեր ամսվա երկրորդ չորեքշաբթի օրը:

Եթե մինչև այդ տարվա նոյեմբեր ամսվա վերջին չորեքշաբթի օրը նախագահը չի ընտրվում, ապա այդ ժամկետից հետո ընտրված նախագահն իր պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո քսաներորդ օրը: Ընդ որում, պաշտոնի փաստացի ստանձնման ժամկետից անկախ, նորընտիր նախագահի պաշտոնավարման ժամկետը հաշվվում է դեկտեմբեր ամսվա երկրորդ չորեքշաբթի օրվանից: Նշված դեպքում դեկտեմբեր ամսվա երկրորդ չորեքշաբթի օրվանից մինչև հանրապետության նոր նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը նախագահի պարտականությունները կատարում է Գերագույն խորհրդի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հատուկ նիստում տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ լինել հանրապետության սահմանադրության ու օրենքների պաշտպանության, անկախության ու ժողովրդավարության, քաղաքացիների անվտանգության, իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխավորը»:

Հոդված 8. Հայաստանի Հանրապետության նախագահը

1) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում և միջազգային հարաբերություններում:

2) ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք:

3) երկշաբաթյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության օրենքները:

Այդ ժամկետում Հայաստանի Հանրապետության նախագահը կարող է չստորագրել օրինագիծը և իր առարկություններով հանդերձ վերադարձնել Հայաստանի Հանրապետության Գերագույն

խորհուրդ՝ կրկնական քննարկման և քվեարկության համար: Եթե Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը լիազորությունները ճանաչված պատգամավորների ծայների պարզ մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդով Հայաստանի Հանրապետության նախագահի առարկություններին համապատասխան փոփոխություններ է կատարում օրինագծում կամ նիստին մասնակցող պատգամավորների ծայների պարզ մեծամասնությամբ վերահաստատում է իր ընդունած օրինագիծը, ապա Հայաստանի Հանրապետության նախագահը օրինագիծը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարկում է այն:

Եթե երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության նախագահը չի ստորագրում կամ հետ է վերադարձնում օրինագիծը, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ կետի երկրորդ մասով նախատեսված դեպքերում հնգօրյա ժամկետում չի ստորագրում օրինագիծը, ապա այն հրապարակվում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի ստորագրությամբ և ստանում օրենքի ուժ:

4) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին ներկայացնում է ամենամյա հաղորդումներ հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքների և որոշումների կատարման ընթացքի մասին. կարող է ուղերձներով դիմել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ հանդես է գալիս Գերագույն խորհրդում արտահերթ հաղորդմամբ.

5) կարող է հրավիրել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նիստ կամ նստաշրջան.

6) նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահին, նրա համաձայնությամբ նշանակում կամ ազատում է կառավարության անդամներին, ընդունում է կառավարության հրաժարականը՝ դրանց մասին եռօրյա ժամկետում իրազեկ պահելով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը լիազորությունները ճանաչած պատգամավորների ծայների պարզ մեծա-

մասնությամբ, բայց ոչ պակաս, քան պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեկ երրորդի մեծամասնությամբ հանրապետության նախագահին կարող է առաջարկել վերանայելու կառավարության, նրա նախագահի կամ որևէ անդամի նշանակման հարցը:

Հայաստանի Հանրապետության նախագահը տասնհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին իրազեկ է պահում արված առաջարկությունն ընդունելու կամ որոշումը կրկին պաշտպանելու մասին: Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից իր ընդունած որոշումը պաշտպանելու դեպքում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ծայների երկու երրորդով դադարեցնել նշված անձանց լիազորությունները: Հանրապետության նախագահը պարտավոր է այդ անձանց ազատել զբաղեցրած պաշտոնից.

7) ղեկավարում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը, կարող է նախագահել կառավարության նիստերին.

8) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին թեկնածուներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամների, գերագույն դատարանի նախագահի, նրա տեղակալների, գերագույն դատարանի անդամների, գլխավոր պետական արքիտրի պաշտոններում ընտրվելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնում նշանակելու համար.

9) իրականացնում է արտաքին հարաբերությունների ընդհանուր ղեկավարումը, կնքում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և օրենքով նախատեսված դեպքերում դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի վավերացմանը.

10) նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում ու միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին.

11) ընդունում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը.

12) գլխավորում է Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդը հանդիսանում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանա-

տարական կազմը.

13) անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների պաշտպանության անվտանգության ապահովման համար.

14) միջազգային իրավական նորմերին համապատասխան իրականացնում է արտերկրի հայության շահերի պաշտպանությունը.

15) հանրապետության վրա զինված հարձակման դեպքում որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, իսկ արտաքին վտանգի առկայության դեպքում հայտարարում է ռազմական դրություն հանրապետության ողջ տարածքում կամ առանձին շրջաններում: Նշված դեպքերում կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

Լայնածավալ աղետի դեպքում կամ այլ արտակարգ իրավիճակներում, ելնելով վիճակի արագ կարգավորման և օրինականության վերականգնման անհրաժեշտությունից, կարող է հայտարարել մինչև երեք ամիս տևողությամբ արտակարգ դրություն, որի ժամկետը երկարացվում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի համաձայնությամբ:

Ձինված ուժերի օգտագործման, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումները ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում ներկայացնում է Գերագույն խորհրդի հաստատմանը:

Պատերազմական, ռազմական և արտակարգ դրության կարգավիճակը սահմանվում է օրենքով.

16) ընդունում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մեջ, լուծում ապաստան տալու հարցը, ներում է շնորհում Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտված քաղաքացիներին.

17) վերացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության առանձին նախարարությունների, Հայաստանի Հանրապետության պետական կոմիտեների, մյուս գերատեսչությունների, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների ընդունած որոշումները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներին և իր հրամանագրերին.

18) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքա-

նշաններով և մեդալներով, շնորհում պատվավոր կոչումներ, բարձրագույն զինվորական կոչումներ ու դիվանագիտական դասեր.

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Յոդված 9. Հայաստանի Հանրապետության նախագահը Հայաստանի Հանրապետության սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենքների և Գերագույն խորհրդի որոշումների հիման վրա իր լիազորությունների սահմաններում հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ:

Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերը պարտադիր են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերը չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներին:

Նախագահի այն հրամանագրերը և կարգադրությունները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին, սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա վերացվում են Գերագույն խորհրդի կողմից:....

... Յոդված 11. Հայաստանի Հանրապետության նախագահը և փոխնախագահը կարող են պաշտոնանկ արվել, եթե մեղավոր են ճանաչվել հայրենիքին դավաճանելու, կաշառակերության կամ այլ հանցագործությունների կատարման մեջ:

Հայաստանի Հանրապետության նախագահին և փոխնախագահին պաշտոնանկ անելու հարցը նախապես քննարկում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը և լիազորությունները ճանաչված պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեկ երրորդի մեծամասնությամբ որոշում հարցը հանձնել Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանին՝ եզրակացություն տալու համար:

Հայաստանի Հանրապետության նախագահին և փոխնախագահին պաշտոնանկ անելու որոշումը կայացվում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով, Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա:

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության նախագահի և փոխնախագահի անձը անձեռնմխելի է և պաշտպանվում է օրենքով:

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության նախագահի և փոխնախագահի սպասարկման և պահպանման կարգը, աշխատավարձի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը:

Հոդված 14. Հայաստանի Հանրապետության նախագահը և փոխնախագահը չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության որևէ խորհրդի պատգամավոր:

Հայաստանի Հանրապետության նախագահը և փոխնախագահը իրենց պաշտոնավարության ընթացքում չեն կարող լինել որևէ հասարակական-քաղաքական կազմակերպության ղեկավար մարմնի անդամ և զբաղեցնել այլ պաշտոններ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

1 օգոստոսի 1991 թվականի, քաղ. երևան

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 158-162:*

№ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Զ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության նախագահն ու փոխնախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, պետական արբիտրները միաժամանակ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորներ:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության նորընտիր Գերագույն խորհուրդը գումարվում է նախորդ գումարման Գերագույն խորհրդի նախագահության կողմից ոչ ուշ, քան ընտրություններից երկու ամիս անց:

Հայաստանի Հանրապետության նոր գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն իրավագործ է սկսելու իր աշխատանքները, եթե ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

Հայաստանի Հանրապետության նոր գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը բացում և մինչև Գերագույն խորհրդի նախագահի ընտրվելը վարում է Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների կենտրոնական հանձնաժողովի նախագահը, իսկ այնուհետև՝ Գերագույն խորհրդի նախագահը կամ առաջին տեղակալը, կամ քարտուղարը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն իր կողմից ընտրվող մանդատային հանձնաժողովի ներկայացմամբ որոշում է ընդունում պատգամավորների ընտրությունները ճանաչելու մասին, իսկ ընտրությունների մասին օրենսդրության խախտման դեպքում՝ պատգամավորների ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է նստաշրջանների, նիստերի, նախագահության, մշտական և այլ հանձնաժողովների միջոցով:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան գումարվում է կամ Գերագույն խորհրդի պատգամավորների մեկ երրորդի, կամ Գերագույն խորհրդի նա-

խագահի պահանջով, կամ Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից:

Յոդված 7. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանները գումարվում են՝ զարմանալին նստաշրջանը – փետրվարի սկզբից մինչև հուլիսի վերջը, աշնանալին նստաշրջանը – սեպտեմբերի սկզբից մինչև դեկտեմբերի վերջը:

Յոդված 8. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում օրենսդրության նախաձեռնության իրավունքը պատկանում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը, Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովներին, Գերագույն խորհրդի պատգամավորներին, պատգամավորական խմբերին և կուսակցական խմբակցություններին, Հայաստանի Հանրապետության նախագահին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին, Գերագույն դատարանին, գլխավոր դատախազին, գլխավոր պետական արքիտրին:

Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունները:

Յոդված 9. Հայաստանի Հանրապետության օրենքները և Գերագույն խորհրդի որոշումներն ընդունվում են Գերագույն խորհրդի նիստերում:

Օրենքների նախագծերը և հանրապետության պետական կյանքի մյուս առավել կարևոր հարցերը Գերագույն խորհրդի կամ նրա նախագահության որոշմամբ կարող են դրվել ժողովրդական քննարկման, հրապարակվել պաշտոնական մամուլում:

Յոդված 10. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը՝

1) ընդունում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, օրենքները և նրանց մեջ կատարում փոփոխություններ:

2) իրականացնում է ազգային անվտանգության ապահովման, սեփականության հարաբերությունների, ժողովրդական տնտեսության և սոցիալ-մշակութային ոլորտի կառավարման կազմակերպման, բյուջետաֆինանսական համակարգի, աշխատանքի վարձատրության, գնագոյացման և հարկման, շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման, քաղաքացիների սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման և այլ հարաբերությունների օրենսդրական կարգավորումը:

3) սահմանում է պետական իշխանության, պետական կառավարման և դատական իշխանության մարմինների իրավասությունը, կազմակերպման և գործունեության օրենսդրական կարգը:

4) որոշում է ազգային դրամանիշի կիրառման և էմիսիայի իրականացման կարգը:

5) հաստատում է Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման հանրապետական ծրագրերը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, վերահսկողություն է իրականացնում իր կողմից հաստատված ծրագրերի և բյուջեի կատարման ընթացքի նկատմամբ, հաստատում է դրանց կատարման մասին հաշվետվությունները և իր կողմից հաստատված ծրագրերի և բյուջեի մեջ կատարում փոփոխություններ:

6) սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային կառուցվածքին վերաբերող հարցերի լուծման կարգը, որոշում և փոխում վարչատարածքային միավորների սահմանները, որոշում դրանց կարգավիճակը:

7) մեկնաբանում է Հայաստանի Հանրապետության օրենքները:

8) որոշում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը:

9) օրենքով սահմանված դեպքերում վավերացնում և չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության նախագահի և Հայաստանի Հանրապետության կառավարության կնքած միջազգային պայմանագրերը, վերահսկողություն է իրականացնում օտարերկրյա պետություններին պետական փոխառությունների, տնտեսական և այլ օգնություն տրամադրելու, ինչպես նաև օտարերկրյա պետական փոխառությունների և վարկերի վերաբերյալ համաձայնագրերի կնքման նկատմամբ:

10) որոշումներ է ընդունում հանրաքվե անցկացնելու մասին:

11) նշանակում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի և տեղական խորհուրդների պատգամավորների ընտրությունները:

12) հաստատում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների, Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների և Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովների կազմը:

13) ընտրում է Հայաստանի Հանրապետության Գերագույն

խորհրդի նախագահ.

14) ընտրում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ, տեղակալ և Գերագույն խորհրդի քարտուղար.

15) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների քվից ընտրում է Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովների անդամների և հանձնաժողովների նախագահներ.

16) օրենքով սահմանված դեպքերում հաստատում է Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման բնագավառի հիմնական միջոցառումները.

17) լսում է Հայաստանի Հանրապետության նախագահի ամենամյա հաղորդումները հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի, Հայաստանի Հանրապետության օրենքների և Գերագույն խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին.

18) որոշում է լսել Հայաստանի Հանրապետության նախագահի արտահերթ հաղորդումները.

19) Հայաստանի Հանրապետության նախագահի ներկայացմամբ ընտրում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի անդամներին, Գերագույն դատարանի նախագահին, նրա տեղակալներին և Գերագույն դատարանի անդամներին, գլխավոր պետական արքիտրին, նշանակում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, հաստատում է Գերագույն դատարանի նախագահության կազմը, ընտրում է շրջանային և քաղաքային ժողովրդական դատարանների ժողովրդական դատավորներին, օրենքով սահմանված կարգով լուծում է նշված պաշտոնատար անձանց հետկանչի կամ ազատման հարցը.

20) լսում է իր կողմից կազմվող կամ ընտրվող մարմինների, իր կողմից նշանակվող կամ ընտրվող պաշտոնատար անձանց հաշվետվությունները կամ հաղորդումները.

21) Հայաստանի Հանրապետության նախագահի առաջարկությամբ հաստատում և վերանայում Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը.

22) Հայաստանի Հանրապետության նախագահին առաջարկում

է վերանայել կառավարության, նրա նախագահի կամ որևէ այլ անդամի նշանակման հարցը, օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում նշված պաշտոնատար անձանց լիազորությունները դադարեցնելու մասին.

23) հաստատում է գինված ուժերի օգտագործման, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի որոշումները՝ դրանք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում.

24) Հայաստանի Հանրապետության նախագահին համաձայնություն է տալիս արտակարգ դրության ժամկետը երկարացնելու համար.

25) որոշում է Հայաստանի Հանրապետության տարածքում այլ պետությունների զորքերի տեղաբաշխման հարցը և նրանց կարգավիճակը.

26) որոշումներ է ընդունում ամնիստրիայի մասին.

27) օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների պատասխանատվության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը.

28) լուծում է Գերագույն խորհրդի պատգամավորների քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդության հարցը.

29) օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության նախագահի կամ փոխնախագահի կողմից իրենց լիազորությունները շարունակելու անհնարինության հարցը.

30) օրենքով սահմանված կարգով հարց է բարձրացնում և որոշում կայացնում Հայաստանի Հանրապետության նախագահին կամ փոխնախագահին պաշտոնանկ անելու մասին.

31) դիմում է սահմանադրական դատարանին Հայաստանի Հանրապետության օրենքները և Գերագույն խորհրդի ընդունած այլ ակտերը Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանեցնելու մասին, իսկ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների որոշումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին համապատասխանեցնելու մասին եզրակացություններ ներկայացնելու առաջարկու-

յամբ.

32) Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա վերացնում է Հայաստանի Հանրապետության նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին հակասող հրամանագրերն ու կարգադրությունները.

33) իրավունք ունի վերացնել Գերագույն խորհրդի նախագահության որոշումները.

34) վերացնում է պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը հակասող որոշումները.

35) հիմնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներ, սահմանում Հայաստանի Հանրապետության զինվորական կոչումներ, դիվանագիտական և այլ դասեր, պատվավոր կոչումներ:

Հոդված 11. Պատերազմ հայտարարելու իրավունքը պատկանում է Գերագույն խորհրդին:....

... **Հոդված 22.** Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի և նրա մարմինների գործունեության կարգը սահմանվում է Գերագույն խորհրդի կանոնակարգով և այլ օրենսդրական ակտերով:

**Հայաստանի Հանրապետության
նախագահ՝**

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

19 նոյեմբերի 1991 թվականի,
քաղ. Երևան

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
Երևան, 1995 թ., էջ 189-194:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության կառավարության կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության վարչապետը (կառավարության նախագահը), փոխվարչապետը (կառավարության նախագահի տեղակալը), Հայաստանի Հանրապետության պետական նախարարները, նախարարները, պետական վարչությունների և պետական տեսչության պետերը:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մեջ մտնում են՝

- աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը,
- առողջապահության նախարարությունը,
- առևտրի նախարարությունը,
- արդարադատության նախարարությունը,
- արդյունաբերության նախարարությունը,
- արտաքին գործերի նախարարությունը,
- բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը,
- բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարությունը,
- գյուղատնտեսության նախարարությունը,
- էկոնոմիկայի նախարարությունը,
- էներգետիկայի և վառելիքի նախարարությունը,
- թեթև արդյունաբերության նախարարությունը,
- լուսավորության նախարարությունը,
- կապի նախարարությունը,
- մշակույթի նախարարությունը,
- ներքին գործերի նախարարությունը,
- նյութական ռեսուրսների նախարարությունը,
- շինարարության նախարարությունը,
- պաշտպանության նախարարությունը,

պարենի և մթերուսների նախարարությունը,
տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը,
ֆինանսների նախարարությունը,
ազգային անվտանգության պետական վարչությունը,
արտակարգ իրավիճակների պետական վարչությունը,
ընդերքի պետական վարչությունը
հատուկ ծրագրերի պետական վարչությունը,
հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական վարչությունը,
ճարտարապետության և քաղաքաշինության պետական վարչությունը,
վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչությունը,
հարկային պետական տեսչությունը:

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

4 դեկտեմբերի 1991 թվականի, քաղ. երևան

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 194-195:*

№ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը անկախ ժողովրդավարական պետություն է:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության պետական իշխանության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն՝ հանրաքվեով և ներկայացուցչական մարմինների միջոցով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը իրականացնում է օրենսդիր իշխանությունը և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին օրենքով սահմանված այլ իրավասություններ:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնական անձը Հայաստանի Հանրապետության նախագահն է, որը գլխավորում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում և միջազգային հարաբերություններում:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների համակարգը, իրավասությունների շրջանակը և փոխհարաբերության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման տեղական մարմինների կազմավորման կարգը, իրավասությունները, գործունեության սկզբունքները և փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 8. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունը նրա ժողովրդի սեփականությունն է:

Հայաստանի Հանրապետության սեփականությունն են հանդիսանում նրա տարածքի վրա գտնվող նախկին միութենական և միութենական-հանրապետական ենթակայության գերատեսչությունների բոլոր օբյեկտները:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտայի ֆոնդերի մասնաբաժնի իրավունք, անկախ այն հանգամանքից, թե որ երկրի տարածքում են դրանք գտնվում:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետությունում օրենքով ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը և սեփականության բոլոր ձևերի իրավահավասարությունը:

Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է ազատ ձեռներեցությունը և պայմաններ է ստեղծում նրա զարգացման համար:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետությունը, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և մի-

ջազգային իրավունքի նորմերից, ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելիությունից և դավանանքից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության և հոգատարության ներքո:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մեջ մտնելու և քաղաքացիությունը կորցնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ:

Հոդված 11. Հայաստանի Հանրապետությունում հասարակական-քաղաքական կազմակերպությունները իրավահավասար են մասնակցում պետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին:

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը և ազգային անվտանգության ապահովումը պետության և ժողովրդի հիմնական խնդիրներից մեկն է և դրա իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը կազմակերպում է զինված ուժեր, ազգային անվտանգության մարմիններ և հայտարարում ընդհանուր զինապարտություն:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայելը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պարտքն է:

Հոդված 13. Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքական գործունեության մեջ ղեկավարվում է միջազգային իրավական ակտերով և այլ պետությունների հետ իր փոխհարաբերությունները կարգավորում է միջպետական համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 14. Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ֆինանսավարկային ինքնուրույն քաղաքականություն և այդ կապակցությամբ կազմակերպում է անկախ պետական բանկային և վարկային մարմիններ, հիմնում ազգային դրամ:

Հոդված 15. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառույթունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության, մշակույթի և լրատվության ինքնուրույն համակարգ:

Հոդված 16. Մինչև Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը գործող սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն

օրենքին և «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝ **Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

25 սեպտեմբերի 1991 թվականի, քաղ. երևան

Հ. Լ. 0405-1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ
ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը կիրարկել այն հրապարակելու պահից:

2. Սահմանադրական օրենքի 4 և 5 հոդվածները կիրարկել Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից իր պարտականությունները ստանձնելու պահից:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝ **Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

25 սեպտեմբերի 1991 թվականի, քաղ. երևան

Հ. Լ. 0406-1

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 177-179:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Հայ ժողովուրդը հիմք ընդունելով անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

ԳԼՈՒԽ 1

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Պոզիված 1. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Պոզիված 2. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Պոզիված 3. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Պոզիված 4. Պետությունն ապահովվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան:

Պոզիված 5. Պետական իշխանությունն իրականացվում է սահ-

մանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:

Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Պոզիված 6. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը:

Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը և օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը ուժ չունեն:

Օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չհրապարակված իրավական ակտերը ուժ չունեն:

Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Պոզիված 7. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է բազմակուսակցությունը:

Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ կառուցվածքն ու գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:

Կուսակցությունները ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությանը:

Պոզիված 8. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտա-

գործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, ազատ տնտեսական մրցակցությունը:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքների նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Հոդված 10. Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը:

Հոդված 11. Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, աջակցում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ հորիզոնական հավասար շերտերով:

Հայաստանի Հանրապետության զինանշանն է. կենտրոնում, վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Հայաստանի Հանրապետության օրհներգը «Մեր Հայրենիքն» է:
Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է:

*ՀՀ Սահմանադրություն (հիմնական օրենք),
Երևան, 1995, էջ 3-6:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**Ընդունված է Ազգային ժողովի կողմից
9 դեկտեմբերի 1997 թ.**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ
(1997 թվականի դեկտեմբերի 9-ի խմբագրությամբ)**

**Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Սահմանադրական դատարանի կազմը և
կազմավորման կարգը**

Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից, որից հինգին նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության Նախագահը:

Ազգային ժողովը սահմանադրական դատարանի անդամ է նշանակում Սահմանադրությամբ նախատեսված կարգով:

Սահմանադրական դատարանը համարվում է կազմավորված, եթե նշանակվել է դատարանի կազմի կեսից ավելին:

**Հոդված 2. Սահմանադրական դատարանի նախագահի
նշանակման կարգը**

Ազգային ժողովը, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ, սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:

Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո երեսուցյա ժամկետում Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում հանրապետության նախագահը նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:

Հանրապետության նախագահը սահմանադրական դատարանի նախագահ է նշանակում սահմանադրական դատարանի կազմից:

**Հոդված 3. Սահմանադրական դատարանի անդամին
ներկայացվող պահանջները**

Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 30 տա-

րին լրացած, ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ, պետական մարմիններում կամ գիտական հաստատություններում իրավունքի ասպարեզում աշխատանքային փորձ, բարոյական բարձր հատկանիշներ և տիրապետում է հայերենին:

Սահմանադրական դատարանի անդամը չի կարող զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել Սահմանադրության 100 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի մշակման հեղինակ կամ համահեղինակ: ...

... Հոդված 5. Սահմանադրական դատարանի լիազորությունները

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածին համապատասխան և սույն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը:

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

3) լուծում է հանրաքվեների, Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը:

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները:

5) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

6) եզրակացություն է տալիս Սահմանադրության 55 հոդվածի

13-րդ և 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների մասին:

7) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:

8) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Հոդված 6. Սահմանադրական դատարանի գործունեության հիմնական սկզբունքները

Սահմանադրական դատարանի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ անկախությունը, մրցակցությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

Հոդված 7. Սահմանադրական դատարանի նյութական ապահովության երաշխիքները

Սահմանադրական դատարանի նախագահը սահմանադրական դատարանի ծախսերի նախահաշիվը ներկայացնում է կառավարությանը՝ պետական բյուջեի նախագծում այն ընդգրկելու համար:

Սահմանադրական դատարանի բյուջեն պետական բյուջեի մասն է:

Կառավարությունը սահմանադրական դատարանին՝ նրա բնականոն գործունեության ապահովման համար հատկացնում է առանձին շենք և անհրաժեշտ գույք:

Հոդված 8. Սահմանադրական դատարանի մասին օրենսդրությունը

Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և սույն օրենքով: ...

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

13 հունվարի 1998 թ.

ՀՕ-188

ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.) գիրք Բ, էջ 280-303:

**Գ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

№ 15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը .

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի ներկայացրած Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքներին:

2. Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին, Գերագույն խորհրդի տնտեսական ինքնուրույնության և տնտեսության զարգացման հարցերի հանձնաժողովին՝ սույն հիմունքներից ելնելով, մեկ ամսվա ընթացքում Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման մասին» օրենքի նախագիծը:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

13 փետրվարի 1991 թվականի,
քաղ. Երևան

Հ. Ն.-0256-1

№ 16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ
Հ Ի Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ը**

Սույն հիմունքները ներառնում են Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմնական սկզբունքները, խնդիրներն ու ուղղությունները և հիմք են հանդիսանում սեփականաշնորհմանը վերաբերող օրենքների նախագծերի ու ծրագրերի կազմման համար:

I. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սեփականաշնորհումը՝ Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի փոխանցումն է քաղաքացիներին, նրանց խմբերին, ինչպես նաև ոչ պետական իրավաբանական անձանց՝ վաճառքի, մասնակի փոխհատուցման կամ անհատույց ձևով:

Սեփականաշնորհումը հասարակական տնտեսության մեջ պետական սեփականության դերի արմատական կրճատմանն ուղղված համալիր միջոցառում է:

Պետական ունեցվածքի սեփականաշնորհումը նպատակաուղղված է.

- քաղաքացիների ազատությունների (այդ թվում տնտեսական ազատության) և ձեռնարկչական հնարավորությունների ընդլայնմանը,
- զանգվածային ստեղծագործական ներուժության արթնացմանը,
- շուկայական տնտեսության ձևավորմանը,
- հասարակական տնտեսության արդյունավետության բարձրացմանը:

II. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Սեփականաշնորհումն իրականացվում է աստիճանաբար, ըստ փուլերի:

2. Սեփականաշնորհումն իրականացվում է շուկայական ենթակառուցվածքի ձևավորմանը համընթաց:

3. Սեփականաշնորհումը կատարվում է որոշակի ժողովրդա-

տնտեսական համալիրների շրջանակներում՝ գյուղատնտեսություն և հարակից ճյուղեր, ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններ, շինարարություն և հարակից ճյուղեր, արդյունաբերական ձեռնարկություններ, արտադրական ենթակառուցյի այլ ճյուղեր, սոցիալական ոլորտի ձեռնարկություններ և հիմնարկներ:

4. Սեփականաշնորհումն իրագործելիս նախապատվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, նրանց խմբերին, ձեռնարկություններին և կազմակերպություններին:

5. Սեփականաշնորհման գործում երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավասար իրավունքները:

6. Սեփականաշնորհումն իրականացվում է սոցիալական պաշտպանվածությունն ապահովող համակարգի ստեղծմանը համընթաց:

7. Ելնելով սեփականաշնորհվող օբյեկտների տեսակներից և նշանակությունից, ինչպես նաև սոցիալական արտադրության ապահովման պահանջներից, սեփականաշնորհումն իրականացվում է՝

– օբյեկտի կամ նրա մի մասի վաճառքի ձևով՝ արժեքի միանվագ կամ տարաժամկետ վճարմամբ.

– արժեթղթերի վաճառքով (այդ թվում արտոնյալ պայմաններով).

– պետական ունեցվածքի (որոշ օբյեկտների) անհատույց հատկացմամբ.

– օբյեկտի վարձակալմամբ՝ տալով վարձակալին օբյեկտի ետզնման իրավունքի առաջնությունը:

8. Սեփականաշնորհման ժամանակ ապահովվում է բնական և պատմամշակութային արժեքների պահպանումը:

III. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԻՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման մասին» օրենքի հիման վրա կազմվում է սեփականաշնորհվող պետական օբյեկտների ցանկը՝ ըստ դրանց տնօրինման իրավունքի, տեսակների, նշանակության:

2. Տնտեսական նպատակահարմարությունից և տեխնոլոգիական հնարավորություններից ելնելով, իրականացվում է ներհանրապետական շուկան սպասարկող խոշոր ձեռնարկությունների ապա-

խոշորացումը:

3. Սեփականաշնորհվող օբյեկտների նախնական արժեզնատումը իրականացվում է ելնելով շուկայական պահանջարկից՝ փորձագետների միջոցով:

4. Սեփականաշնորհման իրավական հիմքերի ստեղծումը ենթադրում է սեփականաշնորհման, հակամենաշնորհման, բանկային համակարգի, ձեռնարկությունների, աշխատանքի ու զբաղվածության, աշխատավորների սոցիալական պաշտպանվածության մասին օրենքների և այլ օրենսդրական ակտերի փաթեթի, ինչպես նաև նորմատիվային և հրահանգչական փաստաթղթերի՝ այդ թվում բնակչության որոշ խմբերի արտոնյալ պայմաններով բաժնետոմսերի իրացման և սեփականաշնորհման եկամուտների օգտագործման կարգի, սոցիալական նշանակության դրամային ֆոնդերի կուտակման, ապահովագրական, բորսային և այլ տիպի հարաբերությունների կարգավորման վերաբերյալ փաստաթղթերի մշակումը և ընդունումը:

5. Ելնելով սեփականաշնորհման գործընթացի բացառիկությունից և առաջնորդվելով հասարակական շահերով, նախատեսվում են որոշակի վարչական սահմանափակումներ՝ պետական ներգործության արտատնտեսական լծակների կիրառման ձևով:

Օբյեկտի սեփականաշնորհման ակտը առանձին դեպքերում հաստատագրում է սկզբնական ժամանակաշրջանում դրա օգտագործման ելակետային պայմանները: Նոր սեփականատերերի իրավասությունների սահմանափակումները վերաբերում են գույքի օգտագործման պայմաններին, ինչպես նաև աշխատավորական կոլեկտիվների անդամների՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իրավունքների երաշխավորմանը:

6. Սեփականաշնորհման յուրաքանչյուր փուլում պետական ունեցվածքի ցուցանակները՝ հաշվի առնելով օբյեկտի հասարակական նշանակությունը, տնտեսության ճյուղը, օբյեկտի չափը, հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը: Տեղական խորհուրդները մասնակցում են սեփականաշնորհման համար օբյեկտների ներկայացման աշխատանքներին:

Հատկապես կարևոր օբյեկտների սեփականաշնորհման հարցերը լուծում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը՝ Նախարարների խորհրդի ներկայացմամբ:

Սեփականաշնորհումն իրականացվում է ոչ շուտ, քան սեփա-

կանաչնորհման օբյեկտների ցուցակների հրապարակումից առավազն մեկ ամիս հետո:

7. Սեփականաշնորհման առաջին փուլը ներառում է հողերի սեփականաշնորհման, գյուղատնտեսական ձեռնարկությունների գույքի մասնավորեցման, գյուղացիական տնտեսությունների ստեղծման ծավալումը, ինչպես նաև վճարովի ծառայությունների օբյեկտների, առևտրի, արտադրական ենթակառուցվածքի որոշ ճյուղերի (շինարարության, տրանսպորտի և այլն), գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, ինչպես նաև նյութատեխնիկական մատակարարման օբյեկտների սեփականաշնորհումը: Այդ փուլում համապատասխան փորձ ձեռք բերելու նպատակով իրականացվում է առանձին արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը:

Միաժամանակ մշակվում և հաստատվում են սեփականաշնորհման գործընթացի իրավական հիմքը կազմող նորմատիվային ակտեր:

8. Սեփականաշնորհման երկրորդ փուլը ներառում է գյուղատնտեսական ունեցվածքի և գյուղատնտեսական հումքը վերամշակող ձեռնարկությունների, առևտրի և վճարովի ծառայությունների, օբյեկտների սեփականաշնորհման ավարտը, ծավալվում է նյութական արտադրության մյուս ճյուղերի ձեռնարկությունների, արդյունաբերական և սոցիալական ենթակառուցվածքների սեփականաշնորհումը:

9. Սեփականաշնորհումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին կից պետական ունեցվածքի սեփականաշնորհման և տնօրինման կոմիտեն:

IV. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

1. Սեփականաշնորհման սուբյեկտներ են առաջին հերթին Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձինք, նրանց խմբերը, Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք:

Սեփականաշնորհման այլ սուբյեկտների (այլ պետությունների քաղաքացիների, նրանց խմբերի, ձեռնարկությունների և կազմակերպությունների) իրավունքները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությամբ:

2. Բնակչության առանձին կատեգորիաների համար սահման-

վում է որպես սեփականաշնորհման սուբյեկտներ հանդես գալու տարբերակված կարգ: Արտոնություններ են տրվում տվյալ աշխատավորական կոլեկտիվի անդամներին (նախկին անդամներին), այնուհետև այլ քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանված կարգով:

Պետական բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման սուբյեկտ հանդես գալու բացառիկ իրավունքը պատկանում է վարձակալին:

V. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Սեփականաշնորհման օբյեկտներն են նյութական արտադրության և ծառայությունների ոլորտի պետական ձեռնարկությունները, հիմնարկները, բնակելի տները, ինչպես նաև արտադրական և ոչ արտադրական նշանակության այլ գույքը:

Ապապետականացման ենթակա չեն այն օբյեկտները, որոնք անհնար է անջատել խստագույն գործակարգավորմամբ (դիսպետչերային) կառավարվող տեխնոլոգիական համակարգից և որոնք ապահովում են պետության մենաշնորհը, ինչպես նաև ներքին հանրապետական շուկայում մենաշնորհ ունեցող ձեռնարկությունները, եթե հնարավոր չէ դրանք ապախոշորացնել:

VI. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1. Փոքր օբյեկտները սեփականաշնորհվում են դրանք վաճառելով անհատ գնորդին կամ մի խումբ անձանց կանխիկ դրամով, կարող են ընդունվել նաև խնայբանկի չեկեր՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի համաձայնությամբ:

Գնորդ կարող է լինել նաև ոչ պետական ձեռնարկությունը կամ կազմակերպությունը:

2. Նպատակահարմարության դեպքում փոքր օբյեկտները տրվում են վարձակալության այնտեղ աշխատող կոլեկտիվներին, այլ անձանց խմբերին, առանձին քաղաքացիների, ինչպես նաև ոչ պետական ձեռնարկություններին և կազմակերպություններին՝ հետագա գնման պայմանով:

3. Նյութական արտադրության և ծառայությունների ոլորտի խոշոր օբյեկտները սեփականաշնորհվում են փայերի կամ բաժնետոմ-

սերի իրացման միջոցով: Բաժնետոմսերը կարող են տարածվել ազատ բաժանորդագրության միջոցով, ինչպես նաև առանձին քաղաքացիների համար արտոնյալ պայմաններով՝ մասնակի կամ տարածամկետ վճարմամբ: Քաղաքացիները բաժնետոմսեր (փայեր) կարող են ձեռք բերել վճարելով նաև հատուկ սերտիֆիկատներով:

VII. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅՎՈՂ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Սեփականաշնորհվող պետական ունեցվածքի գնումը կարող է իրականացվել բնակչության միջոցների, ձեռնարկությունների և կազմակերպությունների ազատ միջոցների հաշվին՝ օգտագործելով ֆոնդային (բաժնետոմսեր) ի պոտեկային արժեթղթեր, ինչպես նաև հատուկ սերտիֆիկատներ:

2. Հատուկ սերտիֆիկատների շրջանառության ոլորտը սահմանափակվում է սեփականաշնորհվող օբյեկտների գնման գործողություններով:

3. Պետության կողմից արտոնյալ կարգով բաժնետոմսեր կվաճառվեն այն անձանց, ովքեր սեփականաշնորհման ընթացքում պետական սեփականություն ձեռք չեն բերել անհատապես և կամ փոքր ընկերակցություններում:

4. Ի պոտեկային արժեթղթերը պետության կողմից վաճառվում են արտոնյալ կարգով այն բնակվարածակալներին, որոնց բնակմակերեսի ապահովվածությունը ցածր է միջինից, ինչպես նաև պետական բնակարանի համար հերթագրվածներին, ովքեր բնակարանի սեփականաշնորհման որոշումը ընդունելու պահին սպասում են իրենց հերթին: Ի պոտեկային արժեթղթերը ընդունվում են որպես վճարման միջոց հետագայում պետական ներդրումների հաշվին կառուցված բնակելի շենքերում բնակարան գնելիս:

VIII. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Սեփականաշնորհումից ստացված պետական եկամուտների օգտագործման ուղղություններն են՝

– սոցիալական ոլորտի նյութական բազայի զարգացումը և շուկայական տնտեսությանն անցնելու հետ կապված կարիքավորների

կենսամինիմումի ապահովումը.

– գյուղատնտեսական արտադրության զարգացմանն օժանդակելը.

– շուկայական ենթակառուցվածքի ստեղծումը.

– միջոցների առկայության դեպքում ֆինանսաբյուջետային համակարգի կայունացումը:

2. Սեփականաշնորհումից ստացված միջոցների օգտագործման հիմնական ուղղությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի ներկայացմամբ:

IX. ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՍՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գյուղատնտեսության մեջ սեփականաշնորհումը իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին օրենքի:

X. ՓՈՔՐ ՁԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅՈՒՄԸ

Նյութական արտադրության, առևտրի, վճարովի ծառայությունների, արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքի օբյեկտները, այդ թվում անավարտ շինարարությունը, սեփականաշնորհվում են տարբեր եղանակներով:

1. Փոքր օբյեկտների սեփականաշնորհումն իրականացվում է դրանք փոխակերպվելով մանր ինքնուրույն ձեռնարկությունների, որոնց սեփականատերերն են դառնում անհատ քաղաքացիները կամ նրանց տնտեսական ընկերակցությունները:

Փոքր օբյեկտների ունեցվածքը իրացվում է նրա արժեքի սահմանմամբ՝ ըստ սեփականաշնորհման պայմանագրի կամ էլ աճուրդի միջոցով:

Փոքր օբյեկտների սեփականաշնորհման ժամանակ կարող են կիրառվել հետևյալ արտոնությունները.

օբյեկտի տրամադրումը տվյալ աշխատավորական կոլեկտիվին կամ նրա անդամին մասնակի վճարմամբ,

օբյեկտի վարձակալումը՝ հետագայում գնելու պայմանով:

2. Սեփականաշնորհված ձեռնարկությունների սեփականատերերը արտադրանքի մատակարարման և իրացման գծով կապերը որպես կանոն հաստատում են իրենց հայեցողությամբ բաշխման պետական սիստեմից դուրս:

XI. ԽՈՇՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅՈՒՄԸ

Խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհումն իրականացվում է դրանք վերափոխելով բաժնետիրական և փայտտիրական (սահմանափակ պատասխանատվությամբ) ընկերությունների՝ քաղաքացիներին, նրանց խմբերին և աշխատավորական կոլեկտիվներին, նրանց ներգրավելով որպես տերեր:

Արտոնություններ կարող են կիրառվել սեփականաշնորհվող աշխատավորական կոլեկտիվների անդամների, ոչ նյութական ոլորտում աշխատող քաղաքացիների, կենսաթոշակառուների համար՝ բաժնետոմսերի արժեքի մասնակի և տարածամկետ վճարման ձևով:

Աշխատավորական կոլեկտիվների անդամներին իրացվող բաժնետոմսերը (փայերը) տրվում են կոլեկտիվի մասնաբաժնից: Կենսաթոշակառուներին և ոչ նյութական ոլորտում աշխատող քաղաքացիներին բաժնետոմսեր են հատկացվում սեփականաշնորհվող ձեռնարկության ունեցվածքի պետական մասնաբաժնից: Բաժնետոմսերի մյուս մասը իրացվում է առանց արտոնությունների բաժանորդագրություն իրականացնելով, աճուրդով վաճառքի և այլ ձևերով:

Հատկապես կարևոր նշանակության ձեռնարկությունների համար ունեցվածքի արժեքից աշխատավորական կոլեկտիվի, պետության, այլ սուբյեկտների մասնաբաժինների որոշման կարգը, ինչպես նաև տարբեր կատեգորիայի գնորդների համար բաժնետոմսերի իրացման պայմանները սահմանվում են հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներով, այլ ձեռնարկությունների համար Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից:

Քաղաքացիների առանձին կատեգորիաների հատուկ սերտիֆիկատներ տրամադրելու դեպքում սեփականաշնորհվող ձեռնարկության բաժնետոմսերի վաճառքը կատարվում է այդ սերտիֆիկատներն ընդունելով որպես վճարման միջոց: Կանխիկ դրամի հետ միաժամանակ բաժնետոմսերի վճարումը թույլատրվում է սերտիֆիկատներով:

Տնտեսապես վնասաբեր ձեռնարկությունների սեփականաշնորհման ժամանակ գնորդներին տրվում են լրացուցիչ արտոնություններ, կիրառվում է ապախոշորացում՝ անջատելով և իրացնելով շահութաբեր օբյեկտները, վաճառք՝ սնանկացման մասին օրենսդրությամբ համապատասխան և ունեցվածքի իրացման այլ հարմար ձևեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 109-114:*

№ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի սկզբունքներից, հաշվի առնելով տնտեսական վերափոխումների միտումները ԽՍՀՄ-ում և Հայաստանի Հանրապետությունում, նկատի ունենալով բոլոր հանրապետություններում տնտեսական ինքնուրույնության համահավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, ելնելով այն բանից, որ հանրապետությունների տարածքում ստեղծված տնտեսական կարողությունը նրանց ինքնուրույնության երաշխիքն է,

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

2. Հայաստանի Հանրապետության սեփականության տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը իրականացնում է Հայաստա-

նի Հանրապետության Մինիստրների խորհուրդը:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պետական ունեցվածքի տնօրինման հարցում Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհուրդը հՍՀ Միության պետական մարմինների հետ փոխհարաբերություններում հիմնականում ելնում է հանրապետության տնտեսական ինքնուրույնության հաստատման շահերից:

4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ընդունման պահից,

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝ **Լ. ՏԵՐՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

10 սեպտեմբերի 1991 թվականի,
քաղ. երևան
Հ. Ա. 0132-1

Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995, էջ 13:

№ 18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սեփականության մասին օրենքի ընդունման նպատակն է մինչև հանրապետության քաղաքացիական օրենսդրության համակարգումը ապահովել շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման իրավական հիմքերի ստեղծումը, տնտեսական համակարգի և սեփականության հարաբերությունների ամրապնդումը և տարբեր ձևերի զարգացումը:

Բ Ա Ժ Ի Ն Ի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության սեփականության մասին օրենսդրությունը

1. Սույն օրենքով սահմանվում են սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման հիմնական դրույթներն ու սկզբունքները, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև նոր քաղաքացիական օրենսգրքի ընդունումը:

2. Օրենքով չկարգավորված սեփականության հարաբերությունները և սեփականատերերի իրավազորությունները կարգավորվում են հանրապետության գործող քաղաքական օրենսգրքով և սույն օրենքին համապատասխան հրատարակվող օրենսդրական ու ենթօրենսդրական այլ ակտերով:

3. Պատմության և մշակույթի հուշարձանների սեփականության իրավունքի իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև գյուտերի, հայտնագործությունների, գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների և ինտելեկտուալ սեփականության մյուս օբյեկտների ստեղծմանն ու օգտագործմանը վերաբերող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հատուկ օրենսդրությամբ:

Հոդված 2. Սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում

1. Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը ճանաչվում և պաշտպանվում է օրենքով:

2. Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը,

3. Սեփականատերն իրավունք ունի իր գույքի նկատմամբ ձեռնարկելու օրենքին չհակասող ցանկացած գործողություն: Նա կարող է գույքն օգտագործել օրենքով չարգելված տնտեսական կամ այլ ցանկացած գործունեություն իրականացնելու համար:

4. Օրենքով նախատեսված դեպքերում, պայմաններով և սահմաններում սեփականատիրոջ վրա կարող է պարտականություն դրվել թույլ տալու, որ իր գույքից սահմանափակ կերպով օգտվեն այլ անձինք:

5. Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի քաղաքացիների, ձեռ-

նարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների ու պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Չորված 3. Սեփականատիրոջ կողմից քաղաքացիների աշխատանքի օգտագործումը

1. Սեփականատերն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով և սահմաններում քաղաքացիների հետ պայմանագրեր կնքել իրեն պատկանող սեփականության իրավունքն իրականացնելիս նրանց աշխատանքի, այդ թվում վարձու, օգտագործման մասին:

2. Անկախ սեփականության ձևից, որի հիման վրա օգտագործվում է քաղաքացու աշխատանքը, նրա համար ապահովվում են աշխատանքի այնպիսի վարձատրություն ու պայմաններ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այլ երաշխիքներ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Չորված 4. Սեփականության իրավունքի սուբյեկտները

1. Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքի սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետությունը, իրավաբանական անձինք և քաղաքացիները, այլ պետությունները, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա իրավաբանական անձինք ու քաղաքացիները:

2. Գույքը ընդհանուր (բաժնային կամ համատեղ) սեփականության իրավունքով կարող է պատկանել միաժամանակ մի քանի անձանց՝ անկախ սեփականության ձևից:

Չորված 5. Սեփականության իրավունքի ժևերը

1. Սեփականությունը հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սեփականության, կոլեկտիվ և պետական սեփականության ձևերով:

2. Թույլատրվում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ու պետությունների սեփականությունը կազմող գույքի միավորում և դրա հիման վրա սեփականության խառը ձևերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների, իրավաբանական անձանց ու քաղաքացիների մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների սեփականության գոյացում:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով կարող են սահմանվել սեփականության՝ սույն օրենքով չնախատեսված այլ ձևեր:

4. Պետությունը ստեղծում է սեփականության բոլոր ձևերի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ և ապահովում դրանց պաշտպանությունը:

Չորված 6. Սեփականության իրավունքի օբյեկտները

1. Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքի օբյեկտներ կարող են լինել հողը, ընդերքը, ջրերը, օդային տարածքը, բուսական ու կենդանական աշխարհը, ձեռնարկությունները, կազմակերպությունները, շենքերը, շինությունները, սարքավորումները, նյութական ու հոգևոր մշակույթի առարկաները, ինտելեկտուալ գործունեության արդյունքները, դրամը, արժեթղթերը և այլ գույքը:

2. Գույքի տնտեսական օգտագործման արդյունքները (արտադրանք և եկամուտներ) պատկանում են գույքի սեփականատիրոջը, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան չի նախատեսված:

3. Սեփականության իրավունքի օբյեկտների գրանցման կարգը որոշում է հանրապետության նախարարների խորհուրդը:

Չորված 7. Սեփականատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելը

1. Իրավաբանական անձի պարտավորություններով բռնագանձումը կարող է տարածվել ցանկացած գույքի վրա, որը պատկանում է նրան սեփականության կամ լիակատար տնտեսավարման, ինչպես նաև օպերատիվ կառավարման իրավունքով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Սեփականատերը պատասխանատու չէ իր ստեղծած իրավաբանական անձանց պարտավորությունների համար, իսկ վերջիններս պատասխանատու չեն սեփականատիրոջ պարտավորությունների համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերի:

3. Քաղաքացիներն իրենց պարտավորություններով պատասխանատու են սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքով:

4. Քաղաքացիների այն գույքի ցանկը, որի վրա չի կարող բռնագանձում տարածվել պարտատերերի պահանջով, սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: ...

... ԿՈԼԵԿՏԻՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 14. Ընդհանուր դրույթներ կոլեկտիվ սեփականության մասին

1. Կոլեկտիվ սեփականություն է համարվում կոլեկտիվ ձեռնարկությունների, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերատիվների, բաժնետիրական ընկերությունների, տնտեսական ընկերությունների, տնտեսական ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների և իրավաբանական անձ հանդիսացող մյուս միավորումների սեփականությունը:

2. Կոլեկտիվ սեփականության գոյացումն ու բազմապատկումը ապահովվում է՝ պետական ձեռնարկությունները աշխատավորական կոլեկտիվներին որպես սեփականություն կամ վարձակալությամբ տրամադրելով, աշխատավորական կոլեկտիվներին ստացված եկամուտները պետական գույքի հետզնման համար օգտագործելու հնարավորություն ընձեռելով, պետական ձեռնարկությունները բաժնետիրական ընկերությունների, այլ տնտեսական ընկերությունների և ասոցիացիաների ստեղծման համար քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքը կամավոր հիմունքներով միավորելով:

Հոդված 15. Կոլեկտիվ ձեռնարկության սեփականությունը

1. Կոլեկտիվ ձեռնարկության սեփականությունը գոյանում է պետական ձեռնարկության ամբողջ գույքը աշխատավորական կոլեկտիվին որպես սեփականություն անցնելու, գոյություն ունեցող պետական ձեռնարկությունները ապապետականացնելու, վարձակալված գույքը հետզնելու կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով գույք ձեռք բերելու դեպքում:

2. Կոլեկտիվ ձեռնարկության գույքը, ներառյալ արտադրված արտադրանքն ու ստացված եկամուտները, նրա կոլեկտիվի ընդհանուր սեփականությունն է:

Հոդված 16. Կոլեկտիվ ձեռնարկության աշխատողների ավանդը նրա գույքի մեջ և նրա ավանդի չափը

1. Կոլեկտիվ ձեռնարկության գույքի մեջ որոշվում են նրա աշխատողների ավանդները: Այդ ավանդի մեջ մտցվում են պետական ձեռնարկություններն ապապետականացնելու հետևանքով աշխատավորական կոլեկտիվների անդամներին վերագրվող կանոնադրա-

կան ավանդը, պետական կամ վարձակալական այլ ձեռնարկության գույքի մեջ աշխատողի մուծած ավանդի գումարը, որի հիման վրա ստեղծված է կոլեկտիվ ձեռնարկությունը, ինչպես նաև այդ ձեռնարկության ստեղծումից հետո նրա գույքի հավելածի մեջ աշխատողի ներդրած ավանդը:

2. Պետական ձեռնարկություններն ապապետականացնելու հետևանքով աշխատավորական կոլեկտիվի անդամին վերագրվող կանոնադրական ավանդի ձևավորման և տիրապետման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 17. Ձեռնարկության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցրած աշխատողի ավանդի արժեքը վճարելը

Ձեռնարկության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցրած աշխատողին, ինչպես նաև մահացած աշխատողի ժառանգներին վճարվում է ավանդի արժեքը:

Հոդված 18. Կոլեկտիվ ձեռնարկության լուծարման դեպքում ավանդի արժեքը աշխատողներին վճարելը

Կոլեկտիվ ձեռնարկության լուծարման դեպքում աշխատողներին (նրանց ժառանգներին) ավանդի արժեքը վճարվում է այն գույքից, որ մնացել է բյուջեի, բանկերի և մյուս պարտատերերի հետ ձեռնարկության կատարած վերջնահաշվարկներից հետո:

Հոդված 19. Վարձակալական ձեռնարկության սեփականությունը

Վարձակալական ձեռնարկության սեփականությունն են կազմում արտադրված արտադրանքը, ստացված եկամուտները և այդ ձեռնարկության միջոցների հաշվին ձեռք բերված մյուս գույքը:

Վարձակալական ձեռնարկության գործերի կառավարումը և նրա շահույթի (եկամուտների) բաշխմանը աշխատավորական կոլեկտիվի անդամների մասնակցության կարգն ու պայմանները որոշվում են վարձակալության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 20. Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության սեփականությունը

1. Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության սեփականությունը գոյանում է առկա խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների հիմքի վրա գյուղացիական տնտեսությունների սեփականությունը կամավոր հիմունքներով միավորելու միջոցով:

2. Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը որպես սեփականություն կարող է ունենալ հողամասեր և տունկեր, մթերատու և բանող անասուններ, թռչուններ, գյուղատնտեսական տեխնիկա, գործիքներ, կոլեկտիվ տնտեսություն վարելու համար անհրաժեշտ այլ գույք:

Արտադրված արտադրանքն ու ստացված եկամուտները գյուղացիական կոլեկտիվ տնտեսության սեփականությունն են և օգտագործվում են տնտեսության կանոնադրությամբ որոշվող կարգով:

3. Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության անդամը սեփական հայեցողությամբ կարող է դադարեցնել իր անդամությունը և դուրս գալ տնտեսության կազմից՝ հետ ստանալով կոլեկտիվ տնտեսության մեջ ունեցած իր հողաբաժինը և մյուս ավանդները, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

4. Գյուղացիական տնտեսության մեջ անդամագրվելու կարգը որոշվում է այդ տնտեսության կանոնադրությամբ:

Հոդված 21. Կոոպերատիվի սեփականությունը

Կոոպերատիվի սեփականությունը գոյանում է նրա անդամների դրամական և մյուս գույքային մուծումների, ինչպես նաև ոչ գույքային ներդրումների հաշվին, նրանց արտադրած արտադրանքի, դրա իրացումից ստացված եկամուտների և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեության հաշվին:

Հոդված 22. Կոոպերատիվի գույքի բաշխումը նրա լուծարման դեպքում

Կոոպերատիվի լուծարման դեպքում նրա գույքը, որը մնացել է բյուջեյի, բանկերի և մյուս պարտատերերի հետ կատարված վերջնահաշվարկներից հետո, բաշխվում է կոոպերատիվի անդամների միջև:

Հոդված 23. Տնտեսական ընկերության սեփականությունը

Տնտեսական ընկերությունների սեփականությունը գոյանում է մասնակիցների ավանդների հաշվին, տնտեսական գործունեության շնորհիվ ստացված և օրենքով թույլատրվող այլ հիմքերով ձեռք բերված գույքի հաշվին:

Հոդված 24. Տնտեսական ընկերության մասնակիցները

Տնտեսական ընկերության մասնակիցներ կարող են լինել քաղաքացիները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ

բան չի նախատեսված:

Հոդված 25. Տնտեսական ընկերության մասնակիցների ավանդի կազմը

Տնտեսական ընկերության մասնակիցների ավանդի կազմի մեջ կարող են մտնել հիմնական և շրջանառու ֆոնդեր, դրամական միջոցներ, արժեթղթեր և գույք:

Հոդված 26. Բաժնետիրական ընկերության սեփականությունը

Բաժնետիրական ընկերությունն այն գույքի սեփականատերն է, որը գոյացել է բաժնետոմսերի վաճառքի հաշվին, նրա տնտեսական գործունեության շնորհիվ, ինչպես նաև ձեռք է բերվել օրենքով թույլատրվող հիմքերով:

Հոդված 27. Բաժնետոմսերի տերերը

Բաժնետոմսերի տերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ինչպես նաև օտարերկրյա պետությունները, իրավաբանական անձինք ու քաղաքացիները:

Հոդված 28. Պետական ձեռնարկության վերակազմումը բաժնետիրական ընկերության

1. Պետական ձեռնարկությունը աշխատավորական կոլեկտիվի և ձեռնարկության վերակազմավորման համար լիազորված պետական մարմնի համատեղ որոշմամբ կարող է վերակազմվել բաժնետիրական ընկերության՝ ձեռնարկության գույքի ամբողջ արժողությամբ բաժնետոմսեր թողարկելու միջոցով: Բաժնետոմսերի վաճառքից ստացված միջոցները պետական ձեռնարկության պարտքերը փակելուց հետո մուծվում են համապատասխան բյուջե:

2. Բաժնետիրական ընկերության մեջ առանձին բաժնետերերի բաժնետոմսի փայլը չի սահմանափակվում, եթե այլ բան չի նախատեսված բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ:

3. Սույն օրենքի 34 հոդվածում թվարկված պետական սեփականության օբյեկտներ հանդիսացող ձեռնարկությունները, կազմակերպությունները լրիվ կամ մասնակիորեն բաժնետիրական ընկերությունների վերակազմավորվելու դեպքում պետության ձեռքին պետք է գտնվի բաժնետոմսերի վերահսկիչ ծրարը կամ էլ բաժնետոմսերի ընդհանուր քանակի մեջ պետության համար պետք է նախատեսվի 51 տոկոսից ոչ պակաս փայլաբաժին:

4. Պետական բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կուրսը ենթակա է պարբերական հրատարակման:

Հոդված 29. Տնտեսական ասոցիացիաների (միավորումների) սեփականությունը

1. Ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսական ասոցիացիան (այդ թվում կոնցեռնը, Ճյուղային, միջճյուղային և ռեզիոնալ միավորումը) սեփականության իրավունք ունի այն գույքի նկատմամբ, որը կամովին իրեն են հանձնել իր ձեռնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ստացվել է իր տնտեսական գործունեության շնորհիվ:

2. Տնտեսական ասոցիացիան իր մեջ մտնող ձեռնարկությունների և կազմակերպությունների գույքի նկատմամբ սեփականության իրավունք չունի:

Հոդված 30. Գույքի բաշխումը տնտեսական ասոցիացիայի գործունեության դադարեցումից հետո

Տնտեսական ասոցիացիայի գործունեության դադարեցումից հետո մնացած գույքը բաշխվում է նրա մեջ մտած ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև:

Հոդված 31. Հասարակական կազմակերպությունների և ֆոնդերի սեփականությունը

Հասարակական կազմակերպությունները, այդ թվում բարեգործական և հասարակական մյուս ֆոնդերը, որպես սեփականություն կարող են ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և գույք, որն անհրաժեշտ է իրենց կանոնադրություններով նախատեսված գործունեության նյութական ապահովման համար: Հասարակական կազմակերպությունների (ֆոնդերի) սեփականություն կարող են լինել նաև նրանց կանոնադրությունների մեջ նշված նպատակներին համապատասխան այդ կազմակերպությունների (ֆոնդերի) միջոցների հաշվին ստեղծվող ձեռնարկությունները:

Հոդված 32. Հասարակական կազմակերպության (ֆոնդի) գույքի օգտագործումը նրա լուծարումից հետո

Հասարակական կազմակերպության (ֆոնդի) լուծարումից հետո մնացած գույքն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

Հոդված 33. Կրոնական կազմակերպությունների սեփականությունը

Կրոնական կազմակերպությունների սեփականություն կարող են լինել շենքերը, պաշտամունքի առարկաները, արտադրական, սոցիալական և բարեգործական նշանակության օբյեկտները, դրամական միջոցները և դրանց գործունեության համար անհրաժեշտ այլ գույք:

Կրոնական կազմակերպությունները սեփականության իրավունք ունեն այն գույքի նկատմամբ, որը ձեռք են բերել ու ստեղծել սեփական միջոցների հաշվին, քաղաքացիների, կազմակերպությունների կամ պետության նվիրատվությունների հաշվին և օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

31 հոկտեմբերի 1990 թվականի
քաղ. երևան
Հ. Ն. -0178-1

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 25-39:*

№ 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Զ Ը

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը որոշում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության տնտեսական, կազմակերպական, սոցիալական պայմաններն ու իրավական հիմքը:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ստեղծման և գործունեության հետ կապված առանձին հարաբերու-

յունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով:

Բ Ա Ժ Ի Ն Լ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Գյուղատնտեսական գործունեության կազմակերպման ձևերը

Գյուղատնտեսական գործունեությունը գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրությունն ապահովող տնտեսվարման ձև է:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեության կազմակերպման ձևերը հիմնվում են քաղաքացիների կոլեկտիվ և պետական սեփականության վրա և հանդես են գալիս գյուղացիական տնտեսությունների, պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների ձևերով:

Առկա խորհտնտեսությունները լուծարվում են և կարող են ձեռք բերել պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների կարգավիճակ, եթե այդ խորհտնտեսությունների աշխատողները կամ նրանց մի մասը իրենց ընտանիքների չափահաս անդամների մեծամասնության գրավոր համաձայնությամբ ցանկություն են հայտնում հասանելիք հողաբաժինների և արտադրության մյուս միջոցների պետական սեփականության հիման վրա շարունակելու տնտեսության գործունեությունը և հրաժարվում են հողի սեփականության իրավունքի իրացումից:

Գյուղատնտեսական այլ ձեռնարկությունները պետական գյուղատնտեսական ձեռնարկության կարգավիճակ են ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշմամբ:

Պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները գործում են պետական սեփականության հողերի վրա: Այդ ձեռնարկությունների վրա տարածվում են պետական ձեռնարկությունների ստեղծման և գործունեության կարգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական ակտերը:

Առկա կոլտնտեսությունները լրիվ կամ մասնակի կարող են պահպանվել այն դեպքում, երբ այդ տնտեսությունների անդամները ընդհանուր ժողովի ձայների երկու երրորդի մեծամասնության որոշմամբ, կամ նրանց մի մասը ժխերի չափահաս անդամների մեծա-

մասնության գրավոր համաձայնությամբ ցանկություն են հայտնում շարունակելու կոլտնտեսության գործունեությունը և հրաժարվում են հողի սեփականության իրավունքի իրացումից:

Հիշյալ տնտեսությունների հողօգտագործումը, դրանցում միավորված ժխերին հասանելիք հողաբաժինների սահմաններում, իրականացվում է, վարձակալական հիմունքներով:

Հոդված 2. Գյուղացիական տնտեսությունը

Գյուղացիական տնտեսությունը քաղաքացիների սեփականության վրա հիմնված հիմնական գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրությունը ապահովող ինքնուրույն կազմակերպական միավոր է:

Գյուղացիական տնտեսությունը ստեղծվում է կամավոր հիմունքներով:

Սույն օրենքով նախատեսված կարգով յուրաքանչյուր ընտանիք (ծուխ) իրավունք ունի որպես սեփականություն ստանալու հողամաս:

Գյուղացիական տնտեսությունը ձևակերպվում է ընտանիքի գլխավորի անունով: Գյուղացիական տնտեսության իրավունքները ծանաչվում են ընտանիքի գլխավորի անվամբ ձևակերպվող և ժողովրդական պատգամավորների համապատասխան տեղական (գյուղական, ավանային, քաղաքային, քաղաքի շրջանային) խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրվող պետական ակտի հիման վրա:

Գյուղացիական տնտեսությունները պետական ակտը ստանալու պահից ձեռք են բերում իրավաբանական անձանց համար օրենքով սահմանված համապատասխան իրավունքներ և պարտականություններ, միաժամանակ կրելով լրիվ նյութական պատասխանատվություն իրենց պարտավորությունների դիմաց:

Գյուղացիական տնտեսության անդամներ են համարվում ընտանիքի անդամները՝ ամուսինները, ծնողները (որդեգրողները), գավակները (որդեգրվածները), մյուս հարազատները և մեկ տնտեսությունում կամավոր միավորված այլ անձինք, որոնք բնակվում են տվյալ բնակավայրում և վարում են համատեղ տնտեսություն: Գյուղացիական տնտեսությունը կարող է բաղկացած լինել նաև մեկ անձից: Գյուղացիական տնտեսության անդամներ չեն համարվում այն անձինք, այդ թվում և հարազատները, որոնք աշխատում են նույն տնտեսությունում աշխատանքային պայմանագրով:

Ընտանիքի գլխավորը տնտեսության բոլոր չափահաս անդամների անունից տնտեսության շահերը ներկայացնելու համար սահմանված կարգով լիազորված աշխատանքային տարիքի հասած անձը, կազմակերպում է տնտեսության գործունեությունը, տնտեսության անունից կնքում է պայմանագրեր, տալիս է լիազորագրեր, տնտեսության անդամների համաձայնությամբ օգտվում է գույքի և մյուս միջոցների տնօրինման իրավունքից, իրականացնում է տնտեսության գործունեության հետ կապված իրավական այլ գործողություններ:

Գյուղացիական տնտեսության անդամների գույքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, ամուսնության և ընտանիքի օրենսգրքերով, Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին օրենքով և այլ օրենսդրական ակտերով:

Չոդված 3. Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը կոլեկտիվ սեփականության վրա հիմնված գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրությունն ապահովող ինքնուրույն կազմակերպական միավոր է:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը ստեղծվում է ինչպես գյուղացիական տնտեսությունների կամավոր միավորման ճանապարհով՝ ցանկացած կազմակերպական ձևով, այնպես էլ առկա կոլտնտեսությունների և խորհրդակցությունների հիման վրա, եթե այդ տնտեսությունների անդամները, աշխատողները կամ համապատասխան բնակավայրերի բնակիչները կամ նրանց մի մասը իրենց ընտանիքների ծխերի չափահաս անդամների մեծամասնության գրավոր համաձայնությամբ ցանկություն են հայտնում դառնալ կոլեկտիվ սեփականության իրավունքի սուբյեկտներ:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության մեջ կարող են անդամագրվել նաև քաղաքացիներ և սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ՝ գյուղացիական կոլեկտիվ տնտեսության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության կանոնադրության մեջ նախատեսվում են տնտեսության անվանումը, նրա գտնվելու վայրը, տնտեսության մեջ անդամագրվելու և դրանից դուրս գալու կարգը, տնտեսության ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի օբյեկտները, տնտեսության անդամների իրավունքներն ու պարտա-

կանությունները, տնտեսության ղեկավար մարմինների ընտրության կարգը և իրավասությունը, կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կարգը, տնտեսության գործունեության դադարման կարգը:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունից դուրս եկող գյուղացիական տնտեսությանը կամ այլ անդամին (նրա իրավահաջորդին) հատկացվում են հասանելիք հողաբաժինը, արտադրության մյուս միջոցներն ու ավանդները՝ տնտեսության կանոնադրությամբ որոշված կարգով:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության կանոնադրությունն ընդունվում է տնտեսության ընդհանուր ժողովի կողմից և ներկայացվում է գրանցման ժողովրդական պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտե:

Կանոնադրության գրանցման պահից գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: ...

... Չոդված 6. Չողանասերի տրամադրման կարգը

Գյուղացիական տնտեսություն վարելու համար հողամասերը որպես սեփականություն առաջին հերթին տրամադրվում են գյուղական բնակավայրերում 1990 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մշտապես բնակվող քաղաքացիներին սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հողաբաժինների չափով:

Չիշյալ հիմունքներով հողամասեր տրամադրելուց հետո չբաժանված հողատեսքեր մնալու դեպքում դրանք տրամադրվում են՝

Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ տվյալ բնակավայրի նախկին այն բնակիչներին, որոնք մշտական բնակություն են հաստատում և գրանցվում այնտեղ և գյուղացիական տնտեսություն վարելու ցանկություն են հայտնում:

Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք ցանկություն են հայտնում մշտական բնակություն հաստատելու գյուղում և վարելու գյուղացիական տնտեսություն:

Շրջկենտրոններում և քաղաքներում գտնվող գյուղատնտեսական ձեռնարկությունների հողամասերը որպես սեփականություն առաջին հերթին տրամադրվում են տվյալ բնակավայրում բնակվող հիշյալ ձեռնարկությունների անդամներին և աշխատողներին, իսկ այնուհետև շրջկենտրոնի կամ քաղաքի վարչատարածքային կազմի

մեջ մտցված նախկին գյուղերի մշտական բնակիչներին՝ հաշվարկված հողաբաժնի չափով: Չբաժանված հողատեսքեր մնալու դեպքում դրանք տրամադրվում են տվյալ բնակավայրում բնակվող և գյուղացիական տնտեսություն վարելու ցանկություն ունեցող այլ քաղաքացիների, ապա նաև սույն հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ պարբերություններում հիշատակված անձանց:

Անօգտագործելի, չյուրացված և գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած պետական պահեստի համանման հողերից որպես սեփականություն արտոնյալ պայմաններով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք ցանկություն են հայտնում հիշյալ հողերի վրա վարելու գյուղացիական տնտեսություն:

Լքված գյուղերի նախկին հողահանդակները առաջին հերթին տրամադրվում են այդ գյուղերի Հայաստանի Հանրապետությունում բնակվող նախկին բնակիչներին, փախստականներին և աղետի գոտու այն բնակիչներին, ապա նաև Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, ովքեր ցանկություն են հայտնում տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել դրանցում: Հատուկ դեպքերում այդ հողերի հատկացման հարցը կարգավորվում է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովի կողմից:

Վարձակալական հիմունքներով օգտագործվող հողերը որպես սեփականություն տրամադրելիս այդ հողերի վարձակալները հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ, տվյալ բնակավայրի համար հաշվարկված հողաբաժնի չափով, կարող են ստանալ դրանք ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե հանդիսանում են տվյալ բնակավայրի մշտական բնակիչներ, կատարել են գյուղատնտեսական նպատակային կապիտալ ներդրումներ և չեն խախտել վարձակալական պայմանագրի պայմանները: Վարձակալների կողմից կատարված ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արոտավայրերը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին տրամադրվում են վարձակալական հիմունքներով՝ առաջին երկու տարիների ընթացքում ազատելով վարձավճարի մուծումից, եթե վարձակալության պայմանագիրը կնքվել է տասը տարի և ավելի ժամկետով:

Գյուղացիական տնտեսություն վարելու համար միջնորդություններ հարուցելու և դրանք քննարկելու կարգը որոշում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը:

Հոդված 7. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողամասերի չափերը

Հողային բարեփոխումների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը իրականացնում է հողահանդակների ամրակցում բուրր բնակավայրերին (այդ թվում նաև լքված գյուղական բնակավայրերին), ելնելով այն սկզբունքից, որ բնակավայրերին ամրակցվող հողահանդակների մեջ հնարավորին չափով ընդգրկվեն այդ բնակավայրերին ավանդաբար պատկանող հողերը և հնարավորության սահմաններում հողեր առանձնացվեն այն գյուղական բնակավայրերին, որոնք արհեստական ճանապարհով միացվել են քաղաքներին կամ վերակազմավորվել ավանների:

Բնակավայրերին ամրակցված վարելահողերի և այլ հողահանդակների միջին հաշվով քսան տոկոսը հողային բարեփոխումների և սեփականաշնորհման շրջանային (քաղաքային) հանձնաժողովի որոշմամբ թողնվում է որպես պետական պահեստային ֆոնդ և հողային բարեփոխումների սկզբնական փուլում ենթակա չէ սեփականաշնորհման:

Սույն օրենքի 7 հոդվածի տասնմեկերորդ մասում նշված այն անձինք, որոնք ծնողների հետ միասին ստացել են իրենց հողաբաժինները, հետագայում սեփականաշնորհման կարգով տնամերձ ստանալու իրավունք չունեն:

Սեփականաշնորհման կարգով տնամերձ չի հատկացվում այն անձանց, ովքեր 1986 թվականի հունվարի 1-ից հետո օտարել են կամ կօտարեն իրենց տնամերձները:

Որպես տնամերձ հատկացված հողի մի մասի օտարումը (բացառությամբ հայրական առանձին ընտանիքի առանձին ձևավորված ծխի) թույլատրվում է միայն այն պայմանով, եթե օտարվող և մնացող տնամերձերի չափերը պակաս չեն նրանց հատկացման պահին սահմանված չափերից:

Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն տրամադրվող հողամասի չափը որոշվում է ընտանիք (ծուխ)-անդամ (շունչ) հարաբերությամբ հետևյալ կարգով.

մինչև երեք անդամ (շունչ) ունեցող ընտանիքներին (ծխերին)–

մեկ հողաբաժին,

չորսից վեց անդամ (շունչ) ունեցող ընտանիքներին (ծխերին)-երկու հողաբաժին,

յոթ և ավելի անդամ (շունչ) ունեցող ընտանիքներին (ծխերին)-երեք հողաբաժին,

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը կարող է սահմանել որպես սեփականություն տրամադրվող հողամասի չափի որոշման արտոնություններ:

Երեք անդամից (շնչից) բաղկացած երիտասարդ ընտանիքներին (ծխերին) հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ կարող է հատկացվել տվյալ բնակավայրի համար հաշվարկված երկու հողաբաժին:

Հողամասեր հատկացնելիս նշված կարգը գործում է նաև առկա կոլտնտեսությունների և խորհրդատեսությունների հիման վրա գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ստեղծելիս:

Տնամերծ (օժանդակ) հողամասի չափը հաշվարկվում է հատկացվող հողաբաժնի մեջ:

Քսանմեկ տարին չլրացած այն անձինք, ովքեր ամուսնացած չլինելով կազմել են առանձին ընտանիք (ծուխ) սույն օրենքի ընդունման օրվան նախորդող մեկ տարուց պակաս ժամանակահատվածում, որպես անդամ (շունչ) հաշվվում են այն ընտանիքների ծխերի կազմում, որոնցից բաժանվել են: Ընտանիքի (ծխի) ամուսնացած և հայրական ընտանիքից (ծխից) դեռ չբաժանված անդամը իր ընտանիքի (ծխի) անդամների (շնչերի) հաշվով իրավունք ունի ստանալու առանձին հողաբաժին: Տվյալ բնակավայրում բնակվող ընտանիքի (ծխի) այն անդամը (անդամները), որը վերջինն է բաժանվել ընտանիքից (ծխից) կամ վերջինն է կազմել ընտանիք, հողաբաժին է ստանում ծնողների հետ միասին, եթե ծնողների ընտանիքում (ծխում) նրանից բացի ընտանիքի այլ անդամներ չեն բնակվում:

Ընտանիքի (ծխերի) ցուցակի վերջնական կազմումն ու ճշգրտումն իրականացնում է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովը:

Լեռնային և ծայրամասային գյուղական բնակավայրերի համար ընտանիքների (ծխերի) հաշվարկման կարգում Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը կարող է սահմանել արտոնություններ:

Խոտհարքները գյուղացիական տնտեսություններին որպես սե-

փականություն տրամադրվում են վարելահողերի հատկացման կարգով, եթե ընտանիքների (ծխերի) ներկայացուցիչ ժողովը ձայների երկու երրորդի մեծամասնությամբ նշված հողահանդակների բաժանումը համարում է տեխնոլոգիապես հնարավոր: Այդ դեպքում խոտհարքների հատկացումը կատարվում է ըստ ընտանիքների (ծխերի), դրանց կադրաստային գնահատականի լրիվ արժեքը հինգ տարիների ընթացքում վճարելու պայմանով:

Առանձին բնակավայրերի համար հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովը կարող է նախատեսել խոտհարքները տնօրինելու այլ կարգ:

Եթե ընտանիքների (ծխերի) ներկայացուցիչ ժողովը որոշում է ընդունում խոտհարքերը կոլեկտիվ հիմունքներով տնօրինելու մասին, ապա այդ հողերը մասնակի հատուցման արտոնյալ պայմաններով տրվում են ստեղծվող գյուղացիական կոլեկտիվ տնտեսության ընդհանուր սեփականությանը Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների սեփականությունը հանդիսացող հողամասերի առավելագույն չափերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից:

Հողված 8. Լուծարվող կոլտնտեսությունների, խորհրդատեսությունների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը

Լուծարվող կոլտնտեսությունների, խորհրդատեսությունների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի իրացումը առավելապես կատարվում է դրանց տեխնոլոգիական ամբողջականության պահպանմամբ:

Լուծարվող կոլտնտեսությունների հիմնական ֆոնդերի (անասնազլխաքանակի, տեխնիկական միջոցների, տեխնոլոգիական համալիրների և այլն) իրացումը կատարվում է հետևյալ հիմունքներով.

Եթե լուծարվող կոլտնտեսությունների անդամների ընդհանուր ժողովը ձայների երկու երրորդի մեծամասնության գրավոր համաձայնությամբ որոշում է ընդունում դրանք չբաժանելու մասին, ապա ստեղծվում է գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն՝ ցանկացած կազմակերպական ձևով, որի մեջ կարող են անդամագրվել ինչպես լուծարվող կոլտնտեսության ծխերը, այնպես էլ տվյալ բնակավայրի

մյուս ընտանիքները: Վերջիններիս համար անդամագրական վճարի չափը չպետք է պակաս լինի գյուղացիական կոլեկտիվ տնտեսության մեկ անդամի ունեցած բաժնեմասի դրամական գնահատականից: Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կանոնադրություններով կարող են նախատեսվել նաև տնտեսությունների մեջ անդամագրվելու առանձնահատուկ այլ պայմաններ:

Լուծարվող կոլտնտեսությունների համապատասխան հիմնական ֆոնդերը տրամադրվում են ստեղծված գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին: Նույն կարգով գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ձևավորվում են նաև առկա խորհրտնտեսությունների հիման վրա:

Իրացվող հիմնական ֆոնդերի դիմաց այս դեպքում կատարվում է վճարում դրանց մնացորդային արժեքի չափով և նախատեսվում է փոփոխությունների և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում այդ տնտեսություններին:

Եթե լուծարվող կոլտնտեսությունների անդամների ընդհանուր ժողովը որոշում է ընդունում անասնազխաքանակը բաժանելու մասին, ապա դրա բաժանումը ըստ ընտանիքների ծխերի կատարվում է պայմանագրային գնով՝ երեք տարով սահմանելով հատկացված անասնազխաքանակին համապատասխան կայուն բնամթերային հարկ: Ընտանիքին (ծխին) տրամադրվող անասնազխաքանակի նվազագույն չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը: Անասնազխաքանակի սեփականաշնորհման դեպքում հարկի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը, բայց ոչ ավելի, քան նախորդ հինգ տարիներին տնտեսությունից պետությանը մթերած արտադրանքի միջին տարեկան ծավալից: Անասնազխաքանակից բաժին ստացած ընտանիքից (ծխից) երկու տարվա ընթացքում գանձվում է համատեղ օգտագործվող անասնապահական շինությունների մնացորդային արժեքի և անասնազխաքանակի հարաբերությունից: Անասնապահական շինությունները, տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական համալիրները և մյուս գույքը, եթե որոշում է ընդունվում դրանք բաժանելու մասին, իրացվում են աճուրդային վաճառքի կարգով, առաջին հերթին տվյալ բնակավայրերի բնակիչներին կամ նրանց խմբերին: Աճուրդը հայտարարելուց հետո երեք ամսվա ընթացքում հիշյալ միջոցները և մյուս գույքը չիրացվելու դեպքում, դրանք նույն կարգով իրացվում են այլ քաղաքացիներին:

Աճուրդը հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում չիրացվելու դեպքում դրանք անհատույց տրամադրվում են ժողովրդական պատգամավորների համապատասխան տեղական խորհուրդների տնօրինությամբ:

Լուծարվող կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը կատարվում է համապատասխան լուծարքային հանձնաժողովի կողմից:

Լուծարվող կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների ընդհանուր նշանակության սոցիալ-մշակութային և կոմունալ օբյեկտները իրենց գույքով անհատույց հանձնվում են ժողովրդական պատգամավորների համապատասխան խորհրդին:

Լուծարվող կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների հիմնական ֆոնդերի և այլ գույքի իրացումից գոյացած միջոցների բաշխման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը:

Յոդված 9. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների իրավական պահպանությունը

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների իրավունքներն ու օրինական շահերը պահպանվում են օրենքով:

Գյուղացիական տնտեսության գույքը տիրապետվում, օգտագործվում և տնօրինվում է նրա անդամների համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների այն գույքը, որի վրա չի կարող բռնագանձում տարածվել պարտատերերի պահանջներով, սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: ...

... Յոդված 14. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների եկամտահարկը

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից առաջին երկու տարիների ընթացքում եկամտահարկ չի գանձվում:

Երրորդ տարվանից սկսած գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների եկամտահարկի չափը որոշվում է նորմատիվային կարգով, այն կիրառելով տնտեսության փաստացի զուտ եկամտի նկատմամբ այն հաշվով, որպեսզի վերջինս պակաս չլինի տվյալ տնտեսության հողամասի կադաստրային գնահատ-

մամբ որոշված զուտ եկամտից:

Լեռնային, ծայրամասային և լքված բնակավայրերում գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների համար Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվում և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից հաստատվում են եկամտահարկի գանձման արտոնություններ:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները մասնակի հատուցման չափի կամ եկամտահարկի մի մասը կարող են մուծել բնամթերքով՝ նախապես հաստատագրված գներով, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում աշխատանքային պայմանագրով աշխատող քաղաքացիներից գանձվող եկամտահարկի չափը որոշվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ:

Հոդված 15. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների բանկային և ապահովագրական սպասարկումը

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների վարկավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կողմից:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները պարտավոր են որևէ բանկում բացել հաշիվ՝ դրամական, վարկային, առևտրական գործառնությունների, դրամական միջոցների պահպանման ու տնօրինման համար:

Բոլոր տեսակի բանկերի հետ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հարաբերությունները կարգավորվում են բանկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները իրենց գույքը և առկա ու սպասվելիք բերքը ապահովագրում են կամավոր հիմունքներով:

Հոդված 16. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հաշվետվությունը և դրանց գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների

գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է հարկային քաղաքականության միջոցով, իսկ հողօգտագործման նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները վարում են տնտեսություններում կատարվող ծախսերի գրանցման և եկամուտների ձևավորման ու օգտագործման վերաբերյալ տեղեկագրեր:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները իրենց տարեկան գործունեության արդյունքների մասին ներկայացնում են հայտարարություն (հաշվետվություն) Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով:...

... Հոդված 18. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության դադարումը

Գյուղացիական տնտեսության գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված հիմքերով տվյալ տնտեսության հողի սեփականության իրավունքը դադարեցնելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ չի մնում տնտեսության գործունեությունը շարունակելու ցանկություն ունեցող անդամ:

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության գործունեությունը դադարում է նրա կանոնադրությամբ որոշված կարգով:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողերի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման, ինչպես նաև այդ տնտեսությունների գործունեությունը դադարեցնելուց հետո մնացած գույքի բաժանման վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:

Գերագույն խորհրդի նախագահ՝ **Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

22 հունվարի 1991 թվականի,
քաղ. երևան
Հ. Ն. 0242-1

Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 67-77:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկել 1991 թվականի փետրվարի 20-ից:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը «Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխանեցնելը հանրապետական օրենսդրության գործող ակտերը կիրառվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում օրենքին:

3. Այն բնակավայրերում, որտեղ ժողովրդական պատգամավորների համապատասխան խորհուրդները բացակայում են, հողամասերի հատկացման ձևի ընտրության և հողատկացման ֆունկցիաներն իրականացնում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման շրջանային հանձնաժողովները, իսկ այն բնակավայրերում, որտեղ իշխանության տեղական մարմինները դեռևս վերջնականապես ձևավորված չեն՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովները, որոնք կազմում են ընտրված ժողովրդական պատգամավորների համապատասխան շրջանային խորհուրդները:

4. Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի համար սահմանել երկամյա ժամկետ, սկսած 1991 թվականի փետրվարի 20-ից:

Սահմանել, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովներն իրենց գործունեությունը դադարեցնում են այդ ժամկետը լրանալու պահից և նրանց իրավասությունն անցնում է ժողովրդական պատգամավորների համապատասխան տեղական խորհուրդներին:

Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների գործունեությունը կարող է դադարեցվել սահմանված ժամկետից շուտ, համապատասխան վերադաս հանձնաժողովի որոշմամբ, եթե նրանք ավարտել են իրենց վրա դրված խնդիրների իրականացումը:

5. «Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ բաժինների այն դրույթները, որոնք ունեն ժամանակավոր կիրառություն, գործում են մինչև հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի ավարտը:

6. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու համար «Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածում սահմանված հաջորդականությանը համապատասխան, հողամասերը որպես սեփականություն ձեռք բերելու իրավունքն իրացվում է հետևյալ կարգով:

1991 թվականի փետրվարի 20-ից գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու մասին միջնորդությունները, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանված կարգով, 15-օրյա ժամկետում ներկայացվում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման համապատասխան հանձնաժողովներին, որոնք ներկայացված միջնորդությունները տարբերակում են հողամասերը սեփականության իրավունքով ձեռք բերելու՝ օրենքով սահմանված հաջորդականությանը համապատասխան: Նշված կարգով հողամասերը որպես սեփականություն ձեռք բերելու առաջնահերթ իրավունք ունեցողներին տրամադրելուց հետո, ազատ հողատեսքեր մնալու դեպքում, դրանք տրամադրվում են հաջորդ հերթերին, եթե դա չի հակասում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ու վարման տեխնոլոգիական հնարավորություններին: Հակառակ դեպքում, հաջորդ հերթերի կողմից հողի սեփականության իրավունքի իրացումը հետաձգվում է մինչև 1992 թվականի փետրվարի 1-ը, իսկ չբաժանված հողատեսքերը դասվում են պահեստային ֆոնդի հողերի շարքին և հողային բարեփոխումների ու սեփականաշնորհման համապատասխան հանձնաժողովների ներկայացմամբ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների կողմից տրամադրվում են վարձակալական հիմունքներով ժամանակավոր օգտագործման:

7. Տնամերձ հողամասերը հատկացվում են անհատույց, եթե

սահմանված կարգով ընտանիքները (ծխերը) ձևակերպվել են մինչև 1990 թվականի դեկտեմբերի 20-ը և դիմել տնամերձ ստանալու համար:

8. Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացն իրականացնելիս ելնել առկա, մասնավորապես կաթնատու անասնազլխաքանակի պահպանման անհրաժեշտությունից: Անասնազլխաքանակի մայրական կազմը պահպանելու նպատակով, անասնապահությանը զբաղվելու ցանկություն հայտնած գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և այլ տիպի տնտեսություններին վերապահել պահեստային ֆոնդի հողերի վարձակալման առաջնահերթ իրավունք, ինչպես նաև կերի բազայի ապահովման այլ հնարավորություններ:

9. Առանձին բնակավայրերի համար, որոնցում հաշվարկված հողաբաժնի փոքր չափերից ելնելով տեխնոլոգիապես հնարավոր չէ գյուղացիական տնտեսություն վարելը, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը կարող է ժամանակավոր սահմանափակումներ նախատեսել նշված նպատակով հողամասերը որպես սեփականություն տրամադրելիս՝ կիրառելով հողի սեփականության կոլեկտիվ ձևը: Գյուղացիական տնտեսություն վարելու համար տրամադրվող հողաբաժինների տեխնոլոգիապես թույլատրելի նվազագույն և առավելագույն չափերը սահմանում է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովը:

10. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների առանձին բնակավայրերում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման շրջանային հանձնաժողովի միջնորդությամբ կենտրոնական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել հողային բերափոխումների և սեփականաշնորհման գործընթացը հետաձգելու մասին:

11. Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն տրամադրվող հողաբաժնի առանձին կտորների առավելագույն թվաքանակը որոշում է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովը՝ ներկայացնելով վերադաս հանձնաժողովի հաստատմանը:

12. Լուծարվող կոլտնտեսությունների և խորհրդակցությունների միամյա մշակաբույսերով զբաղված հողերի նոր սեփականատերերը հողի սեփականություն ձեռք բերելու տարում պատասխանա-

տու են ցանքի պահպանման և բերքի հավաքման և մթերման գծով նախկին տնտեսությունների պարտավորությունների համար, որոնց ծավալը որոշվում է լուծարվող տնտեսությունների հողամասերի մեջ նոր սեփականատերերի հողաբաժինների տեսակարար կշռով և որոնք ենթակա են կատարման նոր պայմանագրային գնեթով:

13. Սահմանել, որ մինչև լուծարվող կոլտնտեսությունների ու խորհրդակցությունների առկա հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացման ավարտը նշված միջոցների պահպանության ապահովումն ու անհրաժեշտ աշխատանքների կազմակերպումն իրականացնում են նախկին տնտեսությունների ղեկավարներն ու համապատասխան հաստիքային աշխատողները՝ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների վերահսկողությամբ:

14. Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների օժանդակ տնտեսությունների և գյուղատնտեսական մթերքներ արտադրող ներտնտեսային կոոպերատիվների վրա տարածել խորհրդակցություններում և կոլտնտեսություններում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման իրականացման կարգը:

Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին մինչև 1991 թվականի փետրվարի 20-ը սահմանել նշված ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև ներտնտեսային կոոպերատիվների լուծարման դեպքում նրանց կողմից կատարված ծախսերի փոխհատուցման կարգը:

15. Շրջկենտրոններում և քաղաքներում գտնվող գյուղատնտեսական ձեռնարկությունների հողամասերը որպես սեփականություն տրամադրելիս մեկ հողաբաժնի չափը հաշվարկվում է ելնելով նրանից, որ այն չպետք է ավելի մեծ լինի տվյալ շրջանի համար հաշվարկված միջին հողաբաժնի չափից:

16. Իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին հողային բարեփոխումների և սեփականաշնորհման ընթացքում, առանձին դեպքերում, նախատեսել վարձակալական հիմունքներով տրամադրված հողամասերի օգտագործման այլ պայմաններ:

17. Կոլտնտեսությունների անդամների, խորհրդակցությունների աշխատողների և բնակավայրերի չափահաս բնակիչների ընդհանուր ժողովների իրավիման կարգն ու ժամկետները սահմանում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման շրջանային

հանձնաժողովները ժողովրդական պատգամավորների համապատասխան տեղական խորհուրդների հետ համատեղ:

18. Գյուղատնտեսական արտադրության մեջ հինգ և ավելի տարի աշխատող գյուղատնտեսության մասնագետները հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովների ներկայացմամբ կարող են որպես սեփականություն հողամաս ստանալ այն բնակավայրերի մշտական բնակիչների հետ հավասար իրավունքով, որտեղ աշխատում են, եթե նրանք ցանկություն են հայտնում մշտական բնակություն հաստատել տվյալ բնակավայրում:

19. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին մինչև 1991 թվականի փետրվարի 15-ը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել՝ լեռնային, ծայրամասային և լքված գյուղական բնակավայրերում հողմասերը որպես սեփականություն, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական հողատեսքերը երկրագործության նպատակով որպես սեփականություն տրամադրելիս արտոնություններ նախատեսող և այդ հողամասերի օտարման կարգը սահմանող օրենսդրական ակտի նախագիծ:

լեռնային, ծայրամասային և լքված գյուղական բնակավայրերում գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների համար եկամտահարկի գանձման գծով արտոնություններ սահմանող օրենսդրական ակտի նախագիծ:

առաջարկություն՝ որպես սեփականություն տրամադրվող հողամասերի համար մասնակի հատուցումից գոյացած միջոցների ծախսման նպատակային ուղղությունների մասին:

առաջարկություն՝ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների սեփականություն հանդիսացող առավելագույն չափերի մասին:

20. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին՝

մինչև 1991 թվականի փետրվարի 15-ը ապահովել «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրապետության կառավարության իրավասությանը վերապահված հարցերի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի ընդունումը:

մինչև 1991 թվականի փետրվարի 20-ը հանրապետության կա-

ռավարության որոշումները համապատասխանեցնել «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

մինչև 1991 թվականի փետրվարի 20-ը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխանեցնելու մասին:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի քարտուղար՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

4 փետրվարի 1991 թվականի,
քաղ. երևան
Հ. ն.-0251-1

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.),
երևան, 1995, էջ 67-77:*

№ 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ

(Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին)

Սույն օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիա-

լական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:

Հողի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ
ԳԼՈՒԽ 1**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. Հողային օրենսդրությունը և հողային հարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերը

1. Հողային օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները, սույն օրենսգիրքը և դրան համապատասխան ընդունված հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները (այսուհետ՝ օրենքներ):

2. Սույն օրենսգրքով և հողային հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով նախատեսված դեպքերում և շրջանակներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ընդունել հողային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր:

3. Սույն օրենսգրքով նախատեսված հողային հարաբերությունները կարգավորող օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) հողերին վերաբերող մասով հողային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի դրույթների հաշվառմամբ:

5. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից վարվերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նա-

խատեսված են սույն օրենսգրքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

ՀՈԴՎԱԾ 2. Հողային հարաբերությունների պետական կարգավորումը

1. Հողային հարաբերությունների պետական կարգավորումը ներառում է՝

1) հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը.

2) հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը.

3) հողային բարեփոխումների հայեցակարգի սահմանումը.

4) հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության սահմանումը.

5) հողերի բերրիության բարձրացման, օգտագործման և պահպանման, դրանց բնական գյուղատնտեսական շրջանցման հետ կապված գործունեության բնագավառում ծրագրերի և միասնական ներդրումային քաղաքականության իրականացումը.

6) հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը.

7) պետական սեփականության հողերի կառավարումը և տնօրինումը, պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերի օտարման, օգտագործման իրավունքով տրամադրելու կարգերի, հողամասի թույլատրելի օգտագործման սահմանումը և փոփոխումը.

8) քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողերը վերցնելը պետության կամ համայնքի կարիքների համար.

9) առանձին նպատակային նշանակության հողերի համար հատուկ իրավական ռեժիմի և օգտագործման նկատմամբ սահմանափակումների սահմանումը.

10) հողերի օգտագործման և պահպանման, բերրիության բարձրացման ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.

11) հողային պաշարների կառավարման լիազոր պետական

մարմինների (այսուհետ՝ կառավարման լիազոր մարմիններ) իրավասությունների և գործունեության կարգի, պետական կառավարման այլ մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց փոխհարաբերությունների սահմանումը:

12) հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հաստատումը:

13) հանրապետության ամենամյա հողային հաշվետվության հաստատումը և հրապարակումը:

14) անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը:

15) հողի վճարովիության սկզբունքների, հողի հարկի չափերի և հարկային արտոնությունների սահմանումը:

16) համայնքների և մարզերի վարչական սահմանների նկարագրության հաստատումը:

2. Հայաստանի Հանրապետության հողային պաշարների պետական կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) անմիջականորեն կամ կառավարման լիազոր մարմինների միջոցով:

3. Կառավարման լիազոր մարմիններն իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են անմիջականորեն և (կամ) իրենց տարածքային ստորաբաժանումների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 3. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում

Հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները՝

1) սահմանված կարգով կազմում են բնակավայրերի գլխավոր հատակագծերը և համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները:

2) սահմանված կարգով ու բնակավայրերի գլխավոր հատակագծերին, համայնքների վարչական սահմաններում ներառված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին համապատասխան տրամադրում ու հետ են վերցնում համայնքին և պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերը:

3) սահմանված կարգով տնօրինում են համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը:

4) իրականացնում են՝

- հողերի ընթացիկ հաշվառումը,
 - հողի հարկի և պետական ու համայնքային հողերի վարձավճարների գանձումը,
 - հսկողությունը հողամասերի օգտագործման, դրանց նկատմամբ սահմանափակումների պահպանման նկատմամբ,
 - օրենքով սահմանված այլ լիազորություններ:
- 5) աջակցում են՝
- հողերի պետական հաշվառմանը,
 - համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի պահպանության ապահովմանը,
 - բնապահպանական և պատմամշակութային նորմերի կիրառմանը և դրանց ուղղված միջոցառումների իրականացմանը,
 - անտառային հողերի օգտագործման սխեմաների հանրապետական և տարածքային նախագծերի իրականացմանը: ...

ԳԼՈՒԽ 14

...ՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂՎԱԾ 55. Պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերը

Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են:

Պետությունը կարող է սեփականության իրավունքով հողամասեր գնել համայնքներից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից:

ՀՈՂՎԱԾ 56. Քաղաքային և գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողերը

1. Քաղաքային և գյուղական համայնքների սեփականությանն են պատկանում տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը, բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերի:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, կառավարության որոշմամբ առանձնաց-

վում և հողամասի հատակագծի հիման վրա անհատույց սեփականության իրավունքով փոխանցվում են համայնքներին:

Համայնքի սեփականությանը կարող են պատկանել նաև համայնքի սահմանից դուրս գտնվող և համայնքի սեփականությանը հանձնված կամ համայնքի ձեռք բերած հողամասերը:

2. Քաղաքային, գյուղական համայնքների զարգացման համար պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող հողերից համայնքներին անհատույց սեփականության իրավունքով հողամասեր տրամադրել:

3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիներին, իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից դրանց սեփականատերերի հրաժարվելու կամ սույն օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված հիմքերով հողամասի նկատմամբ իրավունքը դադարելու դեպքում այդ հողամասերն օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են համայնքների սեփականությանը:

4. Տեղական ինքնակառավարման մարմինները Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կարող են համայնքի կարիքների համար վերցնել քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող հողամասերը դրանց շուկայական գնի հատուցմամբ:

5. Համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին՝ Քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենսգրքով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

6. Տարբեր համայնքների միջև համայնքային հողերի միավորումը, փոխանակությունը և վերաբաշխումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

7. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության շրջանակներում կարգավորում են հողային հարաբերությունները:

Տեղական ինքնակառավարման մարմնի՝ Քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենսգրքից և այլ օրենքներից բխող հողային հարաբերությունները կարգավորող ակտերը գործում են համայնքի ամբողջ տարածքում և պարտադիր են կատարման հողամասերի սեփականատերերի, օգտագործողների կողմից:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա համայնքներին սեփականության իրավունքով պատկա-

նող հողամասերը կարող են վաճառվել կամ տրվել քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով՝ քաղաքացիական օրենսգրքով և սույն օրենսգրքով սահմանված կարգով: ...

... ՀՈՂԱԿԵՆՆԵՐԻ ԴՆՈՒՄՆԵՐԻ ԴԱՏԱՆԱՎՈՐԵԳՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՅՈՒՄԱՆՆԵՐԸ

1. Հողամասերի մասնավորեցումը պետության և համայնքների սեփականության ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի տրամադրումն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց:

2. Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչև դրա ժամկետի լրանալը) իրավունքով գտնվող հողամասերը չեն կարող օտարվել այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել պայմանագիրը:

3. Հողամասը կարող է մասնավորեցվել դրա վրա գտնվող շենքի, շինության սեփականատիրոջը (սեփականատերերին):

4. Եթե շենքում, շինությունում (ներառյալ՝ ներկառույց-կցակառույց շենքերում, շինություններում) պահպանվում է պետական կամ համայնքային սեփականության բաժնեմասը, ապա հողամասը ենթակա չէ մասնավորեցման, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

5. Հողամասի սահմանները սեփականատիրոջ կամ օգտագործողի ցանկությամբ և նրանց միջոցների հաշվին կարող են տեղանքում սահմանված կարգով սահմանազատվել սահմանափակվելով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այգեգործական հողերի, որոնց սահմանների ամրացման կարգը սահմանում է պետական լիազորված մարմինը:

6. Տարբեր անձանց կողմից օգտագործվող մեկից ավելի օբյեկտներով զբաղեցված, տարածքային սահմաններով միջավորված հողամասը կարող է վաճառվել կամ ընդհանուր սեփականության իրավունքով հանձնվել սեփականության՝ հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության ռեժիմին ենթարկվելու մասին բոլոր դիմում ներկայացնողների պարտավորությունները պայմանագրում ներառելու պայմանով, եթե նրանք համաձայնության են եկել հողամասի նկատմամբ իրավունքում իրենց բաժինների մասին և համաձայնագիրը ձևակերպել են պայմանագրով:

7. Մասնավորեցվող հողամասի տարածքները պետք է այնպես ճշգրտվեն, որպեսզի առավելագույնս բացառվի սերվիտուտներ սահմանելու անհրաժեշտությունը:

8. Հայաստանի Հանրապետության սահմանային գետերի ու ջրավազանների առափնյա շերտի լայնությունը, որը ենթակա չէ մասնավորեցման, որոշվում է «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով:

9. Պետության և համայնքների բյուջետային և պետական հիմնարկների զբաղեցրած հողամասերի վաճառք չի թույլատրվում մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը:

10. Արգելվում է այն արտադրական օբյեկտների հողամասերի մասնավորեցումը, որոնք բնապահպանական և սոցիալական ծրագրերով պետք է հանվեն բնակավայրերի սահմանագծից կամ տեղափոխվեն այլ վայր:

11. Կառուցապատված հողամասերի փոխանցումը սեփականության իրավունքով իրականացվում է քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան՝ նախատեսվող նպատակային նշանակության հաշվառմամբ:

Հողամասի ընթացիկ օգտագործումը նախատեսվածին չհամապատասխանելու դեպքում մասնավորեցում չի կատարվում:

12. Մինչև համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը մասնավորեցման ենթակա չեն այն վիճելի հողամասերը, որոնց նկատմամբ իրականացվում է դատական վարույթ:

Արգելքը վերաբերում է նաև հողամասի վրա գտնվող շենքերի, շինությունների պատկանելության մասին դատական վեճերի դեպքերին:

13. Հողամասի մասնավորեցման համար քաղաքացին կամ իրավաբանական անձը պարտավոր է ներկայացնել՝

1) հողամասի վրա գտնվող շենքի, շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ փաստաթուղթը, եթե հողամասը կառուցապատված է.

2) հողամասի օգտագործման իրավունքի գրանցման փաստաթղթերը.

3) սահմանված կարգով կազմված հողամասի հատակագիծը.

4) հողամասի վրա գտնվող շենքի, շինության բոլոր սեփականատերերի դիմումները:

ՀՈՂԱԾ 63. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերի օտարումը

Պետության և համայնքների սեփականության հողամասերն օտարվում են օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար: Օտարման ենթակա հողամասերը որոշվում են հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի հիման վրա:

Պետության սեփականության հողամասերն օտարվում են՝

- 1) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.
- 2) ուղղակի վաճառելու միջոցով.
- 3) աճուրդով: ...

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝ Ռ. Քոչարյան

4 հունիսի 2001 թվականի,
քաղ. Երևան

*Հայաստանի գործող օրենքների ժողովածու. 2001 թ.
գ. 7. Երևան, 2001 թ., էջ 169-223:*

№ 22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆԱԿԱՐՏ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ
ԵՎ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետությունում արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների փոխակերպման կազմակերպական-իրավական հիմքերը՝ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման միջոցով արդյունավետ շուկայական տնտեսություն ստեղծելու համար:

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը կարգավորում է պետական (իշխանության տեղական մարմինների) ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման իրավահարաբերությունները:

Սույն օրենքը սահմանում է պետական (իշխանության տեղական մարմինների) ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման օբյեկտները, սուբյեկտները, ձևերը, կարգն ու պայմանները:

Օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների, կոլեկտիվ կամ խառը սեփականության վրա հիմնված ձեռնարկություններում Հայաստանի Հանրապետության պետական բաժնեմաս հանդիսացող գույքային համալիրների, ինչպես նաև անավարտ շինարարության օբյեկտների վրա:

Օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված հասարակական-քաղաքական և հասարակական կազմակերպություններին պատկանող ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների, դրանցում այդ կազմակերպությունների բաժնեմաս հանդիսացող գույքի, ինչպես նաև պետական գույքը այլ պետություններին և միջազգային կազմակերպություններին օտարելուց բխող այն իրավահարաբերությունների վրա, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում դրանց ներկայացուցչական ֆունկցիաները կատարելու հետ:

Հողային և բնակարանային ֆոնդերի, անվճար ծառայությունների ոլորտների, ինչպես նաև մշակութային և պատմական արժեք ներկայացնող օբյեկտների սեփականաշնորհման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների և ձեռնարկությունների կողմից գույքային համալիր չհանդիսացող պետական գույքի առանձին օբյեկտների օտարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերով: ...

... Հոդված 5. Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման ծրագիրը

1. Սեփականաշնորհման և ապապետականացման ընթացիկ փուլի նպատակները, նախապատվությունները և սահմանափակումները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման ամենամյա ծրագրով:

Ծրագրի նախագիծը ծրագրի գործադրմանը նախորդող տարվա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության նախագահը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը մինչև ծրագրի գործադրման տարվա սկիզբը որոշում է կայացնում ծրագիրն ընդունելու մասին:

2. Ծրագրի նախագիծը որոշվում է առաջիկա մեկ տարվա համար և բովանդակում է սեփականաշնորհման և ապապետականացման այդ տարվա առաջադրանքները, հիմնական ուղղությունները հաջորդ երկու տարվա ծրագրի կատարման վերլուծությունը:

Ծրագրի նախագիծը պետք է բովանդակի.

ա) սեփականաշնորհվող և ապապետականացվող ձեռնարկությունների ու անավարտ շինարարության օբյեկտների ընտրության սկզբունքները.

բ) տնտեսության այն ճյուղերն ու ոլորտները (առանձին դեպքերում նաև ձեռնարկություններն ու անավարտ շինարարության օբյեկտները), որոնցում սեփականաշնորհում կամ ապապետականացում առաջիկա տարում չի նախատեսվում.

գ) պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների ցանկը ըստ տնտեսության ճյուղերի և ոլորտները, որոնք նախատեսված են սեփականաշնորհման առաջիկա տարում, առանձին նշելով՝ այն ձեռնարկությունները, որոնց սեփականաշնորհումը իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ բաժնետոմսերին ազատ բաժանորդագրությամբ.

այն ձեռնարկությունները, որոնց սեփականաշնորհումը կատարվում է նրանց աշխատավորական կոլեկտիվների և այլ անձանց

նախաձեռնությամբ.

դ) սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկման ծավալը, սերտիֆիկատներ ձեռք բերելու իրավունք ունեցող անձանց, սերտիֆիկատների թողարկման, բաշխման, շրջանառության և փոխանակման կարգը, սերտիֆիկատների անվանական արժեքը և դրանք ստանալու վճարի չափը.

ե) տարածամեկտ վճարումների սանդղակը ըստ սեփականաշնորհվող ձեռնարկությունների արժեքի՝ առանձին «փոքր» օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների համար.

զ) սեփականաշնորհման և ապապետականացման գործում օտարերկրյա ներդրումների օգտագործման և օտարերկրացիների մասնակցության պայմանները.

է) պետական մասնակցությամբ ձեռնարկությունների (այլ ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման դեպքում), շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական և այլ հասարակական հիմնադրամների սեփականաշնորհմանը և ապապետականացմանը մասնակցելու պայմանները.

ը) սեփականաշնորհման և ապապետականացման համար անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումների բովանդակությունը.

թ) սեփականաշնորհման և ապապետականացման ընթացքում գտնվող ձեռնարկությունների նկատմամբ նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման տեղական մարմինների իրավասությունների սահմանափակումները.

ժ) սեփականաշնորհումից և ապապետականացումից առաջիկա տարում ստացվելիք միջոցների օգտագործման բնագավառները և բաշխման գործակիցներն ըստ օգտագործման բնագավառների.

ժա) սեփականաշնորհումից և ապապետականացումից ստացվելիք միջոցները Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության, պետական բյուջեի և իշխանության տեղական մարմինների միջև բաշխելու գործակիցները:

ժբ) պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական, իրավական, տեխնիկական ու ֆինանսական միջոցառումները:

Անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության պահանջով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հաստատմանն է ներկայացնում սեփականաշնորհվող ձեռնարկությունների ցանկն ըստ առանձին ճյուղերի, ենթաճյուղերի և տարածքների:

3. Տվյալ տարվա սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրով սեփականաշնորհման համար նախատեսված ձեռնարկությունները և անավարտ շինարարության օբյեկտները, եթե դրանք տարբեր պատճառներով դեռ չեն սեփականաշնորհվել կամ դրանց սեփականաշնորհումը դեռ չի ավարտվել, չեն կարող հաջորդ տարիների ծրագրերում տեղափոխվել այն ձեռնարկությունների ցանկը, որոնց սեփականաշնորհումը առաջիկա տարում չի նախատեսվում: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունները և անավարտ շինարարության օբյեկտները չեն կարող տեղափոխվել որևէ այլ ցանկ:

4. Ծրագրով նախատեսված սեփականաշնորհվող և ապապետականացվող ձեռնարկությունների ցանկերում կատարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ, որոնց նախագծերը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քննարկմանն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից: Դրանք հաստատվելուց հետո համապատասխանաբար ավելացվում է սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկման ծավալը:

Չորրված 6. Սեփականաշնորհման և ապապետականացման սուբյեկտները

1. Սեփականաշնորհման (պետական գույքի ձեռքբերման) սուբյեկտներ են՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և քաղաքացիների խմբերը, այդ թվում սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները.

ոչ պետական ձեռնարկությունները.

պետական մասնակցությամբ ձեռնարկությունները՝ այն դեպքում, եթե սեփականաշնորհվում է տվյալ ձեռնարկության պետական սեփականություն հանդիսացող մասը.

օտարերկրյա անձինք:

2. Ապապետականացման (իրավունքի ձեռքբերման) սուբյեկտներն են՝ ապապետականցվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և քաղաքացիների խմբերը.

ոչ պետական ձեռնարկությունները.

պետական մասնակցությամբ ձեռնարկությունները՝ այն դեպքում, եթե ապապետականացվում է տվյալ ձեռնարկության պետական սեփականություն հանդիսացող մասը.

օտարերկրյա անձինք:

3. Պետական մասնակցությամբ ձեռնարկությունները (այլ ձեռնարկությունների սեփականաշնորհման կամ ապապետականացման դեպքում), շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական և այլ հասարակական հիմնադրամները սեփականաշնորհմանը և ապապետականացմանը կարող են մասնակցել այն դեպքում, եթե այդ մասին նշված է ծրագրում:

4. Քաղաքացիները, նրանց խմբերը, այդ թվում՝ սեփականաշնորհվող պետական ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները, հանդես են գալիս որպես սեփականաշնորհման սուբյեկտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձ հանդիսացող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն ստեղծելուց հետո՝ բացառությամբ սույն օրենքի 10 հոդվածի առաջին մասի «ա» և «գ» կետերով նախատեսված դեպքերի, ինչպես նաև սույն օրենքի 10 հոդվածի առաջին մասի «ը» կետով նախատեսված դեպքի, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան չի նախատեսված:

Քաղաքացիները, նրանց խմբերը, այդ թվում սեփականաշնորհվող պետական ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները ապապետականացմանը մասնակցելու համար սույն օրենքով սահմանված կարգով պետք է ստեղծեն համապատասխան ձեռնարկություն:

5. Սեփականաշնորհվող ձեռնարկության աճուրդին, մրցույթին, բաժնետոմսերի բաժանորդագրությանը, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերով սահմանված սեփականաշնորհման այլ ձևերին, ինչպես նաև ապապետականաց-

մանը մասնակցելու համար իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հայտ են ներկայացնում սեփականաշնորհումը կամ ապապետականացումը իրականացնող պետական լիազորված մարմնին, որտեղ նշում են տեղեկություններ այդ ձեռնարկությունների սեփականատիրոջ (սեփականատերերի) և կանոնադրական հիմնադրամի նրա բաժնեմասի (բաժնեմասերի վերաբերյալ:

6. Սեփականաշնորհման հետևանքով սեփականության իրավունք ձեռք բերած, ինչպես նաև ապապետականացման հետևանքով պետական գույքի տիրապետման կամ տիրապետման և օգտագործման իրավունք ստացած օբյեկտների վրա չեն տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նորաստեղծ ձեռնարկությունների համար սահմանված հարկային արտոնությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ նորաստեղծ ձեռնարկությունը սեփականաշնորհման սուբյեկտ է դարձել լուծարված պետական ձեռնարկության գույքի սեփականաշնորհման հետևանքով:

7. Ազգայնացված, բռնագրավված կամ այլ ձևով պետականացված ձեռնարկությունների նախկին սեփականատերերը, նրանց ժառանգները, իրավահաջորդները, այդ ձեռնարկությունների սեփականաշնորհմանը մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

Հոդված 7. Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների ձեռքբերման համար օգտագործվող միջոցները

Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների ձեռքբերման համար օգտագործվում են քաղաքացիների եկամուտները և խնայողությունները, իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների եկամուտները, սեփականաշնորհման սերտիֆիկատները, իսկ ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամների սեփականատեր դառնալու դեպքում՝ տվյալ ձեռնարկության տնտեսական խրախուսման ֆոնդերը: Քաղաքացիները, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները կարող են օգտվել նաև վարկային կամ այլ փոխառու միջոցներից:

Սեփականաշնորհվող գույքի ձեռքբերման համար օգտագործվող վերը նշված միջոցները հավասարազոր են և ընդունման համար

պարտադիր Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Արգելվում է այդ միջոցների՝ որպես սեփականաշնորհվող գույքի համար վճարման միջոց, օգտագործման վրա որևէ սահմանափակում դնելը, եթե դրանք սահմանված չեն սույն օրենքով կամ ծրագրով:

Ծրագրով նշված դեպքերում որոշ օբյեկտների համար որպես վճարման միջոց օգտագործվում է միայն օտարերկրյա փոխարկելի արժույթը:

7ոդ ված 8. Սեփականաշնորհման սերտիֆիկատներ

Ելնելով ծրագրից և Հայաստանի Հանրապետության նախագահի համապատասխան հրամանագրից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը թողարկում է սեփականաշնորհման սերտիֆիկատներ: Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Հայաստանի Հանրապետության բռնադատված քաղաքացիներ ունի մեկ հավելյալ սերտիֆիկատ ստանալու իրավունք: Սեփականաշնորհման բնագավառում անչափահասների իրավունքները իրականացնում են ծնողները կամ նրանց իրավունքների և շահերի օրինական ներկայացուցիչները:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու կարգը, պայմանները և թողարկման ծավալը սահմանվում է ծրագրով: Սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկման ծավալը պակաս չպետք է լինի այդ ծրագրով սեփականաշնորհման համար նախատեսված պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների արժեքի 30 տոկոսից:

Սեփականաշնորհման սերտիֆիկատների գործողության ժամկետը սեփականաշնորհման ծրագրերով նախատեսված ժամանակահատվածում չի սահմանափակվում:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու փաստը վավերացվում է համապատասխան նշումով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթղթում:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները դրանք ստանալու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև բաշխվում են հավասարաչափ և առանց վճարելու դրանց անվանական արժեքի համար: Սերտիֆիկատներ ստանալու վճարի չափը սահմանվում է ծրագրով ելնելով դրանց տպագրության, բաշխման, շրջանառության և փոխանակման ծախսերը փոխհատուցելու

անհրաժեշտությունից:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները ունեն անվանական արժեք, որը հայտարարվում է Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամական միավորով: Սեփականաշնորհման սերտիֆիկատները օրինական վճարման միջոց են սեփականաշնորհվող գույքի, բաժնեմասի կամ բաժնետոմսի համար և Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են ընդունման միայն անվանական արժեքով և դրանց գործողության ժամկետներում:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները ենթակա են ազատ առուծախի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով՝ ինչպես դրանց տերերի, այնպես էլ միջնորդ կազմակերպությունների կողմից ազատ ձևավորվող գներով:

Մեկ անձի կողմից տնօրինվող սեփականաշնորհման սերտիֆիկատների քանակը չի սահմանափակվում:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները ենթակա չեն ետ-զնման պետության կողմից և պետությունը, պետական կազմակերպություններն ու ձեռնարկությունները չեն կարող մասնակցել սեփականաշնորհման սերտիֆիկատների առուծախին:

Սեփականաշնորհման համար ցանկացած վճարման միջոց ծառայած սեփականաշնորհման սերտիֆիկատները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս են բերվում շրջանառությունից և մարվում: ...

... 7ոդ ված 9. Ձեռնարկությունների սեփականաշնորհմանը մասնակցելու աշխատավորական կոլեկտիվների իրավունքը

Սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող անձինք ունեն դրա գույքը ձեռք բերելու հավասար իրավունքներ: Սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները սեփականաշնորհմանը կարող են մասնակցել ընդհանուր հիմունքներով: Միաժամանակ աշխատավորական կոլեկտիվին տրվում են հետևյալ արտոնությունները.

ա) սեփականաշնորհվող գույք ձեռք բերելու նախապատվություն այլ գնորդների նկատմամբ: Սույն արտոնությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ սեփականաշնորհվող ձեռնարկությունների աշխատավոր-

րական կոլեկտիվների վրա.

բ) սեփականաշնորհվող գույքը այլ անձանց կողմից ձեռք բերելու կամ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության դեպքում աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի կամ կոնֆերանսի) որոշմամբ աշխատավորական կոլեկտիվին վերապահվում է գույքի արժեքի որոշակի մասը, բայց ձեռնարկության գույքի վերագնահատված արժեքի 20 տոկոսից ոչ ավելի չափով: Սույն արտոնությունը չի տարածվում աճուրդով կամ մրցույթով վաճառվող «փոքր» օբյեկտների վրա.

գ) տարածանկետ վճարում ձեռք բերվող գույքի և ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամներին վերապահվող գույքի բաժնեմասի համար՝ ծրագրով հաստատված սանդղակով.

դ) պետական ձեռնարկության տնտեսական խրախուսման ֆոնդերի մնացորդների հաշվին բաժնեմասերի կամ բաժնետոմսերի արժեքի վճարման իրավունք՝ վճարման պահին ձեռնարկությունում աշխատող սեփականաշնորհմանը մասնակցած աշխատավորական կոլեկտիվի անդամների քանակի համամասնությամբ.

ե) առաջին վճարի չափի կրճատում երկու անգամ կամ տարածանկետ վճարման ժամկետի երկարացում 50 տոկոսով՝ աղետի գոտում և հեռավոր սահմաններձ շրջաններում գտնվող սեփականաշնորհվող ձեռնարկությունների համար: Աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի կամ կոնֆերանսի) որոշմամբ տրվում է այդ արտոնություններից միայն մեկը.

զ) իրենց հասանելիք բաժնեմասի վճարման զեղչեր՝ պատերազմների մասնակիցների և երրորդ կարգի հաշմանդամների համար՝ արժեքի 40 տոկոսի չափով, երկրորդ կարգի հաշմանդամների համար՝ 50 տոկոսի չափով, առաջին կարգի հաշմանդամների համար՝ 60 տոկոսի չափով: ...

....III. ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 22. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման ձևերը

1. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը իրականացվում է՝

ա) աճուրդով կամ մրցույթով վաճառելու ձևով.

բ) գույքը օտարելով աշխատավորական կոլեկտիվի կամ այլ անձանց կողմից կազմված տնտեսական ընկերակցություններին, սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերություններին.

գ) ձեռնարկության բաժնեմասերը կամ բաժնետոմսերը վաճառելու ձևով.

դ) վարձակալած գույքը վարձակալի կողմից ետ գնելու ձևով.

ե) ձեռնարկության ոչ պետական սեփականատերերի կողմից պետական բաժնեմասը ետ գնելու ձևով:

2. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման ձևի ընտրության մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով և ելնելով ծրագրից, կայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ: ...

... Հոդված 25. Սեփականաշնորհվող ձեռնարկության գինը և վճարման ձևերը

1. Պետական ձեռնարկության գինը նրա գույքագրման և տարեկան հաշվեկշռի հիման վրա որոշում է Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Այդ գնով ձեռնարկությունները սույն օրենքով սահմանված կարգով առաջարկվում են իրենց աշխատավորական կոլեկտիվներին: Այդ գները մեկնարկային են ձեռնարկությունները աճուրդով մրցույթով սեփականաշնորհելու ժամանակ:

2. «Փոքր» օբյեկտների գները հաշվարկվում են ելնելով դրանց գույքի վերագնահատված արժեքից և զբաղեցրած տարածքից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի կողմից հաստատված տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցների մեծության հիման վրա:

3. Ծրագրում սահմանված առավել արժեքավոր և արտաքին շուկայում առավել բարձր մրցունակություն ունեցող արտադրանքը թողարկող ձեռնարկությունների մեկնարկային գինը որոշելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է իրավիճակը օտարերկրյա փորձագետներ կամ մասնագիտացված

կազմակերպություններ:

4. Ձեռք բերվող պետական ձեռնարկությունների գույքի բաժնեմասերի համար վճարումը կարող է իրականացվել միանվագ կամ տարաժամկետ: Գնման իրավունքով վարձակալության դեպքում պետական ձեռնարկության գույքի գնումը համարվում է տարաժամկետ վճարում:

Վարձակալությամբ տրված պետական ձեռնարկությունների գույքի համար վարձակալական վճարը չի կարող համարվել պետական գույքի գնման վճար և հանդես գալ որպես այդպիսին:

Վճարման ձևը և վճարման պայմանները, ելնելով ծրագրից, Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պողոթն 26. Աշխատավորական կոլեկտիվի հիման վրա ստեղծված ընկերություններին պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման կարգը

1. Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի համար պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման հարցը քննարկելու հիմք է հանդիսանում աշխատավորական կոլեկտիվի հիման վրա ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ և փակ բաժնետիրական ընկերությունների սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտը:

2. Աշխատավորական կոլեկտիվի նախաձեռնությամբ ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ և փակ բաժնետիրական ընկերություններին պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը կայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ:

3. Աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը կամ կոնֆերանսը) ընտրում է նախաձեռնող խումբ, որին իրավունք է տալիս ներկայացնել կոլեկտիվը ընկերություն ստեղծելիս ու սեփականաշնորհումն իրականացնելիս և կատարել համապատասխան գործողություններ: Աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը, կոնֆերանսը) ձայների

3/4-ի մեծամասնությամբ նախաձեռնող խմբի անդամների համար կարող է սահմանել նրանց մասնակցության չափը ապագա ընկերության մեջ, ինչպես նաև նախաձեռնող խմբի կազմի մեջ ընդգրկել սեփականաշնորհման իմաստով տվյալ ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամ չհանդիսացող անձանց, որոնց թիվը չպետք է գերազանցի նախաձեռնող խմբի 1/3-ից, բայց 3 հոգուց ոչ ավելի: Իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները չեն կարող լինել նախաձեռնող խմբի անդամներ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան չի նախատեսված:

4. Պետական ձեռնարկության սեփականաշնորհման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելուց հետո, տվյալ աշխատավորական կոլեկտիվի հիման վրա ստեղծվող ընկերության նախաձեռնող խումբը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռնամուխ է լինում ընկերության ստեղծմանն ու գրանցմանը: Ընկերությունը սահմանված կարգով գրանցվելուց հետո, պաշտոնապես դիմում է Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությանը՝ ձեռնարկության գույքը վերագնահատելու համար:

5. Աշխատավորական կոլեկտիվի հիման վրա սահմանափակ պատասխանատվությամբ և փակ բաժնետիրական ընկերություններ կարող են ստեղծվել նաև պետական ձեռնարկությունների բաժանմունքների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հաշվարկային հաշիվ չունեցող այլ առանձնացված (ոչ սպասարկող) ստորաբաժանումների հիման վրա, այդ թվում նաև վարձակալության տրված, եթե վերջիններիս առանձնացումը բացասաբար չի անդրադառնա հիմնադիր ձեռնարկության գործունեության վրա: Այս դեպքում գործում է սույն հոդվածով սահմանված կարգը:

6. Ընկերության ցանկությամբ առաջին վճարումը կարող է հաշվարկվել ելնելով սեփականաշնորհվող պետական ձեռնարկության հաշվեկշռային արժեքից, անկախ նրա գույքի վերագնահատված արժեքից: Առաջին վճարման տոկոսադրույքը որոշում է նորաստեղծ ընկերության ընդհանուր ժողովը, բայց ոչ պակաս տվյալ ձեռնարկության սեփականաշնորհման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ նշված տոկոսադրույքից: Այդ դեպքում տվյալ պետական ձեռնարկության գույքի վերագնա-

հատված և հաշվեկշռային արժեքների տարբերությունը գումարվում է (հանվում է) հեռակա վճարումներին և գանձվում է նրանց հետ միասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պետական ձեռնարկության շահույթի, ինչպես նաև աշխատանքի վարձատրմանն ուղղված միջոցների մնացորդները (բացառությամբ պահեստային ֆոնդի կարող են օգտագործվել որպես ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամների համար ստեղծված ընկերության բաժնեմասերի կամ բաժնետոմսերի ձեռքբերման աղբյուր:

Բաժնեմասերի և բաժնետոմսերի գումարը այդ միջոցների, այդ թվում տնտեսական խրախուսման ֆոնդերի հաշվին (այնտեղ, որտեղ վերջիններս ձևավորված են) կատարվում է պետական ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի գրավոր համաձայնությամբ, իսկ կոլեկտիվի անդամների միջև բաշխումը՝ համամասնությամբ: Բաժնեմասերի և բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված նշված միջոցները եկամտահարկով չեն հարկվում:

Պետական ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի այն անդամները, որոնք համաձայն չեն օգտագործել նշված միջոցների գումարները բաժնեմասերի և բաժնետոմսերի ձեռքբերման համար, սահմանված կարգով օգտվում են համապատասխան եկամուտներ ստանալու իրենց իրավունքներից:

8. Պետական ձեռնարկությունների պահեստային, ինչպես նաև այլ ֆոնդերի (արտադրական, սոցիալական զարգացման և այլն) միջոցները հանդիսանում են պետական սեփականություն և տնօրինվում են ելնելով տվյալ ձեռնարկության սեփականաշնորհման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումից: Որոշմամբ սահմանված կարգով կարող է նախատեսվել նշված ֆոնդերի մնացորդի լրիվ վերադարձը պետությանը կամ բաշխումը ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամների միջև՝ նորաստեղծ ընկերության բաժնեմասեր և բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով: Նշված կարգով սահմանվում են նաև այն լրացուցիչ պայմանները, որոնց կատարման դեպքում հնարավոր է այդ ֆոնդերի մնացորդի բաշխումը ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամներին:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշ-

մամբ սահմանված ժամկետում աշխատավորական կոլեկտիվի մեղքով ձեռնարկության չսեփականաշնորհվելու դեպքում Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովն իրավասու է որոշում նախապատրաստել սույն օրենքով սահմանված կարգով տվյալ ձեռնարկությունն այլ անձանց սեփականաշնորհելու մասին:

Չոդված 27. «Փոքր» օբյեկտների սեփականաշնորհման կարգը

1. «Փոքր» օբյեկտների աշխատավորական կոլեկտիվներն ունեն այդ օբյեկտների սեփականաշնորհման նախապատվության իրավունք:

2. Ծրագրով Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սեփականաշնորհման համար նախատեսված «փոքր» օբյեկտները Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը գրավոր առաջարկում է դրանց աշխատավորական կոլեկտիվներին:

3. Գրավոր առաջարկն ստանալուց հետո, 20 օրվա ընթացքում, աշխատավորական կոլեկտիվը Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությանը պետք է ներկայացնի գրավոր համաձայնություն օբյեկտը նշված արժեքով գնելու մասին և ընդհանուր ժողովի որոշումը՝ այդ նպատակով տնտեսական ընկերակցություն կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին, ինչպես նաև մուծի կանխավճար՝ օբյեկտի արժեքի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի կողմից նշանակված գումարն է:

Նշված ժամկետում գրավոր համաձայնությունը չներկայացնելու և կանխավճարը չմուծելու դեպքում կոլեկտիվը զրկվում է սեփականատեր դառնալու իրավունքից:

4. Բաժնետոմսերի բաշխումը աշխատավորական կոլեկտիվի անդամների միջև իրականացվում է կոլեկտիվի անդամների (սեփականատերերի) որոշմամբ: «Փոքր» օբյեկտը կարող է սեփականաշնորհվել աշխատավորական կոլեկտիվին, եթե նրա հաստիքացուցակային կազմի առնվազն 51 տոկոսը ցանկություն է հայտնել դառալ սեփականատեր: Ընդ որում երկուսից ավելի աշխատողների

հաստիքացուցակային կազմ ունեցող օբյեկտներում յուրաքանչյուրի ավանդի չափը չպետք է գերազանցի օբյեկտի գնահատված արժեքի 40 տոկոսից, իսկ երկու աշխատողների հաստիքացուցակային կազմի դեպքում՝ չափերը է պակաս լինի 20 տոկոսից: Նվազագույն ավանդի չափը չպետք է փոքր լինի՝

մանրածախ առևտրի օբյեկտներում՝ օբյեկտի գնահատված արժեքի 2 տոկոսից:

այլ «փոքր» օբյեկտներում՝ օբյեկտի գնահատված արժեքի մեկ տոկոսից:

5. Տվյալ օբյեկտը նրա աշխատավորական կոլեկտիվին սեփականաշնորհելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կայացվելուց հետո աշխատավորական կոլեկտիվը պարտավոր է 30 օրվա ընթացքում սեփականաշնորհման հատուկ հաշվին փոխանցել օբյեկտի ամբողջ արժեքը, կամ, ցանկության դեպքում, ծրագրով «փոքր» օբյեկտների համար սահմանված տարածամեծ վճարումների սանդղակով օբյեկտի արժեքի համապատասխան մասը՝ հաշվի առնելով կանխավճարը: Նշված ժամկետում փոխանցում չկատարելու դեպքում կոլեկտիվը զրկվում է սեփականատեր դառնալու իրավունքից և կանխավճարը չի վերադարձվում:

6. Տարածամեծ վճարման դեպքում ամեն հերթական վճարից հետո օբյեկտի արժեքի մնացած մասը մուծվում է հավասար մասերով տարին մեկ անգամ: Գնորդը ցանկացած ժամանակ կարող է մուծել մնացած ամբողջ գումարը: Հերթական վճարման ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հաշվի է առնվում սեփականաշնորհվող գույքի գների փոփոխման ինդեքսը:

7. Եթե «փոքր» օբյեկտն ունի տնտեսական խրախուսման ֆոնդի մնացորդ, ապա աշխատավորական կոլեկտիվին սեփականաշնորհելու դեպքում այն կարող է օգտագործվել որպես վճար սեփականաշնորհվող գույքի համար՝ տվյալ ընկերակցության կամ ընկերության անդամներ դարձած աշխատակիցներին հասանելիք մասով:

8. Վերը նշված պատճառներով աշխատավորական կոլեկտիվին «փոքր» օբյեկտները չսեփականաշնորհելու դեպքում աշխատավորական կոլեկտիվը զրկվում է իր նախապատվության իրավունքից և Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապասպե-

տականացման պետական հանձնաժողովի որոշմամբ դրանց սեփականաշնորհումը կարող է իրականացվել աճուրդի կամ մրցույթի ձևով: Որպես կանոն, մրցույթին պետք է նախորդի աճուրդը, սակայն Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապասպետականացման պետական հանձնաժողովն իրավասու է որոշելու օբյեկտը միանգամից սեփականաշնորհել մրցույթի ձևով:

Հոդված 28. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման ձևերը

Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ սեփականաշնորհվող ձեռնարկությունների մրցույթով կամ փակ արժույթով վաճառքի մասին տեղեկությունները կայանալիք մրցույթից, աճուրդից, բաժնետոմսերի բաժանորդագրությունից կամ ազատ վաճառքից առնվազն մեկ ամիս առաջ հրապարակվում են մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով:

Պարտադիր հրապարակման են ենթակա սեփականաշնորհվող ձեռնարկության մասին հետևյալ տվյալները՝

ձեռնարկության տարածքը, զբաղեցրած հողամասը, շենքերը և շինությունները, դրանց վաճառքի, վարձակալության կամ օգտագործման պայմանները:

հիմնական ֆոնդերի ցուցակն ըստ տեսակների:

անավարտ շինարարության օբյեկտները, դրանց նախահաշվային արժեքը, իրականացված ծախսերը, այդ թվում շինմոնտաժային աշխատանքները, չտեղակայված սարքավորումները:

նյութական արժեքների պաշարները:

դրամական միջոցների առկայությունը:

ձեռնարկությանը պատկանող այլ ակտիվները:

գույքի ոչ նյութական օբյեկտները (պատենտներ, ապրանքանշաններ և այլն):

ձեռնարկության պարտավորությունները բյուջեի նկատմամբ (ապրանքային, վարկային):

ձեռնարկության վերջին երեք տարվա հաշվեկշիռների հիմնական ցուցանիշները:

թողարկվող արտադրանքի տեսականին և նրա տեսակարար կշիռը շուկայում:

Տվյալների ներկայացման ձևը, ինչպես նաև լրացուցիչ տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն հոդվածի պահանջները չեն տարածվում «փոքր» օբյեկտների վրա, որոնց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 29. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը մրցույթով

1. Մրցույթով վաճառվում են.

ա) այն ձեռնարկությունները, որոնք սեփականաշնորհման են ներկայացվում մրցույթով.

բ) այն «փոքր» օբյեկտները, որոնք ձեռք չեն բերվել դրանց աշխատավորական կոլեկտիվների կողմից.

գ) լուծարված պետական ձեռնարկությունների գույքը:

դ) անավարտ շինարարության օբյեկտները.

2. Մրցույթի ձևով սեփականաշնորհմանը իրավունք ունեն մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, քաղաքացիների խմբերը, ոչ պետական ձեռնարկությունները և օտարերկրյա անձինք՝ առանց սահմանափակման: Աշխատավորական կոլեկտիվներն իրավունք ունեն մասնակցելու մրցույթին ընդհանուր հիմունքներով:

3. Նշված օբյեկտները մրցույթով վաճառելու մասին որոշումներ ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ:

Մրցույթով վաճառքը կատարվում է այն դեպքում, եթե գնորդից պահանջվում է կատարել մրցույթի մասին որոշում ընդունած մարմնի կողմից սահմանված որոշակի պայմանները: Մրցույթով վաճառքի մասին որոշումն ընդունած մարմինը կազմում է մրցութային հանձնաժողով, որը հրապարակայնորեն հայտարարում է մրցույթի մասին, նախապատրաստում մրցույթը, իրականացնում է այն, որոշում մրցույթի հաղթողին:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, որի առաջարկները առավելագույն չափով բավարարում են ներկայացված պահանջներին:

Այն առաջարկները, որոնցում օբյեկտի առաջարկվող գինը ցածր է մեկնարկային գնի 50 տոկոսից, մրցութային հանձնաժողովի կողմից չեն քննարկվում:

Մրցույթը առանց հաղթողին հայտարարելու դադարեցվում է

այն դեպքում, եթե սահմանված ժակետում մրցութային հանձնաժողովը ոչ մի առաջարկ չի ստացել կամ՝ եթե ստացված առաջարկները չեն համապատասխանում մրցույթի պայմաններին: Միայն մեկ առաջարկի առկայությունը չի կարող առանց հաղթողին հայտարարելու մրցույթը դադարեցնելու պատճառ հանդիսանալ:

4. Մրցույթով պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների վաճառքի ընդհանուր կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նշելով մրցութին մասնակցելու անհրաժեշտ պայմանները, մրցութային հանձնաժողով կազմելու, մրցութային առաջարկներ քննարկելու, մրցութի հաղթողին որոշելու, առանց հաղթողին հայտարարելու մրցույթը դադարեցնելու, սեփականության իրավունքը մրցույթի հաղթողին փոխանցելու կարգը:

Առանձին օբյեկտների մրցույթի անցկացման ժամկետները, մասնակիցների և նրանց կողմից ներկայացված առաջարկների նկատմամբ պահանջները սահմանում է մրցութային հանձնաժողովը:

Մրցութային հանձնաժողովները չեն կարող սահմանափակել առանձին (այդ թվում և օտարերկրյա) անձանց մրցութին մասնակցելու իրավունքը, եթե այդ մասին նշված չէ սույն օրենքում, ծրագրում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերում:

Մրցույթի և դրա պայմանների մասին պետք է հայտարարվի հրապարակայնորեն մրցույթն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

5. Մրցույթի ձևով վաճառքի է ենթակա ձեռնարկությունն ամբողջությամբ կամ ձեռնարկության գործունեությունը վերահսկել թույլատրող մասը:

Այն դեպքում, եթե միջազգային մրցույթը դադարեցվել է առանց հաղթողին հայտարարելու, Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովը մեկ ամսվա ընթացքում պետք է մշակի ձեռնարկության կամ միջազգային մրցույթով սեփականաշնորհվող դրա բաժնեմասի սեփականաշնորհման նոր տարբերակ:

6. Մրցույթով «փոքր» օբյեկտների վաճառքի մասին հրապարակային հայտարարության մեջ պետք է նշված լինեն գործունեության այն ձևերը, որոնցով թույլատրվում է զբաղվել այդ տարածքում: Նշված գործունեության ձևերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով պետք է համաձայնեց-

ված լինեն պետական կառավարման տեղական մարմնի հետ: Այն դեպքում, եթե մրցույթը դադարեցվել է առանց հաղթողին հայտարարելու, նշված «փոքր» օբյեկտը սահմանված կարգով լուծարվում է, և նրա գույքը վաճառվում է մրցույթով կամ աճուրդով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Օտարերկրյա անձինք մրցույթին մասնակցում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական արժույթով: Օտարերկրյա փոխարկելի արժույթը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշված Հայաստանի Հանրապետության բանկային հիմնարկներից մեկում պետք է փոխանակվի Հայաստանի Հանրապետության պաշտոնական արժույթով՝ ընդհանուր առևտրային կուրսով:

*7-րդ ված 30. Պետական ձեռնարկությունների վաճառքը
աճուրդով*

1. Աճուրդով վաճառվում են.

ա) այն ձեռնարկությունները, որոնք սեփականաշնորհման են ներկայացնում աճուրդով.

բ) այն «փոքր» օբյեկտները, որոնք ձեռք չեն բերվել աշխատավորական կոլեկտիվների կողմից»

գ) լուծարված պետական ձեռնարկությունների գույքը:

դ) անավարտ շինարարության օբյեկտները.

2. Աճուրդի ձևով սեփականաշնորհմանը իրավունք ունեն մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, քաղաքացիների խմբերը, ոչ պետական ձեռնարկությունները և օտարերկրյա անձինք՝ առանց սահմանափակման: Աշխատավորական կոլեկտիվներն իրավունք ունեն մասնակցելու «փոքր» օբյեկտների աճուրդին ընդհանուր հիմունքներով:

3. Նշված օբյեկտներն աճուրդով վաճառելու և աճուրդի ձևի մասին որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ:

Աճուրդով վաճառքը կատարվում է այն դեպքում, եթե գնորդից չի պահանջվում որևէ պայմանի կատարում (բացի սույն օրենքով նշված աշխատավորական կոլեկտիվի շահերի և ձեռնարկության արտադրական պրոֆիլի պահպանման հետ կապված պայմաններից):

Աճուրդի մասին որոշումն ընդունվելուց հետո Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունն ստեղծում է աճուրդային հանձնաժողով, որը հրապարակայնորեն հայտարարում է աճուրդի մասին և իրականացնում այն:

Աճուրդի հաղթող է ճանաչվում այն անձը, որի առաջարկված գինը ամենաբարձրն է: Աճուրդի ժամանակ գինը չի կարող իջնել մեկնարկային գնի 50 տոկոսից, հակառակ դեպքում աճուրդը համարվում է չկայացած:

4. Աճուրդով պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների վաճառքի ընդհանուր կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նշելով աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ պայմանները, աճուրդային հանձնաժողով կազմելու, աճուրդի հաղթողին որոշելու աճուրդը չկայացած համարելու, աճուրդի հաղթողին սեփականության իրավունքը փոխանցելու կարգը:

Աճուրդային հանձնաժողովները չեն կարող սահմանափակել առանձին (այդ թվում և օտարերկրյա) անձանց աճուրդին մասնակցելու իրավունքը, եթե այդ մասին նշված չէ սույն օրենքում, ծրագրում կամ Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված աճուրդների անցկացման ընդհանուր կարգում:

5. Աճուրդի ձևով վաճառքի է ենթակա ձեռնարկությունն ամբողջությամբ կամ ձեռնարկության գործունեությունը վերահսկել թույլատրող մասը:

Այն դեպքում, եթե աճուրդը համարվել է չկայացած, Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման հանձնաժողովը մեկ ամսվա ընթացքում պետք է մշակի ձեռնարկության կամ դրա աճուրդով վաճառվող բաժնեմասի սեփականաշնորհման նոր տարբերակ:

6. «Փոքր» օբյեկտներն աճուրդով վաճառելու մասին հրապարակային հայտարարության մեջ պետք է նշված լինեն այն սահմանափակումները, որոնց պարտավոր է հետևել «փոքր» օբյեկտի նոր սեփականատերը:

Այն դեպքում, եթե աճուրդը համարվում է չկայացած, նշված «փոքր» օբյեկտը սահմանված կարգով լուծարվում է և նրա գույքը վաճառվում է մրցույթով կամ աճուրդով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Օտարերկրյա անձինք մասնակցում են աճուրդով պետական ձեռնարկությունների վաճառքին սույն օրենքի 29 հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով: ...

... Հոդված 32. Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը բաց բաժնետիրական ընկերությունների ձևով

1. Հայաստանի Հանրապետությունում պետական ձեռնարկությունների սեփականաշնորհումը դրանց հիման վրա բաց բաժնետիրական ընկերություններ ստեղծելու միջոցով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ:

2. Պետական ձեռնարկությունների հիման վրա ստեղծվող բաց բաժնետիրական ընկերությունների հիմնադիր հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովը, որը սահմանում է ընկերության կանոնադրական հիմնադրամի մեծությունը, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգից մշակում է դրա կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում է բաց բաժնետիրական ընկերությունը՝ առանց սահմանված կանխավճարը մուծելու:

Բաց բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվելուց հետո Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովը իր հիմնադրի իրավունքները և բաժնետոմսերի փաթեթը փոխանցում է Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությանը, կամ եթե դրա մասին նշված է բաց բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությանը, գերատեսչությանը կամ պետական կառավարման տեղական մարմնին:

3. Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունը, գերատեսչությունը կամ պետական կառավարման տեղական մարմինը

բաժնետոմսերին սկզբում բաժանորդագրում է ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամներին, ապա նաև ազատ բաժանորդագրություն է անցկացնում:

4. Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը կամ համապատասխան նախարարությունը, գերատեսչությունը կամ պետական կառավարման տեղական մարմինը սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամներին բաժնետոմսերին բաժանորդագրում է սույն օրենքի 9 հոդվածով սահմանված կարգով բաց բաժնետիրական ընկերության գրանցման պահից մեկ ամսվա ընթացքում:

Ազատ բաժանորդագրության համար նախատեսված բաժնետոմսերը վաճառվում են մինչև վեց ամսվա, սակայն ոչ պակաս, քան մեկ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման:

Ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամների ձեռք չբերած բաժնետոմսերը ենթակա են ազատ բաժանորդագրման:

Չվաճառված բաժնետոմսերը մնում են պետական սեփականություն և գտնվում են Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարության, գերատեսչության կամ պետական կառավարման տեղական մարմնի տնօրինության տակ:

Բաց բաժնետիրական ընկերության ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված կանոնադրական հիմնադրամի պետական բաժնեմասը (եթե այդպիսին նախատեսված է) նվազեցնելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության հատուկ որոշում, եթե նվազեցման կարգը սահմանված չէ բաց բաժնետիրական ընկերության ստեղծման մասին որոշմամբ: ...

... IV. ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԴՈՒՄԸ

Հոդված 34. Անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման կարգը

1. Անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովի ներկայացմամբ՝ ելնելով ծրագրից:

Անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և ապապետականացման պետական հանձնաժողովին:

2. Անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումը իրականացվում է՝

ա) աճուրդով կամ մրցույթով.

բ) սեփականաշնորհվող ձեռնարկության գույքի բաղկացուցիչ մասը կազմող անավարտ շինարարության օբյեկտը այդ ձեռնարկության այլ գույքի հետ միասին ձեռնարկության գնորդի համաձայնության դեպքում:

3. Անավարտ շինարարության օբյեկտի գինը որոշվում է նրա նախահաշվային արժեքի, փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և օբյեկտի համար ձեռք բերված գույքի արժեքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության, Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարության, գերատեսչության կամ պետական կառավարման տեղական մարմնի կողմից:

Սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքերում անավարտ շինարարության օբյեկտները այդ գնով առաջարկվում են սեփականաշնորհվող ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներին:

Անավարտ շինարարության օբյեկտները աճուրդով կամ մրցույթով սեփականաշնորհելու ժամանակ այդ գները համարվում են մեկնարկային:

Ծրագրով սահմանված անավարտ շինարարության առավել արժեքավոր առանձին օբյեկտների մեկնարկային գինը որոշելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է հրավիրել օտարերկրյա փորձագետներ կամ մասնագիտացված կազմակերպություններ:

Ձեռք բերվող անավարտ շինարարության օբյեկտների համար վճարումը գնորդի ցանկությամբ կարող է իրականացվել միանվագ կամ տարաժամկետ՝ ելնելով ծրագրում սահմանված սանդղակից:

Վճարման ձևը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ելնելով ծրագրից: ...

...ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԴՄԱՆ
ԵՎ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ
ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 48. Պատասխանատվություն պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին օրենսդրության խախտման համար

Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևան
27 օգոստոսի 1992 թ.

Հ. Լ.-0681-1-ՀՕ-39
*Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)
երևան, 1995 թ., էջ 398-433:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
17 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ
(ՍԵՓԱԿԱՆՇՆՈՐՅԱՆ) ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի գործունեության ոլորտը

Սույն օրենքը կարգավորում է պետական գույքի, այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման՝ սեփականաշնորհման (այսուհետ մասնավորեցում) իրավահարաբերությունները:

Սույն օրենքի գործողությունը չի տարածվում պետական գույքն այլ պետություններին և միջազգային կազմակերպություններին օտարելուց բխող այն իրավահարաբերությունների վրա, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում դրանց ներկայացուցչական գործառնությունները կատարելու հետ, ինչպես նաև պետական բնակարանային ֆոնդի օտարման հետ կապված իրավահարաբերությունների վրա:

Համայնքի գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման իրավահարաբերությունները, բացառությամբ սույն օրենքի 3 հոդվածի երկրորդ կետի «ը» ենթակետով նախատեսված դեպքի, սույն օրենքով չեն կարգավորվում:

(փոփ. 13.10.98)

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

Պետական գույք՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող գույք, այդ թվում պետական ընկերությունների բաժնետոմսեր, պետական մասնակցությամբ ընկերությունների և ոչ պետական ընկերությունների պետական բաժնետոմսեր, ինչպես նոր գույքի առանձին տարրեր:

Անավարտ շինարարության օբյեկտ՝

ա) սահմանված կարգով հաստատված նախագիծ և հատկացված հողատարածություն ունեցող օբյեկտ, որտեղ շինմոնտաժային աշխատանքներն սկսված չեն,

բ) օբյեկտ, որտեղ իրականացվել կամ իրականացվում են շինմոնտաժային աշխատանքներ, և որը սահմանված կարգով գործարկված կամ կոնսերվացված չէ,

գ) սահմանված կարգով կոնսերվացված օբյեկտ:

Ոչ պետական ընկերություն՝ ընկերություն, որի բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունն է:

Պետական մասնակցությամբ ընկերություն՝ ընկերություն, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքի սեփականությունն է:

«Փոքր» օբյեկտ՝ հանրային սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և առևտրի ոլորտում մասնագիտացված իրավաբանական անձինք կամ դրանց առանձնացված ստորաբաժանումները: «Փոքր» մասնավորեցում է համարվում այն «փոքր» օբյեկտների մասնավորեցումը, որոնց զբաղեցրած ընդհանուր տարածքը գնահատման պահին չի գերազանցում 200 քառակուսի մետրը: «Փոքր» մասնավորեցում իրականացվում է «փոքր» օբյեկտների աշխատավորական կոլեկտիվի անդամներին դրանք ուղղակի վաճառքի միջոցով՝ սույն օրենքի սահմանված կարգով:

Պետական գույքի մասնավորեցման մասին սույն օրենքով սահմանված կարգով որոշում ընդունելու պահին ընկերության (ծեռնարկության) կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ են համարվում

ա) տվյալ ընկերությունում (ծեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում աշխատողները.

բ) տվյալ ընկերությունում (ծեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք.

գ) վերջին տասը տարվա ընթացքում տվյալ (ծեռնարկությունից) կամ «փոքր» օբյեկտից կենսաթոշակի անցած և այնտեղ առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք.

դ) վերջին տասը տարվա ընթացքում տվյալ ընկերությունում (ծեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող բոլոր կարգի հաշմանդամները.

ե) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն ութ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք:

զ) ընկերությունների (ձեռնարկությունների) կամ «փոքր» օբյեկտների մասնավորեցման պատճառով վերակազմավորվող կամ լուծարվող վերադաս մարմինների ազատված աշխատակիցները, ովքեր տվյալ մարմնում ունեն առնվազն մեկ տարվա անընդհատ աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:

է) ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում ընդունելու պահից հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատված անձինք:

ը) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում աշխատած կերակրողին կորցնելու կապակցությամբ կենսաթոշակ ստացող անձինք:

թ) տվյալ ընկերությունից (ձեռնարկությունից) կամ «փոքր» օբյեկտից «Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան զինծառայության զորակոչված և զինծառայության մեջ գտնվող, ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող, ինչպես նաև ընտրովի պետական մարմիններում տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված անձինք:

Քաղաքացիներն իրենց հայեցողությամբ կարող են ձեռք բերել աշխատավորական կոլեկտիվի անդամի կարգավիճակ միայն մեկ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում:

Օտարերկրյա անձինք՝

ա) այլ պետությունների քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք:

բ) այլ պետությունների իրավաբանական անձինք:

գ) միջազգային կազմակերպությունները:

դ) այլ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպություններին, այլ պետություններին լրիվ կամ առավելապես (գույքի կեսից ավելի մասով) պատկանող ընկերությունները (ձեռնարկությունները):

Հոդված 3. Մասնավորեցման հասկացությունը և օբյեկտները

1. Մասնավորեցումը պետական գույքի նկատմամբ սեփակա-

նության կամ գույքային իրավունքների օտարումն է ֆիզիկական և իրավաբանական անձանց ու իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում նաև մասնավորեցվող ընկերության կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամներին:

Պետական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Մասնավորեցման օբյեկտ են՝

ա) պետական բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, ոչ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում պետությանը պատկանող բաժնետոմսերը:

բ) սույն օրենքով սահմանված կարգով առանց դատարանի որոշման լուծարված պետական և պետական մասնակցությամբ ընկերության (ձեռնարկության) պետության բաժնեմաս համարվող գույքը:

գ) վարձակալությամբ տրված պետական գույքը, այդ թվում անշարժ գույքը:

դ) բնակելի շենքերում պետական սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման տարածք չհամարվող ոչ բնակելի տարածքները:

ե) անավարտ շինարարության օբյեկտները:

զ) պետությանը պատկանող գույքային իրավունքները և գույքի ոչ նյութական օբյեկտները, այդ թվում՝ թողարկված նոր բաժնետոմսերի բաժանորդագրման իրավունքը, ընդերքի և բնական պաշարների օգտագործման իրավունքը սույն հոդվածի 3-րդ կետի «գ» և «է» ենթակետերով սահմանված դեպքերում:

է) պետական ձեռնարկությունները կամ դրանց միավորումը՝ պետաան բաժնետիրական ընկերությունների վերակազմավորվելուց հետո:

ը) բնակելի շենքերում համայնքային սեփականություն համարվող, այդ թվում՝ պետության կողմից համայնքին հայեցողական սեփականության իրավունքով հանձնված ընդհանուր օգտագործման տարածք չհամարվող ոչ բնակելի տարածքները, եթե դրանք՝

- տրամադրված են վարձակալության ոչ պետական տնտեսվարող սուբյեկտներին կամ քաղաքացիներին մինչև 1997 թվականի դեկտեմբերի 15-ը,

- տրամադրված են «փոքր» օբյեկտներին՝ վարձակալության կամ մշտական օգտագործման նպատակով:

3. Մասնավորեցում չի համարվում՝

ա) բռնագանձելու, բռնագրավելու, տիրագուրկ ճանաչելու հետևանքով ժառանգությամբ կամ նվիրատվությամբ, պարտքի դիմաց պետությանը սեփականության իրավունքով անցած գույքը օտարելը, ինչպես նաև պետության կողմից գրավի առարկան իրացնելը:

բ) դատարանի որոշմամբ անվճարունակ ճանաչված լուծարվող իրավաբանական անձանց պատկանող պետական գույքը օտարելը:

գ) պետական պահուստից օտարվող գույքը:

դ) օրենքով սահմանված կարգով պետական գույք համարվող գրավի առարկայի վրա դատարանի վճռով բռնագանձումը կամ գրավի առարկայի իրացումը գրավառուի կողմից:

ե) դատարանի որոշմամբ անվճարունակ ճանաչված իրավաբանական անձանց ֆինանսական առողջացման ծրագրերի շրջանակներում պետական գույքը օտարելը:

զ) «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընդերքն օգտագործման տրամադրելը, բացառությամբ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններին օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված ընդերքի օգտագործման իրավունքի:

է) բնական վերարտադրվող պաշարների իրավունքը, բացառությամբ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններին բնական վերարտադրվող պաշարների օգտագործման իրավունքի:

ը) օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, բյուջետային հիմնարկներին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող գույքը վարձակալությամբ տալը և օտարելը:

(փոփ. 13.10.98) ...

... Հոդված 6. Մասնավորեցման համար օգտագործվող վճարման միջոցները

Պետական գույքի մասնավորեցման համար որպես վճարման միջոց կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության արժույթը, ազատ փոխարկելի արտարժույթը, սեփականաշնորհման սերտիֆիկատները:

Որպես վճարման միջոց կարող են օգտագործվել նաև պարտքերի փոխարինումը բաժնետոմսերով, փոխարկելի պարտատոմսերը, այլ գույքը, եթե մասնավորեցումն իրականացվում է սույն օրենքի 14 հոդվածի առաջին կետի «գ» «դ» (բացառությամբ աշխատավորական կոլեկտիվի անդամներին և վարձակալին մասնավորեցնելու դեպքերի), «ե» (բացառությամբ բաժնետոմսերի բաց տեղաբաշխման դեպքի), «զ» և «ը» ենթակետերով սահմանված ձևերով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ թույլատրված նշված միջոցների օգտագործումը պետական գույքը մասնավորեցնելու համար: Եթե մասնավորեցումն իրականացվում է սույն օրենքի 14 հոդվածի առաջին կետի «ե» ենթակետով սահմանված ձևով, ապա մասնավորեցման նպատակով օգտագործվող միջոցներ են համարվում նաև մասնավորեցման մասնակիցների կատարած վճարումները մասնավորեցվող ընկերության կանոնադրական հիմնադրամին: Սեփականաշնորհման սերտիֆիկատները որպես վճարման միջոց չեն կարող օգտագործվել սույն օրենքի 17 հոդվածի (միջազգային մրցույթների մասով), 18 հոդվածի (բացառությամբ այն դեպքերի, երբ պետական գույքը մասնավորեցվում է աշխատավորական կոլեկտիվի անդամներին կամ վարձակալին), 19 և 21 հոդվածներով նախատեսված դեպքերի:

Հոդված 7. Սեփականաշնորհման սերտիֆիկատները

Սեփականաշնորհման սերտիֆիկատը Հայաստանի Հանրապետության կառավարության թողարկած արժեթուղթն է: Սույն օրենքով սահմանված դեպքերում պետությունը պարտավորվում է դրանք ընդունել որպես վճարման միջոց՝ մասնավորեցվող օբյեկտը օտարելու դիմաց:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներն ունեն անվանական արժեք, որն արտահայտված է Հայաստանի Հանրապետության արժույթով: Սեփականաշնորհման սերտիֆիկատները, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, օրինական վճարման միջոց են մասնավորեցվող գույքի, բաժնենասի կամ բաժնետոմսի ձեռքբերման համար և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում պարտադիր ընդունվում են միայն անվանական արժեքով և դրանց գործողության ժամկետներում:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Հայաստանի Հանրապետության բռնադատված քաղաքացին ունի մեկ

հավելյալ սերտիֆիկատ ստանալու իրավունք: Մասնավորեցման բնագավառում անչափահասների իրավունքներն իրականացնում են նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու կարգը, պայմանները, թողարկման ծավալը և գործողության ժամկետը սահմանվում են ծրագրով:

Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու փաստը վավերացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթղթում համապատասխան նշում կատարելով:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին բաշխվում են առանց դրանց անվանական արժեքի համար վճարելու: Սեփականաշնորհման սերտիֆիկատներ ստանալու վճարի չափը սահմանվում է ծրագրով՝ ելնելով դրանց տպագրության, բաշխման, շրջանառության և փոխանակման ծախսերը փոխհատուցելու անհրաժեշտությունից:

Սեփականաշնորհման սերտիֆիկատները ենթակա են ազատ առուծախի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով՝ դրանց տերերի կամ միջնորդ կազմակերպությունների կողմից, ազատ ձևավորվող գներով:

Սեկ անձի տնօրինած սեփականաշնորհման սերտիֆիկատների քանակը չի սահմանափակվում:

Պետությունը սեփականաշնորհման սերտիֆիկատները հետ չի գնում: Պետությունը, պետական կազմակերպությունները և ընկերությունները (ծեռնարկությունները) չեն կարող մասնակցել սեփականաշնորհման սերտիֆիկատների առուծախին:

Մասնավորեցման համար ցանկացած վճարման ժամանակ սեփականաշնորհման սերտիֆիկատներով վճարվող մասի արժեքը չի սահմանափակվում:

Մասնավորեցման համար վճարման միջոց ծառայած սեփականաշնորհման սերտիֆիկատները դուրս են բերվում շրջանառությունից և մարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 8. Պետական ծեռնարկությունների գույքի մասնակի անհատույց մասնավորեցումը

Պետական ծեռնարկությունների գույքի հաշվեկշռային արժեքի 20 տոկոսն անհատույց մասնավորեցվում է պետական ծեռնարկության այն աշխատողներին, ովքեր այդ մասին որոշում ընդունելու պա-

հին տվյալ ծեռնարկությունում ունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ և ցանկություն են հայտնում մասնակցելու մասնակի անհատույց մասնավորեցմանը:

Պետական ծեռնարկության գույքի մասնակի անհատույց մասնավորեցմանը մասնակցում են նաև՝

ա) տվյալ ծեռնարկությունից ժամկետային ծառայության այն զորակոչվածները, ովքեր ծեռնարկության գույքի մասնակի անհատույց մասնավորեցման մասին որոշումն ընդունելու պահին տվյալ ծեռնարկությունում ունեն առնվազն մեկ տարվա անընդհատ աշխատանքային ստաժ:

բ) 1988 թվականի հունվարի 1-ից հետո ծեռնարկությունից զինվորական ծառայության մեկնած անձինք և կամավորները, ովքեր ծառայության ընթացքում ստացած վնասվածքների, խեղումների կամ հիվանդությունների հետևանքով հաշմանդամության խումբ են ձեռք բերել:

գ) 1988 թվականի հունվարի 1-ից հետո տվյալ ծեռնարկությունից զինվորական ծառայության մեկնած և զոհված զինծառայողի, կամավորի ժառանգները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

դ) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքը թողած և այդ պատճառով հաշմանդամության խումբ ստացած կամ տվյալ ծեռնարկությունից վնասի փոխհատուցում ստացող անձինք:

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տվյալ ծեռնարկություն փոխադրվածները, ովքեր ծեռնարկության գույքի մասնակի անհատույց մասնավորեցման մասին որոշումն ընդունելու պահին ունեն առնվազն մեկ տարվա անընդհատ աշխատանքային ստաժ:

զ) պետական ծեռնարկությունում աշխատող արհմիութենական հաստիքային աշխատողները:

Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի կամ համաժողովի) կամ մասնակի անհատույց մասնավորեցմանը կարող են մասնակցել նաև՝

ա) արտադրական վնասվածքի հետևանքով տվյալ ծեռնարկությունում աշխատած կերակրողին կորցրած և այդ ծեռնարկությունից փոխհատուցում կամ կենսաթոշակ ստացող անձինք:

բ) տվյալ ծեռնարկությունից կենսաթոշակի անցած և մինչև կենսաթոշակի անցնելն այդ ծեռնարկությունում առնվազն տասը տարվա անընդհատ աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառու-

ները:

Քաղաքացիները պետական ձեռնարկության գույքի մասնակի անհատույց մասնավորեցմանը մասնակցելու իրավունքից կարող են օգտվել նշված ենթակետերից միայն մեկով նախատեսված դեպքում և միայն մեկ ձեռնարկությունում:

Մասնակի անհատույց մասնավորեցման ենթակա ձեռնարկությունների ցանկում չեն կարող ընգրկվել «փոքր» օբյեկտները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության Ազգային ժողովի հաստատած ցանկում նշված ձեռնարկությունները:

Մասնակի անհատույց մասնավորեցման ենթարկվելու մասին իր ցանկությունը պետական ձեռնարկությունը հաստատում է իր աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի կամ համաժողովի) որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում:

Մասնակի անհատույց մասնավորեցումն իրականացվում է մինչև Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման առաջին ծրագրի գործողության սկիզբը, եթե օրենքով առանձին ձեռնարկությունների վերաբերյալ այլ ժամկետ սահմանված չէ:

Հոդված 9. Մասնակի անհատույց մասնավորեցումից ստեղծված բաժնետիրական ընկերության ընկերության կազմակերպության մասնավորեցումը

Մասնակի անհատույց մասնավորեցումից ստեղծված բաժնետիրական ընկերության հաշվետու տարվա չբացված շահույթի՝ պետությանը պատկանող բաժնեմասից ներդրումային մասնավորեցման հիմնադրամին ուղղվող գումարը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով անհատույց բաշխվում է տվյալ ընկերությունում բաշխման պահին առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին (անկախ մասնակի անհատույց մասնավորեցմանն այդ աշխատողների մասնակցության հանգամանքը) բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի հավաստագրերի տեսքով:

Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասի) մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվելուց հետո բաժնետիրական ընկերություն-

ըն չի կարող որոշում ընդունել ներդրումային մասնավորեցման հիմնադրամին շահույթն ուղղելու մասին:

Հոդված 10. Ընկերությունների (ձեռնարկությունների) և «փոքր» մասնավորեցման օբյեկտների աշխատավորական կոլեկտիվի անդամների՝ մասնավորեցմանը մասնակցելու իրավունքը

1. Մասնավորեցվող ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող անձինք ունեն այդ ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման օբյեկտի գույքը ձեռք բերելու հավասար իրավունքներ:

2. Պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության դեպքում աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի կամ համաժողովի) որոշմամբ աշխատավորական կոլեկտիվի անդամներին վերապահվում է պետական բաժնեմասի որոշակի մասը, բայց 20 տոկոսից ոչ ավելին, ընդ որում միայն այն դեպքում, երբ աշխատավորական կոլեկտիվի անդամներից ավելի քան 50 տոկոսը ցանկություն է հայտնել և բաժանորդագրվել և ընկերության (ձեռնարկության) պետական բաժնեմասի 20 տոկոսին:

3. «Փոքր» մասնավորեցման դեպքում ուղղակի վաճառքի ձևով այդ օբյեկտների աշխատավորական կոլեկտիվներն ունեն այդ օբյեկտների մասնավորեցման նախապատվության իրավունք: Սույն արտոնությունը չի տարածվում աճուրդով կամ մրցույթով վաճառվող «փոքր» մասնավորեցման օբյեկտների վրա:

«Փոքր» մասնավորեցման դեպքում այդ օբյեկտները ձեռք բերած աշխատավորական կոլեկտիվները կարող են օգտվել տարածամկետ վճարումների սանդղակից:

Ընկերությունների կազմում գտնվող «փոքր» մասնավորեցման օբյեկտները մասնավորեցվում են այդ ընկերությունների կազմում, եթե այդ «փոքր» օբյեկտների աշխատավորական կոլեկտիվները մասնավորեցման հայտ չեն ներկայացրել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը: ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 14. Պետական գույքի մասնավորեցման ձևերը

1. Պետական գույքի մասնավորեցումն իրականացվում է հետևյալ հիմնական ձևերով՝

- ա) բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն.
- բ) աճուրդ.
- գ) մրցույթ (այդ թվում՝ միջազգային մրցույթ).
- դ) ուղղակի վաճառք.
- ե) նոր բաժնետոմսերի բաց կամ փակ տեղաբաշխում.
- զ) պարտատոմսերի թողարկում բաժնետոմսերի փոխարկման իրավունքով.

է) բաժնետոմսերի վաճառք մասնագիտացված շուկաներում.

ը) պետական գույքի, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց և համայնքների գույքի նկատմամբ պետությանը պատկանող օգտագործման իրավունքի փոխանցում:

2. Պետական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է կիրառվել ինչպես մասնավորեցման ձևերից մեկը, այնպես էլ դրանց համակցությունը:

Մասնավորեցման ձևի ընտրությունը կատարվում է ելնելով՝

ճյուղային առանձնահատկություններից.

ներքին և արտաքին շուկաներում գրաված դիրքից.

ծեռնարկության ֆինանսական վիճակից.

պետական գույքը որպես գործող ընկերություն մասնավորեցնելու նպատակահարմարությունից.

անհրաժեշտ ներդրումներ կատարելու պահանջից:

Հոդված 15. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումը

1. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումը՝ տվյալ ընկերությունում պետական բաժնեմասի ամբողջական վաճառքն է բաժնետոմսերի քանակի բաց աճուրդի միջոցով:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցումն իրականացվում է փակ բաժանորդագրությամբ՝ աշխատավորական կոլեկտիվի անդամների համար և բաց բաժանորդագրությամբ՝ այլ անձանց համար, ընդ որում կոլեկտիվի անդամները բաց բաժանորդագրությանը կարող են մասնակցել ընդհանուր հիմունքներով: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է մասնավորեցվող ընկերության մեկնարկային գինը, որը ներառում է բաժնետոմսերի մեկնարկային քանակը և բաժնետոմսերի անվանական արժեքը, որը պետք է հարյուր դրամին բազմապատիկ լինի, բայց քսան հազար դրամից ոչ ավելի: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև ազդագրի հրապարակման ժամկետները, ընկերության պարտավորությունները որոշումն ընդունելու պահին, ներառյալ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների համար ապառքները, տույժերը և տուգանքները:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել բաժանորդագրման կայացման նվազագույն սահման:

2. Պետական գույքի մասնավորեցումը բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության միջոցով իրականացնում է լիազորված պետական մարմինը՝ ազդագրի հրապարակման տասներորդ օրվանից սկսած:

Լիազորված պետական մարմինը բաժնետոմսերի փակ և բաց բաժանորդագրությունն անցկացնում է զուգահեռ:

Բաժանորդագրությունն իրականացվում է երեսունհինգ օրվա ընթացքում, այդ թվում՝ աշխատավորական կոլեկտիվի անդամներին՝ փակ բաժանորդագրություն՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Եթե փակ բաժանորդագրության համար նախատեսված ժամկետում փակ բաժանորդագրությանը մասնակցել ցանկացողների թվաքանակը չի գերազանցում աշխատավորական կոլեկտիվի անդամների 50 տոկոսը, ապա փակ բաժանորդագրությունը չի իրականացվում, և կոլեկտիվին փակ բաժանորդագրության համար վերապահված բաժնետոմսերը ենթակա են վաճառքի՝ բաց բաժանորդագրության միջոցով:

4. Եթե մասնավորեցումը համարվում է կայացած, ապա աշխա-

տավորական կոլեկտիվի անդամներին հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է՝ ելնելով դրանց տեսակարար կշռից, որը հաշվարկվում է փակ բաժանորդագրությամբ ձեռք բերված բաժնետոմսերի քանակը բաժանելով Հայաստանի Հանրապետության կառավարման որոշմամբ սահմանված բաժնետոմսերի քանակին:

Ընդ որում, եթե՝

ա) բաժանորդագրությունից ձեռք է բերվել ավելի շատ քանակությամբ բաժնետոմս, քան սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ապա փակ բաժանորդագրությունից աշխատավորական կոլեկտիվի անդամներին հասանելիք բաժնետոմսերի քանակն ավելացվում է այն հաշվարկով, որ այն համապատասխանի հաշվարկված տեսակարար կշռին: Այդ դեպքում լրացուցիչ բաժնետոմսերը հատկացվում են անհատույց:

բ) բաժանորդագրությունից ձեռք է բերվել ավելի քիչ քանակությամբ բաժնետոմս, քան սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ապա փակ բաժանորդագրությունից աշխատավորական կոլեկտիվի անդամներին հասանելիք բաժնետոմսերի քանակը պակասեցվում է այն հաշվարկով, որ այն համապատասխանի հաշվարկված տեսակարար կշռին: Այդ դեպքում աշխատավորական կոլեկտիվի անդամներին, Հայաստանի Հանրապետության սահմանած կարգով, վերադարձվում են պակասեցված բաժնետոմսերի քանակի համար վճարներն այն վճարման միջոցով, որով դրանք ձեռք են բերվել:

5. Եթե մասնավորեցվող ընկերությունում սույն օրենքի 8 հոդվածի համաձայն տեղի է ունեցել մասնակի անհատույց մասնավորեցում կամ սույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պետական բաժնեմասի ներդրումային մասնավորեցում, ապա մասնակի անհատույց մասնավորեցմանը կամ պետական բաժնեմասի ներդրումային մասնավորեցմանը մասնակցած անձանց հասանելիք բաժնետոմսերի քանակը հաշվարկվում է այնպես, որ պահպանվի մինչև ընկերության բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցումը եղած դրանց հարաբերակցությունը պետական բաժնեմասի հետ:

6. Լիազորված պետական մարմինը պատասխանատու է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցման ազդարարում հրապարակված տվյալների համար:

7. Պետական բաժնետիրական ընկերությունը բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ չմասնավորեցվելու դեպքում՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում ընդունում է նոր որոշում՝ ընկերությունը բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով երկրորդ անգամ մասնավորեցնելու մասին:

բ) նոր մասնավորեցումը չկայանալու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում որոշում է ընդունում ընկերությունն այլ ձևով մասնավորեցնելու մասին:

գ) ընկերությունը երրորդ անգամ չմասնավորեցվելու դեպքում 60 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում այն լուծարելու մասին:

Ֆողված 16. Պետական գույքի մասնավորեցումն աճուրդով

1. Պետական գույքի աճուրդով մասնավորեցման դեպքում այդ գույքի սեփականության իրավունքը տրամադրվում է աճուրդի այն մասնակցին, ով աճուրդի ընթացքում առաջարկել է առավելագույն գին:

Պետական գույքի աճուրդով վաճառքը կատարվում է այն դեպքում, երբ գնորդից չի պահանջվում որևէ պայմանի կատարում:

Միայն մեկ առաջարկի առկայությունը չի կարող առանց հաղթողին հայտարարելու աճուրդը դադարեցնելու պատճառ համարվել:

2. Աճուրդով պետական գույքի մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են աճուրդի ձևերը՝ դասական, հոլանդական, ամբողջությամբ կամ լոտային, մասնավորեցվող գույքի մեկնարկային գինը և աճուրդի իրականացման ժամկետները: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև աճուրդով մասնավորեցման ենթակա ընկերության պարտավորությունները որոշման ընդունման պահին՝ ներառյալ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների համար ապառքները, տույժերը և տուգանքները:

3. Պետական գույքի մասնավորեցումն աճուրդի միջոցով իրականացնում է լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:

4. Պետական գույքի՝ աճուրդի միջոցով մասնավորեցման դեպքում, բացի մեկնարկային գնից, այլ գնային սահմանափակումներ չեն կիրառվում:

5. Պետական գույքի՝ աճուրդի միջոցով չմասնավորեցվելու

դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում ընդունում է նոր որոշում պետական գույքը մասնավորեցնելու մասին:

Հոդված 17. Պետական գույքի մասնավորեցումը մրցույթով (միջազգային մրցույթով)

Պետական գույքը համարվում է մրցույթով մասնավորեցվող, եթե պետական գույքը մասնավորեցվում է նախօրոք սահմանված պայմանների առավելագույն չափով բավարարող առաջարկ ներակայացրած մասնակցին:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մրցույթը կարող է իրականացվել մասնակիցների նախնական որակավորմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մրցույթի հաղթողին որոշելու նպատակով կարող են առաջադրվել հետևյալ պայմանները՝

- ա) գինը.
- բ) ներդրումների չափը.
- գ) սոցիալական երաշխիքները.

դ) ծառայությունների մատուցման սակագները, եթե մասնավորեցվում է օրենքով կամ այլ իրավական ակտով լիցենզավորվող գործունեություն իրականացնող ընկերության պետական բաժնեմասը.

ե) սույն հոդվածի «ա» և «դ» կետերում նշված պայմանների կամ դրանց մի մասի նախօրոք սահմանված համամասնություններով կազմված համախումբ:

Պետական գույքի մրցույթով կամ միջազգային մրցույթով մասնավորեցման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել մրցութային հանձնաժողով, սահմանվել դրա կազմը և իրավասությունները:

Պետական գույքի մասնավորեցման մրցույթով կարող է իրականացվել, եթե մասնավորեցվում է ընկերությունների ծայրերի իրավունք տվող պետական բաժնետոմսերի տասը և ավելի տոկոսը:

Մրցութային հանձնաժողովը, իսկ վերջինիս չստեղծվելու դեպքում՝ լիազորված պետական մարմինն իրավասու է մրցութային առաջարկների հստակեցման նպատակով ուղղակի բանակցություններ վարել մրցույթի մասնակիցների հետ, եթե դա նախատեսված է մրցույթով պետական գույքը մասնավորեցնելու մասին Հայաստանի

Հանրապետության կառավարության որոշմամբ:

Միջազգային մրցույթի մասին պետք է հայտարարվի հրապարակայնորեն՝ մրցույթն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան չի նախատեսված:

Միջազգային մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, ում առաջարկներն առավելագույն չափով են բավարարում նշված պահանջները:

Մրցույթի արդյունավետ իրականացման նպատակով մրցութային հանձնաժողովը, իսկ վերջինիս չստեղծվելու դեպքում՝ լիազորված պետական մարմինն իրավասու է մրցույթի նախապատրաստելու և կազմակերպելու համար ընդգրկել հայրենական և արտասահմանյան մասնագիտացված կազմակերպություններ:

Միայն մեկ առաջարկի առկայությունը չի կարող առանց հաղթողին հայտարարելու մրցույթը դադարեցնելու պատճառ համարվել:

Եթե մրցույթը (միջազգային մրցույթը) առաջարկների բացակայության պատճառով սահմանված ժամկետում չի կայանում կամ դադարեցվում է առանց հաղթողին որոշելու, մրցույթը համարվում է չկայացած, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում պետական բաժնեմասը մասնավորեցնելու մասին նոր որոշում է ընդունում:

Հոդված 18. Պետական գույքի մասնավորեցումն ուղղակի վաճառքի ձևով

1. Պետական գույքը մասնավորեցվում է ուղղակի վաճառքի ձևով

տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվին.

տվյալ պետական գույքի վարձակալին.

տվյալ ընկերության ոչ պետական բաժնեմասի սեփականատիրոջը (սեփականատերերին).

եթե մասնավորեցման այլ ձևերի կիրառումն աննպատակահարմար է մասնավորեցման գործընթացի կազմակերպման ծախսերի առումով.

եթե տվյալ պետական գույքի հավանական գնորդը նախօրոք հայտնի է:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուղղակի վաճառքի ձևով պետական գույքը մասնավորեցնելու մասին պետք է մոտավորապես բովանդակի՝ գնորդի անունը կամ ան-

վանումը, մասնավորեցվող պետական գույքի գինը, վճարման ժամկետները և վճարման առանձնահատկությունները:

3. Ուղղակի վաճառքի ձևով պետական գույքը տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվին մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելուց հետո այդ որոշմամբ սահմանված ժամկետներում աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը կամ համաժողովը) սույն օրենքի համաձայն իրականացնում է մասնավորեցվող պետական գույքի բաշխումը աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող անձանց միջև, ընտրում է նախաձեռնող խումբ, որին իրավունք է տրվում կոլեկտիվը ներկայացնել պետական բաժնեմասը գնելու ընթացքում: Աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը կամ համաժողովը)՝ ծայների 3/4-ի մեծամասնությամբ, նախաձեռնող խմբի անդամների համար կարող է սահմանել նրանց մասնակցության չափն ապագա ընկերության մեջ, ինչպես նաև նախաձեռնող խմբի կազմում ընդգրկել տվյալ ընկերության աշխատավորական կոլեկտիվի անդամ չհամարվող անձանց, որոնց թիվը 3 հոգուց ավել չպետք է լինի: Իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները չեն կարող լինել նախաձեռնող խմբի անդամ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Պետական գույքի վարձակալներն ունեն այդ գույքի մասնավորեցման նախապատվության իրավունք, եթե՝
այդ գույքը մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ընկերություններին պատկանող գույքի մասը չէ:

վարչական և հասարակական շենքերում ու շինություններում վարձակալած տարածք չէ:

վարձակալության պայմանագիրը կնքված է մինչև 1997 թվականի դեկտեմբերի 15-ը:

5. Պետական գույքը մասնավորեցնելու նախապատվության իրավունք ունեցող վարձակալներին պետական գույքը մասնավորեցնելու հիմք է լիազորված պետական մարմին վարձակալի ներկայացրած հայտը: Հայտի ձևը և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Լիազորված պետական մարմինը հայտը քննարկում է երկու ամսվա ընթացքում: Հայտի պաշտոնական ընդունման կամ մերժման

մասին գրավոր պատասխանն ուղարկվում է հայտը ներկայացնող անձանց:

Հայտի մերժումը հնարավոր է, եթե՝

ա) այն ներկայացրած անձը չի կարող հանդես գալ որպես մասնավորեցման հետևանքով սեփականության իրավունքներ ձեռք բերող անձ:

բ) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված են տվյալ գույքի մասնավորեցման սահմանափակումներ:

գ) մասնավորեցման հետևանքով կարող է անհնարին դառնալ վարձատուին պատկանող վարձակալության չհանձնած գույքի օգտագործումը:

Վարձակալված գույքի գնման հայտի մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

7. Սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված հայտի մերժման հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, լիազորված պետական մարմնի ներկայացմամբ, երկու ամսվա ընթացքում որոշում է ընդունում վարձակալված գույքը վարձակալից գնելու թույլտվության մասին:

8. Պետական գույքի մասնավորեցումն ուղղակի վաճառքի միջոցով իրականացնում է լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետում սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց մեղքով պետական գույքի մասնավորեցումն ուղղակի վաճառքի ձևով չիրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 60 օրվա ընթացքում նոր որոշում է ընդունում պետական գույքը սույն օրենքով սահմանված այլ ձևով մասնավորեցնելու մասին:

Հոդված 19. Պետական գույքի մասնավորեցումներ

բաժնետոմսերի և փոխարկելի պարտատոմսերի թողարկմամբ

1. Պետական գույքի մասնավորեցումը նոր բաժնետոմսերի թողարկմամբ իրականացվում է պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական հիմնադրամի ավելացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը մասնավորապես պետք է բովան-

դակի բաժանորդագրության ժամկետները, կանոնադրական հիմնադրամի ավելացման ծավալը, թողարկվող բաժնետոմսերի տեսակները, անվանական արժեքները և մասնակցության սահմանափակումները: Նշված որոշման հիման վրա և դրանով սահմանված ժամկետներում պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններն օրենքով սահմանված կարգով որոշումներ են ընդունում կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին:

Բաժնետոմսերն ազատ բաժանորդագրությամբ տեղաբաշխելու դեպքում մասնակցության սահմանափակումներ չեն դրվում:

Բաժնետոմսերը փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխելու դեպքում մասնակիցներ կարող են լինել աշխատավորական կոլեկտիվի անդամները, տվյալ ընկերության ոչ պետական բաժնետերերը, իսկ մրցույթով տեղաբաշխելու դեպքում միայն նախապես որակավորված անձինք:

2. Պետական գույքի մասնավորեցումը բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմամբ իրականացվում է պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի փոխարկման իրավունք տվող պարտատոմսերի թողարկման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը մասնավորապես պետք է բովանդակի տեղաբաշխման ժամկետները և ծավալը, թողարկվող փոխարկելի պարտատոմսերի տեսակները, անվանական արժեքները և մասնակցության սահմանափակումները: Նշված որոշման հիման վրա և դրանով սահմանված ժամկետներում պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններն օրենքով սահմանված կարգով որոշումներ են ընդունում փոխարկելի պարտատոմսերի փոխարկելու և տեղաբաշխելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության և այլ երկրների ֆոնդային բորսաներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական գույքի մասնավորեցումն իրականացվում է պետական բաժնետոմսերի և փոխարկվող պարտատոմսերի վաճառքի, ինչպես նաև նոր բաժնետոմսերի բաց բաժանորդագրությամբ տեղաբաշխման միջոցով՝ բորսային առևտրի կանոններին համապատասխան:

Հոդված 20. Պետական գույքի մասնավորեցումը գույքի օգտագործման իրավունքի փոխանցման ձևով

1. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունները սույն օրենքով սահմանված կարգով պետական բաժնեմասը մասնավորեցնելու դեպքում դրանց պատկանող գույքի օգտագործման իրավունքներն ուժի մեջ են նաև մասնավորեցումից հետո, եթե պետական գույքի մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

2. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների օգտակար հանածոների արդյունահանման, բնական վերարտադրվող պաշարների օգտագործման կամ բնական մենաշնորհի համարվող ծառայություններ մատուցելու (ջրամատակարարում, կոյուղի, էներգամատակարարում և այլն) իրավունքը մասնավորեցվում է լրիվ ծավալով և առանց օգտագործման պայմանների փոփոխության՝ այդ ընկերությունների պետական բաժնեմասի մասնավորեցման հետ մեկտեղ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են նախատեսվել նաև օգտակար հանածոների արդյունահանման, բնական վերարտադրվող պաշարների օգտագործման կամ բնական մենաշնորհի համարվող ծառայություններ մատուցելու իրավունքի փոփոխություններ, մասնավորապես ընդերքից, բնական վերարտադրվող պաշարներից օգտվելու և բնական մենաշնորհի համարվող ծառայություններ մատուցելու պայմանագրով և (կամ) արտոնագրերով (լիցենզիաներով) սահմանված մենաշնորհային իրավունքի փոփոխություններ:

4. Եթե համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի օգտակար հանածոների արդյունահանման և, բնական վերարտադրվող պաշարների օգտագործման կամ բնական մենաշնորհի համարվող ծառայություններ մատուցելու իրավունքները փոխանցվում են մասամբ կամ չեն փոխանցվում, ապա չփոխանցված իրավունքները կարող են մասնավորեցվել այլ անձանց, այլ թվում՝ պետական մասնակցությամբ ընկերություններին՝ սույն օրենքով սահմանված մասնավորեցման ձևերով: Սույն կետի համաձայն իրականացվող գույքային իրավունքի մասնավորեցումը կարող է մասնավորեցման ծրագրում ընդգրկված չլինել:

Հոդված 21. Լուծարված պետական ընկերությունների գույքի մասնավորեցումը

Լուծարված պետական ընկերությունների գույքը կարող է մաս-

նավորեցվել սույն օրենքով սահմանված ձևերով՝ որպես գույքի առանձին տարրեր, ինչպես նաև այդ գույքի կամ դրա մի մասի հիման վրա նոր ընկերություն ստեղծելու միջոցով:

Հոդված 22. Լուծարված ընկերությունների (ծեռնարկությունների) գույքի առանձին տարրեր վարձակալության տրամադրելը

Լուծարված պետական ընկերությունների գույքը կարող է տրամադրվել կարծատև կամ երկարատև վարձակալության:

Պետական գույքի առանձին տարրերի վարձատու է լիազորված պետական մարմինը:

Պետական գույքը մարցույթով վարձակալության հանձնելու դեպքում մրցույթի հիմնական պայմանը վարձակալական վճարն է և վարձակալության ժամկետը:

Պետական գույքի վարձակալության դիմաց վարձակալական վճարները (առանց վարձակալության տրամադրման նպատակով կատարված ծախսերի) փոխանցվում են պետական բյուջե:

Հոդված 23. Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումը

1. Մասնավորեցվող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի կազմում ընդգրկված անավարտ շինարարության օբյեկտները բացառությամբ անավարտ շենքերի, որոնցում սահմանված կարգով կատարված է բնակարանների հատկացում, մասնավորեցվում են այդ գույքի հետ, եթե նախապատրաստական աշխատանքներից հետո դրանք չեն առանձնացվել:

2. Անավարտ բնակելի շենքերը, որոնցում սահմանված կարգով կատարված է բնակարանների հատկացում, սեփականության իրավունքով հատկացվում են համապատասխան համայնքներին:

3. Մասնավորեցվող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների կազմում չընդգրկված կամ այդ ընկերությունների կազմից նախապատրաստական աշխատանքներից հետո առանձնացված անավարտ շինարարության օբյեկտները մասնավորեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սույն օրենքով սահմանված մասնավորեցման որևէ ձևով:

4. Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են պայմաններ նախատեսվել հաստատված նախագծով շինարարությունը որոշակի ժամկետում ավարտելու, նախագիծը փո-

փոխելու կամ նոր նախագծով շինարարություն իրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև այլ պայմաններ, այդ թվում՝ նաև կառուցելու, շահագործելու և որոշակի ժամկետից հետո այդ օբյեկտը սեփականության իրավունքով պետությանը վերադարձնելու պայմանը: ...

... Հոդված 25. Մասնավորեցվող պետական գույքի գինը և վճարման կարգը

1. Մասնավորեցվող պետական գույքի գինը ձևավորվում է մասնավորեցման արդյունքում:

Գնի հաշվարկման մեթոդներն են՝

ա) հաշվեկշռային մեթոդը.

բ) կանխիկ հոսքերի ընթացիկ արժեքի որոշման մեթոդը.

գ) համանման ծեռնարկությունների կամ գույքի շուկայական գնի մեթոդը.

դ) եկամտոնների (շահույթի) բազմապատիկի մեթոդը.

ե) միջազգային պրակտիկայում ընդունված այլ մեթոդներ:

Մասնավորեցվող պետական գույքի մեկնարկային գինը որոշվում է վերը նշված մեթոդներից մեկի կամ դրանց զուգակցման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նվազագույն (մեկնարկային) գին:

Մասնավորեցվող պետական գույքի գնահատման մեթոդների ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. «Փոքր» օբյեկտների գները հաշվարկվում են՝ ելնելով դրանց գույքի և զբաղեցրած տարածքի արժեքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:

3. Պետական գույքի մեկնարկային գինը որոշելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է հրավիրել օտարերկրյա փորձագետներ կամ մասնագիտացված կազմակերպություններ:

Հոդված 26. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կարգը

1. Լիազորված պետական մարմինը, Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ, մասնավորեցվող «փոքր» մասնավորեցման օբյեկտները գրավոր առաջարկում է դրանց աշխատավորական կոլեկտիվներին:

2. Գրավոր առաջարկը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում, սշխատավորական կոլեկտիվը լիազորված պետական մարմին

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԻՑ ՍՍՏՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏՆՕՐԻՆԵԼԸ

Հոդված 28. Մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինումը

1. Մասնավորեցումից ստացված միջոցները բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի, փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ համապատասխան ընկերության հաշվին՝ նախապես փոխհատուցելով մասնավորեցման ընթացքում կատարված այն ծախսերը, որոնք պետական բյուջեով նախատեսված չեն:

2. Համայնքային սեփականություն համարվող, այդ թվում՝ պետության կողմից հայեցողական սեփականության իրավունքով համայնքին հանձնված բնակելի շենքերում ընդհանուր օգտագործման տարածքներ չհամարվող ոչ բնակելի տարածքները մինչև 1997 թվականի դեկտեմբերի 15-ը վարձակալած ոչ պետաան տնտեսվարող սուբյեկտներին կամ քաղաքացիներին 1999 թվականի հունվարի 1-ից հետո մասնավորեցնելու դեպքում մասնավորեցումից ստացված միջոցներն ուղղվում են համապատասխան համայնքային բյուջե:

3. Համայնքային սեփականություն համարվող, այդ թվում՝ պետության կողմից հայեցողական սեփականության իրավունքով համայնքին հանձնված բնակելի շենքերում ընդհանուր օգտագործման տարածքներ չհամարվող ոչ բնակելի տարածքները վարձակալության կամ մշտական օգտագործման իրավունքով զբաղեցրած «փոքր» օբյեկտները 1999 թվականի հունվարի 1-ից հետո մասնավորեցնելու դեպքում մասնավորեցումից ստացված այն միջոցները, որոնք վճարվել են զբաղեցրած տարածքը մասնավորեցնելու համար, ուղղվում են համապատասխան համայնքային բյուջե:

(փոփ. 28.12.98) ...

պետք է ներկայացնի գրավոր համաձայնություն՝ օբյեկտը նշված գնով գնելու մասին, ընդհանուր ժողովի որոշումը՝ այդ նպատակով տնտեսական ընկերակցություն կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին, ինչպես նաև մուծի կանխավճար՝ օբյեկտի արժեքի հինգ տոկոսի չափով:

Նշված ժամկետում գրավոր համաձայնությունը չենրկայացնելու և կանխավճարը չմուծելու դեպքում կոլեկտիվը զրկվում է սեփականատեր դառնալու իրավունքից:

3. Բաժնեմասերի բաշխումն աշխատավորական կոլեկտիվի անդամների միջև իրականացվում է կոլեկտիվի անդամների (ըստ սույն օրենքի 12 հոդվածի 6-րդ մասի «ա» կետի սահմանման) որոշմամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, կոլեկտիվի անդամների բաժնեմասեր ձեռք բերելու հավասար իրավունքների հաշվարկով: Եթե կոլեկտիվի անդամը հրաժարվում է իրեն հասանելիք բաժնեմասից, ապա նրա բաժնեմասը հավասարաչափ բաշխվում է կոլեկտիվի մնացած անդամների միջև: «Փոքր» օբյեկտը կարող է սեփականաշնորհվել աշխատավորական կոլեկտիվի անդամներին, եթե դրա հաստիքացուցակային կազմի ավելի քան 50 տոկոսը ցանկություն է հայտնել դառնալ սեփականատեր և կատարել է համապատասխան ներդրում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված պայմանները չկատարելու դեպքում աշխատավորական կոլեկտիվը զրկվում է նախապատվության իր իրավունքից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկու ամսվա ընթացքում նոր որոշում է ընդունում «փոքր» մասնավորեցման օբյեկտն աճուրդով մասնավորեցնելու մասին: «Փոքր» մասնավորեցման օբյեկտն աճուրդով չվաճառելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկու ամսվա ընթացքում նոր որոշում է ընդունում՝ տվյալ «փոքր» օբյեկտն այլ ձևով մասնավորեցնելու մասին:

«Փոքր» օբյեկտն այլ ձևով չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեկ ամսվա ընթացքում նոր որոշում է ընդունում տվյալ «փոքր» օբյեկտը լուծարելու մասին: ...

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Հոդված 35. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարությունների օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ բոլոր լրացումներով և փոփոխություններով:

2. Օրենքի 9 հոդվածը գործում է մինչև 1998 թվականի հունիսի 1-ը, և տեղի ունեցած ներդրումային մասնավորեցումը ձևակերպվում է ընկերության՝ 1997 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով:

Այն ընկերությունների համար, որոնց պետական բաժնեմասի փաստացի մասնավորեցումը տեղի է ունենում մինչև 1998 թվականի հունվարի 1-ը վերոհիշյալ հոդվածը գործում է մինչև այդ պահը:

3. Օրենքի գործողությունը չի տարածվում այն ընկերությունների (ձեռնարկությունների) պետական բաժնեմասի մասնավորեցման վրա, որոնց մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ՝

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

13 հունվարի 1998 թ.
ՀՕ-188

ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.) գիրք Բ, էջ 280-303:

Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Հոդված 1. Օրենքի նպատակը և կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակն է սահմանել փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) ոլորտում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Սույն օրենքը չի տարածվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտների, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունների վրա:

Հոդված 2. ՓՄՁ սուբյեկտները

1. Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

ա) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում հինգ մարդը:

բ) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղե-

* Ընդունվել է 05.12.00, ստորագրվել է 28.12.00, ուժի մեջ է մտել 09.01.01, հրապարակվել է ՀՀՊՏ 2000/33 (131), 30.12.00:

րում – 50,

- շինարարության և էներգետիկայի բնագավառում – 25,
- գիտության և կրթության բնագավառում – 25,
- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում –

15 մարդը:

գ) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերական և նյութական արտադրության այլ ճյուղերում – 100

- շինարարության և էներգետիկայի բնագավառում – 50,
- գիտության և կրթության բնագավառում – 50,
- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում –

30 մարդը:

2. Միաժամանակ մի քանի ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների պատկանելությունը ՓՄՁ սուբյեկտներին որոշվում է դրանց կողմից իրականացվող գործունեության գերակշիռ ոլորտի չափորոշիչներով:

3. Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 3. ՓՄՁ-ի պետական աջացության հիմնական ուղղությունները

ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,
- պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

Հոդված 4. ՓՄՁ-ի աջակցության պետական ծրագիրը

ՓՄՁ-ի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրը մշակվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով:

Ծրագիրը մշակվում է սույն օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից, ներառյալ՝ ՓՄՁ ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ:

Հայաստանի Հանրապետության
նախագահ՝

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

28 դեկտեմբերի 2000 թ.
ՀՕ-121

*ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.) գիրք 9,
երևան 2001 թ, էջ 462-463:*

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
23 հոկտեմբերի 2000 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ
23 հոկտեմբերի 2000 թվականի № 658
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳՈՂՅԱՄԱԿԱՐԳԻ
2000-2001 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ
ՍԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի կենսագործունության ապահովման, ֆինանսական վիճակի բարելավման, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի ֆինանսական կենսունակության վերականգնման միջոցառումների մասին» № 551, 1991 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի մինչև 2001 թվականի զարգացման միջոցառումների մասին» № 555 ու 1999 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի առանձին ֆինանսական հոսքերը և պարտավորությունները կարգավորելու մասին» № 761 որոշումներով նախատեսված ծրագրի իրագործումն ապահովելու և առանձին հիմնախնդիրների լուծումները հստակեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի 2000-2002 թվականների ֆինանսական հոսքերի ծրագրին (կցվում է):
2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը՝
 - ա) հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի 2000-2002 թվականների ֆինանսական հոսքերի ծրագիրը՝ լրամշակել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության

- էներգոհամակարգի ֆինանսական կենսունակության վերականգնման միջոցառումների մասին» № 551 որոշմամբ հաստատված ֆինանսական առողջացման ծրագիրը և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն.
- բ) 30-օրյա ժամկետում կազմել ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատել Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի 2000-2002 թվականների ֆինանսական վիճակի ծրագիրը՝ ըստ առանձին ընկերությունների.
 - գ) ապահովել Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի 2000-2002 թվականների ֆինանսական առողջացման ծրագրում ընդգրկված 100 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից ֆինանսական միջոցների օգտագործումը՝ բացառապես իրենց ամսական ծախսերի նախահաշիվներով նախատեսված ծախսային հոդվածների և գումարների սահմաններում:
 - Նշված ընկերությունների յուրաքանչյուր ամսվա նախահաշիվները հաստատել մինչև դրան նախորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարի հրամանով, իսկ «Հայգազարդ» պետաան փակ բաժնետիրական ընկերության նախահաշիվները՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարի համատեղ հրամանով.
 - դ) 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հետ համաձայնեցնելով՝ հաստատել Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի ընկերությունների կառուցվածքի և աշխատողների թվի օպտիմալացման ծրագիրը:
 - ե) դադարեցնել բյուջետային հիմնարկներին և 50 տոկոս ու ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերություններին սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար տրված ժամկետային, սահմանաքանակային և այլ կարգի արտոնությունների տրամադրումն առանց համապատասխան բանկային երաշխիքների:
 3. Սահմանել, որ բնական գազի և միջուկային վառելիքի ներկրումների, վճարումների և այդ բնագավառում արտաքին վարկերի ձեռքբերման շուրջ բանակցություններն անմիջականորեն և համատեղ վարում են բացառապես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:
 4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության էներգետի-

կայի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարությանը՝

ա) մինչև 2000 թվականի դեկտեմբերի 1-ը կազմակերպել Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի 100 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կառավարումը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կամ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի համակարգի փոխադրելու հետ կապված իրավական փաստաթղթերի փաթեթների մշակումը.

բ) մինչև 2000 թվականի դեկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքների ֆինանսավորման և դրա աղբյուրների վերաբերյալ:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության նախարարություններին, գերատեսչություններին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին և առաջարկել համայնքների ղեկավարներին 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարություն ներկայացնել 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների և բյուջետային հիմնարկների օգտագործած էներգակիրների դիմաց առկա դեբիտորական պարտքերի մարման ժամանակացույցը և համապատասխան երաշխիքներ:

Հանձնարարել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը՝ ամփոփել և պարբերաբար Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել եռամսյակային հաշվետվություն դեբիտորական պարտքերի մարման ծրագրի ընթացքի մասին: ...

...12. Համաձայն 1994 թվականի դեկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային զարգացման ասոցիացիայի միջև կնքված վարկային համաձայնագրի հիման վրա 1995 թվականի մարտի 21-ի Հայաստանի Հանրապետության կառավարության ի դեմս Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Հայէներգո» պետական կոնցեռնի միջև կնքված ենթավարկային համաձայնագրի՝ վարկի գումարը ձևակերպել որպես Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ու

Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, և վարկն օգտագործած էներգահամակարգի հետևյալ ընկերությունների միջև ենթավարկային համաձայնագիր՝ համապատասխան օգտագործված վարկային միջոցների մեծությունների՝

«Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ 4441320 ԱՄՆ-ի դոլար,

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ 2448420 ԱՄՆ-ի դոլար,

«Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ 3357730 ԱՄՆ-ի դոլար,

«Բարձրավոլտ էլցանցեր» ՓԲԸ 2098550 ԱՄՆ-ի դոլար,

«Հայէներգո» ՓԲԸ 871772 ԱՄՆ-ի դոլար:

Օգտագործված վարկային միջոցների (մայր գումարի և կուտակված տոկոսների) մարումն սկսել 2003 թվականից, որի համար 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը համատեղ կազմում են վարկի մարման ժամանակացույցեր և դրանք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարություն:

13. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը՝ էներգոհամակարգի 2000-2001 թվականների ֆինանսական ճեղքվածքը ծածկելու և բարձր տոկոսներով վարկերը վերակառուցելու նպատակով վարել բանակցություններ՝

ա) միջազգային և այլ կազմակերպությունների հետ 15 մլն ԱՄՆ դոլարի չափով աշխատանքային կապիտալ ձեռք բերելու համար.

բ) ներքին կրեդիտորների հետ՝ ծրագրին կից ներկայացված № 2 հավելվածում նշված վերակառուցումներն իրականացնելու համար:

14. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության էներգոհամակարգի առանձին ֆինանսական հոսքերը և պարտավորությունները կարգավորելու մասին» № 761 որոշման 2-րդ կետը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 26 (124) 15 նոյեմբերի 2000 թ., էջ 12-16:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2000 թվականի հուլիսի 28-ին

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ
ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 1998-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՍԱՐԵԼՈՒ
ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ» ԵՎ
«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ » ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ՝**

***Հոդված 1. Օրենքում օգտագործված հիմնական
հասկացությունները***

Սույն օրենքի իմաստով՝

Էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունները՝ «Երևանի էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերություններն են:

Ռազմավարական ներդրողը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման միջազգային մրցույթում հաղթող ճանաչված անձն է, որի հետ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը կնքում է բաժնետոմսերի առքուվաճառքի պայմանագիրը:

բաժնետոմսերի առքուվաճառքի պայմանագիրը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների բաժնետոմսերի առնվազն 51 տոկոսի միջազգային մրցույթով վաճառքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնի և ռազմավարական ներդրողի միջև կնքված պայմանագիրն է:

բաժնետոմսերի ուղղակի վաճառքի պայմանագիրը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների բաժնետոմսերի՝ մինչև 20 տոկոսի վաճառքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառա-

վարության կողմից լիազորված մարմնի և միջազգային ֆինանսական հաստատության միջև կնքվող պայմանագիրն է:

սակագնային մարջան՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների կողմից էլեկտրաէներգիայի գնման և սպառողներին դրա վաճառքի գնի տարբերությունն է:

էլեկտրաէներգիա բաշխող նոր ընկերությունները՝ մասնավորեցումից հետո էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների հիման վրա ձևավորված և սահմանված կարգով էլեկտրաէներգիայի բաշխման համար գործունեության լիցենզիա ստացած առևտրային կազմակերպություններն են:

մրցույթ՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման միջազգային մրցույթն է, որին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախնական որակավորում ստացած անձինք:

մրցութային հանձնաժողովը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման գործընթացը կազմակերպող և կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստեղծվող հանձնաժողովն է, որի գործունեությունը ստեղծվում կամ կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և դրանց համապատասխան՝ մրցութային հանձնաժողովի որոշումներով:

մրցույթի պայմանները՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների բաժնետոմսերի մասնավորեցման միջազգային մրցույթի անցկացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող պայմաններն են:

բաշխման գործունեության սակագինը՝ էլեկտրաէներգիայի բաշխման ցանցերով բաշխման ծառայությունների համար սահմանվող սակագինն է:

Հոդված 2. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման հետ կապված հարաբերությունները և սահմանում է այդ մասնավորեցման հիմնական սկզբունքներն ու պայմանները:

***Հոդված 3. Էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների
մասնավորեցման մասին Հայաստանի
Հանրապետության օրենսդրությունը***

էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցումը

^{*} Ընդունվել է 28.07.00, ստորագրվել է 12.08.00, ուժի մեջ է մտել 29.08.00, հրապարակվել է ՀՀՊՏ 2000/20 (118), 29.08.00:

կարգավորվում է սույն օրենքով, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերով:

Հոդված 4. «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

«Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ 1998-2000 թվականների մասնավորեցման առաջարկվող պետական ընկերությունների (ծեռնարկությունների) ցանկի «Էներգետիկա» բաժինը լրացնել հետևյալ տողերով՝

60068	«Երևանի էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերություն	ք. Երևան, Մյասնիկյանի	Մասնավորեցում (միջազգային մրցույթ և ուղղակի վաճառք)
60069	«Հյուսիսային էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերություն	ք. Գյումրի, Շարա Տալանի 1	Մասնավորեցում (միջազգային մրցույթ և ուղղակի վաճառք)
60070	«Հարավային էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերություն	ք. Արտաշատ, Արագու 43	Մասնավորեցում (միջազգային մրցույթ և ուղղակի վաճառք)
60071	«Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերություն	ք. Արմավյան Արզնու պողոտա	Մասնավորեցում (միջազգային մրցույթ և ուղղակի վաճառք)

Հոդված 5. Մասնավորեցման հիմնական նպատակները

էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման հիմնական նպատակներն են՝

ա) Հայաստանի Հանրապետությունում սահմանված տեխնիկական կանոնակարգերին և գործունեության լիցենզիայի պայմաններին համապատասխան էլեկտրաէներգիայի անխափան և հուսալի շուրջօրյա մատակարարման ապահովումը սպառողներին:

բ) էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների կառավարման արդյունավետության և էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի հուսալիության բարձրացումը, էլեկտրաէներգիայի կորուստների առավելագույն նվազեցումը:

գ) էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի վերազինման, ընդլայնման և զարգացման համար ներդրումների ներգրավման ապահովումը:

դ) սպառողներին մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց գումարների գանձման և որպես հետևանք էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավումը:

ե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համալրումը: ...

... **Հոդված 16.** էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների հարկային պարտավորությունների կարգավորումը

1. Մասնավորեցվող էլեկտրաէներգիա բաշխող ընկերություններն ազատվում են մասնավորեցման պահին նախորդող ժամանակաշրջանի գործունեության հետևանքով առաջացած հարկային պարտավորություններից, որոնք կհայտնաբերվեն կամ կարձանագրվեն մասնավորեցումից հետո:

2. Սույն օրենքի 10 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերակառուցման հետևանքով իրականացվող գործարքի մասով Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի ընկերություններն ազատվում են առաջացող լրացուցիչ շահութահարկից և ավելացված արժեքի հարկից:

Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Ճախագահ՝

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

12 օգոստոսի 2000 թ.
ՅՕ-84

ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.) գիրք 9, Երևան 2001 թ, էջ 348-353:

*Հաստատված է
ՀՀ վարչապետի 2000 թ.
սեպտեմբերի 13-ի № 630 որոշմամբ*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության պետական գույքի
կառավարման նախարարություն**

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարությունը (այսուհետև՝ նախարարություն) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որն իրականացնում է պետական գույքի կառավարման միասնական պետական քաղաքականություն:

2. Նախարարությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ու իր խնդիրներն իրագործելու նպատակով իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորություններ:

3. Նախարարությունն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից իր գործողություններով կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու կրել պարտականություններ, ինչպես նաև հանդես գալ դատարանում:

4. Նախարարությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ:

5. Նախարարության կենտրոնական ապարատի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բուջեի միջոցների հաշվին:

6. Նախարարության խնդիրներն են՝

ա) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման, տնօրինման և գույքի օգտագործման պետական միասնական քաղաքականության պետական հիմնադրույթների մշակումը և դրանց իրականացման կազմակերպումը.

բ) իր իրավասության սահմաններում մշակում է տնտեսության պետական սեփականության արդյունավետ օգտագործման քաղաքականության հիմնադրույթները և կազմակերպում այդ ոլորտին վերաբերող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների իրականացումը.

գ) պետական գույքի շրջանակներում արժեթղթերի շուկայի զարգացմանը, ներդրումների ներգրավմանն աջակցելը.

դ) պետական գույքի արդյունավետ կառավարման միջոցով պետական եկամուտների ավելացմանը նպաստելը.

ե) մասնակցությունը պետության կողմից իրականացվող ձեռնարկատիրության ոլորտում միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակմանը և իր ոլորտում միացմանը.

զ) մասնավորեցման ու պետական գույքի կառավարման գիտամեթոդական ապահովումը և մասնակցությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանը:

*ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23 (121) 16 հոկտեմբերի 2000 թ.,
էջ 125-126:*

**Դ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**№ 28
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ընդունված Ազգային ժողովի կողմից
14 ապրիլի 1999 թ.

**ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

***Յոդված 1. Կրթության մասին Հայաստանի Հանրապետության
օրենսդրությունը***

Սույն օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

Կրթության բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

***Յոդված 2. Կրթության բնագավառում օրենսդրության
խնդիրները***

Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ անրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը:

2) իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

3) կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը:

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

***Յոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական
հասկացությունները***

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկա-

ցությունները.

1) կրթություն՝ անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու նոր սերունդներին փոխանցելու համար:

2) պետական կրթական չափորոշիչ՝ նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավեալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

3) կրթական ծրագիր՝ կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը:

4) ուսումնական հաստատություն՝ պետական հիմնարկ կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

5) մանկապարտեզ (մսուր-մանկապարտեզ, ընտանեկան մանկապարտեզ)՝ նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություն:

6) հանրակրթական դպրոց՝ հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն:

7) վարժարան՝ ավանդական և այլընտրանքային մանկավարժական մեթոդների զուգորդմամբ հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ) իրականացնող ուսումնական հաստատություն: Վարժարանը կարող է իրականացնել նաև հիմնադրի առաջարկած և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած մանկավարժական գիտափորձը:

8) կրթահամալիր՝ տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում:

9) քոլեջ, ուսումնարան՝ ուսումնական հաստատություն, որտեղ իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագիր:

10) համալսարան՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

11) ինստիտուտ՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ.

12) ակադեմիա (ուսումնական)՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը.

13) կոնսերվատորիա՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է երաժշտության ոլորտում մասնագետների պատրաստմանը, որակավորման բարձրացմանը և հետբուհական կրթական ծրագրերի իրականացմանը.

14) մասնաճյուղ՝ ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր.

15) ուսումնական կենտրոն՝ ուսումնական հաստատություն, որն իրականացնում է նախնական ու լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր և կատարում է գիտական ուսումնասիրություններ.

16) լիցենզավորում՝ ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց.

17) ատեստավորում՝ ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան.

18) պետական հավատարմագրում՝ պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը.

19) կրտսեր մասնագետ՝ միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող և եռամյա միջին մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց.

20) բակալավր՝ բարձրագույն մասնագիտական կրթության

որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող և առնվազն քառամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց.

21) դիպլոմավորված մասնագետ՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կամ մասնագիտական կրթություն ունեցող անձանց՝ առնվազն հնգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

22) մագիստրոս՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ երկամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

23) հետազոտող՝ հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

24) ինտերն՝ բարձրագույն բժշկական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բժշկական բարձրագույն կրթական ծրագրերն ավարտած և առնվազն մեկ տարվա հետբուհական կրթություն ստացած անձանց.

25) կլինիկական օրդինատոր՝ բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճան, որը շնորհվում է բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձանց՝ երկուսից մինչև հինգ տարվա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

26) էքստեռն (այսուհետ՝ դրսեկություն)՝ ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող ձև:

7որդ ված 4. Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության անրապնդման կարևորագույն գործոն:

2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության

հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ծնավորումն է:

3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ եկեղեցին:

4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

5. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

Չորրորդ 5. Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը:

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ:

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը:

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը:

5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեության

աջակցելը:

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը:

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը:

8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը:

9) պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը: ...

**...ԳԼՈՒԽ 2
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Չորրորդ 8. Կրթության համակարգը

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

Չորրորդ 9. Պետական կրթական չափորոշիչները

Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից:

Չորրորդ 10. Կրթական ծրագրերը

1. Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերն են՝

1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

2. Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

- 1) նախադպրոցական կրթությունը.
- 2) տարրական ընդհանուր կրթությունը.
- 3) հիմնական ընդհանուր կրթությունը.
- 4) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը.
- 5) հատուկ ընդհանուր կրթությունը:

3. Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական ծրագրերն են՝

- 1) նախնական մասնագիտական (արհեստագործական).
- 2) միջին մասնագիտական.
- 3) բարձրագույն մասնագիտական.
- 4) հետբուհական մասնագիտական:

4. Ուսումնական հաստատություններում հանրակրթական և մասնագիտական հիմնական ծրագրերի յուրացման ժամկետները որոշվում են սույն օրենքով և համապատասխան պետական կրթական չափորոշիչով:

5. Լրացուցիչ կրթական ծրագրերը (հանրակրթական և մասնագիտական) նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների ու մասնագետների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:

Չորրորդ 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի հմակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինք-

նադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

2. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների ինքնաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարարտադրությունն ու զարգացումը:

Չորրորդ 12. Կրթության ձևերը

1. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար) հեռակա և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով:

2. Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

Չորրորդ 13. Ուսումնական հաստատությունների տիպերը

1. Ուսումնական հաստատությունների տիպերն են՝

1) նախադպրոցական.

2) հանրակրթական (տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, հատուկ ընդհանուր).

3) միջին մասնագիտական.

4) բարձրագույն մասնագիտական.

5) լրացուցիչ կրթության.

6) հետբուհական մասնագիտական կրթության:

2. Սույն օրենքին համապատասխան՝ կրթական ծրագրերը կարող են իրականացվել նաև ոչ ուսումնական հաստատություններում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

Չորրորդ 14. Կրթության գործընթացի կազմակերպումը

1. Կրթության գործընթացը կազմակերպվում է սույն օրենքին

համապատասխան և կարգավորում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները: Դրանք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

4. Բարձրագույն կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատությունը: Դրանք ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին:

5. Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչով:

6. Հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի անցկացման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

7. Դրսեկության ձևով հանրակրթության, մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Հեռակա ձևով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: ...

... **Հոդված 17. Նախադպրոցական կրթությունը**

1. Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են՝
1) երեխայի ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը:

2) մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը,

3) հաշվետու տարրական կարողությունների զարգացումը,

4) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը:

5) հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացում ձևավորելը:

6) աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը:

7) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պայմաններ է ստեղծում ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար:

3. Ընտանիքին աջակցելու համար պետությունն ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագրերով մտերմանկապարտեզներ և մանկապարտեզներ:

Հոդված 18. Տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը

1. Հանրակրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է:

2. Հանրակրթության հիմնական խնդիրներն են՝

1) սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը:

2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը:

3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:

3. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 10 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ).

2) միջին դպրոց (4-8-րդ դասարաններ).

3) ավագ դպրոց (9 -10-րդ դասարաններ):

4. Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

5. Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը:

6. Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում:

7. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ, 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը:

Պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19. Հատուկ ընդհանուր կրթությունը

1. Պետությունը հանրակրթական դպրոցի համապատասխան աստիճանի ծրագրով ստեղծում է մանկատներ և գիշերօթիկ դպրոցներ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցմանն աջակցելու նպատակով:

2. Պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

4. Օրինազանց անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումը, օրենքով սահմանված կարգով, իրականացնում են հատուկ ռեժիմի դպրոցները:

5. Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:

Հոդված 20. Արտադպրոցական դաստիարակությունը

1. Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

2. Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ծամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Հոդված 21. Մասնագիտական կրթական ծրագրերի

իրականացումը

1. Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրականացնում են սույն օրենքով նախատեսված՝ կրթության տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրեր՝ նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստման նպատակով:

2. Միջին և բարձրագույն մասնագիտական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 22. Նախնական մասնագիտական

(արհեստագործական) կրթությունը

1. Նախնական մասնագիտական կրթության նպատակը սովորողներին հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական, որակավորում պահանջող աշխատանքային գործունեության համար նախապատրաստելն է:

2. Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում է ավագ դպրոցների արհեստագործական հոսքերում, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ուսումնասիրտադրական կենտրոններում:

Հոդված 23. Միջին մասնագիտական կրթությունը

1. Միջին մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումը, միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումն է:

2. Մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթության կազմակերպում, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր:

4. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է միջին մասնագիտական որակավորում: Բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողների և շրջանավարտների՝ համա-

պատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը կրթության կառավարման պետական լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 24. Բարձրագույն մասնագիտական կրթությունը

1. Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջ-մունքների բավարարումը:

2. Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերի ձևով (առկա, հեռակա, դրսեկություն), կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ:

4. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

1) բակալավր.

2) դիպլոմավորված մասնագետ.

3) մագիստրոս:

5. Դիպլոմավորված մասնագետ պատրաստող բուհերի մասնագիտությունների ցանկը կրթության կառավարման պետական լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունը, իր բնույթին համապատասխան և օրենքով սահմանված կարգով, կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցրած մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

Հոդված 25. Հետբուհական մասնագիտական կրթությունը

1. Հետբուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է:

2. Հետքուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով, ինչպես նաև ուսումնական կենտրոններում՝ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով:

Հոդված 26. Լրացուցիչ կրթությունը

1. Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն անձի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է:

2. Լրացուցիչ կրթությունն իրականացվում է հանրակրթական, մասնագիտական և լրացուցիչ կրթության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև անհատական մանկավարժական գործունեության միջոցով, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 3.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 27. Ուսումնական հաստատության կարգավիճակը

1. Պետական ուսումնական հաստատությունը հիմնարկ է, որը սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իր գործունեության նպատակին, իր հիմնադրի հաստատած կանոնադրության և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան տիրապետում, օգտագործում ու տնօրինում է այդ գույքը:

2. Պետական ուսումնական հաստատությունը, իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական ուսումնական հաստատությունն ունի հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

4. Պետական ուսումնական հաստատության իրավական վիճա-

կի այլ առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և դրա հիմնադրի հաստատած կանոնադրությամբ:

5. Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

ԳԼՈՒԽ 4.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 36. Կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

- 1) ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը.
- 2) հաստատում է պետական կրթական չափորոշիչները և դրանց ձևավորման կարգը,
- 3) հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,
- 4) հաստատում է հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը.
- 5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.
- 6) հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը,
- 7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 37. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝

- 1) մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը և պետական կրթական չափորոշիչները.
- 2) վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ,
- 3) ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը.

4) իրականացնում է ուսումնական հաստատությունների լիցենզավորումը և պետական հավատարմագրումը:

5) մշակում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները:

6) հաստատում է ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը:

9) ձևավորում է ուսումնական մասնագիտությունների ցանկերը:

8) մշակում է հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերը:

9) հաստատում է պետական և հավատարմագրված ու պետական միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները, վերահսկում է դրանց իրականացումը:

10) հաստատում է ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը:

11) սահմանված կարգով հաստատում է հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումները և տիտղոսները:

12) մշակում է կրթության բոլոր աստիճանների գծով պետական մոնիչի ավարտական փաստաթղթերի ձևերը:

13) սահմանում է օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգը:

14) ապահովում է պետական ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի ձևավորումը, իրականացումը և վերահսկումը:

15) համաձայնություն է տալիս մարզպետարանների և համայնքների կրթության վարչությունների (բաժինների) ղեկավարների նշանակման և ազատման վերաբերյալ:

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ: ...

... ԳԼՈՒԽ 5

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 45. Սեփականության հարաբերությունները կրթության համակարգում

1. Պետական ուսումնական հաստատության գործունեությունը ապահովելու նպատակով, դրա կանոնադրությամբ համապատասխան, հիմնադիրը հաստատությանն է հանձնում շենքեր, շինություններ, սարքավորում, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

2. Պետական ուսումնական հաստատությունը պատասխանատու է սեփականատիրոջ գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

3. Ոչ պետական ուսումնական հաստատությունների սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացի գույքի առանձին տեսակների համար՝ օրենքով նախատեսված սահմանափակումներից: ...

... ԳԼՈՒԽ 6

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 49. Սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը

1. Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

2. Արգելվում է սովորողներին ներգրավել աշխատանքի՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգորդների կամ հոգաբարձուի) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է:

3. Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ:

4. Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում:

5. Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով:

6. Պետական միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կրթաթոշակ են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

7. Ռազմաուսումնական հաստատությունների սովորողները դրամական բավարարմամբ, հանդերձանքով, սննդով և կացարանով ապահովվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա բաժինների սովորողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալ երկրորդ մասնագիտություն:

9. Սովորողներն ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իրավունք ունեն տեղափոխվել համապատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն: ...

... ԳԼՈՒԽ 7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒՄ

Հոդված 51. Միջազգային համագործակցությունը կրթության բնագավառում

1. Կրթության բնագավառում միջազգային համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

2. Ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությա-

նը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

ԳԼՈՒԽ 8
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 52. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԼՈՒԽ 9
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 53. Սույն օրենքի 28 հոդվածի 5-րդ կետն ուժի մեջ է մտնում միջին և բարձրագույն մասնագիտական կրթության մասին օրենքն ընդունելուց հետո:

Հոդված 54. Սույն օրենքի 50 հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ՝

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

Երևան,
8 մայիսի 1999 թ.
ՀՕ-297

*Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր
Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը
№ 12 (78) 14 մայիսի 1999 թ.:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

Հայաստանի Հանրապետությունում աղքատության
ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության
մշակման և վճարման կարգի մասին

3 հուլիսի 2000 թ. թիվ 350
քաղ. երևան

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի հա-
մակարգի կատարելագործման և աղքատ ընտանիքների նկատմամբ
հասցեական սոցիալական աջակցության իրականացման արդյունա-
վետությունը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապե-
տության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում աղքատութ-
յան ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության մշա-
կման և վճարման կարգը (կցվում է):

2. Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոննե-
րին կից ստեղծել հասարակական հիմունքներով գործող սոցիալա-
կան աջակցության խորհուրդներ, որոնց կազմում ի պաշտոնե
ընդգրկվում են սոցիալական ծառայությունների, աշխատանքի և
զբաղվածության, կենսաթոշակային ապահովագրության տարած-
քային կենտրոնների տնօրենները և մարզպետարանի ու ներքին
գործերի տարածաշրջանային բաժինների անչափահասների գործե-
րով տեսչության, ինչպես նաև հասարակական կազմակերպություն-
ների ներկայացուցիչները:

3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ընտա-
նեկան նպաստների համար նախատեսված գումարների 95 տոկոսը
նպատակաուղղել աղքատության ընտանեկան նպաստի, իսկ 5 տո-
կոսը միանվագ դրամական օգնության վճարմանը:

4. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովութ-
յան նախարարությանը մեկամսյա ժամկետում հաստատել սոցիա-
լական ծառայությունների տարածքային կենտրոններին կից սոցիա-
լական աջակցության խորհուրդների կանոնադրությունը:

5. Սահմանել.

ա) աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամա-
կան օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական մի-
ջոցների ամսական չափն ըստ սոցիալական ծառայությունների տա-
րածքային կենտրոնների՝ հաշվի առնելով ընտանիքների անապա-
հովության աստիճանի գնահատման կարգով որոշված աղքատ ըն-
տանիքների թիվը՝ համաձայն հավելվածի.

բ) ընտանիքի անապահովության սահմանային մեծությունը 36
միավոր.

գ) աղքատության ընտանեկան նպաստի բազային մասը 3000
դրամ.

դ) ընտանիքի յուրաքանչյուր անդամին տրվող հավելումը 1300
դրամ.

ե) միանվագ դրամական օգնության չափը՝
անապահովության սահմանային մեծության միավորից բարձր
անապահովության միավոր ձեռք բերած ընտանիքի համար՝ աղքա-
տության ընտանեկան նպաստի բազային մասի չափով:

6. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովութ-
յան նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ֆինանսնե-
րի և էկոնոմիկայի նախարարությանը, Հայաստանի Հանրապետութ-
յան տրանսպորտի և կապի նախարարությանը մեկամսյա ժամկե-
տում համատեղ հաստատել Հայաստանի Հանրապետությունում
աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգ-
նության մշակման և վճարման կարգի կիրարկման մասին հրա-
հանգները:

7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության արդարադա-
տության նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ներ-
քին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության է-
ներգծտիկայի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների նախարարությանը, Հայաստանի Հանրա-
պետության տրանսպորտի և կապի նախարարությանը, Հայաստանի
Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական
հիմնադրամին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և առա-
ջարկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական
ծառայությանը Հայաստանի Հանրապետության սոցիալական ապա-
հովության նախարարությանը պարբերաբար տրամադրել համապա-
տասխան տեղեկատվություն (ծևը կցվում է):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
26 դեկտեմբերի 1997 թվական

**ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների (այսուհետ՝ սոցիալական վճարներ) հասկացությունը, հավաքագրման իրական, ֆինանսական և կազմակերպական հիմունքները, դրույքաչափերը և վճարման կարգը:

**Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Սույն օրենքով սահմանված հիմնական
հասկացությունները**

Սույն օրենքով սահմանված հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

Ապահովագիր՝ սոցիալական վճարները հաշվարկող, դրանց պահումները կատարող և ՀՀ կառավարության լիազորած մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին) փոխանցող (վճարող) իրավաբանական և ֆիզիկական անձ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն:

Ապառք՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում ապահովագիրների չվճարած սոցիալական վճարների գումար:

Հոդված 2. Սոցիալական վճարների մասին օրենսդրությունը

1. Սոցիալական վճարների կատարումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենքով և ՀՀ օրենսդրական այլ ակտերով:

2. Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչությանը՝ մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով լուսաբանել աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման ու վճարման կարգը:

9. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայության և Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես առավել անապահով ընտանիքներին ընտանեկան նպաստ նշանակելու և վճարելու կարգի վերաբերյալ կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 458 որոշումը, 1997 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» թիվ 562 որոշման 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 1998 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի համակարգը ներդնելու մասին» թիվ 727 որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը և 1998 թվականի դեկտեմբերի 31-ի «Ընտանեկան նպաստի (անապահովության սահմանային մեծության միավորի, բազային նպաստի, ընտանիքի յուրաքանչյուր անդամին տրվող հավելման չափի) մասին» թիվ 865 որոշումը:

10. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան, 2001, էջ 182:

Գ Լ Ո Ւ Խ 2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ,
ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

**Հոդված 3. Սոցիալական վճարների հասկացությունները
և կատարողները**

1. Սոցիալական վճարները պետական սոցիալական ապահովագրության ծրագրի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներ են:

2. Սոցիալական վճարումները կատարվում են հայկական դրամով: Արտարժույթով վճարվող գումարները վերահաշվարկվում են հայկական դրամով՝ վճարման օրը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած արժույթային փոխարժեքին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ինչպես նաև՝ ՀՀ քաղաքացիները պարտավոր են կատարել սոցիալական վճարումներ, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Սոցիալական վճարումներ են կատարում՝

ա) գործատուները,

բ) վարձու աշխատողները,

գ) անհատ ձեռներեցները (ձեռնարկատերերը),

(զ) ենթակետը լրաց. 06.07.00 ՀՕ74 օրենք)

դ) գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող անձինք:

ե) գյուղացիական տնտեսությամբ զբաղվող անձինք:

5. Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք սոցիալական վճարումներ չեն կատարում:

**Հոդված 4. Սոցիալական վճարների հաշվարկման
օբյեկտները**

1. Սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են՝

ա) գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները.

բ) վարձու աշխատանք կատարող ֆիզիկական անձանց աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները.

գ) անհատ ձեռներեցների (ձեռնարկատերերի), գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող, ինչպես նաև սույն հոդվածում չնշված անձանց տարեկան եկամուտները՝ «եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումները (բացառությամբ՝ սոցիալական ապահովագրության վճարների) կատարելուց հետո,

(զ) ենթակետը լրաց. 06.07.00 ՀՕ74 օրենք)

դ) գյուղացիական տնտեսությունների սեփականություն համարվող հողատարածքների կադաստրային գույտ եկամուտը:

2. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 5. Սոցիալական վճարների դրույքաչափերը

1. Գործատուները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար սոցիալական վճարումները կատարում են նրան վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող և դրանց հավասարեցված միջոցների ընդհանուր գումարի (այսուհետ աշխատավարձի) նկատմամբ 28 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 5000 դրամից և ոչ ավելի՝

ա) մինչև 200 հազար դրամ աշխատավարձի տիրույթում՝ 20 հազար դրամից.

բ) 200 հազար դրամից ավելի աշխատավարձի տիրույթում՝ 20 հազար դրամին գումարած աշխատավարձի 200 հազար դրամը գերազանցող մասի 28 տոկոսը, բայց ոչ ավելի 30 հազար դրամից: (5 հոդ. 1-ին կետը խմբ. 14.12.98.ՀՕ-266 օրենք, 06.07.00 ՀՕ-74)

2. Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով, բայց ամսական ոչ ավելի 2500 դրամից, որոնց պահումները կատարում և լիազորված մարմին են փոխանցում գործատուները: (5 հոդ. 2-րդ կետը խմբ. 14.12.98.ՀՕ-266 օրենք)

3. Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները, այն ձեռնարկությունները, դրանց տնտեսական միավորումները,

հիմնարկները, ուսումնական հաստատությունները և կազմակերպությունները, որտեղ աշխատողների և սովորողների ոչ պակաս 50 տոկոսը հաշմանդամ է, սոցիալական վճարների դրույքաչափը սահմանվում է աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով:

4. Գյուղացիական տնտեսությունները սոցիալական վճարումներ են կատարում սեփականություն համարվող հողատարածքների՝ տվյալ տարվա համար սահմանված կարգով հաշվարկված կադաստրային զուտ եկամտի 12 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 150 հազար դրամ՝ մեկ տարվա ընթացքում: Վարձու աշխատանք օգտագործող գյուղացիական տնտեսությունները սոցիալական վճարումներ են կատարում նաև գործատուների և վարձու աշխատողների համար սահմանված դրույքաչափերով:

(5 հոդ. 4-րդ կետը փոփ. 14.12.98. ՀՕ-266 օրենք)

5. Անհատ ձեռներեցները (ձեռնարկատերերը), գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող, ինչպես նաև սույն հոդվածում չնշված անձինք սոցիալական վճարումներ են կատարում իրենց տարեկան եկամտի 20 տոկոսի, բայց յուրաքանչյուր ամիս ոչ պակաս 1500 և ոչ ավելի 20 հազար դրամի չափով:

(5 հոդ. 5-րդ կետը փոփ. 14.12.98. ՀՕ-266 օրենք, լրաց. 06.07.00 ՀՕ-74)

6. Բնաիրային ձևով ստացված եկամուտները սոցիալական վճարների օբյեկտում հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. Սույն օրենքով սահմանված սոցիալական վճարները հաշվարկելու, դրանց պահումները կատարելու և լիազորված մարմին փոխանցելու (վճարելու) պարտականությունները դրվում են ապահովադիրների վրա:

Յոդված 6. Սոցիալական վճարների հաշվարկման և վճարման կարգը

1. Գործատուները պարտավոր են ամեն ամիս սոցիալական վճարները հաշվարկել և փոխանցել (վճարել) լիազորված մարմին՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները բանկից կամ դրամարկղից ելքագրելու օրը:

2. Գյուղացիական տնտեսությունների սոցիալական վճարները

հաշվարկում է լիազորված մարմինը և նշում դրանց տրվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժանուցագրերում:

3. Գյուղացիական տնտեսությունները, անհատ ձեռներեցները (ձեռնարկատերերը) գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող անձինք տարվա համար հաշվարկված սոցիալական վճարումները կատարում են հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ:

(6 հոդ. 3-րդ կետը լրաց. 06.07.00 ՀՕ-74 օրենք)

4. Գործատուն, յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի արդյունքներով, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը լիազորված մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովադիրից գանձվում է տույժ՝ ապառքի 0,2 տոկոսի չափով: Վերոհիշյալ տույժը կիրառվում է նաև ստուգմամբ հայտնաբերված (պակաս ցույց տրված) սոցիալական վճարումների, սոցիալական վճարների նվազեցված հաշվարկման օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարների գծով՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար:

Հայցային վաղեմության և զանձման անվիճելիության կարգի կիրառման համար սահմանվում է երեք տարվա ժամկետ՝ ապառքի գոյացման պահից:

(6 հոդ. 5-րդ կետը փոփ. 14.12.98. ՀՕ-266 օրենք)

6. Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու, վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում ապահովադիրից սույն օրենքով սահմանված կարգով գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված (լիազորված մարմնին կողմից) սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, իսկ լիազորված մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սոցիալական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու, վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-

ված կարգով չձևակերպելու դեպքում՝ սոցիալական վճարների ամբողջ գումարի չափով:

(6 հոդ. 6-րդ կետը լրաց. 06.07.00 ՉՕ-74 օրենք)

Վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում՝ սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտը չձևակերպված յուրաքանչյուր աշխատողի համար տվյալ գործատուի մոտ տվյալ պահին հաշվարկվող ամսական միջին աշխատվարձի և դրան հավասարեցված եկամուտների 12-ապատկն է:

(6 հոդ. 6-րդ կետի 2-րդ մասը լրաց. 06.07.00 ՉՕ-74 օրենք)

7. Ապահովադիրները, լիազորված մարմին, վերջինիս կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում, վճարում են թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև սույն օրենքով հաշվարկված տույժերը և տուգանքները:

8. Սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում լիազորված մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ ապահովագրի գույքը բռնագանձելու նպատակով: Լիազորված մարմինը, որպես սոցիալական վճարների պարտքը (ապառքի և հաշվարկված տույժերի գումարը) բռնագանձելու մասին դատարանի վճռի հարկադիր կատարման միջոց, ապահովագրի գույքի վրա դնում է արգելանք և ապահովում դրա իրացումը:

9. Սոցիալական վճարումների կատարման արտոնությունները սահմանվում են օրենքով:

Չոդված 7. Ավել վճարված սոցիալական վճարները

ապահովագրին վերադարձնելու կարգը

Ավել վճարված սոցիալական վճարների գումարները հաշվանցվում են հաշվարկված տույժերի, ապահովագրի համաձայնությամբ՝ առաջիկա սոցիալական վճարների դիմաց կամ վերադարձվում են վճարողին՝ դիմելու օրվանից 30 օրվա ընթացքում, որից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար լիազորված մարմինը վճարում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0,2 տոկոսի չափով:

(7 հոդ. խմբ. 14.12.98 ՉՕ-266 օրենք)

Գ Լ ՈՒ Խ 4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆԸ

*Չոդված 8. Սոցիալական վճարների հավաքագրումը
և գանձումն ապահովող մարմինը*

Սոցիալական վճարների հավաքագրումը և գանձումն ապահովում է լիազորված մարմինը, որը կուտակված միջոցները, մինչև պարտադիր սոցիալական ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելը, ուղղում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերով:

Չոդված 9. Լիազորված մարմնի հիմնական իրավասությունը

Սոցիալական վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը, որն իրավասու է՝

ա) գործատուների մոտ կատարել աշխատանքի վարձատրությանն ուղղվող և դրանց հավասարեցված միջոցների, անհատ ձեռնեղենների (ձեռնարկատերերի), գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղված, ինչպես նաև սույն հոդվածում չնշված անձանց մոտ՝ սոցիալական վճարների օբյեկտ հանդիսացող եկամուտների հաշվարկման և վճարման փաստաթղթերի, վարձու աշխատողների աշխատանքի ընդունման հրամանների (կարգադրությունների), աշխատանքային պայմանագրերի ստուգում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(9 հոդ. ա) ենթակետը խմբ. 14.12.98 ՉՕ-266 օրենք, լրաց. 06.07.00 ՉՕ-74 օրենք)

բ) ապահովագրիներից պահանջել և ստանալ սոցիալական վճարներին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

գ) ստուգվող ապահովագրիներից պահանջել վերացնելու սույն օրենքի պահանջների խախտումները:

դ) բանկերից, ֆինանսավարկային կազմակերպություններից պահանջել և ստանալ սոցիալական վճարներին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով

սահմանված կարգով.

ե) Պետական գրանցում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, լիազորված մարմնում չհաշվառված կամ սահմանված ժամկետներում սոցիալական վճարումներ չկատարող ապահովագրորհին (նրանց ղեկավարներին և պաշտոնատար անձանց) ենթարկել պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

զ) Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դատարան ներկայացնել ապահովագրի լուծարման պահանջ:

(9 հոդ. գ) ենթակետը լրաց. 06.07.00 ՀՕ-74 օրենք)

Գ Լ ՈՒ Խ 5

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ,
ԻՐԱՎՈՒՄՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Սոցիալական վճարներ կատարողների գրանցումը

1. Գործատուները, գյուղացիական տնտեսությունները, անհատ ձեռներեցները (ձեռնարկատերերը), գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղված անձինք պետական գրանցում ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում պարտավոր են որպես ապահովագիր գրանցվել լիազորված մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
(10-րդ հոդ. 1-ին կետը խմբ. 14.12.98 ՀՕ-266 օրենք, լրաց. 06.07.00 ՀՕ-74 օրենք)

2. Գործատուները, գյուղացիական տնտեսությունները և անհատ ձեռներեցները (ձեռնարկատերերը) գրանցվում և հաշվառվում են ըստ գործունեության պետական գրանցման վայրի:
(10-րդ հոդ. 2-րդ կետը լրաց. 06.07.00 ՀՕ-74 օրենք)

3. Գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող անձինք լիազորված մարմնում գրանցվում և հաշվառվում են ըստ բնակության վայրի:

**Հոդված 11. Սոցիալական վճարներ կատարողների
իրավունքները, պարտականությունները
և պատասխանատվությունը**

1. Սոցիալական վճարումներ կատարողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն՝

ա) մասնակցել ստուգումներին, ծանոթանալ իրենց գործունեության ստուգման ակտերին և ստանալ դրանց մեկ օրինակը.

բ) ստուգումների արդյունքների հետ չհամաձայնելու դեպքում՝ ակտն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ներկայացնել գրավոր առարկություններ կամ այն գանգատարկել դատական կարգով.

գ) գանգատարկել լիազորված մարմնի պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունները.

դ) լիազորված մարմնից ստանալ պարզաբանումներ՝ սոցիալական վճարների հաշվարկման և կատարման մասին.

ե) պահանջել և ստանալ կամ հաշվանցել ապագա վճարումների հաշվին ավել վճարված կամ գանձված սոցիալական վճարների գումարները:

2. Սոցիալական վճարումներ կատարողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր են՝

ա) գրանցվել և հաշվառվել լիազորված մարմնում.

բ) լիազորված մարմին ներկայացնել հաշվետվություններ, եկամուտների մասին հայտարարագրեր.

գ) ներկայացնել արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող համապատասխան փաստաթղթեր:

3. Գործատուի և անհատ ձեռներեցի (ձեռնարկատիրոջ կողմից հաշվապահական հաշվառում չվարելը կամ այնպիսի խախտումներով վարելը կամ սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելը կամ սոցիալական վճարների հիմք համարվող այլ փաստաթղթերում այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք առաջացրել են կամ կարող էին առաջացնել սոցիալական վճարների նվազեցում կամ անհնար են դարձնում սոցիալական վճարների չափի հաշվարկը, ապա գանձման ենթակա սոցիալական վճարների չափը սահմանվում է նախորդ հավասար ժամանակահատվածի սոցիալական վճարների կրկնապատիկի չափով, իսկ խախտում թույլ տված անձինք ենթարկվում են պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(11-րդ հոդ. 3-րդ կետը լրաց. 06.07.00 ՀՕ-74 օրենք)

Հոդված 12. Լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկման կարգը

Լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել վերադասության կամ դատական կարգով:

**Գ Լ Ո Ւ Խ 6
ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹ**

Հոդված 13. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

(13-րդ հոդ. լրաց. 14.12.98 ՀՕ-266 օրենք)

Հոդված 14. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

(14-րդ հոդ. լրաց. 14.12.98 ՀՕ-266 օրենք)

30 դեկտեմբերի 1997 թ.
ՀՕ-179

ԳԳ Սոցիալական ոլորտի հրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան, 2001, էջ 255-258:

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության նախագահ՝
Լ. Տեր-Պետրոսյան
5 օգոստոսի 1997 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի գործունեության բարելավման միջոցառումների մասին

5 օգոստոսի 1997 թ. թիվ 321
քաղ. երևան

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի գործունեության բարելավման, կենսաթոշակների մշակման և վճարման, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձման արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի կառավարման մարմինը հիմնադրամի խորհուրդն է:

2. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարը (խորհրդի նախագահ), Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը, ՀԱՄԿ-ի նախագահը և Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի նախագահը (խորհրդի անդամներ):

3. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի խորհրդին՝

ա) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի կանոնադր

րությունը,

բ) մինչև 1998 թվականի հոկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները:

4. Միաձուլել Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոններն ու Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի տարածքային բաժանմունքները՝ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի կենսաթոշակային ապահովագրության տարածքային կենտրոնների:

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության 1997 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոնների համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամին:

6. Իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի խորհրդին ազատել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների ապառքներ չունեցող ապահովագրություն ժամկետանց պարտքերի նկատմամբ հաշվարկված տույժերից կամ հետաձգել դրանց վճարման ժամկետը, կամ նվազեցնել տույժերի գումարի չափը:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 11 Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության, զբաղվածության, բնակչության տեղաշարժի և փախստականների հարցերի նախարարության համակարգում կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոններ ստեղծելու մասին» թիվ 162, Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թ. մայիսի 27-ի թիվ 162 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարե-

լու մասին» թիվ 219 որոշումները և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակային ապահովության տարածքային կենտրոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 61 որոշման 1-ին կետը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան, 2001, էջ 266:

№ 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Զ Ը

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

*Ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997 թ. մայիսի 14-ին
Ստորագրված է ՀՀ նախագահի կողմից 1997 թ. հունիսի 16-ին
Պաշտոնական հրապարակումը՝ «Հայաստանի Հանրապետության
պաշտոնական տեղեկագիր» թիվ 14 21.06.1997
Ուժի մեջ է մտել 1997 թ. հուլիսի 1-ից*

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Բ Ա Ժ Ի Ն 5

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՀԱՐԿՈՒՄ

*Հոդված 15. ԱՄԴ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության
նկատմամբ այն չհաշվարկելն է*

Կետ 20. Օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական և նմանատիպ բնույթի ոչ պետական այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը մարդասիրական օգնության և բարեգործական (համանման այլ հասարակական և սոցիալա-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

ՇԱՀՐՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

*Ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997 թ. սեպտեմբերի 30-ին
Ստորագրված է ՀՀ նախագահի կողմից 1997 թ. նոյեմբերի 27-ին
Պաշտոնական հրապարակումը՝ «Հայաստանի Հանրապետության
պաշտոնական տեղեկագիր» թիվ 27.3.12.1997
Ուժի մեջ է մտել 1998 թ. հունվարի 1-ից*

ՔԱՂՎԱԾՔ

Հարկվող շահույթի հաշվարկը

**Հոդված 23. Բարեգործական և այլ անհատույց
հատկացումները**

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

ա) սույն օրենքի 37 հոդվածի ա-գ ենթակետերով նախատեսված կազմակերպություններին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին ու հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով,

բ) սույն օրենքի 37 հոդվածի ա-գ ենթակետերով նախատեսված կազմակերպություններին ամբողջությամբ պատկանող իրավաբանական անձանց հարկվող շահույթից տվյալ կազմակերպություններին շահաբաժինների կամ այլ ձևով փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), ինչպես նաև նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով:

Հոդված 37. Հասարակական, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունները

Օրենքով սահմանված կարգով իրենց կանոնադրությամբ նախատեսված գործունեությամբ իրականացումից ստացված եկամուտների մասով շահութափոխանի վճարումից ազատվում են ՀՀ հարկային տեսչության մարմիններում հաշվառման կանգնած՝

կան) ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ՀՀ-ում ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից:

ՀՀ օրենսդրությամբ (այդ թվում՝ ՀՀ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական ու տեխնիկական (այլ) բնույթի, ինչպես նաև սույն հոդվածի դրույթների համաձայն ԱԱՀ-ից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակները որոշվում են ՀՀ կառավարության մարդասիրական օգնությունը կոորդինացնող լիազորված մարմնի կողմից:

Հոդված 39. Սույն օրենքի 15 հոդվածի 20-րդ կետում նշված արտոնության կիրառման առումով մարդասիրական օգնություն և բարեգործական ծրագրեր իրագործողները սահմանված կարգով նշումներ պետք է կատարեն Հայաստանի Հանրապետությունում գտնվող մատակարարների հետ կնքվող պայմանագրերում: Մատակարարված ապրանքների գծով ստացված հասույթները կամ ստացված (առանց ԱԱՀ-ի) ապրանքները և ծառայությունները կանոնադրական (ծրագրային) նպատակներով չօգտագործելու դեպքում նշված ծրագրի (գործունեության) որակավորումն՝ որպես մարդասիրական օգնության կամ բարեգործականի, կարող է փոխվել կամ կասեցվել ՀՀ կառավարության մարդասիրական օգնությունը կոորդինացնող լիազորված մարմնի կողմից, որը հանգեցնում է նշված արտոնությունների գործունեության դադարմանը կամ կասեցմանը:

ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու. Երևան, 2001, էջ 270:

ա) հասարակական և կրոնական կազմակերպությունները, ՀՀ քաղաքական կուսակցությունները,

բ) համատիրությունները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այն կազմակերպությունները, որոնք կազմակերպվել և գործում են բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական անվտանգության նպատակով փորձարկման, շրջակա միջավայրի պաշտպանության, գրականության, մշակույթի և կրթության զարգացման և քարոզման, սպառողների իրավունքների պաշտպանության, սիրողական սպորտի խթանման և կազմակերպման, մարդու, կանանց, երեխաների և ծերերի իրավունքների պաշտպանության նպատակներով, եթե դրանց եկամտի որևէ մասը չի բաշխվում դրա մասնակիցներին կամ այլ անձանց և օգտագործվում է բացառապես դրանց կանոնադրական նպատակների համար,

գ) գրադարանները, թանգարանները, հանրակրթական դպրոցները, տուն-գիշերօթիկները, ծերանոցներն ու մանկատները, եթե դրանց եկամտի որևէ մասը չի բաշխվում դրա մասնակիցներին կամ այլ անձանց և օգտագործվում է բացառապես դրանց կանոնադրական նպատակների համար:

ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան, 2001, էջ 271

№ 34

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ԲԵՆԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից
4 մարտի 1996 թվական
քաղ. Երևան

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

Հոդված 1. Հիմնական հասկացությունները

1. Բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

3. Առողջապահական պետական նպատակային ծրագրեր՝ ամենամյա ծրագրեր, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը և որոնց ֆինանսավորումն արտահայտված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում:

Առողջապահության պետական նպատակային ամենամյա ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը պետական բյուջեի նախագծի հետ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են առողջապահության պետական նպատակային ծրագրերին համապատասխան:

Հոդված 2. Բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակները

Բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակներն են՝

ա) առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից:

բ) մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշիչ

րոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ:

Բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը և կառուցվածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ձևերը

Բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են՝ հիվանդանոցային ձևով, երբ անհրաժեշտ է բժշկական միջոցառումների համալիր կիրառում՝ ախտորոշում, բուժում, տևական հսկողություն և հատուկ խնամք,

արտահիվանդանոցային ձևով, երբ դրա իրականացման համար չեն պահանջվում հիվանդանոցային պայմաններ:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ Բ ԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 4. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

Այլ պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում

է տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:

Հոդված 5. Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս

Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝ ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին:

բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում:

գ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

դ) իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար:

ե) իրաժարվել բժշկական միջամտությունից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից:

զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Հոդված 6. Բժշկական օգնության և սպասարկման ընթացքում հասցված վնասի փոխհատուցում ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամ-

քին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին:

Հոդված 8. Համաձայնությունը բժշկական միջամտության համար

Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից:

Բուժողի կամ բուժվողի պահանջով համաձայնությունը կարող է լինել նաև գրավոր:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդին, ինչպես նաև այն դեպքերում, երբ հիվանդի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով հիվանդի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:

Հոդված 9. Մարդու վերարտադրողական իրավունքը

Յուրաքանչյուր զույգ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) որոշել իր երեխաների թիվը և նրա ծնվելու ժամկետները:

բ) անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

Հղիության արհեստական ընդհատումը և բժշկական ամլացումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալ իր սեռական առողջության պահպանման հարցերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, դրանց բարդությունների և հետևանքների մասին:

Հոդված 10. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալ անվճար բժշկական օգնություն և սպասարկում:

Հոդված 11. Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդու իրավունքը

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալ, պետության կողմից երաշխավորված կարգով, բժշկական օգնություն և սպասարկում, բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 4. Ձերբակալված, կալանավորված և ազատագրված վայրերում պատիժ կրող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Ձերբակալված, կալանավորված և ազատագրված վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Ձինժառայողների և զորակոչիկների բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Ձինժառայողները և զորակոչիկներն իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 14. Արտակարգ իրավիճակներում տուժած մարդկանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Արտակարգ իրավիճակներում տուժած մարդիկ բժշկական օգնություն և սպասարկում են ստանում անվճար՝ պետության կողմից երաշխավորված կարգով:

Հոդված 15. Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց բժշկական օգնություն և

սպասարկում ստանալու իրավունքները

Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:

Հոդված 16. Բժշկական օգնության և սպասարկման իրականացումը առանց մարդու համաձայնության

Առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն, սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 17. Բժշկական միջամտությունից հրաժարվելը

Յուրաքանչյուր ոք կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն, բացի սույն օրենքի 16 հոդվածով նախատեսված դեպքերից:

Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

ՀՀ Սոցիալական ոլորտի իրավական նորմատիվ ակտերի ժողովածու, Երևան, 2001, էջ 301-303:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Արխիվային նյութեր

1. ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀԶԿՓԿՊԱ)
Ֆ.1, ց. 82, գ. 5, 25, ց. 84, գ. 1:
Ֆ. 4516, ց. 1, գ. 13, 25, 27, 47):
2. ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԼՊԿՊԱ)
Ֆ. 113, ց. 163, գ. 185, 341, 406, 418, 426, ց. 164, գ. 669, 716, 717, ց. 165, գ. 4, 41, 42, 127, 141, 156, 162, 163, 170, 171, 172, 174, 175, 201, 205, 247, 255, 256, 259, 274, 276, 283, 293, 298, 317, 318, 323, 325, 326, 327, 331, 334, 346, 496, 511, ց. 167, գ. 62, 71, 123, 127, 252, 318, 357, 363, 374, 393, 389, 400, 401, 521, 562, 402, 403, 407, 409, 409, 411, 412, 448, 484, 486, 487:
Ֆ. 119, ց. 15, գ. 80, ց. 163, գ. 232:
Ֆ. 4516, ց. 1, գ. 25:
3. ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1991 թ., գ. 23, հ. 19 հ. 27-28, գ. 4, հ. 35-36:
ՀՀ կառավարության ընթացիկ արխիվի նյութերի և որոշումների ժողովածու, Երևան, 1993:
ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՀՀ կառավարության որոշումները 1995 թ. № 6, (329 որոշում) հ. 63:
ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1998 թ., գ. 10, հ. 3, թ. 648-650:
ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1999 թ., գ. 7, հ. 2, գ. 8, հ. 3:
ՀՀ կառավարության ընթացիկ արխիվի նյութեր, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն, մասնավորեցված ընկերությունների տնտեսական գործունեության ամփոփ վերլուծության արդյունքները, 2001 թ., գ. 6, հ. 9, թ. 72:
ՀՀ կառավարության որոշումների ժողովածու հ. 7-8, հուլիս, օգոստոս, Երևան, 1996 թ. :
4. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, 2001 թ., գ. 20, հ. 15-99, թ. 2:

բ) Մամուլ

1. «Ազրո», 1991-1996:
2. «Ազրոգիտություն», 1991-1998:
3. «Բանկային լրատու», ՀՀ ԿԲ, 2000 թ. դեկտեմբեր:
4. «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 2, Երևան, 2000:
5. «Դրօշակ», թիվ 3, 12-25, փետրվար, 1999:
6. «Ժամանակ», 24 հունվարի 2001 թ.ա
7. «Էկոնոմիկա», հ. 1-3, Երևան, 1996:
8. «Էկոնոմիկա», հ. 7, դեկտեմբեր 2001:
9. «Կրթություն», 1-15, օգոստոս, 2002:
10. «Հայկական բանակ», 1-2 (31-32), 2002:
11. «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 1990, 3, 24 սեպտեմբերի, 12 նոյեմբերի, 24 դեկտեմբերի 1991, 11 հունիսի, 1992, 29 փետրվարի, 23 մայիսի, 29 դեկտեմբերի 2000, 29 հունվարի, 2002, 5 փետրվարի 2003:
12. «Ֆինանսներ և էկոնոմիկա», Հայաստան, հ. 3, սեպտեմբեր 2001:
13. Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, 1(21), հունվար, 2003:

գ. Աղբյուրներ

1. Արդյունաբերություն 1990-1997, վիճակագրական ժողովածու, Երևան, 1999:
2. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999 թթ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2001:
3. Դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրություն («ՀՀ օրենքը միջնորդ դատարանների և դատավարության մասին», «ՀՀ դատախազության մասին», «ՀՀ դատարանակազմության մասին», «Վճարելի դատարանի գործունեության մասին», «Փաստաբանական գործունեության մասին»), Երևան, 1998:
4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք» ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 22(55), 21 սեպտեմբերի, Երևան, 1998:
5. «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատական ակտերի

հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքները:

6. Դիմորդ 2001, ՀՀ պետական բուհեր ընդունվողների համար, Երևան, 2001:
7. Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, Գլոբալ մարդկային զեկույց 2001, Երևան 2001:
8. Ձեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտություն, Երևան, 2002:
9. Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, իրավիճակային վերլուծության զեկույց, Երևան, 2002:
10. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, Երևան, 1995:
11. Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996:
12. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997:
13. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998:
14. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1999:
15. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2000:
16. Սարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001:
17. Սարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի, Երևան, 2000:
18. Կայուն զարգացման համաշխարհային գազաթաժողով, Յոհաննեսբուրգ, 2002:
19. Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն 2000, նախնական զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ առողջապահության նախարարություն, Երևան, 2001:
20. Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 1999 թվականին, վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001:
21. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999, Երևան, 2000:
22. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000, Երևան, 2001:
23. Հայաստանի Հանրապետության ԿԲ-ի 2001 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2001:
24. Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին վերջնական զեկույց (ամփոփագիր) CRC Ար-

տերկրյա համագործակցության ԲԸ Տոնացու և ընկ., Տոկիո, Ճապոնիա, 1999:

25. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 1998-2001, Երևան, 2002:
26. Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1996, Երևան, 2002:
27. Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1997, Երևան, 2002:
28. Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1998, Երևան, 2002:
29. Հայաստանի Հանրապետության պատմության ամփոփ ժամանակագրություն 1999, Երևան, 2002:
30. Հայաստանի Հանրապետության պատմություն, ամփոփ ժամանակագրություն 2000, Երևան, 2002:
31. Հայաստանի Հանրապետության պետվիճվարչության գյուղացիական տնտեսությունների հետազոտություն, Երևան, 1997:
32. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, Երևան, 1995:
33. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001:
34. Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2000:
35. Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001:
36. Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան, 2002:
37. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1990 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1991:
38. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1991 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1992:
39. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1992 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1993:
40. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1993 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1994:
41. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1994 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1995:

42. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1995 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996:
43. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996, հունվար-դեկտեմբերին, Երևան, 1997:
44. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 1997 թ. հունվար-մարտին, Երևան, 1997:
45. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1998:
46. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1999:
47. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան, 2000:
48. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին, Երևան, 2000:
49. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-նոյեմբերին, Երևան, 2001:
50. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2001:
51. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2002:
52. Հայաստանի Հանրապետության տնտեսության և ծեռնարկատիրության զարգացման արդի խնդիրները (Ազգային գիտա-ժողովի նյութեր), Երևան, 1998:
53. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին, Երևան, 2001:
54. Հայաստանի Հանրապետություն, Ազգային գնահատման զեկույց, Երևան, 2002:
55. Հայաստան 2001 վիճակագրական գրքույկ, Երևան 2001:
56. Հայաստան 2002 վիճակագրական գրքույկ, Երևան 2002:
57. Հինգ տարի անց. նախագահ Ռ. Քոչարյանի հաշվետվությունը, Երևան, 2003:
58. ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999 և 2001 թթ., Երևան, 2001:
59. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995:
60. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.) գիրք Ա, Երևան, 1999:

61. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), գիրք Բ, Երևան, 1999:
62. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1999-2000 թթ.), գ. Գ, Երևան, 2000:
63. ՀՀ գործող օրենքների ժողովածու, (2001 թ.) գ. Դ, Երևան, 2002:
64. ՀՀ գործող օրենքների ժողովածու, (2002 թ.) գ. Ե, Երևան, 2003:
65. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 6, 31 մարտի 1997:
66. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 11, 20 մայիսի, 1997:
67. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12, 5 հունիսի 1997:
68. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» 17(50), 10 օգոստոսի, 1998:
69. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 12 (45), 15 հունիսի 1998:
70. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № ? 1999 թ. հունիս:
71. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 23, 28 փետրվարի 2000:
72. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 2 (100), 14 փետրվարի 2000:
73. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 3 (135), 31 հունվարի 2001:
74. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 1 (176), 9 հունվարի 2001:
75. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 3 (135), 31 հունվարի 2001 :
76. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 17 (149), 15 հունիսի, 2001:
77. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը», թիվ 21(196), 21 հունիսի 2002:
78. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 26 (201), 19 հուլիսի 2002 թ.:
79. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 6(181), 5 փետրվարի, 2002, թիվ 3-18, թիվ 32 (207), 8 օգոստոսի, 2002:
80. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 5 (180), հունվար 2002:
81. ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1992 թ. հունվարին-դեկտեմբերին), Երևան, 1993:
82. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր հ. 1, (ՀՀ տնտեսությունը 1993 թ. հունվարին-դեկտեմբերին), Երևան, 1994:
83. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր թիվ 1, 1994 թ. փետրվար:
84. ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն. Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրերը (ըստ 1991-1999 թթ. սոցիալ-
84. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ, Երևան, 1991:
85. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991 թ., Երևան, 1994:
86. Հայաստանը թվերով, 1992, վիճակագրական համառոտ ժողովածու, Երևան, 1994:
87. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, Երևան, 1995:
88. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Երևան, 1998:
89. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Երևան 2001:
90. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Երևան, 2001:
91. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք» ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 22(55), 21 սեպտեմբերի, Երևան, 1998:
92. Սպառողական շուկան Հայաստանի Հանրապետությունում 1995-2001, վիճակագրական ժողովածու, Երևան, 2002:
93. Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, ՄԱԶԾ-ի զեկույցը աղքատության վրա մակրոտնտեսական քաղաքականության ազդեցության մասին, Երևան, 2002:
94. Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, աղքատության կրճատմանն ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն, Երևան, 2002:
95. Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999, Երևան 2001:
96. Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում 1991-2000, Երևան, 2001:
97. Շրջակա միջավայրը և բնական ոլորտները Հայաստանի Հանրապետությունում 2000, վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2002:

դ) Գրականություն

1) Հայերեն

1. Աղոնց Մ., Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան, Երևան, 1978:
2. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992:
3. Աղասյան Ժ., Ղազարյան Թ., Ղարիբջանյան Լ., Մարտիրոսյան Ռ., Երևանի պետական համալսարան. Երեկ, այսօր, վաղը, Երևան, 1999:
4. Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Երևան, 2000:
5. Անանյան Լ.Ջ., տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, 2003:
6. Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, տեսություն և արդյունքներ, խմբագրությամբ Ա.Գ. Աղանբեգյանի, Երևան, 1999:
7. Ավագյան Գ.Ե., Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Երևան, 1998:
8. Ավագյան Գ.Ե., Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը, Երևան, 1970:
9. Ավետիսյան Ա., Հայոց ազգային բանակ, Աբովյան, 2001:
10. Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2000:
11. Արտագաղթը Հայաստանից (խմբ. Հ. Խառատյանի, հեղինակային հրատարակություն), Երևան, 2003:
12. Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Երևան, 2000:
13. Բագրատյան Հ., Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999:
14. Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Երևան, 2001:
15. Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, 2001:
16. Գեղամյան Գ., Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Երևան, 1992:
17. Գեղամյան Գ.Ս., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԵՊ-ի տարիներին, Երևան, 1978:
18. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, 2003:
19. Դոնոյան Լ., Երրորդ Հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը, Երևան, 2002:
20. Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Երևան, 2001:
21. Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երևան, 1999:
22. Խաչատրյան Հ.Ս., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1977:
23. Խառը տնտեսության ֆրանսիական փորձը, Երևան, 1998:
24. Խոջաբեկյան Վ.Ե., Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները, Երևան, 1976:
25. Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Երևան, 1979:
26. Խոջաբեկյան Վ.Ե., Ագրարային քաղաքականությունը և բնակչության տեղաշարժերը, Երևան, 1989:
27. Խոջաբեկյան Վ.Ե., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:
28. Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Երևան, 2001:
29. Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները, տեսությունը և արդյունքները, Երևան, 2002:
30. Ղազախեցյան Վ., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975:
31. Մամիկոնյան Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 1997:
32. Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Երևան, 2000:
33. Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, հողվածների ժողովածու, Երևան, 2002:
34. Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան, 2002:
35. Մանուկյան Վ., Հասարակությունը և պետությունը, Երևան, 1999:

36. Մարգարյան Ն., Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Երևան, 2001:
37. Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գ. 1-ին, Երևան, 2000:
38. Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Տնտեսության պետական կարգավորման միջոցներն ու ձևերը, Երևան, 2001:
39. Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Երևան, 1995:
40. Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին, Երևան, 1995:
41. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2002:
42. Մարկոսյան Ա., Տնտեսագիտության բոլորի համար, Երևան, 2001:
43. Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002:
44. Մելքունյան Ա., Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրները, աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունը, Երևան, 2002:
45. Մեղրյան Գ.Բ., Պարենային ծրագիրը և գյուղի սոցիալ-տնտեսական զարգացումը, Երևան, 1985:
46. Մկրտչյան Հ.Վ., Հողային հարաբերությունները և գյուղատնտեսական հողօգտագործման տնտեսագիտական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 1996:
47. Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, Ստորումներ տքնության, Երևան, 2001:
48. Հակոբյան Վ.Ա., Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1985:
49. Հայաստանը 1998-2002 թվականներին սիյուռքահայերի աչքերով, հողվածների ժողովածու, Երևան, 2002:
50. Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2003:
51. Հարությունյան Ա.Հ., Ագրոարդյունաբերական կոմպլեքսի զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1986:

52. Հովսեփյան Ս., ՀՀԸ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երևան, 2002:
53. Մարգարյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, Երևան, 2001:
54. Մարգարյան Ֆ., Կյանքի դասերը (հուշեր), Երևան, 2001:
55. Սպարապետ, իրապարակումների ժողովածու, Երևան, 2002:
56. Տեղական ինքնակառավարման հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Է. Օրոյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2000:
57. Պատմություններ աղքատության մասին, Երևան, 2001:
58. Պողոսյան Գ., Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ: «Հայաստանի տնտեսությունը» 2000 թ., 20 մարտի:
59. Ջրբաշյան Տ., Մելիքյան Ն., Ներդրումային քաղաքականության ուղղվածության հիմնահարցը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Երևան, 2002:
60. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
61. Ֆահրադյան Հ., Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին, Էկոնոմիկա, 1-3, 1996:

2) Ռուսալեզու գրականություն

1. Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975.
2. Амбарцумян С., Академическая наука в Армении, Ереван, 2002.
3. Аналитический журнал, "Рынок капитала в Армении", № 7,8 (65, 66), 2001:
4. Иванов Э.М., Армения: особенности экономических отношений с Россией и перспективы их развития, М., 2001.
5. Армения: проблемы независимого развития (под ред. Е.М. Кожокина), Российский институт статистических исследований, М., 1998.
6. Баграмян Г., Земельная реформа вопросы теории и практики, Е., 2003:
7. Голоса крестьян. Сельская Россия XX века в крестьянских

мемуарах, М., 1996.

8. Григорян В., История Армянского бесовства, Е., 2002.
9. Ходжабекян В., Асатрян Б., Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Е., 1991:
10. Боффа Джузеппе, От СССР к России. История неоконченного кризиса. 1964-1994, М., 1996.
11. Казакевич И.С., Аграрный вопрос в Южной Кореи, М., 1964.
12. Курс переходной экономики (под редакцией академика Л.И. Абалкина), М., 1997.
13. Ильин С.С., Бабанов А.М., Крестьянское (фермерское) хозяйство и рынок, М., 1995.
14. Манов В., Реформы в пост-социалистическом обществе, М., 2000.
15. Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья, сборник статей 11, (под редакцией, Е.М. Кожокина), М., 2001.
16. Новейшая история отечества XX века, учебник для вузов в двух томах, т. 2, под ред. д.и.н., проф. А.Ф. Киселева, проф. Э.Н. Щагина, М., 1999.
17. Реструктуризация промышленности в европейских странах с переходной экономикой (накопленный опыт и перспективы), М., 2002:
18. Российский статистический ежегодник, статистический сборник, М., 1994 г., стр. 341, 346-347.
19. Смит Поль, Хозяин на земле, М., 1995.
20. Сельское хозяйство СССР, статистический сборник, М., 1988.
21. Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т., Аграрная реформа в странах с переходной экономикой, М., 2000.
22. Социальная политика: Учебник, (под общ. ред. Н.А. Болгина), М., 2002.
23. Содружества независимых государств в 1995 году, статистический ежегодник, М., 1996.
24. 10 лет содружества независимых государств (1991-2000) статистический сборник, М., 2001.
25. Труд в СССР. Финансы и статистика. 1988.
26. Экономика. Содружество независимых государств (краткий справочник), М., 1993.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
Անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը.....	17
ա. Գործընթացի սկիզբը. Հայաստանի անկախության հռչակագիրը.....	17
բ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: ԽՍՀՄ փլուզումը.....	25
գ. Պետականության կայացման ընթացքը. պետաիրավական և վարչական բարեփոխումներ	29
դ. Ազգային բանակի ստեղծումը.....	54
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
Տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում.....	65
ա. Շուկայական հարաբերություններին անցնելու առաջին քայլերը	65
բ. Ազրարային վերափոխումներ	79
գ. Վերափոխումներ արդյունաբերության ոլորտում	106
դ. Ֆինանսավարկային քաղաքականություն	133
ե. Հարկային քաղաքականություն.....	144
զ. Արտահանում և ներմուծում.....	154
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
Պետության սոցիալական քաղաքականությունը	171
ա. Վերափոխումներ սոցիալական ոլորտում. նոր հիմնախնդիրներ.....	171
բ. Բնակչության զբաղվածությունը և սոցիալական վիճակը	178
գ. Բնակչության տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական հետևանքները.....	187
դ. Առողջապահություն.....	191
ե. Գիտակրթական բարեփոխումներ.....	196
զ. Մշակութային կյանք	219
ՎԵՐՋԱԲԱՆ	230
ՀԱՎԵԼՎԱԾ	236
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	431